



ԿԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՐԱԿԱՆԿԱՇ ԵՆ՝


22. Արդված	23. Կամոյի	6. Նոյեմբերյանի
33. Ազգային	24. Բաղրամյանի	11. Շամշադինի
7. Եղիշևանի	35. Գորիսի	34. Սիսիանի
1. Ամասիանի	9. Գուգաչի	8. Սպիտակի
12. Անիի	32. Եղիշևանաձորի	4. Ստեփանավանի
20. Աշուակի	26. Եղիշևանի	17. Ականի
15. Ամարանի	19. Թալինի	31. Վաղոնիսի
14. Արագածի	5. Թումանյանի	30. Մարտունու
29. Արտօնադր	10. Իջևանի	37. Մեղրու
38. Արթիկի	3. Դաշտինյանի	2. Նախիջևանի

Վաշական շրջաններ և կենտրոնները ընդունված են

Երևանը բաժանված է 8 և Լենինականը 2 քաղաքային վարչական շրջանների

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՎՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՑԻՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10 2045



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈԼ
ՏԻՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թույլատրված է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրօնության
մինիստրության կողմից որպես դասագիրք բռների աշխարհագրական
մասնագիտությունների ուսանողների համար

Դասագիրքը՝ ուղագրության են երաշխավորել՝
Երևանի ե. Աբովյանի անվան պետական ման-
կավարժական ինստիտուտի անտեսական աշ-
խարհագրության և աշխարհագրության դասա-
վանդման մեթոդիկայի ամրիոնը և ՀՍՍՀ ԳԱ
թղթակից անդամ Վ. Ե. Խոջաբեկյանը:

Վագիսյան Լ. Զ.

Վ. 152 Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն»
Դասագիրքը բուհերի աշխարհագր. մասնագիտ. ուսանողների հա-
մար. Եր.:—Լույս, 1988. 456 էջ:

Դասագիրքը շարադրված է ՀՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհա-
գրության բուհական դասընթացի ծրագրին համապատասխան։ Նրան հիմք է ծա-
ռայել Հեղինակի 1981 թ. հրատարակած «Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհա-
գրություն» ուսումնական ձեռնարկը։

Լայնորեն օգտագործված են Հանրապետության աշխարհագրական նորա-
գույն հետազոտությունների արդյունքները և սոցիալ-տնտեսական աշխարհագրու-
թյան տեսական մտքի վերջին նվաճումները։

Դասագիրքը նախատեսված է բուհերի աշխարհագրական մասնագիտու-
թյունների ուսանողների համար։

Վ. 1805060000 (2) 107.1988
702 (01) 1988

ԳՐԴԱ 65.9(2L)g78 + 60.55g78

Валесян Лемвел Акопович
ЭКОНОМИЧЕСКАЯ И СОЦИАЛЬНАЯ ГЕОГРАФИЯ
АРМЯНСКОЙ ССР

Учебник для вузов
(на армянском языке)
Ереван «Луйс» 1988

ISBN 5-545-00073-9

© «Լույս» հրատարակչություն, 1988 թ.

Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրության առարկան. բովանդակությունը և խնդիրները

Դասընթացի (գիտության ճյուղի) ներկա անվանումը՝ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն կամ սոցիալտնտեսական աշխարհագրություն, պաշտոնական շրջանառության մեջ է դրվել 70-ական թվականների վերջերից և փոխարինում է տնտեսական աշխարհագրության նախկին անվանը: Նման անվանափոխումը բխում է գիտության ճյուղի բովանդակության փոփոխությունից: Իսկ այդ փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տասնամյակների ընթացքում աշխարհագրական գիտության այդ ճյուղի ուսումնասիրության առարկայի՝ հասարակական տարածմային համակարգերի ձևավորման ու զարգացման մեջ նկատելիորեն մեծացավ սոցիալական գործոնի դերը: Դրան համապատասխան է:

ա) արտադրության զարգացման և տեղաբաշխման, նրա տարածքային կազմակերպման հետ մեկտեղ կենտրոնական հարց դարձավ նաև սոցիալական զարգացման տարածքային ասպեկտների ուսումնասիրությունը,

բ) ուժեղացավ տնտեսական զարգացման ու արտադրության կազմակերպման սոցիալական ուղղվածությունը, արտադրողական ուժերի զարգացման սոցիալական հետեւանքների հաշվառումը:

Գիտության ամեն մի ճյուղի բովանդակությունն ու խնդիրները պարզելու համար անհրաժեշտ է նախ որոշել նրա ուսումնասիրության օբյեկտը:

Տնտեսական և սոցիալական աշխարհագրության համար ուսումնասիրության օբյեկտ են ծառայում հասարակությունը ընդհանրապես և ավելի կոնկրետ՝ բնակչությունը, տնտեսությունը, նրա ճյուղերը, արտադրության ու ամբողջ հասարակության զարգացման բնական պայմանները ու ռեսուրսները: Հիշենք, որ դրանք ուսումնասիրության օբյեկտ են գիտության մի շարք այլ ճյուղերի համար ևս (ժողովրդագրության, տընտեսագրության, երկրի մասին գիտությունների և այլն), որոնցից յու-

րաքանչյուրը հասարակական ու բնական այդ տարրերի նկատմամբ ունի ուրույն մոտեցում։ Սոցիալտնտեսական աշխարհագրությանը դրանք հետաքրքրում են իրենց տարածական-ժամանակային զարգացման և միմյանց հետ փոխներգործության առումով։

Սկզբունքային նշանակություն ունի այն դրույթը, որ գիտության յուրաքանչյուր ճյուղ պետք է ունենա իր այնպիսի հատուկ օրյեկտը և առարկան, որոնք գիտության այլ ճյուղերի կողմից չեն ուսումնասիրվում։ Սոցիալտնտեսական աշխարհագրության համար այդպիսի օրյեկտ ու առարկա են մարդկանց կյանքի ու հասարակական արտադրության տարածքային կազմակերպման ձեւերն ու դրսեռումները, այսինքն տընտեսական շրջանները, տարածքային-արտադրական համալիրները, արդյունաբերական հանգույցները, գյուղատնտեսական զոնաներն ու շրջանները, բնառեսուրսային շրջանները, տրանսպորտային տարածքային համակարգերը, բնակչության տարաբնակեցման համակարգերը և այլն։

Տնտեսական ու սոցիալական աշխարհագրությունը, լինելով աշխարհագրական գիտությունների համակարգի երեք բաղադրիչներից մեկի՝ հասարակական աշխարհագրական գիտությունների մասը¹, իր հերթին բաժանվում է մի շարք ճյուղերի։ Այդ ճյուղերն են. բնակչության աշխարհագրությունը, սպասարկման աշխարհագրությունը, բնական ռեսուրսների աշխարհագրությունը, արդյունաբերության աշխարհագրությունը, գյուղատնտեսության աշխարհագրությունը, տրանսպորտի աշխարհագրությունը և այլն։

Այդ բաժանումը, ինչպես նկատում ենք, ճյուղային է, կատարվում է ըստ աշխարհագրական թաղանթի տարրերի։ Գոյություն ունի նաև դասակարգում ըստ երկրի աշխարհագրական թաղանթի տարածական մասերի (աշխարհամասեր, մայրցամաքներ, պետություններ և այլն)։

Եթե առաջին դասակարգումով առանձնացված գիտությունները հետազոտում են երկրագնդի կամ նրա որևէ տարածական հատվածի առանձին տարրերը, օրինակ, բնակչությունը, տնտեսությանը կամ արտադրության առանձին ճյուղը, ապա երկրորդ դասակարգման դեպքում մենք գործ ունենք երկրագնդի որոշակի տարածական հատվածի բոլոր

Հիշենք, որ մյուս 2 բաղադրիչներն են՝ բնական աշխարհագրական գիտությունների խումբը (ֆիզիկական աշխարհագրություն, կենսաաշխարհագրություն, լանդշաֆտագիտություն) և աշխարհագրական օժանդակ գիտությունների խումբը (ժարտեկագրություն, քարտեզագիտություն)։

Մի այլ դասակարգման համպատասխան որպես առանձին բաղադրիչ է առանձնացվում նաև շորորդը՝ աշխարհագրական տեսական գիտությունների խումբը, որի մեջ մտնում են մաթեմատիկական աշխարհագրությունը և տեսական աշխարհագրությունը (մետաաշխարհագրություն)։

տարրերի, բնակչության կյանքի ու հասարակական արտադրության բոլոր բնագավառների հետ, դիտելով դրանք մեկ ամբողջության մեջ:

Ընդունված է առաջին խմբի գիտությունները (գիտության ճյուղերը) միավորել ընդհանուր սոցիալտեսական աշխարհագրության անվան տակ, մինչդեռ երկրորդ խմբին՝ ուզունացնել սոցիալտեսական աշխարհագրության անվան տակ (երբեմն դա կոչում են նաև սոցիալտեսաաշխարհագրական երկրագրություն):

Հայկական ՍՍՀ տնտեսական ու սոցիալական աշխարհագրությունը պատկանում է համալիրային ոեգիռնալ սոցիալտեսական աշխարհագրությանը և հանդես է գալիս որպես ՍՍՀՄ սոցիալտեսական աշխարհագրության մի ոեգիռնալ բաժին: Հայկական ՍՍՀ-ն դիտարկվում է որպես ինքնուրույն հասարակական տարածքային համակարգ:

Հայտնի է, որ ի սկզբանե տնտեսական աշխարհագրության գլխավոր խնդիրն եղել է տարրեր երկրների բնական պայմանների և ռեսուրսների, բնակչության և տնտեսության, պետական կառուցվածքի մասին տեղեկությունների հայթայթումը: Ժամանակի ընթացքում դրանց նկարագրությանը ավելացել է գիտական բացատրությունը և օրինաշափությունների բացահայտումը: Ներկայումս էլ այդ խնդիրների լուծումը դրվագ է սոցիալտեսական աշխարհագրության վրա: Բայց ոչ միայն այդ խընդիրների: Գիտության այդ ճյուղին ներկայացվող սոցիալական պատվերը գնալով առավել բարդանում է ու խորանում:

Ներկայումս, սովետական հասարակության վերակառուցման, տընտեսական նոր մեխանիզմի ներդրման, ազգամիջյան հարաբերությունների զարգացման արդի փուլում հատկապես մեծանում է ոեգիռնալ դասրընթացների թե՛ գիտական ու կիրառական, և թե՛ քաղաքական-դաստիարակչական նշանակությունը: Ինչպես պահանջեց 19-րդ համամիութենական կուսակցական կոնֆերանսը, գործը պետք է կազմակերպել այնպես, որ մարդիկ լրիվ իրազեկ լինեն, թե ինչպես է զարգանում յուրաքանչյուր հանրապետություն կամ մարզ, ինչ և ինչքան է արտադրում, ինչ ավանդ է մուծում ՍՍՀՄ միասնական ժողովրդատնտեսական համալիրում, ինչքան է ստանում, ինչ տեղ է գրավում աշխատանքի համամիութենական բաժանման համակարգում:¹

Այս խնդիրները ուղղակիորեն առնչվում են ՍՍՀՄ սոցիալտեսական աշխարհագրության և նրա ոեգիռնալ բաժինների գլխավոր նպատակի հետ, այն է՝ սոցիալիստական հասարակության կենսագործունեության տարածական կազմակերպման և նրա հետագա կատարելագործման գիտական հիմքերի մշակումը:

Դասընթացի կարևոր նպատակներից է Հայկական ՍՍՀ-ի և նրա սահմաններում զարգացող կոնկրետ հասարակական տարածքային հա-

¹ ՍՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի նյութերը, Ե., 1988 թ.:

մալիրի ավելի խոր ուսումնասիրության և նրա կատարելագործման ուղին բացահայտման ու քննարկման օրինակով ցույց տալ սոցիալ-տնտես կան աշխարհագրության տեսության գործնական նշանկությունը, ժողովրդատնտեսական պրորեմների լուծման համար նրա կիրառման հնարավորությունները, միջոցներն ու մեթոդները:

Ասվածը նշանակում է, որ ուսումնասիրելով տարբեր երկրների ու շրջանների բնակչության կյանքի և հասարակական արտադրության տարածքային կազմակերպման ու դրա կատարելագործման պրոբլեմները, սոցիալտնտեսական աշխարհագրությունը ներկայումս հանդես է գալիս ոչ միայն որպես նկարագրող և բացատրող, այլ նաև վերափախրդ, կօնստրուկտիվ գիտություն: Եվ հասկանալի է, թե ինչու նրա հիմնական սոցիալական պատվիրատուններն են ժողովրդատնտեսական պլանավորումը (առաջին հերթին տարածային պլանավորումը), բաղաձաշինությունը, շրջանային հատակազգձումը և ուղղինակ կառավարումը, որոնց նշանակությունը հասարակության գիտական կառավարման համար առաջիկայում պետք է ավելի աճի կապված հանրապետությունների իրավունքների բնդյանման և ռեգիոնալ տնտհաշվարկին անցնելու հեռանկարների հետ:

Մեր երկրում հասարակական արտադրության ճյուղային կառավարման արդի պայմաններում տարածքային պլանավորման, շրջանային հատակագծման և քաղաքաշինության միջոցով է, որ ապահովվում է հասարակության տարածքային կազմակերպման կատարելագործումը: Իսկ վերջինս ենթադրում է այնպիսի հարցերի գիտականորեն հիմնավորված լուծում, ինչպիսիք են երկրի վարչատարածքային կառուցվածքը, արտադրության շրջանային մասնագիտացումը, տեղական աշխատանքային, տնտեսական ու բնական ռեսուրսների կոմպլեքսային օգտագործումը, տնտեսության բոլոր նյուղերի ու արտադրությունների շահերի փոխադարձ հաշվառումը, միջերաշահային և միջջրանային համամասնությունների հաստատումը, բնական միջավայրի պահպանումը և բարելավումը:

Սովետական հասարակության տարածքային կազմակերպման վերջնական նպատակը աշխատանքի արտադրողականության ու հասարակական արտադրության ժողովրդատնտեսական արդյունավետության բարձրացումն է և դրա միջոցով էլ բնակչության նյութական ու հոգեսր կյանքի պայմանների բարելավումը:

Սովետական Հայաստանը աշքի է ընկնում լեռնային ռելիեֆով, դրժվար յուրացվող տարածություններով, բնակչության, բնակավայրերի, արտադրական օբյեկտների, ինչպես նաև ենթակառուցվածքի տարրերի մեծ խոտությամբ, բնական միջավայրի վրա անտրոպոգեն գործոնների անընդհատ և արագորեն մեծացող ազդեցությամբ, բազմաթիվ այլ յուրահատկություններով: Այդ բոլորի, ինչպես նաև ինդուստրացման և ուր-

րանիզացման, դեռևս պահպանվող, համեմատաբար բարձր տեմպերի և հատկապես արտադրության զարգացման ինտենսիվ մեթոդների ժավալման և իրականացվող տնտեսական ռեֆորմի պայմաններում հասարակության տարածմային կազմակերպման և դրա անշեղ կատարելագործման պրոլեմը Հայկական ՍՍՀ-ում առանձնահատուկ կարևորություն է ստանում: Ենելով դրանից, դասընթացում խնդիր է դրվում ոչ միայն երեան հանել արտադրության և ընդհանրապես հասարակության տարածական կառուցվածքի առանձնահատկությունները, այլև ուսանողների մոտ մշակել այդ կառուցվածքը վերլուծելու, երա ֆունկցիոնալ բաղադրիչները բացահայտելու ու գնահատելու կարողություն: Միաժամանակ հետապնդվում է այն նպատակը, որ ապագա աշխարհագետը հաղորդակից դառնա հասարակական կյանքի տարածական սրոցեսներին ու պրոլեմներին, նրանց լուծման ուղիներին, հասարակության գիտական տարածքային կազմակերպման սկզբունքները հանրապետության կոնկրետ պայմաններում կիրառելու առանձնահատկություններին ու հնարավորություններին, դրա օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններին:

Արտադրության տերիտորիալ կազմակերպման հետ անմիջականորեն արնչվում է արդիական այնպիսի սուր պրոլեմ, ինչպիսին արաւակին բնական միջավայրի ռացիոնալ օգտագործման, պահպանման և բարելավման պրօբլեմն է: Ուստի թե՛ համահանրապետական, թե՛ ռեգիոնալ բնույթի բազմաթիվ հարցերի քննարկումը կատարվում է այդ պրոլեմի, նրա այս կամ այն ասպեկտի հետ կապակցված: Հիմք է ծառայում այն դրույթը, որ կիրառական նշանակություն ունեցող աշխարհագրական ոչ մի հարց, արտադրության տարածմային կազմակերպման ոչ մի հախագիծ չափանիշ է և չի կարող իրականացվել առանց բնական միջավայրի լրանքանց ներգործության մոտավոր ու հեռավոր հետևանքների բազմակողմանի ուսումնասիրության ու կանխագուշակման:

Վերջին տարիներին արագ թափով զարգանում ու հարստանում է աշխարհագրության, մասնավորապես սոցիալտնտեսական աշխարհագրության տեսական զինանոցը, բացահայտվում ու տեսական իմաստավորում են ստանում նորանոր երեսույթներ ու պրոցեսներ, գիտական շըրջանառության մեջ են դրվում նոր տեսական դրույթներ, գիտական կատեգորիաներ ու հասկացություններ: Դասընթացը թեև կոնկրետ ռեգիոնալ բնույթ ունի, այնուհանդերձ նպատակ է զնում նպաստել ուսանողների տեսական գիտելիքների խորացմանը, Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության կոնկրետ աշխարհագրական պրոբլեմների և փաստագրական նյութի վերլուծման ու գնահատման ունակությունների հետ մեկտեղ զարգացնել ուսանողների աշխարհագրական-տեսական մուածողությունը: Խակ անհրաժեշտություն է զգացվում հատուկ քննության ենթարկել ու լուսարանել որոշ նոր տեսական դրույթներ, գիտական հաս-

կացություններ ու կատեգորիաներ, որոնք դեռևս անծանոթ են հայ ընթերցողին կամ էլ բուհական մյուս դասընթացներում համապատասխան պարզաբանում չեն ստանում:

Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրության դասընթացը ուսումնասիրվում է բուհերի բարձր կուրսերում, ուստի և նրա բովանդակությունն ու խնդիրները որոշվել են՝ հաշվի առնելով գիտելիքների այն պաշարը, որ ուսանողները գործող ուսումնական պլանների ու ծրագրերի համապատասխան կուտակել են աշխարհագրական տարրեր դասընթացների, ինչպես նաև քաղաքատնտեսության, ՍՄԿ պասմության, մարքուլենինյան փիլիսոփայության գծով։ Դրանց հաղորդած տեսական, մեթոդական և փաստական գիտելիքների բավարար իմացությունը և միջառարկայական կապերի ըստ ամենայնի հաշվառումը անհրաժեշտ պայման է սույն դասընթացը պահանջվող խորությամբ ճանապարհության վերաբերյալ և յուրացնելու համար։

Դասագրքում զետեղված են առավել անհրաժեշտ քարտեզագրական և գրաֆիկական նյութեր, բայց դասընթացը ստեղծագործարար ու բավարար խորությամբ յուրացնելու համար հանձնարարվում է օգտագործել նաև Հայկական ՍՍՀ-ին նվիրված պարբերաբար հրատարակվող լրացուցիչ քարտեզներ, ատլասներ, վիճակագրական տարեգրքեր ու այլ տեղեկատուններ։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՆՐԱՆՔՆԵՐ

1. Որոշեք Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրության տեղը աշխարհագրական գիտությունների դասակարգման համակարգում։

2. Ի՞նչ հիմքեր կան պնդելու, որ սոցիալտնտեսական աշխարհագրությունը լոկ նկարագրող, բացատրող գիտությունից վերածվում է վերափոխող, կոնստրուկտիվ գիտության։

3. Որո՞նք են դասընթացի գլխավոր խնդիրներն ու նպատակները։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՍՈՑԻԱԼԻՏԵՍԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

I ԳԼՈՒԽ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՆԵՐԻ ԵՎ
ԻՆՍՈՒՐԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

§ 1.1. ՏԱՐԱԾՔԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՏԵՏԵՍԱԿԵՆԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ
ՎԱՐՉԱ-ՏԵՐԻՏՈՐԻԱԸ, ԲԱԺԱՆՈՒՄԸ


Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության տարածքը մեծ չէ՝ 29,7 հազ. ք. կմ (2974259 հա), որը հավասար է ՍՍՀՄ ընդհանուր տարածքի 0,13 տոկոսին, Ասիս աշխարհամասի 0,07 տոկոսին և աշխարհի ցամաքի 0,02 տոկոսին:

Տարածքի ձեր անկանոն է. ունենալով հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք 360 կմ. ընդհանուր ձգվածություն, իսկ կենտրոնական մասում զուգահեռականի ուղղությամբ 200 կմ լայնություն, հարավ-արևելքում այն առաջացնում է մի ելուստ, որի ամենանեղ մասի լայնությունը ուղիղ գծով չի հասնում նույնիսկ 30 կմ-ի:

Տարածքի երկրաշափական կենտրոնը գտնվում է մայրաքաղաքից արևելք, Դառնի գյուղի մոտակայքում, որը և պետք է ելակետ ծառայի հանրապետությունը ըստ երկրի կողմերի տրոհելու և նրա աշխարհագրական մասերը որոշելու համար (գծ. 1):

Սահմանների ընդհանուր երկարությունը 1431 կմ է, որից ՍՍՀՄ հանրապետությունների հետ՝ 1109 կմ (Վրացական ՍՍՀ-ի հետ՝ 196 կմ, Աղբքաջանական ՍՍՀ-ի հետ՝ 913 կմ), արտասահմանյան պետությունների հետ՝ 322 կմ, (Թուրքիայի հետ՝ 280 կմ, Իրանի հետ՝ 42 կմ):

Հայկական ՍՍՀ տարածքը իր ներկայիս սահմաններով հիմնականում ձևավորվել է 1920—1921 թվականներին, գլխավորապես էթնիկական սկզբունքով, որը ընկած է ՍՍՀՄ միութենական հանրապետությունների և մյուս բոլոր ազգային-քաղաքական տարածքային միավորների



Նկ. 1. Հայկական ՍՈՀ տարածքը ըստ Երկրի կողմերի

առանձնացման հիմքում: Սակայն Հայկական ՍՍՀ սահմանների պահ-ձին հատվածների որոշման ժամանակ այդ սկզբունքը խախտվել է, հայ-քնակլություն ունեցող բոլոր շրջանները չեն, որ մտել են հանրապետու-թյան կազմի մեջ: Հայկական ՍՍՀ կազմի մեջ ընդգրկվել են իւսուական-կայսրության Երևանի նահանգի (առանց Սուրմալուի հաւաքական թուրքիային, և Նախիջևանի, որտեղ 1924 թ. սահեղձվեց համանուն ինքնավար հանրապետությունը Աղրբեջանական ՍՍՀ կազմում), Ելիզա-վետպոլի նահանգի մի մասը (Զանգեզուրը և Հայկական ՍՍՀ հյուսիս-արևելյան շրջանները), Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառը (Դեբեդ գետի ավազանի մեծ մասը) և Ղարսի մարզի մի փոքր հատվածը ներկա-յիս Ամասիայի վարչական շրջանում: Այդ իսկ պատճառով՝ Հայկական ՍՍՀ քաղաքական սահմանները միշտ չեն, որ համընկնում են հայ լեռակ-չության էթնիկական սահմաններին, իսկ Աղրբեջանական ՍՍՀ կազմում 1923 թ. առանձնացվել է հայերով բնակեցված երկրորդ ազգային-քաղա-

քական միավորը՝ կեռնային ջարաբաղի հնքնավար Մարզը Ստեփանա-կերտ կենտրոնով։ Երեսնական թվականների սկզբներին կատարվել է Հայկական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ սահմանների մասնակի փոփոխություն՝ Հայկական ՍՍՀ-ին է անցել Մեղրու շրջանի արևելյան հատվածը իր գյուղերով, իսկ Ադրբեջանական ՍՍՀ-ին՝ Ալագյոլ լիճը կից արտավայրերով։

Աշխարհագրական դիրքը ամեն մի երկի պատմական զարգացման վրա ազդով կարեօք արտաքին գործոններից է և կարող է խրանիչ կամ արգելակող դեր խաղալ, ինչպես նաև փոփոխել երա մասնագիտացման ուղղությունը։ Հայկական ՍՍՀ-ն ընկած է Հյուսիսային կիսագնդի միջին լայնությունների հարավային հատվածում (հս. լայնության $38^{\circ} 50'$ և $41^{\circ} 18'$ միջեւ) և արևելյան կիսագնդի առաջին և երկրորդ քառորդների սահմանում (արլ. երկայնության $43^{\circ} 27'$ և $46^{\circ} 37'$ միջեւ), երրորդ ժամացին գոտում։

Տնտեսաշխարհագրական առումով քացասական հանգամանք է հանրապետության հեռու գտնվելը ծովերից, արտաքին հաղորդակցության այդ էժան ու հարմար միջոցից, և կենսաբանական ու ռեկրեացիոն ռեսուրսների վիթխարի շտեմարանից։ Հայկական ՍՍՀ-ին համեմատաբար մոտ են Սև (ուղիղ գծով 160 կմ), Կասպից (190 կմ), Միջերկրական (750 կմ) ծովերը և Պարսից ծոցը (1000 կմ)։

ՍՍՀՄ սահմաններում Սովետական Հայաստանը ունի եզրային դիրք՝ գտնվում է Սովետական Միության ասիական տարածքի ծայր հարավարևմտյան անկյունում, բայց համեմատաբար մոտ է ինտ բնակչություն ու զարգացած տնտեսություն ունեցող եվրոպական տարածքին², չնայած այս հանգամանքին, Կովկասյան լեռնաշղթան այդ շրջանների հետ հաղորդակցության լրացուցիչ դժվարություններ է հարուցում։

Հայկական ՍՍՀ հաղանական-աշխարհագրական դիրքի գնահատականը ևս միանշանակ չէ. մի կողմից՝ ՍՍՀՄ կազմում լինելը և Վրացական ու Ադրբեջանական հանրապետությունները իբրև անմիջական հա-

1. Թանիք որ ՍՍՀՄ-ում ընդունված է գեկետային ժամանակը, այսինքն՝ ժամանությունը սլաքը գոտիական ժամանակի համեմատությամբ մեկ ժամ առաջ է տարված։ Հայկական ՍՍՀ տարրերությանը Գրինվիչի ժամանակից ոչ թե երեք, այլ չորս ժամ է։ Մարտի վերջին կրակի օրվանից մինչև սեպտեմբերի վերջի կրակին ՍՍՀՄ-ում գործում է ուամառային ժամանակը, այսինքն ժամացույցի սլաքը գեկետայինի համեմատությամբ մեկ ժամ առաջ է տարված։

2. Թեև աշխարհագրական առումով Հայկական ՍՍՀ-ն գտնվում է Ասիա աշխարհամասում, վիճակագրական հաշվարկների և սոցիալտեսական պլանավորման ժամանակ այն ամրող Անդրկովկասի հետ մեկտեղ մտցվում է ՍՍՀՄ եվրոպական տարածքի մեջ։

րեան ունենալը Հայկական ՍՍՀ-ին վիթխարի սոցիալ-քաղաքական առավելություններ է տալիս, ստեղծում կայուն միջազգային դրություն, ապահովում պետական անվտանգությունը և մեծապես խթանում նրա տնտեսական զարգացմանը: (Այս առավելությունները հատուկ են ՍՍՀՄ բոլոր Հանրապետությունների համար): Մյուս կողմից՝ սոցիալքաղաքական զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող և տնտեսապես հետամնաց թուրքիայի ու Իրանի Հարեւանությունը և ՍՍՀՄ-ի հետ նրանց թույլ զարգացած տնտեսական և առևտրական հարաբերությունները Սովետական Հայաստանի տնտեսաշխարհագրական դիրքը դարձնում են անբարենպաստ:

Ինչ վերաբերում է տրանսպորտային-աշխարհագրական դիրքին, ապա ընդհանուր առմամբ այն կարելի է համարել նպաստավոր Հայկական ՍՍՀ գտնվում է Մերձավոր Արևելքի երկրները ՍՍՀՄ Եվրոպական մասի հետ և Հարավային Ասիան Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի հետ կապող օդային, երկաթուղային և ավտոխճողային ճանապարհների խաչմերուկում: Նա տրանսպորտային հարմար ելք ունի ինչպես դեպի Հարեւան սոցիալիստական հանրապետությունները, այնպես էլ դեպի Թուրքիա և Իրան:

Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների բարելավման և տնտեսական համագործակցության հետագա զարգացման պայմաններում Հայկական ՍՍՀ տնտեսաշխարհագրական դիրքի դեռևս չօգտագործվող շատ հնարավորություններ կարող են գործի դրվել և դրականորեն ազդել հանրապետության տնտեսական զարգացման վրա:

Սովետական Հայաստանը ՍՍՀՄ այն միութենական հանրապետություններից է, որոնք մարզային բաժանում չունեն: Ներկայիս վարչատերիտորիալ բաժանումը, որը հաստատվել է 1930 թվականին, երկաստիճան է՝ վարչական շրջան և գյուղուղեղ: Իրավական տեսակետից վարչական շրջաններին են հավասարեցված հանրապետական ենթակայության քաղաքները: Առ 1-ը հունիսի 1988 թ. Սովետական Հայաստանը բաժանված է 59 առաջին աստիճանի վարչատերիտորիալ միուղորի՝ 37 գյուղական շրջանի և 22 հանրապետական ենթակայության քաղաքի: Վարչական շրջանները բաղկացած են շրջանային և նթակայության քաղաքներից (5), քաղաքատիպ ավաններից (31) և գյուղական սովետներից (479): Քաղաքային շրջանային բաժանում ունեն երեսնը (8 շրջան) և լենինականը (2 շրջան):

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՎԱՐՉԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

(առ 1 նովիսեմբեր 1988 թ.)

Գյուղական վարչական շրջաններ և հանրապետական էնթակայության քաղաքներ	Տարածությունը		Վարչական շրջանի կենտրոնը	Երկրորդ աստիճանի վարչատարանին միավորների թիվը
	կմ ²	%		
1	2	3	4	5
Գյուղական վարչական շրջաններ				
1. Արովյանի	812	2,7	ք. Արովյան	բառ 2, գս 15
2. Ազիզբեկովի	1174	4,0	քտա Ազիզ- բեկով	բառ 1, գս 11
3. Ախուրյանի	576	2,0	գ. Ախուրյան	գս 18
4. Ամասիակի	608	2,1	գ. Ամասիա	գս 14
5. Անիի	429	1,4	քտա Մարալիկ	բառ 2, գս 13
6. Աշտարակի	668	2,2	ք. Աշտարակ	գս 12
7. Ապարանի	591	2,1	քտա Ապարան	բառ 1, գս 12
8. Արագածի	382	1,3	գ. Մաղկա- հովիս	գս 10
9. Արարատի	1309	4,7	քտա Վեդի	բառ 1, գս 14
10. Արթիկի	483	1,6	ք. Արթիկ	բառ 1, գս 11
11. Արտաշատի	517	1,8	ք. Արտաշատ	գս 13
12. Բաղրամյանի	453	1,5	գ. Բաղրամյան	գս 6
13. Գորիսի	747	2,5	ք. Գորիս	գս 18
14. Գուգարքի	776	2,6	գ. Մեղրուտ	բառ 1, գս 17
15. Եղեգնաձորի	1134	3,8	քտա Եղեցնա- ձոր	բառ 1, գս 19
16. Էջմիածնի	377	1,3	ք. Էջմիածնի	գս 13
17. Թալինի	1096	4,3	քտա Թալին	բառ 2, գս 11
18. Թումանյանի	1110	3,7	ք. Ալավերդի	բառ 3, գս 13
19. Խշկանի	1333	4,5	ք. Խշկան	բառ 1, գս 12
20. Կալինինոյի	690	2,3	ք. Կալինինո	բառ 1, գս 13
21. Կայոյի	636	2,1	ք. Կայո	գս 9
22. Կրասնոսելսկի	697	2,4	քտա Կրասնոսելսկ	բառ 1, գս 11
23. Հոկտեմբերյանի	421	2,8	ք. Հոկտեմբերյան	բառ 1, գս 16
24. Հրազդանի	928	3,1	ք. Հրազդան	բառ 1, գս 11
25. Ղափանի	1345	4,5	ք. Ղափան	ք 1, գս 19
26. Ղուկասյանի	547	1,8	գ. Ղուկասյան	գս 9
27. Մասիսի	169	0,6	քտա Մասիս	բառ 2, գս 9
28. Մարտունու	1195	4,0	քտա Մարտունի	բառ 1, գս 16
29. Մեղրու	664	2,2	ք. Մեղրու	ք 1, գս 8
30. Նախիջև	303	1,0	գ. Եղվարդ	բառ 2, գս 9

1	2	3	4	5
31. Նոյեմբերյանի	538	1,8	բտա Նոյեմբերյան	բտա 2, զս 9
32. Շամշադինի	824	2,8	բտա Թերդ	բտա 1, զս 15
33. Սիսիանի	1719	5,8	բ Սիսիան	բտա 1, զս 16
34. Սպիտակի	544	1,8	բ Սպիտակ	զս 11
35. Մտեփանավանի	630	2,1	բ Մտեփանավան	զս 12
36. Աևանի	389	1,3	բ Աևան	բտա 1, զս 8
37. Վարդենիսի	1151	3,9	բ Վարդենիս	բ 1, զս 14

Հանրապետական են-

թակալության քա-

ղաքներ

408 1,4

ընդամենը 22

Հայկական ՍՍՀ հանրապետական ենթակայության քաղաքներն են՝

1. Երևան	9. Արթիկ	17. Ղափան
2. Լենինական	10. Գորիս	18. Չարենցավան
3. Կիրովական	11. Դիլիջան	19. Ճերմուկ
4. Արովյան	12. Էջմիածին	20. Խպիտակ
5. Ալավերդի	13. Խեման	21. Ոռևփանավան
6. Աշտարակ	14. Կամո	22. Սևան
7. Արարատ	15. Հոկտեմբերյան	
8. Արտաշատ	16. Հրազդան	

Աղյուսակում ընդունված հապավումներ՝ բ-քաղաք, բտա-քաղաքաիպ ավան, գ-գյուղ, զս-գյուղամվետ:

Մակերևույթի լեռնային բնույթի, բնական և տնտեսական պայմանների բազմազանության պատճառով Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ միավորներն ունեն փոքր շափեր: Վարչատերիտորիալ բաժանման առաջին աստիճանի մեկ միավորին միջին հաշվով ընկնում է 500 քկմ.-ից էլ պակաս տարածություն և 58 հազար բնակիչ (իսկ առանց երեան, լենինական և Կիրովական քաղաքների՝ մոտ 33 հազար բնակիչ): Մինչդեռ ՍՍՀՄ-ի համար այդ միջին թվերը հավասար են 5500 քկմ.-ի և 70 հազարակչի, իսկ մի շարք հանրապետությունների ու մարզերի համար՝ էլ ավելի շատ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՐԱՋԱՐԱՆԱՆԵՐ

1. Ինչ վարչական տարածքներից է ձեռվորվել Հայկական ՍՍՀ պետական տարածքը
 2. Գևառատեր Հայկական ՍՍՀ աշխարհագրական դիրքը:
 3. Ինչպիսի՞ն է Հայկական ՍՍՀ վարչատարածքային կառուցվածքը: Ե՞րբ է այն հաստատվել և ինչ միավորներից է բաղկացած:

Մինչև Հայկական ՍՍՀ բնական պայմանների ու ռեսուրսների գնահատականին անցնելը հարկ է պարզել, թե ընդհանրապես ո՞րն է դրանց տնտեսական բովանդակությունը և դրանք ի՞նչ տեղ են գրավում հասարակական արտադրության կատեգորիաների համակարգում:

Բնական պայմաններն ու ռեսուրսները ոչ այլ ինչ են, քան մեզ շրջապատող բնական միջավայրի տարրեր ու հատկանիշներ, որոնց հետազոտությամբ, ինչպես հայտնի է, զբաղվում են բնական աշխարհագրական գիտությունները: Բայց քանի որ բնական միջավայրի տարրերն ու հատկանիշներն ունեն նաև որոշակի տնտեսական բովանդակություն և հասարակական արտադրության կատեգորիաների համակարգում գրավում են ուրույն տեղ, դրանց ուսումնասիրությամբ գրաղվում է նաև սոցիալտնտեսական աշխարհագրությունը:

Արդեն հաջտնի է մյուս դասընթացներից, որ որևէ երկրի բնական պայմաններն ու ռեսուրսները հասարակության աշխարհագրական միջավայրի կոնկրետացված, տեղայնացված արտահայտությունն են: Դրանք այն բնական բազիսն են, որի վրա ընթանում է բնակչության կենսագործումները և տվյալ երկրի ժողովրդական տնտեսության զարգացումը:

Խնուրյան տարրերի ու երեսույթների մի մասը նասարակական արտադրության համար հանդես է գալիս իրեւ պայման, մյուս մասը անմիջական մասնակցություն է ունենում արտադրության պրոցեսին կամ ծառայում է իրեւ կենսամիջոց: Դրանք են՝ բնատարածքը, երկրի մակերեսույթը, որն արտադրության պրոցեսի նյութական տարածական բազիսն է և բնության մարդու կողմից ստեղծված ամեն մի նյութականի կրողը: Այնուհետև, կլիմայական ռեսուրսները (արևի և քամու էներգիան, մթնոլորտային տեղումների խոնավությունը), հողածածկույթը, վայրի օգտակար բուսատեսակները և կենդանիները, հանքային ռեսուրսները, շրային պաշարները, մթնոլորտի առանձին բաղադրիչները, նյութի ու էներգիայի այլ տեսակներ, որոնք և կազմում են բնական ռեսուրսները:

Սակայն բնական պայմաններ և բնական ռեսուրսներ հասկացությունների միջև անանցանելի անշրպես չկա: Նրանց սահմանը պայմանական է: Բնության շատ տարրեր ու երկույթներ տնտեսության մի ճյուղի համար լինելով պայման, մի այլ ճյուղի համար հանդես են գալիս իրեն ռեսուրս: Այն, ինչ այսօր պայման է, վաղը՝ գիտության և առեխնիկայի զարգացման շնորհիվ կարող է վերածվել ռեսուրսի:

Բնության տարրերի ու երկույթների տնտեսաաշխարհագրական

ուսումնասիրությունը, ինչպես նաև արտադրական օգտագործումը ձիշտ կազմակերպելու առումով էական նշանակություն ունի նրանց դասակարգումը՝ սպառվող և շապավող բնական աետորաների:

Սպառվող ուսուցաները իրենց հերթին բաժանվում են վերականգներվածների և շվերականգնվողների:

Վերականգնվող բնական ուսուրաներն են հողը, բուսականությունը, կենդանիները, ինչպես նաև որոշ հանքային ուսուրաներ (օրինակ լճերի հատակին նստող աղերը): Որոշակի պայմանների առկայության դեպքում, այս ուսուրաները դրսենորում են ինքնավերականգնըման հատկություններ, չնայած այդ պրոցեսի տևողությունը տարբեր ուսուրաների մոտ տարբեր է՝ մի քանի ամսից (կենդանիների որոշ տեսակներ) մինչև հազարամյակներ (հողային շերտը):

Հիշյալ բնական ուսուրաների սպառումից խուսափելու գլխավոր պայմանը այն է, որ նրանց օգտագործման տեմպերը համապատասխանեն վերականգնման տեմպերին:

Զվերականգնվողների խմբին են պատկանում այն ուսուրաները, որոնք ամբողջովին չեն վերականգնվում կամ վերականգնվում են հարյուր հազարավոր անգամ ավելի դանդաղ տեմպերով, քան նրանց օգտագործումն է: Այդպիսիք են, չնին բացառությամբ. բոլոր օգտակար հանածոները:

Կազմակերպվողների խմբի մեջ են մտնում ջրային, կլիմայական և, այսպես կոչված, տիեզերական ուսուրաները: Դրանք ժամանակի մեջ աննշան քանակական փոփոխության են ենթարկվում և գործնականորեն չեն սպառվում: Բայց մարդու արտադրական գործունեության հետևանքով նրանցում տեղի են ունենում էական որակական փոփոխություններ, աղտոտվում են ջրերն ու մթնոլորտը, փոխվում է արեգակնային ռադիացիան, որոնք բացասաբար են անդրադառնում մարդկանց առողջության, ինչպես նաև արտադրության պայմանների վրա: Չսպառվող ուսուրաների շատ տեսակներ քանակապես լինելով անփոփոխ, անընդհատ գտնվում են «որակական սպառման վտանգի տակ»:

Տնտեսական աշխարհագրության համար, որը գործ ունի հասարակության ու բնության փոխներգործության արդյունք հանդիսացող արտադրողական ուժերի տարածական՝ գույքումների հետ, սկզբունքային նշանակություն է ձեռք բերում բնական պայմանների ու տնտեսական բնակչության որոշումը, այն հարցի պարզաբանումը, թե սրանք ինչպիսի տեղ են գրավում հասարակական արտադրության կատեգորիաների համակարգում:

Այս հարցի գիտական լուծումը կարելի է փնտրել միայն բնության ու հասարակության փոխազդեցության պրոբլեմի մեջ, Հայտնի

է, որ մարքսիզմ-լենինիզմը թույլ շտալով մարդկային հասարակության զարգացման գործում բնական (աշխարհագրական) միջավայրի դերի գերազանցաւածում և հանդես գալով «աշխարհագրական ղետեր-մինիզմի» դեմ, ժիտում է նաև «աշխարհագրական նիհիլիզմը». որը թերագնահատում է այդ միջավայրի դերը: Առաջնային, որոշիչ համարելով արտադրության եղանակը, նա միաժամանակ աշխարհագրական միջավայրը դիտում է որպես հասարակական արտադրության անհրաժեշտ, մշտապես գործող պայման:

Մեթոդոլոգիական այս ընդհանուր դրույթն էլ հասարակական արտադրության վրա բնական պայմանների ու ոեսուրսների ազդեցության կոնկրետ բովանդակությունը վերլուծելու ելակետն է: Ընդունված է առանձնացնել այդ ազդեցության երեք կողմ. բնական միջավայրը

1) մարդու կյանքի և գործունեության անհրաժեշտ մշտնչենական պայմանն է,

2) հասարակության արտադրական գործունեության նյութական ելակետային հիմնն է, համակողմանի նախադրյալը,

3) մարդու ներգործության օբյեկտն է, այն առարկան, որին ուղղված է մարդու վերափոխիչ գործունեությունը և առանց որի չի կարող ընթանալ աշխատանքը, արտադրության պրոցեսը՝ հասարակության գոյությունը պայմանավորող նյութափոխանակության պրոցեսը մարդու և բնության միջև:

Աշխատանքի պրոցեսը, ինչպես հայտնի է քաղաքատնտեսությունից, երեք տարրերից է բաղկացած. ա) մարդկանց նպատակահարմար գործունեությունն կամ բուն աշխատանք, բ) առարկա, որի վրա ներգործում է մարդը, գ) աշխատանքի միջոցներ, որոնցով մարդը ներգործում է աշխատանքի առարկայի վրա: Վերջին երկու տարրերը մարդուն շրջապատող բնության առարկաներ ու երևույթներ են, չնայած նրան, որ աշխատանքի առարկաներն ու միջոցները մարդու ներգործությանը ենթարկված, աշխատանքով արդեն ձևափոխված առարկաներ են (գործիքներ, մեքենաներ, արտադրական կառույցներ, ճանապարհներ, հաղորդակցության միջոցներ և այլն):

Բնության տարրերն ու երևույթները իրենց այն մասով, որով ներգործում են մարդու կյանքի և արտադրական գործունեության վրա և հանդես են գալիս իրեն արտադրության բնական պայման ու բնական ոեսուրս, տնտեսական առումով ոչ այլ ինչ են, քան աշխատանքի առարկա և աշխատանքի միջոց: Իսկ մարքսիստական քաղաքատնտեսությունը մեզ ուսուցանում է, որ աշխատանքի առարկաները և աշխատանքի միջոցները հասարակության արտադրողական ուժերի տարրերն են և հայտնի են բնական արտադրական ուժեր անունով:

Դրանք աշխատութի (մարդկանց, աշխատողների) և հասարակական աշխատանքի շնորհիվ ստեղծված արտադրողական ուժերի (մեքենաներ, սարքավորումներ, արտադրական կառույցներ, ճանապարհներ և այլն) հետ միասին տնտեսական աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտի բաղկացուցիչ մասն են կազմում:

Այստեղից պարզ է, որ տնտեսական աշխարհագրությունը, ի տարբերակուն բնական ցիկլի աշխարհագրական գիտությունների, գործ ունի ոչ թե ամբողջ աշխարհագրական բաղանքի և նրա զարգացման օրենքների ու օրինաշափությունների, այլ այդ բաղանքի այն մասի ու տարրերի հետ, որոնք հասարակության զարգացման տվյալ փակում բնական պայմանների ու ռեսուրսների դեր են կատարում, այլ կերպ ասած, աշխարհագրական թաղանթի այն մասի ու տարրերի հետ, որոնք մարդու հետ անմիջական փոխներգործության մեջ են գտնը վում, ազդում են մարդու ապրելակերպի, նրա արտադրական գործունեության, ժողովրդական տնտեսության կառուցվածքի, մասնագիտացման. հասարակական աշխատանքի արտադրողականության և այլ ցուցանիշների վրա:

Հասկանալի է, որ հասարակական արտադրության բնական պայմաններ և բնական ռեսուրսներ հասկացության բովանդակությունը ժամանակի մեջ փոփոխվում է, ավելի հարստանում: Սա բացատրվում է նրանով, որ գիտության ու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց տընտեսական օգտագործման ոլորտի մեջ ընդգրկված բնական տարրերի ու երկույթների շրջանակը մեծանում է, բնական նյութի ու էներգիայի նոր տեսակներ են օգտագործվում հասարակության կողմից: Դա իր հերթին նշանակում է, որ բնական արտադրողական ուժերի շրջանակները ավելի ու ալելի են մոտենում աշխարհագրական բաղանքին:



Հանրահայտ է, որ բնության երկույթներն ու բնական միջավայրի տարրերը ուսումնասիրության օբյեկտ են բնական ցիկլի աշխարհագրական դիսցիպլինների համար: Սակայն դրանց բնական ռեսուրսները (արտադրության միջոցներ) կազմող մասը մտնում է նաև հասարակական գիտությունների ոլորտի մեջ:

Վերջին տարիներս ձևավորվել է բնական ռեսուրսներն ուսումնասիրող դիսցիպլինների մի առանձին ցիկլ՝ ռեսուրսագիտություն անվան տակ: Այդ ցիկլի բաղադրիչներից է նաև սոցիալտնտեսական աշխարհագրության կազմում որպես ինքնուրույն գիտական ուղղություն հանդես եկող բնական ռեսուրսների աշխարհագրությունը: Նրա կարևոր խնդիրներից մեկը բնական ռեսուրսների տերիտորիալ զուգորդումների տեղա-

բաշխումն ու կառուցվածքը բացահայտելու հետ մեկտեղ նաև այդ ռեսուրսների տնտեսական զնահատումն է:

Բնական ռեսուրսների գնահատումը միշտ էլ եղել է աշխարհագրության ուշադրության կենտրոնում, բայց որպես հետազոտությունների ինքնուրույն բնագավառ, միայն նոր է սկսվում ձևավորվելու եվ այդ առումով էլ նրա տեսական և մեթոդական շատ հարցեր դիւնս գործկեն հստակությունից և կոնկրետությունից։ Այնուամենայնիվ, մի բան որոշակի է. տարրեր բնական ռեսուրսների արժեքը, նրանց կարևորությունը որոշվում է ենելով մարդկանց տնտեսական գործունեության կոնկրետ պահանջներից ու տեխնիկական հնարավորություններից, որոնք փոխվում են թե՛ ժամանակի մեջ, թե՛ ըստ բնագավառների ու ժողովրդական տնտեսության ճյուղերի։

Այսպիսով, եթե բնական ռեսուրսները դիտում ենք որպես զնահատման օբյեկտ, ապա կոնկրետ բնագավառի պահանջները և այդ պահանջները բավարարելու տեխնիկական հնարավորությունները ոչ այլ ինչ են, քան զնահատման սուբյեկտ։ Յուրաքանչյուր գնահատում կարող է որևէ արժեք ունենալ, եթե հստակորեն պարզված է գնահատման օբյեկտսուրյեկտ փոխհարաբերությունը, եթե որոշված են գնահատման կոնկրետ նպատակը և ռեսուրսի օգտագործման բնագավառը (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, ռեկրեացիա, նրանց կոնկրետ ճյուղեր ու ենթաճյուղեր և այլն)։

Բնական ռեսուրսների այն գնահատումը, որը նպատակ ունի պարզելու նրանց կարևորությունը հասարակության համար, այլ կերպ ասած՝ որոշելու նրանց ժողովրդատնտեսական նշանակությունը, հասարակական օգտակարությունը, անկախ գնահատման ցուցանիշներից ու եղանակներից, ընդունված է կոչել լայն առումով տնտեսական զնահատում։

Այս հասկացությունը օգտագործում են նաև նեղ իմաստով, հասկանալով նրա տակ այն գնահատումը, որ հասցվում է բնական ռեսուրսի արժեքավորմանը ուուրիներով, այսինքն՝ գնի որոշմանը (արժեքային գնահատական)։ Գնահատման այս ուղղությունը ավելի մեծ տարածում ունի տնտեսագիտության մեջ և մեծ մասամբ վերաբերում է բնական ռեսուրսների առանձին տեսակներին (օգտակար հանաժողեր, հողահանդակներ, անտառներ, ջրային պաշարներ և այլն)։

Հաճախ անհրաժեշտ է լինում ոչ թե որոշել բնական ռեսուրսների արժեքը, այլ պարզել, թե ո՞ր շրջանում են մարդու կյանքի կամ արտադրության այս կամ այն ճյուղի զարգացման բնական պայմանները ավելի նպաստավոր, թե տվյալ պայմանները ընդհանրապես պիտանի են այդ կոնկրետ ճյուղի կամ արտադրության կազմակերպման համար, ինչ-

պիսի՞ք են տվյալ շրջանի օդի կամ շրի հիգիենիկ հատկանիշները և այլն:

Նման գնահատումները նեղ իմաստով տնտեսական, արժեքային գնահատումներ չեն: Այդ խնդիրների լուծման համար օգտագործվում են այսպես կոչված հատուկ գնահատումները՝ տեխնոլոգիական, ագրոարտադրական, հիգիենիկ և այլն: Այդ գնահատումները անհնար է կատարել բացարձակ արժեքային ցուցանիշներով, ուստի և դրանց համար օգտագործում են հարաբերական ցուցանիշներ, որոնք ընդունված է արտահայտել պայմանական բալերով: Մշակված են 5 բալանոց, 10 բալանոց, 100 բալանոց և այլ համակարգեր: Դրանք հնարավորություն են տալիս կատարել տարբեր շրջանների ու ռեսուրսների տարբեր տեսակների համեմատություններ ըստ նրանց ոչ թե քանակական, այլ որակական ցուցանիշների, այսինքն, կատարել ըստ էության որակական գնահատումներ:

Վերը հիշատակված թե՛ քանակական, թե՛ որակական գնահատումները, որպես գիտական հիտազոտության մեթոդ, ներկայում լայն տարածում են ստանում, գրավելով կարեռ տեղ սոցիալտեսական աշխարհագրության գիտական զինանոցում:

Բնական ռեսուրսների առանձին տեսակների գնահատման միայն առաջին փորձերն են արվում: Հայկական ՍՍՀ բնական ռեսուրսների առանձին տեսակների (օգտակար հանածոներ, հողեր և այլն) գնահատման հաջողված փորձիրն արդեն առկա են: Սակայն դեռևս բացակայում են բնության շատ տարբերի, առավել ևս նրանց տարածքային զուգորդումների նեղ իմաստով տնտեսական կամ տեխնոլոգիական գնահատումները: Դրանք կորվեն ապագայում՝ գիտության համապատասխան ուղղության աստիճանական զարգացման ու ծավալման հետ մեկտեղ: Ուստի սույն դասընթացում Հայկական ՍՍՀ բնական ռեսուրսների գնահատումն իր գիխավոր գծերով մնում է ավանդական աշխարհագրական գնահատման շրջանակներում, օգտագործելով մեծ մասամբ նատուրալ և արտադրական, տեխնիկատեսական համեմատական բնութագրերը:

ՀԱՐՑԾՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է բնական պայմանների ու ռեսուրսների անտեսական բռվանդակությունը:
2. Ի՞նչ տեղ են գրավում բնական պայմաններն ու ռեսուրսները հասարակական արտադրության կատեգորիաների համակարգում:

3. Ի՞նչ պետք է հասկանալ բնական պայմանների ու ռեսուրսների գնահատում առելով: Որո՞նք են այդ գնահատման տարատեսակները:

Ինչպես պարզ դարձավ վերը ասվածից, տարածքը բնությունից տրված և մարդու, ինչպես և նրա արտադրական գործունեության շնորհիվ ստեղծված այլեն մի նյութականի գոյության ծևն է (իբրև տարածության փիլիսոփայական կատեգորիա) և դրա կրողը: Տարածքի մեջ են, որ կոնկրետանում են սոցիալտնտեսաշխարհագրական և ռեգիոնալ-տնտեսագիտական հետազոտությունների հիմնական շափերը՝ հեռավորություններն ու մակերեսները: Տարածքը (հողատարածությունը) արտադրության տեղաբաշխման տարածական բազիսն է, իսկ որպես տընտեսական կատեգորիա՝ համընդհանուր աշխատանքի առարկան և արտադրամիջոցը, «որովհետև նա բանվորին տալիս է locus standi (կանգնելու տեղ), իսկ նրա պրոցեսին՝ գործողության ոլորտ (field of employment)¹»: Հենց այդ պատճառով էլ տարածքը դիտվում է որպես կարևոր բնական ռեսուրս:

Տարածքը այդպիսի տնտեսական բովանդակություն է ձեռք բերում երկու ընդհանուր ցուցանիշների՝ հորիզոնական ձգվածության (հորիզոնական շափերի) և մակերեսույթի ծևերի շնորհիվ, որոնց միջոցով էլ այն ստանում է աշխարհագրական կոնկրետություն, անհատականություն:

Հայկական ՍՍՀ տարածքի հողիզոնական ձգվածությունը բնութագրող ցուցանիշներին ծանոթացանք առաջին գլխի սկզբում: Հստ այդ ցուցանիշների՝ մեր հանրապետությունը դասվում է ամենափոքր երկրների շարքը, գրավելով ՍՍՀՄ-ում 15-րդ և աշխարհի շուրջ 250 երկրների մեջ՝ 170-րդ տեղը:

Հայկական ՍՍՀ տարածքային ռեսուրսների սահմանափակ լինելու հանգամանքը ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում այն պատճառով, որ բնակչության և ընդհանրապես հասարակական արտադրության խտությունը այստեղ համեմատաբար բարձր է և մեծանում է հարաճուն տեմպերով:

Առավել խոր և բազմակողմանի քննարկման կարիք ունի տարածքի ցուցանիշների երկրորդ խումբը, որոնցով բնութագրվում են մակերեսույթի ռելիեֆի ծևերը և նրանց ազդեցությունը տնտեսության վրա:

Քարտեղագրությունից և գեոմորֆոլոգիայից հայտնի է, որ եթե տարածքի մեծությունը (ձգվածությունը) վերաբերում է հորիզոնական հարթությանը և ունի երկու շափում, ապա ռելիեֆի բնույթը արտահայտվում է մակերեսույթի կետերի դիրքով հորիզոնական հարթության նկատմամբ: Դա որոշելու համար անհրաժեշտ է լինում դիմել երրորդ կոոռորինատի օգնությանը, որը համապատասխանում է այդ կետի բարձրությանը:

Ոելիեֆը տնտեսության վրա երկակի ազդեցություն է ունենում։ Տարածքի կետերի բացարձակ բարձրությունների տարրերությունները, մակերևույթի կտրտվածությունը և մի շարք այլ հատկանիշներ տնտեսության վրա ազդում են մի կողմից բնության տարրերի ու երևույթների, ամբողջ քնական համալիրի միջոցավ, որոնք լեռնային երկրներում շատ ավելի բարդ են, բազմազան և հակադրություններով լի։ Մյուս կողմից, մակերևույթի այդ հատկանիշները ներգործում են տնտեսության, նրա տեղաբաշխման ու տերիտորիալ կազմակերպման վրա անմիջականորեն։

Տնտեսության վրա ոելիեֆի առաջին՝ միջնորդված ազդեցությունը դրսեղովում է կլիմայական պայմանների, ջրային ռեսուրսների, հողերի, բուսականության և բնության մյուս այն տարրերի շնորհիվ, որոնք կախված են մակերևույթի բնույթից և գքննարկվի համապատասխան տարրերի հետ մեկտեղ։

Երկրորդ՝ անմիջական ազդեցությանը նույնպես բարդ է ու բազմակողմանի։ Ուսումնասիրվածության արդի մակարդակը թույլ է տալիս այն վերլուծել ու գնաճատել ըստ մակերևույթի հետևյալ գլխավոր ցուցանիշների՝ հիպսոմետրիայի լանջերի թեքության, մակերևույթի կտրտվածության և լանջերի դիրքադրության։

Հայկական ԱԱՀ հիպսոմետրիկ գլխավոր առանձնահատկությունն այժմէ; որ նրա տարածքը գրեթե ամբողջությամբ ընկած է ծովի մակարդակի նկատմամբ 500 մ-ից բարձր (աղյուսակ 2), իսկ ավելի քան 40 տոկոսը՝ 2000 մ-ից բարձր։

Ամենաբարձր (*Արագածի լեռնագագաթը՝ 4090 մ*) և ամենացածր (*Դեբեդի գետահովիտը նրա սառորին հոսանքում* և *Արաքսի գետահովիտը Մեղրու շրջանում՝ շուրջ 375 մ*) կետերի տարրերությունը կազմում է 3715 մ, որը նկատի ունենալով հանրապետության փոքր շափերը, պետք է հայարել շատ մեծ թիվ։

Եթե վերանանք մասնավոր դեպքերից, ապա Հայկական ԱԱՀ աշխարհագրական լայնություններում մարդու կյանքի և աշխատանքի համար առավել նպաստավոր պայմաններ կան մինչև 1400 մ բացարձակ բարձրություն ունեցող գոտում, որից հետո դրանք նկատելիորեն վատանում են։ Սկսած 2000 մ-ից այդ պայմանները դառնում են անբարենը պատճեն։ Երևան են գալիս նաև արտադրական բնույթի դժվարություններ։ Յուրաքանչյաց 100 մ բարձրանալիս, օրինակ, ներքին այրման շարժիչի հզորությունը 1 տոկոսով նվազում է, իսկ դա նշանակում է, որ հանրապետության լեռնային ու բարձրեռնային շրջաններում տրակտորային և ավտոմոբիլային պարկի հզորությունը իրականում ծովի մակարդակի համեմատությամբ 15—30 տոկոսով պակասում է։

Հիշյալ շրջաններում մարդու կյանքի ու աշխատանքի, ինչպես և արտադրության կազմակերպման պայմանները բարելավելու նպատակով


**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՆՏ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԳՈՑԻՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՑԱԿԱՆԸ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ԵՎ
ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՑԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՑԵՍԱԿԵՑԻՑ**

Դռտիների բացարձակ բարձրությունը մ.	Տարածությունը հազ. կմ տոկոս	Համեմատական գնահատականը
375—500	0,02	0,1
500—800	0,53	1,8
800—1000	2,37	7,0
1000—1400	4,33	14,5
Հնդամենք՝ 375—1400	7,25	24,4
Հնդամենք՝ 1400—2000	10,40	35,1
2000—2500	7,29	24,5
2500—3000	3,80	12,6
3000—4090	1,00	3,4
Հնդամենք՝ 2500—4090	4,80	16,0
Հայկական ՍՍՀ	29,74	100,0

Հարկ է լինում կիրառել տնտեսական և տեխնիկական բնույթի լրացուցիչ միջոցառումներ։ Կատարվում է աշխատավարձի հավելում, շենքերի շեռուցման նորմաների ավելացում, սահմանվում են մեքենաների աշխատանքի և գյուղատնտեսական արտադրության ավելի ցածր պլանային ցուցանիշներ և այլն։

Տարածքի հիմսումետրիան բնութագրող կարևոր ցուցանիշ է բացարձակ բարձրության հետ մեկտեղ նաև հարաբերական բարձրությունը, որը արտահայտում է մակերևույթի ուղղաձիգ (խորքալին) մասնատվածությունը։ Հայկական ՍՍՀ տարածքի շուրջ 2/3-ում ուղղաձիգ մասնատվածության խորությունը գերազանցում է 100 մ.-ին, առանձին դեպքերում հասնելով 1 կմ.-ի, և միայն տարածքի 1/3-ում է, որ այդ ցուցանիշը հաշվվում է տասնյակ մետրերով։

Եթե խորքալին մասնատվածությունը ցույց է տալիս տարածքի՝ արտադրության տարածական բազմության, խորդութորդության աստիճանը, ապա հորիզոնական կարտվածությունը արտահայտում է մակերևույթի մասնատվածության, ոելիքի առանձնացվող տարրերի հաճախականությունը (գծ. 2)։ Դա շափվում է միավոր տա-



Նկ. 2. Հայկական ՍՍՀ ջրաֆրական ցանցը և մակերևույթի հորիզոնական կտրովածությունը:

բածության (1 քկմ) վրա գետահովտային ցանցի երկարությամբ։ Այս ցուցանիշով ևս Հայկական ՍՍՀ աշքի է ընկնում։ Բավական է ասել, որ հանրապետության ամբողջ ցամաքային տարածքի շուրջ 90 տոկոսում այդ ցուցանիշը գերազանցում է 400 մ/քկմ, իսկ $1/4$ -ում ավելի է 1000 մ/քկմ-ից։

Սովետական Հայաստանում մակերևույթի մակրոձևերը բաժանում են երեք հիմնական խմբի՝ 1) ծալքավոր ու ծալքաբեկորային (եռնաշըղթաների (սրանք մակերևույթում պարզորոշ արտահայտված և առնվազն 3 կմ երկարություն ունեցող ռելիեֆի դրական ձևերն են, որոնք զրադեցնում են հանրապետության ցամաքային տարածքի մոտ կեսը), 2) հրաբիսային բարձրավանդակների (տարածքի $1/3$ -ից ավելին) և 3) միջլեռնային գոգավորությունների։ սրանց հատակային տափարակ

մասերի ընդհանուր տարածությունը մոտենում է 3 հազ. քառ. կմ-ի: Լեռնային բարդ մակերևույթի, բացարձակ մեծ բարձրությունների և խիստ կտրտվածության պատճառով Սովետական Հայաստանի տարածքը հիմնականում իրենից ներկայացում է տարբեր թեքության ու դիրքադրության լեռնալանջեր: Իսկ թեքությունների մեծությունը մակերևույթի այն ցուցանիշն է, որը պատճառական կապի մեջ է գտնվում ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական մասնատվածության հետ և որոշ իմաստով բնութագրում է նաև մակերևույթի այդ հատկանիշները, որովհետև տարբեր մեծության թեքություններն ստացվում են հարաբերական բարձրությունների և հորիզոնական ու խորքային մասնատվածության տարբեր զուգորդումներից¹: Ուրեմն, թեքությունների գնահատականը տրնտեսության վրա նրա ազդեցության տեսակետից որոշ իմաստով կարող է դիտվել ուշեւ տարածմի ուլիեֆային պայմանների ամփոփից, ընդհանրական գնահատական:

Դժվար է գերազնահատել այն նշանակությունը, որ ունեն լանջերի թեքությունները մակերևույթին հոսքի, սելավային և էռողիոն պրոցեսների, հողային և բուսական ծածկի, արեգակնային ճառագայթման, օդի շարժման ու խոնավության և արտադրության զարգացման մի շարք այլ բնական պայմանների վրա:

Բայց պակաս էական չէ այն ազդեցությունը, որ թեքությունների մեծությունը գործում է հասարակական արտադրության, նրա տերիտորիալ կազմակերպման վրա անմիջականորեն: Զկա ժողովրդական տրնտեսության որևէ ճյուղ, որն ավելի կամ պակաս չափով չենթարկվի տարածքի թեքություններին, ստիպված չլինի հաշվի նստել նրանց մեծության հետ: Թեքությունների ազդեցությունը ծոլովդական տնտեսության բոլոր ճյուղերի համար ունի մեկ ընդհանուր ուղղություն: թեքության մեծացումը ուշեւ կանոն, հանգեցնում է ճյուղի զարգացման բնական և տեխնիկական պայմանների բարդացմանը, շինարարական աշխատանքների բանկացմանը, շահագործման ծախսերի մեծացմանը: Բայց նույն թեքության ազդեցության ուժգնությունը տարբեր ճյուղերի վրա տարբեր են: Տարբեր է այդ ազդեցության քանակական արտահայտությունը:

Թեքությունների նկատմամբ առավել «զյուրագգաց» են գյուղատրնտեսությունն ու տրանսպորտը:

Լանջի թեքությունը հորիզոնական հարթության և տվյալ տեղամասի իրական հարթության առաջացրած անկյունն է, որը չափվում է աստիճաններով (0—90), կամ բնական արժեքով՝ անկյան տանգեսսի մեծությամբ (երկու հարեան կետերի բարձրությունների տարրերության հարաբերությունը այդ կետերի հեռավորությանը, որը արտահայտվում է տասնորդական կոտորակի ձևով): Ընդունված է տրանսպորտում թեքության մեծությունը արտահայտել պրոմիներով, իսկ քաղաքաշինության մեջ տոկոսներով, դրանք անկյան նույն բնական արժեքի ձևափոխված արտահայտություններն են միայն:

Թեժությանների մեծության ազդեցությունն առանձնապես ուժեղ է զյուղատնտեսական հանդակների և կուլտուրաների տեղաբաշխման, զյուղատնտեսական մեջնաների աշխատանիքի, ագրոտեխնիկական միջոցառումների, նորերի մելիորացիայի (հատկապես ոռոգման վրա): Օրինակ, դաշտի ճակատագործությունը կիսով չափ ընկնում է, 84%-ով ավելանում է վառելիքի ծախսը: $10-12^{\circ}$ -ից սկսած ծամանակակից գյուղատնտեսական խոշոր մեքենաների կիրառումը գրեթե անհնար է դառնում: Ընդամենը $1,5^{\circ}$ թեքության դաշտում արդեն ինքնահոս ոռոգումը բացառվում է: Անհրաժեշտ է դառնում ստեղծել մարգեր ու դարավանդներ, կամ էլ կիրառել արհեստական անձրևացման կամ այլ մեթոդներ, որոնք նույնպես լրացուցիչ նյութական միջոցներ ու ծախսեր են պահանջում:

Տրանսպորտում թեժություններն ազդում են թե՛ նաև պարհաշինության, թե՛ նաև պարհների շահագործման և տրանսպորտային միջոցների աշխատանիքի վրա: Թեքություններն են թելադրում ճանապարհի արողիքը և հատակագիծը, իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, ազդում են այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են մայրուղու երկարությունը, էներգիայի, վառելիքի, ջրի ծախսը, տրանսպորտային միջոցների (գնացք, ավտոմոբիլ) բեռնվածության աստիճանն ու շարժման արագությունը, ներկեցիք բնույթից կախված փոխվում են ճանապարհային թունելների, կամուրջների և այլ ինժեներական շինությունների չափերն ու քանակը:

Եթե հարթ տեղանքում 1 կմ երկաթուղու շինարարության արժեքը ընդունենք 100, ապա բլրապատ տեղանքում այն հավասար է 150° -ի, իսկ լեռնային տեղանքում՝ 200° -ի, այսինքն շինարարությունը թանկանում է կրկնակի անգամ: Զնայած այն բանին, որ խճուղիները ավելի հեշտությամբ են հարմարվում ոելիքային պայմաններին, այնուամենայնիվ, լեռնային տեղանքում նրանց կառուցումն ու շահագործումը նույնպես հանգեցնում է հողածայուային աշխատանքների զգալի ավելացման, ինժեներական կառուցյան ստեղծման և, իբրև արդյունք այդ բոլորի աշխատանքների թանկացման:

Ոելիքային գործոնը որոշակի սահմանափակումներ է դնում նաև քաղաքաշինության առաջ: Նոր բնակավայրերի ստեղծման և հների ընդարձակման համար լավագույն է այն տեղանքը, որի թեքությունը չի գերազանցում $2-3^{\circ}$ -ին, բայց և փոքր չէ $0,5^{\circ}$ -ից: Ավելի մեծ թեքություններն իրենց հետ բերում են շենքերի, փողոցների, կոյուղու և ջրմուղի կառուցման, ինչպես և շահագործման թանկացում: Կես աստիճանից պակաս թեքությունների դեպքում դժվարանում է կոյուղու և ջրմուղի կառուցումը (խրամատները ավելի խոր պետք է լինեն) ու ան-

Հրաժեշտ է՝ դառնում լրացուցիչ պոմպակայանների տեղադրումը (ջրերի հեռացման համար):

Քաղաքաշինարարների հաշվարկներով ստացվում է, որ ընդամենը 5° թեքության տեղանքում կառուցված 500 հազ. բնակիչ ունեցող քաղաքի կառուցապատված մասի շահագործման ծախսները 0,5° թեքության տեղանքում կառուցվածի համեմատությամբ աճում են ավելի քան 10 տոկոսով: Խսկ շահագործման ծախսերը, ինչպես հայտնի է, շինությունների օգտագործման ամբողջ ընթացքում բազմիցս անգամ գերազանցում են նրանց կառուցման ծախսերին:

Նյութական արտադրության տարեր բնագավառների համար մշակված են ինժեներական նորմատիվներ, որոնք տեխնիկական և տնտեսական տեսակետից բնութագրում են ուղիեթային պայմանների ներգործության ուժը այս կամ այն ճյուղի վրա և լայնորեն կիրառվում են նախագծային աշխատանքներում:

Տարեր ճյուղերի առանձնահատկությունների հաշվառման և տեխնիկատնտեսական նորմատիվների օգտագործման հիման վրա տրված է Հայկական ՍՍՀ մակերևույթի հետևյալ ընդհանուր որակական գնահատականը ըստ թեքությունների մեծության (գծ. 3):

1. Տափարակ և մեղմաքել հարցուրյուններ. դրանց թեքությունը չի գերազանցում է 3°-ից: Ուղիեթային պայմանները ժողովրդական տնտեսության պահանջների տեսակետից ընդհանուր առմամբ կարելի է գնահատել իբրև լավագույլ: Թե գյուղատնտեսության, թե քաղաքաշինության և թե տրանսպորտի զարգացման համար, անտեսելով որոշ բացառություններ, լրացուցիչ միջոցառումներ չեն պահանջվում:

Այս հարթությունների ընդհանուր տարածությունը՝ կազմում է 5,2 հազ. քկմ (հանրապետության ցամաքային տարածքի ավելի քան 18 տոկոսը), որը փոքր թիվ չէ, եթե հաշվի առնենք Հայկական ՍՍՀ տիպիկ լեռնային բնույթը: Մակայն հիպսոմետրիկ գործնի պատճառով վիճակը զգալիորեն փոխվում է: Այսպես, առավել բարենպաստ և բարենպաստ բնական պայմաններ ունեցող բարձրության գոտիներին (մինչև 2000 մ, տես՝ աղյուսակ 2) բաժին է ընկնում հարթությունների կեսից քիչ ավելին միայն, որը ծառայում է իբրև արտադրության կազմակերպման տարածական բազիս: Մնացածը գտնվելով 2000 մ բարձր մասամբ է միայն ընդգրկված տնտեսական շղանառության մեջ և գլխավորապես օգտագործվում է իբրև սեզոնային արատավայր:


2 Մեղմաքել լանջեր (3°—8°) տնտեսական յուրացման պայմանները գնահատվում են ընդհանուր առմամբ իբրև լավ: Դա վերաբերում է հատկապես բնակչության տարաբնակեցմանը, խոշոր կապիտալ շինարարությանը և գյուղատնտեսությանը, որոնց լրացուցիչ ծախսերը այս-



ՄԱԿԵՐԵՎՈՒՑՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԹԵԶՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ (ԱՍՏԻՇԱՆ) ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՏԵՍԱԿԱՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- [Dotted pattern] Մինչև 3°: լավագույն
- [Horizontal stripes] 3°-8°: լավ
- [Vertical stripes] 8°-16°: քավարար
- [Cross-hatch] 16°-30°: սահմանափակ պիտանի
- [Solid black] 30° և ավելի, ոչ պիտանի

Նկ. 3. Հայկական ՍՍՀ յակերևույթի տիրապետող թեզությունները



տեղ, հարթությունների համեմատությամբ աճում են ոչ այնքան էլ մեծ շափով։ Առավել զգալի է տրանսպորտային շինարարության պայմանների վատթարացումը։

Մեղմաթեք լանջերը զբաղեցնում են 7,4 հազ. քկմ տարածություն (հանրապետության ցամաքային տարածության ավելի քան 26 տոկոսը)։ Սրանց շուրջ կեսը՝ 17 տոկոսն ընկած է 2000 մ-ից բարձր, այսինքն անբարենպաստ հիպոմետրիկ գոտիներում, որի հետևանքով նրանց տնտեսական նշանակությունը բավականին նվազում է։

3. Միջին թեխնիկան լանջեր (8°—16°) Սրանց պայմանների ընդհանուր գնահատականը բավարար է։ Այստեղ ամենուրեք տարածված են զգալի ուժի էռողիոն պրոցեսները։ Այս լանջերի օգտագործումը գյուղատնտեսության և շինարարության համար կարիքունի մեծ ծախսեր պահանջող լրացուցիչ համալիր միջոցառումների։ Շատ ավելի բարգ են տրանսպորտային շինարարության և ճանապարհների շահագործման պայմանները։ Այսուամենայնիվ, ժամանակակից տեխնիկայի կիրառման դեպքում, մինչև 16° թեքություն ունեցող լանջերը հնարավոր է և տնտեսապես նպատակահարմար ընդգրկել արտադրական օգտագործման ոլորտի մեջ, հատկապես, եթե ի նկատի ենք ունենում մեր հանրապետության լավ և լավագույն պայմաններ ունեցող տարածությունների խիստ սահմանափակ լինելը։

Միջին թեքության լանջերը իրենց գրաված տարածությամբ մոտավորապես հավասար են մեղմաթեք լանջերին (7,5 հազ. քկմ):

4. Զառիքափ լանջերը (16° – 30°) միայն մասամբ են պիտանի մասայական բնակեցման և բազմակողմանի արտադրական օգտագործման համար: Այստեղ վտանգավոր շափերի են հասնում հողմահարման ու դենուդացիայի պրոցեսները, հողածածկը բայց վախճանված է, դաշտավարությամբ զբաղվել գրեթե անհնար է, սահմանափակ են նաև արոտային անասնապահության հնարավորությունները: Բնակեցում և մասսայական շինարարություն կատարվում է միայն ժայրահեղ անհրաժեշտության դեպքում: Զառիքափ լանջերը զբաղեցնում են ավելի քան 7 հազ. քկմ տարածություն (հանրապետության ցամաքային տարածքի շուրջ 1/4-ը): Եթե ի նկատի ունենանք, որ դրա ճիշտ կեն էլ գտնվում է 2000 մ-ից բարձր գոտիներում, ապա պարզ կլինի թե մեր հանրապետության համար ինչքան սահմանափակ է զառիքափ լանջերի նշանակությունը իբրև հասարակական արտադրության տարածական բազիսի և արտադրության միջոցի:

5. Հայկական ՍՍՀ ցամաքային տարածության մնացած մասը՝ 1,3 հազ. քկմ կազմում են 30° -ից բարձր թե՛կության խիստ զառիքափ լանջերը, դարափոլերն ու բարափները, որոնք պիտանի չեն ոչ բնակեցման և ոչ էլ մասսայական կապիտալ շինարարության համար: Մինչև 40° թե՛փություններում շատ թանկ նստող դարավանդավորման շնորհիվ առանձին դեպքերում նպտակահարմար է ստեղծել բազմամյա տնկարկներ, ինչպես նաև սահմանափակ շափով զբաղվել արոտային անասնապահությամբ: Ակսած 40° թեքություններից դրանց հնարավորությունները ևս բացառվում են: Տեղանքը այլևս պիտանի չէ որպես հասարակական արտադրության տարածական բազիս օգտագործելու համար:

Ամփոփելով Հայկական ՍՍՀ տարածքի ոելիթֆային պայմանների որակական գնահատումները, կարող ենք ասել, որ այստեղ բնակչության տարաբնակեցման ու նյութական արտադրության կազմակերպման համար առավել նպաստավոր և նպաստավոր ոելիթֆային պայմաններ կան ալիքի համար: Էկմ տարածության վրա (հանրապետության ցամաքային տարածքի ավելի քան 42 տոկոսը):

Հասկանալի է, որ ոելիթֆային պայմանների վերոհիշյալ գնահատականի հիմքում դրված են ներկայումս գործող տեխնիկատնտեսական նորմատիվները, որոնք մշակված են արտադրողական ուժերի ու տեխնիկայի զարգացման արդի մակարդակի հաշվառմամբ: Վերջիններիս զարգացման համեմատ կարող են փոփոխվել նաև այդ նորմատիվները, որոնք էլ, իրենց հերթին կհանգեցնեն տարբեր թեքության լանջերի օգտագործման տեխնիկական հնարավորությունների ու տնտեսական արգյունավետության փոփոխությանը:

Հողատարածությունների տնտեսական օգտագործման բնույթի վրա որոշակի ազդեցություն է ունենում նաև տարածքի հաջորդ հատկանիշը՝ լանջերի դիրքադրությունը, չնայած հարկ է նշել, որ այդ ազդեցությունը ոչ թե անմիջական է, այլ միշտորդվում է բնական միջավայրի այլ բաղադրիչներով, այն է՝ ռադիացիոն հաշվեկշռով, օդի և հողի խոնավությամբ, հողաբուսածածկովիթով, շրերի մակերեսային հոսքով, լանջային պրոցեսների ինտենսիվությամբ և այլ երկույթներով:

Այդ տարրերի ու երկույթների կախվածությունը դիրքադրությունից նկատելի է դառնում՝ սկսած 5° թեքությունից: Ավելի փոքր թեքության տեղանքում դիրքադրությունը որևէ գործնական նշանակություն չունի և սովորաբար անտեսվում է: Հայկական ՍՍՀ-ում այդպիսի մակերևույթ ունեցող տարածությունները, ինչպես տեսանք, կազմում են շուրջ 30%: Մնացած 70 տոկոսի համար այս հատկանիշն արդեն գործնական հետաքրքրություն է ներկայացնում և պետք է հաշվի առնվի ըստ ամենայնի:

Պովետական Հայաստանում, նկատի ունենալով նրա աշխարհագրական լայնությունը և դրանով պայմանավորվող արեգակնային ճառագայթների անկման անկյան մեծությունը, ֆիզիկաշխարհագրական տարրերի համարիրը մարդու համար առավել նպաստավոր բնական կենսապայմաններ է ստեղծում հյուսիսային և դրան մոտիկ (հյուսիսարևելյան և հյաւսիս-արևմատյան) դիրքադրության լանջերում: Նրանց ընդհանուր տարածությունը 8,7 հազ. քկմ է, այսինքն հանրապետության ընդհանուր տարածության 29 տոկոսը: Առավել շորային և մարդու կենսագործունեության համար պակաս նպաստավոր կենսապայմաններ ունեցող հարավահայաց (հարավային, հարավ-արևելյան և հարավ-արևմտյան) լանջերը զբաղեցնում են 9,1 հազ. քկմ, որը գերազանցում է 30 տոկոսին:

Տարածքի ընդհանուր բնութագրին ու օգտագործման առանձնահատկություններին ուղղակի առնչություն ունեն ինժեներականական և սեյսմիկ հատկանիշները:

Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրության դասընթացից հայտնի է, որ այստեղ գերակշռում են ժայռային և կիսաժայռային մագմատիկ ու հրաբխային-նստվածքային պայմանները, որոնք տարածքի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների հետ մեկտեղ: Հիմնականում բարենպաստ պայմաններ են ստեղծում ամուր հիմք պահանջող խոշոր կառուցյների համար: Բայց և միաժամանակ, կապիտալ շինարարությանը լրացուցիչ դժվարություններ են հարուցում հաճախ կրկնվող սեյսմիկ երկույթները: Հանրապետությունը ամբողջովին գըռուվում է սեյսմիկ գոտում, իսկ տարածքի 1/4-ը, հենց այն շրջանները, որտեղ կենտրոնացված է ամրող բնակչության մեջ երրագից ավելին,

աելսմիկ տեսակետից վտանգավոր է համարվում։ Ըստ ընդունված սեյսմիկ շրջանացման սխեմայի, այդ տարածությունը մտնում է 7—9 բալանոց գոտու մեջ։ Սեյսմիկ տեսակետից վտանգավոր շրջանների համար մշակված են կառուցապատման հատուկ տեխնիկական պահանջներ և նորմատիվներ, որոնց համաձայն անհրաժեշտորեն օգտագործվում են շենքերին ավելի մեծ ամրություն հաղորդող հակասեյսմիկ տարրեր, իսկ դա իր հերթին հանգեցնում է մետաղի, ցեմենտի, ինչպես նաև աշխատանքի լրացուցիչ ծախսումների և շինարարության ընդհանուր թանկացման՝ միջին հաշվով 5—8 տոկոսով։

Սեյսմիկական առավել վտանգավոր գոտու մեջ են մտնում Շիրակի դաշտի, Արարատյան գոգավորության, Փամբակի լեռնաշղթայի և Զանգեզուրի շատ շրջաններ։

Հանրապետության՝ որոշ մասերում տարածքի տնտեսական յուրացման, հատկապես կապիտալ շինարարության համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում սողանեները (Աղստև, Ախուրյան, Հրազդան, Վեդի գետերի, Որոտանի աջ վտակների հովիտներում), սելավները (Փամբակի, Մաստարայի սելավի և այլ գետնովիտներում), ինչպես նաև երկրի մակերևույթի մոտ գտնվող գրունտային ջրերը (Արարատյան դաշտ)։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1.3. 1. Ինչո՞ւ կարելի է տարածքը դիմել որպես տնտեսական կատեգորիա։

2. Որո՞նք են մակերևույթի այն գլխավոր հատկանիշները, որոնք անմիջական ազգեցություն ունեն մարդու տնտեսական գործունեության վրա։

3. Տվեր լանջերի թերությունների դասակարգումը ըստ դրանց անտեսական օգտագործման հնարավորությունների։

1.4. ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՒԵՐԸ

Եթե Հայկական ՍՍՀ աշխարհագրական միջավայրի վերը նկարագրված հատկանիշները բնութագրում են բնակչության ու նյութական արտադրության տեղաբաշխման տարածական բաղիսն ու արտաքին պայմանները և ավելի շատ ընդգծում տարածքի յուրացման դժվարությունները, ապա ընդերքի հայտնաբերված և ուսումնասիրված ուսուրսները՝ օգտակար հանածոները հանդիս են գալիս իրեւ նյութական արտադրության պրոցեսին անմիջական մասնակցության ունեցող տարր, աշխատանիքի առարկա և միջոց, ընական արտադրանական ուժ։

Մակերևույթի ձևավորման երկրաբանական պայմանների և ընդերքի բարդ կառուցվածքի հետևանքով Հայկական ՍՍՀ տարածքը աչք է ընկ-

նում օգտակար հանածոների բազմազանությամբ և նրանց շատ տեսակ-ների հարստությամբ:

Հանքային ռեսուրսների որոշ տեսակներ (պղինձ, կապար, ցինկ, երկաթ, ոսկի, կավ, շինարարական քար) հայերի և նրանց նախնիների կողմից օգտագործվել են դեռևս հնագույն ժամանակներում։ Համաշխարհային գիտությունը ընդունում է այն փաստը, որ մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերին հենց Հայկական լեռնաշխարհում է կատարվել երկաթի ձուլման գյուտը։

Մարդկային հասարակության առաջընթացի, գիտության ու տեխնիկայի զարգացման համեմատ ընդլայնվել է ընդերքի հարստությունների շրջանակը, որոնք հայտնաբերվել և ներգրավվել են տնտեսական օգտագործման ոլորտը։ Այդ ուղղությամբ հատկապես մեծ ծավալի աշխատանքներ կատարվեցին սոցիալիստական շինարարության տարիներին։ Ստեղծվեց հանրապետության երկրաբանական ծառայություն, բացվեցին երկրաբանական գիտահետազոտական և ուսումնագիտական հաստատություններ։ Մավաված գիտական, որոնողական և հետախուզական աշխատանքների շնորհիվ Հայկական ՍՍՀ ընդերքի երկրաբանական ուսումնասիրվածությունը բարձրացավ ժամանակակից մակարդակի, հայտնագործվեցին և հետազոտվեցին բազմապիսի օգտակար հանածոների տասնյակ կ հարյուրավոր նոր հանքավայրեր, հայտնաբերվեցին օգտակար հանածոների նոր տեսակներ, մշակվեցին նրանց արդյունաբերական օգտագործման տեխնոլոգիական սխեմաները։ Մի շաբթ ապարատեսակներ, որոնք նախկինում մարդու համար պիտանի չէին, ներկայումս համարվում են բարձրարժեք արդյունաբերական հումք և լայն կիրառություն ունեն ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերում (բենթոնիտային կավեր, պեղիիս, հրաբխային խարամ և այլն):

Հայտնի է, որ հանքային ռեսուրսները ըստ բազագործության և օգտագործման առանձնահատկությունների բաժանվում են երեք հիմնական խմբի՝ վառելիքային, մետաղային և ոչ մետաղային։ Երկրորդ և երրորդ խմբերը Հայկական ՍՍՀ-ում ներկայացված են ամենաբազմազան տեսակների տեղական, հանրապետական և միութենական նշանակության հանքավայրերով։ Մինչդեռ առաջին խմբի՝ հանքային վառելիքի արդյունաբերական պաշարներ չեն հայտնաբերված։ Գործնական հետաքրքրություն են ներկայացնում գեղիքարմալ ռեսուրսները, որոնց օգտագործման համար մշակված է նպատակային ծրագիր։ Դրա իրականացումը կարող է նկատելի փոփոխություն մտցնել հանրապետության վալելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ։

Սովետական Հայաստանում հայտնաբերված են 30 տարրեր մետաղների ավելի քան 900 հանքավայրեր և երևակումներ։ Առավել կամ պակաս տնտեսական արժեք են ներկայացնում մետաղների բոլոր հիմ-

նական խմբերը՝ գունավոր, սև, միախառնվող (լեզիրացնող), ազնիվ մետաղները և հազվագյուտ ու ցրված տարրերը:

Գունավոր մետաղներից տարածված է պղինձը, որի հանքավայրերը երկու տիպի են՝ պղնձահրաքարային և պղնձամոլիբդենային: Առաջին տիպին են պատկանում Ղափանի, Շամլուղի և Ալավերդու հանքավայրերը: Առավել հզոր են երկրորդ տիպի՝ պղնձամոլիբդենային հանքավայրերը, որոնց բաժին է ընկնում հանրապետության պղնձի պաշարների ավելի քան 80 տոկոսը: Ընդումին, սրանք, ի տարրերություն առաջին տիպի հանքավայրերի, մեծ մասամբ երկրի մակերեսին ավելի մոտ, են ընկած, որի հետևանքով էլ բաց արդյունահանում կատարելու բարենպաստ պայմաններ ունեն, չնայած տրանսպորտային-աշխարհագրական դիրքի առումով զիջում են առաջին տիպի հանքավայրերին:

Վերջին տասնամյակների ընթացքում հանրապետության տարրեր մասերում հայտնաբերվել են նաև ալյումինի հումքի՝ նեֆելինային սիենիտների հարուստ հանքավայրեր: Դրանցից լավ ուսումնայիրված են: Փամբակի լեռնաշղթայում գտնվող Թեծ սարի խոշորագույն հանքավայրը, որի թե՛ լեռնահանքային, թե՛ տրանսպորտային պայմանները միանգամայն բարենպաստ են արդյունավետ շահագործում կատարելու համար: Հեռանկարում ժողովրդատնտեսական նշանակություն կարող են ձեռք բերել Մեղրու շրջանի հանքավայրերը:

Հիմնական գունավոր մետաղների հանքավայրերից արդյունաբերական նշանակություն ունեն բազմամետաղային՝ կապարացինկային հանքավայրերը, որոնցից նշանավոր են: Ղափանինը (Շահումյանը), Աղթաւայինը, Ղազմայինը:

Լայն առումով գունավոր մետաղների խմբի մեջ են մտնում միախառնվող (լեզիրացնող) մետաղները, որոնցից մեր հանրապետությունում լայնորեն տարածված է մոլիբդենը: Այն հանդես է գալիս պղնձի հետ մեկտեղ: Միութենական շափանիշով խոշոր են համարվում Քաջարանի, Ազգարակի և Լիճքի հանքավայրերը: Կարևոր նշանակություն ունեն նաև Հանքավանի և Եղեգիս գետի վերնագավառակի հանքավայրերը: Մասնավորապես վերջիններին հաշվին կարելի է զգալիորեն ավելացնել Հայկական ՍՍՀ մոլիբդենի արդյունաբերական պաշարները:

Ազնիվ մետաղների ինքնուրույն հանքավայրերից արդյունաբերական նշանակություն ունեն Զողոյի և Մեղրաձորի ոսկու արմատային հանքավայրերը, որոնց շնորհիվ մեր հանրապետությունը ոսկու պաշարների միութենական հաշվեկշռում նկատելի տեղ է գրավում:

Սովետական Հայաստանի ընդերքը հարուստ է հազվագյուտ և ցրված մետաղներով, որոնց նշանակությունը ժամանակակից արդյունաբերության և տեխնիկայի համար գնալով աճում է: Հայտնաբերված են,



Նկ. 4. Զանգեղուրի յեսերի բարձրադիր գոտում 1940-ական թվականին հայտնագործվել, հետախուզվել և ներկայումս շահագործվում է Թաղարպղեամոլիրդենային խոշոր հանքավայրը։ Տեղում կատարվում է հանքագումարացում։

մասնավորապես, ունիումի, կադմումի, մելենի, թելուրի, սկանդիքսմուտի, գերմանիումի, գալիումի, ինդիումի հանքավայրեր։

Հնդհանրապես՝ Սովետական Հայաստանի մետաղային հա-

բազմատարր են, կոմպլեքսային։ Հիմնական մետաղից բացի, հանքանյութում առկա են մեծ արժեք ներկայացնող ուղեկից տարրեր։ Օրինակ, Ղափանի պղնձային հանքանյութում հազվագյուտ մետաղների, ծծմբի, երկաթի, ցինկի և ազնիվ մետաղների պարունակությունը պղնձի համեմատությամբ կազմում է շուրջ 110 տոկոս, Քաջարանի կոմբինատում արտադրվող պղնձային կոնցենտրատում՝ ավելի քան 80 տոկոս։ Մոտավորապես նույն վիճակն է Ագարակի, Շամլուղի, Ախթալայի և մյուս պղնձամոլիբդենային, բազմամետաղային ու պղնձային հանքավայրերում։

Բարձրարժեք կոմպլեքսային հումք է նեֆելինային սիենիտը, որը ալյումինի օքսիդից բացի պարունակում է մեծ քանակությամբ սիլիկա-հող (կայծքարահող), կալիում, նատրիում և այլ օգտակար տարրեր որոնցից յուրաքանչյուրը կարող է արդյունաբերության առանձին ենթաճյուղի ու արտադրության հիմք հանդիսանալ։

Հայկական ՍՍՀ Անդրկովկասում առաջին տեղն է գրավում ոչ միայն գունավոր մետաղների, այլև երկարի պաշարներով։ Հայտնաբերված են մի քանի հանքավայրեր, որոնք, սակայն իրենց պաշարներով հանքային կազմով, շահագործման և տրանսպորտային-աշխարհագրական պայմաններով համարժեք չեն։ Ուսումնասիրության ներկա վիճակով արդյունաբերական առավել մեծ արժեք են ներկայացնում Հրազդանի, Արովյանի (Կապուտանի) և Սվարանցի երկաթի հանքավայրերը։

Հրազդանի հանքավայրը խոշոր չէ. պաշարները հազիվ հասնում են 100 մլն. տ., երկաթի պարունակությունը՝ 22—40 տոկոս է։ Բայց հանքանյութի բարձր որակը (վնասակար խառնուրդների՝ ծծմբի և ֆոսֆորի աննշան քանակը) և առանց դոմենյան պրոցեսի բարձրորակ սպունգային երկաթի ստացման հնարավորությունը, ինչպես նաև լավագույն տնտեսաաշխարհագրական դիրքը հանքավայրին առաջնակարգ նշանակություն են հաղորդում։

Արովյանի երկաթի հանքավայրը ակատիտամագնետիտային է, երկաթի պարունակությունը՝ 40—65 տոկոս, պաշարները ըստ նախնական գնահատման՝ մի քանի հարյուր մլն. տ։ Հանքանյութի կոմպլեքսային վերամշակման գեպքում կստացվի նաև սուլֆերֆոսֆատ։ Տրանսպորտային-աշխարհագրական դիրքը հանքավայրին առաջնակարգ նշանակություն են հաղորդում։

Սվարանցի հանքավայրը ամենախոշորն է պաշարները հաշվվում են ավելի քան 500 մլն. տ։ Երկաթի պարունակության տոկոսը ցածր է, ընդամենը 20, բայց հանքանյութը բազմատարր է (մագնետիտ-օլիվինային)։ Երկաթից բացի պարունակում է մագնեզիում, վանադիում, տիտան, նիկել և կորալտ։ Հանքանյութի կոմպլեքսային վերամշակումը հնարավորություն կտա շուգումից ու պողպատից բացի, կազմակերպել նաև այլ մետաղների մեծածավալ արտադրություն։ Հանքավայրի շահա-

գործումը դժվարացնող լուրջ հանգամանք է նրա անբարենպաստ աշխարհագրական դիրքը՝ հանրապետության տրանսպորտային մայրուղիներից ու տնտեսական կենտրոններից հեռու գտնվելը, ինչպես նաև ռելիեֆային դժվար պայմանները:

Ծատ բազմազան են ոչ մետաղային օգտակար հանածոները, որոնցից մի քանիսը պաշարների մեծությամբ աշքի ընկնող տեղ են գրավում համապատասխան հանքային հումքի միութենական հաշվեկշռում (պեղստ, հրաբխային տուփ, պեմզա, բնետոնիտային կավ և այլն). Ոչ մետաղային օգտակար հանածոների բոլոր երեք հիմնական խմբերն էլ՝ բնական շինանյութը, քիմիական հումքը և ինդուստրիալ հումքը հանրապետությունում ներկայացված են խոշոր և միջին չափսերի բազմաթիվ հանքավայրերով:

Բնական շինությունների հարստությամբ և բազմազանությամբ Հայկական ՍՍՀ առանձնահատուկ տեղ է գրավում Անդրկովկասում և Միությունում:

Ֆիզիկամեխանիկական և դեկորատիվ լավագույն հատկություններով ունեցող հրաբխային տուփերի երկրաբանական պաշարները գերազանցում են 2 մլրդ. մ³. Առանձնացված են հանքավայրերի տասնյակ խոշոր դաշտեր ու խմբեր, որոնցից են՝ Արթիկինը, Թալինինը, Անիպեմզայինը, Թյուրականինը, Ագարակինը, Մերձերեանյանը և այլն. Գերակշռում են վարդագույն, կարմրավուն, դեղնա-դարչնագույն և սև տուփերը. Զգալի են նաև ֆելզիտային տուփերի պաշարները (Նոյեմբերյան, Եղեգնաձորի շրջան և այլուր):

Տուփի հանքավայրերի մեծ մասի համար բնորոշ են տրանսպորտային աշխարհագրական հարմարավետ դիրքը (հետախուզված հանքավայրերի կեսից ավելին ընկած է երկաթգծից առավելագույնը 10 կմ հեռավորության վրա և ապահովված է խճուղային ճանապարհներով) վերգետնյա լեռնարդյունահանման աշխատանքների բարենպաստ պայմանները, որոնք ապահովում են տուփի ցածր ինքնարժեքը և նրա օգտագործման շահավետությունը՝ արդյունահանման վայրից հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա:

Սովորական Հայաստանը շատ ավելի հարուստ է բազալտներով՝ անդեղիտարազալտներով ու անդեղիտներով: Դրանք հզոր շերտով տարածվում են հանրապետության հյուսիս-արևմուտքում, Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաներում, Արագածի լանջերին, Զանգեզուրում: Ընդհանուր երկրաբանական պաշարները հաշվում են մինչև 125 միլիոն մ³: Բոլոր հանքավայրերն էլ տալիս են բարձրորակ շինաքար և խիճ, բայց մի քանիսը, մասնավորապես Կամո ու Ղափան քաղաքների շրջակայքի բազալտները պիտանի են նաև ձուլելու և մետաղի փոխարինիչներ, մեկուսիչներ ու հրակայուն նյութեր ստանալու համար (պետրալուրգիա):

Հայկական ՍՍՀ տարրեր շրջաններում լայն տարածում ունեն կրաքարը, պեմզան, տրասը (հրափխրաքարը), գիպսը, գաղը, որոնք ամուր հանքային բազա են ստեղծում մածող նյութերի՝ ցեմենտի և կրի արտադրության համար:

Հայտնաբերված և ուսումնասիրված են բարձրորակ լցանյութերի՝ օբյեկտիանի, լիթոդային պեմզայի, հրաբխային խարամի անդրկովկասյան և միութենական նշանակության հանքավայրեր։ Լիթոդային պեմզայի խոշոր կուտակումներ են հայտնաբերված Արագածի արևմտյան (Անիպեմզա, Պեմզաշեն) և արևելյան լանջերին։ Օրսիդիանի և խարամի կուտակումները նույնպես գտնվում են Արագածի ստորոտներում։ Հատկապես տնտեսական մեծ նշանակություն ունի պեռլիտը, որը լայն կիրառություն է գտել ոչ միայն շինանյութերի, այլև քիմիական, ապակու արդյունաբերության ճյուղերում, ժողովրդական տնտեսության մի շարք այլ բնագավառներում։ ՍՍՀՄ-ում հայտնաբերված ու հետախուզված պաշարների մեծ մասը կենտրոնացված է Հայկական ՍՍՀ-ում, Խոշոր հանքավայրերից են Արագածինը և Ֆանտանինը։

Մարմարի ու մարմարացված կոնգլոմերատների ընդհանուր պաշարները մյուս շինանյութերի համեմատությամբ այնքան էլ մեծ չեն։ Այնուամենայնիվ, մի շարք հանքավայրեր ունեն արդյունաբերական նշանակություն և աշքի են ընկնում բազմերանգ դեկորատիվ բարձր հատկություններով։ Հայտնի են Աղվերան-Արգականի, Արարատի, Կույրիշկի (Ճարխեցի) հանքավայրերը։

Ամֆոփելով, կարելի է ասել, որ Սովետական Հայաստանը ավելի քան բավարար շափով ապահովված է ժամանակակից շինարարական ինդուստրիայի համար անհրաժեշտ բոլոր տեսակի բնական շինարարական նյութերով, ինչպես նաև համապատասխան նումբօվ՝ արնեստական շինանյութերի լայնածավալ արտադրույուն կազմակերպելու համար։

Բազմապիսի ու հարուստ է նաև ոչ մետաղային օգտակար հանաժոնների երկրորդ խումբը՝ իմիտական նումբը։

Այստեղ առանձնատուկ տեղ է գրավում կերակրի աղը (քարաղը). որի երկու խոշոր ավագաններ են հայտնաբերված Արարատյան դաշտում (Երևանի ու Հոկտեմբերյանի հանքավայրեր), Միայն Երևանի հանքավայրի հետախուզված պաշարները գնահատվում են մի քանի տասնյակ մլրդ տ., իսկ աղը աշքի է ընկնում բարձր որակով. քլորային նատրիումի միջին պարունակությունը գերազանցում է 95 տոկոսից։ Այս հանքավայրը ոչ միայն բավարարում է մեր հանրապետության (մասամբ նաև Անդրկովկասի) կերակրի աղի գծով կենցաղային և արտադրական պահանջները, այլև նախադրյալներ ստեղծում ապագայում քիմիական

արդյունաբերության նոր ճյուղի՝ քլորային միացությունների արտադրություն ստեղծելու համար¹:

Արդյունաբերական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում քիմիական պարարտանյութերի համար ելանյութ ծառայող հանքատեսակները՝ ծծմբի հրաֆարը (Ղափան, Շամլուզ), ֆոսֆորիտը (Զանախչի գետի ավազանում), ապատիտը (Արովլան):

Հայկական ՍՍՀ քիմիական հումքի հաշվեկշռում աշքի ընկնող տեղ են գրավում կոմպելքսային հանքատեսակների վերամշակման հետևանքով անջատվող քիմիական նյութերը:

Տնտեսական մեծ արժեք ունեն ոչ մետաղային օգտակար հանածոների երրորդ խմբի՝ ինդուստրիալ հումքի պաշարները: Դրանցից են բենտոնիտային կավը (իջևանի հանքավայր, պաշարները 30 մլն. տ.), հրակայուն ապարները (հրակայուն կավերը թումանանի և Գուգարքի շըրջաններում, քրոմ-մագնեզիումային ապարները Շորժայում դոլոմիտները իջևանի շրջանում), ինչպես նաև ապակու հումքը (պերիտ, օրսիդիան, կվարցային ավազներ), հղկանյութերը և կիսաթանկարժեք գունագեղ քարերը (ագաթ, հասպիս, օնիքս): Վերջիններիս միջին մեծության հանքավայրեր են Հայտնաբերված իջևանի, Շամշադինի, Կալինինոյի և այլ շրջաններում:

Գնալով աճում է դիատոմիտների պահանջարկը, որը իրրև ֆիլտրող, ջերմամեկուսիչ, սպիտակեցնող նյութ և այլն, լայն կիրառություն ունի արդյունաբերության ամենատարրեր ճյուղերում: Հայտնաբերված են դիատոմիտի շուրջ երկու տասնյակ հանքավայրեր, որոնց ընդհանուր պաշարները նույնպես միութենական հաշվեկշռում նկատելի բաժին ունեն: Հարուստ են Հատկապես Որոտանի (Միսիանի շրջանում) Ձրաձորի (Արարատի շրջանում) և Փարպիի (Աշտարակի շրջանում) անքավայրերը:

Այսպիսով, Հայկական ՍՍՀ ընդերքում հայտնաբերված մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների բազմազանությունը և դրանց մեծ մասի պաշարների հարստությունը այլ գործոնների առկայության պայմաններում կարող են բավարար հիմք ծառայել արդյունաբերության արդեն ստեղծված ճյուղերի հետագա զարգացման և նոր ճյուղերի ստեղծման համար: Միաժամանակ հարկ է նշել, որ վառելիքային օգտակար հանածոների բացակայությունը, անկասկած, հանրապետության տնտեսական զարգացումը արգելակող էական հանգամանք է և մշտապես իրեն զգացնել է տալիս:

Միաժամանակ հարկ է նշել, որ քլորային միացությունների արտադրության էկուոգիապես վեսսակար լինելու հանգամանքը ի շիֆ է դարձնում Հայկական ՍՍՀ-ում դրա ստեղծման տեխնիկական հսարավորությունը տեսանելի հեռանկարում:

- Որո՞նք են Հայկական ՍՍՀ մետաղային օգտակար հանածոների գլխավոր տեսակները և հանքավայրերը:
- Բնութագրեք ու մետաղային օգտակար հանածոները և թվարկեք դրանց կիրառման գլխավոր բնագավառները:

1.5. ԿԼԻՄԱՑԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Հասարակական արտադրության՝ աշխարհագրական միջավայրը բնութագրող հատկանիշների մեջ առաջնակարգ դեր է կատարում կլիման, որը մարդու կյանքի ու արտադրական գործունեության համար հանդես գալով ուղես պայման, մի շարք դեպքերում կարող է ունենալ նաև ռեսուրսի, հասարակության արտադրամիջոցի նշանակություն:

Մարդու կյանքի ու հասարակական արտադրության վրա կլիմայի ազդեցությունը դրսենորվում է օդերևութաբանական տարրերի միջոցով։ Ուստի և այդ ազդեցության բնութագիրն էլ ճիշտ կրինի տալ ըստ այդ տարրերի, որոնք են օդի ջերմությունը, խոնավությունը, մթնոլորտային տեղումները, մթնոլորտային ճնշումն ու քամիները և այլն։

Հատկանշական է, որ հանրապետության տարածքի ընդհանուր բարձրադիր վիճակի հետևանքով օդի միջին ջերմաստիճանները այստեղ ավելի ցածր են, քան դիտվում է աշխարհագրական այդ լայնություններում ընդհանրապես։ Բնորոշ են նաև օդերևութաբանական ինչպես բոլոր տարրերի, այնպես էլ օդի ջերմաստիճանի թե՛ սեզոնային, թե՛ տարածական խիստ արտահայտված հակադրությունները։

Միջին տարեկան ամենաբարձր ջերմաստիճանը հավասար է 14° -ի (Զանգեզուրի Հարավում), մինչդեռ ամենացածրը — 3° է (Արագած լեռ)։ Խնչ վերաբերում է բացարձակ ջերմաստիճաններին, ապա դրանց առավելագույնը 42° է (Արարատ օդերևութաբանական կայան), նվազագույնը՝ -46° (Շուրաբաղ), իսկ ամպլիտուդան՝ 88° ։

Արտադրական նշանակություն ունեցող հատկանիշներից կարեոր են օդի միջին օրական ջերմաստիճանների 0° -ով անզնելու ժամկետները և 0° -ից բարձր միջին օրական ջերմաստիճաններին, երբ ջուրը չի սառչում, բնությունը արթուն է և պայմաններ կան շատ բույսերի աճի ու զարգացման համար։ Այդ տեսակետից ամենաբարենպաստ պայմաններ կան առաջարկություններում:

Կլիման որպես գյուղատնտեսության բնական ռեսուրս ուսումնասիրության առարկա է հատուկ գիտական դիսցիպլինի՝ ագրոկլիմայագիտության համար։ Այն ինչ-որ շափով իրոք ռեսուրս են դիտում նաև կուրորտուզիան, քաղաքաշինությունը։ Արտադրության տարրեր ճյուղերի վրա կլիմայի ներփառության հարցերով զբաղվում է ինժեներական կլիմայագիտությունը։

ըր առկա են հանրապետության ծայր հյուսիսային և ծայր հարավ-արեգակնային ցածրադիր հովտային շրջաններում, որտեղ 0° -ից բարձր լիչին օրական ջերմաստիճանները տևում են հունվարի վերջից կամ փետրվարի սկզբից մինչև դեկտեմբերի սկիզբը, այսինքն շուրջ 10 ամիս: Հանրապետության տարածքի մեծ մասում, 800—2000 մ բացարձակ բարձրության գոտում այն տևում է $7\text{--}8$ ամիս (մարտից նոյեմբեր), իսկ բարձր լեռնային գոտում՝ $4\text{--}5$ ամիս (մայիսի վերջից մինչև հոկտեմբերի կեսը):

Կիմայի արտադրական բնութագրի տեսակետից էական հատկանիշ է նաև օդի միջին ջերմաստիճանների $10^{\circ}\text{--}6$ անցնելու ժամկետները: Դա կարևոր է գյուղատնտեսական մի շարք բույսերի աճի ու զարգացման, ինչպես նաև բնակավայրերում ջեռուցման և ամառային տուրիստական սեզոնի տևողությունը որոշելու համար:

Գարնանը դրանք կարող են վրա հասնել ապրիլի սկզբին (հովտային շրջաններում) կամ մայիսի վերջերին (բարձր լեռնային գոտում), իսկ աշնանը համապատասխանաբար՝ հոկտեմբերին և սեպտեմբերին: Այսպիսով, $10^{\circ}\text{--}15^{\circ}$ ից բարձր միջին օրական ջերմաստիճաններով ժամանակաշրջանի տևողությունը նույնպես տարբեր է, տատանվելով յոթ (ցածրադիր գոտի) և երեք (բարձր լեռնային գոտի) ամսվա միջև:

Հանրապետության տարածքի համար բացահայտված է հետեւյալ օրինաշահիությունը: Գարնան «բարձրացումը» դեպի լեռները տեղի է ունենում յուրաքանչյուր 3—4 օրը 100 մ արագությամբ, իսկ օդի $0^{\circ}, 5^{\circ}, 10^{\circ}$ և 15° միջին օրական ջերմաստիճաններ ունեցող ժամանակաշրջանի տևողությունը յուրաքանչյուր 100 մ-ի վրա կրճատվում է $5\text{--}10$ օրով:

Անսառնամանիք օրերի թիվը, որը շատ կարևոր է հատկապես գյուղատնտեսության համար, առավելագույնին հասնում է Մեղրիում (253), մինչդեռ երկրագործության վերին սահմանում՝ շուրջ 2200 մ բացարձակ բարձրության վրա կազմում է $120\text{--}130$ օր, իսկ Արագածի օդերեսութարանական կայանում (ավելի քան 3225 մ բարձրության վրա) ընդամենը 60 օր է:

Երկրագործական շրջանների մեծ մասում գարնանային ցրտահարությունները ավարտվում են ապրիլի վերջին, աշնանային ցրտահարությունները սկսվում են հոկտեմբերին: Դրեթե ամեն տարի դրանք զգալի վնաս են հասցնում հանրապետության գյուղատնտեսությանը:

Կիմայի արտադրական բնութագրման առումով ուշադրության արժանի ցուցանիշ է հողի ջերմաստիճանը: Նա ոչ միայն բնութագրում է բույսի միջավայրը, այլև սառեցման կետը անցնելիս ազդում է նաև շինարարական աշխատանքների վրա:

Ծայր հարավ-արևելյան և հյուսիսային ոչ ընդարձակ հովտային շրջան-

Ներում տարին բոլոր հողը գործնականում չի սառչում, միջին լեռ-նային գոտում ավելի քան կես մետր խորության վրա բացասական զեր-մաստիճանների տևողությունը կազմում է 2—3 ամիս, իսկ բարձր լեռ-նային գոտում՝ մինչև 6 ամիս (1,5 մետր խորության վրա):

Ցածրադիր գոտում գարնանացանի ընթացքում (մարտ) հողը 5—10 սմ խորությամբ, ուր ընկնում է սերմը, 7° -ից տաք է: Ամառվա ըն-թացքում ամենաբարձր ջերմաստիճանը ցածրադիր գոտում հասնում է 30° -ի, իսկ միջին լեռնային գոտում՝ 20° -ից մինչև 25° -ի:

Մարդու օրգանիզմի նորմալ զարգացման, բույսերի, ինչպես նաև որոշ արտադրությունների համար որոշակի նշանակություն ունի օդի խոնավությունը, որը նույնպես հանրապետության տարածքում ենթակա է խիստ մեծ տատանումների: Օդի բացարձակ խոնավության ծայրա-հեղ ցուցանիշները ամուսն ընթացքում լինում են՝ առավելագույնը 72 մբ (Արագած), նվազագույնը՝ 17 մբ (Մեղրի): Հարաբերական խոնավության ցուցանիշները հետևյալն են. բարձր լեռնային գոտում այն հավասար է 60—70 տոկոսի, որը մարդու օրգանիզմի վրա բարերար ներգործություն է ունենում, ստորին գոտում հազիվ հասնում է 30—35 տոկոսի, իսկ առանձին օրեր նույնիսկ 15—20 տոկոսի: Սա արդեն շատ ցածր ցուցա-նիշ է և անբարենպաստ է համարվում մարդու առողջության համար:

Հայկական ՍՍՀ-ն ընդհանրապես չորային երկիր է: Այստեղ միջին հաշվով տարեկան թափվում է 511 մմ մբնուրությին տեղումներ, (տարրեր տարիներ տեղումների գումարը կարող է տատանվել 450—600 մմ միջև), Բայց տարածքի մեծ մասում, հատկապես ստորին և միջին գոտիներում գոլորշունակությունը (հնարավոր առավելագույն գոլորշիա-ցումը) մեծ շափով գերազանցում է տեղումների քանակը, որի հետևան-քով և դիտվում է խոնավության պակաս: Տեղումների քանակը, գոլոր-շունակությունը և դրանց տարբերության հետևանքով գոյացող խոնա-վության պակասը հանրապետության տարածքում շատ խայտարղետ պատկեր են ստեղծում: Չնայած դրան, նկատելի է ըստ բարձրության գոտիների նրանց փոփոխման որոշակի օրինաշափություն, այն է՝ տե-ղումների քանակը ավելանում է ստորինից դեպի բարձրադիր գոտիները, մինչեռ գոլորշունակությունը աճում է հակառակ ուղղությամբ: Դրա հե-տևանքով էլ տեղանքը ինչքան ցածրադիր է, այնքան ավելի խիստ է խո-նավության պակասը:

Այսպես, բարձրադիր գոտում, որտեղ գոլորշունակությունը 600 մմ -ից է պակաս է, տեղումների տարեկան առավելագույն քանակը հաս-նում է 800—900 մմ-ի, միջին լեռնային գոտում գոլորշունակությունը նկատելիորեն աճում է (մինչև 700—800 մմ), բայց տեղումների քանա-կը արդեն շատ չէ՝ 400—500 մմ: Ստորին գոտում գոլորշունակությունը հասնում է իր առավելագույնին՝ 1000—1300 մմ, դրան հակառակ տե-

ղումների տարեկան քանակը նվազագույնի՝ 200—300 մմ. Արդյունքը լինում է այն, որ գյուղատնտեսության համար խոնավության տեսակետից ամենանբարենպաստ պայմանները առկա են ստորին գոտում. որտեղ տիրապետող են կիսաանապատային և շոր տափաստանային բնական լանդշաֆտները, ուր առանց արհեստական ոռոգման անհնար է երկրագործություն զարգացնել:

Գյուղատնտեսության համար կարեղ հանգամանք է նաև մքնոլորտային տեղումների տարեկան բաշխումը, որը ընդհանուր առմամբ կազմելի է գնահատել որպես բարենպաստ: Հանրապետության գրեթե ամբողջ տարածքում ամսական առավելագույն տեղումները թափվում են մայիսին (տեղումների տարեկան գումարի շուրջ 20 տոկոս), այսինքն այն ժամանակ, երբ գյուղատնտեսական գարնանային հիմնական աշխատանքները ավարտված են:

Ամսական տեղումների երկրորդ մաքսիմումը դիտվում է աշնանը (հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին): Դա բարենպաստ պայմաններ է ստեղծում աշնանացան կուլտուրաների համար, բայց զգալիորեն դրվագացնում է որոշ տեխնիկական կուլտուրաների և խաղողի բերքահավաքը:

Դարնանը և ամռանը անձրևները մեծ մասամբ տեղատարափ են, հաճախակի է կարկուտը, որը գյուղատնտեսությանը զգալի վնաս է պատճառում:

Հանրապետության տարածքում, բացառությամբ Արարատյան դաշտի, ամենասակավ տեղումներով եղանակը ձմեռն է: Եթե չհաշվենք ցածրադիր գոտու որոշ ոչ ընդարձակ տարածություններ, հանրապետության մեծ մասում ձմեռը տևում է 3 ամսից ավելի (Սևանի ավազանում և բարձրալեռնային շրջաններում 4—6 ամիս): Զյան շերտի հաստությունը, որպես կանոն, ավելանում է ըստ տեղանքի բարձրության: Ստորին գոտու հովիտների հատակային մասում այն չի անցնում 10 սմ-ից, նախալեռնային գոտում հասնում է մինչև 0,5 մ-ի, լեռնայինում՝ 1,0 մ-ի, իսկ 2500 մ-ից բարձր գոտում կարող է գերազանցել նույնիսկ 1,5 մ-ին:

Առատ ձյունը, որքան ցանկալի է խոնավության կուտակման, ձմեռային տուրիքմի և սպորտի տարածման առումով, նույնքան տրանսպորտի (հատկապես ավտոմոբիլային) և շինարարության համար նկատելի դժվարություններ է հարուցում, իսկ որոշ լեռնանցքներում տրանսպորտային հաղորդակցության ժամանակավոր ընդհատման պատճառ է դառնում:

Բազմապիսի գործոնների (ընդհանուր ցիրկուլյացիոն, հիպսոմետրիկ, լեռնագրական և այլն) ազդեցության տակ համիների ուղղությունը, հաճախականությունը և ուժը մեծ փոփոխություններ են կրում թե ժամանակի ընթացքում, թե տեղից տեղ: Մթնոլորտային միջին տարեկան


առավելագույն ճնշումը դիտվում է Հանրապետության ծայր հյուսիսում և հասնում է 962 մբ., նվազագույնը՝ Արագածում է և չի անցնում 680 մբ-ից:

Հայկական ՍՍՀ մեծ մասում տիրապետող քամիների արագությունը չի գերազանցում 7,5 մ/վրկ-ին, որն ըստ Բոֆորտի սանդղակի համապատասխանում է 4 բալի (շափակոր քամի): Սակայն շատ շրջաններում հաճախակի են 10—15 մ/վրկ (6—7 բալ) արագության՝ այսինքն ուժեղ քամիները: Օրինակ, Սիսիանի լեռնանցքում քամիները տարվա ընթացքում այդպիսի արագությամբ կարող են սուրալ 86 օր, Երևանում՝ 67, Սևանում՝ 28, Լենինականում՝ 22 օր և այլն: Քամիները սովորաբար, ավերիչ ուժի շեն հասնում, բայց մի շարք շրջաններում առաջացնում են: Հողային շերտի հողմահարում, զմվարացնում են արտադրության առանձին ճյուղերի աշխատանքը և վատթարացնում մարդու կյանքի բնական պայմանները: Միաժամանակ ներկայիս տեխնիկան թույլ է տալիս քամու էներգիան վերափոխել էլեկտրական էներգիայի: Հանրապետության տարրեր վայրերում մոտավոր հաշվումներով կարելի է կառուցել հարյուրավոր հողմաէլեկտրակայաններ, որոնցից յուրաքանչյուրը կարող է արտադրել տարեկան հարյուր հազարավոր կվտ-ժ էլեկտրական էներգիա:

Կլիմայի, իբրև բնական պայմանի ու ոեսուրսի գիտական սպառիչ գնահատականը ենթադրում է ոչ միայն առանձին օդերևությաբանական տարրերի վերլուծություն, այլև մարդու կյանքի ու արտադրականի գործունեության վրա ամբողջությամբ վերցրած կլիմայի ազդեցության բազմակողմանի բնութագրություն, նրա կոմպլեքսային գնահատում և ապա, վերջինիս հիման վրա, տարածքի շրջանացում: Կլիմայի ուսումնասիրվածության արդի մակարդակը դեռևս հնարավորություն չի տալիս այդպիսի շրջանացում կատարել, չնայած արտադրության առանձին ճյուղերի, ինչպես նաև մարդու կենսագործունեության առանձին կողմերի պահանջների համար այդպիսի շրջանացման սիեմաներ մշակված են: Դրանցից է ագրոկլիմայական շրջանացումը, որը կլիմայական պայմանները քննարկում ու գնահատում է գյուղատնտեսական ուրտարության կազմակերպման հնարավորությունների տեսանկյունից¹: Ագրոկլիմայական շրջանացման վերջին սիեմայի համաձայն Հայկական ՍՍՀ տարածքը բաժանվում է ագրոկլիմայական երկու մարզերի, ութ շրջանների և տասնհինգ ենթաշրջանների (գծ. 5):

Ինչ վերաբերում է Հանրապետության տարածքի բնութագրությանը բայց տիրապետող եղանակների, ապա դրա մասին մոտավոր պատկե-

Տե՛ս Агроклиматические ресурсы Армянской ССР. Под ред. Р. С. Мкртычяна.—Л.: Гидрометеонзтат, 1976.



Նկ. 5. Հայկական ՍՍՀ ազրոկվիմայական շրջանացումը (ըստ Ռ. Ս. Մկրտչյանի)

բացում է տալիս № 3 աղյուսակը։ Հայկական ՍՍՀ տարածքը, գտնվելով միջին աշխարհագրական լայնություններում, աշքի է ընկնում տարվա բոլոր շորս եղանակների ցայտուն արտահայտվածությամբ։ Ինչպես երեվում է աղյուսակից, Հայկական ՍՍՀ տարածքի ավելի քան 1/3-ի համար բնորոշ է չափավոր տաք և տաք ձմեռը (Զանգեզուրի, Վայքի և Հյուսիս-արևելքի ցածրադիր հովտային շրջաններ), Արարատյան դաշտի որոշ հատվածներ), մինչդեռ մոտ 2/3-ում ձմեռը ցուրտ և չափավոր

ԵԱԿԱԾՈՎ ՐԱԴԱՐԱԳԻ ԵՎ ԵՎԵՐՄԱՆ ՎԱՐԴԻՊՐՈՎ ՍԻՄՑ

ցուրտ է: Տարածքի 16 տոկոսում գարունը տաք է (Արարատյան դաշտ, Վայքի; Զանգեզուրի, Հյուսիս-արևելքի ցածրադիր հովտային և որոշ նախալեռնային շրջաններ): Տարածքի կեսից ավելին (հիմնականում 1500 մ.-ից բարձր գոտիները) բնութագրվում է զով և ցուրտ գարունով։ Ինչ վերաբերում է ամռանը, ապա այն հանրապետության տարածքի 3/4-ում չափավոր տաք, տաք, շատ տաք և նույնիսկ շոգ է։ Դա նշանակում է, որ այդ տարածքում ամենուրեք հովտայան միջին ջերմաստիճանը շի իշնում 14° -ից և միայն բարձր լեռնային գոտում է, որ ամառը զով և չափավոր զով է (հովտայան միջին ջերմաստիճանը $10-14^{\circ}$ է)։

Աշունը ընդհանրապես տաք է, տարածքի շուրջ 80° -ում այն բնութագրվում է իբրև չափավոր տաք, տաք և շատ տաք, տարածքի մնացած մասերում՝ գլխավորապես բարձր լեռնային գոտում, տիրապետում է զով, իսկ մերձկատարային մասերում՝ նույնիսկ ցուրտ աշունը։

ՀԱՐԹՈՒ ԵՎ ԱՌԱՋԱՆՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք Հայկական ՍՍՀ կիմյական պայմաններն ու ռեսուրսները ըստ կլիմայի օդերևութաբանական տարրերի՝ օդի ջերմության, խոնավության, մթնոլորտային տեղումների, մթնոլորտ ճնշման ու քամիների։

2. Խնդիրներ են տարվա եղանակները Հայկական ՍՍՀ տարածքում։ Խնդիրներն են գրանց տարածական բաշխումը։

1.6. ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Զրային տարածությունը ցամաքի հետ մեկտեղ կազմում է երկրագնդի տարածքը։ Կ. Մարքսը տնտեսական առումով շուրջ համազոր է համարում հողատարածքին, այն նույնպես դիտելով որպես արտադրության պրոցեսի, մարդու արտադրական գործունեության անհետեղանյութական պայման, արտադրության ունիվերսալ միջոց՝ ժողովրդական տրնտեսության բոլոր ճյուղերի համար։ Ընդամենը, որոշակի մաքրության ջրի առկայությունը անհրաժեշտ պայման է նաև մարդու կյանքի համար։

Հասկանալի է, որ ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղեր տարբեր պահանջներ են ներկայացնում ջրի թե՛ քանակի, թե՛ որակի նկատմամբ։

Սրանց մի մասը (պյուղատնտեսությունը, սննդի արդյունաբերությունը, մասամբ կոմունալ տնտեսությունը և այլն) առավելապես շուրջ սպառող (ծախսող) ճյուղեր են, առանձին արտադրություններում շուրջ օգտագործվում է նույնիսկ որպես հումք Մյուս ճյուղերը (լեռնահանքային, մետալուրգիական, էլեկտրաէներգետիկ, քիմիական և այլն) շուրջ ծախսելով—օգտագործելով հանդերձ, շեն սպառում, այլ մասնակից դարձնելով տեխնոլոգիական պրոցեսին, ազդում են նրա միայն որակի վրա։ Այս դեպքում հնարավորություն կա մաքրման համապատասխան

աշխատանքներ կատարելուց հետո այդ զրի նույն քանակությունը նըրից օգտագործել. դա կոչվում է զրի օգտագործում փակ սիսեմայով, կամ շըրշանառու ջրամատակարարում:

Որևէ տարածքի ջրային ռեսուրսները գնահատելիս, զրի քանակից բացի, պետք է հաշվի առնվի նաև նրա որակը, ինչպես և ժողովրդական տնտեսության ճյուղերի առանձնահատկությունները, նրանց պահանջը զրի քանակի ու որակի նկատմամբ:

Հայկական ՍՍՀ-ն, հեռու լինելով ծովերից, ունի միայն ցամաքային ջրերի ռեսուրսներ, կազմված երեք բաղադրիչից՝ գետային հոսքից, ստորերկրյա ջրերից և կուտակված պաշարներից:

Հանրապետության ջրագրական առանձնահատկությունն այն է, որ ջրային ռեսուրսները գրեթե ամբողջությամբ ծեավորվում են նրա սահմաններում այստեղ թափվող մթնոլորտային տեղումների հաշվին, առանց տրանզիտային հոսքի էական մասնակցության:

Նախորդ բաժնում մենք տեսանք, որ հանրապետության տարածքում թափվող տեղումները ջրառատ տարիներին կազմում են շուրջ 600 մմ հաստության մի շերտ, որը հավասար է 18 մլրդ խմ ջրի քանակության: Դա Հայկական ՍՍՀ ջրային հաշվեկշիռի մուտքային մասն է: Ջրային հաշվեկշիռի ելքային մասում 54 տոկոսը գոլորշիանում է և միայն 46 տոկոսն է (ընդամենը 8 մլրդ խմ), որ գոյացնում է հոսք. Սա իր հերթին, մոտավորապես հավասար չափով բաշխվում է մակերսային հոսքի ու ստորերկրյա հոսքի միջև: Այսպիսով, հանրապետության ընակլության մեկ շնչին միջին հաշվով հասնում է առավելագույն հոսքի դեպքում 2,4 հազ. խմ ջուր, իսկ նվազագույն հոսք ունեցող տարում (երբ գումարային պաշարները հավասար են շուրջ 5 մլրդ խմ), 1,5 հազ. խմ:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այդ ցուցանիշները բավականին բարձր են: Բայց իրականում Սովետական Հայաստանը սակավագուր երկիր է և ունի ջրատեսական լարված հաշվեկշիռ: Նախ, այդ ցուցանիշները Սովետական Միության հանրապետությունների և աշխարհի երկրների մեծ մասի համեմատությամբ բազմապատիկ անգամ ցածր են: Այնուհետև, ջրային ռեսուրսների թե տարեկան, թե տարածական բաշխումը չի համընկնում ժողովրդական տնտեսության զրի պահանջին, որի հետևանքով էլ առանձին շրջաններում տարվա որոշ ամիսներին ջրի խիստ պակաս է նկատվում:

Հայկական ՍՍՀ տարածքը պատկանում է Կասպից ծովի ներմայրգամաքային անհոս ավազանին: Այնտեղ հաշվված է 210 գետ յուրաքանչյուրը ավելի քան 10 կմ երկարությամբ: Մրանք կուր (հանրապետության տարածքի 24 տոկոս) և Արաքս (76 տոկոս) գետերի վտակներն են: Գետերը կարճ են, ջրահավաք ավազանները՝ փոքր: Եթե չհաշվենք Արաքս և Ախուրյան սահմանային գետերը, ապա հանրապետության

գետերից ամենաերկարներն են Դեբեդը (Փամբակի հետ միասին)՝ 152 կմ, Հրազդանը՝ 146 կմ, Որոտանը՝ 119 կմ. Մնացածից յուրաքանչյուրը Հայկական ՍՍՀ սահմաններում ունի 100 կմ-ից պակաս երկարություն:

Առավել ընդարձակ ջրահավաք ավազանով աշխի են ընկնում նույն Դեբեդը՝ 4050 քառ. կմ, Ախուրյանը (առանց Թուրքիայի մասի)՝ 3602 քառ. կմ, Քասաղը Սև ջրի հետ միասին՝ 3450 քառ. կմ և Հրազդանը՝ 2890 քառ. կմ:

Մթնոլորտային տեղումների համեմատաբար աղքատ լինելը և ջրհավաք ավազանների փոքր տարածությունը պատճառ են այն բանի, որ գետերը սակավաջուր են, որ հանրապետությունում բացակայում են կենտրոնացված, շատ թե քիչ հզոր ջրահոսքերը: Ամենաշրառատ գետը Սևազուրն է, որը սնվում է Արագածի ստորոտներում փոկած հրաբխային լավաների տակից բխող հզոր աղբյուրներից: Նրա հոսքը մեկ վայրկյանում ավելի քան 34 խոր. մ է: Երկրորդ գետը Դեբեդն է Այրումի մոտ նրա հոսքը հավասար է 33 խոր.մ/վրկ: Սրան հաջորդում են Արփան, Որոտանը, Հրազդանը, Աղստերը: Մնացած գետերից յուրաքանչյուրի հոսքը՝ 1 վայրկյանում չի հասնում նույնիսկ 10 խոր. մ-ի:

Ջրօգտագործման տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հոսքի սեզոնային բաշխումը, գետերի ջրային ռեժիմը, որը պայմանավորված է դրանց սնման բնույթով: Կուրի ավազանի գետերի համար բնորոշ է ձնհալքային և անձրևային սնումը: Ստորերկրյա սնումը երկրորդական դեր ունի: Արագսի ավազանում ձնհալքային-անձրևայինի հետ մեկտեղ կարևոր նշանակություն է ձեռք բերում և ստորգետնյա սնումը: Առանձին դեպքերում ստորերկրյա սնումը դառնում է նույնիսկ հիմնական, այսինքն, նրա շորհիվ ձեւավորվում է գետի հոսքի քանակի կեսից ավելին: Հիմնականում ստորերկրյա սնում ունեն Սևազուրը, Գավառագետը, Մասրիկը, Ազատը, Հրազդանը, մասսամբ նաև Ախուրյանն ու Որոտանը Սրանց հոսքը տարբա ընթացքում համեմատաբար հավասառաշափ է բաշխվում, շնայած որ գարնանը ջրի մակարդակի զգալի բարձրացում, այնուամենայնիվ, նկատվում է:

Հանրապետության գետերի մեծ մասում. որտեղ սնումը հիմնականում ձնհալքային-անձրևային է, առավելագույն հոսքը (տարեկան հոսքի 50—67 տոկոս) անցնում է գարնան երեք ամսվա ընթացքում, իսկ նվազագույնը՝ ձմռանը (7—13 տոկոս):

Հանրապետության տարածքի գումարային հոսքի տարեկան բաշխումը տնտեսական օգտագործման տեսակետից նույնպես բարենպաստ չէ: Վարարման երեք ամիսներին (ապրիլ, մայիս, հունիս) բաժին է ընկնում ամբողջ մակերեսային հոսքի շուրջ կեսը, մինչդեռ ջրի ամենամեծ

Մոտավոր հաշվումները ցույց են տալիս, որ նույնիսկ միջին խոնա-
գության տարիներին ամռանը հանրապետության ամբողջ տարածքում
չը պակասը մոտենում է 1 մլրդ խոր. մ.-ին: Ենթադրվում է, որ առաջի-
կայում օգտագործման աճի համեմատ այդ պակասը ավելի կմեծանա:

Տնտեսական-արտադրական կարեոր հատկանիշ է գետահուների
մեծ անկումը. որով և պայմանավորվում են գետերի հիդրոէներգետիկ
պաշարների համեմատաբար բարձր տեսակարար ցուցանիշները, այսին-
քըն շրհավաք ավազանի միավոր տարածությանը կամ հունի միավոր
երկարությանը ընկնող պաշարները, թեև ինչպես տեսանք, մակերեսա-
յին հոսքը աղքատ է, գետերը սակավազուր են:

Վերջին ճշտված տվյալներով Հայկական ՍՍՀ տարածքի էներգամո-
դուկտ հավասար է ըստ տեխնիկական պաշարների՝ 300 հազ. կվտ.-
ժամ/ $կմ^2$, ըստ օգտագործման համար տնտեսապես արդյունավետ պա-
շարների՝ 150 հազ. կվտ.-ժամ/ $կմ^2$:

Տեխնիկապես հնարավոր է տարբեր հզորության հիդրոէլեկտրակա-
յաններ կառուցել հանրապետության շուրջ 5 տասնյակ գետերի վրա,
բայց մասնագետների ուսումնասիրություններով հաստատված է, որ
տնտեսապես ձեռնտու է դրանց միայն մի մասի շինարարությունը, որոնք
տարեկան կարող են տալ շուրջ 4 մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Նկա-
տի ունենալով, որ Հայկական ՍՍՀ էլեկտրաէներգիայի սպառումը այսօր
արդեն մոտենում է 15 մլրդ կվտ.-ժամ, այդ պաշարները մեծ համարել
չեն կարելի: Դրանց հիմնական մասը շուրջ 70 տոկոսը, բաժին է ընկ-
նում Հրազդանին, Որոտանին և Դեբեդին:

Հանրապետության գետերի հունի մեծ անկումը, լայն գետահովիտ-
ների բացակայությունը, ջրի սակավությունը և հոսքի անկայուն ոեժիմը
դրանց հիդրոէներգետիկ օգտագործման մի շարք առանձնահատկու-
թյուններ են թելադրում: Այդ առանձնահատկություններից հարկ է նշել
հատկապես բարձր ճնշումնային դերիվացիոն հիդրոէլեկտրակայանների
և դրանց կասկադների կառուցումը:

Հիդրոէլեկտրակայանները բնութագրող կարեոր ցուցանիշներից է
նրանց աշխատանքի ոեժիմը, որից և կախված է արտադրվող էլեկտրա-
լեներգիայի «որակը»: Ավելի «որակյալ» է համարվում այն կայանի ար-
տադրած էլեկտրաէներգիան, որի կարգավորվածության աստիճանը
բարձր է: Թանի որ Հայկական ՍՍՀ գետերի հոսքի ոեժիմը շատ անկա-
յուն է, ուստի բարձր որակի էլեկտրաէներգիա ստանալու համար հարկ
է լինում էլեկտրակայաններին կից կառուցել կարգավորող ջրամբարներ:
Ըստ որում, ինչքան մեծ է ջրամբարի ծավալը, այնքան մեծ են նրա կար-

գավորիչ հնարավորությունները, հետևապես և ավելի բարձր է թողարկ-
վող էլեկտրաէներգիայի «որակը»:

Թայց մյուս կողմից, տարեկան և սեզոնային կարգավորման խոշոր
շրամբարների կառուցման համար պահանջվում են ընդարձակ գետահո-
վիտներ, որպիսիք հանրապետությունում շատ չեն: Բացի այդ, խոշոր
շրամբարների ստեղծման համար հարմարավետ գետահովիտների հա-
տակային մասերը, իբրև կանոն, արժեքավոր մշակովի հողերով են
զրաղված և դրանք ջրի տակ թողնելը մեր սակավահողության պայման-
ներում տնտեսապես չի արդարացվում: Առաջնակարգ հանգամանք է
նաև այն, որ գլխավոր գետերի հոսքի տատանումները տարվա ընթաց-
քում տեղի են ունենում միաժամանակ, այսինքն սինխրոն են, որն ան-
հար է դարձնում հոսքի միջավազանայի կարգավորումը: Այս պայման-
ներում հանրապետության գետերի վրա կառուցված ջրամբարները մի-
այն օրական և շաբաթական կարգավորման հնարավորություն ունեն-
թացառություն է կազմում Հրազդանը, որի հոսքը բնական վիթխարի
շրամբարի՝ Սևանա լճի շնորհիվ, ունի տարեկան ու բազմամյա կարգա-
վորում:

Հայկական ՍՍՀ ջրային ռեսուրսների ընդհանուր գումարում կարևոր
բաժին ունեն ստորերկյա ջրերի պաշարները, որոնք կենտրոնացված են
միջլեռնային գոգավորություններում: Ձեւավորվելով մթնոլորտային տե-
ղումների և մակերեսային հոսքի մի մասի ներծծման շնորհիվ, ստոր-
գետնյա ջրային ավազանները կարևոր աղբյուր են ծառայում մի շարք
շրջանների արդյունաբերական, կոմունալ-կենցաղային և գյուղատնտեսա-
կան ջրամատակարարումը կազմակերպելու համար:

Ներկայումս հայտնաբերված է 11 ստորերկյա (այդ թվում մի քա-
նիսը արտեղյան) ջրավազան, որոնց գումարային ստատիկ (դարավոր)
պաշարները մոտավոր տվյալներով կազմում են 50 մլրդ. մ³: Մի քանի
միլիարդ մ³-ի են հասնում դինամիկ պաշարները, որոնք և անտեսական
օգտագործման առումով առաջնահերթ կարևորություն են ներկայաց-
նում: Առավել խոշոր են Արարատի, Լոռվա, Մասրիկի և Փամբակի սատոր-
երկյա ջրավազանները:

Իրենց պաշարներով ստորերկյա ջրավազաններին զգալի շափով
գիշում են վերգետնյա ջրային կուտակումները՝ լճերը: Հայկական ՍՍՀ
շուրջ 300 մշտական ու ժամանակավոր լճերի ջրի պաշարները կազմում
են գրեթե 40 մլրդ մ³, Դրանցից խոշորագույնին՝ Սևանա լճին, բաժին է
ընկնում այդ պաշարների 99,9 տոկոսը¹, ինչպես անցյալում, այնպես էլ

Մինչև 1937 թ., երբ սկսվեց Հրազդանի արհեստական հունով Սևանի ջրերի բաց-
թաղումը, միայն այդ լճի դարավոր պաշարները գերազանցում էին 58 մլրդ մ³-ին:

ներկայումս ու ապագայում համահանրապետական նշանակություն ունին միայն Սևանի ջրային պաշարները, որոնք ջրային հաշվեկշռի տարեկան և բազմամյա կարգավորիչի դեր են կատարում հանրապետության տարածքի ավելի քան 1/3-ի համար (Սևանի ավազան, Արարատյան գոգավորություն):

Ախուրյանի վերնագագառի գյուղտնտեսական ջրամատակարարման համար որոշ նշանակություն ունի Արփի լիճը, որն այժմ վերածվել է ջրամբարի Ախուրյան գետի վրա 10 մ բարձրության պատնեշ և կարգավորիչ շլյուզ կառուցելու շնորհիվ:

Մնացած լճերի ջրային պաշարները չնշին են: Դրանք ունեն լոկ սահմանափակ տեղական նշանակություն, ջրային հաշվեկշռում էական դեր չեն խաղում և կարող են օգտագործվել շատ փոքր տարածությունների ջրարբիացման, մասամբ ոռոգման, ինչպես նաև ռեկրեացիոն նպատակների համար:

Տնտեսական օգտագործման առումով պակաս կարեորություն չեն ներկայացնում ջրային ռեսուրսների որակական հատկանիշները: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ Հայկական ՍՍՀ թե մակերեսային (գետերի և լճերի), թե ստորերկրյա ջրերը իրենց ֆիզիկական ու կենսաբանական մաքրությամբ ու քիմիական բաղադրությամբ բնական վիճակում պիտանի են ոչ միայն ոռոգման ու արդյունաբերական օգտագործման, այլև խմելու համար: Քիմիական և կենսաբանական անալիզների տվյալներով լավորակ են համարվում հատկապես հարթխային շրջանների աղբյուրների ջրերը: Դրանց ջերմաստիճանը տարվա ընթացքում անփոփոխ է և 7—8°-ից շի անցնում: Երկրաբանական ծալքավոր կառուցվածք ունեցող շրջանների ջրերի համար բնորոշ է համեմատաբար բարձր հանքայնացումը:

Հայկական ՍՍՀ ջրային ռեսուրսների բնութագիրը լրացնող կարելվոր հատկանիշ է հանճային ջրերի առատությունը: Հայտնաբերված է ելքի տարբեր քանակով և ֆիզիկաքիմիական բազմազան հատկանիշներով շուրջ 700 հանքային աղբյուր: Հանդիպում են հանքային ջրերի ներկայումս հայտնի բոլոր նմասակները:

Առավել տարածված են ածխաթթվային (հիդրոկարբոնատային) շրիրը, որոնք կազմում են հանքային ջրերի ընդհանուր պաշարների կեսը: Այս խմբին են պատկանում Զերմուկի, Տաթևի, Դիլիջանի, Արարատի, Բընիի աղբյուրները: Պաշարների շուրջ 1/4-ը բաժինն է ընկնում հիդրոկարբոնատաքլորիդային և բլորիդահիդրոկարբոնատային ջրերին հայտնի են Արգնու, Հանքավանի, Լիճքի, Եղեգիսի աղբյուրները: Մնացածները խառը տիպի աղբյուրներ են:

Հանքային աղբյուրների մի մասը հանդես է գալիս շերմուկների

(թերմերի) ձեռվ, այսինքն տաք է: Ամենաբարձր ջերմություն ունեն ջերմուկի թերմերը՝ մինչև 64° :

Հանրապետության հանքային աղբյուրների օրական ելքը գերազանցում է 60 մլն. լիտրին: Դրանք կարող են տալ նաև 1,5 հազ. տ բնական ածխաթթու գազ: Սակայն առայժմ այդ վիթխարի հնարավորությունների մի շնչին մասն է միայն օգտագործվում:

Վերը մենք ծանոթացանք Հայկական ՍՍՀ ջրերի որակական բնութագրին նրանց բնական վիճակում: Սակայն մարդու միջամտության և հատկապես ջրերի արդյունաբերական աղտոտման հետևանքով իրական վիճակը մեծ շափով տարբերվում է բնականից: Ներկայումս գետերն են թափում տարեկան մոտ 300 մլն. խմ արդյունաբերական և կենցաղային կեղտաջրեր, որի հետևանքով հանրապետության հիմնական գետերի 1300 կմ ընդհանուր երկարության կեսից քիչ պակասը աղտոտված է, այլ կերպ ասած, արդյունաբերական և կենցաղային աղտոտման հետեւ վանկով տնտեսական շրջանառությունից փաստորեն դուրս են մնում կամ մասամբ են օգտագործվում ավելի քան 1,5 մլրդ խմ ջրային ռեսուրսներ:

Ջրային ռեսուրսների պահպանման, աղտոտված ջրերի մաքրման և բնական որակի վերականգնման նպատակով սկսված է մի շարք խոշոր ձեռնարկություններին կից մաքրման տեղամասերի, ինչպես նաև քաղաքային մաքրման կայանների կառուցումը: Ժամանակակից գիտությունը կեղտաջրերի կենսաբանական և քիմիական մաքրման լայն հնարավորություններ է ընձեռում: Առայժմ այդ հնարավորությունները անբավարար են օգտագործվում, մինչդեռ դրանց հետևողական կիրառումը կվերացնի մեր ջրային ռեսուրսների որակական սպառման վտանգը:

Հայկական ՍՍՀ ջրային ռեսուրսների քանակական ու որակական բնութագիրը ցույց է տալիս, որ ներկայումս, հատկապես տեսանելի ապագայում ժողովրդական տնտեսության բազմակողմանի զարգացման և քաղաքային ու գյուղական բնակավայրերի ջրամատակարարումը բավարար մակարդակով կազմակերպելու համար անհրաժեշտ է ջրի ամենախնայողական և արդյունավետ օգտագործում:

Մոտավոր հաշվումներով ներկայումս գյուղատնտեսության, արդյունաբերության և բնակչության կողմից օգտագործվում է հանրապետության ջրային ռեսուրսների շուրջ կեսը, որի 60 տոկոսից ավելին՝ 2,5 մլրդ խմ սպառվում է ամբողջությամբ: Մնացածը՝ ավելի քան 5,5 մլրդ խմ արտահոսք է տալիս գետի նրաքս և Կուր: Սակայն դրանից ազատ հոսք է համարվում միայն 4,5 մլրդ խմ, քանի որ 1 մլրդ խմ միջնարապետական պայմանագրերի և գետերի օգտագործման պետականորեն հաստատված գլխավոր սխեմաների համաձայն նախատեսվում է նույն գետերի ստորին ավագանների Աղրբեջանական ՍՍՀ և Վրացական ՍՍՀ սահմաններում գտնվող ջրօգտագործողների համար:

Հայկական ՍՍՀ պայմաններում ամենամեծ հանակությամբ ջաւա-
ճախսող նյուղը գյուղատնտեսությունն է: Մրա վրա էլ առավել մեծ շա-
փով անդրադառնում է շրային ռեսուրսների պակասը: Հանրապետության
հիդրոտեխնիկայի և շրային պրոբլեմների գիտահետազոտական ինս-
տիտուտի ռւսումնասիրությունները ցույց են տվել, որ առկա շրային ռե-
սուրսների լրիվ օգտագործումով կարելի է լրացուցիչ ռոռոգել ևս 0,5 մլն
հեկտար հողատարածություն (ներկայումս ռոռոգվում է ավելի քան 300
հազ. հայ), մինչդեռ շրային ռեսուրսների առատության դեպքում այդ
թիվը կարելի կիխնի կրկնապատկել: Զրային ռեսուրսները հիմնակա-
նում բավարար են Հայկական ՍՍՀ բոլոր արոտավայրերը շրարրի
դարձնելու հեռանկարային ծրագիրն իրականացնելու համար:

Զրային ռեսուրսների քանակն ու որակը որոշակի ներգործություն-
են ունենում արդյունաբերության նյուղային կառուցվածմի վրա: Դրանց
սակավությունը անբարենպաստ գործոնի դեր է կատարում շրատար-
տեխնոլոգիա ունեցող ճյուղերի (աև և գունավոր մետալուրգիայի, ժանր-
քիմիայի որոշ արտադրությունների) համար, իսկ շրերի ցածր հան-
քայնացումը և քիմիապես մաքուր լինելը դրականորեն են ազդում մաս-
նավորապես սննդի արդյունաբերության արտադրանքի (կոնյակի, մըր-
գի պահածոների) որակական հատկանիշների վրա:

Հանրապետության շրային ռեսուրսների բնույթը (լճեր, գահավի-
ժող գետային հոսքեր, սառնորակ քաղցրահամ և հանքային տաք ու սա-
ռը աղբյուրներ և այլն) և տեղաբաշխումը հանրապետության բնական
լանդշաֆտի մյուս տարրերի հետ մեկտեղ բարենպաստ են բնակչության
հանգստի, տուրիստական, առողջապահական հիմնարկների և սպոր-
տային բազաների կազմակերպման համար:

Հայկական ՍՍՀ համեմատարար փոքր տարածքում նրա լեռնային-
ոելիեթի պատճառով դիտվում է շրաբանական և շրային ռեսուրսների
օգտագործման առանձնահատկությունների աշքի ընկնող շրջանային
տարրերություններ: Այդ հանգամանքը թելադրում է կատարել նրա շրա-
տնտեսական շրջանացում; Զրատնտեսական շրջանացումը իրքն ճյու-
ղային շրջանացման տարատեսակ, ի տարրերություն ընդհանուր (ին-
տեգրալ տնտեսական) շրջանացման, հիմք է ընդունում տվյալ տարա-
ծության երեսույթների ու պրոցեսների միատարրությունը, տվյալ ճյուղի
զարգացման պայմանների նմանությունը: Ըստ այդ հատկանիշի Հայ-
կական ՍՍՀ-ում կարելի է առանձնացնել հետևյալ 8 շրատնտեսական
շրջանները:

Արարատյան գոգավորություն (Քասաղի, Հրազդանի, Սևքրի, Ազա-
տի, Վեդիի, Մաստարայի սելավի գետավազաններ),
Ախուրյանի ավազան,
Սևանա լճի ավազան,

Դեբեղի ավագան,

Հյուսիս-արևելյան (Աղստևի, Հախումի, Տավուշի գետավազաններ),

Վար (Արփայի ավագան),

Հյուսիսային Զանգեզուր (Որոտանի ավագան),

Հարավային Զանգեզուր (Ողջիի, Մավի, Մեղրիի, Նյուվադիի ավագան-ներ):

Թվարկած յուրաքանչյուր ջրատնտեսական շրջանի սահմաններում առկա են հիմնականում միանման ջրաբանական առանձնահատկություններ և մակերեսային ջրերի գոյացման պայմաններ: Յուրաքանչյուր շըրջանի համար ընդհանուր են նաև ջրատնտեսական հաշվեկշռի և ջրատոնտեսական միջոցառումների առանձնահատկությունները: Այնուհանդերձ, ջրատնտեսական շրջանների ներսում պայմանների բացարձակ միատարրություն լինել չի կրող: Դրանց յուրաքանչյուրի տարածքում ակնհայտ են տեղանքի հիպոմետրիայով պայմանավորված ներքին տարբերություններ, որոնք ուղղաձիգ գոտիականության բնույթ ունեն:

Յուրաքանչյուր ջրատնտեսական շրջանում առանձնացվում է երեք ջրատնտեսական ուղղաձիգ գոտի: Առաջինը ստորին գոտին է (մինչև 1000—1100 մ բացարձակ բարձրությունը) որտեղ ջրի ամենամեծ պահանջ ներկայացնում են գյուղատնտեսական ոռոգումը, բնակչությունը և արդյունաբերությունը, հետեւապես և այստեղ առավել նկատելի է ջրի քանակական ու որակական կորուստը:

Երկրորդը՝ միջին, անցման գոտին է (1100—2000 մ), որտեղ ջրային ուսուրսների առկա քանակը և պահանջարկը համեմատաբար հավասարակշռված են: Գյուղատնտեսական, արդյունաբերական ու կոմունալ-կենցաղային ջրօգտագործման հետ մեկտեղ առաջնակարգ նշանակություն ունի նաև հիդրոէներգետիկան, որը սակայն, ինչպես գիտենք, չի հանգեցնում ջրի քանակի նվազեցման և որակի վատթարացման:

Երրորդ ջրային գոտին բարձրաբեռնայինն է (2000 մ բարձր), որի ջրատնտեսական հաշվեկշռը դրական է: Ջրի հիմնական օգտագործողն ու սպառողը այստեղ անասնապահությունն է (արոտավայրերի ջրարդիացում, մասամբ ոռոգում):

Ջրատնտեսական նիշտ, գիտականորեն հիմնավորված շրջանացումը ոչ միայն նեշտացնում է ջրային ուսուրսների ուսումնասիրումն ու գնահատումը, այլև, ունի գործնական նշանակություն: Դրա օգտագործումը պլանային ու նախագծային աշխատանքներում նպաստում է վերշիններիս հիմնավորվածության ուժեղացմանը, ուղղինալ ջրատնտեսական, ինչպես նաև ջրային ուսուրսների միջավազնային վերաբաշխման հարցերի բազմակողմանի ու կոմպլեքսային լուծմանը:

Առանձնացված շրջանների ջրատնտեսական հաշվեկշռի բաղդատու-

մը ցույց է տալիս, որ թե ներկայումս և թե ապագայում չըի առավել մեծ պակաս նկատվում է Արարատյան գոգավորությունում, Ախուրյանի ավագանում և Վայքում: Ենթադրվում է, որ առաջիկայում ջրամբարների կառուցման միջոցով այդ շրջանների ջրային ներքին ռեսուրսների սեղոնային կարգավորումից բացի, դրանց պահանջի որոշ մասը կարող է բավարարվել հարեւան շրջանների հաշվին, այսինքն ջրանցքներ կառուցելու և ջրային ռեսուրսների միջջանային վերաբաշխում կատարելու միջոցով:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆԱՆՅՐ

1. Խնդիրին է ջրային ռեսուրսների տնտեսական նշանակությունը:
2. Բնութագրեք Հայկական ՍՍՀ ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռները:
3. Գնահատեք Հայկական ՍՍՀ ջրային ռեսուրսները (մակերեսային հոսքը, ստորերկրյա պաշարները, ճների ջրային պաշարները):
4. Որո՞նք են Հայկական ՍՍՀ ջրօգտագործման տարածական առանձնահատկությունները:

1.7. ՀՈՂԱՑԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Հողը բնության տարրերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում:

Նա հասարակական արտադրության ամենահիմնական ճյուղերից մեկի՝ գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցն է:

Զբաղեցնելով երկրի ցամաքային մակերեսութիվ վերին շերտը, նա աշքի և ընկնում ֆիզիկաբիմիական որոշակի հատկանիշնեռով, մասնավորապես բերրիությամբ: Հենց այս հատկանիշի շնորհիվ է, որ տարածքի վերին շերտը դառնում է գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոց:

Հողի շատ էական առանձնահատկությունն այն է, որ ճիշտ օգտագործելու դեպքում այն, ի տարրերություն մյուս բոլոր արտադրամիջոցների, ոչ միայն շի մաշվում, սպառվում, այլև անընդհատ բարելավվում է, բարձրանում է նրա բերրիությունը: Մյուս կարևոր տարրերությունն այն է, որ հողը, իրեն արտադրամիջոց, սովորաբար, ենթակա չէ տեղափոխման: Մասսայական օգտագործման դեպքում այն ունի իր որոշակի տեղաբաշխումը, որը գործնականորեն անփոփոխ է:

Ժողովրդական տնտեսության մյուս ճյուղունաբերությունը շինարարությունն ու տրանսպորտը, «անտարրեր» են ցամաքային մակերեսութիվ վերին շերտի ֆիզիկաբիմիական հատկանիշների նկատմամբ: Նրանք հողային շերտով ծածկված տարածությունը ևս օգտագործում են իրեն արտադրության կազմակերպման տարածական հիմք, օպերացիոն

բազիս, անկախ հողի արգավանդության աստիճանից: Սակայն հասարակության համար մինույնը չէ, թե ինչպիսի հողեր են օգտագործվում գյուղատնտեսության կողմից իրրե արտադրամիջոց և ինչպիսիք՝ մյուս ճյուղերի կողմից սոսկ որպես տարածք: Մինչույնը չէ նաև, թե որ հողերը գյուղատնտեսության որ ճյուղի կողմից են օգտագործվում:

Այս առումով էլ որևէ երկրի տնտեսաշխարհագրական բնութագրության, առավել ևս՝ հասարակական արտադրության տերիտորիալ կազմակերպման համար անհրաժեշտ է դառնում նրա հողային ռեսուների որակական ու հանակական հատկանիշների, կազմի ու տեղաբաշխման խոր իմացությունը:

Հայկական ՍՍՀ հողային ծածկույթն աշխի է ընկնում մեծ խայտաբղետությամբ, որը արդյունք է լեռնային բարդ ռելիեֆի, երկրաբանական տարակազմ նստվածքների, կլիմայական ու ջրաբանական պայմանների բազմազանության: Այդ բանին նշանակալից շափով նպաստել է նաև մարդու կողմից հողերի դարավոր օգտագործումը, երկրագործության տարրեր սիստեմների կիրառումը և, հատկապես, ոռոգումը:

Հանրապետության տարածքի հիպսոմետրիկ մեծ տարրերությունների հետևանքով ինչպես բնության մի շարք այլ տարրեր, այնպես էլ հողային ծածկույթը բաշխված է որոշակի հաջորդականությամբ՝ ուղղաձիգ գոտիականության օրենքով: Դա ակնհայտ է հատկապես հողերի խոշոր խմբերի՝ գենետիկական տիպերի համար:

Հայկական ՍՍՀ հողագիտության և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի վերջին ուսումնասիրությունների հիման վրա հանրապետությունում առանձնացված են հողերի 14 գենետիկական տիպ, 27 ենթատիպ և բազմաթիվ սեռեր, տեսակներ ու տարատեսակներ: Դրանք միմյանցից տարբերվում են իրենց ֆիզիկաքիմիական հատկանիշներով, հողաշերտի հզորությամբ, զերմացման ու խոնացման պայմաններով, հումուսի պարունակությամբ և այս բոլորի հետևանքով՝ նաև գյուղատնտեսության մեջ իրրե արտադրամիջոց օգտագործելու առանձնահատկություններով ու հնարավորություններով:

Հողերի 14 գենետիկական տիպերից առավել տարածվածները 5-ն են: Դրանց բաժին է ընկնում հանրապետության տարածքի 85 տոկոսից ավելին: Այդ տիպերն են՝ լեռնային սեահողերը, անտառային դարչնագույն, լեռնային շագանակագույն, լեռնամարգագետնային և լեռնային մարգագետնատափաստանային հողերը:

Առավել ընդարձակ տարածություն են զբաղեցնում լեռնային սեահողեր՝ 730 հազ. հա՝ հանրապետության հողային ֆոնդի 26 տոկոսը: Դրանք տարածված են գլխավորապես Արարատյան գոգավորության, Շիրակի ու Լոռիա դաշտերի, Սևանի ավազանի ու Զանգեզուրի փոքրամեծ սարավանդներում ու մեղմ թեքությամբ լանջերում՝ 1300—2400 մ

բացարձակ բարձրությունների վրա։ Հողերի այդ տիպը բնութագրվում է հումուսի զգալի պարունակությամբ (5—9 տոկոս), կավավազային կամ թեթև կավային մեխանիկական կազմով, գիպսի բացակայությամբ։ Հարուստ է համախառն ազոտով, ֆոսֆորով և կալիումով, սակայն մեծ մասամբ աղքատ է բույսերի համար մատչելի ազոտով և ֆոսֆորով։

Երկրագործության կողմից յուրացվածության աստիճանով սույն հողատիպը զիջում է միայն ոռոգելի մարգագետնային հողերին։ Լեռնային սևահողերի ավելի ինտենսիվ օգտագործմանը, դրանց բերրիության բարձրացմանն ուղղված միջոցառումներից են էրոզիայի դեմ պայքարի կազմակերպումը, սահմանափակ խոնավության շրջաններում՝ ոռոգումը, ամրացված ենթավարելաշերտ ունեցող հողերում՝ խոր փխրեցումը և մշակվող կուլտուրաների կենսարանական պահանջներին համապատասխան պարարտացումը (մեծ մասամբ ազոտային և ֆոսֆորային պարարտանյութերով)։

Համեմատաբար լավ արդյունք է տալիս հացահատիկների (հատկապես ցորենի), շաքարի ճակնդեղի, բազմամյա խոտաբույսերի, բանջարեղենի, ծխախոտի մշակումը։

Տարածությամբ երկրորդ տեղն է գրավում անտառային դաշնագույն հողերի տիպը։ Դրան բաժին է ընկնում հանրապետության ընդհանուր հողային ֆոնդի շուրջ 19 տոկոսու (531 հազ. հա)։ Բավականին ընդհանական զանազան տարածություններու նաև հանդիպում է Հայկական ՍՍՀ հյուսիսարևելյան և Հարավ-արևմելյան անտառային շրջաններում՝ մինչև 1500 մ բարձրություններում¹։ Հումուսի շափթ վերին հորիզոնում հասնելով 5—8 տոկոսի, դեպի ստորին շերտերը նվազում է։ Աևահողերի համեմատությամբ այս հողերի բերրիությունը նկատելիորեն պակաս է։ Տարածության կեսից ավելին անտառապատ է և հնարավոր չէ օգտագործել գյուղատնտեսության համար։ Անտառային բուսականությունից զերծ տարածություններում համեմատաբար լավ բերք են տալիս պտուղները, խաղողը, ծխախոտը, հացահատիկը։

Լեռնային շագանակագույն հողերը գրաղեցնում են 423 հազ. հա տարածություն (հանրապետության տարածքի 15 տոկոսը)։ Առավել ընդհանրական զանգվածները հանդիպում են Արաբատյան գագավորության նախալեռնային գոտում, Թալինի, Եղեգնաձորի, Աղիսբեկովի շրջաններում, 1000—1800 մ բարձրություններում։

Սրանք լեռնային սևահողերի հետ միասին կազմում են հանրապե-

¹ Անտառային դարչնագույն հողերից բացի առանձնացվում են անտառային գորշ հողերի և անտառային հումուսակարբոնատային հողերի տիպեր, որնց ընդհանուր տարածությունը կազմում է 100 հազ. հա, (հանրապետության տարածքի 3,6 տոկոսը)։ Անտառային հողերի երեք տիպերի ընդհանուր տարածությունը ավելի քան 630 հազ. հա է։

առության երկրագործության առավել արժեքավոր գլխավոր արտադրամիջոցը, նրա հիմնական բազան:

Լեռնային շագանակագույն հողերում աճող չոր տափաստանային նոսր բուսական ծածկույթը թողնում է կենսազանգվածի փոքր քանակություն, որի քայլայումը և կերպարանափոխումը սահմանափակ և անկայուն խոնավության պայմաններում հանգեցնում է թույլ և ոչ խոր հումուսացման: Նկատվում է նաև մոխրանյութերի և կարբոնատային միացությունների նշանակալից կուտակում: Կազմը մեծ մասամբ կավավագային է: Մեծ է քարքարոտությունը, հաճախ նկատվում է վերին շերտի ցեմենտացման երեսը:

Լեռնային շագանակագույն հողերի բերրիությունը և գյուղատնտեսական օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու գլխավոր ուղիներն են քարերից մաքրելը, խոտացանության միջոցով հողի կառուցվածքը վերականգնելը, ոռոգումը, պարարտացումը: Այստեղ նույնպես պահանջվում են հակաէռոզիոն միջոցառումներ: Հողերը հարմար են խաղողագործության, պտղաբուծության, ծխախոտագործության, բանջարաբուծության և հացահատիկների մշակության համար:

Լեռնամարգագետնային հողերը ձևավորվել են 2000—2400 մ-ից բարձր գոտում ուժեղ խոնավացման և ցածր ջերմաստիճանների պայմաններում, գրավում են շուրջ 370 հազ. հա տարածություն (հանրապետության ընդհանուր տարածության 13 տոկոսը): Բնորոշ են ճմարին հողագոյացման փուլը և հումուսանյութերի մեծ կուտակումը:

Այս տիպի հողերը երկրագործության մեջ գրեթե շեն օգտագործվում, քայլ սրանց է բաժին ընկնում ամառային արոտավայրերի ու խոտհարժների մեծ մասը: Թերրիության բարձրացման կարևոր միջոցառումներից են կրայնացումը, պարարտացումը և հակաէռոզիոն միջոցների կիրառումը:

Մոտավորապես նույնպիսի տարածություն՝ 360 հազ. հա (12,8 տոկոս) են գրավում լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ուղղաձիգ գոտիների շարքում սրանք նախորդում են լեռնամարգագետնային հողերի տիպին: Տարածված են թե Հայկական հրաբխային բարձրավանդակի լեռնազանգվածների և թե Փոքր Կովկասի լեռնաճյուղերի լանջերին 1800—2400 մ բարձրությունների վրա:

Ֆիզիկաքիմիական հատկանիշների տեսակետից այս հողերը բնութագրվում են հումուսի համեմատաբար բարձր պարունակությամբ (8—13 տոկոս), կրազերժությամբ, ծանր կավավազային կամ կավային մեխանիկական կազմով: Այս տիպի ենթատիպերը իրենց բերրիությամբ և պահանջվող ագրոմելիորատիվ միջոցառումներով նկատելիորեն տարբերվում են միմյանցից: Այդ միջոցառումներից նրանց համար ընդհա-

Նուր է պարարտացումը, հակաէրոզիոն պալքարը, մասամբ նաև ոռոգումն ու քարերից մաքրելը։ Համեմատարար հարմար է հացահատիկների և որոշ խոտարույսերի մշակման համար։

Երկրագործության համար առաջնակարգ նշանակություն ունեցող հողային ֆոնդում, շնայած սահմանափակ տարածվածությունը, աշքի ընկնող տեղ են գրավում կիսաանապատային գորշ հողերը, որոնք ժողովրդի մեջ հայտնի են «ղոեր» անունով (65 հազ. հա), և մարգագետնային կիսաանապատային գորշ ոռոգելի (Կուլտուր-ոռոգելի) հողերը (86 հազ. հա), Հողային այս տիպերը ծածկում են Արարատյան դաշտի մեծ մասը և իրենց բնական վիճակով, առավելապես բազմադարյան ոռոգման ու պարարտացման պայմաններում աշքի են ընկնում բարձր բերդիությամբ։ Այստեղ մելիորացման և ոռոգման դեպքում ստացվում է խաղողի, կորիզավոր պտուղների, բանջարաբոստանային և չերմասեր այլ կուլտուրաների բարձր բերք։

Արարատյան դաշտում երկրագործության համար բարենպաստ ջնրմային ոեժմի պայմաններում զգալի հետաքրքրություն են ներկայացնում ավտոմորֆ-ալկալի և աղուտ-ալկալի (ալկալի-աղակալած) հողատիպերը, որոնց ընդհանուր տարածությունը հասնում է 30 հազ. հա-ի, Դրանք բնական վիճակում պիտանի են ոչ դաշտավարության և ոչ էլ այգեգործության համար, սակայն աղազերծումից հետո երկրագործության համար դառնում են օգտակար Այստեղ հաջողությամբ աճում են մի շառք չերմասեր արժեքավոր կուլտուրաներ։ Ալկալի հողերի աղազերծումն ու յուրացումը կատարվում է գիպսացման և գործարանային թթու թափուկ-ների՝ ծծմբական թթվի կամ երկաթի սուլֆատի օգնությամբ։ Որոշակի տեսակի աղուտների յուրացումը հնարավոր է սովորական ջրով լվանալու միջոցով։

Ինչպես տեսնում ենք, Հայկական ՍՍՀ հողային ռեսուրսների մի մասն է միայն հարմար երկրագործության համար, այսինքն կարող է ծառայել իրրե գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոց։ Ըստ որում, դրանց բնական բերրիությունն էլ բարձր չէ, և բավարար արդյունք ստանալու համար անհրաժեշտ է կիրառել մեծ աշխատանք ու միջոցներ պահանջող մելիորատիվ միջոցառումների մի ամրող կոմպլեքս։ Այստեղից էլ բխում է հողային ռեսուրսների, հատկապես դրանց առավել արժեքավոր մասի՝ մշակովի հօղերի պահպանման ու անընդհատ բարելավման նույժ կարևորությունը։

Գյուղատնտեսության համար գլխավոր արտադրամիջոց ծառայող հողատարածությունը մեր հասարակության անփոխարինելի հարստությունն է և այն ամեն կերպ պետք է պահպանել, պետք է բարձրացնել նրա բերրիությունն ու օգտագործման ինտենսիվությունը։

1.7. 1. Բնութագրեք հողը որպես գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցի:

2. Որո՞նք են Հայկական ՍՍՀ հողերի գլխավոր տիպերը: Բնութագրեք յուրաքանչյուր տիպը որպես գյուղատնտեսության արտադրամիջոց օգտագործելու առանձնահատկությունները ու հեարագորությունները:

1.8. ԹՈՒՍԱԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Թուսական և կենդանական ռեսուրսներն են մարդու միակ կենսամիջոցը: Մարդկային հասարակության զարգացման սկզբնական փուլերում մարդն իր սնունդը հայթայթել է վայրի բույսեր (հատապտուղներ, սունկեր, ծաղիկներ), ինչպես նաև մանր կենդանիներ հավաքելով կամ որսալով (հավաքչություն): Արտադրողական ուժերի զարգացման ավելի բարձր մակարդակում, երր մարդը սովորում է աճեցնել բույսեր, ընտելացնել ու բազմացնել կենդանիներ, բնության պատրաստի արդյունքների՝ վայրի բույսերի ու կենդանիների օգտագործումը, որպես մարդու գոյության միակ միջոց, աստիճանաբար իր տեղը զիջում է երկրագործությանն ու անասնապահությանը: Գնայած մարդը այսօր էլ իր սննդի մի մասը հայթայթում է վայրի բույսերից ու կենդանիներից, այնուամենայնիվ, նրանց գլխավոր արժեքը այժմ դա չէ:

Ներկայումս բուսականության և կենդանական աշխարհի առաջնակարգ նշանակությունը երկու կերպ է դրսենորվում. դրանք ա) ժամանակակից արդյունաբերության մի շարք ճյուղերի (փայտամշակում, փայտաքիմիա, դեղորայքի արտադրություն, սննդի արդյունաբերություն, կաշվի-մորթելենի արտադրություն և այլն) համար արտադրամիջոց են, և դրանով էլ հենց նյութական արտադրության պրոցեսում հանդեմ են գալիս իրեն բնական ռեսուրսը, բ) մեր մոլորակի լանդշաֆտային թաղանթի գլխավոր, առաջնակարգ բաղադրիչներից են և մարդու կյանքի ու գործունեության համար անհրաժեշտ հատկանիշներ ունեցող բնական միջավայրի գոյուրյան կարևոր նախադրյալը, անմրածնշտ պայմանն են:

Մարդկային հասարակության արտադրողական ուժերի ներկայիս վիթխարի զարգացման դարաշրջանում, երր երկրի կենսուրութիւն քանակական ու որակական հատկանիշների նկատեմի կորուստ է տեղի ունենում, բուսական ու կենդանական աշխարհի իրեն բնական միջավայրի պահպանման և բարելավման անհրաժեշտ պայմանի, նշանակությունը ավելի ու ավելի է աճում:

Հայկական ՍՍՀ բուսականությունը աշքի է ընկնում բազմազանությամբ, որը բացատրվում է մակերեսույթի լեռնային բնույթով, կլիմա-

յական պայմանների խայտաբղետությամբ, երկրաբանական անցած դարաշրջաններում բնական միջավայրի զարգացման առանձնահատկություններով և բնության վրա մարդու անընդհատ աճող ներգործությամբ:

Հայկական ՍՍՀ տարածքը, գտնվելով բուսաշխարհագրական երկու՝ Կովկասյան և Հյուսիս-իրանական պրովինցիաների սահմանագրւին, ամփոփում է թե՛ մեկ, թե՛ մյուս ֆլորայի շատ հատկանշանական գծեր: Դրանց փոխազդեցության հետևանքով բուսական խմբակցությունների մեծ հարստություն է ստեղծվել, որոնց տարածումը ենթակա է ուղղաձիգ գոտիականության սկզբունքին:

Ըստ ակադեմիկոս Լ. Թախտաջյանի, հանրապետությունում առանձնանում են 17 բասական խմբակցություններ, որոնք միավորված են 7 բուսական ուղղաձիգ գոտիների մեջ:


Հանրապետության տարածքի յուրաքանչյուր 1000 քկմ-ին միջին հաշվով ընկնում է բույսերի 100 տարրեր տեսակ, այսինքն ճիշտ հարյուրապատճենիկ ավելի, քան ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ նույն շափսի տարածքին: Այստեղ բազմազան են մարդու կյանքի և արտադրական գործունեության համար օգտակար բուսատեսակները, սկսած կիսաանապատային-անապատային եթերայուղային տեսակներից, վերջացրած տափաստանային-մարգագետնային արոտային մեծ արժեք ներկայացնող փետրախոտերով ու տարախոտով և մի շարք արժեքավոր ծառատեսակներով:

Տնտեսական առումով առավել մեծ արժեք է ներկայացնում մարգագետնային և անտառային բուսականությունը: Մարգագետինները գըլխավորապես ձգվում են անտառային գոտուց վեր: Բուսատեսակների մեջ տիրապետում են հացազգիներն ու երկշաքիլավոր խոտերը: Մարգագետինները կազմում են հանրապետության արոտների ու խոտհարքների «ոսկե ֆոնդը» և ամառային արոտային շրջանում՝ անասնապահության գլխավոր կերային բազան:

Հայկական ՍՍՀ-ն անտառներով աղքատ է: Անտառների ու թփուտների ընդհանուր տարածությունը չի անցնում 380 հազ. հա-ից (320 հազ. հա անտառներ, 60 հազ. հա թփուտներ): Դրանից ծառապատ է միայն 250 հազ. հեկտարը: Անտառափայտի ընդհանուր պաշարները հաշվում են 30,6 մլն. խմ:

Անտառներն աշխի են ընկնում արժեքավոր ծառատեսակներով: Սառապատ տարածության մոտ 37 տոկոսը և անտառափայտի ընդհանուր պաշարների 55 տոկոսից ավելին բաժին են ընկնում նանաբենուն: Սրա անտառները հանդիպում են համատարած զանգվածներով և հանրապետությունում գերիշխող են:

Երկրորդ, առավել ընդարձակ տիպը կաղնու անտառներն են (ծառապատ տարածության 35 տոկոսը, բայց պաշարների միայն 23 տոկո-



Նկ. 6. Հայկական ՍՍՀ բնական ռեսուրսներից մեծ արժեք են ներկայացնում ալպյան մարգագետինները։ Տեսարան Արագածի լանջերից։

սը)։ Կաղնին մեծ մասամբ հանդիպում է հաճարենու հետ մեկտեղ։ Գուտ կաղնուտները շատ շեն և բացառապես հարմարված են հարավային շոր լեռնալանջերի միջին և վերին գոտիներին։

Հաջորդ, համեմատաբար լայն տարածված ժառատեսակը բոխան է (տարածության 18 տոկոսը, պաշարների 17 տոկոսը)։ Սա հաճարենու և կաղնու համեմատությամբ ավելի սակավարժեք է և քիչ է հատվել։

Անտառահատման, ինչպես նաև անտառում անասունների արածացման հետևանքով առաջին հերթին վնասվում է կաղնին։ Հետևանքը լինում է այն, որ հատկապես ստվերու և համեմատաբար խոնավ լանջերին կաղնին դուրս է մղվում, փոխարինվելով բոխիով։

Ինչպես տեսնում ենք, թվարկված երեք ժառատեսակներին, բաժին է ընկնում հանրապետության ծառապատ տարածության մոտավորապես 90 տոկոսը (225 հազ. հա) և ընդհանուր պաշարների 96 տոկոսը (ավելի քան 29 մլն խմ)։ Դրանք մեծ արժեք են ներկայացնում հատկապես փայտամշակման արդյունաբերության համար։

Հայկական ՍՍՀ անտառներում հանդիպող մյուս՝ մոտավորապետ 240 ծառատեսակներից առավել աշքի են ընկնում գիհին, հացենին, սոճին, թխկին, թեղին, լորենին, կեշին։

Նախկինում հանրապետության տարածքում անտառային տարա-

ժությունը շատ ավելի ընդարձակ է եղել։ Սակայն դարերի ընթացքում գլխավորապես անտրոպոգեն գործոնների ազդեցության տակ դրանք խիստ շափով պահանջել են և այսօր զբաղեցնում են գլխավորապես 20° և ավելի թեքություններ ունեցող լեռնալանջերը։ Այժմ անտառապատվածության աստիճանով (ընդհանուր տարածքի $12,7$ տոկոսը) Հայկական ՍՍՀ միութենական հանրապետությունների շարքում գրավում է $10\text{--}12$ տեղը, իսկ պետական նշանակության անտառների տարածությամբ (302 հազ. հա)՝ $14\text{--}15$ տեղը։

Հանրապետության անտառները գրեթե ամբողջությամբ մտցված են առաջին խմբի մեջ։ Դա նշանակում է, որ այնտեղ համատարած հատումը արգելված է։ Հատում թույլատրվում է միայն անտառավերականգնուման, սանիտարական և ինսամքի նպատակով տարեկան ոչ ավելի, քան 70 հազ. խմ փայտանյութի ծավալով, այն դեպքում, երբ ընդհանուր մինչև 60 -ական թվականները կատարվում էր նաև արդյունաբերական անտառահատում և տարեկան դուրս է բերվում $100\text{--}150$ հազ. խմ փայտանյութ։ Դա զգալիորեն գերազանցում էր տարեկան աճին և հանգեցնում էր անտառների կրծատման։

Սովետական իշխանության տարիներին զգալի աշխատանք է տարվել անտառային ռեսուրսների գիտական ուսումնասիրության, պահպանման ու վերականգնման ուղղությամբ։ 1927 թ. սկսած կատարվում են արհեստական անտառատնկումներ։ Ներկայումս նոր ստեղծված անտառների ընդհանուր տարածությունը կազմում է շուրջ 70 հազ. հա։ Դրանք հիմնականում Սևանի ջրից ազատված մերձափնյա գոտին է, քաղաքների կանաչապատված տարածությունները և որոշ լեռնալանջեր ու հեղեղատներ։

Արդյունաբերական անտառահատումների արգելման և նոր անտառազանգվածների ստեղծման հույժ անհրաժեշտությունը բխում է նրանից, որ այժմ հանրապետության անտառները իրավացիորեն դիւմում են ոչ այնքան իրեն արդ, ունաբերության հումքային բազա, ինչքան բնական միջավայրի ներդաշնակ զարգացման անհրաժեշտ նախադրյալ, հողապաշտան, ջրապաշտան և օդային ավազանի մաշրությանը նպաստող միջոց։ Սովետական Հայաստանի նման չորային (արիդ) շրջաններում առաջին հերթին անտառներն են ստեղծում ֆիզիկա-աշխարհագրական այն համալիրը, որտեղ առկա են բնական միջավայրի

Միայն անտառային հողերը, որտեղ նախկինում անտառի առկայությունը կասկած լի հարուցում, ներկայումս ավելի քան կրկնակի անգամ ավելի ընդարձակ են, քան այսօր անտառածածկ տարածությունները։ Մոտավոր տվյալներով, միայն վերջին $100\text{--}150$ տարուց անտառածածկ տարածությունները կրծատվել են մեկ երրորդով։

պահպանման և շատ բնական պրոցեսների ինքնակարգավորման պայմաններ:

Հայկական ՍՍՀ անտառների պահպանման ու ընդարձակման պրոբլեմը իր էությամբ հողային ու ջրային ռեսուրսների պահպանման ու հարսացման, մարդու կյանքի ու արտադրական զործունեության բնական միջավայրի պահպանման ու բարելավման պրոբլեմ է:

Մեծ է Հայկական ՍՍՀ մի շարք բույսերի դեղագործական արժեքը: Դրանք հայտնի են եղել դեռևս հին ու միջին դարերում և այժմ էլ լայնորեն կիրառվում են ժողովրդական ու պաշտոնական բժշկության մեջ: Դրանք գլխավորապես ալկալոիդներ, գլյուկոզա, եթերայուղեր, պոլիսախարիդներ և մի շարք այլ բուժական նյութեր պարունակող բույսերն են: ՍՍՀՄ-ում պաշտոնապես ընդունված դեղարույսերի տեսականու մոտ կեսը հանդիպում է Հայկական ՍՍՀ-ում:

Սովետական Հայաստանի կենդանական աշխարհը ևս խիստ բազմազան է: Այստեղ ֆառնայի գրեթե այնքան տեսակ կա, ինչքան ամբողջ Եվրոպա աշխարհամասում: Միայն ողնաշարավորները՝ 445 տեսակ են, որից կաթնասուններ՝ 75, թոշուններ՝ 302, ձկներ՝ 23:

Տարածքի դարավոր յուրացման, բնական լանդշաֆտի անընդհատ փոփոխության և կենդանիների անսիստեմ որսի հետևանքով հանրապետության կենդանական աշխարհը մեծ փոփոխություններ է կրել: Օգտակար շատ կենդանիներ (ազնիվ եղջերուն, վայրի ցուլը, մանր ձիերը, անտիլոպը, սամույրը) անհետացել են, վնասակար մի շարք կենդանիներ (մկնազգի կրծողներ, պարազիտներ, վնասակար միջատներ) հարմարվել են փոփոխված պայմաններին և ավելի տարածվել:

Ներկայումս լայն ծավալի աշխատանքներ են տարվում կենդանական աշխարհի պահպանման, բարելավման, նոր օգտակար կենդանիների կրիմայավարժեցման ուղղությամբ: Որսը անցկացվում է կազմակերպված ձեռվ, որոշակի ժամկետներում ու քանակով, իսկ առանձին տարիներ ամբողջովին արգելվում է:

Ուսի առավել արժեքավոր կենդանիներ են՝ մուշտակավորները (ազգեսը, փորսուղը, կզաքիսը, ջրասամույրը, նապաստակը), ինչպես նաև վարազը, այծյամը, վայրի ովխարը, այծը: Հանդիպում են նաև գայլ, լուսան, եղեգնակատու, հովազ, շախկալ, արջ, ժանտաքիս: Թոշուններից համեմատաբար շատ են լեռնային հավը, մոխրագույն սագամ-կագավը, լորը, վայրի բաղը, սև փարփարը, արոսը, վայրի աղավնին:

Զկներից արդյունագործական մեծ արժեք են ներկայացնում Սևանի իշխանը, կողակը, սիգը, Արփի լճի ծածանը, խրամուղին: Սևանի մակարդակի իշեցման պատճառով հատկապես իշխանի պաշարները մեծ շափով նվազել են: Դրական է այն, որ վերջին տարիներին մարդու ակտիվ գործունեության շնորհիվ ձկների որոշ արժեքավոր տեսակներ են

Հայտնվել բարձր լեռնային լճերում, ջրամբարներում և Արարատյան դաշտի արհեստական լճակներում (կարպային տնտեսություններ): Մասնավորապես Սևանա լճում դեռևս նախապատերազմյան տարիներին բնակություն հաստատեց լաղոգա լճից բերված սիպը, որն այսօր Սևանա լճի գլխավոր արդյունագործական ծուկն է:

Մեծ է մեղուների օգտակար նշանակությունը ոչ միայն մեղրի ստացման, այլև բուսաբուծության զարգացման (բույսերի փոշոտման) առումով: Հայկական ՍՍՀ-ում գերակռում են մեղուների երկու ցեղ՝ կովկասյան մոխրագույնը (հյուսիսային շրջաններում) և հայկական դեղնագույնը (հարավում):

Հայկական ՍՍՀ բուսական և կենդանական աշխարհի պահպանման, վերականգնման ու բարելավման, բույսերի ու կենդանիների օգտակար տեսակների պաշարների ավելացման համար մեծ նշանակություն ունի այն աշխատանքը, որ կատարվում է արգելոցներում, արգելավայրերում ու կլիմայավարժեցման տնտեսություններում: Ամբողջովին արգելված է վայրի ոչխարների, բեզոարյան այծերի, այծյամների, կովկասյան մայրահավերի, լեռնային հնդուհավերի և մի շաբք այլ կենդանիների որսը:

Հայրենի բնության, նրա կենսաբանական տարրերի՝ նռղերի, բուսականության ու կենդանական աշխարհի պահպանումն ու բարելավումը ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ու էկոլոգիական առաջնահերթ նշանակություն ունեն, դա կարևորագույն պետական, համազգային գործ է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՐԱԳԱԿԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է բնական ու կենդանական ռեսուրսների տնտեսական նշանակությունը:

2. Բնութագրեք Հայկական ՍՍՀ բնական ռեսուրսները և դրանց օգտագործման պահպանման վիճակը:

1.9. ՈԵԿՐԵԱՑԻՌ ԾԵՍՊԵՐՄԵՐԸ

Հասարակության զարգացման արդի պայմաններում մարդու կողմից օգտագործվող բնության տարրերի ու երկույթների թվում առանձնացվում են այնպիսիները, որոնք շմասնակցելով նյութական արտադրության պրոցեսին և որևէ ազդեցություն չգործելով նրա վրա, այնուամենայնիվ, ժողովրդական տնտեսության զարգացման, բնակչության

գործունեության համար ունեն հարաճուն նշանակություն։ Դրանք բնական ուկրեացիոն ուսություններն են, որոնք օգտագործվում են բնակչության հանգստի և առողջապահության կազմակերպման, մարդու կենսական ուժերի և աշխատունակության վերականգնման համար։

Աշխատավորության նյութական բարեկեցության ու կրթական մակարդակի բարձրացման, ազատ ժամանակի ավելացման հետևանքով մեծ շափեր է ընդունել բնակչության ամենալայն զանգվածների ուկրեացիոն գործունեությունը, որը գնալով դառնում է ավելի բազմազան և ընդգրկում է նորանոր շրջաններ։ Ակնհայտ է նաև, որ բնակչության ուկրեացիոն գործունեությունը ուրբանիզացիայի հարաճուն զարգացման ազդեցության տակ ավելի ու ավելի է կարիք զգում մոտենալ բնությանը՝ դառնալով բնական ուսուլունների օգտագործման ու սպառման ոլորտ։ Գնալով մարդը մաքուր օդի, բնական լանդշաֆտների, կարկաշահոս աղբյուրների ու գետերի, տափաստանի ու անտառի անդորրի, բնության գեղատեսիլ ու գողտրիկ անկյունների ավելի մեծ պահանջ է զգում։ Այս բոլորը ժամանակակից ինդուստրիալ հասարակության համար ձեռք է բերում կենսականորեն անհրաժեշտ և անփոխարինելի ուսուրսի նշանակություն։

Սովորական Հայաստանի լեռնային բնությունը մարդու ուկրեացիոն գործունեության համար ամենալայն ու բազմազան հնարավորություններ է ընձեռում։

Նախորդ բաժիններում բնութագրված բնական ուսուրսների մեծ մասը, մասնավորապես կլիման, բուսածածկույթը, կենդանական աշխարհը, մակերևույթային ջրերը և բնության մյուս տարրերը, որոնք կազմում են մարդուն շրջապատող բնական արտաքին միջավայրը, իրենց յուրահատուկ բնագավառից բացի կարող են օգտագործվել նաև որպես ուկրեացիոն ուսուրս։

Մարդու ուկրեացիոն գործունեության ձեռքին համապատասխան² ուկրեացիոն ուսուրսները կարելի է բաժանել հետեւալ տեսակների՝ կուրորտուրզիական, տուրիստական-մարզական և մասսայական տեղական հանգստի։ Մակայն պետք է ի նկատի ունենալ, որ այդ բաժանումը

¹ Լատիներեն recreatio բառից, որը նշանակում է վերականգնում։

² Ըստունված է տարբերել բնակչության ուկրեացիոն գործունեության հետեւալ ձեռքբերք, ա) բնության արժեքների օգտագործում (բնական գեղատեսիլ համայնապատկերների, հուշարձանների, երկույթների դիտում), բ) կուլտուրական արժեքների օգտագործում (ընթերցանություն, ներկայացումների, թանգարանների, պատմական հուշարձանների հաճախում, դ) սիրողական զբաղմունք (որսորդություն, հատապտուղների և սունկերի հավաքում, կունկցիոններություն և այլն), ե) բուժական-հիգիենիկ (արեի, օդի և ջրային լոգանքների ընդունում, շափակվոր զբանաց և այլն), զ) հասարակական աշխատանք։

խիստ պայմանական է, և բնության միենույն տարրը երրեմն կարող է հավասարապես դասվել ուկրեացիոն ռեսուլտաների թե մեկ, թե մյուս տեսակին:

Հարուստ ու բազմազան են Հայկական ՍՍՀ կուրուտոլոգիական ռեսուլտաները: Բազմապիսի հանքային աղբյուրները (որոնց ծանօթացանք շրային ռեսուլտաները բաժնում), լեռնային օդը, լուսի, ջերմության, ուլտրամանուլակագույն ճառագայթների առատությունը, բուժիչ տորֆերը և մի քանի այլ բնական պայմաններ լավագույն նախադրյալ են բազմապրոֆիլ, զարգացած կուրորտային տնտեսություն ստեղծելու համար:

Այդ տեսակետից հատկապես աշքի են ընկնում Հրազդանի միջին ավազանը՝ Մարմարիկի հետ միասին, Դիլիջան-Կիրովական-Ստեփանավան գոտին, Սևանա լճի մերձափնյա շրջանները, Արագածի միջին բարձրության լեռնալանչերը, Արփայի վերին ավազանը, Բարգուշատի լեռնաշղթայի անտառապատ լանջերը:

Բարենպաստ են բնակչության ուկրեացիոն գործունեության տուրիստական-մարզական ձեերի զարգացման բնական նախադարյալները: Կարճ տարածությունների վրա արագ փոփոխվող և հակադրություններով լի տեսարանները, բազմազան երփներանգ լանդշաֆտները, անդնդախոր կիրճերն ու հրաբխային կոները, մի շարք ուկիստային բույսերն ու լեռնային վճիռ լճակները, տուֆային ու բազալտային ծածկույթներն ու բնական բազմատեսակ ու մեծաքանակ հուշարձանները, այս բոլորը մեր հինավորց հողի պատմական, ճարտարապետական ինքնատիպ հուշարձանների հետ մեկտեղ ամեն մի ճանապարհորդի ու զրոսաշրջիկի առաջ բացում են նոր, անկրկնելի մի աշխարհ: Այստեղ հնարավոր է ընտրել մի քանի տասնյակ կիլոմետր ձգվածության տուրիստական երթուղիներ, որոնք ընդգրկում են բնական գոտիների ու լանդշաֆտների այնպիսի բազմազանություն, ինչպիսին շենք հանդիպում արենելանքուական հարթություններում՝ անցնելով 1500—2000 կմ տարածություն: Հետիոտն զրոսաշրջիկը այստեղ 1—2 օրում կարող է կտրել շուրջ մեկ տասնյակ բնական ուղղաձիգ գոտիներ ու ենթագոտիներ և կիսանապատներից հասնել մինչև ալպյան մարգագետիններն ու լեռնային տունդրայի սահմանը:

Տուրիստական բազմարովանդակ երթուղիներ ստեղծելու լայն հնագավորություններ կան հանրապետության բոլոր շրջաններում, սկսած Աղստեփի, Դեբեդի ու Ախուրյանի ավազաններից, Սևանի ու Արարատյան գոգավորություններից, վերջացրած Վայքով ու Զանգեզուրով:

Հարուստ ու հակադրություններով լի բազմաթիվ շրջաններում առկա են նաև մարգական բազաների ստեղծման լայն հնարավորություններ: Այս տեսակետից աշքի է ընկնում հատկապես 1500—2000 մ բարձրության գոտին, որտեղ նպաստավոր են մասնավորապես կլիմայական

պայմանները, բնական ու արհեստական ջրավագանները: Այստեղ առկա է թե ամառային, թե ձմեռային մարզական բազաների համար պահանջվող բնական պայմանների ու ոեսուրսների ամբողջ անհրաժեշտ համալիրը:

Ավելի համատարած բնույթ ունեն ոեկրեացիոն ոեսուրսների երրորդ խմբի՝ տեղական նշանակուրյան մասսայական հանգստի համար պահանջվող ոեսուրսները: Վերջիններիս թվում, հատկապես ամառային ամբիսներին, առանձնահատուկ արժեք ունեն ջրավագանները (*Սեղանա ու բարձր լեռնային մանր լճերը, Ապարանի, Արփիի և այլ ջրամբարներ*), լեռնային գետերը, սառնորակ աղբյուրները, անտառը:

Ինչպես արդեն ասվեց, ցանկացած բնական գոտին ու լանդշաֆտը և կենդանի ու անկենդան բնության յուրաքանչյուր տարր լայն առումով կարող են ծառայել իրեն ոեկրեացիոն ոեսուրս, ուստի և բնության օգտագործումը ոեկրեացիոն նպատակով ունի զանգվածային բնույթ և գնալով ընդլայնվում է: Այդ պատճառով էլ ոեսուրսները գնահատելիս առանձնահատուկ նշանակություն պետք է տրվի բնության, «ոեկրեացիոն տարողության» հարցին, այսինքն այն բանին, թե տվյալ տարածքը ինչպիսի ինտենսիվությամբ կարող է օգտագործվել, որպեսզի շխաթարվի միջավայրը, շխախտվի այնտեղ ընթացող բնական պրոցեսների հավասարակշռությունը, շկորչի նրա ինքնավերականգնման հնարավորությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Խելպիսին է բեկրեացիոն ոեսուրսների նշանակությունը ժամանակակից բնուածորիալ հասարակության համար:

2. Բնութագրեք Հայկական ՍՍՀ ոեկրեացիոն ոեսուրսները:

ԳԼՈՒԽ 2.

ԲՆԹՑԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

Նախորդ բաժիններից տեսանք, որ մարդուն շրջապատող բնական միջավայրի տարրերը և դրանց տարրեր տարածքային գուգորդումները հանդիսանում են ոչ միայն մարդու կյանքի ու հասարակության զարգացման բնական պայման, այլև աշխատանքի առարկա և աշխատանքի միջոց, այլ կերպ ասած՝ բնական արտադրողական ուժեր: Այս առումով օրինական ու ճշմարտացի է այն պնդումը, որ բնության օգտագործման և բնապահպանության վիճակը կարեոր ցուցանիշ է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, ավելին՝ ազգի ընդհանուր զարգացման մակարդակը որոշելու համար:

Դեպիոնալ բնօգտագործման ու բնապահպանության պրոբլեմները պատշաճ ուշադրության են արժանացել երկրի տնտեսական զարգացման հարցերի մասին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության դեռևս առաջին որոշումներում։ Սակայն հետագայում սկսեց տարածում գտնել այն սխալ ու վնասակար տեսակետը, թե բնությունն անսպառ է, թե մարդը կարող է բնական միջավայրի տարրերն օգտագործել այնպես և այն չափով, ինչպես և ինչ չափով ցանկանա։

Մարդը բնության արգասիքն է և նրա մի մասը, Մարդու գործունեությունը հատկապես գիտատեխնիկական հեղափոխության և ինդուստրիալ զարգացման ներկա պայմաններում լուրջ փոփոխություններ է մտցնում նրան շրջապատող բնության մեջ, որոնք իրենց չափերով ու հետևանքներով երրեմն կարող են հավասարվել լոկալ և նույնիսկ համամոլորակային երկրաբանական փոփոխություններին։

Սոցիալիստական հասարակարգում, պլանային տնտեսության պայմաններում բոլոր նախադրյալները կան, որպեսզի մարդու ազգեցությունը բնական միջավայրի վրա լինի ոչ տարերային, այլ նպատակալաց, հանգեցնի ոչ թե նրա վատթարացմանը, բնության էկոլոգիական հավասարակշռության խախտմանը, այլ պահպանությանը, բարելավմանն ու հարստացմանը։

Հայկական ՍՍՀ-ում, որտեղ գոյություն ունի բնակչության ու արտադրության մեծ խտություն, տարածքի յուրացվածության բարձր աստիճան, պահանջվում է բնության հանդեպ լինել առավել զգույշ ու հաշվենկատ, ինամբով, ուսցիոնալ ու խնայողաբար օգտագործել բնական տեսուրսները և, որտեղ հնարավոր է, ապահովել այդ ռեսուրսների վեցականքնումն ու ընդլայնված վերարտադրությունը։ Արտաքին բնական միջավայրը, բնական ռեսուրսները պետք է ծառային ոչ միայն ներկա, այլև գալիք սերունդներին։

Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացումը և ինդուստրացումը, ինչպես կտեսնենք դասընթացի հաջորդ բաժիններում, աշքի է ընկել բարձր տեմպերով։ Այդ ընթացքում բազմապատիկ անգամ ուժեղացել է բնական միջավայրի վրա մարդու արտադրական և ոչ արտադրական ներգործությունը։ Մշակվել և իրականացվել են ժողովրդատնտեսական այնպիսի մեծածավալ միջոցառումներ, որոնք էական և լուրջ հետևանքներ ունեցող փոփոխություններ են առաջացրել ոչ միայն բնական միջավայրի առանձին տարրերի քանակի ու որակի, այլև ընդարձակ տարածությունների լանդշաֆտների ու բնական համալիրների մեջ։ Ընդամենը մեկ սերնդի արտադրական գործունեության հետևանքով և նրա աշքի առաջ էական փոփոխություններ են կատարվել հողային ու բու-

սական ծածկույթի, մակերեսային ջրերի տեղաբաշխման, ընդերքի հարցադրությունները արտադրական շրջանառության մեջ ընդգրկելու և այլ բնագավառներում: Զորացվել են ճահիճներ ու ստեղծվել են նոր ծառաստաններ, ոռոգվել են, դարձել մշակովի ու բարեբեր կիսաանապատային ու շոր տափաստանային ընդարձակ տարածություններ, փոխվել են գետահուներ, գոյացել են նոր լճեր ու լճակներ: Փոքրացել ու որակական լուրջ փոփոխություններ է Կրել Սևանա լիճը, բազմաթիվ վայրերում, հատկապես խոշոր քաղաքներում ու դրանց հարող շրջաններում երկան են եկել հազարավոր կիլոմետրեր տարածվող ինդուստրիալ լանդշաֆտներ, որտեղ անճանաչելիորեն փոխված է բնական միշտապայրը:

Սակայն միշտ և ամենուրեք չէ, որ արտադրողական ուժերի բուռն զարգացումը և բնական միջավայրի փոփոխությունները չեն ուղեկցվել բացասական հետևանքներով: Շատ դեպքերում չի ապահովվել բնական միջավայրի մաքրության և էկոլոգիական հավասարակշռության պահպանությունը: Վաթսունական թվականներից սկսած ամբողջ երկրով մեկ բնական միջավայրի պահպանությունն ու առողջացումը, բնական ռեսուրսների մի շարք տեսակների խնայողական ու ռացիոնալ օգտագործումը դարձել է հույժ անհրաժեշտություն: Էկոլոգիական իրադրությունը հատկապես սրվել է Սովետական Հայաստանի, ինչպես նաև ՍՍՀՄ մյուս հանրապետությունների զարգացած արդյունաբերական ու նոր յուրացված գյուղատնտեսական շրջաններում:

Ամբողջ երկրով մեկ հասունանում էր ոեգիռնալ միջոցառումների հետ մեկտեղ համապետական ու համապարփակ նոր միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը: Ցոթանասունական թվականներին ընդունվեցին ու գործողության մեջ դրվեցին բնության և նրա առանձին տարրերի՝ հողերի, ջրերի, ընդերքի, անտառների, կենդանական աշխարհի պահպանության ու ռացիոնալ օգտագործման մասին օրենքներ ու նորմատիվային այլ ակտեր: ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 10-րդ (1976—1980 թթ.) և հետագա հնգամյակների գլխավորություններում, հնգամյա ու տարեկան պլաններում բնության պահպանության հարցերը միավորվեցին ինքնուրույն բաժնի մեջ, որով ընդգծվեց դրանց հատուկ կարևորությունը:

Բնապահանական միջոցառումները նկատելիորեն աշխուժացան են և Հայկական ՍՍՀ-ում: Մշակվեցին և ընդունվեցին Հայկական ՍՍՀ հողային, ջրային, անտառային օրենսդրությունները, ընդերքի վերաբերյալ օրենսդրությունը, առողջապահության վերաբերյալ օրենքը, մթնոլորտային օդի պահպանության, կենդանական աշխարհի պահպանության մասին օրենքները: Ուժեղացավ ժողովրդատնտեսական պլանների էկոլոգիական ուղղվածությունը: Ստեղծվել են Հայկական ՍՍՀ Մինիստր-

ների խորհրդի նախագահության՝ Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ուսցիոնալ օգտագործման հանձնաժողով և Հայկական ՍՍՀ շրջակա միջավայրի պահպանության պետական կոմիտե, որոնք կոչված են կոռորդինացնելու բոլոր արտադրական մինիստրությունների ու գերատեսչությունների բնապահպանական միջոցառումները, վերահսկելու և ապահովելու շրջակա միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների ուսցիոնալ օգտագործումը։ Բնապահպանական գործունեության բնագավառում ընդլայնվել են առողջապահության մինիստրության, հիդրոօդերկության ու բնական միջավայրի վերահսկողության վարչության իրավունքները։ Տեղական սովետների մասին ընդունված օրենքով նրանց վրա է դրված տվյալ սովետներին ենթակա ամբողջ տարածքում բնական միջավայրի վիճակի ու պահպանության ամբողջ պատասխանատվությունը, ընդլայնվել են այդ հարցում սովետների իրավունքները։

Հանրապետության առջև կանգնած բնօգտագործման ու բնապահպանական ներկայիս պրորեմները կարելի է քննարկել ըստ բնական միջավայրի զիխավոր բաղադրիչների ու բնական ռեսուրսների տեսակների։

Բնակավայրերի օդային ավագանի պահապանությունը։ Օդային ավագանի աղտոտման գլխավոր աղբյուրը, ինչպես հայտնի է, արդյունաբերությունն է և ավտոմոբիլային տրանսպորտը։ Հայկական ՍՍՀ պայմաններում օդային զանգվածը աղտոտող գլխավոր ագենտներն են ծծմբային զազր, ածխածնի օքսիդը, ազոտի երկօսիդը, ֆենոլը, ֆոռացրածինը, ամիակը և փոշին։ Առավել աղտոտված օդային ավագանունեն ծրեւան, Կիրովական, Ալավերդի, Արարատ և Հրազդան քաղաքները, որտեղ կենտրոնացված են այդ առումով հատկապես վնասակար մետալուրգիական, քիմիական, շինանյութերի արդյունաբերության և էլեկտրաէներգետիկական (ՃԷԿ) ձեռնարկությունները։ Դրանցից մթնոլորտ կատարված արտանետումները հաճախ գերազանցում են թույալտրված սահմանը և ավտոմոբիլների ներքին այրման շարժիչների թունավոր գազերի հետ մեկտեղ մեծ շափով աղտոտում են բնակավայրերի օդային ավագանը։

Դիտության ու տեխնիկայի զարգացման արդի մակարդակում մթնոլորտային օդի մաքրմանն ուղղված առավել արդյունավետ միջոցներն են՝ արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցումը և անբավարար ու սակավաբարփառ տեխնոլոգիայի ներդրումը, զագամահրիշ կայանքների ու սարքերի տեղադրումը, հատկապես վնասակար ձեռնարկությունների ու արտադրամասերի դուրս բերումը տվյալ բնակավայրեցից, ավտոտրանսպորտի էկոլոգիական անվտանգությունն ապահովող կոմպելքս միջոցառումների ներդրումը և այլն։

Վերջին տարիներին հանրապետությունում օդային ավագանի մաք-

րությունն ապահովող աշխատանքները ընդգրկել են բոլոր հիշյալ ուղղությունները։ Որոշում է ընդունվել Հրազդանի լեռնաքիմիական կոմիտեատի կառուցումը դադարեցնելու և այն վերապրոֆիլավորելու մասին։ Պատրաստի շենքերի բազայի վրա ստեղծվել է շրջակա միջավայրի համար անվտանգ մեքենաշինական արտադրություն, իսկ ցեմենտի առաջմամբ գործող արտադրությունը կփակվի Արարատ քաղաքում կառուցվող ցեմենտի-շիֆերի կոմբինատի նոր վառարանների կառուցումն ավարտելուց հետո, ընթացիկ հնգամյակի ընթացքում։ Իսկ մինչ այդ Հրազդան քաղաքի և Մարմարիկի հովտի ոեկրեացիոն գոտու օդային ավազանի աղտոտումը պակասեցնելու նպատակով թե ցեմենտի գործարանում և թե Հրազդանի շերմաէլեկտրակենտրոնում արդիականացվում և ուժեղացվում են փոշեզտիշ և գազակլանիշ կայանքները։

Երևան քաղաքում արմատական վերակառուցման են ենթարկվել միշտարք արդյունաբերական ձեռնարկություններ։ Փակվել են «Նախրիտ» գիտաարտադրական միավորման կառուցուկի գործարանի կալցիումի կարրիդի, քլորրենզոլի և մոնովինիլացետիլենից քլորոպրենի ստացման արտադրությունները, կառուցուկի արտադրության հին՝ «Կառուցուկ-1» արտադրամասը։ Նվազեցվել են պիրոլիզային ացետիլենի արտադրությունները, միարդի շաբաթ կարողականությունում արտադրությունները, միշտարք արտադրամասերում ներդրվել է նորագույն տեխնոլոգիա։ Այդ և նման բնույթի այլ միջոցառումների շնորհիվ մեծ շափով նվազել են վնասակար գազերի արտանետումները։ Ալյումինի գործարանում դադարեցվել է էլեկտրոլիզի միջոցով ստացվող առաջնային ալյումինի արտադրությունը, որի շնորհիվ դադարել է ֆոտորային և այլ բնական միացությունների արտանետումը մթնոլորտ, գործարկվել են գազամաքրիշ կայանքներ։ Փակվել են հարյուրից ավելի մանր կաթսայատներ, դրանց փոխարեն ստեղծվել են շրջանային հզոր կաթսայատներ, որոնց մթնոլորտն աղտոտող վտանգը շատ ավելի պակաս է։ Քաղաքից դուրս են բերվել միշտարք արդյունաբերական (գլխավորապես շինանյութերի արդյունաբերության) ու ավտոտրանսպորտային ձեռնարկություններ։ Ուժեղացել է տեխնիկական հսկողությունը ավտոտրանսպորտային միջոցների թիվը, ընդարձակվել են օդի մաքրության համար մեծ նշանակություն ունեցող կանաչ տնկարկները։ Էկոլոգիական լավագույն պայմաններ ապահովելու առումով կարևոր միջոցառում էր մետրոպոլիտենի առաջին հերթի գործարկումը։

Այդուհանդեմ Երևան հաղաքի օդային ավազանի աղտոտվածության աստիճանը գերազանցում է բույլատելի նորման և լուրջ վտանգ ստեղծում բնակչության առողջության համար։ Անհրաժեշտ է ձեռնարկել նոր վճռական միջոցներ։

Առաջմ նախատեսվում է ամբողջությամբ փակել քլորոպրենային արտադրությունը, վերակառուցել Երևանի ԶԷԿ-ը և այն փոխադրել գազային վառելիքի, արմատապես բարելավել ավտոմոբիլային տրանսպորտի էկոլոգիական ցուցանիշները: Խնդիրն այն է, որ չճգնագի նախատեսվող միջոցառումների իրականացումը և հնարավոր կարճ ժամանակամիջոցում հանրապետության մայրաքաղաքի օդային ավազանի աղտոտվածությունը իշեցվի թույլատրելի նորմաների մակարդակին:

Ալավերդի քաղաքի և Դեբեղ գետի ստորին հոսանքին հարող տաքածքի օդային ավազանի նկատելի բարելավման հանգեցրեց Ա. Միկոյանի անվան լեռնամետալուրգիական կոմբինատի նոր վերակառուցումը, որի շնորհիվ կրճատվեցին ծծումբ պարունակող գազերի արտանետումները մթնոլորտ:

Սկսված են Կիրովականի քիմիական՝ գործարանի՝ քաղաքի օդավագանի աղտոտման գլխավոր աղբյուրի վերակառուցման ու տեխնիկական վերազինման աշխատանքները: Դադարեցվել է կալցիումի ցիանամիղի, դիցիանդիմիամիղի և դրանից ստացվող մելամինի, ազոտաթթվի և ամոնիակային աելիտրայի արտադրությունները, շեշտակիորեն կրճատվել է կալցիումի կարբիդի թողարկումը: Նախատեսված միջոցառումների իրականացումը թույլ կտա արմատապես բարելավել Կիրովական քաղաքի բնապահպանական իրադրությունը:

Շրջակա օդային ավազանի աղտոտման աշքի ընկնող աղբյուր են նաև Հրազդանի, Երևանի ու Կիրովականի շերմաէլեկտրակայանները, որոնք աշխատում են ոչ միայն բնական գազով, այլև վառելիքային մագութով, որը և նպաստում է մեծ քանակությամբ վնասակար գազերի արտանետմանը (ըստ որում համաշխարհային փորձով ապացուցված է, որ անվթար աշխատանքի ընթացքում ԶԷԿ-երը ավելի շատ են աղտոտում շրջակա միջավայրը, քան առողմակայանները, թեև վթարի դեպքում վերշիններիս վտանգը աղետալի է (ինում): Էական քայլեր են կատարվում հանրապետության շերմաէլեկտրակայանները աստիճանաբար բնական գազի փոխադրելու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ վերջին տասը տարում հանրապետությունում օդի մաքրության պահպանմանն առղված միջոցառումների արդյունքը եղել է այն, որ վնասակար նյութերի արտանետումների ընդհանուր ծավալը աճել է շատ ավելի դանդաղ, քան արդյունաբերական արտադրանքի ծավալը, իսկ հատկապես վտանգավոր նյութերի ծավալը կրճատվել է:

Զբային ռեսուրսների պահպանությանը և ռացիոնալ օգտագործումը: Հայկական ՍՍՀ թույլ շրապահովվածության պայմաններում շրային ռեսուրսների քանակի ու որակի պահպանությունն ու ռացիոնալ օգտագործումը ոչ միայն առաջնակարգ ժողովրդատնտեսական հարց է, այլև հանրապետության բնակչության համար ունի կենսական նշանակություն:

Ջրային ավազանների մաքրության պահպանման գլխավոր միջոցը բնակչության արտադրական ու կենցաղային կուլտուրայի հետագա բարձրացումն է, բնակավայրերի, արդյունաբերական, գյուղատնտեսական ու տրանսպորտային ձեռնարկությունների կեղտաշրերի մեկուսացումըն ու մաքրումը և սպառողներին վերադարձնելը, այսինքն շրջանառու ջրօգտագործմանն անցնելը։ Ներկայումս էկոլոգիական առումով անբավարար վիճակում են գտնվում Հրազդան, Փամբակ, Դեբեդ, Ողջի գետերի առանձին հատվածները և Սևանա լճի հատկապես հարավային մերձափնյա գոտին։

Մեծ է հատկապես այն ջրապաշտպան միջոցառումների արդյունավետությունը, որոնք ապահովում են անցումն անթափոն և սակավաթափոն արտադրական տեխնոլոգիայի և գերծ են պահում գետերն ու լճերն արտադրական կամ կոմունալ կենցաղային բոլոր տեսակի վնասակար նյութերից։ Վերջին տարիներին իրականացված նման բնույթի միջոցառումներից են Երևանի, Կիրովականի և Ալավերդի քաղաքների վերը հիշատակված ձեռնարկությունների վերակառուցումն ու տեխնիկական վերազինումը, որը մեծապես նպաստում է Հրազդան և Փամբակ, Դեբեդ գետերի աղտոտման նվազեցմանը, ինչպես նաև Քաջարանի կոմբինատիվությամբ (պղնձամոլիրդենային հանքանյութի հարստացման հետեւ վագի գոյացած թափոնների հսկա ամբարի) և Քաջարան—Ղափան խողովաշարի կառուցումը։ Արտադրական այն թափոնները, որոնք նախկինում լցվում էին Ողջի գետը, այժմ այդ խողովակաշարով հասցվում են գետի միջին հոսանքը (Ղափան քաղաքից ցած) և ամբարվում անվտանգ վայրում։

Ավելի մասսայական բնույթ ունի հատուկ ջրամաքրման կայանների կառուցումը։ Նման կայաններում աղտոտված ջրերը մեխանիկական կամ կենսարանական եղանակով մաքրվելուց հետո դադարում են ջրավազանների համար վտանգ ներկայացնելուց։

Ինչ վերաբերում է ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությանը, ապա դա նույնպես համալիր լուծում պահանջող բարդ պրոբլեմ է։ Դա վերաբերում է ջրօգտագործման բոլոր բնագավառներին՝ գյուղատնտեսական, արդյունաբերական, կենցաղային։ Ամենուրեք ակընհայտ է ջրի շռայլումն ու անտնտեսվար օգտագործումը, տնտեսագիտական լեզվով ասած՝ ջրի օգտագործման շափազանց ցածը օգտակար գործողության գործակիցը։

Վերջին տարիներին այդ աշխատանքների ծավալը շեշտակիորեն աճել է, որի շնորհիվ ներկայումս ջրավազաններն է թափվում շատ ավելի քիչ աղտոտված ջուր, քան ընդամենը մի քանի տարի առաջ էր։ Միաժամանակ աճել է շրջանառու օգտագործման մեջ գտնվող ջրի ծա-

վալը. 1985 թ. այն կազմել է արտադրական նպատակով օգտագործվող շրերի ընդհանուր ծավալի 82%:

Հանրապետությունում ջրային ռեսուրսների օգտագործումը կարգավորելու և նրա ժողովրդատնտեսական արդյունավետությունը բարձրացնելու համար վիթխարի նշանակություն ունեցան ՍՄԿԿ կենտրոնի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1977—1978 թթ. ընդունած «Հայկական ՍՍՀ-ում ոռոգելի հողօգտագործության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման միջոցառումների մասին» և «Սեանա լճի քնական ռեսուրսների պահպանման և ոացիոնալ օգտագործման միջոցառումների մասին» որոշումները:

Աննախադեպ ծավալ ընդունեցին ջրաշինարարական աշխատանքները: Կառուցվեցին Ախուրյանի, Ձողագի, Տևարերդի և մի շարք այլ արհեստական ջրամբարներ: Դրանք նախկինում կառուցվածների հետ մեկտեղ (Ապարան, Արփի, Տոլորս, Կեշուտ և այլն) հնարավորություն տվեցին հանրապետությունում ամբարվող ջրի տարեկան ծավալը հասցնել 1,1 մլրդ մ³: Ընթացքի մեջ է կամ առաջիկայում նախատեսվում է ավելի քան մեկ տասնյակ նոր ջրամբարների շինարարությունը ևս (Դավիթ-բեկի, Հերհերի, Գետիկի, Կապսի, Եղվարդի, Հոկտեմբերյանի, Վեդու, Դառնիի և այլն):

Ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման կարևոր միջոց է ոռոգման սիստեմների օգտակար գործողության գործակցի և ջրապահովվածության բարելավումը: Կատարվում է թե՛ մագիստրալային ու միջտնտեսային և թե՛ ներտնտեսային ցանցի վերակառուցում: Հատուկ ուշադրություն է դարձվում ջրման այնպիսի առաջադիմական եղանակների ներդրման վրա, ինչպիսիք են անձրևացումն ու ընդգետնյա կաթիլային ոռոգումը: Դրանց շնորհիվ զգալիորեն պակասում են ֆիլտրացումից ու գոլորշիացումից առաջացող կորուստները, որոնք մեծ լափերի են հասնում ոռոգման բաց, հատկապես հողափոր ցանցի դեպքում: Նախորդ՝ 11-րդ հնգամյակում շահագործման հանձնված նոր ոռոգելի հողերի 70% վրա ներդրվել է ոռոգման առավել առաջադիմական մեթոդ՝ արհեստական անձրևացումը:

Լուծման կարիք ունի ստորերկրյա ջրային ռեսուրսների ոացիոնալ օգտագործման պրոբլեմը: Այդ ջրերի հետազոտված և հաստատված պաշտառների մեծ մասը գտնվում է Արարատյան դաշտում: Այստեղ հորատված են ավելի քան 200 արտեզյան ջրհորեր, որոնց գործերը կեսը ինքնահորդ են և չեն փոխադրված աշխատանքի ծորակային ռեժիմի: Դրա պատճառով մեծ քանակության արտեզյան ջուր հոսելով աննպատճ և սպառելով ստորգետնյա ավագանի պաշարները, միաժամանակ ճահճացման է դատապարտում ընդարձակ հողատարածություններ:

Քննարկվող հարցերի համալիրում հատուկ տեղ են գրավում Սևա-

Հետ լճի շրային ռեսուրսների պահպանումն ու ռացիոնալ օգտագործումը՝ Ահա վեց տասնամյակ է, ինչ Սևանի պրոբեմը չի դադարում զբաղեցնել ոչ միայն կառավարական մարմիններին, պետական հիմնարկներին ու գիտնականներին, այլև լայն հասարակայնությանը։ Սևանի պրոբեմի տեխնիկական ու տնտեսական բովանդակության, նրա աշխարհագրական ասպեկտները կրննարկվեն դասընթացի հաջորդ բաժիններում։ Ինչ վերաբերում է պրոբեմի բնապահպանական բովանդակությանը, ապա այն պայմանավորված է գլխավորապես երկու հանգամանքներով՝ լճի դարավոր ջրային պաշարների խիստ նվազումով և, որպես դրա հետևանք՝ լճի էկոլոգիական հավասարակշռության խախտումով։

Լճից կատարվող արտահոսքը արհեստականորեն մեծացնելու պատճառով սկսած 1937 թ. մինչև 1987 թ. ծախսվել է զրերի դարավոր պաշարների ավելի քան 40% (շուրջ 25 մլրդ մ³), լճի մակարդակը իջել է գրեթե 19 մ-ով, ջրային հայելու մակերեսը պակասել է 150 կմ²-ով կամ ավելի քան 10%-ով։ Դրա հետ մեկտեղ Սևանի ջրհավաք ավագանի շրջանների տնտեսական արագ զարգացումը, արդյունաբերական, գյուղատնտեսական ու տրանսպորտային ձեռնարկությունների կառուցումը զգալի շափով մեծացրին լիճ հոսող կեղտաջրերի քանակը, մեծացավ նաև ռեկրեացիոն գործունեության ազդեցությունը։ Այս ամենը հանգեցրեց լճի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը։ Փոխվեց լճի ջերմացին ռեժիմը, ավելացավ օրգանական նյութերի քանակությունը, և որպես արդյունք այս բոլորի՝ նկատելիորեն արագացավ լճի էվտրոֆիկացիայի պրոցեսը։ Դա դրակարգեց գլխավորապես ջրային մակերեսի այսպես կոչված «կանաչացման» երևույթով, որը կապտականաշավուն ջրիմուռների տարածման հետևանք է։

1960-ական թվականներից սկսած իրականացվում են արմատական միջոցառումներ ջրի դարավոր պաշարների օգտագործումը դադարեցնելու և Սևանա լիճը իր բնական վիճակին մոտ պահպանելու համար։ Ավելին, խնդիր է դրված լճում ջրի մակարդակը բարձրացնել 6 մետրով, այսինքն այնքան, ինչքան գիտնականների կարծիքով անհրաժեշտ է լճի էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու, ջրի որակը բարելավելու, ձկնային պաշարները հարստացնելու և ապագայում լիճը որպես խմելու ջրի կարևոր ռեզերվուար օգտագործելու համար։

Լճի ջրային հաշվեկշռի մուտքի մասը ավելացնելու համար կառուցվեց Արփա-Սևան ջրատար թունելը, որը հնարավորություն է տալիս Արփա գետի հոսանքի հաշվին տարեկան 270 մլն մ³ ջուր ավելացնել լճի

լճի մակարդակը 1 մետրով բարձրացնելու համար հարկավոր է ջրի ծավալը ավելացնել 1 մլրդ 295 մլն մ³-ով։

պաշարներին, Կառուցվում է Արքա թունելը, որը ևս տարեկան 165 մէն մ³ ջուր կտա Սևանին:

Սևանի պահպանմանը մեծ շափով օգնում է Արարատյան դաշտի գյուղատնտեսական հողերի ոռոգման համար Սևանից բաց թողնվող ջրերի փոխարեն տեղական աղբյուրների ու արտեզյան ավազանի օգտագործումը:

Վերջապես, բնակավայրերի ու արտադրական ձեռնարկությունների կեղտաշրերի լճի մեջ թափվելու բացառելու համար կառուցվում են շուրջսևանյան օղակային կոյուղու կուեկտորը, ինչպես նաև առանձին ձեռնարկությունների մաքրման կայաններ:

Մասնագետների մոտ մտահոգություն է առաջացնում Սևանա լճի ձկնային պաշարների հեռանկարի հարցը: Եթե վիճակը չփոխվի, մեծ վտանգ է սպառնում հատկապես իշխանին, որի պաշարները հասել են նվազագույնի, ջանքեր են թափում, որպեսզի լճի էկոլոգիական պայմանների բարելավման և արհեստական ձկնաբուծության հետագա զարգացման շնորհիվ բարելավվի ձկների վերարտադրությունն ու աճը և ավելանա որսի ծավալը: Այս բոլորով հանդերձ, հարկ է նշել, որ Սևանա լճի պահպանմանը և էկոլոգիական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները սպասվող արդյունքը չեն տալիս: Հանրապետության խմելու շրի միակ հեռանկարային աղբյուրի գոյությանն սպառնացող վտանգը իրականում շատ ավելի մեծ է, քան երբեմն ենթադրվում է: Պահանջվում են անհետաձեկի նոր կոմպլեքս միջոցառումներ, որոնք կապահովեն լճի ջրային հաշվեկշռի ելքային մասի խիստ կրճատումը և Սևանի պահպանի արտադրական ձեռնարկությունների (արդյունաբերական, գյուղատնտեսական, տրնսպորտային) և բնակչության վնասակար ազդեցության բացառումը:

Հողային ռեսուրսների պահպանումն ու ռացիֆենալ օգտագործումը: Հազարամյակների ընթացքում մարդու արտադրական գործունեության ազդեցության տակ մեծ փոփոխություններ է կրել նաև հողածածկությը: Այդ փոփոխությունները առավել մեծ թափ են ստացել վերջին տասնամյակների ընթացքում: Մի կողմից ավելացել է ոռոգվող բարելավված մշակովի հողերի տարածությունը, բարձրացել է արգավանդությունը, մյուս կողմից որոշ տեղերում վտանգավոր չափեր են ընդունել հողերի էռողիան, սողանքներն ու աղակալումը, ինչպես նաև արդյունաբերական թափուներով, քիմիկատներով ու նավթամթերքներով դրանց աղտոտումը: Սովետական իշխանության տարիներին հանրապետության ոռոգելի տարածությունները գրեթե հնգապատկվել են:

Հայկական ՍՍՀ լեռնային ռելիեֆի պայմաններում հողերի մելիորացիայի, կուլտուրտեխնիկական միջոցառումների շնորհիվ բարելավվել ու տնտեսական շրջանառության մեջ են ընդգրկվել ընդարձակ տարածու-

թյուններ: Այդ միջոցառումներն են՝ հողատարածությունների մաքրումը քարերից, ուղիղիքի հարթեցումը և հողագործության մեքենայացման ու ոռոգման համար հարմար տեղամասերի ստեղծումը (կապիտալ հատակագծում), խախտված հողածածկույթ ունեցող տեղամասերի վերականգնումը (ուղղութիվացիա), վարելաշերտի խորացումը, ինչպես նաև կերածանդակների՝ արոտավայրերի ու խոտհարքների մակերեսային ու արմատական բարելավումը:

Հանրապետության հողածածկույթի համար մեծ վտանգ է ներկայացնում ջրային ու նողմային էռողիան: Ընդհանուր տարածքի մինչև 50% և գյուղատնտեսական հանդակների 35% ավել կամ պակաս շափով ենթարկված են էռողիայի, իսկ առանձին շրջաններում այդ ցուցանիշը հասնում է մինչև 60—70%-ի: Ներկայումս մեզանում կիրառվում են հակաէռողիոն համալիր միջոցառումներ (ագրոտեխնիկական, մարգագետնամելիորատիվ, անտառմելիորատիվ, հիդրոտեխնիկական և այլ միջոցառումներ): Հատկապես արդյունավետ է լեռնալանջերի դարավանդավորումը, որը ոչ միայն կանխում է հողատարման պրոցեսը, այլև նպաստում է լեռնալանջերի ավելի ինտենսիվ օգտագործմանը գյուղատնտեսական նպատակներով և ստեղծում է այգեգործությունը լանջերի մրա տեղափոխելու և հարթ տարածությունները շարահերկ կուլտուրաներին տրամադրելու հնարավորություն: Նախատեսվում է էռողիայի ենթարկված հոգատարածությունները 1990 թվականին, 1980 թվի համեմատությամբ, պակասեցնել ավելի քան կրկնակի անգամ:

Հանրապետության մի շարք շրջանների համար հասունացած հարց է հակասողաճային և հակասելավային պայքարի ուժեղացումը: Ներկայումս այդ պայքարը դեռևս սպասվող արդյունքը շի տալիս:

Իր լուծմանն է սպասում հանրապետության ամբողջ տարածքը էռողիայից, հեղեղներից և սողանքներից պաշտպանելու գիտականորեն հիմնավորված սխեմայի մշակման հասունացած հարցը:

Գիտական և գործնական հետաքրքրություն է ներկայացնում Արարատյան դաշտի աղակալած հողերի՝ սոդային աղուտների մելիորացիան և ներդրավումը գյուղատնտեսական շրջանառության մեջ:

Բուռական ու կենդանական ռեսուրսների պահպանման, վերարտադրույթի և ռացիսնալ օգտագործման պրոբլեմը Հայկական ՍՍՀ-ում ձեռք է բերում հատուկ սրություն ոչ միայն այն պատճառով, որ արտադրողական ուժերի արագ զարգացումը մեծապես սահմանափակել է քնական լանդշաֆտների արեալները, այլև այն պատճառով, որ քնական հողակերպայական պայմանները ամենուրեք չեն, որ նպաստավոր են դրանց համար: Հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ վերջին տասնամյակների զննությունը ընդունելը մեկ սերնդի աշխարհագույն պատահավոր արագությամբ աղքատանում է հանրապետության բուռա-

կան ու կենդանական աշխարհը։ Անհետացման եզրին են գտնվում շատ բուսատեսակներ ու ամբողջ բուսական ֆորմացիաներ, դրան հակառակ ընդարձակվում են մոլախոտային բուսականության արեալները։ Անհետացող բույսերի ու կենդանիների մի շարք տեսակներ գիտական ու գործնական մեծ արժեք են ներկայացնում և մտցված են բնության և բնական ռեսուրսների պահպանության Միջազգային միության, ՍՍՀՄ և Հայկ. ՍՍՀ Կարմիր գրքերի մեջ։

Ժողովրդատնտեսական պլանների համաձայն յուրաքանչյուր տարի հազարավոր հեկտարների վրա կատարվում են նոր անտառատնկումներ, սակայն անտառապահպան աշխատանքների ցածր արդյունավետության պատճառով վերջին տաս տարում հանրապետության անտառային փոնդը գրեթե չի ավելացել։

Հանրապետությունում իրականացվող բնապահպան միջոցառումներն ուղղակիորեն նպատակ ունեն նաև ապահովելու բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը, վերարտադրությունը և ռացիոնալ օգտագործումը, թեև դրանք իրենց ծավալներով ու արդյունավետությամբ դեռևս բավարար չեն բնական միջավայրի ու դրա առանձին բաղադրիչների հետագա աղքատացումը, աղտոտումը և անտնտեսվար շահագործումը կանխելու համար։

Հայկական ՍՍՀ-ում ստեղծված են 4 պետական արգելոցներ՝ Դիլիջանի, Խոսրովի, Շիկանողի և էրերունիի, «Սևան» բնական ազգային պարկը և 14 արգելավայրեր։ Պետականորեն պահպանվող ընդհանուր տարածությունը կազմում է 214 հազ. հա, հանրապետության տարածքի ընդամենը 7,2%։ Սա շատ ավելի պակաս է, քան պահպանվում է աշխարհի տնտեսապես զարգացած երկրներում։

Հանրապետությունում բնապահպանական նպատակներին հատկացվող միջոցները տարեց-տարի ավելանում են։ Միայն ընթացիկ հնգամյակում նախատեսվում է 250 մլն. ռ. կապիտալ ներդրում։ Արտադրության ճյուղերի զարգացումը պլանավորելիս ավելի մեծ նշանակություն է տրվում շրջակա միջավայրի պահպանությունը ապահովող միջոցառումներին, ընդուած մինչև առանձին ճյուղերի զարգացման տեմպերի կարգավորումը։ Օրինակ, թե անցյալ և թե ընթացիկ հնգամյա պլանով կրթավորում է մասր եղջերավոր անասունների գլխաքանակը, նկատի ունենալով, որ արտավայրերը առավել մեծ շափով տուժում են դրանց չկարգավորվող արածումից։

Բնապահպանական կարևոր պրոբլեմներից է ընդերքի հարստությունների ռացիոնալ օգտագործումը։ Անցած տասնամյակների ընթացքում հայտնագործվել, հետախուզվել, ուսումնասիրվել և արտադրական շրջանառության մեջ են ներգրավվել բազմաթիվ օգտակար հանածոների տասնյակ հանքավայրեր։ Սակայն շատ հանքավայրերի օգտագործ-

ման նկատմամբ դրսեռորվում է լոկ սպառողական վերաբերմունք, հանքանյութից կորզվում են ոչ բոլոր օգտակար տարրերը, մեծ ծավալ են կազմում թափոնները, թեև դրանց մեծ մասը կարող էին օգտագործվել սրպես հումք այլ արտադրություններ կազմակերպելու համար:

Հանքային հումքի մի շարք տեսակների ռացիոնալ ու կոմպլեքսային օգտագործման գծով մեր հանրապետությունը հետ է մնում համաշխարհային ու հայրենական պրակտիկայից:

Հանքային հումքի, շինանյութերի հանույթի և հետագա հարստացման ու վերամշակման ժամանակ, հանրապետության տարածքում տարիների ընթացքում կուտակվել է միլիոնավոր խորանարդ մետր թափոնորը ոչ միայն կորսույան է մատուցմ շատ արժեքավոր նյութեր, այլև զրադեցնում է հսկայական հողատարածություններ և աղտոտում շրջակամիջավայրը, իսկ մետաղային հանքանյութերի հանույթի ու վերամշակման ժամանակ գոյացող թափոնների պարունակած տարրերի ընդհանուր արժեքը նրբեմն հավասար է կամ նույնիսկ գերազանցում է տվյալ հանքանյութից կորզվող հիմնական տարրի արժեքին:

Այս պրոբլեմի արմատական լուծման արդյունավետ միջոցը անքախն արտադրության կազմակերպումն է, որը կապված է գիտատեխնիկական, տեխնոլոգիական ու տնտեսական դժվարությունների հետ թայց դրանք հաղթահարելի դժվարություններ են և գիտատեխնիկական առաջադիմությունը ի վերջո կարող է բերել բնության մեջ մարդու արտադրական գործունեության հետևանքով ստեղծված նյութերի այնպիսի շրջանառության, որը շխախտի շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը: Նյութի շրջանառությունը, այլ կերպ ասած՝ նյութի շարժումը բնություն-հասարակություն-բնություն փակ շղթայով հնարավոր է կարգավորել այն հաշվով, որպեսզի բնական միջավայրից անջատված նյութը ոչ միայն անուղղելի վնաս շհացնի այդ միջավայրին, այլև արտադրության պրոցեսում վերամշակվելով ու ձեսփոխվելով, դառնալով պատրաստի արտադրանք կամ կիսահումք, կրկին վերադառնալով բնություն, շաղտոտի այդ բնությունը, շխախտի միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը:

Վերջին տարիներին այդ նպատակին ուղղված միջոցառումներից հարկ է հիշատակել Ալավերդու Ա. Միկոյանի անվան լեռնամետալուրգիական կոմբինատի, մի շարք քիմիական ու շինանյութերի արտադրության ձեռնարկությունների վերակառուցումն ու տեխնիկական վերազինումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, որոշ արտադրությունների, հատկապես տուֆաքարի և այլ շինանյութերի հանույթի ընթացքում գոյացած թափոնների արդյունաբերական մշակումն ու օգտագոր-

Ժումը, երկրորդային հումքի վերամշակման ընդլայնումը, ռեսուրսախնայող և էկոլոգիական առումով անվնաս արտադրությունների առաջանցիկ գարգացումը:

Վերը ասվածից դժվար չէ եղրակացնել, որ Հայկական ՍՍՀ-ում, Հատկապես նախորդ և ընթացիկ հնագամյակներում մեծ ուշադրություն է դարձվում շրջակա միջավայրի պահպանման ու առողջացման, բնական ռեսուրսների ռացիոնալ ու ինայողական օգտագործման հարցերին։ Այնուհանդերձ, մի շարք բնակավայրերում, հատկապես Երևանում, ինչպես նաև Կիրովական, Ալավերդի, Հրազդան ու Արարատ հաղաքներում, Սևանա լճում, Փամբակ, Դեբեղ ու Հրազդան գետերում էկոլոգիական իրադրությունը մնում է լարված, դանդաղ է պակասում օդային ու ջրային ավագանեների, հողերի աղտոտվածությունը, շարունակվում է էռողիայի ենթարկված տարածությունների հետագա ընդարձակումը, մեծանում է անհայտացման վտանգի տակ գտնվող բույսերի ու կենդանիների թիվը։ Պահանջակում է, որ անհրաժեշտ է նոր թափ հաղորդել բնապահպանական միջոցառումներին, դրանց տալ կոմպլեքսային բնույթ, ավելի մեծ նշանակություն տալ աշխարհագրական գործոնների հաշվառմանը, բարձրացնել բնակչության բոլոր խավերի, հատկապես դպրոցականների և ուսանող երիտասարդության էկոլոգիական գրագիտության մակարդակը։

Անհետաձգելի անհրաժեշտություն է դարձել Հայկական ՍՍՀ բնական միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գիտականորեն նիմնավորված սխեմայի մշակումը, որին ակտիվորեն պետք է մասնակցեն նաև աշխարհագրական գիտությունների տարրեր ճյաւղերի ներկայացուցիչները։

ՀԱՐԵՇՆ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆԵՐ

2. 1. Ո՞րն է ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանության պրոբլեմի համար։
2. Գնահատեք Հայկական ՍՍՀ ներկայիս էկոլոգիական իրավիճակը։

3. Բվարկեք և բնութագրեք Հայկական ՍՍՀ բնօգտագործման և բնապահպանության գլխավոր ուղղությունները (ըստ բնական միջավայրի գլխավոր բաղադրիչների և բնական ռեսուրսների տեսակների)։

**ՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿՇԵՐՀԱԳՐԱԿԱՆ
ԱՐԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱԱԵԱՊՎԵՏԱԿԱՆ
ՀՐՁԱՆՈՒՄ**

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ժամանակակից արտադրական-տերիտորիալ կառուցվածքը ձևավորվել է սովետական իշխանության տարիներին ՍՍՀՄ ժողովրդատնտեսական միասնական համալիրի կազմում։ Սակայն նրա որոշ առանձնահատկությունների, մասնավորապես գյուղական տարաբնակեցման ձևերի, գյուղական բնակավայրերի համակարգի, բնակչության մի քանի արտադրական սովորույթների և ունակությունների արմատները պետք է փնտրել Հայաստանի պատմական զարգացման քառուղիներում։

Նախ հարկ է ընդգծել, որ Հայկական լեռնաշխարհը մարդկային քաղաքակրթության ծագման օջախներից է։ Մարդու արտադրական գործունեության մի շարք բնագավառներ Հայկական լեռնաշխարհում, որտեղ մ. թ. ա. 12-6-րդ դդ. ձևավորվել է հայ ժողովուրդը, ունեն պատմական խոր արմատներ։ Օրինակ, մ. թ. ա. երկրորդ հազարամյակում արդեն երկրագործությունը (հացահատիկների մշակությունը և այգեգործությունը) դառնում է Հայկական լեռնաշխարհի բնակիչների գլխավոր զբաղմունքներից մեկը, հիմնվում են գյուղական տիպի առաջին մշտական բնակավայրերը, բրոնզից բացի սկսում են զբաղվել նաև երկաթի ձևավամբ։

Առաջին հազարամյակի սկզբներին գյուղատնտեսության մեջ տարածում է գտնում արհեստական ոռոգումը, առևտրական ճանապարհների վրա գտնվող գյուղական համայնքի և ռազմական բերդերի հիման վրա գոյանում են քաղաքները, ավելի է զարգանում արհեստագործությունը։ Այս բոլորը վկայում են արտադրողական ուժերի զարգացման նոր մակարդակի, աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացման մասին և նպաստում են ստրկատիրական հայկական կենտրոնացված պետության հզորացմանը։

Մեր թվարկության առաջին դարերում տիրապետող են դառնում ֆեոդալական արտադրահարաբերությունները, քրիստոնեությունը ընդունվում է պետական կրոն (301 թ.), ստեղծվում է հայկական այրութենը (Մեսրոպ Մաշտոց, 405 թ.), վերելք է ապրում ժողովրդի հոգևոր կյանքը, նոր թափով է զարգանում գրականությունը, գիտությունը, ճարտարապետությունը։

Այս ժամանակաշրջանին է վերաբերում Հայաստանի ներքին վարչատերի տորիալ երկաստիճան բաժանման ձևավորումը: «Աշխարհացուցիչ» վկայությամբ Մեծ Հայքը բաժանվում էր 15 աշխարհի և 201 գավառի: Հատկանշական է, որ այդ բաժանումը ոչ միայն Հայաստանի տարրեր մասերի պատմական զարգացման առանձնահատկություններն էր արտահայտում, այլև հենվում էր նրանց բնական, մասնավորապես լեռնագրական ու ջրագրական առանձնահատկությունների և տնտեսական զարգացման պայմանների հաշվառման վրա:

Նյութական արտադրության մեջ որակական նոր տեղաշարժեր են նկատվում մեր թվարկության առաջին հազարամյակի վերջին և երկրորդ հազարամյակի սկզբին: Այս ժամանակ է, որ տարածում է ստանում հողի մշակման եռադաշտային սիստեմը, փայտե արորի կողքին հանդես է գալիս գութանը, ընդարձակվում են հացահատիկի ու բամբակի ցանքատարածությունները, այգիները, կառուցվում են նոր ոռոգիչ ջրանցքներ: Լայնորեն զարգանում է արհեստագործությունը (հաշվվում են 50-ից ավելի արհեստներ), ընդլայնվում է լեռնային գործը, արդյունահանվում ու վերամշակվում են պղնին (Սյունիք, Տաշիր-Զորագետ, Աղձնիք), երկաթ (Տարոն, Վասպուրական, Կարին), կապար (Սյունիք, Վասպուրական), անագ, Վասպուրական) արծաթ, ոսկի, մկնեղ, աղ:

Այս շրջանում արդեն հաստատվում են ապրանքադրամական հարաբերությունները, աշխատանում է ներքին ու արտաքին առևտուրը, Հայաստանը կրկին դառնում է միջազգային առևտուրի կարևոր հանգույց: Տնտեսական կապեր են հաստատվում սեծովյան ու միջերկրածովյան նավահանգիստների, Հնդկաստանի, Չինաստանի, Կիևյան Ռուսիայի, արաբական երկրների հետ: Արտահանվում են ցորեն, մետաղներ, ձուկ, աղ, մետաքսե ու բամբակե գործվածքներ, գորգեր, ներկեր, բուրդ, գինի, շորացրած մրգեր: Ներմուծվում են մետաքսի հումք, հախճապակե իրեր, պերճանքի առարկաներ: Ներքին ու արտաքին առևտուրական խոշոր կենտրոններ էին Անին, Արծնը, Դվինը, Կարինը, Կարսը, Վանը, Նախճավանը, Մանազկերտը, Արճեղը, Բաղեղը, Լոռին, Խլաթը:

Այս դարերում Մեծ Հայքում և ավելի ակնհայտ ձևով՝ Կիլիկիայի հայկական թագավորությունում սկիզբ են առնում սոցիալտնտեսական այնպիսի տեղաշարժեր, որպիսիք ավելի ուշ՝ 14—16-րդ դարերում ծվրպայում պայմանավորում են Վերածննդի առաջ գալը:

Պատմական հաշորդ դարաշրջանը ողբերգական եղավ Հայաստանի և նրա արտադրողական ուժերի համար: Պետականության կորուստը, օտարերկրյա զավթիչների (թուրք-սելջուկների, թաթար-մոնղոլների, օսմանյան թուրքերի, պարսիկների) բազմից կրկնվող ասպատակությունները ոչ միայն արգելակեցին Հայաստան երկրի առաջընթաց զարգացումը, այլև հետ շպրտեցին նրան իր նվաճած սոցիալտնտեսական

գիրքերից, Դարեր շարունակ երկիրը աշք չէր բացում պատերազմներից ու ավերածություններից, չէր հասցնում վերականգնել քայլայված տընտեսությունը, երկրի արտադրողական ուժերը խոր անկում ապրեցին:

Տեղի արմատական բնակչության՝ հայերի ֆիզիկական բնաշնչման և բոնի տեղահանման հետևանքով ընդարձակ շրջաններ ամրողովին ամայացան, մյուսների բնակչությունը նկատելիորեն նուրացավ: Միաժամանակ, Հայաստանում բնակչություն հաստատեցին էթնիկական նոր խմբեր: Միշագետքից հարավային Հայաստան թափանցեցին քրդերը, հարավ-արևմտյան շրջաններում հիմնավորվեցին թուրք-սելջուկները, արևելքում թաթարները:

Հայաստանը երկար ժամանակ պատերազմական թատերաբեմ էր Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան իրանի միջև: Այդ վիճակը շփոխվեց նույնիսկ այն ժամանակ, երբ 1639 թ. նրանք իրականացրին Հայաստանի բաժանումը: Արևելյան Հայաստանն անցավ Պարսկաստանին և այստեղ առանձնացվեցին խանություններ (Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի և այլն): Արևմտյան Հայաստանը, որը մտել էր Օսմանյան կայսրության կազմի մեջ, բաժանվում էր փաշայությունների: Վերջիններս ավելի ուշ՝ 19-րդ դ. կեսերին վերակազմվեցին վիլայեթների (Վանի, Բիթլիսի, Թալյագետի, Մալաթիայի, Էրզրումի, Կարսի և այլն): Հայաստանի բաժանման գիծը ձգվում էր Ախուրյան գետով, Հայկական պարի արևելյան մասով և Վասպուրականի լեռներով:

Հայաստանի համար պատմական զարգացման նոր դարագլուխ ըսկը 19-րդ դարում, երբ Արևելյան Հայաստանի մեծ մասը միացավ Ռուսաստանին: Արևելյան Հայաստան՝ Երևանի, Նախիջևանի և Օրդուրադի Նախկին խանությունների սահմաններում 1828 թ. կազմակերպվեց Հայկական մարզը, որը Կովկասյան փոխարքայության ստեղծման կապակցությամբ, հետագայում՝ 1840 թ. վերակազմվեց Երևանյան նահանգի՝ Ալեքսանդրապոլի, Երևանի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Նախիջեվանի գավառներով: Ռուսաստանին անցած հայաբնակ մյուս շրջանները մտան Ելիզավետոպոլի և Թիֆլիսի նահանգների մեջ:

Հայ ժողովրդի կյանքում այս միացումը ունեցավ մեծ առաջադիմական նշանակություն: Բազմադարյան անընդմեջ ասպատակություններից հետո երկիրը կանգնեց խաղաղ զարգացման ուղղու վրա: Զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող Ռուսաստանի կազմում հայ ժողովրդը իր տնտեսական ու կուլտորական վերելքի համար ստացավ առավել բարենպաստ պայմաններ, քան ուներ հետամնաց Պարսկաստանի գերիշխանության տակ: Երկարատև ընդմիջումից հետո կրկին սկսեց ավելանալ երկրի բնակչության թիվը, ընդարձակվեցին մշակվող գյուղատնտեսական հողատարածությունները, աշխուժացան արհեստները, վերականգնվեց լեռնահանքային արդյունաբերությունը:

Արտադրողական ուժերի զարգացումը արագացավ 19-րդ դարի երկրորդ կեսերից, հատկապես 1870 թ. գյուղացիական ռեֆորմից հետո, որը խթանեց կապիտալիստական արտադրահարաբերությունների տարածմանն ու խորացմանը: Այնուհետեւ Արևելյան Հայաստանում տեղի էր ունենում ավելի դանդաղ, քան Կևճարոնական Ռուսաստանում կամ Անդրկովկասի մի շարք այլ շրջաններում: Դա բացատրվում է նրանով, որ երկրի արտադրողական ուժերը մինչև Ռուսաստանին միանալը գըտնվում էին ծայրաստիճան քայլայված վիճակում, անբարենպաստ էր նրա տնտեսաշահագրական դիրքը (մեծ հեռավորությունը Ռուսաստանի խոշոր տնտեսական կենտրոններից ու ծովային նավահանգիստներից, արտաքին տրանսպորտային կապերի բացակայությունը և այլն) Ռուսաստանը շահագրգոված չէր իր նոր գաղութի արտադրողական ուժերի արագ զարգացման հարցում: Արգելակող գործոնի դեր էր կատարում նաև այն փաստը, որ Հայկական առևտրական կապիտալը, որ կարող էր զարկ տալ կապիտալիստական արտադրությանը, իր գործունեությունը ծավալում էր Հայաստանի սահմաններից դուրս (Վրաստանում, Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Աստրախանում, Մոսկվայում, Փետերբուրգում):

Անհամեմատ վատթար վիճակ էր տիրում Արևմտյան Հայաստանում: Այնտեղ պատմական ու տնտեսաշահագրական անբարենպաստ գործոններին (որոնք ինչ-որ շափով ընդհանուր էին թե Արևմտյան, թե Արևելյան Հայաստանի համար) գումարվում էին նաև Օսմանյան Թուրքիայի ընդհանուր հետամնացությունը, երկրում տիրող ուղմագեղական կարգերը, կրոնական ու ազգային անհանդուրժողականությունն ու ատելությունը, որ սերմանում էին թուրք իշխանավորները կայսրության ազգային փոքրամասնությունների և հատկապես քրիստոնյա հայերի նկատմամբ, պարբերաբար կրկնվող ավազակային զինված հարձակումներն ու ավերածությունները: Էլ շենք խոսում հայ խաղաղ բնակչության այն զանգվածային ջարդերի ու բռնի տեղահանումների մասին, որոնք իբրև քաղաքականություն իրականացվում էին սուլթանական կառավարության կողմից:

Այս համեմատությունը առավել ակնառու է դարձնում սոցիալ-տընտեսական այն նվաճումները, որոնք ձեռք բերեց Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության կազմում գտնվելու տարիներին:

Արևելյան Հայաստանի տնտեսության ճյուղերից կապիտալիստական զարգացման ոլորտի մեջ ամենից վաղ ներգրավվեց զյուղատնտեսությունը, հատկապես բամբակագործությունը: Բամբակի ապրանքային արտադրանքը 50 տարում աճեց ավելի քան 22 անգամ, 1861 թ. 30 հազ. փութից հասնելով 670 հազ. փութի: Նման թուշքի գլխավոր պատ-

Ճառը Ռուսաստանի արագ զարգացող տեխստիլ արդյունաբերության հարածուն պահանջմունքն էր։ Հայկական բամբակի հիմնական սպառողներն էին Մուկվայի, Յարուլավլի, Լոձի, Թիֆլիսի ֆաբրիկաները։ Բամբակի հումքի որոշ մասը արտահանվում էր Արևմտյան ու Կենտրոնական ծվրոպա։

19-րդ դարի վերջերին կարևոր ապրանքային ճյուղ դարձան խաղողագործությունը և պտղաբուծությունը, որոնց ընդհանուր արտադրանքը նույնպես զգալի չափով ավելացավ։ Աճեց ձիթատու կուլտուրաների՝ քունջութիւն և գանգրավուշի (կտավատի) նշանակությունը։

Հայկական ՍՍՀ ներկայիս տարածքում ցանքատարածությունները 1830 թ. 70 հազ. հա-ից (26900 խալվար) 1913 թ. հասան 346 հազ. հա-ից, լստ կուլտուրաների նրանց կառուցվածքը հետեւյալ մոտավոր պատկերն ուներ (տես աղյուսակ 4)։

Աղյուսակ 4

ԳՅՈՒՂԱՑՆԵՑՆՈՒԹՅԱՆ ՄԸԱԿՈՎԻ ՀՈՂԱՑԱՐԱՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱՇՔ 1918 թ.

Գյուղատնտեսական կուլտուրաներ	Զբաղեցրած տարածությունը	
	Հազ. հա	Տոկոս
Հացահատիկ այդ թվում՝	309	85
աշխանացան	105	29
գարնանացան	204	57
Տեխնիկական կուլտուրաներ այդ թվում՝	21	6
բամբակ	15	4
Կարտոֆիլ և բանջարաբուստանային		
կուլտուրաներ	12	4
Կերային կուլտուրաներ	4	1
Ընդամենը ցանքատարածություններ	346	96
Խաղողի և պտղատու այգիներ	14	4
Ընդամենը մշակովի հողատարածություններ	360	100

Անասնապահության ճյուղերից ապրանքային նշանակություն ձեռք բերեց նախ և առաջ կաթնային ուղղության տավարաբուծությունը, որը պայմանավորված էր Հայաստանում շվեյցարական պանրագործության զարգացմամբ։

Աղյուսակը կազմված է ըստ «Сельское хозяйство Армянской ССР» (Երևան, 1969) վիճակագրական ժողովածուի։

Կապիտալիզմի զարգացումը գյուղատնտեսության մեջ հանգեցրեց աշխատանքի հասարակական տերիտորիալ բաժանման և շրջանների արտադրական մասնագիտացման խորացմանը: 20-րդ դարի սկզբին արդեն որոշակիորեն ուրվագծվում էին գյուղատնտեսական մասնագիտացման երեք ուղղաձիգ գոտիներ՝

ա) Լեռնային՝ անասնապահության գերակշռությամբ,

բ) Նախալեռնային՝ հացահատիկային,

գ) ցածրադիր, որը մասնագիտանում էր բամբակագործության, խաղողագործության և պտղաբուծության ուղղությամբ:

Արտադրական մասնագիտացման տարածքային տարբերությունները նպաստում էին տարրեր շրջանների միջև առևտրի ու ապրանքափոխանակության աշխատացմանը, առևտրական կենտրոնների ձևավորմանը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո բարենը-պաստ պայմաններ ստեղծվեցին ֆարմիկագործարանային արդյունաբերության զարգացման համար: Այստեղ առաջատար դեր էր կատարում պղնձածակալությունը: 19-րդ դարի կեսերին ոռուսական շուկայի աճող պահանջի ազդեցության տակ նկատելիորեն ընդարձակվեց պղնձի արտադրությունը Արևելյան Հայաստանի հյուսիսում: Պղնձի արդյունահանում ու ձուլում վերսկսվեց Զանգեզորում¹: Հատկանշական է, որ 1846—1867 թթ., ընդամենը 21 տարվա ընթացքում, մեկը մյուսի հետևից հիմնվեցին 11 նոր պղնձածուլարաններ, որոնցից 7-ը՝ Զանգեզորում: Մինչև 19-րդ դարի վերջը Արևելյան Հայաստանում տարրեր տևողությամբ գործել են 18 պղնձածուլարաններ՝ դիշտ է, դրանց մեծ մասի կյանքը կարճ տևեց (2-ից մինչև 10 տարի), բայց մասնայական կարգով նոր ձեռնարկությունների ստեղծումը վկայում էր այն նոր, բարենպաստ պայմանների մասին, որոնք ստեղծվել էին Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության համար Ռուսաստանի կազմում:

Պղնձարդյունաբերության զարգացման նոր փուլ է սկսվում 19-րդ դարի 90-ական թվականներին: Դա կապված էր ամրող Ռուսաստանի նոր արդյունաբերական վերելքի և Հայաստանի էկոնոմիկայում օտարերկրյա կապիտալի դիրքերի ամրապնդման հետ: Պղնձարդյունաբերության մեջ օտարերկրյա (Փրանսիական) կապիտալի բաժինը հասել էր 50 տոկոսի, իսկ մեկ ու կես տասնամյակ անց, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ ճյուղը ամրողությամբ անցավ Փրանսիացիների ձեռքը:

Հյուսիսային լեռնահանքային շրջանում, որը մինչև Ռուսաստանին միանալը գրանցվում էր Վրացական թագավորության կազմում, առանձին հանքեր ու ձեռարաններ անընդմեջ գործում էին դեռևս 18-րդ դարից (Ախթալայի արծաթարձնային հանքերը 1763 թվից, Ալավերդու պղնձահանքերը 1770 թ): Մինչդեռ Զանգեզորի հագույն պղնձահանքերը Պարսկաստանի կազմում երկար ժամանակ էր, ինչ զադարել էին գործելուց

Վերջիններս իրենց շահույթը ավելացնելու նպատակով բանվորների շահագործումն ուժեղացնելու հետ մեկտեղ, նաև կատարում էին նոր շինարարություն, վերակառուցում էին հին հանքերն ու ձուլարանները, կատարելագործում արտադրության տեխնոլոգիան:

Պղնձարդյունաբերության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցումը (1899 թ.), որը հնարավորություն տվեց տեղի փայտածուխը փոխարինել Դոնբասից բերվող կոքսով և Ալավերդում կառուցել նոր տեխնոլոգիայով աշխատող հղոր պղնձաձուլարան՝ «Մանես» գործարանը:

1891—1913 թթ. ընթացքում պղնձի արտադրության ծավալը ավելացավ 13 անգամ և հասավ 343 հազ. ֆթի։ Միաժամանակ տեղի էր ունենում արտադրության համակենտրոնացում։ Այդ նույն ժամանակահատվածում պղնձաձուլարանների թիվը կրճատվելով, 18-ից իջավ 6-ի։ Դրանցից 4-ը կազմում էին Ալավերդու խումբը («Մանես», Շամլուղի, Ալավերդու, Սիսիմադանի գործարանները), տալով Արևելյան Հայաստանում արտադրվող պղնձի 2/3-ը։ Մեկ երրորդը բաժին էր ընկնում Զանգեզուրին, որտեղ գործում էին երկու՝ Սյունիքի և Ուղուրչայի ձուլարանները։

20-րդ դարի սկզբին արդեն Արևելյան Հայաստանը դարձել էր Ռուսաստանի պղնձի արտադրության երեք գլխավոր շրջաններից մեկը, տալով ամբողջ կայսրությունում թողարկվող պղնձի մինչև 1/4 և Անդրկովկասի պղնձի 3/4 մասը։

Առաջին բայլերն էին արվում Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ աշխատանքի տերիտորիալ բաժանման և հումքի կոմպլեքսային օգտագործման ուղղությամբ։ Սակայն այդ առաջադեմ միտումները հետագայում իրենց զարգացումը շատացան։ Ավելին, դաշնակցականների տիրապետության օրոք ամբողջ ճյուղը բայթայվեց և ըստ էության դադարեց գոյություն ունենալուց։

Նախասովետական Հայաստանի Փաքրիկագործարանային արդյունաբերության երկրորդ ճյուղը գինու-կոնյակի արտադրությունն էր։ Սա, ինչպես և պղնձի արտադրությունը, մանուֆակտուրայի ստադիայից խոշոր մեքենայական ինդուստրիայի ստադիային անցավ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին։ Այստեղ գերիշխում էր ռուսական կապիտալը։ 20-րդ դարի սկզբին սպիրտային խմիչքների արտադրության կեսից

1912 թ. «Մանես» գործարանին կից ստեղծվեց պղնձի էլեկտրոսիզի արտադրություն, որն օգտագործում էր նաև Զանգեզուրի գործարանների սև պղնձը։ Իսկ 1916 թ. պղնձի էլեկտրագոտումից ստացվող շամիչը սկսեցին կորզել սոկի և արծաթ։ Մինչ այդ շամիչը արտահանվում էր Գերմանիա, իսկ առաջին համաշխարհային պատերազմին սկսվելուց հետո՝ Անգլիա։

ավելին պատկանում էր «Շուտով և որդիներ» ընկերությանը: Մի քանի գործարաններ գտնվում էին հայ կապիտալիստների ձեռքին:

‘Սպիրտի ու կոյնակի արտադրության իր ժամանակի համար խոշոր կենտրոն էր Երևանը: Ժամանակակից գործարաններ էին աշխատում նաև Ղամարլվում (Արտաշատ) և Աշտարակում:

Համեմատաբար բարձր ապրանքայնություն ունեցող ճյուղի էր վերածվել շվեյցարական պանրագործությունը, որը տարածված էր գլխավորապես Լոռում և Որոտան գետի վերին ավազանում:

Արդյունաբերության մյուս ճյուղերը ներկայացված էին հիմնականում ձեռքի աշխատանքի վրա հիմնվող մանր ձեռնարկություններով ու տնայնագործական արհեստանոցներով: Դրանց մեծ մասը՝ բամբակագտիչ, կաշեգործական, պահածոների, մետախսաթելի և բրնձամաշրման ձեռնարկությունները կենտրոնացված էին Արարատյան դաշտում: Պահածոների մեկ ոչ մեծ գործարան գտնվում էր Մեղրիում: Նախալեռնային ու լեռնային շրջանների բավականին մեծ թիվ կազմող կետերում զբաղվում էին գորգագործությամբ, որի համար օգտագործում էին տեղական կոշտ բուրդը:

Տարբեր տեղերում գործում էին նաև վայտամշակման, կոշիկի և մետաղամշակման մի քանի արհեստանոցներ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Սովետական Հայաստանի ներկայիս տարածքում ցենզային (խոշոր) արդյունաբերության ճյուղային կառուցվածքը ուներ հետևյալ պատկերը. (Աղյուսակ 5)

Ինչպես տեսնում ենք, արդյունաբերության համախառն արտադրուանքի շուրջ 84 տոկոսը տալիս էին պղնձաձուլությունը, գինու-կոնյակի և մրգի պահածոների արտադրությունը:

Կապիտալիզմի զարգացման հետ մեկտեղ սկսում էին ձեւավորվել առանձին ուղիղունալ կենտրոններ, որոնց տնտեսական գործունեության մեջ արդեն նկատելի տեղ էին գրավում արդյունաբերական ֆունկցիաները: Այդպիսիք 8-ն էին՝ Ալավերդին, որը 1913 թ. տալիս էր երկրամասի արդյունաբերության համախառն արտադրանքի 36,4 տոկոսը, Երևանը՝ 34,8 տոկոսը, Ղափանը՝ 22,2 տոկոսը, Դիլիջանը՝ 2,0 տոկոսը, Ղամարլուն (Արտաշատ)՝ 2,0 տոկոսը, Ալեքսանդրապոլը (Լենինական)՝ 1,6 տոկոսը, նոր Թայագետը (Կամո)՝ մոտ 0,5 տոկոսը և Մեղրին՝ մոտ 0,5 տոկոսը (գծ. 7):

Առաջին բայլերն էին արվում Էլեկտրաէներգետիկ տնտեսության ստեղծման ուղղությամբ: Նախապատերազմյան վերջին տարում՝ 1913 թ., գործում էին 13 մանր էլեկտրակայաններ 3156 կվտ գումարային հզորությամբ, որոնք արտադրում էին 5,1 մլն կվտ-ժամ էլեկտրաէներգիա: Դրանցից ինը հիդրոէլեկտրակայաններ էին (2155 կվտ) և 4-ը՝ ջերմա-

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՅՈՒՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 1918 թ.
(ՀՍՏ ՀԱՄԱԽԱՐԱՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ)

Արդյունաբերության ճյուղերը	տոկոս
Պղնձաձուլություն (հանքաքարի հանույթի հետ միասին)	58,6
Գինու-կոնյակի	21,2
Կաշվի, կոչշիկի	5,8
Մրգի պահածոների	4,0
Մետաղամշակչան	2,6
Այլ ճյուղեր (բրնձամաքրման, գարեջրի, անտառաշահագործում և փայտամշակում, ձկան որս)	7,8
Ընդամենը	100,0


յին, որոնք աշխատում էին նավթով (1010 կվտ): Դրանք կառուցված էին առանձին արդյունաբերական ձեռնարկություններին կից, աշխատում էին իրարից մեկուացված (ինքնավար), Յուրաքանչյուրը էլեկտրաէներգիա էր մատակարարում միայն իր ձեռնարկությանը և լավագույն դեպքում՝ իրեն հարող մի քանի բնակելի տների ու փողոցների:

Զնայած էլեկտրակայանների կառուցման ուղղությամբ ձեռք բերված որոշ հաջողություններին, երկրամասի վառելիքա-էներգետիկ տրնտեսությունը հիմնվում էր գլխավորապես վառելափայտի և աթարի վրա. Վերջինիս մասսայական կիրառությունը իրբև վառելիք, ծայրաստիճան սահմանափակում էր գոմազբի՝ այդ արժեքավոր օրգանական պարարտանյութի օգտագործումը գյուղատնտեսության մեջ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նշանակալի տեղաշարժեր կատարվեցին տրանսպորտի բնագավառում: Արտադրողական ուժերի, ներքին և արտաքին առևտությունը լիմանեց հատկապես Երկարողային շինարարությունը: 1899 թ. ավարտվեց Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Ղարս, 1902 թ.¹ Ալեքսանդրապոլ—Երևան և 1908 թ. Երեվան—Նախիջևան—Ջուլֆա երկաթուղիների կառուցումը: Վերակառուցվեցին ու բարելավվեցին մի շարք անոելս ճանապարհներ, մասնավորապես Թիֆլիս—Սևան—Ջուլֆա, Նախիջևան—Գորիս—Շուշի—Եղվանի խճուղիները:

Զնայած այն հանգամանքին, որ ցարական կառավարությունը թե երկաթուղիների, թե խճուղիների շինարարությունը կատարում էր ուղ-

¹ Աղյուսակը կազմված է ըստ «Հայկական ՍՍՀ աշխարհագրական առանձին Մոսկվա, 1976, էջ 25:



Նկ. 7. Արդյանաբերությունը 1913 թ.

Արյունաբերության ճյուղեր. 1 — գունավոր մետաղածովություն, 2 — մետաղամշակում, 3 — անտառապղոցում, 4 — կաշեգործական, 5 — սևնդհամի, 6 — ըլքդամաքրման, 7 — պահածոների, 8 — դիենու-կոնյակի, 9₁ — գարեջրի, 9₂ — օճառի,

8 — Տարածման շրջաններ. 6 — բամբակապտիչ կետերի, 7 — գորգագործության, 8 — գինեգործության և օղեթորման, 9 — պանրագործության, 10 — ձկնորսության, էլեկտրականականներ. 11 — տունին, 12 — տեսմանին.

Օգոստի համաժողովը արդյունահանում, 13—բազմաթիվ պատասխանների, 14—պղնձի, 15—դիմաց արքական տուֆի, 16—երկար պոլիտիկա:

Մաստրատեգիական նկատառումներով¹, այնուհանդերձ նոր ճանապարհ-ները առաջնակարգ դեր խաղացին Արևելյան Հայաստանի տնտեսական

¹ Այդ ճանապարհները նոր վվածքած ծայրամասերը կապելով թաւ Ռուսաստանի հետ և հշյատացնելով Նրանց գաղութային շահագործումը, միաժամանակ ելք էին տալիս զեպի Իրան ու Թուրքիա, զեպի Մերձակով Արևելք:

զարգացման և նրա տարրեր մասերի միջև ժամանակակից հաղորդակ-
ցություն հաստատելու գործում:

Թվարկված, հիրավի, էական նազողություններով նանդերձ, Արևել-
յան Հայաստանը տնտեսական զարգացման իր ընդհանուր մակարդակով
մնում էր Ցարական Ռուսաստանի հետամնաց կիսազաղութային ծայ-
րամասը, նրա նումժային կցուղը: Քնակշուրյան 90 տոկոսը զբաղված էր
զյուղատնտեսուրյան մեջ: Արյունաբերական բանվորների թիվը կազ-
մում էր շուրջ 5 հազար, որոնցից 4,4 հազ. աշխատում էին պյոնար-
դյունաբերուրյան մեջ: Երկրամասի բնակչության մեկ շնչին 3 անգամ
ավելի պակաս արյունաբերական արտադրանք էր ընկնում, քան մի-
շին հաշվով ամբողջ Ռուսական կայսրությունում, մի քանի տասնյակ
անգամ ավելի պակաս, քան Կենտրոնական Ռուսաստանում:

Ինչպես տեսնում ենք, նախորդ տարիների զարգացման բարենպաստ-
պայմաններն ու համեմատաբար արագ տեմպերն էլ բավարար չէին որ-
պեսզի ստեղծվեր ժամանակակից ինդուստրիա և որպեսզի Հայաստա-
նը իր տնտեսական զարգացման մակարդակով մոտենար ընդհանուր
առմամբ հետամնաց ցարական Ռուսաստանի գոնե միջին ցուցանիշնե-
րին:

Բայց բանն այն է, որ սովետական իշխանության հաղթանակի պա-
հին պահպանվել էր այդ, առանց այն էլ թույլ զարգացած արտադրողա-
կան ուժերի մի շնչին մասը միայն 1914—1920 թթ. ներքին և միջազ-
գային իրադարձություններն ըստ էության ի լիբ դարձրին այն բոլոր-
դրականը, որ մինչ այդ ձեռք էր բերվել Հայաստանում: Առաջին համաշ-
խարհային պատերազմի, Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կառա-
վարող շրջանների հայաշինչ քաղաքականության, թուրքական զորքերի
կողմից Արևելյան Հայաստանի 1918 թ. և 1920 թ. մասնակի օկուպացիա-
յի և դաշնակցության բուրժուա-ազգայնական կուսակցության 2,5-ամ-
յա իշխանության հետևանքով երկրի տնտեսությունը կանգնեց վերջնա-
կան փլուզման, իսկ հայ ժողովուրդը՝ Ֆիզիկական ոլնչացման եզրին:
Այդ ժամանակ էր, որ անգիտական թերթերից մեկը լարագուշակ հայ-
տարարում էր, թե՝ «Հավանաբար մի քանի տարի անց հայերի մասին,
կխոսեն իրեւ անհետացած ժողովրդի մասին»:

Կարճ ժամանակում սովորական կառավարության կողմից նախօ-
րոք մշակված պլանով, կազմակերպված ձեռվ, կանոնավոր զորքերի
մասնակցությամբ Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը սրի քաշ-
վեց կամ արտաքսվեց իր հայրենիքից, դառնալով գաղթական, սփովե-
լով աշխարհով մեկն Հազարավոր գյուղեր բառիս բռն իմաստով ամա-
յացան: Բռնագրավված հողերն ու անշարժ ունեցվածքը բաժանվեցին
թուրք և բուրդ իշխանավորների ու զինվորականության միջև:

1918 թ. հունվարին Սովետական Ռուսաստանի նորաստեղծ կառա-

Հայաստանի մասին» դեկրետը, որով պաշտպանում էր Արևմտյան Հավարությունը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակեց «Թուրքական ազատանի «...ազատ ինքնորոշման հրավունքը, ընդհուպ մինչև լիակատար անկախությունը»: Սակայն հետագայում Սովետական Ռուսաստանի ռազմական դրության բարդացումը և միջազգային իրադարձությունների անբարենպաստ ընթացքը անհնար դարձրին դեկրետի դրույթների իրագործումը:

Ողբերգական վիճակում էր գտնվում նաև Արևելյան Հայաստանը: Կազմակուժի էր ամրող տնտեսությունը: Էջմիածինը, Երևանը և շատ այլ բնակավայրեր լցված էին ընշագործք ու սովյալ գաղթականներով: Հազարավոր զոհեր էին տանում համաճարակները: Բնակչության ընդհանուր թիվը, որը գաղքականների հաշվին հասել էր շուրջ 1.270 հազարի, 1920 թ. վերջին նվազեց մինչև 720 հազարի: Չորս անգամ կրճատվել էին ցանքատարածությունները, առավել մեծ շափերով պակասել էր զյուղատնտեսական արտադրության ծավալը:

Արտադրական ձեռնարկություններից շատերը, այդ թվում և պղնձի հանքերն ու ձուլարանները, ավերվել ու քայլավել էին, մյուսները դադարել էին գործելուց, բանվորները ցրվել էին գյուղերը: Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913 թ. համեմատությամբ կրճատվել էր 12 անգամ:

Հայաստանը փրկելու, օրհասական վիճակից այն դուրս բերելու ուղին սովետական կարգերի հաստատումն էր, որը և տեղի ունեցավ 1920 թ. նոյեմբերի 29-ին: Հայաստանի զինված ապստամբություն բարձրացրած բանվորներին ու գյուղացիներին օգնության եկավ 11-րդ Կարմիր բանակը, դաշնակցական կառավարությունը տապալվեց և Հայաստանը հռչակվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետություն: Սկսվեց Հայաստանի, նրա արտադրողական ուժերի զարգացման նոր դարագլուխը, ամրող հաշարակական կյանքի սոցիալիստական տերիտորիալ կազմակերպման դարագլուխը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

3.1. 1. Հայաստանի արտադրողական ուժերի զարգացումը ի՞նչ գլխավոր փուլեր է անցել հին և միջին դարերում:

2. Թնութագրեք Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր առանձնահատկությունները Ռուսաստանի կազմում:

3.2. ՀԱՅԱԿԱՆ ՍՍՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՑԱՐԻՆԵՐԻՆ

Սովետական իշխանության հաստատումով հայ ժողովուրդը ու միայն փրկվեց ֆիզիկական ոչնչացման վտանգից, ազատագրվեց սոցիա-

լական ու ազգային ճնշումից, այլև խաղաղ ստեղծագործական աշխատանքի, երկրի ծայրաստիճան քայլայված տնտեսությունը վերականգնելու ու զարգացնելու աննախադեպ հնարավորություն ստացավ:

Սովետկան Հայաստանի նորաստեղծ կառավարությունն իր գործունեությունը սկսեց երկրի ներքին կյանքում սոցիալ-քաղաքական ու տքնտեսական մի շարք արմատական վերափոխումներից: 1920 թ. դեկտեմբերի 28-ին ընդունվեց ճողերի ազգայնացման և դրանք պետական հողային ֆոնդին հանձնելու դեկրետը, 1921 թ. հունվարի 10-ին՝ անտառների ազգայնացման, հունվարի 11-ին՝ ընդերքի հարստությունների 31-ին՝ ջրերի ու ջրատեխնիկական կառույցների ազգայնացման մասին դեկրետները¹:

Հասարակության արտադրողական ուժերի այդ կարևոր բաղադրիչների՝ բնական ծագում ունեցող և մարդու կողմից ստեղծված արտադրամիջոցների ազգայնացումը հեղափոխականացնող սոցիալ-տնտեսական միջոցառում էր, որը երկրի տնտեսական զարգացման համար հասարակական ամբողջովին նոր պայմաններ ու նախադրյալներ էր ստեղծում:

Երկրը սովոր ճիրաններից դուրս բերելու և տնտեսական շինարարությանը ձեռնամուխ լինելու համար վճռական նշանակություն ունեցավ ՌՍՖՍՀ և մյուս սովետական հանրապետությունների եղբայրական օգնությունը:

1920 թ. դեկտեմբերին արդեն Սովետական Ռուսաստանը, շնայած նրա տնտեսական ու ուղամական ծանր վիճակին, Հայաստանին տրամադրեց մեծ քանակությամբ պարեն, արդյունաբերական ապրանքներ, դեղորայք, 600.000 ոռորդի սոկով, որն օգտագործվեց արտասահմանից սերմացու, անասուն, գյուղատնտեսական գործիքներ և սարքավորումներ գնելու համար: Թիշ ավելի ուշ Ռւկրախնան սկսեց ուղարկել հացահատիկ և ածուխ, Աղրբեշանը՝ նավթամթերքներ: Խվանովո-Վոզնեսենսկի բանվորները Նվիրեցին մի ամբողջ տեքստիլ ֆաբրիկայի, ոռոստովցիները՝ կաթի գործարանի սարքավորումներ:

Հայաստանի և սովետական մյուս հանրապետությունների տնտեսական հարաբերությունները աստիճանաբար սկսեցին տնտեսական բազմակողմանի համագործակցության բնույթ ստանալ, որն ամրապնդվում էր նրանց քաղաքական ու ուղամական համագործակցությամբ: 1921 թ. ընթացքում Սովետական Հայաստանը ՌՍՖՍՀ-ի հետ մի շարք համաձայնագրեր կնքեց արտաքին առևտորի, ֆինանսական հարաբերությունների, փոստահեռագրային կապի զարգացման վերաբերյալ: Հայկական,

Արդյունաբերության մասին մեկ միասնական դեկրետ լընդունվեց: Արդյունաբերությունը ազգայնացվեց աստիճանաբար, ըստ առանձին ձեռնարկությունների:

Աղրբեջանական և Վրացական ՍՍՀ-ների միջև պայմանագիր ստորագրվեց երկաթուղիների ղեկավարությունը, ինչպես նաև արտաքին առևտորի մարմինները միավորելու մասին:

1922 թ. մարտի 12-ին հողակվեց Սովետական Հայաստանի, Վրաստինի ու Աղրբեջանի միավորումը Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ՝ իսկ վերջինս, որ նույն թվի ղեկտեմբերի 13-ից ստացավ Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետություն (ԱՍՖՍՀ) պաշտոնական անվանումը, 1922 թ. ղեկտեմբերի 30-ին միավորվեց ՈՍՖՍՀ-ի, Ռէկրախնական ՍՍՀ-ի ու Բելոռուսական ՍՍՀ-ի հետ, կազմելով ՍՍՀՄ-Ը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Համաշխարհային պատմական նշանակություն ունեցող այս ակտը բախտորոշ եղավ ինչպես զարգացման սոցիալիստական ուղին բռնած մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի համար: Առանց սովետական հանրապետությունների ամենասերտ դաշինքի, առանց միասնական ֆեդերատիվ պետության մեջ միավորվելու անհնար էր պաշտպանել նրանց գոյությունը իմպերիալիզմի ղեմ հանդիման, անիրագործելի էր իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը, միասնական, ընդհանուր կարգավորվող սոցիալիստական տրնտեսության ստեղծումը, աշխատանքի ռացիոնալ հասարակական բաժանման ապահովումը և բնական հարստությունների արդյունավետ օգտագործումը՝ ի բարօրություն երկրի բոլոր ժողովուրդների, անհնար էր ապահովել աշխատավորների բարեկեցության անշեղ աճը, երկրի բոլոր ազգերի ու ազգությունների կուլտուրայի համակողմանի զարգացումն ու ժաղկումը: Այդ միավորումը ապահովեց սովետական ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի թե արտաքին անվտանգությունը, թե ազգային զարգացման ազատությունը:

Սովետական Միության ժողովուրդները ձեռնամուխ եղան երկրի արմատական վերափոխման՝ սոցիալիզմի կառուցման լենինյան ծրագրի իրագործմանը, որը նախատեսում էր երկրի ինդուստրացում, գյուղատրնտեսության կոռպերացում, կուլտուրական հեղափոխության իրականացում, ազգային հարցի արդարացի լուծում և բոլոր ժողովուրդների ոչ միայն իրավական, այլև փաստական հավասարության ապահովում:

Այդ բոլորի շնորհիվ Հայկական հանրապետությունում ևս ստեղծվեցին կազմալուծված տնտեսությունը վերականգնելու, նրա արտադրողական ուժերը զարգացնելու մինչ այդ շտեսնված ներքին և արտաքին բարենպաստ պայմաններ:

Մեծ ծավալի աշխատանքներ սկսվեցին առաջին հերթին նոր հողերի ոռոգման և տեղական, հատկապես գյուղատնտեսական հումքի վերամշակման ուղղությամբ: 1928 թ. արդեն հիմնականում ավարտվեց նախ-

կինում քայքայված ու կազմալուծված տնտեսության վերականգնումը։ Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը կազմեց 1913 թ. ծավալի 114 տոկոսը, գյուղատնտեսությանը՝ 93 տոկոսը։ Հսու որում, դա նախահեղափոխական վիճակի լոկ կրկնությունը չէր։ Վերականգնումը նախ և առաջ կատարվում էր տեխնիկական նոր բազայի վրա և տարբեր ճյուղերում տարրեր տեմպերով։ Բացի այդ, ստեղծվում էին նոր ճյուղեր և արտադրություններ, որոնք նախկինում շկային։

Վերականգնման ժամանակաշրջանի վերջում, 1928 թ. պղնձաձուլությունը հասավ նախապատերազմյան մակարդակի 55 տոկոսին, գինուկոյակի արտադրությունը՝ 65 տոկոսին, պահածոներինը՝ 83 տոկոսին, բամբակի գտումը՝ 88 տոկոսին։ Բայց այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են մետաղամշակումը, անտառասղոցումն ու փայտամշակումը և կաշվի արտադրությունը իրենց համախառն արտադրանքը ավելացրին 2-ից մինչև 9 անգամ։ Քառապատկվեց էլեկտրաէներգիայի արտադրությունը։ Շահագործման հանձնվեցին երեսնի ու լենինականի հիդրոէլեկտրակայանները։ Այս տարիներին էր, որ դրվեց քիմիական, տեքստիլ և շինանյութերի արդյունաբերության հիմքը, Ալավերդում ստեղծվեց կարբիդի կալցիումի արտադրություն, լենինականում կառուցվեցին բամբակի մանարան և գործվածքային ֆաբրիկաներ, սկսեցին արտադրանք տալ Անիպեմզայի հանքը, որմնաքարերի և տեղական մածող նյութերի արտադրության մի քանի ճեռնարկություններ։

Սրանք արդեն նոր երկույթներ էին հանրապետության տնտեսական կյանքում, որոնք պետք է նախապատրաստեին նրա արտադրողական ուժերի տարածքային և ճյուղային ներկայիս կառուցվածքի ձևավորումը։

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսությունը որակական նոր աստիճանի բարձրացավ երկրի ինդուստրացման տարիներին։ Եշտակիորեն ավելացավ կապիտալ ներդրումների և նոր շինարարության ծավալը։ Նախապատերազմյան հնգամյակների տարիներին (1929—1941 թթ. հունիս) ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերում իրացվեցին 33 անգամ ավելի կապիտալ ներդրումներ, քան 1921—1928 թվականներին։ Կառուցվեցին արդյունաբերական այնպիսի բարդ համալիրներ, ինչպիսիք են Կիրովականի Ալ. Մյասինիկյանի անվան և Երևանի Ս. Կիրովի անվան միութենական նշանակության քիմիական գործարանները։ Գործողների շարքը մտան պղնձարշասպի գործարանը Ալավերդում, ցեմենտի գործարանը Արարատում, տուֆի մեքենայացված հանքերը Արթիկում, թեթև ու սննդի արդյունաբերական բազմաթիվ միջին մեծության ու փոքր ճեռնարկություններ հանրապետության տարբեր վայրերում։

Այդ տարիներին վերականգնվեցին, վերակառուցվեցին և նոր կառուցվեցին թվով 200 արդյունաբերական ճեռնարկություններ։ Շարք մտան մի շարք հիդրոէլեկտրակայաններ, այդ թվում Զորագետի (25

Հազ. կվտ հզորությամբ) և Թանաքեռի (10² հազ. կվտ) հզորությամբ խո-
շոր կայանները՝ էֆան էլեկտրաէներգիայի առկայությունը սկսեց ժողո-
վրդական տնտեսության ինդուստրացումը խթանող, էլեկտրատար ար-
դրությունները դեպի հանրապետություն ձգող գործոնի դեր կատարել:

Նոր թափ ստացավ ջրատեխնիկական շինարարությունը: Սկսվեց Սևանի ջրերի կոմպլեքսային օգտագործման ծրագրի իրագործումը: Սե-
վան-Հրազդան կասկադի էլեկտրակայանների կառուցման հետ մեկտեղ
ծավալվեցին նոր ջրանցքների շինարարության և Արարատյան դաշտի
ոռոգման աշխատանքները:

1940 թ. արդեն ամբողջ արդյունաբերական արտադրանքը բռղար-
կում էր սոցիալիստական սեկտորը, այն դեպքում, երբ 1928 թ. նրա
շուրջ 1/4-ը բաժին էր ընկնում մասնավոր մանր ձեռնարկություններին,
Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը աճել է 9 անգամ:

Խոր, արմատական վերափոխումներ կատարվեցին գյուղատնտեսու-
թյան մեջ 1936 թ. հիմնականում ավարտվեց գյուղատնտեսության կո-
լեկտիվացումը: Ոռոգելի հողատարածությունները 1921 թ. 60 հազ. և
1928 թ. 111 հազ. հա-ից 1940 թ. հասան 180 հազ հա-ի: Էական կա-
ռուցվածքային փոփոխություններ տեղի ունեցան գյուղատնտեսական
բուսարտադրության մեջ, ներդրվեցին նոր տեխնիկական կուլտուրաներ
(շաքարի ճակնդեղ, խորդենի), ընդարձակվեցին ծխախոտի պլանտացիա-
ները և կերային խոտերի ցանքատարածությունները:

Դրա հետ մեկտեղ այդ տարիներին նկատելի հորեն պակասեց գյու-
ղատնտեսական արտադրության ծավալը, մեծ շափով տուժեց հատկա-
պես անասնապահությունը: Դրա գլխավոր պատճառը կոլեկտիվացման
բռնի մեթոդներն էին, որոնցից շխուսափեց նաև մեր հանրապետությունը:
Չորս տարի տևած Հայրենական մեծ պատերազմը հսկայական ավե-
րածություններ պատճառեց երկրին: ՍՍՀՄ եվրոպական տարածքի
արևմտյան և կենտրոնական շրջաններում, որտեղ ուազմական գործո-
ղություններ էին տեղի ունեցել, արտադրությունն ամբողջությամբ կազ-
մալուծվել էր: Պահանջվեց սովետական բոլոր ազգերի ու ժողովուրդնե-
րի հսկայական շանքերի ներդրում, որպեսզի վերականգնվի Փաշիստա-
կան օկուպացիայից ազատագրված հանրապետությունների ու մարզերի
էկոնոմիկայի նախապատերազմյան մակարդակը: Բայց, միաժամանակ,
երկրի մի շարք շրջաններում, այդ թվում և Հայկական ՍՍՀ-ում նույ-
նիսկ պատերազմի տարիներին շարունակում էր արդյունաբերության մի
շարք ճյուղերի զարգացումը: Ճիշտ է, պատերազմի առաջին տարինե-
րին գրեթե դադարեցվեց ամեն տեսակի շինարարություն, բայց 1943
թվից վերսկսվեց պատերազմական ժամանակաշրջանի էկոնոմիկայի հա-
մար հույժ կարևոր մի շարք օբյեկտների կառուցումը: Հատկանշական է,
որ պատերազմի տարիներին հանրապետության ժողովրդական տնտե-

սության մեջ ներդրվեցին երեք անգամ ավելի շատ կապիտալ միջոցներ, քան իրացվել էին առաջին հնգամյակի ընթացքում:

Ճիշտ է, արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1940 թ. համեմատությամբ պակաս էր մոտավորապես 7 տոկոսով, բայց այդ տարիների համար բնորոշը Հայկական ՍՍՀ նյութական արտադրության մեջ կատարված որակական աեղաշարժերն էին: Այդ ժամանակ էր, որ դրվեցին էլեկտրատեխնիկական, սարքաշինական, ժամացուցների, ռետինատեխնիկական իրերի, ծծմբաթթվի, ինչպես նաև թեթև ու սննդի արդյունաբերության մի շաբթ արտադրությունների հիմքերը: Յուրացվեց 270 նոր արտադրատեսակների արտադրությունը:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից և երկրի ժողովրդական տնտեսությունը խաղաղ ուղևերի փոխադրելուց հետո նոր թափ ստացավ Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի զարգացումը: Կառուցվեցին բազմաթիվ նոր արդյունաբերական ձեռնարկություններ, երկաթուղագծեր, խճուղային ճանապարհներ, ոռոգիչ ջրանցքներ ու պոմպակայաններ: Հետպատերազմյան տարիներին շահագործման հանձնվեցին միջհանրապետական գազամուղներ, որոնք Հայկական ՍՍՀ հասցրին Աղրբեջանի և Հյուսիսային Կովկասի (ՌՍՖՍՀ), ապա և Իրանի, ավելի ուշ Արևմտյան Սիրիի բնական գազը: Դա վճռական նշանակություն ունեցավ հանրապետության վառելիքանիներգետիկ բազայի հետագա ուժեղացման համար: Ավարտվեցին Հայկական միասնական էներգասիստեմի ատեղծումը և հանրապետության համատարած էլեկտրիֆիկացումը:

Արդյունաբերությունը ծավալվելով, իր զարգացման ոլորտի մեջ ընդգրկեց Հայկական ՍՍՀ բոլոր վարչական շրջանները, զարգացման նոր մակարդակի բարձրացան ավելի վաղ ստեղծված արդյունաբերական կենտրոններն ու կետերը:

1980 թ. հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913 թ. մակարդակը գերազանցեց 388 անգամ, 1940 թ. մակարդակը՝ 45 անգամ: Գյուղատնտեսական արտադրանքի ծավալը աճեց համապատասխանաբար 7,1 և 4,6 անգամ:

Հանրապետության տնտեսական պոտենցիալը նոր վերելք ապրեց 11-րդ հնգամյակում (1981—1985 թթ.): Նոր խոշոր առաջաքայլ կատարվեց արտադրողական ուժերի զարգացման ուղղությամբ: Շարունակվում էր հանրային արտադրության փոխադրումը զարգացման ինտենսիվ ուղղությամբ, ինչպես նաև ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը: Բերենք հնգամյակի ընթացքում Հայկական ՍՍՀ առցիւլտնտեսական զարգացումը բնութագրող մի քանի

Ներկայումս իրանական բնական գազի մատակարարումը Սովետական Անդրկովկան դադարեցված է:

տվյալներ. ազգային եկամուտը ավելացավ 31,3%-ով, հիմնական արտադրական ֆոնդերը մեծացան շուրջ 40%-ով, ընդլայնվեց հաղորդակցության ճանապարհների ցանցը, ժողովրդական տնտեսության հանրային սեկտորի մեջ լրացուցիչ ներգրավվեց մոտ 150 հազ. մարդ:

Վերջին տարիներին ինչպես ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում, ժողովրդատնտեսական հնգամյա ու տարեկան պլանների սոցիալական ուղղվածության ուժեղացման հետ մեկտեղ, էական շափով մեծացավ նաև քնապահպան միջոցառումների դերը: Տասնմեկերորդ հնաբայակի տարիներին լուրջ աշխատանքներ կատարվեցին հանրապետության էկոլոգիական վիճակի բարելավման, քնական ռեսուրսների պահպանման ու ռացիոնալ օգտագործման ուղղությամբ:

Այս ամենի հետ մեկտեղ ինչպես ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում, 70-ական թվականների կեսերից սկսած նկատվում էին էկոնոմիկայի զարգացման տեմպերի թուլացում, լճացման երկույթներ: Հատկապես հետ էր մնում սոցիալական ոլորտի զարգացումը, թերակատարվում էին կապիտալ շինարարության պլանները, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը չէին կարողանում լրիվ կերպով բավարարել բնակչության պահանջները առաջին անհրաժեշտության ապրանքների գծով, վատանում էին էկոնոմիկայի զարգացման որակական ցուցանիշները: ՍՄԿԿ ԽХVII համագումարը (1986 թ.) մշակեց սովետական հասարակության բոլոր տնտեսական, սոցիալական, հոգեր ոլորտների արմատական վերափոխման լայնածավալ ծրագիր, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման կոնցեպցիա:

Արագացումը, նշված է համագումարին ներկայացված ՍՄԿԿ կենտկոմի քաղաքական գեկուցման մեջ, «Ամենից առաջ տնտեսական ամի տեմպերի բարձրացում է: Բայց ոչ միայն: Նրա չությունը աճի նոր որակըն է՝ արտադրության ըստ ամենայնի ինտենսիվացումը գիտատեխնիկական առաջադիմության, էկոնոմիկայի կառուցվածքային վերակառուցման, աշխատանքի կազմակերպման ու խթանման արդյունավետ ձևերի հիման վրա!»:

Համագումարը մշակեց սոցիալիզմի համակողմանի կատարելագործման ստրատեգիան ու տակտիկան: Ընդունվեցին ՍՍՀՄ տարեկան ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները: Նախատեսվում է առաջիկա 15 տարում, մինչև դարի վերջը, կրկնապատկել

¹ Ա. Ս. Գարշանվ, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի քաղաքական գեկուցումը Սովետական Միության կոմանիստական կուսակցության 27-րդ համագումարին, 1986 թվականի փետրվարի 25-ին—Երևան, 1986, էջ 35.

ազգային եկամուտը, ինչպես նաև արտադրական պոտենցիալը, 2,3—2,5 անգամ ավելացնել հանրային աշխատանքի արտադրողականությունը:

Հետհամագումարյան պլենումները և համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսը մշակեցին երկրի էկոնոմիկայի ու քաղաքական սիստեմի կոնցեպցիան և նրա գործնական իրականացման ուղիները: Էկոնոմիկայի կառավարման վերակառուցումը ներառում է տնտեսական մեխանիզմի բոլոր տարրերի որակական կատարելագործում, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումն ապահովող տնտեսական ուժքորմ: Զեռնարկությունների ինքնուրույնության ընդլայնումը, անցումը ինքնակառավարման, տնտհաշվարկային փոխարաբերությունների զարգացումը, տնտեսական պրակտիկայում տնտեսագիտական լծակների ու խթանների դերի շեշտակի բարձրացումը իրականացվում են պահանջում, գնագոյացումը, նյութատեխնիկական մատակարարումը, ֆինանսավարկային մեխանիզմը, կառավարման կազմակերպման կառուցվածքը արմատապես վերակառուցելու պայմաններում: Վճռական շրջադարձ է կատարվում էկոնոմիկայի կառավարման վարչական մեթոդներից դեպի տնտեսական մեթոդները: Այդ հանգամանքը առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում մասնավորապես սոցիալիստական հասարակության տարածքային կազմակերպման օրինաշափությունների առավել լրիվ դրսերման համար և բացառում է տնտեսական, այդ բվում արտադրողական ուժերի տեղաբաշխման ու միջջրանային տնտեսական կապերի հաստատման հարցերի վարչական եղանակով (կամայական) լուծումները, որոնք արտահայտված են նախկինում:

Կուսակցության տնտեսական ստրատեգիայի իրականացման վրձուական փուլը ընթացիկ 12-րդ հնգամյակն է: Հայկական ՍՍՀ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թթ. պետական պլանի համաձայն հանրապետությունում արտադրված եկամուտը պետք է ավելանա 26%-ով, արդյունաբերական արտադրանքի ծավալը 28,2%-ով. գյուղատնտեսական արտադրանքի արտադրության տարեկան միջին ծավալը նախորդ հնգամյակի համեմատությամբ 12%-ով, պետական կենտրոնացված կապիտալ ներդրումների ծավալը 17,5%-ով, ընակլության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները՝ 14,6%-ով: Հնգամյակի անցած տարիների ցուցանիշները վկայում են, որ առաջադրված խնդիրները հիմնականում կատարվում են: 1987 թ. հանրապետությունում արտադրված ազգային եկամուտը կազմեց 6.530 մլն ռ. (փաստական գներով) և նախորդ տարվա ցուցանիշը գերազանցեց 3,8%-ով:

Սակայն, Հայկական ՍՍՀ էկոնոմիկայի զարգացման անցած տասնամյակների, ինչպես նաև ընթացիկ հնգամյակի տեմպային ցուցանիշ-

Ների հետեւում քայնված են լուրջ պրոբլեմներ, որոնց լուծման հետաձգումը վտանգի տակ է դնում հանրապետության սոցիալտնտեսական զարգացման արագացումը, լիացման երեսույթների վերացումը, էկոնոմիկայի վերակառուցումը և արդյունավետության բարձրացումը: Էական խզում գոյություն ունի նյութական արտադրության զարգացման մակարդակի և սոցիալական ենթակառուցվածքի միջև: Բավարար չեն հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման շրջանային անհամամասնությունների վերացման տեմպերը: Սոցիալական ենթակառուցվածքի զարգացման գրեթե բոլոր կարևորագույն ցուցանիշներով հանրապետությունը հետ է մնում միութենական միջին մակարդակից, չի ապահովվում աշխատանքի արդյունավետության և արտադրանքի որակի շեշտակի բարձրացում: Մեծ թվով շուրջված հարցեր կան հանրապետության աշխատանքային ռեսուրսների, բնական ռեսուրսների, ինչպես նաև արտադրական ու գիտատեխնիկական պոտենցիալի ուղղունակությունների վերաբերյալ:

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում լուրջ պրոբլեմների ու հասունացած հարցերի առկայությունը չի կարող փոխել գլխավոր հետևող համար այն է՝ պատմական կարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանը ցարական Ռուսաստանի նախկին ագրարային ծայրամասից վերածվել է գիտատեխնիկական հզոր պոտենցիալ, ժամանակակից արդյունաբերություն, մերենայացված խոշոր գյուղատնտեսություն, զարգացած գիտություն ու մշակույթ ունեցող հանրապետության:

Սովետական Հայաստանը, ՍՍՀՄ մյուս հանրապետությունների հետ մեկտեղ, ներկայումս լուծում է սոցիալիստական հասարակության հեղափոխական վերակառուցման, էկոնոմիկայի համակողմանի կատարելագործման, երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը արագացնելու կարևորագույն խնդիրը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ

1. Ե՞րբ և ինչպիսի՞ դեկրետներով են ազգայնացվել Սովետական Հայաստանի արտադրամիջոցները:
2. Բնութագրե՞ք Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացման հիմնական փուլերը:
3. Ո՞րն է Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլի գլխավոր խնդիրը:

¹ Տես Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի 1988 թ. սեպտեմբերի 13-ի պլենումի որակումը էկոնոմիկայում, սոցիալական ոլորտում լճացման երեսութերի հաղթահարման և հանրապետությունում գաղափարաբարյալական իրադրության առողջացման ուղղությամբ կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին: «Սովետական Հայաստան» օրաթերթ, 28 սեպտեմբերի 1988 թ.:

Տարածքի վարչական բաժանումը ընդհանրապես ծագել է պետության հետ մեկտեղ և պետական իշխանության իրականացման անհրաժեշտ ձևերից մեկն է։ Դրա միջոցով է ապահովվում պետական մեխանիզմի, մասնավորապես պետական իշխանության տեղական մարմինների տարածական տեղաբաշխումը և նրանց արդյունավետ կազմակերպումը։ Վարչատարածքային բաժանման էությունն ու առանձնահատկությունները պայմանավորված են տվյալ պետության դասակարգային էությամբ, նրա ֆունկցիաներով ու խնդիրներով, առկա քաղաքական ռեժիմով և համապատասխանում են իշխող դասակարգերի շահերին։

Առանձնահատուկ է սոցիալիստական պետության վարչատարածքային բաժանման նշանակությունը։ Դա կապված է այն բանի հետ, որ սոցիալիստական պետությունը, ի տարրերություն բոլորուական պետության, իրականացնում է նոր լրացուցիչ՝ տնտեսական-կազմակերպչական և կոլտուր-դաստիարակչական ֆունկցիաներ։ Եվ ահա, որպես հետևանք, սոցիալիստական երկրներում վարչատարածքային միավորները հանդես են գալիս որպես սոցիալիստական հասարակության տարածքային կազմակերպման միավորներ, դրանց սահմաններում է տեղի ունենում պետական տնտեսական, սոցիալական ու կոլտուրական շինարարության կոռորդինացումն ու կառավարման միավորումը, այլ կերպ ասած այդ միավորների սահմաններում է իրականացվում հասարակական կյանքի բոլոր հարցերի փոխհամաձայնեցված միասնական լուծումը։ ՍՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների սովետներն են իրականացնում պետական իշխանությունը իրենց ենթակա վարչատարածքային միավորների սահմաններում, պետականորեն նրանց վրա է դրված այդ միավորների կոմպլեքսային զարգացման պատասխանատվությունը։

Սովետների այս ֆունկցիաները թեև հոչակված էին սահմանադրական կարգով, նախկինում ձևական բնույթ էին կրում։ Դրանք իրական բովանդակություն են ստացել այժմ, երկրի քաղաքական սիստեմի ռեֆորմից հետո։

Ինչպես արգենապեկ է նախարդ բաժիններում (տես գլուխ 1), Արեգելյան Հայաստանը, մինչև սովետական իշխանության հաղթանակը, ուստական կայսրության վարչատարածքային կառուցվածքին համապատասխան բաժանված էր նահանգների, գավառների և ոստիկանական տեղամասների։ Վերջիններս միավորում էին մի քանի գյուղեր։ Որպես առանձին միավոր էր առանձնացված Կարսի մարզը, որի իշխանությունը, ի տարրերություն նահանգների մեջ մասը կենտրոնացված էր զինվորական իշխանությունների ձեռքում։ Այդ բաժանումը ուներ ոստիկանական-ֆիս-

կալային բնույթ և հարմարեցված էր ցարական իշխանության ամրապնդման, աշխատավորությանը ճնշված վիճակում պահելու և բնակչությունից պետական գանձարանի և այլ հարկեր հավաքելու համար։ Հաշվի չէին առնվել ու բնակչության ազգային կազմը, ոչ էլ տարածքի կուլտուր-կենցաղային ու տնտեսական առանձնահատկությունները։

Ցարական Ռուսաստանի վարչական բաժանումները Վ. Ի. Լենինը համարում էր «միջնադարյան, ճորտատիրական, պաշտոնական բյուրո-կրատական...», և այն էլ՝ նրանց ամենակոպիտ ձևով»¹։

Հայաստանի դաշնակցական կառավարությունը, ճիշտ է, հրաժարվելով ցարական Ռուսաստանից ստացած ժառանգությունից, երկրի վարչատարածքային բաժանման համար ընդունեց նահանգ-շրջան-գյուղ եռաստիճան համակարգը, բայց այդ բաժանումը ևս իր բնույթով շահագործողական էր և բխում էր վարչաձեկի բուրժուական էությունից, հետևապես և չէր կարող ծառայել սովետական իշխանության հաղթանակից հետո երկրում հաստատված պրոլետարական դիկտատորայի շահերին։ Ավելացնենք նաև այն հանգամանքը, որ Հայաստանի դաշնակցական հանրապետությունը այնպես էլ ի վիճակի շեղավ որոշակի դարձնել իր քաղաքական սահմանները և գործողության մեջ դնել ներքին վարչական բաժանման համակարգը։

Սովետական Հայաստանի տարածքը իր ներկայիս քաղաքական սահմաններով ձևավորվել է Ցարական Ռուսաստանի վարչատարածքային միավորների տարրեր հատվածներից։ Այդ միավորներն էին Երևանյան նահանգը առանց Սուրմալուի գավառի ու Նախիջևանի, Ելիզավետոպոլի գավառի հարավ-արևմտյան և Հյուսիս-արևմտյան հատվածները, Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառը և Կարսի մարզի Հյուսիս-արևելյան փոքրիկ տարածքը։

Նորաստեղծ սովետական իշխանությունը իր առաջին մի շարք օրենսդրական ակտերի հետ մեկտեղ, 1920 թ. դեկտեմբերի 26-ի հրամանով վերացրեց երկրի բաժանումը նահանգների ու շրջանների և ժողկությունը 1921 թ. հուլիսի 20-ի «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության վարչական վերաբաժանումների մասին» դեկրետով հաստատեց գավառ-գավառամաս (գավառակ)՝ գյուղ համակարգը։ Հանրապետությունը սկզբում բաժանվեց 8 գավառների և 33 գավառակների։ Նույն թվի օգոստոսի 31-ի որոշմամբ, ի լրումն նշված դեկրետի, կազմվեց ևս մեկ գավառ (Զանգեզուրի)՝ 6 գավառակներով։ Այս բաժանումը, որոշ փոփոխություններով հանդերձ, պահպանվեց մինչև 1929 թվականը։ Այդ ժամանակ Հայկական ՍՍՀ-ում կար 9 գավառ և 38 գավառակ (տես աղյուսակ 6)։

¹ Վ. Ի. Լենին, ելք, հ. 24, էջ 183։

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀ ՎԱՐՉԱՏԱՐԱՇՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ
ՄԻՒՏԵՎ 1929 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ը**

Գավառներ	Գավառամասեր (գավառակներ)	Տարածությունը (քկմ)	Բնակչությունը հազ. մարդ (1926 թ. մարդահամարի տըլ- յալներով)
1. Լենինականի		4200,3	166,9
	1. Աղարայի	585,9	8,6
	2. Ղըզըլ-Ղուկ	614,6	13,2
	3. Դուզքենդի	513,5	26,5
	4. Հաշի Խալիլի	428,1	15,2
	5. Թավթառուի	412,2	22,8
	6. Մոլա-Գյոկշայի	611,7	26,8
	7. Թալինի	968,9	11,5
	թ. Լենինական	65,4	42,3
2. Լոռի-Փամբակի		3921,2	133,2
	8. Վորոնցովկայի	751,0	18,7
	9. Ալավերդու	846,4	23,6
	10. Դսեղի	494,5	14,6
	11. Ստեփանավանի	679,3	24,3
	12. Համալուի	479,3	25,0
	13. Ղարաբիլիսայի	670,7	27,0
3. Դիլիջանի		3589,0	78,6
	14. Բարձրանի	524,4	11,4
	15. Խանսի	891,1	15,8
	16. Շամշադինի	807,9	20,1
	17. Կարմիրգյուղի	695,7	16,4
	18. Դիլիջանի	669,9	14,9
		2561,9	114,5
4. Էջմիածնի		588,3	22,5
	19. Աղտարանի	726,0	26,4
	21. Սամաղարի	427,7	19,3
	22. Զանգիրասարի	213,9	20,6
	23. Արմավիրի (Ղուղղուղուիի)	606,0	25,7
5. Երևանի		4425,2	178,6
	24. Ախտայի	993,5	30,6
	25. Կոտայքի	684,2	21,7
	26. Գառնիի	968,1	6,7
	27. Հրազդանի	179,9	13,5
	28. Ղամարլուի	374,9	24,6
	29. Վեդիի	1186,9	16,9
	թ. Երևան	37,7	64,6
6. Նոր Բայազետի		3225,6	101,6
	30. Սևանի	240,9	12,0

Գավառներ	Գավառամասեր (գավառակներ)	Տարածությունը (քկմ)	Անկախությունը հազ. մարդ (1926 թ. մարդա- համարի տրվ- յալներով)
	31. Նոր Բայազետի	605,5	29,8
	32. Մարտունու	873,5	27,2
	33. Բասարգելարի	1505,7	32,6
7. Փարալագապի		2425,4	30,1
	34. Թեշիշընդի	1098,4	18,4
	35. Փաշալուի	1327,0	11,7
8. Զանգեզուրի		3754,5	68,9
	36. Սիսիանի	1712,6	22,4
	37. Գորիսի	752,2	23,4
	38. Ղափանի	1289,7	23,1
9. Մեղրի		742,8	8,1
Հայկական ՍՍՀ	Ըստամենը	28845,91	880,5

Սովետական Միության ժողովրդական տնտեսության վերականգնը-
ման ավարտումը և սոցիալիստական շինարարության նոր խնդիրներին
անցնելը հրամայական պահանջ էին դնում վերակառուցել երկրի վար-
չատարածքային կառուցվածքը, այն համապատասխանեցնել երկրում
ստեղծված տնտեսական ու քաղաքական նոր իրադրությանը։ Դեռևս
1921—1922 թթ. երկրի Պետպլանը և Կենտգործկոմը սկսել էին աշխար-
հում առաջին սոցիալիստական պետության վարչատարածքային կա-
ռուցվածքի սկզբունքների մշակումը։ 1923 թ. ՍՄԿԿ XII համագու-
մարը, հավանություն տալով այդ սկզբունքներին, առաջարկեց կոնկրետ
քայլեր անել դրանք պրակտիկայում ստուգելու և կյանքում իրագործե-
լու համար։ ՍՍՀՄ բոլոր հանրապետություններում շրջանացման ուղղու-
թյամբ ծավալված աշխատանքների հիման վրա 1929—1930 թվական-
ներին անցկացվեց վարչատարածքային ռեֆորմ։ Կարևոր ելակետային
նշանակություն էր տրվում այն փաստին, որ սոցիալիստական հասա-
րակարգում հաստատված էր քաղաքական և տնտեսական ղեկավարման
միասնություն։

Հայաստանի Կենտգործկոմի նախագահության 1929 թ. հունիսի 26-ի
«Հայաստանի Սեւ տերիտորիայի շրջանացման մասին» որոշման հա-
մաձայն հանրապետությունը բաժանվեց 5 գավառի (օկրուգի), 31 շրբ-
ցանի և քաղաքի։ Մեկ տարի անց Կենտգործկոմի և ժողովրդի 1930 թ. օգոստոսի 5-ի որոշմամբ գավառները վերացվեցին և վարչ-
ատարածքային բաժանման եռաստիճան համակարգի փոխարեն հաստատ-

¹ Առանց Սևանա լճի՝ գավառների մեջ շրաշխված մակերեսին

վեց երկաստիճան (շրջան-գյուղական սովետ) համակարգը, որը և գործում է մինչև այսօր¹:

Վարշատարածքային նոր բաժանումը իր էությամբ ու սկզբունքներով արմատապես տարրերվում էր նախորդ բոլոր բաժանումներից: Նրա ճիմքում առաջին անգամ դրվեց տնտեսական հատկանիշը: Բազմակողմանիորեն հաշվի էին առնվել տարածքի բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչության քանակական ու տարաբնակեցման առանձնահատկությունները, տնտեսության բնույթն ու զարգացման մակարդակը հաղորդակցության ճանապարհների ուղղությունն ու խտությունը, էական նշանակություն էր տրվում բնակչության ազգային կազմին, արտադրական, կենցաղային և էթնիկական այլ առանձնահատկություններին:

Նոր ռեֆորմը, վերափոխելով հանրապետության վարչատարածքային կառուցվածքը, դրական մեծ դեր խաղաց սովետական իշխանությունը տեղերում ամրապնդելու, պետական-վարչական ապարատը բնակչության լայն զանգվածներին մոտեցնելու գործում և հեշտացրեց տընտեսական ու կուտուր-լուսավորական աշխատանքների ղեկավարումը:

Սոցիալիստական շինարարության հաջորդ տարիների փորձը լիովին ապացուցեց վարչատարածքային բաժանման նոր՝ երկաստիճան (մարզային բաժանում ունեցող միութենական հանրապետություններում՝ եռաստիճան) համակարգի կենսունակությունը: Հետագայում կատարված փոխինությունները հիմնականում վերաբերել են ոչ թե համակարգի էությանը, այլ վարչատարածքային միավորների սահմաններին ու քանակին: Վարչատարածքային կառուցվածքի էությունը փոխելու փորձերը հաջողությամբ չեն ավարտվել և կարճ կյանք են ունեցել: Ընդամենը մեկ տարի գոյատեսեցին 1952 թ. հանրապետությունում ստեղծված թվով երեք վարչական օկրուգները, որոնք միավորում էին վարչական շրջանները և վեր էին կանգնած նրանցից²: Իրեն շարդարացրեց նաև 60-ական թվականների սկզբին վարչական շրջաններին զուգահեռ ստեղծված գյուղատնտեսության ղեկավարման (11 կոլխոզային-սովխոզային տարածքային արտադրական վարչությունների) և արդյունաբերության ղեկավարման (9 արդյունաբերական գոտիների) տարածքային միավորների ստեղծումը, որը ըստ էության խախտում էր վարչատարածքային:

¹ Հանրապետության նոր շրջանացման գիտական նախապատրաստման համար մեծ նշանակություն ունեցան պետպանին առընթեր ստեղծված շրջանացման հանձնաժողովի արշավախմբային-հետազոտական աշխատանքները, որոնք ունեին խիստ արտահայտված աշխարհագրական բնույթ:

² Այդ օկրուգներն էին՝ Երևանի (Արարատյան գյուղավորության, Սևանի ավազան և Ջանգեղուր), Լենինականի, Կիրովականի:

Միավորների պետական, տնտեսական ու սոցիալ-կուլտուրական շինարարության միասնական կառավարման սկզբունքը:

Սկսած 1965 թ. ինչպես ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած, այնպես էլ Սովետական Հայաստանում կրկին վերադարձան 30-ական թվականներին հաստատված և ժամանակի քննությունը բռնած վարչատարածքային կառուցվածքին, որը հիմնվում է որոշակի տարածքի սահմաններում վարչական, ինչպես և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, այլ կերպ ասած հասարակական կյանքի բոլոր ոլորտների ղեկավարման միասնականության սկզբունքի վրա:

Ինչպես ասվեց, մեզանում ներկայումս գործող վարչատարածքային բաժանումը պայմանավորված է ոչ միայն պետական, այլև տնտեսական ու սոցիալ-կուլտուրական շինարարության խնդիրներով, որոնք, ինչպես հայտնի է, ժամանակի ընթացքում փոփոխվում են: Քանի որ այդ այդպես է, ապա և վարչատարածքային կառուցվածքի համակարգը և վարչատարածքային բաժանման բուն ցանցը նույնպես այդ խնդիրների պահանջով պետք է անընդհատ բարեփոխվեն ու կատարելագործվեն:

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ձեռք բերած որակական ու քանակական հսկայական տեղաշարժերի, բնակչության ու հասարակական արտադրության արագ աճի ներկա պայմաններում աստիճանաբար հասունանում է վարչատարածքային բաժանումը կատարելագործելու աներածեցությունը:¹ Այսօր արդեն ակնհայտ է, որ 59 առաջին կարգի վարչատարածքային միավորների թիվը (37 գյուղական շրջան և 22 հանրապետական ենթակայության քաղաք), որոնք անմիջապես ենթակա են հանրապետության Մինիստրների խորհրդին, բավականին մեծ է և մեր լեռնային հանրապետության աշխարհագրական ներքին բազմազնության պայմաններում մեկ կենտրոնից անմիջապես դեկավարություն իրագործելու առումով որոշակի դժվարություններ է հարուցում¹: Ըստ որում, եթե յուրաքանչյուր շրջանի բնակչության թիվը ու տարածքի մեծության ներկայումս ընդունված միջին նորմաները պահպես կանոնավոր պահպետ կառավարության միավորների թիվը էլ ավելի կմեծանա: Բացի այդ, ժողովրդական տնտեսության անընդհատ հզորացումն ու կառուցվածքի բարդացումը անխուսափելիորեն կդժվարացնեն դրա կառավարումը:

Վերահաս դժվարությունների հաղթահարման ուղիներից մեկը կառող է լինել Հայկական ՍՍՀ-ում նույնպես վարչատարածքային բաժանման եռատիֆան համակարգին անցնելը: Վարչատարածքային ամենա-

¹ Գիտական տվյալների համաձայն օպտիմալ է համարվում, եթե կառավարող կենտրոնի և կառավարվող օղակների հարաբերակցությունը մոտ է լինում 1 : 10-ին, այսինքն կառավարվող օղակների թիվը շատ շի գերազանցում 10-ին:

մեծ՝ առաջին կարգի միավորը համախմբելով ներկայիս վարչական շրրջանների որոշակի խումբը, անմիշականորեն ենթակա կլինի հանրապետական մարմիններին։ Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տեսանելի հեռանկարի հաշվառմամբ այդպիսիք կարող են լինել թվով 5 կամ 6 տարածքային միավորներ, օրինակ, օկրուգներ, որոնցից յուրաքանչյուրը կհամապատասխանի հանրապետական մեկ ինտեգրալ սոցիալ-տնտեսական շրջանի երկրորդ աստիճանի միավորների՝ ներկայիս շրջանների խոշորացման հաշվին դրանց թիվը զգալիորեն կպակասի։ Սա կհանգեցնի դրանցից յուրաքանչյուրի տնտեսական-արտադրական հզորության մեծացմանը, որն էլ, իր հերթին, առավել նպաստավոր պայմաններ կստեղծի վարչատարածքային միավորների տնտեսության կոմպելքսային զարգացման, հասարակության տարածքային կազմակերպման ու արտադրության արդյունավետության հետագա աճի համար։ Սոցիալ-տնտեսական շրջանացման և վարչատարածքային բաժանման առնչությունները հանգամանորեն քննարկվում են սույն գրի շորրորդ մասում։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են սոցիալիստական պետության վարչատարածքային բաժանման նշանակությունը և ֆունկցիաները։
2. Ե՞րբ է կատարվել Հայկական ՍՍՀ վարչատարածքային բաժանման վերջին ռեֆորմը և ո՞ր էր դրա էռթյունը։
3. Հայկական ՍՍՀ վարչատարածքային կառուցվածքի կատարելագործման ի՞նչ ուղիներ կարող եք նշել։ Հիմնավորեք ձեր առաջարկը։

ԳԼՈՒԽ 4.

ԹՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. ԹՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՎԱՐԱնԱԿԸ, ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԸ

Առվետական Հայաստանի տարածքը աշխարհի ամենավաղ բնակեցված վայրերից է։ Այստեղ մարդկանց բնակության առաջին հետքերը վերաբերում են պալեոլիթին, ավելի ճիշտ՝ մարդկային պատմության ամենահին՝ շելյան դարաշրջանին, և շուրջ մեկ միլիոն տարվա պատմություն ունեն։ Ապացուցված է, որ դրան հաջորդող հազարմյակների ընթացքում մարդկային կյանքը այդ հողում լի ընդհատվել, իսկ մ.թ.ա. առաջին հազարմյակի սկզբներից արդեն նրա հիմնական բնակիչները եղել են հայեր։

Հասարակության զարգացման պատմական ելեկտները Հայաստանի ամբողջ տարածքի, ինչպես և նրա հյուսիս-արևելյան հատվածի (ներ-

կայիս Հայկական ՍՍՀ) բնակչության թե՛ թվաքանակի ու խտության, թե՛ կազմի ու միգրացիոն շարժումների անընդհատ փոփոխություններ են առաջացրել: Բնակչության բուռն աճն ու ներհոռքը տեղի են տվել նրա նվազեցմանն ու արտագաղթին: Արտադրողական ուժերի վերելքի ու քաղաքային կյանքի աշխատաժաման տարիներին հաջորդել են օտարերկրյա ասպատակությունների, բնակչության բռնի արտաքսման և ընդարձակ շրջանների ամայացման, նստակյաց հողագործ բնակչությունը եկվոր խաշնարած բնակչությամբ և մշտական բնակավայրերը ժամանակավոր բնակատեղիներով փոխարինելու տասնամյակները:

Մեծ տատանումներ է կրել բնակչության թվախանակը¹: Ըստ գոյություն ունեցող հաշվարկների աշխարհի բնակչությունը մեր թվարկության 1-ին հազարամյակի վերջերից մինչև 19-րդ դարի կեսերը աճել է 4 անգամ (շուրջ 300 մլն.-ից հասնելով 1200 մլն.-ի), մինչդեռ Հայաստանի բնակչությունը այդ նույն ժամանակաշրջանում, ինչպես ենթադրվում է, կրկնակի անգամ նվազել է: 1850-ական թվականներին ամբողջ պատմական Հայաստանում հաշվվել է մոտավորապես 3,5 մլն. բնակիչ (ինչքան ներկայումս Հայկական ՍՍՀ բնակչությունն է):

Հարյուրամյակներ անընդհատ չեր աճում նաև Արևելյան Հայաստանի բնակչությունը: Ռուսաստանին միանալու պահին Հայկական ՍՍՀ ներկայիս սահմաններում բնակվում էր ընդամենը 97,4 հազ. մարդ:

Արևելյան Հայաստանի միացումով Ռուսաստանին հայ ժողովրդի արևելյան հատվածի համար ստեղծվում են խաղաղ կյանքի ու տնտեսական գործունեության նպաստավոր պայմաններ: Սկսվում է բնակչության կայուն աճի մի տևական ժամանակաշրջան (տես աղյուսակ 7):

Ինչպես նկատելի է աղյուսակից, 86 տարվա ընթացքում (1828—1914 թթ.) բնակչության թիվը աճել է գրեթե 11 անգամ, ըստ որում, ժամանակաշրջանի սկզբում, ընդամենը 45 տարվա ընթացքում (1828—1873 թթ.), ավելի քան հնգապատկվել է:

Բնակչության աճի նման աննախանակ բարձր տեմպերը բացատրվում են նրանով, որ վճռական նշանակություն է ձեռք բերում մեխանիկական անճը: Ներգաղթողների կայուն հոսք է դիտվում հատկապես թուրքական լծի տակ մնացած Արևմտյան Հայաստանից: Միայն 1828—1830 թթ. Ռուսաստանին անցած հայկական շրջաններն են վերաբնա-

¹ Բնակչության թվաքանակի վերաբերյալ նշերիտ տվյալներ ստացվում են մարդահամարների միջոցներով: Նախասովետական Ռուսաստանում և ՍՍՀՄ-ում համընդհանուր յարդահամարներ անցկացվել են 1887, 1926, 1939, 1959, 1970 և 1979 թթ.: Մյուս տարիների մասին տվյալները մասնակի մարդահամարների կամ ընթացիկ հաշվառումների (գնահատումների) արդյունք են:

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՅԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՆԵՐԿԱՅԻՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ (1828—1914 թթ.)**

Տարեթիվը	Բնակչ. թվաքանակը հազ. մարդ	Թվաքանակի աճը 1828 թ. համեմա- տութ. (անգամ)	Թվաքանակի միջին տարե- կան աճը	
			հազ. մարդ	տոկ.
1828	97	—	—	—
1831	162	1,7	21,7	14,2
1873	496	5,1	8,0	4,9
1886	636	6,6	10,8	2,2
1897	798	8,2	14,7	2,2
1914	1014	10,5	12,7	1,6

Կեցվում շուրջ 140 հազ. հայեր, որոնցից 95 հազարը՝ Արևմտյան Հայաստանից և 45 հազարը՝ Իրանի հայաբնակ շրջաններից:

Արևմտյան Հայաստանից ներգաղթածները հիմնավորվում են Շիրակում, Դեբեղ գետի ու Սևանա լճի ավագաններում, Արագածի արևելյան ու արևելյան ստորոտներին: Պարսկաստանից գաղղածները կենտրոնանում են գլխավորապես Զանգեզուրում, Վայքում և Արարատյան դաշտում: Արևմտյան Հայաստանից ծայր առած ներգաղթը հետագա տարիներին մշտական բնույթ է ստանում և զանգվածային է դառնում 1853—1856, 1877—1878 թթ. ոռու-թուրքական պատերազմների, 1894—1896 թթ. հայկական կոտորածների և 1915 թ. մեծ եղեռնի ժամանակ ու դրանց հետևանքով:

Բնակչության ներգաղթի մեջ զգալի է մի այլ հոսանքի բաժինը: Այն գալիս էր Ռուսաստանի եվլոպական մարզերից և կազմված էր ցարական կառավարության կողմից հալածվող կրօնական աղանդների ոռու ներկայացուցիչներից (դուխոբորներ, մոլոկաններ, պրիֆուններ և այլն): Սկսած 1830-ական թվականներից մինչև 1917 թ. ցարական կառավարությունը Արևելյան Հայաստան է վերաբնակեցնում մի քանի տասնյակ հազ. ոռու աղանդապորների, որոնք ստանալով ընդարձակ հողատարածություններ կարեոր ճանապարհների հանգուցակետերում ու լեռնանցքների շրջաններում, հիմնում են իրենց բնակավայրերը: Սովետական իշխանության հաղթանակի նախօրյակին ոռուական բնակավայրերի թիվը անցնում էր երկու տասնյակից: Իրենց մեծությամբ ու ուզությամբ առաջատար էին բնակավայրերը, որոնք հայաց բնակավայրերը: Սովետական իշխանության հաղթանակի նախօրյակին ոռուական բնակավայրերի թիվը անցնում էր երկու տասնյակից: Իրենց մեծությամբ ու ուզությամբ առաջատար էին բնակավայրերը, որոնք հայաց բնակավայրերը:

Եթե Արևելյան Հայաստանի ռազմաքաղաքական դրության բարե-

լավումը նպաստում էր բնակչության ներգաղթին, ապա կապիտալիզմի զարգացումը այստեղ հանգեցնում էր թաքնված գերբնակվածության, որն իր հերթին գուղղացիությանը արտագնացության էր դրում:

Հայ բնակչության մշտական արտահոսք գոյություն ուներ դեպի Թաքու, Բաթում, Թիֆլիս, Խուսաստանի այլ արդյունաբերական կենտրոններ, ինչպես նաև արտասահման: Այս երեսությը ծավալվում է հատկապես առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին, երբ արտագնացների միջին տարեկան թիվը հաշվվում էր հազարներով:

Հայաստանի բնակչության թվաքանակը փոփոխություններ է կրում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Երկիրը դառնում է պատերազմական ակտիվ գործողությունների թատերաբեմ:

Օգտվելով պատերազմական դրությունից, Թուրքիայի սուլթանական կառավարությունը ծրագրում ու իրագործում է Արևմտյան Հայաստանը ու Հայերից մաքրելու ցեղասպան քաղաքականությունը: Թուրքական կանոնավոր զորքի և ֆանատիկ ամբողի միջոցով կազմակերպած խաղաղ բնակչության զանգվածային ջարդերի և դեպի Միջագետքի անապատները վտարված գաղթականների մեջ սկսված սովոր ու համաճարակի հետևանքով ոչնչանում է 1,5 մլն. հայ: Եռորդ 800 հազ. փախստականներ փրկություն են գտնում Կովկասում, Արաբական Արևելքում, Հունաստանում և այլ երկրներում¹:

Թուրքական կրկնակի օկուպացիայի (1918 և 1920 թթ.), դաշնակցական կառավարության անիրատես քաղաքականության և սովոր ու համաճարակների հետևանքով մեծաքանակ զոհեր տվեց նաև Արևելյան Հայաստանը: Նրա բնակչության թիվը ոչ միայն դադարեց աճել, այլև 1920 թ.-ին՝ 1914 թվականի համեմատությամբ, նվազեց գրեթե մեկ քառորդով, կազմելով ընդամենը 720000 մարդ, հաշված նաև այն տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներին, որոնք այդ տարիներին հաստատվել էին Երևանում, Էջմիածնում և այլ բնակավայրերում:

Սովետական իշխանության հաղթանակից հետո, խաղաղ շինարարության ու տնտեսական վերելքի պայմաններում երկրում ժողովրդագրական նոր իրադրություն հաստատվեց: Բարելավվեցին բնակչության վերարտադրության ցուցանիշները, մեծացավ ծնունդը, նվազեց մահցությունը: Դրա ներ մեկտեղ նոր, ավելի մեծ ծավալներ ընդունեց ներգաղթը, հայրենադարձությունը:

Այդ բոլորի հետևանքով Հայկական ՍՍՀ-ում ձեռք բերվեց բնակչության թվի կայուն աճ, որի տարեկան բացարձակ ցուցանիշը հետպա-

¹ Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов /Под ред. М. Г. Нерсисяна.— 2-е, доп. изд.— Еր.: Айастан, 1982, с. XII.

**ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԳՉՈՒԹՅԱՆ ՊՃԸ
(1920—1987 թթ.)**

ՏԱՐԵՐԻՎԸ	ԲՆԱԿՂՈՒԹՅԱՆ ԲՎԱ- ՐԱՆԱԿԻ (Հազ. մարդ)	ԲՎԱՐՁԱՆԱԿԻ աճը		ԲՎԱՐՁԱՆԱԿԻ տա- րեկան աճը հազ. մարդ, %
		1920 թ. համե- մատ. (անգամ)	1920 թ. համե- մատ. (%)	
1920	720,0	—	—	—
1926 (մարդահամար)	881,3	1,2	30,8	3,5
1939 (մարդահամար)	1282,3	1,8	24,0	1,1
1959 (մարդահամար)	1763,0	2,4	66,3	2,7
1970 (մարդահամար)	2491,9	3,5	53,6	2,2
1979 (մարդահամար)	3030,8	4,2	80,8	2,7
1980	3079,5	4,3	48,7	1,4
1981	3118,7	4,3	40,0	1,3
1982	3169,4	4,4	50,7	1,8
1983	3218,4	4,5	49,0	1,5
1984	3266,9	4,5	48,5	1,5
1985	3316,4	4,6	49,5	1,5
1986	3361,7	4,7	45,3	1,4
1987	3409,6	4,7	50,2	1,5

տերագմյան տարիներին, ինչպես վկայում է 8-րդ աղյուսակը, գրտ-նըլում է 49—81 հազար մակարդակի վրա:

Հայկական ՍՍՀ բնակչության ավելացման հիմնական աղբյուրը հա-մեմատաբար բարձր բնական աճն է: Սա արդյունք է առաջին հերթին ցածր մահացության, որի գործակիցը ներկայում կազմում է 5,6 (յու-րաքանչյուր հազար մարդու հաշվով) նախասովետական՝ 1913 թվականի 18,6-ի դիմաց: Դրա հետ մեկտեղ բարձր է ծննդի գործակիցը, Մինչև 60-ական թվականները այն, չհաշված առանձին բացառություններ, չի իշել 40-ից, իսկ 20-ական թվականների վերջերին հասել է ուկորդային թվի՝ մինչև 56-ի: Ներկայում այդ ցուցանիշը շուրջ 22 է:

Մահացության և ծննդի ցուցանիշների դրական փոփոխություննե-րի շնորհիվ բնակչության թվաքանակի բնական աճը նախասովետական 1—1,5 տոկոսի փոխարեն սովետական ժամանակաշրջանում, բացա-ռությամբ առանձին տարիների, գտնվել է 1,5—2,7 տոկոս մակարդակի վրա: Սա գրեթե կրկնակի անգամ բարձր է նաև ՍՍՀՄ միջին ցուցանի-շից:

Հանրապետության բնակչության աճի կայուն աղբյուր է ծառայել նաև՝ ներգաղթը: Սփյուռքի հայության պետականորեն կազմակերպված հայրենադարձությունը սկսվել է սովետական իշխանության հաղթանա-

¹ Տարվա սկզբին (բացի 1920 թվականից, որի տվյալը վերաբերում է տարեկերպչին),

կից անմիջապես հետո (տարեկան միջին հաշվով 2—3 հազար մարդ) շարունակվում է նաև ներկայումս։ Այն զանգվածային բնույթը է կրել 1922—1924 թթ., 1935—1936 և 1946—1948 թթ.. Միայն 1946—1948 թթ. ընթացքում արտասահմանյան տարրեր երկրներից Սովետական Հայաստան ներգաղթեց շուրջ 100 հազար հայ։ Սովետական իշխանության տարիներին հայրենադարձվածների ընդհանուր թիվը հաշվում է շուրջ 240 հազար։

Մինչև վերջին տարիները Սովետական Հայաստանը դրական հաշվեկշիռ ուներ նաև բնակչության միջնարապետական միգրացիոն շարժումների մեջ։ Սոցիալիստական շինարարության խնդիրների լուծումը պահանջում է աշխատուժի, հատկապես տարրեր մասնագիտության կադրերի միջնարապետական մշտական փոխանակում։ Վերջին տասնամյակներում Հայկական ՍՍՀ-ից Սովետական Միության տարրեր շըրջաններ են մեկնել տարեկան 8—12 հազար, ժամանել են 15—20 հազար մարդ։ Ավելացել է արտասահման գաղղթողների թիվը։

Գիտնականների կանխագուշակումներով (Վ. Ե. Խոչարեկյան) առաջիկա 1—2 տասնամյակների ընթացքում ևս հանրապետության բնակչության աճի տեմպերը կգերազանցեն ՍՍՀՄ միջին ցուցանիշներին, թեև բնական վերարտադրության տեմպերը որոշ շափով կնվազեն։ Մեր դարի վերջին՝ 2000 թ. բնակչության ընդհանուր թիվը կանցնի 4,6 մլն.-ից, 2015 թ.՝ 5 մլն.-ից։

Ինչպես հայտնի է, բնակչության կազմը կարելի է բնեարկել տարբեր տեսանկյուններից՝ ազգային, տարիքային, ըստ սեռի, դասակարգային, պրոֆեսիոնալ և այլն։

Հայկական ՍՍՀ-ն բնակչության ազգային կազմով ՍՍՀՄ հանրապետությունների շարքում ամենից ավելի միատարրն է։ Նրա տարածքի բնիկները՝ հայերը կազմում են ամբողջ բնակչության շուրջ 80%-ուսը։ Ըստ որում, նրանց տոկոսը ավելի բարձր է քաղաքային բնակչության, ավելի ցածր գյուղական բնակչության մեջ։ Հատկանշական է նաև այն փաստը, որ սովետական տարիներին բնակչության ազգային միատարրությունը գնալով ուժեղացել է։ Այսպես, 1926 թ. հայերը կազմել են ընդամենը 84 տոկոս, 1959 թ.՝ 86 տոկոս, 1970 թ.՝ 88,6 տոկոս, 1979 թ.՝ 89,8 տոկոս։

Մարդկային ռասաների ներկայումս ընդունված դասակարգման համաձայն հայերին դասում են եվրոպեոիդ բրախիկեֆալ (կարճ գլուխ) հարավային ճյուղի արմենոիդ (առաջավորասիական) ռասային։

¹ Սկսած 18-րդ դարից տարրեր հեղինակներ մարդկային ռասաների տարրեր գառակարգումներ են առաջարկել։ Սովետական գիտության կողմից ընդունվում է այն դասակարգումը՝ որն ռասանձացնում է մարդկային ռասաների երեք հիմնական խմբեր՝ նեղորոշի, մանզոլորի և եվրոպեոիդ։ Եվրոպեոիդը իր հերթին բաժանվում է հյուսահային, մի-

Ի հակադրություն ռասիստական տեսությունների, մարքսիզմը ելնում է այն գիտական դրույթից, որ մարդկային ռասաների ընդհանրությունը բոլոր հիմնական ձևաբանական, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունների գծով ավելի մեծ է, քան տարրերությունները, որոնք արտաքին են և ոչ էական: Ընդումին, գրեթե բոլոր հին ժողովորդները, ինչպես և հայերը երկարատև պատմական զարգացման, արտաքին շփման ու փոխազդեցությունների պայմաններում միշտ չեւ որ պահպանել են մարդաբանական միատիպությունը և ներկայումս աշքի են ընկնում ներքին մեծ բազմազանությամբ: Այնուհետեւ մարդաբանությունը արմենոիդների համար հատկանշական է համարում միշին կամ միշինից բարձր հասակը, գլխի կլոր ձեր, ամրակուռ կազմվածքը, թխավուն մաշկը, լայն ճակատը, ընդհանրապես խոշոր, հաճախ արծվային քիթը, մուգ սև ալիքավոր մազերը, խոշոր խաժ կամ սև, երկար թարթիչներով աշքերը՝ խիտ, հաճախ իրար միացած հոնքերով:

Պատմական զարգացման ընթացքում սոցիալ-հասարակական, ինչպես նաև տեղական բնական պայմանների ազդեցությամբ ամեն մի ժողովրդի մոտ ձևավորվում են բնավորության յուրահատուկ, ազգային գծեր: Ընդունված է հայերին հատուկ բնավորության գծեր համարել աշխատասիրությունը, եռանդը, աշքաբացությունը, ջանասիրությունը, պարտքի ու անդավաճան բարեկամության բարձր զգացումը, ընկերասիրությունը, փոխադարձ օգնության զգացումը, սերը ուսման ու արհեստների նկատմամբ: Հայերը հաճախ տաքարյուն են, շուտ բռնկվող բայց և բարեհոգի, շափազանց հյուրասեր, սիրում են երաժշտությունը, կատակն ու նուրբ հումորը, զերմորեն կապված են ընտանիքի և երեխաների հետ:

Սոցիալիստական արտադրահարաբերությունների, նոր սոցիալ-քաղաքական պայմաններում, Սովետական միության կազմում ձևավորվել է հայ սոցիալիստական ազգը՝ իր նոր սոցիալ-դասակարգային կազմով, հոգենոր հատկանշներով ու բնորոշ գծերով, մասնավորապես ժամանակակից բարձր կուլտուրայով, սովետական հայրենասիրությամբ, ինտերնացիոնալիզմով, սոցիալիստական աշխարհայացքով:

Սովետական Հայաստանի՝ քանակով երկրորդ ազգությունը աղբեցանցիներն են (1979 թ. մարգահամարի տվյալներով 0,16 մլն.), որոնց տեսակարար կշիռը հանրապետությունում ավելի քան 5 տոկոս

շանկյալ և հարավային խմբերի: Տարածական առումով հարավային խումբը հիմնականում համընկնում է հնդկամիշերեկածովյան գոտուն, որը տրոհվում է 3 մասի, յուրաքանչյուրն իր համապատասխան ռասայով՝ աղրիատիկ (կամ դիեարյան), պամիրաֆերգահական և առաջավորապիսական կամ արմենոիդ: Ընդունված է նաև, հիմք ընդունելով զանգի ձեր և դեմքի կազմվածքը, առանձնացնել դուիխոկեֆալ (երկարազլով) և բրախիկեֆալ (կարճագլուխ) ռասաներ:

է (1926 թ. 9,5 տոկոս): Այն ավելի բարձր է գյուղական բնակչության մեջ (շուրջ 14 տոկոս): Աղբբեշանական բնակչությունը զանգվածային է Ամասիայի, Վարդենիսի, Կրասնոսելսկի, Մասիսի, Արարատի, Ղափանի վարչական շրջանների որոշ հատվածներում:

Քանակով երրորդ տեղում են ռուսները՝ 0,075 մլն. մարդ, կամ Հանրապետության բնակչության 2,3 տոկոսը (1959թ. 3,2%), որոնք տեղաբաշխված են գլխավորապես Խոշոր քաղաքներում, ինչպես նաև Կալինինոյի, Ստեփանավանի, Կրասնոսելսկի շրջաններում:

Հաջորդ, Համեմատաբար բազմաքանակ ազգությունը բրդերն են՝ 0,05 մլն., կամ Հանրապետության բնակչության 1,6 տոկոսը: Նրանք նույնպես, ինչպես և աղբբեշանցիները, բնակվում են գլխավորապես գյուղական վայրերում (Հոկտեմբերյանի, Թալինի, Էջմիածնի, Արագածի, Աշտարակի, Մասիսի շրջաններ):

Հայկական ՍՍՀ-ում բնակվող մյուս ազգությունների ընդհանուր թիվը յի գերազանցում 0,03 մլն. (1,0 տոկոս): Առավել մեծաքանակ են Հույները, ասորիները, կան նաև ուկրաինացիներ, բելոռուսներ ու վրացիներ:

Հայկական ՍՍՀ ինչպես և ՍՍՀՄ մյուս հանրապետությունների բոլոր բնակիչները, անկախ ազգային պատկանելիությունից, որպես Սովետական Միության քաղաքացիներ, օգտվում են հավասար իրավունքներից և ակտիվորեն մասնակցում հանրապետության քաղաքական, տնտեսական ու հասարակական կյանքին:

Բնակչության կազմը արտացոլող մյուս ցուցանիշները անմիջապես առնշվում են աշխատանքային ռեսուրսների բնութագրության հետ, ուստի և նպատակահարմար է նրանց վերլուծությանը ժանոթանալ գործի հաջորդ բաժնում:

ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆԱԵՐ

1. Խել փոփոխություններ է կրել բնակչության թվաքանակը Հայաստանի տարածքում:
2. Խելպե՞ս է աճել Սովետական Հայաստանի բնակչության թվաքանակը: Վերլուծել դրա պատճենը:
3. Բնութագրել Հայկական ՍՍՀ բնակչության ազգային կազմը.

4.2. ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Աշխատանքային ռեսուրսները բնակչության աշխատունակ մասն են, որոնք բաղկացած են աշխատանքային տարիքի, այսինքն 16—59 տարեկան տղամարդկանցից և 16—54 տարեկան կանանցից (առանց հաշմանդամների), ինչպես նաև ոչ աշխատանքային տարիքի (անշա-

փահասների և թոշակային տարիքի) այն անձերից, որոնք զբաղված են հանրօգուտ աշխատանքով:

Աշխատանքային ռեսուրսները հասարակության արտադրողական ուժերի ակտիվ տարրն են: Ուստի և հասկանալի է, թե որևէ երկրի տընտեսության, արտադրական պոտենցիալի գնահատման համար ինչպիսի մեծ նշանակություն ունեն աշխատանքային ռեսուրսների թե՛ քանակական, թե՛ որակական ցուցանիշները:

Ամեն մի երկրում, շրջանում կամ բնակավայրում տվյալ պահի համար ձևավորվում է աշխատանքային ռեսուրսների որոշակի հաշվեկշիռ, որը ցույց է տալիս մի կողմից, բոլոր առկա աշխատանքային ռեսուրսներն ու դրանց կազմը և մյուս կողմից՝ նրանց օգտագործման վիճակը¹:

Աշխատանքային ռեսուրսների քանակական ցուցանիշների վրա ազդող գլխավոր գործոնը բնակչության սեռատարիքային կազմն է, որը, ինչպես հայտնի է, ըստ երկրների և տարիների նկատելի փոփոխություններ է կրում:

Հայկական ՍՍՀ բնակչության սեռատարիքային կազմը 1970 թ. տվյալներով հետևյալ պատկերն ունի:

Աղյուսակ 9

ՀԱՅԱՎԱԾԱՆ ՍՍՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԸՍՑ ՍԵՌԻ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ (ՑՈԿՈՍՆԵՐՈՎ)

Տարիքային խմբերը	Ընդամենը	Այդ թվում տղամարդ	Կին
0—15	100	51,5	48,5
16—29	100	49,3	50,7
30—54	100	48,1	51,9
55—59	100	39,2	60,8
60 և ավելի	100	41,4	58,6
Ամրող բնակչությունը	100	45,9	51,1
Աշխատանքային տարիքի բնակչությունը	100	49,8	50,2

Առ 1 հունվարի 1986 թ. Հայկական ՍՍՀ բնակչության կազմում

¹ Աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռները տնտեսաշխարհագրական ուսումնակրություններ կատարելու, ինչպես նաև ժողովրդական տնտեսության հեռանկարային ու ընթացիկ պլանավորման համար կարեոր նշանակություն ունեն: Դրանք կազմվում են մարդահամարների և բնակչության ընթացիկ հաշվառման նյութերի հիման վրա:

տղամարդիկ կազմել են 48,9% և կանայք՝ 51,1%։ Աշխատանքային ռեսուրսների կազմում այդ ցուցանիշները մոտավորապես հավասար են (նկատվում է կանանց թվի միայն շնչին գերազանցում): Մինչև 15 տարեկան հասակը գերազանցում են տղամարդիկ (51%), իսկ կանանց թվի ամենամեծ գերազանցում նկատվում է 60 և ավելի տարիքային խմբում։

Աշխատանքային ռեսուրսները աշխարհի բնակչության ընդհանուր թվի մոտավորապես կեսն են կազմում, երկրների մեծ մասում գերազանցելով 50 տոկոսը, փոքր մասում՝ շհասնելով այդ սահմանին։ ՍՍՀՄ-ում այն 54 տոկոս է: Սակայն Հայկական ՍՍՀ-ում աշխատանքային ռեսուրսները բնակչության ընդհանուր թվի 50 տոկոսն է: ՍՍՀՄ միջին ցուցանիշների հետ համեմատած նման տարրերությունը բացատրվում է Սովետական Հայաստանում ծննդի ավելի մեծ գործակցով, որի հետևանքով երեխաների ու անշափահասների թիվը նույնպես մեծ է: Ավելի մեծ է նաև թոշակային տարիքի բնակչության տեսակաբար կշիռը։

ՍՍՀՄ, ինչպես և Հայկական ՍՍՀ ժողովրդագրական իրադրությունը, որը ձևավորվել էր Հայրենական պատերազմի հետեանքով, այնպիսին էր, որ բնակչության ընդհանուր թիվը և կենսաթոշակի անցնողների թիվը 50—60-ական թվականներին ավելի արագ էին աճում, քան աշխատանքային տարիք մտնող երիտասարդների թիվն էր։ Հայկական ՍՍՀ-ում 1959—1970 թթ. բնակչության ընդհանուր թիվն աճել է 46 տոկոսով, կենսաթոշակային տարիք ունեցողներինը՝ 53 տոկոսով, բայց աշխատանքային տարիք ունեցողներինը՝ ընդամենը 30 տոկոսով (աշխատանքային տարիք մուտք էին գործում 40-ական թվականների, այսինքն այն տարիների ծնվածները, երբ ծննդի գործակիցը խիստ նվազել էր):

Ներկայում իրադրությունը այլ է. 60-ական թվականի վերջերից սկսած աշխատանքային տարիք է մուտք գործում 50-ական թվականներին ծնված սերունդը, միաժամանակ աշխատանքային տարիքից դուրս է գալիս այն սերնդի մի մասը, որը Հայրենական պատերազմի տարիներին առավել մեծ կորուստներ կրեց և այժմ բնակչության ընդհանուր թվում համեմատաբար փոքր տոկոս է կազմում¹:

Առաջիկայում աշխատանքային ռեսուրսների թվաքանակի արագ աճը նոր պահանջներ է դնելու ժողովրդական տնտեսության պլանավոր-

¹Տես՝ Խոշտակելյան Վ. Ն., Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերաբռադրության արդի պրոբլեմները, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 108.

ման առաջ, հատկապես աշխատանքային տեղերի ավելի արագ աճ ապահովելու և բնակչության զբաղվածության անկաւմ թույլ շտալու առումով:

Աշխատանքային ռեսուրսները բնութագրող կարևոր ցուցանիշ է սեռային կազմը՝ տղամարդկանց և կանանց թիվը, նշագես աշխարհի բոլոր երկրներում, մեզանում ևս ծնվում են ավելի շատ տղաներ, քան աղջիկներ, և տղաների թվական գերազանցությունը պահպանվում է մինչև 15—20 տարեկան։ Հաջորդ տարիքային խմբերում, ընդհանուր մինչև 30 տարեկան, սեռային կազմի հավասարակշռություն է հաստատվում, որից հետո սկսում են գերազուել կանայք։ Վերջին մարդահամարի տվյալներով 70 և ավելի տարիքի բնակչության մեջ յուրաքանչյուր հազար կնողը ընկնում էր ընդամենը 738 տղամարդ։

Հանրապետական ամբողջ բնակչության մեջ ևս կանայք ավելի շատ են (51,1 տոկոս), քան տղամարդիկ (48,9)։ Մինչդեռ աշխատանքային տարիքի բնակչության մեջ նրանք գրեթե հավասար են։

Սակայն հակառակ հանրապետական այդ ընդհանուր ցուցանիշն, ըստ շրջանների ու քաղաքների աշխատանքային տարիքի կանանց ու տղամարդկանց թվական հարաբերակցությունը նկատելիորեն փոփոխվում է, որոշակի պատճառական կապի մեջ գտնվելով ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի, արտադրական մասնագիտացման և միջրացիայի հետ։

Սովետական իշխանության անցած տասնամյակների ընթացքում աշխատանքային ռեսուրսները բնութագրող ցուցանիշներից առավել մեծ ու արմատական փոփոխություն է կրել բնակչության սոցիալդասակարգային կազմը։

Նախասովետական Հայաստանի բնակչությունը բաղկացած էր հակամարտ դասակարգերից և սոցիալական խմբերից, որոնցում առավել մեծաքանակը միջակ գյուղացիությունը և քաղաքի մանր բուրժուական խավերն էին։ Սովետական իշխանության հաղթանակով բնակչության մեջ էական որակական տեղաշարժեր կատարվեցին, վերացվեցին կապիտալիստներն ու խոշոր հողատերերը, թայց դեռևս մինչև 20-ական թվականների վերջերը բնակչության սոցիալդասակարգային կազմը իր բնույթով մնում էր մանր սեփականատիրական։ 1926 թ. մարդահամարի տվյալներով հանրապետության բնակչության ընդհանուր թվի ավելի քան 79 տոկոսը մենատնտես գյուղացիներ ու շկոռպերացված արհեստավորներ էին, մոտ 8 տոկոսը՝ քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերը։ 1939 թ., երբ երկրում հայտարարվել էր սոցիալիզմի հաղթանակը, բնակչության մոտ 63 %-ը կազմում էին կոլ-

տնտեսականները, 1/3-ը՝ բանվորներն ու ծառայողները (1926 թ. 13 տոկոսի փոխարեն): Մենատնտես գյուղացիների ու չկոպերացված արհեստավորների տեսակարար կշիռը նվազել էր մինչև 4 տոկոսի, իսկ կապիտալիստական տարրերը ամբողջովին վերացել էին:

Սովետական Հայաստանի բնակչության արդի սոցիալդասակարգային կազմի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ նրա 85 տոկոսը բանվոր-ծառայողներ և նրանց ընտանիքի անդամներն են, մինչդեռ կոլտնտեսականներն ու նրանց ընտանիքի անդամները կազմում են հազիվ 15 տոկոս:

Աշխատանքային ռեսուրսները բնութագրող ցուցանիշների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում բնակչության կրթական ցենզը, պրոֆեսիոնալ կազմը և կուլտուրական մակարդակը:

Եթե, օրինակ, բնակչության սեռատարիքային կազմը բնութագրում է աշխատանքային ռեսուրսների գլխավորապես քանակական կողմը, ապա կրթական ցենզը և պրոֆեսիոնալ կառուցվածքը առաջին հերթին պատասխանում են այն հարցին, թե ինչպիսի որակի, արտադրական-մասնագիտական ի՞նչ մակարդակի կադրերի հետ գործ ունենք, ինչպիսին է տվյալ ռեգիստրի ինտելեկտուալ պոտենցիալը:

Նախահեղափոխական Հայաստանի բնակչության միայն 10—12 տոկոսը կարող էր գրել ու կարդալ, 1914—15 թթ. ուս. տարում դպրոցահասակ երեխաների մի փոքր մասն էր ընդգրկված հանրակրթական կամ այլ՝ մասնագիտական դպրոցներում: Աշխատանքային ռեսուրսների հիմնական մասը գտնվում էր կրթական ամենացածր մակարդակի վրա և զուրկ էր ժամանակակից արտադրության հիմունքներին, գիտության ու տեխնիկայի նվաճումներին հաղորդակից լինելու հնարավորությունից:

Սովետական կարգերի օրոք ժողովրդական կրթության դրվագներ արմատապես փոխվեց: Պետական կարգով պարտադիր հայտարարվեց սկզբում տարրական, ապա և յոթնամյա կրթությունը: Մասսայական աշխատանք ծավալվեց մեծահասակների անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Արդյունքը եղավ այն, որ պատերազմի նախօրյակին արդեն 9—49 տարեկան բնակչության մեջ գրագետների տոկոսը բարձրացավ 84-ի (1926-ի 39 տոկոսի դիմաց), իրականացվեցին հայ մշակութի ու գիտության զարգացման մի շարք արմատական միջոցառումներ: Նախկին հետամնաց, կիսագրագետ Հայաստանում հաղթանակեց նաև կովտուրական հեղափոխությունը:

Ներկայումս թե՛ քաղաքի, թե՛ գյուղի 9—49 տարեկան հասակի ամբողջ բնակչությունը գրագետ է: Խիստ բարձրացել է գրագիտության միջին ցենզը: Եթե վերցնենք 10 և ավելի տարեկան հասակները, ապա բարձրագույն կրթությամբ՝ մոտ 82 մարդ, միջնակարգ կրթությամբ ավելի

քան 250 մարդ: Ստացվում է, որ բնակչության կեսից ավելին ունի ոչ լրիվ միջնակարգ և ավելի բարձր մակարդակի կրթություն: Իսկ եթե վերցնենք միայն 20-ից 44 տարեկան տարիքը, ապա յուրաքանչյուր 1000 բնակչությունը ունեն ոչ լրիվ միջնակարգ, միջնակարգ և բարձրագույն կրթություն:

Այս ցուցանիշներով Հայկական ՍՍՀ-ն աշքի է ընկնում նաև ՍՍՀՄ միութենական հանրապետությունների շարքում:

Ներկայում իրականացվում է պարտադիր միջնակարգ կրթության և աշխատանքային ուսուրսների գրեթե ամբողջ համարումը կատարվում է միջնակարգ հանրակրթական կամ մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդության հաշվին: Տարեկան շուրջ 27 հազար հոգի ստանում են արդյունաբերական, գյուղատնտեսական, շինարարության, տրանսպորտի ու կապի, լուսավորության, առողջապահության և այլ մասնագիտությունների գծով միջնակարգ կամ բարձրագույն կրթության վկայական: Եվ սա այն դեպքում, եթե նախահեղափոխական Հայաստանում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությունը իսպառ բացակայում էր:

Ակնրախ է, որ Սովետական Հայաստանի արդի աշխատանքային ուսուրսները իրենց գրագիտության աստիճանով, հետևապես և մասնագիտական-որակական ցուցանիշներով ոչ մի համեմատության մեջ շեն կարող դրվել մինչսովետական ժամանակաշրջանի աշխատանքային ուսուրսների հետ, որոնք իրենց ճնշող մեծամասնությամբ անգրագետ, լավագույն դեպքում կիսագրագետ հողագործներ ու անասնապահներ էին:

Այս ամենը վկայում են այն մասին, որ ներկայումս Սովետական Հայաստանը ունի ինտելեկտուալ բարձր պոտենցիալ և դրա ճիշտ օգտագործումը կարող է մեծապես նպաստել նրա սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերի արագացմանը:

Բնակչության և մասնավորապես աշխատանքային ուսուրսների մի այլ կարեռ ցուցանիշ է նրանց քաշինումը գյուղի և բաղադրի միջև:

Տնտեսության արմատական վերակառուցումը, հանրապետության ինդուստրիալ զարգացումը անճանաչելիորեն փոխեցին նրա սոցիալ-տնտեսական դեմքը: Բարձր ինտենսիվության հասան ուրբանիզացիայի պրոցեսները, ի թիվս դրանց՝ քաղաքների և քաղաքային բնակչության արագ աճը:

Ներկայումս Հայկական ՍՍՀ 58 քաղաքային բնակավայրերում բնակվում է 2,32 մլն. մարդ, այսինքն 22 անգամ ավելի, քան եղել է 1913 թ. (104 հազար): Դա նշանակում է, որ հանրապետության բնակչության մոտ 78 տոկոսը բնակվում է քաղաքներում և միայն 32 տոկոսը (1,1 մլն. մարդ)՝ գյուղական վայրերում: Մինչդեռ մինչև հեղափո-

խոփյունը քաղաքաբնակները կազմել են ամբողջ բնակչության ընդամենը 10 տոկոսը: Քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի հարաբերակցության այսպիսի՝ արագ փոփոխությունը հիմնվում է երեք աղբյուրների վրա, որոնք են՝ ա) գյուղական բնակչության միգրացիան դեպի քաղաք, բ) գյուղական բնակավայրերի վերածվելը նոր քաղաքների կամ «կլանվելը» մերձակա քաղաքների կողմից, գ) քաղաքային բնակչության բնական աճը:

Սովետական իշխանության առաջին տասնամյակներում վճռական դեր էին կատարում առաջին երկու աղբյուրները: Դրանց բացարձակ նշանակությունը ներկայումս էլ չի նվազել: Բավական է ասել, որ 60-ական թվականների կեսերից սկսած հանրապետության գյուղական բնակչության ընդհանուր թիվը համարյա չի աճում, և բնական ամբողջ հավելաճը, որը հավասար է տարեկան շուրջ 20 հազ. մարդու, հիմնականում գնում է համարելու քաղաքային բնակչությունը:

Այնուհանդերձ, վերջին տասնամյակներում քաղաքային բնակչության աճի գիխավոր աղբյուրը իր՝ քաղաքային բնակչության վերաբարությունն է, բնական աճը, որը բացարձակ թվերով գրեթե 1,5 անգամ գերազանցում է մեխանիկական աճին:

Քաղաքների արագ աճի պատճառների ու աղբյուրների մասին խոսելիս չի կարելի անտեսել մի էական հանգամանք ևս: Դա այն է, որ արտասահմանից և Սովետական Միության տարրեր շրջաններից Հայկական ՍՍՀ ժամանող բնակիչների հիմնական մասը մշտական բնակություն է հաստատել գերազանցապես քաղաքային բնակավայրերում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ներկայումս Սովետական Հայաստանի բնակչության գրեթե ամբողջ հավելաճը՝ թե՝ բնականը, թե մեխանիկականը, գումարվում է քաղաքային բնակչությանը, մինչդեռ գյուղական բնակչության թիվը, ըստ էության, կայունացել է 1—1,1 մլն. մակարդակի վրա:

Հայկական ՍՍՀ քաղաքային ու գյուղական բնակչության բացարձակ թվի դինամիկան, ինչպես նաև նրանց հարաբերակցության փոփոխությունները ըստ տարիների արտացոլված են ստորև բերվող № 10 աղյուսակում:

Քաղաքային և գյուղական բնակչության քանակական հարաբերակցությունը ինչ-որ շափով արտացոլում է տվյալ երկորի ուրբանիզացիայի աստիճանը, որը Հայկական ՍՍՀ-ի համար արտահայտվում է.

Քաղաքային բնակչություն — 2324,0 հազ. մարդ —

գյուղական բնակչություն — 1087,9 հազ. մարդ — $= 2,13$ ցուցանիշով
(սա նույնն է, ինչ-որ նրանց տոկոսային արտահայտությունների հա-

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈԼ ԲՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ
ԸՆՏ ԲՆԱԿԱՎԱՑՐԵՐԻ ՑԻԿԵՐԻ (ՀԱՅ. ՄԱՐԴ.)**

Տարեթվակը	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում		Նույն տոկոսով	
		քաղաք.	գյուղ.	քաղաք.	գյուղ.
1913	1000,1	104,0	896,1	10,4	89,6
1920	720,0	121,7	598,3	16,9	83,1
1926	881,3	167,1	714,2	18,7	81,3
1939	1282,3	366,4	915,9	28,9	71,1
1959	1763,0	881,8	881,2	50,0	50,0
1970	2451,9	1481,5	1010,4	59,5	40,5
1979	3030,7	1992,5	1038,2	65,7	34,3
1981	3118,7	2069,1	1049,6	66,3	33,7
1982	3169,4	2113,3	1056,1	68,7	33,3
1983	3218,4	2154,7	1063,7	66,9	33,1
1984	3266,9	2197,8	1069,1	67,3	32,7
1985	3316,6	2241,8	1074,8	67,6	32,4
1986	3361,7	2281,1	1080,6	67,9	32,1
1987	3411,9	2324,0	1087,9	68,1	31,9

բարերությունը՝ $68,1 : 31,9 = 2,13$):

Սովետական Հայաստանը ՍՍՀՄ միութենական հանրապետությունների շարքում այս ցուցանիշով գրավում է շորրորդ տեղը, զիշելով էստոնիային, լատվիային և ՈՍՖՍՀ-ին (1913 թ. եղել է 13—14-րդ տեղում):

Սա վկայում է ուրբանիզացման և ինդուստրացման, հետեւապես և բնակչության ու աշխատանքային ռեսուրսների կազմում կատարված փոփոխությունների այն բարձր տեմպերի մասին, որոնք հատուկ են եղել Հայկական ՍՍՀ-ին սոցիալիստական շինարարության անցած տասնամյակների ընթացքում:

Այս կամ այս երկրում տվյալ պահին գոյություն ունեցող տնտեսական իրադրությունը բնորոշող բազմաթիվ ցուցանիշների շարքում, ինչպես ասվեց, կարևոր տեղ են գրավում առկա աշխատանքային ռեսուրսների քանակը և որակը, որոնց բնութագրությունը տրվեց վերևում։ Մակայն պահին նշանակություն շունի նաև աշխատանքային ռեսուրսների զբաղվածությունը, այլ կերպ ասած արտադրողական ուժերի զբլիւավագ տարրի՝ աշխատութիւ օգտագործման վիճակը, աստիճանը։

Մեր երկրի տնտեսական զարգացման տարրեր փուլերում բնակչության զբաղվածության պրոբլեմը տարրեր բովանդակություն է ունեցել: **Սոցիալիստական շինարարության առաջին տարիներին գլխավոր հարցը բնակչության համար լրիվ զբաղվածություն, այսինքն՝ աշխատանքային ողջ ոեսուրսները հանրօգուտ աշխատանքով ապահովելն էր:** **Քսանական թվականների ընթացքում այդ հարցը մնում էր դեռևս չուժված:** **Նույնիսկ 1929 թ. Սովետական Հայաստանում հաշվվում էր 12 հազար գործազուրկ:** **Սա քիչ էր պակաս արդյունաբերության մեջ զբաղվածների ընդհանուր թվից¹:**

Սակայն 1930 թ. սկզբներին արդեն ինչպես ամբողջ ՍՍՀՄ-ում, այնպես էլ Սովետական Հայաստանում գործազրկությունը իսպառ վերացավ, աշխատանքային տարիքի ամբողջ բնակչությունը ընդգրկվեց հանրօգուտ աշխատանքի մեջ:

Զարգացման հաջորդ փուլերում կապիտալ շինարարության և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի բուռն վերելքը հանգեցրեց նոր աշխատատեղերի ստեղծման և աշխատող ձեռքերի պահանջի մեծացման: **Սրա հետ մեկտեղ, փոխվեց բնակչության զբաղվածության պրոբլեմի բովանդակությունը.** **Սուր հարցը ոչ թե աշխատանքային տարիքի բնակչությանը աշխատանք տալն էր, այլ հանրային արտադրությունը աշխատողներով ապահովելը, առկա աշխատանքային ոեսուրսները նպատակաշարմար ու արդյունավետ օգտագործելը:** **Ներկայումս գլխավոր պրոբլեմը մասնագետների պատրաստման նիշտ պլանավորումն է,** **նրա համաձայնեցաւմը ժողովրդական տնտեսության նյուղերի իրական պահանջների հետ և աշխատանքային ոեսուրսների համամասնական բաշխումը բատ նյուղերի շրջանների ու բնակավայրերի և արդյունավետ օգտագործումը:**

Ներկայումս աշխատանքային ոեսուրսները ընդգրկված են հանրային արտադրության մեջ, տնային և անձնական օժանդակ տնտեսություններում: **Հստ որում, պետք է նկատի առնել, որ երկրում իրականացվող տնտեսական ոեֆորմի պայմաններում, Կոռպերացիայի մասին օրենքի հիման վրա աստիճանաբար մեծանում է անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվողների և կոռպերատիվների մեջ ընդգրկվածների թիվը:**

Աշխատանքային տարիքի բնակչության մի մասն էլ շարունակում է ուսումը, այսինքն որակավորում է ձեռք բերում հասարակական արտադրության մեջ աշխատանքի անցնելու համար: **Սրա հետ մեկտեղ, տնային և անձնական օժանդակ տնտեսություններում զբաղվածները ևս**

¹ **Մեր հանրապետության աշխատանքային ոեսուրսների և նրանց օգտագործման պրոբլեմների համակողմանի վերլուծությունը տես՝ Վ. Ե. Խոշաբեկյանի վերը հիշատակած մենագրություններում:**

Հանրային արտադրության համար որոշակի ռեզերվ են ներկայացնում:

Հայկական ՍՍՀ տնտեսական ու կոլտուրական շինարարության բարձր տեմպերը հնարավորություն են տալիս անշեղորեն ընդլայնել հանրային արտադրության մեջ ընդգրկվածների թիվը: Վերջին տարիները հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների, ծառայողների ու կոլտնտեսականների թվի միջին տարեկան աճը կազմում է 20—35 հազ. մարդ, իսկ նրանց ընդհանուր թիվը ներկայում մոտենում է 1,5 մլն. մարդու (1922 թ. 30 հազարի և 1950 թ. 411 հազարի դիմաց):

Աշխատանքային ուսուրաների օգտագործումը բնութագրվում է նաև այն բանով, թե ինչպես են նրանք բաշխվում նյութական արտադրության և ոչ նյութական արտադրության ոլորտների միջև:

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվի ավելի քան 70 տոկոսը այժմ բաժին է ընկնում նյութական արտադրության և գրեթե 30 տոկոսը ոչ նյութական արտադրության ոլորտին (50-ական թվականներին այս թիվը եղել է համապատասխանաբար 85 տոկոս և 15 տոկոս): Մեզանում արդեն ձեռք է բերվել արտադրողական ուժերի զարգացման այնպիսի մակարդակ, երբ հնարավորություն է ստեղծվում շեշտակիորեն ուժեղացնել ժողովրդատնտեսական պլանների սոցիալական ուղղվածությունը և արդյունքում զբաղվածների աճը ոչ արտադրական ոլորտում տեղի է ունենում ավելի արագ, քան արտադրական ոլորտում: Նման վիճակը հնարավոր է միայն այն դեպքում, երբ նյութական արտադրության ոլորտում ապահովվում է արտադրության ինտենսիվ զարգացում, աշխատանքի արտադրողականության արագ և անշեղ բարձրացում, երբ հասարակությունը հնարավորություն ունի ավելի շատ միջոցներ և աշխատուժ ժախսել ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ոլորտի զարգացման վրա:

Դրական տեղաշարժ է նաև այն, որ նյութական արտադրության ոլորտում զբաղված աշխատանքային ուսուրաների վերաբաշխումը կատարվում է հօգուտ արդյունաբերության և հատկապես նրա արդիական, առաջադիմական, գիտատեխնիկական առաջադիմությունը որոշող ճյուղերի, որոնց անձնակազմից պահանջվում է կրթական ավելի բարձր ցենզ, մասնագիտական բարձր որակավորում և հանրակրթական լայն գիտելիքներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնակչության ո՞ր մասն է մտնում աշխատաեքային ուսուրաների մեջ:
2. Բնութագրեք Հայկական ՍՍՀ բնակչության սեռատարիքային կազմը:
3. Կազմիսի՞ն է Հայկական ՍՍՀ քաղաքային ու գյուղական բնակչության հարաբերակցությունը: Վերլուծեք վերջին տասնամյակների ընթացքում դրա փոփոխությունները, չությունը և պատճառները:

Բնակչության տեղաբաշխումը բնութագրելու համար սովորաբար օգտվում են բնակչության միջին խտության ցուցանիշից, որն արտացոյելով միավոր տարածքում բնակվողների թիվը, ըստ էության ցույց է տալիս այդ տարածքի տնտեսական յուրացվածության աստիճանը:

Եթե 19-րդ դարի սկզբներին Հայկական ՍՍՀ ներկա տարածքի ամեն մի քամ-ին ընկնում էր 5, դարավերջին՝ 27, 1927 թ.՝ 26 մարդ, ապա ներկայումս այդ ցուցանիշը արդեն հավասար է 115-ի. Դա նշանակում է, որ Սովետական Հայաստանը պատմական կարճ ժամանակամիջոցում դարձավ ՍՍՀՄ ամենախիտ բնակեցված հանրապետություններից մեկը (բնակչության միջին խտությամբ նա զիջում է միայն Մոլդավիային):

Այեն մի երկրի բնակեցվածության և բնակչության տեղաբաշխման վրա ազդում են տարբեր բնույթի գործոններ՝ բնական-աշխարհագրական, պատմական, առցիալ-քաղաքական:

Սովետական իշխանության հաղթանակի հետևանքով հայ ժողովրդի պատմական բախտում ու սոցիալ-քաղաքական կյանքում տեղի ունեցած արմատական վերափոխումները ապահովեցին բնակչության թվաքանակի կայուն աճ, որն, իր հերթին, պայմանավորեց բնակչության միջին խտության անընդհատ մեծացում: Սակայն հայտնի է, որ միջին խտության ցուցանիշը ընդհանուր գաղափար տալով բնակեցվածության աստիճանի մասին, միաժամանակ յի բացահայտում բնակչության տեղաբաշխման իրական պատկերը, նրա տարածական տարբերությունները, որոնց նշանակությունը արտադրության տարածքային կազմակերպման համար բավականին մեծ է:

Սովետական Հայաստանի տարածքի լեռնային բնույթը թելադրում է ինչպես այլ հասարակական երևույթների, այնպես էլ բնակչության տեղաբաշխման փոփոխություն երկու ուղղությամբ՝ հորիզոնական և ուղղաձիգ:

Երևակայական հորիզոնական հարթության վրա դիտվող բնակչության փոփոխությունները կարելի է քննարկել ըստ վարչատարածքային կամ որևէ այլ «հորիզոնական» միավորների, մինչդեռ ուղղաձիգ փոփոխությունների վերլուծության համար հիմք կարող են ծառայել տարածքի բարձրության գոտիները:

Հիմք ընդունելով ավելի ընդարձակ՝ բնապատմական շրջանները, ընդհանուր ձեռվ կարելի է նշել, որ բնակչության ամենամեծ խտություն գոյություն ունի Արարատյան գոգավորությունում և Ծիրակում: Համեմատաբար նոսր են բնակեցված Զանգեզուրը, Վայքը և Սևանի ավագանը:

Վարշատարածքային միավորներից առավել բարձր ցուցանիշ ունեն Մասիսի, Էջմիածնի, Արտաշատի, Հոկտեմբերյանի, Նախրիի շրջանները, որոնց քնակչության միջին խտությունը (շուրջ 200 մարդ) գերազանցում է Հանրապետության միջին ցուցանիշին 1,5—2 անգամ։ Ամենից նոսր քնակչություն ունեն Սիսիանի, Ղուկասյանի, Մեղրիի, Եղեգնաձորի շրջանները (մինչև 20 մարդ / քկմ):

Լեռնային երկրների համար հատկանշական է քնակչության խտության աստիճանական նվազումը ըստ բարձրության գոտիների, ըստ որում վերջին տասնամյակների ընթացքում այս միտումը գնալով ուժեղանում է։

Աշխարհի բոլոր լեռնային շրջաններում դիտվում է քնակչության հոսք բարձրադիր շրջաններից դեպի ցածրադիր շրջանները, որը ըստ երկութիւն, բացատրվում է արդի ժամանակաշրջանում արտադրության հարածուն ինտենսիվացմամբ ու համակենտրոնացմամբ։ Դրանք ավելի հեշտ է իրականացնել ցածրադիր շրջանների առավել նպաստավոր բնական ու տնտեսական պայմաններում, քան հիպոմետրիկ բարձր նիշ ունեցող հատվածներում, որտեղ պայմանները ավելի հարմար են արտադրության էքստենսիվ ուղղությունների զարգացման համար։

Հայկական ՍՍՀ մշտական բնակչություն ունեցող տարածքը ձգվում է 400 մ (Նոյեմբերյանի շրջանի Լալվար գյուղ) և 2360 մ (Վաղենիսի շրջանի Վերին Շորժա գյուղ) բացարձակ բարձրությունների միջև։

Այսօրվա վիճակով բնակչության բաշխումը ըստ բարձրության գոտիների ունի հետեւյալ պատկերը (տես աղյուսակ 11):

Մինչև 1000 մ բարձրություն ունեցող գոտում, որն զբաղեցնում է հանրապետության ցամաքային տարածքի 10 %-ը, կենտրոնացված է բնակչության շուրջ 53%։ Բնակչության խտությունը այս գոտում (530 մարդ / քկմ) գրեթե 5 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը, մինչդեռ մյուս գոտիներում այդ թիվն զգալիորեն նվազ է։

Բնակչության գերակշիռ մասի կենտրոնացումը ցածրադիր գոտում, ինչպես ասվեց, օրինաշափ է բոլոր լեռնային երկրների համար։ Սակայն, մեզանում այդ օրինաշափությունը համեմատած նաև մերձավոր հարեանների՝ Վրաստանի ու Ադրբեյջանի հետ, ավելի թույլ է դրսկորվում։

Չնայած դրան, վերջին տարիներին Հայկական ՍՍՀ-ում էական սոցիալ-տնտեսական միջոցառումներ են իրականացվում, որոնք նպատակ ունեն կանխելու բարձր լեռնային գոտու բնակչության արտահոսքը և ըստ բարձրության գոտիների բնակչության տեղաբաշխման անհամաշխափության հետագա խորացումը։

Ցածրադիր գոտում (մինչև 1000 մ) կենտրոնացված բնակչության

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԽՈԽՄԸ ԸՍՏ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԳՈՑԻՆԵՐԻ

Բարձրության գոտիներ	Բնակչությունը					
	Մետր ժ.մ.-ից հաշված	տարածությունը. տոկով ¹	Ամբողջ բնակ- չությունը		այդ թվում	
			տոկոս	խտութ. ¹	տոկոս	խտ. ¹
Հինգ 375	—	—	530	—	—	—
375—1000	10,3	53	—	64	410	34
1000—1500	19,1	18	100,0	16	60	21
1500—2000	28,0	25	90	19,8	50	35
2000—2500	25,7	4	15	0,2	1	10
2500—4090	16,9	—	—	—	—	—
Հնդամենը	100,0	100	121	100	87	100
						34

Հայկական ՍՍՀ 53 % ցուցանիշի դիմաց, Վրացական ՍՍՀ-ում այն կազմում է գրեթե 90%, Աղբբեշանական ՍՍՀ-ում 93%, Մեր հանրապետության այդ ցուցանիշը նախկինում շատ ավելի ցածր էր և 50%-ի սահմանագիծը անցավ միայն 1970 թվականների սկզբին, հատկապես Երեվանի և ցածրադիր գոտու մյուս քաղաքների բնակչության գերադասաճի հաշվին²:

Աշքի է ընկնում նաև այն, որ Հայկական ՍՍՀ բնակչության խտության նվազումը ըստ բարձրության գոտիների տեղի է ունենում ոչ աստիճանաբար, երկրորդ գոտին (1000—1500 մ) ըստ էության ավելի թույլ է բնակեցված, քան 3-րդը (1500—2000): 3-րդ գոտուն բաժին է ընկնում հանրապետության գյուղական բնակչության 35%-ից ավելին (խտությունը 45 մարդ/քմ), մինչդեռ նրան նախորդող 2-րդ գոտուն՝ ընդամենը 21 տոկոս (խտությունը շի հասնում նույնիսկ 40-ի): Սա բացարձում է 2-րդ գոտում տիրապետող թեք լեռնալանջերով, որոնք

¹ Հանրապետության ցամաքային տարածության նկատմամբ

² Գետք է նկատի ունենալ, որ Երևանը ցածրադիր գոտու մեջ է հաշված պայմանականորեն, նա ընկած է 900—1400 մ բարձրությունների վրա և նրա բնակչության մի մասը իրականում բնակվում է հաջորդ հիպսոմետրիկ գոտում։ Այդ ճշտումը մտցնելու դեպքում ցածրադիր գոտու բնակչության տօնուրը նկատելիորեն նվազում է:

գյուղատնտեսական յուրացման համար ավելի անբարենպաստ են, քան 3-րդ գոտու ընդարձակ լեռնային հարթությունները (Շիրակ, Սևանի ավազան և այլն):


Մարդիկ ի սկզբանե ապրել են որոշակի բնակավայրերում՝ ժամանակավոր կամ մշտական: Պատմական զարգացման ընթացքում բնակավայրերը փոխել են իրենց բովանդակությունն ու արտաքին տեսքը, չափերն ու խտությունը: Բայց բոլոր դեպքերում բնակչության տեղաբաշխումը դրսեղորվել է կոնկրետ բնակավայրերի և դրանց տարածական խմբերի ձևով:

Բնակավայրերը միշտ եղել ու մնում են իբրև նյութական և հոգեվոր բարիքների արտադրության ու սպառման, կադրերի վերարտադրության կենտրոններ: Բնակավայրերի չափերը, ցանցի խտությունը և տեղաբաշխման բնույթը փոխադարձ կապի մեջ են գտնվում արտադրողական ուժերի զարգացման, հասարակական արտադրության կառուցվածքի և բնակչության աշխատելու և ապրելու պայմանների հետ:

Ամեն մի բնակավայր ոչ այլ ինչ է, քան մարդկային հասարակության տերիտորիալ կազմակերպման «սկզբնական բջիջ»: Այն, անկախ մեծությունից, որոշ իմաստով մի համալիր է, որն իր մեջ ներառում է տվյալ վայրի բնակչությունը, մարդկանց կողմից ստեղծված նյութական արժեքները (արտադրական, բնակելի ու հասարակական շենքերը իրենց սարքավորումներով ու կահավորանքով, կոմունիկացիաները, կոմունալ կառույցները) և այն որոշակի տարածքը՝ մարդու կողմից նկատելիութեն փոխված բնական պայմաններով, որտեղ տեղավորված է բնակավայրը:

Հասարակության զարգացման ամեն մի նոր փուլ իր ներգործությունն է ունենում թե՛ յուրաքանչյուր առանձին բնակավայրի, թե՛ բնակավայրերի տարածական համակարգի ու ցանցի, այլ կերպ ասած՝ տարաբնակեցման բոլոր կողմերի վրա: Այսպիսով, կարելի է ասել, որ տարաբնակեցումը դա որոշակի տարածքում բնակչության տարածանումն է, տարածքային կազմակերպումը բայց բնակավայրերի ու վերջիններիս համակարգերի:

Նյութական արտադրության զարգացման շնորհիվ ժամանակի ընթացքում փոխվում են տարաբնակեցմանը ներկայացվող հասարակական պահանջները, ինչպես և նոր բնակավայրերի ու նրանց խմբավորումների ստեղծման ու զարգացման հնարավորությունները: Նյութական արտադրության տարրեր ձեւերն ու ոլորտները (օրինակ, արդյունաբերությունը, երկրագործությունը, ձկնորսությունը, քոշվոր անասնապահությունը և այլն, բնակչության, տարաբնակեցմանը տարրեր պա-



● Բաղարային քնակավայրեր

● Գուշական քնակավայրեր

— Եղիածոցական քնակավայրեր

— Եղիածոցական քնակավայրեր

— Քարտեզում բներով էլե

— Ավտոխուղիսեր

— Ավտոխուղիսեր

1 Եղիածին



2500 մ-ից բարձր տարածք, որտե՞ղ՝
յշտական քնակավայրերը բացակայում են


2 Հոկտեմբերյան

3 Նոր Խմբերոյ

4 Մասիս

Նկ. 8. Հայկական ՍՍՀ բնակչության տարարնակեցման միասնական համակարգը

0 10 20Կմ



Հանչեր
տարբեր
ստեղծու
կենտրոն
բնակեց
ման ու է
Տար
փոխությ
շյուր տո
շափով
թական
զարգաց
կեցման
պահպա
րիսում է
կավայր
պես նրա
նյութակ
քերը, կ
այլ ինժե
ները) ու
բնույթ,
շատ ավ
Տար
որոշակի
նաև արա
շավայրը
պայման
բնույթը
շրային,
կամ լեռն
վող բնս
որակակ
առանձն
Այնուհա
մոռանալ
դեցությո
ու թե ո
միջնորդ
կան ար

Նախորդ բաժնում քննարկվեց բնակչության բաշխումը ըստ բարձրության գոտիների: Ինչ վերաբերվում է բնակվայրերի բաշխմանը, ապա այն շի ենթարկվում նույն օրինաշափություններին և ունի իր սեփական նկարագիրը, որը ներկայացված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲԱԾԽՈՒՄԸ ՀԱՑ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ

Բարձրության գոտիները Ժ. Հաշված մետրերով	Բարձրության գոտիների տա- րածությունը Հազ. քկմ	Բնակավայ- րերի ընդհ. թիվը	Այդ թվում	
			բաղաքային	դյուղական
Մինչև 375	—	—	—	—
375—1000	2,82	256	19	237
1000—1500	5,43	240	20	220
1500—2000	8,04	365	18	347
2000—2500	7,29	108	1	107
2500—4090	4,80	—	—	—
Ընդամենը	28,48 ¹	969	58	911

Նույնը % -ներով	Մինչև 375	375—1000	1000—1500	1500—2000	2000—2500	2500—4090	Ընդամենը
—	—	—	—	—	—	—	—
10,3	—	26,4	33,3	29,8	1,8	—	26,0
19,1	—	24,8	35,1	29,8	1,8	—	24,2
28,1	—	37,6	35,1	29,8	1,8	—	38,1
25,6	—	11,3	—	—	—	—	11,7
16,9	—	—	—	—	—	—	100,0
100,0	—	100,0	—	—	—	—	100,0

Զհաշված Սեան լճի մակերեսը:

Բնակչության բաշխման և բնակավայրերի բաշխման քանակական ցուցանիշների էական տարրերությունները, որոնք նկատվում են 11 և 12-րդ աղյուսակների համեմատությունից, արդյունք են տարրեր գոտիներում բնակավայրերի միջին մեծությունների տարրերությունների:

Հանրապետության 969 բնակավայրերից 256-ը կամ շուրջ մեկ քառորդը գտնվում է ցածրադիր գոտում՝ մինրև 1000 մ բարձրության վրա (հիշենք որ այստեղ կենտրոնացված է բնակչության 53%), մինչդեռ բնակավայրերի ամենամեծ քանակությունը (370, կամ 38%) բաժին է ընկնում 3-րդ գոտուն՝ 1500—2000 մ բարձրությունների միջև, ի տարրերություն ամբողջությամբ վերցրած բնակավայրերի, ինչպես նաև

գյուղական բնակավայրերի, քաղաքային բնակավայրերի ամենից ավելի մեծ խումբը՝ թվով 20 (կամ 35%) բաշխված է 2-րդ գոտում՝ 1000—1500 մ բարձրություններում:

Այս թվերի և յուրաքանչյուր գոտու զբաղեցրած տարածության համեմատ էլ բնակավայրերի ամենամեծ խումբը դիտվում է առաջին և երրորդ գոտիներում, մինչդեռ քաղաքային բնակավայրերը առավել խիտ են առաջին և երկրորդ, գյուղական բնակավայրերը՝ առաջին և 3-րդ գոտիներում:

Ընդունված է բնակավայրերի ուղղաձիգ բաշխման հետ մեկտեղ, տարաբնակեցման ուսումնասիրման և բնութագրման համար որպես գլխավոր ցուցանիշներ օգտագործել նաև բնակավայրերի տիպերը (քաղաքային, գյուղական), նրանց մեծությունը (այլ կերպ՝ մարդաշատությունը), տարածման խտությունն ու ձեերը, որոնք և կքննարկվեն ստորև:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հայկական ՍՍՀ բնակչության տեղաբաշխման գլխավոր առանձնահատկությունները:
2. Ի՞նչ է տարաբնակեցումը: Բնութագրեք Հայկական ՍՍՀ բնակչության տարաբնակեցման հիմնական գծերը:

4.4. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ

Մարդկային հասարակության զարգացումը հանգեցրել է տարաբնակեցման երկու հիմնական տիպերի՝ քաղաքայինի ու գյուղականի առաջացմանը: Մեր հանրապետության տարածքում դրանք երեան են եկել մ.թ.ա. առաջին հազարամյակում: Տարաբնակեցման հիշյալ տիպերի ձևավորման հիմքում ընկած է աշխատանքի հասարակական բաժանումը, մասնավորապես գյուղատնտեսությունից արհեստների և առևտորի բաժանումը:

Հին Հայաստանում քաղաքները, ինչպես ասվեց, ձևավորվել են մ.թ.ա. 1-ին հազարամյակում: Երկրի պատմական զարգացման ելեկցներին զուգընթաց վերելք կամ անկում է ապրել նաև քաղաքային կյանքը: Նոր քաղաքների հիմնադրման և հների բարգավաճման ժամանակներին հաջորդել են քաղաքային կյանքի խոր անկման, շատ քաղաքների քայրայման, ավերման ու խսպառ վերացման ժամանակաշրջաններ: Փոփոխության են ենթարկվել նաև քաղաքային ֆունկցիաները: Բայց միշտ էլ նրանք եղել և մնում են բնակչության ոչ գյուղատնտեսական գործունեության համակենտրոնացման վայրեր: Քաղաքը, լինելով տընտեսական, քաղաքական և մշակութային կենտրոն, միշտ էլ հասարա-

կության կյանքում կարեռագույն նշանակություն է ունեցել և գյուղի նկատմամբ առաջատար դեր է խաղացել: Քաղաքը միշտ գյուղին տարել է իր հետեւից:

Դասակարգային հասարակարգում քաղաքի և գյուղի միշտ գոյություն ունի անլուծելի հակասություն և հակադրություն, որը վերանում է միայն շահագործող դասակարգերի վերացումով, սոցիալիզմի հաղթանակով:

Սոցիալիզմի օրոք քաղաքները դառնում են նոր տիպի տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոններ, իրագործելով ղեկավար ու կազմակերպիչ դեր նոր հասարակարգի կառուցման գործում: Քաղաքները շարունակում են մնալ արդյունաբերական արտադրության, ինչպես և բազմապիսի տնտեսական կապերի կենտրոններ: Նրանք կենտրոնական դիրք են գրավում նաև բնակավայրերի տարածական համակարգերում և հանդիսանում են տարաբնակեցման ամբողջ ցանցի և հաղորդակցության ուղիների գլխավոր հանգուցակետերը (գծ. 8):

Այս բոլոր հարցերը բազմակողմանիորեն հաշվի են առնվում բնակավայրերն ըստ տիպերի բաժանելու, դրանք քաղաքի կամ գյուղի կատեգորիայի մեջ մտցնելու ժամանակ: ՍՍՀՄ-ում ընդունված են քաղաքային բնակավայրերի առանձնացման որոշակի քանակական շափանիշներ (ցենզ): Ծննդով միասնական սկզբունքներից, այդ շափանիշները ըստ հանրապետությունների, այնուհանդերձ, որոշ շափով միմյանցից տարրերվում են:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրի համաձայն, որն ընդունվել է դեռևս 1962 թ., բնակավայրը օրենսդրական կարգով քաղաքային համարելու գլխավոր շափանիշներն են՝ բնակչության ընդհանուր թվաքանակում բանվոր-ծառայողների տոկոսը (ոչ պակաս 66 %-ից), արդյունաբերական ձեռնարկությունների, կառույցների, երկաթուղային կայանների, տնտեսական այլ կարևոր օրյեկտների և պետական բնակելի ֆոնդի առկայությունը, ինչպես նաև բարեկարգվածության որոշակի մակարդակը: Բնակչության նվազագույն թիվը պետք է լինի 3000 մարդ (բացառություն է կազմում առողջավայրը, որը քաղաքային կատեգորիայի կարող է դասվել նույնիսկ 2000 բնակչի դեպքում, եթե բուժման և հանգստի նպատակով եկվորների քանակը մշտական բնակիչների թվի 50 տոկոսից պակաս չէ):

Աշխարհի շատ երկրներում բնակավայրերի տիպը որոշելու այլ սկզբունքներ ու ցենզային պահանջներ են գործում: Բուրժուական երկրներում նկատի են առնվում բնակավայրի ոչ այնքան արդյունաբերական, որքան առևտրական նշանակությունը, բանկային, ֆինանսական գործունեությունը: Հաճախ բնակավայրի տնտեսական ֆունկցիաները ընդհանրապես անտեսվում են և որպես գլխավոր շափանիշ է

դիտվում բնակչության թիվը։ Կան նաև դեպքեր, երբ բնակավայրը քաղաք է համարվում, եթե զարչական կենտրոն է, անկախ տնտեսական, ֆունկցիաներից ու բնակչության թիվից։

Դասընթացի նախորդ բաժիններից մեզ հայտնի է, որ կապիտալիզմը Սովետական Հայաստանին ժառանգություն թողեց ընդամենը գույքային բնակավայր, որտեղ 1914 թ. բնակվում էր ընդամենը 104000 մարդ կամ ամբողջ բնակչության 10,4%-ը։ Երկրի սոցիալ-տընտեսական զարգացման անցած տասնամյակների ընթացքում հանրապետության ինդուստրացման և ուրբանիզացման շնորհիվ քաղաքային բնակչությունը, ինչպես տեսանք աղյուսակ 10-ից, 1987 թ. հավասարվեց 2,3 մլն.-ի։

Հասկանալի է, որ նման, հիրավի, վիթխարի աճը չէր կարող տեղի ունենալ միայն նախկին 4 քաղաքների մեծացման հաշվին, առանց քաղաքային տարաբնակեցման արմատական վերակառուցման ու քաղաքային բնակավայրերի նոր, բավականին խիտ ցանցի ստեղծման։

Առ 1/1—87 թ. Հայկական ՍՍՀ 58 քաղաքային բնակավայրերից 22-ը՝ հանրապետական, 5-ը՝ շրջանային ենթակայության քաղաքներ են և 31-ը՝ քաղաքատիպ ավաններ¹։

Մինչև հեղափոխությունը քաղաքների միջին մարդաշատությունը հավասար է եղել՝

$$\frac{\text{քաղաքային բնակչություն} - 104 \text{ հազ.}}{\text{քաղաքային բնակավայրեր} - 4} = 26 \text{ հազ. մարդու.}$$

1987 թ. այդ ցուցանիշը կազմում է

$$\frac{\text{քաղաքային բնակչություն} - 2,3 \text{ մլն.}}{\text{քաղաքային բնակավայրեր} - 58} = 40 \text{ հազ. մարդու.}$$

Սրանք միջին ցուցանիշներ են, որոնք ընդհանուր պատկերացում տալով երկութի զարգացման միտումի մասին, այնուամենայնիվ, չեն կարող բացահայտել այն արմատական կոնկրետ վերափոխումները, որոնք կատարվել են հանրապետության քաղաքային տարաբնակեցման մեջ։

Այդ վերափոխումները ճիշտ հասկանալու և վերլուծելու համար

¹ Օրենսդրական կարգով հանրապետական ենթակայության քաղաքների շարքին են դասվում այն քաղաքային բնակավայրերը, որտեղ ստեղծված է զարգացած արդյունաբերություն ու կոմունալ տնտեսություն, որոնք կից շրջանների համար հանդիսանում են տնտեսական ու մշակութային կենտրոններ և ունեն 50 հազ.-ից ավելի բնակիչ, կամ, եթե բնակչության թիվը 50 հազ.-ից պակաս է, բայց ակնհայտ են բնակավայրերի արդյունաբերական ու կուլտուրական աճող նշանակությունը և տնտեսական զարգացման քարենպաստ հեռանկարները։

Նախապես ծանոթանանք քաղաքային բնակավայրերի աճի դինամիկա-
յին:

Երջանային ենթակայության քաղաքների համար որպես նվազա-
գույն քանակական ցենզ ընդունվում է 8 հազ. բնակիչը, ըստ որում,
բանվոր-ծառայողները պետք է կազմեն բնակչության թվի 2/3-ից ավե-
լին:

Ավելի ցածր ցենզի դեպքում բնակավայրերը որպես կանոն դաս-
վում են քաղաքատիպ ավանների շարքը:

Ապյուսակ 18

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹՎԻ,
ՄԱՐԴԱԾԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ**

1914 թ.	1914 թ.	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1987 թ.	Աճը 1914 թ. համեմա- տությամբ (անգամ)
Քաղաքային բնա- կավայրերի թիվը Քաղաքային բնա- կավայրերի միջին մարդաշատությունը (հազ. մարդ)	4*	18	35	51	57	58	14,5
Քաղաքային բնակ- չության դնդան թիվը (հազ. մ.)	28	20	25	29	35	40	1,4
	104	366	882	1482	1993	2324	22,8

Քաղաքային բնակավայրերի թվի արագ աճը (4-ից 58) հանգեցրեց
քաղաքային տարածնակեցման ամբողջովին նոր պատկերի ձևավորման,
քաղաքների նոր տարածական համակարգի ստեղծման, քաղաքների
ցանցի աննախաղեպ խոտացման:

Եթե պատկերացնենք, որ քաղաքային բնակավայրերը հաֆասարա-
շափ են բաշխվում տարածքում, ապա մի քաղաքային բնակավայրին
նախասովետական 7500 քկմ-ի փոխարեն այժմ հասնում է 500 քկմ
հարակից տարածք, կամ ըստ խտության ցուցանիշի. 10 հազ. քկմ-ին
նախկինում ընկել է ընդամենը 1,3 քաղաքային բնակավայր, մինչդեռ
ներկայումս՝ 19,3։ Այդ նույն պայմանով կարող ենք հաշվել նաև քա-
ղաքային բնակավայրերի ֆիզիկական հեռավորությունը միմյանցից
(ուղիղ գծով). նախկին 100 կմ-ի փոխարեն այժմ այդ հեռավորությունը
կազմում է ընդամենը 20 կմ։

* Նախասովետական շրջանում քաղաքային բնակավայրերի մեջ քաղաքների և քա-
ղաքատիպ ավանների բաժանում չի եղել, ելենեղով ժամանակակից շափանիշներից՝ պայ-
մանականորեն կարելի է երևանը և Ալեքսանդրապոլը համարել քաղաք, իսկ Գորիսը և
Նոր Քայազետը՝ քաղաքատիպ ավան։

Բերված թվերը, ընդհանուր պատկերացում տալով կատարված տեղաշարժերի մասին, այնուամենայնիվ, բնութագրում են Հայկական ՍՍՀ քաղաքային բնակավայրերի ցանցի լոկ միջին խտությունը, նրա վերացական մողելը: Մինչդեռ այդ ցանցի իրական պատկերը խիստ յուրահատուկ է և ձևավորվել է հանրապետության տարբեր շրջանների բնական, տնտեսական ու ժողովրդագրական կոնկրետ պայմանների ազդեցության տակ, պայմաններ, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից և զանազանակերպ ազդեցություն են ունենում քաղաքների գոյացման ու զարգացման վրա:

Կարելի է կանխատեսել, որ հանրապետության բաղաբային բնակավայրերի ցանցի խտացումն ու ընդլայնումը առաջիկայում պետք է դանդաղի, ցանցը պետք է կայունանա: Դրա հետ մեկտեղ արագ թափով պետք է շարունակվեն քաղաքային տարարնակեցման ներքին որակական փոփոխությունները, որոնք հիմնվում են արդեն ձևավորված քաղաքների արագ աճի և նրանց ժողովրդատնտեսական ֆունկցիաների հետագա զարգացման ու բարեցման վրա:

Հանրապետության քաղաքային բնակավայրերի մեջ բնակչության աճի բարձր տեմպերով աշքի են ընկել Արարատը, Հոկտեմբերյանը, Ձերմուկը, Փաշարանը, Աբովյանը, Ղափանը, Հրազդանը, Երևանը, Կիրովականը, Ալավերդին, Ըստ որում Երևանի բնակչությունը արդեն մոտենում է 1.200 հազ.-ին, ինչինականին ու Կիրովականինը գերազանցում են համապատասխանաբար 200 հազ.-ին և 150 հազ.-ին:

ՀՍՍՀ քաղաքային տարաբնակեցման մեջ նկատվող որակապետնոր երևույթ է բաղաբային ազլումերացիաների ձևավորումը:

Ազլոմերացիան քաղաքային (և այլ) բնակավայրերի մի կոմպակտ խմբավորում է, որ աշխատանքային, արտադրական ու կուլտուրկենցաղային ներքին սերտ կապերի և արտադրական ու սոցիալական միասնական ենթակառուցվածքի շնորհիվ վերածվում է տնտեսական-տարածական ինքնորույն գոյացության¹: Ազլոմերացիան համարվում է ժամանակակից արտադրության տեղաբաշխման ու բնակչության տարաբնակեցման առաջադիմական ձև, որովհետև մնացած հավասար պայմանների դեպքում ապահովում է հասարակական արտադրության առավելագույն արդյունավետություն, բարձրորակ կադրերի համակենտրոնացում, արտադրության սերտ կապ գիտության ու ուսումնական կենտրոնների:

¹ Ազլոմերացիաի սույն գնահատումը ընդունված է ՏՓե անդամ երկրների՝ ռեզիոնալ հետազոտությունների մեթոդոլոգիական հարցերով զբաղվող գիտական հիմնարկների ներկայացուցիչների 1973 թ. խորհրդակցության կողմից: Այդ մասին տես՝

Ալաև Է. Բ. Социально-экономическая география. Понятийно-терминологический словарь.—М., Мысль, 1983, с. 218—219.

Հետ և արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի արդյունավետ օգտագործում:

Քաղաքների տարածական-տնտեսական գոյացությունների զարգացումը մեզանում տակավին իր սկզբնական փուլում է գտնվում, բայց արդեն ուրվագծվում են տարբեր մեծության մի շարք քաղաքային ագլումերացիաներ՝ Երևանի, Հրազդանի, Լենինականի, Կիրովականի, Ալավերդու:

Առավել լավ ձևավորվածը Երևանի ագլումերացիան է, որի մեջ 25—30 կմ շառավղով խմբավորված են միմյանց հետ տարածական համակարգ կազմող շուրջ մեկ ու կես տասնյակ միջին և փոքր քաղաքային բնակավայրեր:

Արտադրողական ուժերի հետագա զարգացումը օբյեկտիվորեն նպաստում է քաղաքային տարաբնակեցման այդ խմբային ձեի՝ ագլումերացիայի ակտիվացմանն ու տարածմանը, չնայած նրան, որ հանրապետության մի շարք շրջաններում բնակավայրերի ցրված՝ դիսպերսիոն տեղաբաշխումը դեռ տեսական ժամանակ տիրապետող է լինելու:

Դիտական ու պրակտիկ կարևոր նշանակություն ունեցող հարց է բաղաների տիպաբանական ուսումնասիրությունը, նրանց դասակարգումը:

Սովորական տնտեսական և սոցիալական աշխարհագրության մեջ ընդունված են քաղաքների դասակարգման հետևյալ ցուցանիշները.

ա) մարդաշատությունը,

բ) ժողովրդատնտեսական ֆունկցիաները,

գ) տնտեսաշխարհագրական դիրքը,

դ) աշխատանքի տերիտորիալ բաժանման մեջ նրա մասնակցության աստիճանը,

ե) գենետիկական ցուցանիշները:

Քաղաքների դասակարգման տիպաբանական ցուցանիշներից յուրաքանչյուրն ունի իր որոշակի արժանիքներն ու թերությունները, ընդգծում է քաղաքի՝ իրեն սոցիալտնտեսական գոյացության այս կամ այն հատկանիշը և գիտական ու գործնական ուրույն հետաքրքրություն է ներկայացնում:

Մարդաշատությունը այն ակնհայտ, առավել հեշտ ընկալվող ընդհանրական ցուցանիշն է, որը բնորոշում է քաղաքների մեծությունը և իրենով պայմանավորում մի քանի այլ ցուցանիշներ ևս:

Աշխարհագրության մեջ ընդունված է քաղաքներն ըստ մեծության բաժանել հետևյալ կատեգորիաների՝

փոքր քաղաքներ — 10—20 հազ. բնակիչ,

միջին մեծության քաղաքներ — 20—100 հազ. բնակիչ,

Խոշոր քաղաքներ — 100—500 հազ. բնակիչ,

խոշորագույն քաղաքներ — ավելի քան 500 հազ. բնակիչ:

Առանձին խումբ են կազմում այսպես կոչված միլիոնանոց քաղաքները (մեկ մլն. և ավելի բնակչով):

Հետևելով սույն դասակարգմանը, Սովետական Հայաստանի քաղաքային բնակավայրերը կարող ենք խմբավորել հետևյալ կերպ.

միլիոնանոց քաղաքներ — 1-ը՝ Երևան,

խոշոր քաղաքներ — 2-ը՝ Լենինական, Կիրովական,

միջին մեծության քաղաքներ — 9-ը՝ Էջմիածին, Աբովյան, Հրազդան, Ղափան, Հոկտեմբերյան, Դիլիջան, Չարենցավան, Ալավերդի Կամո,

փոքր քաղաքներ — 13-ը,

մասն քաղաքային բնակավայրեր — 32-ը:


Ինչպես տեսնում ենք, դասակարգման բոլոր խմբերը չեն, որ Հայկական ՍՍՀ-ում առկա են: Թացակայում է խոշորագույն քաղաքների (500 հազ. — 1 մլն. բնակիչ) խումբը:

Թե՛ մարդաշատությամբ, թե՛ մյուս բոլոր գլխավոր ցուցանիշներով Հայկական ՍՍՀ առաջին քաղաքը Երևանն է (տես աղյուսակ 14), որին և բաժին է ընկնում սովետական իշխանության տարիներին հանրապետության քաղաքային բնակչության հավելաճի մեծագույն մասը:

1920 թ. ստանձնելով պատմության մեջ առաջին հայկական սոցիալիստական պետության մայրաքաղաքի Փունկցիաները, Երևանը կարճ ժամանակում քաղաքական, մշակութային ու առևտրական-ֆինանսական կենտրոնից բացի դարձավ նաև հանրապետության խոշորագույն արդյունաբերական կենտրոնը: Արդյունաբերության հարածուն զարգացումը և Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգի առավել խոշոր ջոկատի ստեղծումն այստեղ էլ ավելի բարձրացրին նրա՝ որպես քաղաքական կենտրոնի և սոցիալիստական շինարարության կազմակերպչի դերն ու նշանակությունը:

Երևանի բնակչությունը կազմելով շուրջ 1,2 մլն. 1914 թ. մակարդակը գերազանցեց 40 անգամ: Այսօր նա իր մեծությամբ ՍՍՀՄ-ում 14-րդն է (1939 թ. եղել է 41-րդը), իսկ միութենական հանրապետությունների մայրաքաղաքների մեջ 7-րդը և խոշորագույն ու միլիոնանոց քաղաքների շարքում աճի տեմպերով Զելյարինսկի և Մինսկի հետ մեկտեղ ընթանում է առաջին տեղում:

70-ական թվականներին Երևանի բնակչության միջին տարեկան աճը կազմում էր շուրջ 30 հազ. մարդ, այսիքն ճիշտ այնքան, ինչքան նրա ամբողջ բնակչությունն էր 1914 թ.: Վերջին տարիներս պետականորեն սահմանափակվեց բնակչության միզրացիան դեպի Երևան, որի



Նկ. 9. Նոր բնակելի զանգված Երևանի Հր.-արմ. թաղամասում:

շնորհիվ բնակչության աճը այժմ կատարվում է գերազանցապես բնական աճի հաշվին և կազմում է տարեկան $15-20$ հազ. մարդ:

Երևանում է կենտրոնացված հանրապետության ամրող բնակչության 35% -ը և քաղաքային բնակչության $52\%-ը$: ՍՍՀՄ և ոչ մի հանրապետությունում գոյություն չունի բնակչության այսպիսի մեծ համակենտրոնացում մեկ քաղաքում: Դա բավականին հազվադեպ երևույթ է նաև ամրող աշխարհի մասշտաբով:

Բնակչության մեծ համակենտրոնացումը մեկ քաղաքում, մասնավորապես մայրաքաղաքում, անպայմանորեն, նպաստել է Սովետական Հայաստանի, իրրե փոքր հանրապետության, սոցիալիստական ինդուստրացմանը, տնտեսական ու կուլտուրական մակարդակի բարձրացմանը: Թերեւս դա ամենակարծ ուղին էր, որը Հայկական ՍՍՀ նախկին հետամնաց ու ծայրաստիճան քայլաված վիճակից բերեց ժամանակակից բարգավաճմանը և ինդուստրիալ հասարակության ստեղծմանը: Սակայն արդի պայմաններում, առավել ևս ապագայի շափանիշներով մեկ քաղաքում բնակչության համակենտրոնացման այսպիսի բարձր աստիճանը ծնում է մի շարք տնտեսական, սոցիալական ու էկոլոգիական պրոբելմներ և շի կարելի ուացիոնալ համարել:

Մարդաշատությամբ հանրապետության 2-րդ քաղաքը լենինականն է (226 հազար) որը, սակայն Երևանին զիջում է ավելի քան 5 անգամ, մինչդեռ նրանք իրրե սոցիալիստական քաղաքներ իրենց զարգացումը սկսել են գրեթե նույն մակարդակից:

Լենինականի զարգացման տեմպերը ևս պետք է համարել ընդհանուր առմամբ բարձր. 1914 թ. համեմատությամբ նրա բնակչության թիվը ավելի քան քառապատկվել է: Բայց այդ տեմպերը լենինականի ոչ այնքան էլ նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրքի և բնական ու տնտեսական պայմանների պատճառով զիջում են շատ այլ քաղաքների, ինչպես նաև հանրապետության քաղաքային բնակչության աճի միջին տեմպերին: Լենինականի ավելի արագ աճին խոշնդոտել են, մասնավորապես, հանրապետության տարածքում նրա եզրային դիրքադրությունը և պետական սահմանին մոտիկ գտնվելը: Այդ երկույթների անբարենպաստ ազդեցությունը նկատելի էր հատկապես սոցիալիստական շինարարության առաջին 2—3 տասնամյակների ընթացքում:

Աղյուսակ 14

**ԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԱԿԱՆ, ԿԻՐՈՎԱՆԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԱԿ (ՀԱՅ. ՄԱՐԴ)**

Թաղաժեռ	1914 թ.	1922 թ.	1926 թ.	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1986 թ.	Աճը 1986 թ. 1914 թ. համարող (անգամ)
1. Երեան	29,8	58	65	199	509	767	1019	1148	38,5
2. Լենինական	51,3	45	42	68	108	164	207	226	4,5
3. Կիրովական	6,7	6	9	18	49	107	148	167	24,9

Այսի ու զարգացման շատ ավելի նպաստավոր պայմաններում է գտնվել Հայկական ՍՍՀ 3-րդ քաղաքը՝ Կիրովականը (167 հազ. բնակիչ), որի բնակչությունը սովետական իշխանության տարիներին ավելացել է 25 անգամ: Նրա արագ վերելքին նպաստել են, մասնավորապես, Հայկական ՍՍՀ առաջին խոշոր էլեկտրակայաններից մեկին՝ Չորագէսին մոտիկ լինելը, հանրապետության հյուսիսային մասում կենտրոնական դիրք ունենալը, երկաթուղու և ավտոմոբիլային ճանապարհների հանգույցում գտնվելը:

Բնակավայրերի մեծության, ցանցի խտության և տարաքնակեցման այլ կողմերի վրա անմիջական ազդեցություն ունեցող գործուներ են բնակչության կոնկրետ զբաղմունքը, էկոնոմիկայի կառուցվածքը և, որպես հետևանք այս բոլորի՝ քաղաքի ժողովրդատնտեսական ֆունկցիաները:

Քաղաքի ժողովրդատնտեսական ֆունկցիաները, ձևավորվելով մի շարք տնտեսական, ժողովրդագրական, պատմական և ֆիզիկաաշխարհագրական գործուների ազդեցության տակ, որոշում են այն դերը, որ

կատարում է քաղաքը շրջակա տարածքի և այնտեղ գտնվող բնակավայրերի, վերջիններիս հետ ունեցած տրանսպորտային, արտադրական, կուլտուրավորական և այլ կապերի զարգացման նկատմամբ:

Ամեն մի քաղաք երկու բնույթի ժողովրդատնտեսական ֆունկցիա է կատարում՝ տնտեսական և ոչ տնտեսական: Ավելի մեծ է տնտեսական ֆունկցիաների քաղաքաստեղծ նշանակությունը, որը դրսենորվում է արտադրությունն ու սպառումն ապահովող գործունեությամբ (արդյունաբերություն, տրանսպորտ, առևտուր, մթերում, մատակարարում):

Ժամանակակից քաղաքների համար բնորոշ է տնտեսական և ոչ տնտեսական ֆունկցիաների փոխադարձ պայմանավորվածությունն ու համատեղ զարգացումը: Ինչքան ավելի բարձր մակարդակի վրա են գտնվում քաղաքի տնտեսական ֆունկցիաները, այնքան ավելի զարգացած են նրա նաև վարչատնտեսական, կուլտուրավորական ու գիտական, այսինքն ոչ տնտեսական ֆունկցիաները:

Հստ ժողովրդատնտեսական ֆունկցիաների Հայկական ՍՍՀ-ում առանձնանում են քաղաքների երկու տիպ (բազմաֆունկցիոնալ ու միաֆունկցիոնալ), վեց ենթատիպ:

Հանրապետության քաղաքային բնակավայրերի մեծ մասը և միջին մեծության ու խոշոր բոլոր քաղաքները բազմաֆունկցիոնալ են: Այդ ընդհանրության հետ մեկտեղ, նրանք միմյանցից տարբերվում են նրանով, որ բազմաթիվ ֆունկցիաներից յուրաքանչյուրը տարբեր նշանակություն ունի, տարրեր է նրանց մեջ առաջատար դեր կատարող ֆունկցիան: Այս հանգամանքն էլ հիմք է ծառայում յուրաքանչյուր տիպում ենթատիպեր առանձնացնելու համար:

Հստ առաջատար ֆունկցիայի տարրերվում են բազմաֆունկցիանալ բաղաբների տիպի հետեւյալ շորս ենթատիպերը.

ա) Քաղաքներ, որոնցում բազմաթիվ ֆունկցիաների շարքում հնարավոր չէ նախապատվությունը տալ որևէ մեկին. առաջատար դեր են կատարում մի քանի ֆունկցիաներ՝ վարչաքաղաքական, կուլտուրավորական, արդյունաբերական, տրանսպորտային: Այս ենթատիպին պատկանում է Երևանը՝ հանրապետության մայրաքաղաքը, մշակութային, գիտական, բուհական, արդյունաբերական ու տրանսպորտային խոշորագույն կենտրոնը:

բ) Քաղաքներ, որոնցում բազմաթիվ ֆունկցիաների շարքում առաջատար են արդյունաբերական և կուլտուրավորական ֆունկցիաները: Այս ենթատիպի մեջ մտնում են Լենինականը և Կիրովականը: Լավ արտահայտված արդյունաբերական ֆունկցիաներ կատարելուց բացի, այս քաղաքները հանրապետության որոշակի տարածքի համար ունեն նաև կուլտուրական և կրթական (այդ թվում՝ բարձրագույն) կարևոր կենտրոնների նշանակություն:

գ) Քաղաքներ, որտեղ բազմաթիվ ֆունկցիաների շարքում առաջատար են վարչական և արդյունաբերական ֆունկցիաները։ Այս ենթատիպը բավականին մեծաքանակ է և ներառում է հանրապետական ենթակայության այն բոլոր 17 քաղաքները, որոնք միաժամանակ վարչական շրջանի կենտրոն են (Արովյան, Ալավերդի, Արթիկ, Արտաշատ, Աշտարակ, Գորիս, Խցկան, Կալինինո, Կամո, Ղափան, Հոկտեմբերյան, Հրազդան, Սևան, Սպիտակ, Ստեփանավան, Սիսիան, Էջմիածին) և այն շրջանային կենտրոն-քաղաքատիպ ավանները, որոնք ներկայումս (կամ մոտ ապագայում) էական արդյունաբերական ֆունկցիաներ են կատարում։ Դրանք են՝ Մասիսը, Մարալիկը, Ապարանը, Վարդենիսը, Մարտունին, Մեղրին, Թալինը, Այստեղ ներկայումս գործում կամ ստեղծվում են վերամշակող արդյունաբերության հանրապետական (և նույնիսկ միութենական) նշանակության ձեռնարկություններ, որոնք և այդ նախկին գուտ գյուղատնտեսական կենտրոններին նոր՝ արդյունաբերական դիմագիծ են հաղորդում։

դ) Բազմաֆունկցիոնալ քաղաքային բնակավայրերի առանձին ենթատիպ են կազմում այն շրջանային կենտրոն-քաղաքատիպ ավանները, որտեղ գյուղատնտեսությունը դեռևս զգալի բաժին ունի։ Այդպիսիք են Ազիզբեկովը, Վեդին, Եղեգնաձորը, Կրասնոսելյանը, Նոյեմբերյանը և Բերդը։ Այստեղ արդյունաբերական ձեռնարկություններ, իհարկե գործում են, բայց նրանք հիմնականում ունեն տեղական նշանակություն և մեծ մասամբ գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ են կապված։

Միաժունկցիոնալ բաղաբային բնակավայրերը տրոհվում են երկու ենթատիպերի՝

ա) գուտ արդյունաբերական կետեր կամ կենտրոններ, Այս ենթատիպի մեջ մտնում են Զարենցավանը, Թաջարանը և 17 քաղաքատիպ ավաններ՝ Անիպեմզա, Պեմզաշեն, Սովետաշեն, Չորագետ, Նոր Խարբերդ, Ագարակ, Լուսակերտ, Նոր Հաճն, Այրում, Մեծամոր, Գագարին, Դաստակերտ, Ախթալա, Փումանյան, Շամլուղ, Արագած, Բյուրեղավան։

բ) Զուտ ոեկրեացիոն կենտրոններ, Սրանք այն քաղաքային բնակավայրերն են, որոնց ծողովդատնտեսական նշանակությունը հանգում է ոչ արտադրական միայն մեկ՝ ոեկրեացիոն ֆունկցիայի (կուրորտային, հանգստի, սպորտային) կատարմանը։ Նյութական արտադրությունը (արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային ձեռնարկություններ), եթե չհաշվենք չնշյն բացառությունները, ծառայում է ոեկրեացիոն ֆունկցիաներին։ Այս ենթատիպի բնակավայրերը չորսն են՝ երկու հանրապետական ենթակայության քաղաք (Քերմուկ, Դիլիջան), մեկ շրջանային ենթակայության քաղաք (Մաղկաձոր) և մեկ քաղաքատիպ ավան (Արգնի)։

Անդրադառնալով քաղաքների դասակարգման հաջորդ ցուցանիշին՝ տնտեսաշխարհագրական դիրքադրությանը, պետք է նշել, որ Հայկական ՍՍՀ կոնկրետ պայմանների համար առաջնակարգ նշանակություն են ձեռք բերում հետևյալ 4 պայմանները՝ ա) բնակավայրի դիրքը տրանսպորտային ուղիների նկատմամբ, բ) բնակավայրի հեռավորությունը հանրապետության խոշորագույն տնտեսական կենտրոններից, մասնավորապես Երեվան քաղաքից, և զարգացած գյուղատնտեսական շրջաններից, դ) տարածքի նկատմամբ կենտրոնական կամ ծայրամասային վիճակը:

Այս բոլորը, ի մի վերցրած, այն հիմքն է, որի վրա գլխավորապես կառուցվում է քաղաք-շրջապատ փոխհարաբերությունը:

Շատ մեծ է քաղաքի զարգացման վրա նրա մերձավոր, երեմն և հեռավոր շրջանների ազդեցության նշանակությունը։ Քաղաքը շրջապատից մեկուսացված լինել չի կարող: Նա մշտապես գտնվում է այդ շրջապատի ազդեցության ոլորտում, կախված է նրանից, հաճախ զարգանում է նրա «թելադրանքով» ու պահանջներին համապատասխան: Ինչ-քան սերտ են քաղաքի և հարակից տարածքի կապերը, ինչքան մեծ են շրջապատի կողմից քաղաքին հումք, կիսաֆարբիկատներ, վառելիք, կենսամթերքներ, աշխատանքային ոեսուրսներ մատակարարելու և քաղաքի արտադրանքը սպառելու հնարավորությունները, այնքան ավելի մեծ է քաղաքաստեղծ գործոնների ուժը, հզոր է քաղաքի զարգացման պոտենցիալը:

Այդ իմաստով էլ ճիշտ կլիներ ասել, որ ամեն մի քաղաք իր շրջապատի ծնունդն է:

Հանրապետության քաղաքային բնակավայրերը ըստ տնտեսաշխարհագրական դիրքադրության կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. առավել նարմար անսեսաաշխարհագրական դիրք ունեցող բնակավայրեր: Այս խմբի մեջ են մտնում այն քաղաքային բնակավայրերը որոնք ապահովված են տրանսպորտային ուղիների բոլոր ձևերով՝ երկաթուղի, ավտոխճուղի, գազամուղ, բարձր լարման էլեկտրահաղորդման գծեր) և հանրապետության տարածքում կենտրոնական դիրք են գրավում, որտեղ առկա են հումքի աղբյուրները, ինչպես և գոյություն ունի մերձավոր հարևանություն այլ տնտեսական կենտրոնների հետ:

Այսպիսի բնակավայրեր են Երևանը¹, Հրազդանը, Աքովյանը, Կի-

¹ Խոշոր տնտեսական կենտրոնների հետ անմիջապես հարևանություն ունենալու հարցում երևանի, Լենինականի, Կիրովականի, Ղափանի և Ալավերդու նկատմամբ պետք է վերապահություն անել: Դրանք իրենք լինելով մեր հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնները, զորք են ավելի հզոր հարևաններից և մասամբ են զգում մերձակա ավելի թույլ կենտրոնների քաղաքաստեղծ ազդեցությունը:

րովականը, Սևանը, Դիլիջանը և Նրանց մերձավոր այն մյուս քաղաքա-
յին բնակավայրերը, որոնք բավարարում են թվարկած պայմաններին:

2. Հարմար տնտեսաշխարհագրական դիրք ունեցող բնակավայ-
րեր: Մրանց նկարագրում նույնն է, ինչ որ նախորդ խմբինը, միայն այն
տարրերությամբ, որ հանրապետության տարածքի նկատմամբ կենտ-
րոնական դիրք չունեն (Լենինական, Ալավերդի, Իջևան, Արարատ, Հոկ-
տեմբերյան և այլն):

3. Բավարար աշխաբագրական դիրք ունեցող բնակավայրեր: Մրանք
տարրերովում են նախորդից նրանով, որ գտնվում են երկաթու-
ղային փակուղում, մի հանգամանք, որ զգալիորեն սահմանափակում է
երկաթուղային տրանսպորտի քաղաքաստեղծ ազդեցությունը (Ղափան,
Արթիկ, Զող և այլն):

Սույն խմբին կարելի է դասել նաև այն բնակավայրերը, որոնք
գուրկ լինելով երկաթուղուց, ապահովված են ավտոխճուղային բավա-
րար հաղորդակցությամբ և տնտեսական խոշոր կենտրոններից կամ
երկաթուղային կայարաններից գտնվում են ոչ հեռու (Աշտարակ, Կա-
մո, Սաղկաձոր, Ստեփանավան, Ապարան և այլն):

4. Աննպաստ աշխաբագրական դիրք ունեցող բնակավայրեր: Այս
խմբի մեջ միավորվում են այն բոլոր քաղաքային բնակավայրերը,
որոնք գուրկ են երկաթուղային հաղորդակցությունից և հանրապետու-
թյան տարածքի նկատմամբ էլ ունեն ժայրամասային դիրք: Որպես տի-
պիկ օրինակ կարող են ժառայել Քաջարանը, Ձերմուկը, Գորիսը, Կալի-
նինոն, Դաստակերտը:

Գիտական ու կիրառական մեծ հետաքրքրություն է ներկայացնում
քաղաքների տիպոգրիայի շորորոդ սկզբունքը՝ աշխատանքի տերիտո-
րիալ բաժանման մեջ բաղադրի մասնակցության աստիճանը:

Սա որոշվում է քաղաքի արտաքին տնտեսական կապերի երկարու-
թյամբ, ծավալով ու բնույթով: Ըստ էության լինելով սինթետիկ ցուցա-
նիշ, սա կախված է քաղաքի մի շարք այլ հատկանիշներից, մասնավո-
րապես մեծությունից, ժողովրդատնտեսական ֆունկցիաներից և աշխար-
հագրական դիրքադրությունից:

Քաղաք-շրջապատ փոխարարերության մեջ պակաս կարևոր տեղ
մի գրավում շրջապատի վրա քաղաքի հակադարձ ներգործությունը:


Այդ փոխարարերությունը, այսինքն քաղաքի ներգործությունը
շրջապատի վրա և այդ նույն շրջապատի ազդեցությունը իր՝ քաղաքի
վրա հենց աշխատանքի հասարակական բաժանման արգասիք է: Աշ-
խատանքի հասարակական տերիտորիալ բաժանման մեջ ամեն մի քա-
ղաք հանդես է գալիս իբրև ինչ-որ կոնկրետ տարածքի կենտրոն, որտեղ
հանգուցվում են այդ տարածքը համախմբող տարրեր բնույթի տնտե-
սական-տրանսպորտային կապերը: Որպես կանոն, ինչքան խոշոր է քա-

զաքը, ինչքան հզոր է նրա ազդեցությունը շրջապատի վրա, այնքան ընդարձակ է նրա կողմից սպասարկվող տարածքը, և հակառակը:

Աշխատանքի հասարակական բաժանման մեջ քաղաքների ղերի ռեսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սովետական Հայաստանում ևս, ինչպես և ՍՍՀՄ ամեն մի այլ հանրապետությունում, կարելի է տարբերել Յ տիպի քաղաք:

1. Համահանրապետական կենտրոն, որտեղ հանգուցվում են ոչ միայն ներհանրապետական, այլ հանրապետության արտաքին գլխավոր կապերը: Այդպիսին է Երևանը:

2. Խեզիոնալ կենտրոններ, որոնք գտնվում են հանրապետության առանձին մասերն սպասարկող կապերի հանգուցակետում, բայց զգալի են նաև տվյալ ռեգիստրի և հանրապետության սահմաններից դուրս գտնվող կապերը: Այս խմբի մեջ են մտնում Լենինականը, Կիրովականը, Ղափանը, Հրազդանը, Ալավերդին, Իջևանը,



Նկ. 10. Ռելիէֆն իր պայմաններն է թելադրում տարաբնակեցմանը և քաղաքաշինությանը: Ղափան քաղաքի ընդհանուր տեսքը:

3. Տեղական նշանակության կենտրոններ, որոնք ավելի սահմանափակ տարածք են սպասարկում, իսկ արտաքին կապերը էական դեր չեն խաղում կամ էլ ունեն էպիզոդիկ բնույթ:

Քաղաքների երեան գալու, նրանց ձեւավորման ու գարգացման պատճառների և օրինաշափությունների բացահայտման առումով մեծ կարեվորություն է ներկայացնում նրանց գենետիկական դասակարգումը:

Մեծ դժվարությունների հետ է կապված այն հարցի լուծումը, թե քաղաքաստեղծ բազմաթիվ գործուներից ո՞րն է տվյալ բնակավայրի ծագման համար որոշիչ նշանակություն ունեցել, թե քաղաքի զարգացման տարրեր փուլերում ո՞ր գործոնի դերն է դարձել վճռական և որի՞նը կորցրել է իր նախկին ազդեցությունը: Դա է պատճառը, որ առ այսօր շի մշակված ըստ գենետիկական հատկանիշի քաղաքների այնպիսի տիպոգրիա, որը համընդհանուր ճանաչում ունենաւ: Այդ հարցը դեռևս հատուկ ուսումնասիրության կարիք ունի և ապասում է իր լուծմանը:

Առաջմ կարելի է նշել Հայկական ՍՍՀ-ի համար բնորոշ այն հանգամանքը, որ սովետական իշխանության օրոք ստեղծված քաղաքային բնակավայրերի մեծ մասը ծագել են լեռնահանքային արդյունաբերության (Քաջարան, Արթիկ, Ագարակ, Դաստակերտ, Անիպեմզա, Թումանյան, Ախթալա, Արագած, Չող և այլն), հիդրոէներգետիկական շինարարության (Սևան, Գարենցավան, Նոր Հաճն և այլն) և գյուղատնտեսական հումքի արդյունաբերական վերամշակման շնորհիվ Հոկտեմբերյան, Աշտարակ, Վեղի, Բերդ, Նոյեմբերյան, Ալրում, Մեղրի, Սպիտակ և այլն):

Վերջին 1—2 տասնամյակների ընթացքում առավել կարևոր քաղաքաստեղծ նշանակություն է ձեռք բերում վերամշակվող արդյունաբերությունը, հատկապես մեքենաշինությունը: Մեքենաշինական, մեծ մասամբ փոքր, ձեռնարկությունների կառուցման շնորհիվ էր, որ մի շարք նախկին գյուղեր, որոնք շրջանային կենտրոնի վարչական ֆունկցիա էին կատարում, վերածվեցին քաղաքային բնակավայրերի (Արովյան, Թալին, Մարալիկ, Ապարան, Աղիզբեկով և այլն):

Հանրապետության համար բնորոշ են ուկրեացիոն, հատկապես կուրորտային ուսուրաների օգտագործման շնորհիվ գոյացած քաղաքային բնակավայրերը (Արգնի, Դիլիջան, Ջերմուկ, Սաղկաձոր):

Հայկական ՍՍՀ առավել խոշոր քաղաքները և միջին ու մանր բնակավայրերի մի մասը գոյացել ու զարգացել են ոչ թե որևէ մեկ կոնկրետ գործոնի վճռական ազդեցության տակ, այլ մի շարք գործոնների՝ արդյունաբերական, տրանսպորտային, վարչաքաղաքական, համատեղ ներգործության շնորհիվ: Դրանք, այսպես կոչված, խառը տիպին պատկանող քաղաքներն են (Երևան, Լենինական, Կամո, Կիրովական, Արտաշատ, Գորիս, Էջմիածին, Ստեփանավան, Մասիս և այլն):

1. Հայկական ՍՍՀ-ում ի՞նչ շափանիշներ են ընդունված քաղաքային բնակավայրերի առանձնացման համար:
2. Բնութագրեք Հայկական ՍՍՀ քաղաքային բնակավայրերի աճի գինամիկան, Փորձեր բացատրել դրանց աճի և քաղաքային ցանցի ընդարձակման բարձր տեմպերի պատճենները:
3. Ի՞նչ ցուցանիշներ կարելի է օգտագործել քաղաքների դասակարգման համար:
4. Հայկական ՍՍՀ քաղաքային բնակավայրերը դասակարգեք ըստ ժողովրդատնտեսական ֆունկցիաների, բ) ըստ տնտեսաշխարհագրական դիրքադրության, գ) ըստ աշխատանքի տարածքային բաժանման մեջ մասնակցության աստիճանի:

4.5. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲԱԿԵՑՈՒՄԸ

Քաղաքային տարաբնակեցման հետ համեմատած ավելի կայուն բնույթ ունի գյուղական տարաբնակեցումը, որը արդի հիմնական գծերով ձևավորվել է անցած դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբին: Այդ տարիներին գյուղական բնակչության արագ աճի շնորհիվ (1831—1914 թթ. ավելի քան 6 անգամ) ոչ միայն մեծանում են հին գյուղերը, այլև ստեղծվում են նորերը և ձևավորվում է գյուղական բնակավայրերի համեմատաբար կայուն ցանց:

20-րդ դարի սկզբներին հաշվվում էր ավելի քան 1000 գյուղական ընակավայր, որից, սակայն 1919 թ. շուրջ 300-ը դատարկ կամ ավերակ վիճակում էին: Տիրապետում էին մինչև 500 բնակիչ ունեցող մասր գյուղերը: Համեմատաբար մարդաշատ էին Սևանի ավագանի և Շիրակի գյուղերը¹:

Սոցիալիստական շինարարության տարիներին՝ կապված գյուղի կոլեկտիվացման, երկրի ինդուստրացման, նոր ընդարձակ հողատարածությունների յուրացման և գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացման հետ, էական փոփոխություններ կատարվեցին նաև գյուղական տարաբնակեցման մեջ:

Այդ փոփոխություններից առավել կարևորները հանգում են հետևյալին: Նախ և առաջ, ավելացավ գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը: Եթե 1919 թ. մշտական բնակիչ ունեցող բնակավայրերը շուրջ 700 էին, ապա ներկայումս դրանց թիվը հասնում է 921-ի: Այդ ավելացումը տեղի է ունեցել լրացած գյուղերի մի մասի «վերակենդանացման» շնորհիվ, եթե գաղթած բնակչությունը վերադարձել է նախկին բնակավայրերը, ինչպես նաև նոր յուրացված ոռոգելի հողերում նոր բնակավայրերի, մեծ մասամբ սովորացին ավանների ստեղծման հաշվին:

¹ Տես Զ. Կորկոտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931 թթ.), Երևան, 1932:

Գյուղական բնակավայրերի թվի ընդհանուր աճին շի խանգարել նույնիսկ այն հանգամանքը, որ բարձր լեռնային գոտու շատ տասնյակ գյուղեր, որոնք հողագործության պայմանների անբարենպաստության և գյուղատնտեսական արտադրության ցածր արդյունավետության պատճառաբանությամբ վերացել են, և նրանց բնակչությունը պետականորեն կազմակերպված ձևով վերաբնակեցվել է ցածրադիր գոտիները:

Գյուղական բնակչության համակենտրոնացումը ավելի ինտենսիվ գյուղատնտեսություն ունեցող շրջաններում համարելով ընդհանուր առմամբ տնտեսապես հիմնավորված, միաժամանակ պետք է նշենք, որ բոլոր դեպքերում և բոլոր առումներով չէ, որ այդ պրոցեսը արդարացվում է և ցանկալի է: Եզակի չեն այն դեպքերը, երբ գյուղերի վերացումը հանգեցրել է մշակման համար պիտանի, արժեքավոր գյուղատնտեսական հանդակների լքմանն ու ամայացմանը, որը անտարակույս, շինուածում այդ շրջանների սոցիալական պրոբլեմների ոացիոնալ լուծմանն ու արտադրության գիտականորեն հիմնավորված տարածքային կազմակերպմանը:

Վերջին տարիներին վճռական քայլեր են կատարվում լեռնային շըրջանների տնտեսական ու սոցիալական զարգացումն արագացնելու ուղղությամբ, որի շնորհիվ ոչ միայն նվազել է լեռնային գյուղերի բնակչության արտահոսքը, այլև սկսում են վերակենդանանալ ամայացած գյուղերը:

Գյուղական տարարնակեցման մեջ նկատվող երկրորդ էական տեղաշարժը գյուղերի մարդաշատության մեծացումն է:

Ընդհանրապես գյուղական բնակավայրերի մեծությունը կարեոր նշանակություն ունի թե՛ հանրային արտադրության կազմակերպման, թե՛ բնակչության սպասարկման ձեերի ընտրության համար, բնակչության ավելի բարձր տարածական համակենտրոնացումը, ինչպիսին առկա է խոշոր գյուղերում, ի տարբերություն մանր գյուղերի կամ խուտորների, հնարավորություն է ընձեռում ունենալ ավելի հզոր գյուղատնտեսական արտադրական ձեռնարկություններ, լիարժեք դպրոցներ ու կոլտուրայի օգախներ, ժամանակակից բուժչիմնարկներ, այլ կերպ ասած նպաստում է թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական հարցերի լուծմանը. Մինչդեռ գյուղական բնակավայրերի փոքրությունն ու նոսրությունը արտադրության և բնակչության սպասարկման տերիտորիալ կազմակերպման գործում ստեղծում է մի շարք լրացուցիչ դժվարություններ:

Ներկայումս Հայկական ՍՍՀ գյուղական բնակավայրերի միջին մարդաշտությունը գերազանցում է 1000 բնակչին, որն ինքնին բավականին մեծ թիվ է (ՍՍՀՄ հանրապետությունների մեծ մասում այս թիվը չասում նույնիսկ 500-ի):

Իրականում տատանումները բավականին մեծ են՝ մի քանի տասնյակից մինչև 8000 բնակիչ (տես աղյուսակ 15):

Հստ մարդաշտության առանձնացվում են գյուղերի հետևյալ խըմբերը.

շատ մանր — մինչև 100 բնակիչ,
մանր գյուղեր — 101—500 բնակիչ,
փոքր գյուղեր — 501 — 1000 բնակիչ,
միջին մեծության գյուղեր — 1001—3000 բնակիչ,
խոշոր գյուղեր — 3001 — 5000 բնակիչ,
շատ խոշոր գյուղեր — 5000-ից ավելի:

Աղյուսակ 15

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՄԱՐԴԱՇԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Գյուղերի տիպով- գիան ըստ բնակչու- թյան թիվ (մարդ)	Գյուղերի թիվը	Նույնը %-ով	Բնակչության թիվը % -ով
մինչև 50	8	0,8	
51—100	11	1,2	0,1
101—200	51	5,8	0,8
201—500	230	24,5	7,9
501—1000	262	28,7	18,7
1001—2000	225	24,5	32,2
3001—5000	79	8,6	19,3
2001—3000	45	4,8	16,8
5000-ից ավելի	7	0,8	4,2

Ընդամենը 921 100,0 100,0

Խնդպես երևում է աղյուսակից, չնշին է շատ մանր գյուղերի բաժինը (ընդամենը 19-ը կամ բոլոր գյուղերի 2 %-ը), որտեղ բնակվում է հանրապետության գյուղական բնակչության 0,1 %-ը միայն (ընդամենը 1100 մարդ):

Հայկական ՍՍՀ-ում տիրապետողը փոքր, միջին մեծության և խոշոր գյուղերն են, որոնց ընդհանուր թիվը հասնում է շուրջ 575-ի, իսկ բնակչության թվաքանակը՝ ավելի քան 700 հազ.-ի, այսինքն ամբողջ

գյուղական բնակչության 70%-ը, Գյուղական բնակչության 21%-ը բաժին է ընկնում խոշոր և շատ խոշոր՝ 3000-ից ավելի բնակիլ ունեցող գյուղերին, որոնց թիվը, սակայն, այնքան էլ մեծ չէ՝ ընդամենը 52 (գյուղերի ընդհանուր թիվ 5,5 տոկոսը): Հանրապետության 7 գյուղեր ունեն ավելի քան 5000 բնակիլ: Դրանցից առավել խոշորներն են Վարդենիկը (Մարտունու շրջան)՝ 8000 բնակիլ, Մեծավանը (Կալինինոյի շրջան)՝ 6500 բնակիլ, Արարատը (Արարատի շրջան)՝ 5000 բնակիլ, Այնթափը (Մասիսի շրջան)՝ 5600 բնակիլ, Օձունը (Թումանյանի շրջան)՝ ավելի քան 5000 բնակիլ:

Հատկանշական է, որ լեռնային մասնատված և լանջերի մեծ թեքություններ ունեցող տարածքում տիրապետում են շատ մանր գյուղերը: Օրինակ՝ հանրապետության ամենալեռնոտ՝ Ղափանի ու Մեղրու շրջանների ավելի քան 6 տասնյակ գյուղերի մեծ մասը ունեն մինչև 500 բնակիլ և միայն մեկը ունի 1000-ից ավելի բնակիլ: Մինչդեռ հարթ տարածքով և խոշոր հողակտորներով աշքի ընկնող դաշտավարական ու այգեգործական շրջաններում տիրապետում են միջին, խոշոր և շատ խոշոր գյուղերը: Դրանց թվում առավել բնորոշներն են Մարտունու, Կամոյի, Աշտարակի, Արտաշատի, Ախուրյանի, Արթիկի, Հոկտեմբերյանի, Մասիսի շրջանները:

Ի տարբերություն ՍՍՀՄ որոշ մարզերի, Հայկական ՍՍՀ-ում գյություն ունի գյուղերի ֆունկցիոնալ տիպերի միատարրություն: Այստեղ բոլոր գյուղական բնակավայրերի համար էլ բնորոշ է գյուղատնտեսական ֆունկցիան: Բացակայում են ոչ գյուղատնտեսական ֆունկցիաներ ունեցող գյուղական բնակավայրերը (տրանսպորտային, անտառագործական, ձկնորսական և այլն): Հատկանշական է նաև այն, որ գյուղատնտեսական ֆունկցիան էլ չի սահմանափակվում գյուղատնտեսական արտադրության մեկ առանձին ճյուղով: Բոլոր գյուղական բնակավայրերում զբաղվում են թե երկրագործությամբ, թե՝ անասնապահությամբ, չնայած, որ նրանց հարաբերակցությունը տարբեր վայրերում տարբեր է:

Ցածրադիր գոտում, որպես կանոն, տիրապետում է երկրագործությունը, բարձրադիր լեռնային գոտում՝ անասնապահությունը, իսկ միջին գոտում նրանք մեծ մասամբ հանդես են գալիս որպես հավասարագոր ճյուղեր:

Հասարակական գարգացման ընթացքում, սոցիալտնտեսական, քաղաքական և բնական-աշխարհագրական գործոնների ազդեցության տակ ձևավորվել են բնակավայրերի ներկայիս ցանցը և տարաբնակեցման յուրահատուկ ձևերը:

Հայկական ՍՍՀ բնակավայրերը ամենից ավելի ընդարձակ և խիստ ցանց են ստեղծել մեր տարածքի համար շատ բնորոշ լեռնային գոգա-


Վորությունների հատակային մասերում ու սարավանդներում, հատկապես Արարատյան, Շիրակի, Լոռի ու Ապարանի դաշտերում, Սևանի ավագանում։ Մնացած դեպքերում գյուղական բնակավայրերի համեմատաբար խիտ կուտկումները համընկնում են լեռնաճյուղերով եզերված գետահովիտներին, եթե, իհարկե, ժամանակակից գյուղատնտեսական արտադրության, մասնավորապես, երկրագործության ծավալման համար առկա են բավարար հողատարածություններ։

Աշքի է ընկնում նաև այն, որ 2200 մ-ից բարձր լեռնաշղթաներն ու լեռնազանգվածները (Գեղամա, Վարդենիսի, Արագածի, Զանգեզուրի, Բագումի, Գուգարաց, Մեղրու և այլն) գուրկ են մշտական բնակավայրերից և բնակավայրերի քարտեզում ստեղծում են «դատարկ» տարածություններ։ Բարձր լեռնային այս գոտում բավականին մեծ թիվ են կազմում (հարյուրից ավելի) ժամանակավոր բնակավայրերը, որոնք արտադրության ժամանակաշրջանում (Հունիս-օգոստոս) ցածրադիր գոտիների տնտեսությունների անասնապահների կողմից օգտագործվում են որպես սեզոնային բնակատեղիներ։


Հիշյալ լեռնաշղթաների ու լեռնազանգվածների՝ մշտական բնակավայրերից գուրկ մերձկատարային հատվածները, խախտելով բնակավայրերի տեղաբաշխման ամբողջական համատարած ցանցը, ստեղծում են բավականին բարդ ու արտաքնապես խառնաշփոթ պատկեր։ Այսուհանդերձ, հանրապետության բնակչության տարաբնակեցումը և բնակավայրերի ցանցի ձևավորումը որոշակի օրինաշափություններ ունեն, որոնք օգնում են մեզ առանձնացնելու տարաբնակեցման հիմնական ձեվերը և կատարել նրանց դասակարգումը։

Հայկական ՍՍՀ-ում կարող ենք առանձնացնել գյուղական տարաբնակեցման հետեւյալ հիմնական ձևերը (գծ. 11):


ա) համատարած տարաբնակեցում, երբ ընդարձակ տարածքում բնակավայրերը ընկած են իրարից ոչ մեծ հեռավորության վրա, տեղաբաշխված են գրեթե հավասարաշափ ձևով և հաճախ էլ անկատարելիութեն ձևով միմյանց, մի ընդհանուր կառուցապատված զանգված են կազմում։ Տարաբնակեցման այս ձևը տարածված է ոռոգելի հարթավայրային շրջաններում, որտեղ գրեթե ամբողջ հողատարածությունը օգտագործվում է երկրագործության աշխատատար և ինտենսիվ ճյուղերի (այգեգործության, բանջարաբուծության) զարգացման համար։ Բնակավայրերը մեծ մասամբ խոշոր ու միջին չափերի են և տեղավորված են մայր ջրանցքներին մոտիկ։ Տարաբնակեցման այս ձևի տիպիկ շրջան է Արարատյան դաշտը։ Համատարած տարաբնակեցում հանդիպում է նաև Արարատյան գոգավորության նախալեռնային նախակին ղոերի առանձին հատվածներում, որոնք վերջին տարիներին ոռոգվելով, օգտագործվում են այգեգործության և դաշտավարության համար։




ցրված



շղթայածն



խմբային



համատարած

Նկ. 11. Հայկական ՍՍՀ գյուղական տարաբնակեցման հիմնական ձևերը:

բ) Ցրված տարաբնակեցում. սրա համար բնորոշ է այն, որ բնակավայրերը, ի տարբերություն նախորդի, իրարից ավելի մեծ հեռավորության վրա են գտնվում, առաջացնելով բավականին նոսր մի ցանց։ Այս ձևը բնորոշ է միջին և միջինից բարձր հիպսոմետրիկ նիշ ունեցող լեռնային հարթություններին ու սարավանդներին, որտեղ վարելահողերի հետ միասին զդալի տարածում ունեն նաև մերձգյուղյան արոտները (Շիրակ, Լոռի, Սևանի ավազան, Վայքի որոշ հատվածներ)։ Հանդիպում են տարբեր մեծությունների բնակավայրեր։ Գերակշռողը, սակայն, միջին ու խոշոր գյուղերն են։

գ) Խմբային տարաբնակեցումը բնորոշ է բարդ լեռնային, կտրրտված մակերեսույթ ունեցող այն շրջաններին, որտեղ բացակայում են կառուցապատման և դաշտավարության համար հարմարավետ ընդարձակ տարածությունները։ Այդպիսի շրջաններում պատմականորեն ձևավոր-

վել են մեծ մասամբ մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերի ոչ մեծ խըմբեր: Այդ գյուղերը սովորաբար համախմբված են գետահովտի՝ օազիսներ հիշեցնող համեմատաբար լայնացող հատվածներում և մեկը մյուսից մոտիկ տարածության վրա են (2—5 կմ): Սակայն տարրեր խըմբերի հեռավորությունը միմյանցից, որպես կանոն, 1—2 տասնյակ կմ է: Հայկական ՍՍՀ-ում խմբային տարարնակեցման կարելի է հանդիպել խիստ մասնատված լեռնային ուղիեթ ունեցող շրջաններում (Զանգեգուր, Վայք, Գուգարքի, Թումանյանի, Շամշադինի վարչական շրջաններ):

Դ) շիրայաձև կամ գծային տարաբնակեցում. սա հատուկ է լեռնաշղթաների մեջ սեղմված և զառիթափ լանջեր ունեցող նեղ գետահովիտներին, որտեղ երկրագործության համար պիտանի տարածություններ կան միայն գետահովտի նեղ հատակային մասում: Այստեղ էլ հենց գետի հոսանքի ուղղությամբ, միմյանց են հաջորդում գյուղերը: Տարաբնակեցման այս ձեզ լավ է ներկայացված հատկապես այն գետահովիտներում, որոնք վտակների ճյուղավորված ցանց չունեն (Գետիկ, Դերեդ՝ միջին և ստորին հոսանքում, Մեղրի, Գավառագետ, Մարմարիկ և այլն): Այն հանդիպում են նաև Սևանա լճի ափագծի որոշ հատվածներում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ

1. Թևոթագրեք Հայկական ՍՍՀ գյուղական տարարնակեցման մեջ կատարված գլխավոր տեղաշարժերը:
2. Դասակարգեք Հայկական ՍՍՀ գյուղական բնակավայրերը ըստ մարդաշատության:
3. Որո՞նք են Հայկական ՍՍՀ գյուղական տարարնակեցման հիմնական ձևերը:

4.6. ԹՆԱԿԳՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ ԱԽ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՊԵԼՄԸ

Ինչպես ասվեց, բնակչության տարարնակեցումը անմիջական պատճառական կախվածության մեջ է գտնվում՝ նյութական արտադրության ճյուղերի տեղարաշխումից, թեև առանձին դեպքերում որոշիչ կարող է լինել հակադարձ կապը՝ արդեն ձևավորված տարարնակեցման ազդեցությունը արդյունաբերության և մյուս ճյուղերի տեղաբաշխման վրա: Հայկական ՍՍՀ քաղաքային տարարնակեցումը ձևավորվեց սոցիալիստական շինարարության անցած տասնամյակների ընթացքում և կապված է հանրապետության էկոնոմիկայի ինդուստրացման, նրա ուրբանիզացման արագ տեմպերի հետ: Մինչդեռ գյուղական տարաբնակեցումը ձեվավորվել է շատ ավել տեսական պատմական ժամանակաշրջանում:

Գյուղական բնակավայրերի առկա ցանցը իր հիմնական գծերով ձևավորվել է նախասովետական ժամանակաշրջանում, այսինքն հողի նկատմամբ մասնավոր սեփականատիրության և մանրատված գյուղատնտեսության պայմաններում: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ընթացքում և նրա հետևանքով գյուղական տարաբնակեցման մեջ կատարված դրական տեղաշարժերը գյուղական բնակավայրերի ցանցի արմատական վերակառուցման շահանգեցրին:

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, էկոնոմիկայի ինտենսիվացման ու արդյունավետության բարձրացման շահերը պահանջում են ամրող հասարակության տարածքային կազմակերպման էական բարելավում ու կատարելագործում: Իսկ դա, իր հերթին, անմիջականորեն առնչվում է թե՛ քաղաքային, թե՛ գյուղական տարաբնակեցման վերակառուցման ու կատարելագործման հետ:

Բնակչության տարաբնակեցման վերակառուցումը բարդ ժողովը դատնտեսական պրոբլեմ է, Այն կապվում է ոչ միայն նյութական արտադրության ինտենսիվացման, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, այլև հանրապետության սուլ տարածքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ճանապարհային ցանցի կատարելագործման և մի շարք այլ հանգուցային հարցերի հետ:

Բնակչության տարաբնակեցման նպատակային-պլանային բարելավման աշխատանքները ինչպես ամրող երկրի մասշտարով, այնպես էլ առանձին ռեգիոններում հատկապես ակտիվացան 70-ական թվականներից: Այդ աշխատանքների հիմքում ընկած են տարաբնակեցման տարրեր մակարդակի ու մեծության համակարգերի առանձնացումը և դրանց սինեմաների մշակումը¹: Առանձնացվում են տարաբնակեցման համակարգերի հետեւյալ տարածքային մակարդակները. համապետական, հանրապետական (միութենական հանրապետություններ և ՌՍՖՌ տնտեսական շրջաններ), մարզային, շրջանային (վարչական շրջանի), քաղաքային:

Պրոբլեմի լուծումը համապետական մակարդակով հենվում է ՍՍՀՄ տարաբնակեցման միասնական նամակարգի (ՏՄՀՀ) ձևավորման վրա: ՏՄՀՀ բաղկացած է հիերարխիական տարրեր կարգի և տարրեր տարածական ընդգրկում ունեցող համակարգերից ու ենթահամակարգերից: Այդպիսի համակարգերից է նաև Սովետական Հայաստանի տարաբնակեցման հանրապետական համակարգը, որն իր հերթին բաղկացած է ավելի ցածր կարգի՝ ներհանրապետական սոցիալ-տնտեսական շրջան-

¹ 1986 թ. հոմավարի 1-ի համագրելի գներով հաշված:



Նկ. 12. Հանրապետության գրեթե բոլոր՝ ավելի քան 900 գյուղական բնակավայրերը կառուցվում և վերակառուցվում են գյուղավոր հասակագծերով:
Խորակառույց Աշոտավան զյուղը Թուար ջրամբարի ափին (Սիսիանի շրջան)

Ների, վարչական շրջանների և վերջիններիս մասը հանդիսացող ենթաշրջանների տարաբնակեցման համակարգերից։ Հիերարխիական տարրեր կարգի տարաբնակեցման համակարգերի ձևավորման ժամանակ սոցիալ-տնտեսական տարրեր հարցեր են լուծվում։ Բայց բոլորի համար ընդհանուրն այն է, որ պետք է ապահովվի։

ա) բոլոր քաղաքային ու գյուղական բնակավայրերի փոխապայմանավորված ու փախկապակցված զարգացումը,

բ) արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների ու ցանցերի կոմպլեքսային տարածքային կազմակերպումը,

գ) ամբողջ տարածքի օգտագործման ռացիոնալ ռեժիմի հաստատումը, որը հաշվի է առնում արտադրության, բնակչության տեղաբաշխման, հանգստի կազմակերպման և բնության պահպանության շահերը։

Բոլոր կարգի տարաբնակեցման համակարգերի առանձնացման համար ընդհանուր ելակետային դրույթ է նաև այն, որ պետք է առանձնացվեն որոշակի հենակետային բնակավայրեր ու դրանց կողմից սպասարկվող շրջաններ։ Այդ բնակավայրերի միասնական ցանցը պետք է ընդգրկի ամբողջ երկիրը, ձևավորելով ՍՍՀՄ տարաբնակեցման միասնական համակարգը (ՏՄՀ),

Տարաբնակեցման համակարգերի ձևավորման գիտականորեն մշակված կոնցեպցիաներն ու սխեմաները կարող են գործնական կիրառություն գտնել շրջանային հատակագծման նախագծերում, որտեղ վերջնական լուծում են ստանում տարածքի կազմակերպման, նրա ուղղիոնալ օգտագործման, նյութական արտադրության, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի փոխադրձ տեղաբաշխման, բնակչության միջնյուղային սպասարկման, մասսայական հանգստի կազմակերպման, էկոլոգիական իրադրության բարելավման հարցերը:¹ Միասնական շրջանային հատակագծերի կազմման փորձնական աշխատանքները ցույց են տալիս, որ դրանց հիման վրա կատարվող վերակառուցումը կարող է կրկնակի, առանձին դեպքերում մինչև եռակի անգամ կրճատել գյուղական բնակավայրերի թիվը, համապատասխանորեն մեծացնել դրանց մարդաշատությունը և հանգեցնել բնակչության ու հասարակական արտադրության համակենտրոնացման ու արդյունավետության զգալի բարձրացման:

Տարաբնակեցման այդպիսի համատարած վերակառուցումը կարող է պահանջել երկարատև ժամանակ, մեծ ժավալի կապիտալ ներդրում-ներ և հասարակության մեծ ջանքեր: Այնուհանդերձ, դա հասունացած խնդիր է: Չնայած պրոբլեմի բարդությանը և դրա լուծման հետ կապված մեծ դժվարություններին, այսօր արդեն մեր հանրապետությունը, ի նկատի ունենալով հասարակության ներկայիս հնարավորությունները, ի վիճակի է ձեռնամուխ լինել դրա իրագործմանը:

Հարկ է նշել, որ շրջանային հատակագծման միջոցով գյուղական տարաբնակեցման վերակառուցման աշխատանքները ՍՍՀՄ որոշ հանրապետություններում ու մարզերում լայն ժավալ են ստացել (Մերձբալթիկա, Բելոռուսիա, ՌՍՖՍՀ որոշ մարզեր), մինչեռ մեզանում այդ հարցերի լուծումը նկատելիորեն հետ է մնում: Պետք կլինի լուծել փոխադրութեն միմյանց հետ կապված հարցերի մի ամբողջ համակարգ, որն իր մեջ է ընդգրկում, մասնավորապես, հանրապետության բնակավայրերի տարածական համակարգերի գիտականորեն հիմնավորված կոնցեպցիայի մշակումը, բնակավայրերի նոր ցանցի նախագծի կազմումն ու հիմնավորումը, ամբողջովին վերացվող, նոր կառուցվող և պահպանվող ու վերակառուցվող բնակավայրերի որոշումը, դրանք միմյանց հետ կապող նոր ճանապարհային ցանցի նախագծումը, որն ապահովում է բնակավայրերի միջև նվազագույն տնտեսական հեռավորու-

¹ Ծրբանային հատակագծումը որոշակի առնվազանը ների մեջ է նաև հանրապետությունների սոցիալ-տնտեսական շրջանացման հետ: Այդ առնվազանը կը նարկվեն գասագրքի շորորդ մասում:

Թյուն: Այնուհետև, բնակավայրերի հատակագծերի մշակումը և, ի վերջո, այդ նախագծերի աստիճանական իրականացումը:

Հայտնի է, որ շրջանային հատակագծումը տնտեսական աշխարհագրության և քաղաքաշինության միջև ընկած, դրանք իրար կապող սահմանային գիտություն է: Այստեղից էլ բխում է, որ շրջանային հատակագծման աշխատանքների գիտական հիմնավորվածությունը և հաղողությունը կարող է ապահովվել քաղաքաշինարարների և տնտեսաաշխարհագետների համագործակցված, միասնական ջանքերի շնորհիվ միայն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է բնակչության տարածնակեցման վերակառուցման ու կառարելագործման պրոբլեմի էությունը:
2. Բնակչության տարածնակեցման վերակառուցումը ի՞նչ առնլությունների մեջ է գտնվում շրջանային հատակագծման աշխատանքների հետ:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ԳԼՈՒԽ 5. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՄՆԵՐԸ ԵՎ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը ՍՍՀՄ ժողովրդատնտեսական համալիրի բաղկացուցիչ մասն է և նրա հետ մեկտեղ ձևավորվել ու զարգանում է սոցիալիզմի տնտեսական օրենքներին համապատասխան։

Սովետական իշխանության հաստատման և սոցիալիստական արտադրահարաբերությունների հաղթանակի հետևանքով ստեղծված սոցիալբարաքական բարենպաստ պայմանները մի կողմից, մյուս կողմից՝ բազմազան բնական հարստությունների ու արագ աճող աշխատանքային ռեսուրսների պլանային օգտագործումը հանգեցրին ժամանակակից մակարդակի վրա գտնվող արտադրողական ուժերի ստեղծմանը։ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը այսօր բազմակողմանիորեն զարգացած, բարդ կառուցվածք, ներքին ու արտաքին բազմապիսի կապեր ունեցող դինամիկ միասնական տնտեսական օրգանիզմ է, որին ինչպես անցած տարիներին, այնպես էլ ներկայումս հատուկ են սոցիալտնտեսական հիմնական ցուցանիշների բարելավման կայուն և հիմնականում բարձր տեմպերը։ Սոցիալիզմի տնտեսական օրենքների հիման վրա և լենինյան ազգային բաղաքականության կիրառման շնորհիվ Հայկական ՍՍՀ-ում, ինչպես և ցարական Ռուսաստանի նախկինում թույլ զարգացած մյուս ազգային ծայրամասերում, այդ տեմպերը գերազանցել են ՍՍՀՄ համապատասխան միջին ցուցանիշները։ Դա զերաբերում է թե ընդհանրական հասարակական արդյունքին ու ազգային եկամտին, թե նյութական արտադրության ու կապիտալ շինարարության ծավալին և թե ոչ նյութական արտադրությանը։ Ինչպես տեսանք նախորդ գլխից, սովետական իշխանության տարիներին, պատմական համեմատարար կարճ ժամանակահատվածում հանրապետության գլխավոր արտադրողական ուժը՝ բնակչությունը ոչ միայն ունեցավ աննախադեպ քանակական աճ (ավելի քան 4,5 անգամ),

այլև որակապես զարգացավ և իր գրագիտության, կուլտուրական աստիճանով, կադրերի մասնագիտական մակարդակով առաջնակարգ դիրքեր է գրավում աշխարհի երկրների շարքում:

Բնակչության, աշխատանքային ռեսուրսների քանակական ու որակական աճին համեմատ արագընթաց զարգացում ապրեցին հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ նյութական արտադրությունը, ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերը, բնակչության կենսամակարդակը, ժողովրդի ճոգեռը կյանքը:

Հանրապետության սոցիալնտեսական ու կուլտուրական զարգացման բարձր տեմպերը բնորոշ են Սովետական Հայաստանի գյուղության բոլոր տասնամյակների համար: Զնայած այն հանգամանքին, որ ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում այդ տեմպերը 1970-ական թվականների կեսերից սկսած նախորդ տարիների համեմատությամբ նկատելիորեն դանդաղեցին, այնուամենայնիվ հանրապետությունում դրանք մնում էին բարձր: Նվաճվեցին տնտեսական աճի, արտադրողական ուժերի զարգացման ու կատարելագործման և սոցիալական առաջադիմության նոր բնագծեր: 1976—1985 թթ. ընթացքում հանրապետության ազգային եկամուտն ավելացավ 99%-ով, գյուղատնտեսական արտադրանքը՝ 46%-ով: Որոշ նվաճումներ ձեռք բերվեցին միջնուղային, ներճյուղային և միջշրջանային համամասնությունների կատարելագործման, առաջադիմական կառուցվածքային տեղաշարժերի իրականացման, արտադրողական ուժերի տեղաբաշխման, շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ռեսուրսախնայող, գիտատար, աշխատատար ճյուղերի առաջանցիկ զարգացման ուղղությամբ:

Դրական տեղաշարժեր կատարվեցին բնակչության և՝ արդյունաբերության հետագա տարածքային կենտրոնացումը թուլացնելու և կանխելու ուղղությամբ՝ կապված փոքր քաղաքների, լեռնային ու նախալեռնային շրջանների կոմպլեքսային սոցիալ-տնտեսական զարգացման, աշխատանքային ու բնական ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործման ապահովման, գյուղական շրջաններից խոշոր քաղաքները միգրացիայի պրոցեսի կանխման հետ:

Ընդունվեց և իրականացվում է հանրապետության պարենային ծրագիրը: Դրա շրջանակներում իրականացվել է՝ ագրարային սեկտորի կառավարման կազմակերպական վերակառուցումը և ներկայումս հանրապետության ամբողջ ագրոարդյունաբերական համալիրը կազմակերպվուն և (որպես կառավարման օբյեկտ) դիտվում է որպես մեկ ընդհանուր ամբողջություն: Նկատելիորեն ամրապնդվեց ճյուղի նյութատեխնիկական բազան, բարելավվեց գյուղատնտեսական հանդակների օգտագործումը, աճեցին վերամշակող ճյուղերի հիմնական ֆոնդերը:

Նոր գարգացում ապրեց ժողովրդական տնտեսության արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքը:

Սկսվել և շարունակվում է ժողովրդական կրթության ողջ համալիրի վերակառուցումը:

Սովետական Հայաստանի գարգացման արդի էտապի համար բնորոշ է այն, որ ձևավորվում և ավելի ակնհայտ է դառնում նրա էկոնոմիկայի ժամանակակից ինտելեկտուալ-ինդուստրիալ բնույթը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բնակչության քանակով ու տարածքի մեծությամբ Հայկական ՍՍՀ-ն ամենափոքրերից է, մեթոդոլոգիական առումով սխալ կլիներ մյուս հանրապետությունների համեմատությամբ նրա սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը ցույց տալ միայն արտադրանքի ծավալի և սոցիալական ոլորտի զարգացման բացարձակ ցուցանիշներով։ Զարգացման մակարդակի քննարկման ու գնահատման համար հարկ է օգտվել տեսակարար ցուցանիշներից, որոնք ստացվում են բացարձակ ցուցանիշների և բնակչության կամ տարածքի մեծության հարաբերություններից և երեսույթը բնութագրում են բնակչության մեկ շնչի կամ տարածքի միավորի հաշվով։ Տեսակարար ցուցանիշները արտացոլելով երեսույթների զարգացման աստիճանը, մակարդակը, գիտական շափանիշ են ծառայում շրջանային համեմատությունների ու երեսույթների տարածքային վերլուծությունների համար։

Տարբեր շրջանների ու երկրների տնտեսական զարգացման մակարդակը որոշելու և միմյանց հետ համեմատելու ամենատարածված ընդհանրական տեսակարար ցուցանիշը բնակչության մեկ շնչին ընկենող հասարակական ընդհանրական արդյունքի և ազգային եկամաֆ հանակն է։

Նախահեղափոխական Հայաստանի այս ցուցանիշը մոտավորապես երեք անգամ զիշել է Ռուսաստանի միջին մակարդակին։ Ներկայումս արդեն այն կազմում է միջին միութենական մակարդակի ավելի քան 80%-ը։ Հստ որում, այդ տարբերությունն էլ աստիճանաբար պետք է վերանա, չնայած խնդրի բարդությանը, որը բացատրվում է այն հանգամանքով, որ բնակչության աճի տեմպերը գրեթե կրկնակի անգամ ավելի են, քան ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած։

Շրջանային համեմատությունների համար օգտագործվում են այլ ցուցանիշներ ևս, օրինակ, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերությունը, այլ կերպ ասած ուրբանիզացման աստիճանը։ Դա ներկայումս Հայկական ՍՍՀ-ում հավասար է 0,68-ի (նախասովետական 0,1-ի դիմաց)։ Այս ցուցանիշով Հայկական ՍՍՀ-ն երկրում գրավում է 4-րդ տեղը և գերազանցում է ՍՍՀՄ միջին մակարդակին (0,63)։

Ընդունված ցուցանիշներ են նաև նյութական արտադրության ոլորտում և ոչ նյութական արտադրության ոլորտում զբաղվածների հարա-

բերությունը, յուրաքանչյուր 1000 բնակչին ընկնող մասնագետների թիվը և նման բնույթի մի քանի այլ ցուցանիշներ:

Այս բոլոր բնագավառներում Սովետական Հայաստանը թոհջր է կատարել, ցուցանիշների մեծ մասով հասել երկրի միջին մակարդակին, իսկ մի քանիսի գծով նույնիսկ գերազանցել այն:

Հայկական ՍՍՀ սոցիալտնտեսական զարգացման արդյունքները բնութագրվում են նաև նրանով, որ ստեղծվել են հակայական ժամանակակից արտադրական ֆոնդեր, մեծ շափով բարձրացել է արտադրության ճյուղերի տեխնիկական հագեցվածության մակարդակը, ընդայնվել ու բարելավվել է բնական ռեսուրսների՝ բնական արտադրողական ուժերի օգտագործումը, անհամեմատելի շափերով ընդայնվել ու զարգացել է հասարակության արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքը, և այս բոլորի հետ միասին ու դրանց շնորհիվ՝ հանրապետության տնտեսական պոտենցիալը:

Վերցնենք, օրինակ՝ կապիտալ Եներգրումները և հիմնական ֆոնդերի գործարկումը: Սովետական Հայաստանի գոյության 65 տարիների ընթացքում՝ 1921—1985 թվերին կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմել է մի վիթխարի թիվ՝ 27,5 մլրդ ռ., որից 25,45 մլրդ ռ. կատարվել է պետական ու կոռուպերատիվ ձեռնարկությունների կողմից: Կապիտալ ներդրումների ներկա ժամաների մասին պատկերացում կարող է տալ այն փաստը, որ այժմ միայն մեկ տարում իրացվում է 70—80 անգամ ավելի կապիտալ միջոցներ, քան իրացվել է սովետական իշխանության առաջին 7 տարիների ընթացքում՝ 1921—28 թվերին:

Հատկանշական է հիմնական ֆոնդերի՝ մարդու կողմից ստեղծված ու կուտակված գլխավոր նյութական արժեքների աճը: Միայն հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին (1946—1985 թթ.) հանրապետության տարածքում գործարկված հիմնական ֆոնդերի՝ արտադրական ֆոնդերի (արտադրական շենքեր ու կառույցներ, հաստոցներ ու մեքենաներ, ճանապարհներ ու ջրանցքներ, բազմամյա տնկարկներ և այլն) և ոչ արտադրական ֆոնդերի (դպրոցներ, հիվանդանոցներ, կուլտուր-լուսավորական հիմնարկներ, մարզական կառույցներ, կառավարման ոլորտի շենքեր ու կառույցներ, քաղաքային գրումայգիներ ու պու-

* 1984 թ. հունվարի 1-ի համադրելի գեերով հաշված:

րակներ՝ այն ամեն նյութականը, ինչը կոչված է սպասարկելու բնակչության ոչ արտադրական պահանջմունքները) արժեքը, դարձյալ համադրելի գներով, համում է 25 մլրդ. ռ.։ Դա այն բոլոր արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրական, առողջապահական, ժողովրդական կրթության, կոմունալ-կենցաղային ու այլ կառուցների, պետական ու անհատական բնակելի շենքերի արժեքն է, որ այդ տարիներին կառուցվել ու գործարկվել են Սովետական Հայաստանում: |Միայն 1987 թ. գործարկվել է 1.470 մլն. ռ. արժողությամբ հիմնական ֆոնդեր, այդ թվում՝ 1.070 մլն. ռ. արտադրական ֆոնդեր:

Խոսուն փաստ է այն, որ Սովետական Հայաստանը աշխատանքի միջազգային բաժանման համակարգում հանդիս է գալիս շուրջ 200 արդիական արտադրատեսակներով, որոնց ճնշող մեծամասնությունը թողարկվում է վերամշակող արդյունաբերության, այդ թվում՝ կեսից ավելին մեքենաշինության կողմից:

Քանակական վիթխարի աճի հետ մեկտեղ տարեցտարի, թեև դանդաղ, բարելավվում են հասարակական արտադրության նաև որակական ցուցանիշներ՝ արդյունավետությունը, աշխատանքի արտադրողականությունը, ընդլայնվում է միջազգային ստանդարտին համապատասխանող արտադրանքի տեսականին:

Այս բոլորով հանդերձ, մի շարք բնագավառներում Հայկական ՍՍՀ դեռևս զիջում է երկրի միջին ցուցանիշներին, ինչպես նաև միութենական հանրապետություններից շատերին: Դրանցից են, մասնավորապես, արդյունաբերության մի շարք ճյուղերի և գյուղատնտեսական արտադրության մեքենայացման ու ավտոմատացման աստիճանը, կապիտալ ներդրումների ծավալը և ուղղությունը, տրանսպորտային սպասարկումը, աշխատանքի արտադրողականությունը, սոցիալական հարցերի լուծումը և բնակչության կենցաղային սպասարկումը, արտադրության կազմակերպման ու կառավարման առաջավոր ձևերի արմատավորումը, արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում առաջին որակի ապրանքների բաժինը: Ընթացիկ՝ 12-րդ հնգամյակի պլանային, ինչպես նաև հեռանկարային միջոցառումները առաջին հերթին ուղղված են այդ ցուցանիշների բարելավմանը և դրա միջոցով էլ արդի էտապի՝ սոցիալ-տնտեսական զարգացումը արագացնելու և ինտենսիվ ուղու վրա դնելու ստրատեգիական խնդրի լուծմանը: Դա նպատակ ունի Սովետական Հայաստանի էկոնոմիկան բոլոր հիմնական՝ թե՛ քանակական, թե՛ որակական ցուցանիշներով բարձրացնել նոր աստիճանի և նկատելիորեն մեծացնել նրա ավանդը ՍՍՀՄ նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում:

Հայկական ՍՍՀ-ի համար բնորոշ է ժողովրդական տնտեսության բավականին լայն (բազմազան) բնական բազան և, դրանով էլ պայմանավորված՝ հարուստ ճյուղային կառուցվածքը:

ՍՍՀՄ կենտրոնական վիճակագրական վարչության մշակած դասակարգման համաձայն երկրի արդյունաբերությունը բաժանվում է 16 համալիր (կամ գլխավոր) ճյուղերի, որոնք իրենց հերթին տրոհվում են ավելի քան 300 միատարր ճյուղերի (ենթաճյուղերի) ու արտադրությունների:

Հայկական ՍՍՀ-ում, որը թողարկում է ամբողջ ՍՍՀՄ-ի արդյունաբերության համախառն արտադրանքի շուրջ 1,3 տոկոսը, ավելի կամ պակաս շափով ներկայացված են 14 համալիր ճյուղեր և ավելի քան 160 միատարր ճյուղեր ու արտադրություններ, այսինքն՝ երկրի արդյունաբերության ճյուղային կազմի կառուցվածքային միավորների շուրջ 56%-ը:

Մեծ բազմազանություն գոյություն ունի նաև գյուղատնտեսության մեջ: Ամբողջ ՍՍՀՄ-ում, պաշտոնական դասակարգման համաձայն, առանձնացվում է մոտավորապես 50 ճյուղ, արտադրություն և գյուղատնտեսական կոլտառա: Հայկական ՍՍՀ փոքրիկ տարածքում հաշվում է այդ ընդհանուր քանակի մինչև 60 տոկոսը:

Բազմաճյուղ կառուցվածք ունեն նաև տրանսպորտը և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներն ու ճյուղերը՝ շինարարությունը, կապը, առևտուրը, կենցաղսպասարկումը, գիտությունը, ժողովրդական կրթությունը, առողջապահությունը, ֆիզկուլտուրան և սպորտը:

Ժողովրդական տնտեսության ճյուղերի քանակական փոխհարաբերությունը ձեռավորվում է տնտեսության պլանաշափ համամասնական զարգացման օրենքով և երկրի նյութական հնարավորությունների ու զարգացման մակարդակին համեմատ:

Ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքը կարելի է քննարկել ըստ զբաղվածների ընդհանուր թվի: ՍՍՀՄ ամբողջությամբ վերցրած և Հայկական ՍՍՀ համեմատական ցուցանիշները ներկայացված են № 16 աղյուսակում:

Ինչպես տեսնում ենք, հանրապետության ժողովրդական տնտեսության կառուցվածքը ընդհանուր առմամբ կրկնում է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության գծերը, բայց և ունի յուրահատկություններ: Աշքի է զարնում այն, որ Հայկական ՍՍՀ-ն դեռևս հետ է մնում ՍՍՀՄ միջին ցուցանիշներից տրանսպորտի ու կապի, որոշ շափով էլ արդյունաբերության ու շինարարության բնագավառում, բայց գերազանցում է դրանք լուսավորության, գիտության, առողջապահության և մյուս ոչ արտադրական ճյուղերի գծով:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ
ԲԱՇԽՈՒՄԸ ԸՆՏ ՑՑՈՒՂԵՐԻ (%)-ԸՆՐՈՒ**

	ՍՍՀՄ ՄԻՔԻՆԸ		Հայկական ՍՍՀ	
	1965 թ.	1985 թ.	1965 թ.	1985 թ.
Ամբողջ ժողովրդական տնտեսություն	100	100	100	100
Արդյունաբերութ. և շինարարություն	36	38	34	39
Գյուղատնտ. և անտառատնտեսութ..	31	20	34	20
Տրանսպորտ և կապ	8	9	6	7
Առևտուր, հասարակ. սնունդ, նյութատեխ. մատակարարում, մթերում	6	8	5	6
Առողջապահութ. ֆիզկուլտ. և սպորտ, սոց. ապահովագր., մշակույթ, գիտություն	14	18	15	20
Փող. տնտեսութ. այլ ճյուղեր (պետական, կոռպերատիվ, հասարակական կազմակերպություններ, կառավարման մարմիններ, բնակ.-կոմունալ տընտեսություն, կենցաղսպասարկում և այլն)	8	7	6	8

Որևէ երկրի տնտեսական զարգացման միտումները և վիճակը բնութագրող է ական ցուցանիշ է նյութական արտադրության կառուցվածքը, որը կարելի է արտացոլել ընդհանրական հասարակական արդյունքի միջոցով:

Անցած տասնամյակի ընթացքում ընդհանրական հասարակական արդյունքի նյութային կառուցվածքը կատարվող տեղաշարժերի միտումը ակնհայտ է. մեծանում է արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի ու կապի տեսակարար կշիռը, մինչդեռ գյուղատնտեսության տեսակարար կշիռը նվազում է:

Ներկայումս հանրապետության ընդհանրական հասարակական արդյունքը շուրջ 68% բաժին է ընկնում արդյունաբերությանը, 10—11% շինարարությանը, մոտավորապես նույնքանը գյուղատնտեսությանը՝ 2—2,5% տրանսպորտին և 6—7% նյութական արտադրության այլ ճյուղերին (առևտուր, նյութատեխնիկական մատակարարում, մթերումներ և այլն):

Հայկական ՍՍՀ սոցիալտնտեսական զարգացումը որոշվում է տարեկան ու հնգամյա պլաններով և 15—20 տարիների համար կազմվող պրոգնոզային փաստաթղթով: Ընթացիկ հնգամյակում՝ (1986—1990 թթ.) պլանավորված է հանրապետության ազգային եկամտի ծավալը ավելացնել մեկ քառորդով: Ապահովելով նաև արդյունաբերության համախառն

արտադրանքի բարձր աճ՝ 26%-ով, հնգամյա պլանը ելնում է առանցքա-
արկ ուղղությունից:

Ավելի տևական ժամանակաշրջանի համար մշակված ու հաստատ-
ված է «Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի զարգացման ու տեղա-
բաշխման մինչև 2005 թվականն ընկած ժամանակաշրջանի սխեման»,
որի համաձայն հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ կա-
տարգելու են լուրջ կառուցվածքային փոփոխություններ: Պետք է ավելի
խորանա հասարակական արդյունքի աճի նկատմամբ ազգային եկամտի
առաջանցիկ աճի միտումը: Դա պետք է ապահովի աշխատատար ու գի-
տատար ճյուղերի առաջնային զարգացմամբ, նյութախնայողությամբ ու
տեսուրսախնայողությամբ, և դրանք պետք է հենվեն գիտատեխնիկական
նվաճումների, նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ավելի լայն կիրառման
վրա: Կապահովվի մեքենաշինության առաջանցիկ զարգացում (տասնը-
հինգ տարում 3,5 անգամ, այդ թվում ուղղուէլեկտրոնիկայինը և սար-
քաշինությանը՝ 4 անգամ) և նրա բաժինը արդյունաբերության ճյուղային
կառուցվածքում կհասնի 58%-ի: Զարգացման համեմատաբար արագ
տեմպեր կունենան նաև թեթև, քիմիական, շինանյութերի, բժշկական,
մանրէակենսաբանական արդյունաբերության ճյուղերը:

Կշարունակվի նոր շինարարության հաշվին արդյունաբերական հա-
մալիքի հետագա զարգացումն ու կատարելագործումը. կկառուցվեն շուրջ
15 նոր ձեռնարկություն, տեղամաս, արտադրամաս:

Հողային ու ջրային ռեսուրսների սահմանափակության պատճառով
գյուղատնտեսության զարգացումը կհենվի միայն արտադրության ին-
տենսիվացման վրա: Բնակչության պահանջմունքները հիմնական մթերք-
ների գծով կապահովվեն տեղական արտադրության հաշվին, բացառու-
թյամբ հացահատիկի, մսի ու կաթնամթերքի, որոնք կներմուծվեն:

Կրարելավվի հանրապետության տեղը աշխատանքի միութենական
բաժանման համակարգում, կմեծանա նրա գերը երկրի միասնական ժո-
ղովրդատնտեսական համալիքի հզորացման ու ամրապնդման գործում:

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ճյուղային ու տա-
րածքային միավորների աշխարհագրական վերլուծությանը նվիրված են
դասընթացի հաջորդ բաժինները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ .

1. Բնութագրեք Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացման արդի մակարդակը:
2. Խնչակի՞ն է Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ճյուղային կառուց-
վածքը:

3. Որո՞նք են հանրապետության տնտեսական զարգացման ուղղությունները գլխավոր
հեռանկարում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ


6.1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԵԱՎՈՐ ՑՈՒՑԱՆՇԱԽԵՐԸ

Արդյունաբերությունը Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղն է։ Առաջին հերթին նրա զարգացման հետ են կապվում այն վիթխարի տնտեսական նվաճումները, որոնք ձեռք է բերել հանրապետությունը սոցիալիստական շինարարության տարիներին, նրանով է պայմանավորվում հասարակական արտադրության տեխնիկական ու կուլտուրական արդիական մակարդակը, բնական ու աշխատանքային ռեսուրսների օգտագործման աստիճանը։ Նա վիթխարի բարերար ազդեցություն է ունենում ժամանակակից հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա։

Արդյունաբերությանը որոշիչ դեր է պատկանում արտադրողական ուժերի տերիտորիալ կազմակերպման, երանց տարածական համակարգերի ձևավորման գործում։ Նա է այն գլխավոր գործոնը, որի շնորհիվ ստեղծվում ու զարգանում են ժամանակակից քաղաքները արդի քաղաքարթության յուրահատուկ կիզակետերը։ Արդյունաբերության ճյուղում ստեղծվում է Հայկական ՍՍՀ ընդհանուրական հասարակական արդյունքի ավելի քան 2/3-ը, այսինքն շուրջ կրկնակի անգամ ավելի, քան ժողովրդական տնտեսության մնացած բոլոր ճյուղերում միասին վերցրած։ Վերջապես արդյունաբերությունն է։ Օր հիմնականում որպաշամ է Հայկական ՍՍՀ ներկայիս արտադրական դիմագիծը և տեղը ՍՍՀՄ աշխատանքի տերիտորիալ բաժանման ժամանակակից համակարգումց

Հանրապետության էկոնոմիկայում արդյունաբերության կողմից նման տիրապետող դիրքերի նվաճումը ապահովվեց նրա բուռն աճի ու զարգացման շնորհիվ։ Սովետական իշխանության հենց առաջին տարիներից արդյունաբերության զարգացմանը բարձր տեմպ հաղորդվեց, որը շարունակվեց հետագայում և պահպանվում է նաև ներկայումս։ Այժմ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը գերազանցում է 1940 թ. ծավալը շուրջ 70 անգամ (իսկ 1913 թ. ծավալը ավելի քան 600 անգամ)։ Արդյունաբերության զարգացման տեմպերով Սովետական Հայաստանը ՍՍՀՄ միջին ցուցանիշը գերազանցում է կրկնակի շափով և միութենական հանրապետությունների շարքում գրավում է երկրորդ տեղը, զիջելով միայն Կիրգիզիային։

Վերջին տասնամյակում զարգացման միջին տարեկան տեմպերը որոշ շափով թուլացան և գտնվում էին 5—6% մակարդակի վրա։



Նկ. 13. Արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը (1940 = 1)

1981—85 թթ. ընթացքում հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը աճեց 33,2%-ով, իսկ ընթացիկ՝ 12-րդ հնգամյակում պլանավորված է 25,9%։ Այս թվերը նույնպես ավելի բարձր են, քան ՍՍՀՄ միջին ցուցանիշներն են։ Ընթացիկ հնգամյակում արդյունաբերության զարգացման նման բարձր տեմպերը նախատեսված են միայն Ուզբեկական ու Տաջիկական հանրապետությունների համար։ Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1987 թ. կազմեց 8,5 մլրդ. ռ.ռ.

Երկրի ինդուստրացումը, արդյունաբերության գերադաս զարգացումը եղել է Սովետական Միության կոմունիստական կուսակցության գլխավոր գիծը տնտեսական շինարարության բնագավառում։ Այն իրա-

կանացներիս ի նկատի են առնվել տարրեր հանրապետությունների ոռ շրջանների տեղական առանձնահատկությունները, կոնկրետ պայմաններն ու նախադրյալները:

Սովետական Հայաստանի համար մինչև 50-ական թվականները վճռական նշանակություն է ունեցել այնպիսի բնական ռեսուրսների առկայությունը, որոնց յուրացումը տեխնիկական տեսակետից դյուրին է, տնտեսապես շահագետ և որոնց օգտագործման հարցում շահագործված է ամրող երկրի տնտեսությունը: Այդպիսի ռեսուրսներից են բազմատեսակ մետաղային և ոլ մետաղային հանքատեսակները, էժան ջրաէներգետիկ պաշարները (դրանք դիտվել են որպես այդպիսին ընդհուպ մինչև 50-ական թվականների կեսերը), բազմազան ագրոկլիմայական ռեսուրսները և այլն:

Վերջին տարիներս հանրապետության արդյունաբերության զարգացման տեմպերը խթանող ավելի ակտիվ գործոնի դեր է կատարում աշխատանքային ռեսուրսների համեմատաբար արագ աճը ինչպես նաև գոյացող աշխատանքային ոեզերվները տեղում՝ հանրապետության սահմաններում օգտագործելու ձգտումը (տես գլուխ Յ-րդ): Վերջին տարիներս արդյունաբերության մեջ զբաղվածների թիվը տարեկան միջին հաշվով աճել է մոտավորապես 10 հազար մարդով: Այդպիսի տեմպեր պահպանվելու են առաջիկայում ևս: Դա նշանակում է, որ պետք է ապահովի այնքան նոր ձեռնարկությունների կառուցում և գործող ձեռնարկությունների այնպիսի ընդլայնում, որպեսզի պահանջած քանակի աշխատատեղեր ստեղծվեն ոլ միայն աշխատանքային տարիք մուտք գործող երիտասարդների, այլև արտադրական պրոցեսների ավտոմատացման ու մեքենայացման հետևանքով գործող ձեռնարկություններում ազատվող աշխատանքային ձեռքերի համար:

Քննարկելով արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը պահպանելու ուղիները, անհրաժեշտ է ի նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքը: Համեմատության համար բազա ծառայող նախահեղափոխական մակարդակը Հայաստանում այնքան ցածր էր, որ սովորական իշխանության առաջին տարիներին նույնիսկ ոլ մեծ ծավալի կապիտալ շինարարությունը, մեկ-երկու գործարանի ու ֆաբրիկայի կառուցումը կարող էր ապահովել ամրող արդյունաբերության համախառն արտադրանքի նկատելի աճ: Սակայն հետագայում արդյունաբերական հզորության անընդհատ աճի և համեմատության բազայի մեծացման պայմաններում լոկ նոր շինարարությունը, ինչքան էլ այն ծավալուն լիներ, չեր կարող արդյունաբերության զարգացման բարձր տեմպեր պահպանվել: Աստիճանաբար առաջին պլան էին մզվում զարգացման ինտենսիվ ուղիները՝ արտադրությունների կատարելագործումն ու նորա-

ցումը, գիտատեխնիկական նվաճումների ներդրման միջոցով աշխատանքի արտադրողականության բարձրացումը:

Այս միտումը նկատելի դարձավ հատկապես հետպատերազմյան տարիներին, իսկ ներկայումս արդեն տիրապետող է: Ընթացիկ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի ամբողջ աճի 95 %-ը ինչպես ասվեց, ապահովվում է գործող ձեռնարկությունների վերակառուցման, տեխնիկական վերազինման ու ընդլայնման հաշվին և միայն 5%-ը նոր ձեռնարկությունների գործարկման հաշվին:

Տնտեսաշխարհագրական առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող ցուցանիշ է արդյունաբերության համակենտրոնացման ու մասնագիտացման աստիճանը:

Համակենտրոնացման աստիճանը սովորաբար որոշում են ձեռնարկությունների մեծությամբ ըստ տարրեր ցուցանիշների՝ աշխատողների քանակի համախառն արտադրանքի ծավալի կամ արտադրական ֆոնդերի ընդհանուր արժեքի:

Արդյունաբերապարտադրական անձնակազմի քանակի ցուցանիշով Հայկական ՍՍՀ-ում տիրապետում են այն արդյունաբերական ձեռնարկությունները, որոնց աշխատողների թիվը կազմում է 200—1000 մարդ: Շուրջ 15 % են կազմում այն ձեռնարկությունները, որտեղ աշխատում են 100—200 աշխատողներ:

Մոտավորապես նույնանման պատկեր է ստացվում նաև այն դեպքում, երբ արդյունաբերական ձեռնարկությունները դասակարգում ենք ըստ համախառն արտադրանքի ցուցանիշի 20 մլն.-ից ավելի (մինչև 150 մլն. ռ.) ծավալի արտադրանք թողարկող ձեռնարկությունները, կազմելով հանրապետության ձեռնարկությունների ընդհանուր թվի ընդամենը 15 %-ը, թողարկում են արդյունաբերության համախառն արտադրանքի կեսից ավելին:

Հանրապետությունում առկա են նաև մի քանի հատկապես խոշոր գործարաններ, կոմբինատներ ու արտադրական միավորումներ, որոնցից յուրաքանչյուրի համախառն արտադրանքի ծավալը գերազանցում

1 Արդյունաբերական արտադրանքի համակենտրոնացումն ու մասնագիտացումը խթանելու և դրանց միջոցով էլ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակ էին հետապնդում արդյունաբերության կառավարման համակարգը բարելավելուն՝ արտադրական և գիտարտադրական միավորումներ ստեղծելուն ուղղված այն միջոցառումները, որոնք իրականացվեցին 70-ական թվականներին:

Դրանք փոքրաթիվ, բայց հզոր ձեռնարկություններ են, որոնցից մի քանիսի արդյունաբերապարտադրական անձնակազմի քանակը գերազանցում է 7000—8000 մարդուց: Դրանց արտադրանքի ծավալը գրեթե կզնակի անգամ ավել է, քան փոքր և միջին մեծության բայց ձեռնարկությունների արտադրանքի ծավալն է միասին վերցրած, թեև վերշններս արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր թվի 85%-ից էլ ավելի են:

է 150 մլ. ոռւրլուն։ Զեռնարկությունների ընդհանուր թվում սրանց քածինը չի հասնում նույնիսկ կես տոկոսի, բայց թողարկում են ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի 10 %-ից ավելին։

Հետ առաջին ցուցանիշի, այսինքն արդյունաբերաարտադրական անձնակազմի թվաքանակի, Հայկական ՍՍՀ արդյունաբերության համակենտրոնացումը գրեթե նույն աստիճանի վրա է գտնվում, ինչ որ ՍՍՀՄ-ինն է՝ ամբողջությամբ վերցրած։ Բայց մյուս ցուցանիշների՝ համախառն արտադրանքի և արդյունաբերաարտադրական հիմնական ֆոնդերի արժեքի գծով հանրապետության արդյունաբերության համակենտրոնացման մակարդակը զգալիորեն ցածր է ՍՍՀՄ միջին մակարդակից¹։

Արդյունաբերության համակենտրոնացման ու մասնագիտացման աստիճանը մի շարք այլ երեսույթներից բացի, սուղղակի կապի մեջ է գրտնըվում նաև նրա ճյուղային կառուցվածքի հետ։ Այստեղ դեր է խաղում այն հանգամանքը, որ արդյունաբերության տարրեր ճյուղերին հատուկ է կենտրոնացման ու մասնագիտացման տարրեր աստիճան։ Սովորաբար այդ աստիճանը ավելի բարձր է վառելիքաէներգետիկ, մետալուրգիական, ծանր քիմիայի, ծանր մեքենաշինության և մի քանի այլ ճյուղերում։ Մինչդեռ սննդի, թեթև, սարքաշինական, էլեկտրոնային, տեղական արդյունաբերության ճյուղերում այդ ցուցանիշները ցածր են։

Կախված այն բանից, թե արդյունաբերության կառուցվածքում որ ճյուղերն են գերակշռող, համակենտրոնացման ու մասնագիտացման մակարդակն էլ կարող է լինել բարձր կամ ցածր։

Սովետական Հայաստանի արդյունաբերության կառուցվածքը նույնպես անցած տասնամյակների ընթացքում արմատական փոփոխություններ է կրել, բարելավվել ու կատարելագործվել է, ավելի համապատասխանեցվել տեղական բնական ու տնտեսական պայմաններին, հանրապետության, ինչպես նաև ամբողջ Սովետական Միության շահերին։

Ինչպես տեսանք նախորդ բաժնում, Հայկական ՍՍՀ արդյունաբերության համար ներկայումս բնորոշ է հարուստ և բազմազան ճյուղային կառուցվածքը, հատկապես, եթե հաշվի ենք առնում հանրապետության փոքր շափերը։

Արդյունաբերության կառուցվածքը բնութագրող առավել ընդհանրական ցուցանիշը արտադրամիջոցների («Ա» խումբ) և սպառման առարկաների («Բ» խումբ) հարաբերակցությունն է։ Նախահեղափոխական շրջանում այդ ցուցանիշը կազմում էր 71 : 29, որը ագրարային, կիսագա-

¹ ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած թե՛ ձեռնարկությունների ընդհանուր թվում, թե՛ համախառն արտադրանքի ծավալում, թե՛ արդյունաբերաարտադրական ֆոնդերի գումարային արժեքում հատկապես մեծ է խոշոր և շատ խոշոր ձեռնարկությունների բաժինը։

ղութային տնտեսության պայմաններում պետք է համարել բավականին բարձր: Հստ որում, դա արտահայտում էր ոչ թե արտադրամիջոցների արտադրության իսկապես բավարար մակարդակը, այլ էկոնոմիկայի միակողմանի բնույթը: Այլ կերպ ասած, արդյունաբերության թերզարգացման և բազմաթիվ ճյուղերի բացակայության պատճառով առկա ճյուղերին՝ լեռնահանքային արդյունաբերությանն ու պղնձաձուլությանը մեծ բաժին են ընկնում:

Քսանական թվականներին առավել դժվարությամբ էին վերականգնվում «Ա» խմբի ճյուղերը, որի պատճառով արդյունաբերության ճյուղային կառուցվածքում գերակշռող դարձավ «Բ» խումբը: Հետագայում ինդուստրացման բաղաքականության շնորհիվ «Ա» խմբի արտադրանքի բաժինը անընդհատ ու արագ թափով ավելացավ և 1949 թ. արդեն գերազանցեց «Բ» խմբի արտադրանքին, իսկ 1965 թ. հասավ նույնիսկ 70%-ի, որը հանրապետության կոնկրետ պայմաններում ուսցիոնալ համարել չի կարելի: Այնուհետև արդյունաբերության զարգացման պահպանվող բարձր տեմպերի պայմաններում «Ա» խմբի արտադրության բաժինը իրավացիորեն սկսեց նվազել և ընթացիկ հնգամյակի սկզբում կազմեց 63% «Բ» խմբի 27% -ի դիմաց:

Այդ հարաբերակցությունը հիմնականում մոտենում է ռացիոնալին: Այն ապահովում է մի կողմից հանրապետության ակտիվ մասնակցությունը ՍՍՀՄ արտադրողական ուժերի ընդայնված վերարտադրությանը, մյուս կողմից՝ բնակչության համար սպառման առարկաների արտադրության զարգացմանը: Առաջիկայում դրանց հարաբերակցության մեջ վերջին տարիներին կատարվող փոփոխությունների միտումը կպահպանվի: Թեև ոչ արագ տեմպերով, բայց կաճի «Բ» խմբի բաժինը և կնքազի «Ա» խմբինը:

Ներկայումս Հայկական ՍՍՀ-ում գործում է 85 արտադրական ու գիտարտադրական միավորում, ինքնուրույն հաշվեկշռով աշխատող շուրջ 630 արդյունաբերական ձեռնարկություն և 2000-ից ավելի օժանդակ ձեռնարկություն, որոնք մտնում են ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող կազմակերպությունների կազմի մեջ:

ՍՍՀՄ վիճակագրական վարչության դասակարգման համապատասխան Հայկական ՍՍՀ տարածքում եղած արդյունաբերական ձեռնարկությունները խմբավորված են հետևյալ ճյուղային նամակիրների և ճյուղերի մեջ՝

Էներգետիկ համապիր


1. Էլեկտրաէներգետիկայի,

Մետալուրգիական համալիր

2. Աև մետալուրգիայի,

3. գունավոր մետալուրգիայի,
- Մերենաշինական համալիր
4. մեթենաշինության ու մետաղամշակման,
- Քիմիա-անտառային համալիր
5. ժիմիական և նավքաբիմիական
6. անտառային, փայտամշակման ու ցելյուլզի — բղբի,
- Ագրոարդյունաբերական համալիր
7. սննդի,
8. համակցված կերի,
9. շինանյութերի,
10. ապակու և նախնապակու — նենապակու,
11. քերե,
12. մանրէակենսաբանական,
13. պալիգրաֆիական,
14. այլ ճյուղեր:

Հիմք ընդունելով առավել մեծ տարածում ունեցող երեք կարևո-



Նկ. 14. Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը (տոկոսներով, ըստ 1982 թ. հանդարի 1-ի մեծածախ գների)

Արդյունաբերության ճյուղեր. 1 — էլեկտրաէներգետիկա, 2 — ժիմիական և նավքաբիմիական, 3 — մետաղամշակման և մետաղամշակում, 4 — անտառային, փայտամշակման և ցելյուլզի-բղբի, 5 — շինանյութերի, 6 — ապակու և նախնապակու, 7 — քերե, 8 — սննդի, 9 — ալրազագալության համար, 10 — այլ ճյուղեր:

րագույն ցուցանիշները՝ համախառն արտադրանքի ծագալը, արդյունաբերարտադրական անձնակազմի թվաքանակը և արդյունաբերարտադրական հիմնական ֆոնդերի արժեքը, կարող ենք Հայկական ՍՍՀ արդյունաբերության կառուցվածքում որոշել յուրաքանչյուր ճյուղի տեղն ու նշանակությունը:

Այդ քանակական ցուցանիշների համադրությունից պարզվում է, որ առաջին տեղն անվիճելիորեն պատկանում է մեժենաշինությանը: Երկրորդ տեղը զբաղեցնում է թերեւ արդյունաբերությունը, 3-րդը՝ սենյի արդյունաբերությունը, 4-րդը՝ հիմնական արդյունաբերությունը, 5-րդը գունավոր մետալուրգիան, 6-րդը՝ շինանյութերի արդյունաբերությունը: 7-րդը՝ էլեկտրաշիներգետիկան: Սրանց հաջորդում են անտառային, փայտամշակման և ցելյուլոզի-թղթի, ապակու և հախճապակի-ճննապակու, պոլիգրաֆիական և մյուս ճյուղերը:

Նախահեղափոխական Հայաստանի արդյունաբերության հետ (տես գլուխ 2-րդ, աղյուսակ 5) կատարվող համեմատությունը ցույց է տալիս, որ սովետական իշխանության տարիներին արդյունաբերության ճյուղային կառուցվածքում խոր արմատական տեղաշարժեր են կատարվել: Ստեղծվել են բազմաթիվ ժամանակակից ճյուղեր, որոնք արդյունք են տեղական բնական ու տնտեսական պայմանների ավելի ռացիոնալ ու բազմակողմանի օգտագործման:

Հայկական ՍՍՀ ժամանակակից արդյունաբերության ճյուղային կառուցվածքը հիմնականում պետք է համարել ռացիոնալ: Ելնելով առկա հնարավորություններից, այն գլխավոր գծերով ապահովում է ճյուղերի համամասնական զարգացումը և բավարարում է զարգացած ինդուստրիալ հասարակության պահանջներին: Հատկանշական է այն, որ առաջնակարգ տեղ գրավող ճյուղերի շարքում են գիտատեխնիկական առաջադիմությունը որոշող այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են մեքենաշինությունը, էլեկտրաշիներգետիկան և քիմիական արդյունաբերությունը:

Այս բոլորով հանդերձ պետք է նկատի ունենալ, որ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը ոչ թե մեկընդմիշտ տրված անփոփոխ մեծություն է, այլ դիմամիկ երևույթ, որը գիտության ու տեխնիկայի առաջընթացի հիման վրա և կյանքի պահանջներին համապատասխան անընդհատ փոփոխվում է, բարելավվում ու կատարելագործվում:

Այդ օրինաշափությամբ էլ Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը նույնպես կարիք ունի անընդհատ բարելավման ու կատարելագործման, որը և իրականացվում է գիտական համապատասխան պլանավորման միջոցով:

1. Ինչպիսի՞ք են Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացման տեմպերը։ Որո՞նք են Հայկական ՍՍՀ արդյունաբերական զարգացման նախադրյալները։
2. Ինչպիսի՞ն է Հայկական ՍՍՀ արդյունաբերության համակենտրոնացման մակարգակը։
3. Բնութագրեք Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքը։

6.2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՃՅՈՒՂԵՐԻ ԲՆՈՒԹԱՁԻՐԸ:
ՎԱՐԵԼՔԱՀՆԵՐԴՆԵՏԻԿ ՀԱՄԱԼԻՐ

ՍՍՀՄ արդյունաբերության ճյուղային դասակարգման համակարգում ճյուղերի հերթականությունը սահմանված է ըստ այն բանի, թե ինչպիսին է նրանց բազային նշանակությունը, ինչպիսին է նրանց դերը արդյունաբերության մյուս ճյուղերի և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման համար։

Նպատակահարմար է, հետեւյով ավանդույթին, Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղերի վերլուծությունը ևս կատարել ՍՍՀՄ կենտրոնական վիճակագրական վարչության մշակած դասակարգման համաձայն, անկախ հանրապետությունում նրանց գրադեցրած տեղից^{*}։

Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը հանրապետության ամենակարևոր ճյուղային համալիրներից է և վճռական դեր է կատարում արդի ինդուստրիալ հասարակության նյութատեխնիկական բազայի զարգացման գործում։ Նա է, որ ապահովում է հասարակական արտադրության բոլոր ճյուղերի և բնակչության հարաճուն պահանջարկը էներգիայի տարրեր տեսակների գծով։

Սովետական Հայաստանի տարածքում, ինչպես հայտնի է, ամբողջովին բացակայում են հանքային վառելիքի արդյունաբերական պաշարները։ Պրակտիկ նշանակություն ունեն միայն ջրաէներգետիկ ռեսուրսները, որոնց ընդհանուր պաշարներն էլ (4,7 մլրդ կվտ-ժամ) խիստ սահմանափակ են։ Արիվ օգտագործելու դեպքում նրանք կարող են ապահովել հանրապետության ընդհանուր վառելիքաէներգետիկական պահանջարկի լոկ 1—3%-ը, և էլեկտրաէներգիայի պահանջարկի ընդամենը մեկ երրորդը։ Նշենք, որ ներկայումս այդ պաշարների կեսն է միայն օգտագործվում։

Զնայած այս բոլորին, Սովետական Հայաստանի վառելիքաէներգետիկ պահանջարկը բավարարվաւ է լրիվ շափով։ Եվ դա շնորհիվ այն բանի, որ ՍՍՀՄ ամբողջական էկոնոմիկայի և նրա կազմում էլ մեր

* Սննդի արդյունաբերության ճյուղը, հաշվի առնելով նրա ամենասերա կապը գյուղատնտեսության հետ, կքննարկվի վերջինիս հետ մեկտեղ ազգարդյունաբերական համակերին նվիրված բաժնում։

Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացումը հիմնը-վում է ամբողջ երկրի նյութական ռեսուրսների, դրանց թվում և վառելիքաչներգետիկ ռեսուրսների համատեղ պլանային օգտագործման վրա։ Այդ ռեսուրսները պլանային կարգով բաշխվում են հանրապետությունների մեջ ի շահ յուրաքանչյուրի համակողմանի զարգացման և ամբողջ Սովետական Միության հետագա հզորացման։

Չունենալով սեփական հանույթ, Սովետական Հայաստանը տարեկան ծախսում է միլիոնավոր տոննաներ (պայմանական վառելիքի վերածած) ածուխ, նավթամթերքներ ու բնական գազ։ Մրանք կազմում են հանրապետության վառելիքաչներգետիկ հաշվեկշռի շուրջ 98%-ը և ծախսվում, են առաջին հերթին էլեկտրաէներգիայի արտադրության ու տեխնոլոգիական նպատակներով։

Ածուխ (հիմնականում քարածուխ) ներմուծվում է Դոնբասից, մասմբ Վրաստանից և օգտագործվում է տեխնոլոգիական և շերմային էներգիա ստանալու նպատակով։

Նավթամթերքների առաքման գլխավոր շրջանները՝ Ադրբեյջանը, Հյուսիսային Կովկասը և Պովոլյան են, Վառելիքի այս տեսակները սպառվում են գլխավորապես էլեկտրակայանների (մագութ), ավտոմոբիլային տրանսպորտի և ներքին այրման շարժիչներ ունեցող գյուղատնտեսական և այլ տիպի մեքենաների կողմից (բենզին, լիգնոլին, քսայուղեր և այլն). Մասմբ էլ բնակչության կենցաղում (կերոսին)։

Բնական գազը Սովետական Հայաստան մուտք գործեց միայն 1960 թ., բայց այսօր արդեն հանրապետության վառելիքաչներգետիկական հաշվեկշռում նրա բաժինը 50%-ից անցնում է։ Այժմ հանրապետությունը հզոր գազամուղերով կապված է անդրկովկասյան միասնական ցանցին և վերջինիս միջոցով էլ՝ Հյուսիսային Կովկասի ու Արևմբեյյան Սիբիրի հանքավայրերին։ Բնական գազը օգտագործվում է որպես վառելիք գլխավորապես ջերմաէլեկտրակայաններում, քաղաքային տնտեսությունում ջեռուցման նպատակով, կենցաղում, ինչպես նաև քիմիական որոշ արտադրությունների համար որպես հումք։

Հանրապետության բոլոր քաղաքները և գյուղական բնակավայրերի մի մասը միացված են գազամուղների ցանցին, մյուս մասը օգտըվում են հեղուկ գազից։ Գազի պահանջարկի և առաջարկի սեզոնային տարբերությունները փակելու և հատկապես ձմռան ամիսներին գազամատակարման խափանումներ թույլ շտալու համար կառուցված է ստորգետնյա գազամբար, որը ներկայումս ընդարձակվում է։

Մագիստրալային գազամուղը սկսվում է Ադրբեյջանի Աղստաֆաքաղաքից և անցնելով Խենան-Սևան-Հրազդան ուղղությամբ, հասնում է

ծրեան: Նրա ճյուղավորումները տարածվում են դեպի Կիրովական, Ալավերդի, Ստեփանավան, Լենինական, Սևանի ավազան ու Ջերմուկ, ապա Արարատյան դաշտում՝ դեպի Արտաշատ—Արարատ—էջմիածին—Հոգտեմբերյան ուղղություններով:

Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս նոր հզոր գազամուղի շինարարության ավարտումով (1987 թ.) հնարավորություն է ստեղծվել նկատելիորեն ավելացնել նաև Հայկական ՍՍՀ-ին մատակարարվող բնական գազի ծավալը: Հանրապետության ներսում կկառուցվեն թերդ—Սևան (Աղբեզանական ՍՍՀ Ղազախ քաղաքից), Ձերմուկ—Ազիզբեկով—Եղեգնաձոր գազատարները, կակսվի Երևան քաղաքի օղակածև և Կիրովական—Լենինական—Հոգտեմբերյան—Երևան գազատարների շինարարությունը:

Ինչպես գիտենք, ժողովրդական տնտեսության մեջ օգտագործվում են բնության մեջ հանդիպող էներգիայի ամենատարբեր տեսակները՝ քիմիական (ածուխ, նավթ, գազ, տորֆ, այրվող թերթաքարեր), ջերմային (արեգակնային ուղղակի ճառագայթում, երկրի ընդերքի ջերմություն), մեխանիկական (հոսող ջուր, քամի և այլն), մկանային (քարշող անասունների), Դրանք վերափոխվում են մեկը-մյուսին՝ կախված կիրառման բնագավառի տեխնոլոգիական պահանջներից: Առավել արդիական ու ուացիոնալ է վառելիքաէներգետիկ ռեսուրսների այն հաշվեկշիռը, որտեղ ավելի մեծ է էլեկտրաէներգիայի բաժինը, այլ կերպ ասած, որտեղ ավելի մեծ բանակության էներգիայի այլ տեսակներ են վերափոխվում էլեկտրական էներգիայի: Սա նախադրյալներ է ստեղծում տնտեսության էլեկտրիֆիկացման ավելի բարձր մակարդակ ունենալու համար: Իսկ էլեկտրիֆիկացումը գիտատեխնիկական առաջադիմության ամենաարդյունավետ ու հեռանկարային ուղղություններից մեկն է:

Սովետական Հայաստանում վառելիքաէներգետիկ ռեսուրսների մեծ մասը վերափոխվում է էլեկտրական էներգիայի: Բավական բարձր է էլեկտրիֆիկացման մակարդակը: Դեռևս 1960 թ. առաջինը ՍՍՀՄ-ում էլեկտրականություն ստացան հանրապետության բոլոր բնակավայրերը, իսկ 1973 թ. ավարտվեց քաղաքային ու գյուղական բոլոր բնակարանների էլեկտրիֆիկացումը:

Ներկայումս բնակչության մեկ շնչի հաշվով հանրապետությունում արտադրվում է 4,5 հազ. կվտ-ժամ էլեկտրական էներգիա, որը որոշ շափով պակաս է ՍՍՀՄ միջին ցուցանիշից, բայց բազմիցս անգամ գերազանցում է իրանի ու Թուրքիայի մակարդակը, ավելին է, քան Խուզիայինը.

Սովետական Հայաստանի ժամանակակից էլեկտրատնտեսությունը իրենից ներկայացնում է մի բարդ արտադրական օրգանիզմ: Դա հանրապետության միասնական էներգահամակարգն է, որը ապահովում է էլեկտրաէներգիայի արտադրությունը, բաշխումը հանրապետության տարածքում և հաղորդումը սպառողին: Այժմ գործում են 18 էլեկտրա-

կայան, որից մեկը՝ ատոմային, Յ-ը՝ ջերմային և 14-ը՝ հիդրօվլիկ։ Դրանց տեղակայված հզորությունը 1987 թ. կազմել է 3,5 մլն. կվտ, որից ջերմաէլեկտրակայաններ՝ 1,78 մլն. կվտ, հիդրոէլեկտրակայաններ՝ 0,94 մլն. կվտ և ատոմային՝ 0,82 մլն. կվտ, իսկ տարեկան գումարային արտադրությունը՝ 14,9 մլրդ. կվտ-ժամ, որից հիդրոէլեկտրակայաններինը 1,6 մլրդ. կվտ-ժամ։

Դեռևս 1960 թ. Հայկական ՍՍՀ-ում ստացվող ամբողջ էլեկտրաէներգիան թողարկվում էր հիդրոէլեկտրակայաններում, մինչդեռ ներկայումս դրանց բաժին է ընկնում ամբողջ արտադրության միայն 11%-ը։ Այս թիվը առաջիկայում ավելի է նվազելու։ Դա նշանակում է, որ Սովետական Հայաստանը նախկին գուտ «հիդրոէներգետիկ» հանրապետությունից արդեն դարձել է ջերմային ու ատոմային էներգետիկայի հանրապետություն։

Խնացես նախահեղափոխական ժամանակաշրջանում, այնպես էլ սովետական իշխանության առաջին տարիներին հանրապետությունում կառուցվում էին միայն մեկուսացված («ինքնավար») մանր էլեկտրակայաններ։ Առաջին էլեկտրակայանը, որ կառուցվեց սովետական իշխանության օրոք, ծրեան ՀԷԿ-1-ն էր (1926 թ.), առաջին շրջանային էլեկտրակայանը Զորագէսն էր, որ գործարկվեց 1932 թ.։ Դա միաժամանակ էլեկտրահաղորդման գծերի միասնական ցանցի ստեղծման սկիզբն էր։ Սրան հաջորդող բոլոր էլեկտրակայանները, բացառությամբ մի քանի գյուղական մանր հէկերի, անմիջապես միացվում էին էներգացանցին և կատարում շրջանային կայանի ֆունկցիա։


Հայկական ՍՍՀ առավել հզոր էլեկտրակայաններն են (հազ. կվտ). Հրագդանում պետական շրջանային էլեկտրակայանը (ՊՇԷԿ)՝ 1.150

Հայկական ատոմային էլեկտրակայանը (ՀԱԷ)՝ 820

Երևանի ջերմաէլեկտրակայանը (ԶԷԿ)	550
Գյումարչի հէկը	218
Տաքեի հէկը	157
Չամբի հէկը	151
Քանաքեռի նէկը	102

Մնացած էլեկտրակայաններից յուրաքանչյուրի տեղակայված հզորությունը լի հասնում 100 հազ. կվտ-ի։ Դրանց թվում համեմատաբար խոշորներն են Աթարբեկյանի, Արգնու, Ծրեանի հէկերը և Կիրովականի ջերմաէլեկտրակենտրոնը։

Ընթացիկ հնգամյակում նախատեսվում է հանրապետության էլեկտրաէներգետիկական հզորությունը ավելացնել շուրջ 20%-ով։ Շարք կմտնի Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանը Որոտան գետի վրա, Կերրկ-



Նկ. 15. Հայկական ՍՍՀ խոշորագույն՝ Գյումուշի ՀԷԿ-ը:

Նապատկվի Հրազդանի ՀԷԿ-ի հզորությունը, կվերակառուցվի Կիրովականի ՀԷԿ-ը։ Մի քանի հիդրոէկտրակայաններ կկառուցվեն մանր գետերի վրա։ Միաժամանակ կնախապատրաստվի Հայկական ԱԷԿ-ի փակումը։

Արդիական մակարդակի վրա է գտնվում էլեկտրաէներգիայի բաշխման գործը։ Էլեկտրահաղորդման բարձր լարման մագիստրալային գծերի և բաշխիչ խիտ ցանցի (ցածր լարման) միջոցով միասնական կառավարման դիսպետչերական կենտրոնը պահանջվող լարվածության ու քանակի էլեկտրաէներգիան հասցնում է սպառողներին։ 1975 թ. սկսած հարապետության բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրահաղորդման գծերի պետական ցանցին։

Միջնարապետական նշանակություն ունեն Աղստաֆա (Աղրբեզանական ՍՍՀ)՝ հշկան—Սկան—Աթարբեկյանի հէկ 330 հազ. և Հրազդան—Կիրովական—Թրիլիսի 220 հազ. վոլտ լարվածության էլեկտրահաղորդման

գծերը, որով Հայկական ՍՍՀ-ն միացված է Անդրկովկասյան միասնական էներգահամակարգին:

Հանրապետության ներսում առավել երկարներից ու հզորներից են 220 հազար վոլտ լարվածություն ունեցող Աթարքեկյան հէկ-Սևանի ավագան—Եղեգնաձոր—Շինուհայր—Քաջարան, Աթարքեկյան հէկ-Երևան—Եղեգնաձոր, Աթարքեկյան հէկ—Կիրովական—Ալավերդի, Կիրովական—Լենինական գծերը: Մրանցից զեպի հանրապետության մյուս էական տնտեսական կենտրոններն են ճյուղավորվում 110 և 35 հազար վոլտ լարվածության գծեր: Իսկ սրանք էլ իրենց հերթին սկիզբ են տալիս ավելի ցածր լարվածություն ունեցող գծերին, որոնք էլ հենց կազմում են բաշխիչ ցանցը: Տարրեր լարվածության գծերի միացումն ու համատեղ աշխատանքը ապահովում է տրանսֆորմատորային հարյուրավոր էլեկտրական ենթակայանների շնորհիվ, որոնք կոչված են էլեկտրական հոսանքին հաղորդել համապատասխան լարվածություն և հասցնել այն սպառողին:

Հայկական ՍՍՀ էլեկտրանաշվեկշոփ առանձնահատկությունն այն է, որ տեղում արտադրված էլեկտրական էներգիան ոչ միայն բավարարում է հանրապետության ներքին պահանջները, այլև հնարավորություն ունի զգալի քանակությամբ էլեկտրաէներգիա (արտադրվածի շուրջ 15%) տրամադրել Անդրկովկասյան էներգահամակարգին՝ հարևան հանրապետությունների կարիքների համար: Մինչդեռ 60-ական թվականների կեսերին, երբ խիստ դանդաղել էր էլեկտրաէներգիայի արտադրության աճը, առանձին տարիներ Հայկական ՍՍՀ-ն իր կարիքների ավելի քան 1/3-ը բավարարում էր Անդրկովկասյան միացյալ էներգահամակարգի հաշվին:

Ժողովրդական տնտեսության տարրեր բնագավառներում էլեկտրաէներգիայի դերը ճիշտ գնահատելու տեսակետից հետաքրքիր է ծանոթանալ նրա սպառմանը ըստ ճյուղերի: Էլեկտրաէներգիայի հիմնական սպառողը եղել և մնում է արդյունաբերությունը. նրան շինարարության հետ միասին բաժին է ընկնում հանրապետությունում ժախսված էլեկտրաէներգիայի մոտ երեք քառորդը: Մոտավորապես 4%-ը բաժին է ընկնում տրանսպորտին, նույնքան էլ գյուղատնտեսությանը: Մնացածը ծախսվում է այլ ճյուղերում՝ արտադրական և կոմունալ-կենցաղային նպատակների համար:

Հատկանշական է, որ այժմ էլ Հայկական ՍՍՀ էլեկտրաէներգիայի սպառման մեջ արդյունաբերության բաժինը զգալիորեն ավելի է, քան ամբողջությամբ վեցրած ՍՍՀՄ-ում: Սա բացատրվում է մեզանում մի տևական ժամանակ տիրապետած այն քաղաքականությամբ, որի համաձայն զարկ էր տրվում էլեկտրատար ճյուղերի զարգացմանը: Այս ցու-

ցանիշը շատ ավելի բարձր է եղել, առանձին տարիներ գերազանցելով նույնիսկ 85%-ին։ Վերջին տարիներս էլեկտրատար արտադրության զարգացումը սահմանափակելու կուրս վերցվեց, որն իր հերթին նպաստեց հանրապետության ժողովրդական տնտեսությունը էլեկտրաէներգիայով ապահովելու կարեոր պրոբլեմի լուծմանը։ Դա միաժամանակ հնարավորություն տվեց ավելի մեծ քանակությամբ էլեկտրական էներգիա տրամադրելու մյուս ճյուղերին։

Արդյունաբերության մեջ տարբերվում են էլեկտրաէներգիայի օգտագործման երկու գլխավոր բնագավառ՝ շարժիչ ուժի ստացումը և տեխնոլոգիական պրոցեսները։ Էլեկտրատար ճյուղերում տեխնոլոգիական նպատակներով ծախսվող էլեկտրաէներգիայի քանակը շատ ավելի մեծ է։ Այդ տեսակետից հետաքրքրական է մեր հանրապետությունում կատարվող տեղաշարժը։ Դեռ 1960 թ. արդյունաբերության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի մոտավորապես $\frac{3}{4}$ ծախսվել է տեխնոլոգիական նպատակներով, մինչդեռ ներկայումս այդ ցուցանիշը պահանջանիսկ $\frac{1}{3}$ -ից։ Այդ նույն ժամանակի շարժիչ ուժի ստացման համար ծախսվող էլեկտրաէներգիայի բաժինը աճելով հասել է ավելի քան 60% -ի։

Հաշվի առնելով տեղական վառելիքաչներգետիկ ռեսուրսների պահանջ, հանրապետության էլեկտրահաշվեկշռում դիտվող նման տեղաշարժերը պետք է գնահատել դրականորեն և առաջիկայում առավել եռանդագին խթանել դրանց զարգացումը։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԳՐԱՆՅԵՐ

1. Հայկական ՍՍՀ-ն ինչպե՞ս է ապահոված վառելիքաչներգետիկ ռեսուրսներով, որո՞նք են վառելիքի առանձին տեսակների առաքման գյուղավոր աղբյուրները։
2. Բնութագրեք Հայկական ՍՍՀ էլեկտրաէներգետիկական տնտեսությունը։
3. Որո՞նք են Հայկական ՍՍՀ էլեկտրահաշվեկշռի առանձնահատկությունները։

6.3. ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԹՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեր հանրապետության համար ավանդական է գունավոր մետաղագիտն, որը, սակայն, սովետական իշխանության տարիներին անձանաշելիորեն փոխվել է, արմատապես վերակառուցվել ու ընդարձակվել։

Հանրապետության արդյունաբերության այս ճյուղը բավականին մեծ բաժին ունի ամբողջ երկրի մասշտարով մի շարք արժեքավոր մետաղների արտադրության ծավալում։ Բացի այդ, նա աշքի ընկնող տեղ է գրավում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ոչ միայն արդյունաբերության համախառն արտադրանքի շափերով ու արդյունաբերաբարտադրական անձնակազմի թվով, այլև իր բազային նշա-

Նակությամբ և այն բարերար ներգործությամբ, որ ունեցել է և ունի մի քանի հարակից ճյուղերի (մեքենաշինության, քիմիական արդյունաբերության) ձևավորման ու զարգացման վրա:

Գունավոր մետալուրգիան այն փոքրաթիվ ճյուղերից է, որում կատեխնոլոգիական ստաղիաների լրիվ շղթա՝ սկսած հանքանյութի արդյունահանումից մինչև գլանվածքի ստացումը: Մեծ է թափոնների և ուղեկից նյութերի մշակման բազայի վրա լրացուցիչ արտադրությունների կազմակերպման հնարավորությունը: Այս հատկանիշի շնորհիվ է որ գունավոր մետալուրգիան բազմաթիվ տեխնոլոգիական-արտադրական կապերով սերտորեն առնչվում է արտադրության շատ այլ բնագավառների հետ, թափանցում է մեծ թվով ճյուղերի ու արտադրությունների մեջ և դրանով իսկ հանրապետության ամբողջ արդյունաբերական համակերպության մեջ:

Հայկական ՍՍՀ գունավոր մետալուրգիան ներկայացված է պղնձի, մոլիբդենի, ալյումինի, ոսկու, ցինկի և կապարի արտադրություններով: Դրանք կենտրոնացված են Ալավերդու լեռնամետալուրգիական, Զանգեզուրի պղնձամոլիբդենային, Ագարակի պղնձամոլիբդենային, Զորի ոսկու կոմբինատներում և Քանաքեռի ալյումինի գործարանում,

Հիշատակված արտադրություններից յուրաքանչյուրը աշքի է ընկնում տեխնոլոգիական ավարտվածության տարբեր աստիճանով: Առայսօր ամբողջացած է միայն պղնձի արտադրության տեխնոլոգիական շղթան: Այն սկսվում է պղնձի հանքաբարի արդյունահանումից, որն իրականացվում է Քաջարանում, Ագարակում, Ղափանում և Շամլուղում, հիմնականում բաց եղանակով (ստորգետնյա արդյունահանում կատարվում է Շամլուղում): Արդյունահանված հանքանյութը տեղում ենթարկվում է հարստացման և ստացվում է խտանյութ, որն ամբողջությամբ ծովզվում է Ալավերդու կոմբինատում, Այստեղ ևս պղնձից բացի ստանում են նաև գտված, վայերբասային պղինձ, պղնձի գլանվածք և պղնձափոշի:

Պղնձի արտադրության բուն պրոցեսը սրանով ավարտվում է, սակայն այդ պրոցեսը միաժամանակ սկիզբ է դնում շատ կարենոր արտադրությունների: Սև պղնձի էլեկտրազուման հետևանքով գոյանում են թափոններ՝ էլեկտրալիտային շլամ, որը շատ արժեքավոր կիսաֆարբիկատ է ազնիվ, հազվագյուտ և ցրված մետաղների ստացման համար և օգտագործվում է հանրապետության սահմաններից դուրս:

Սև պղինձ ստանալու համար խտանյութը ծովզելիս (հրամետալուրգիական պրոցես) անջատվում են մեծ քանակությամբ ծծմբային գազեր, որոնք ծծմբաթթվի արժեքավոր ելանյութ են հանդիսանում: Ծծմբային գազերի արտադրական օգտագործումը ոչ միայն անհրաժեշտ է շրջակա միջավայրը նրանց կործանարար ազդեցությունից փրկելու

Համար, այլև հնարավորություն է տալիս նույն ձեռնարկությունում ունենալ ժողովրդատնտեսական մեծ արժեք ներկայացնող ծծմբաթթվի մեծածավալ արտադրություն:

Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի արտադրանքում զգալի տեղ է գրավում պղնձարջասապը, որը միութենական և միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունի:

Ի տարբերություն պղնձաձուլության, մոլիբդենի արտադրությունը Սովետական Հայաստանում շատ ավելի երիտասարդ է, հիմնադրվել է 50-ական թվականներին: Ներկայումս այն առաջատար տեղ է գրավում հանրապետության գունավոր մետալուրգիայում և մեծ բաժին ունի մոլիբդենի արտադրության միութենական հաշվեկշռում: Զնայած այն բանին, որ վերջին տարիներս երկրի արեկելյան շրջաններում խիստ ավելացել է այս արժեքավոր հանքանյութի հանույթը, Հայկական ՍՍՀ-ն շարունակում է պահպանել իր նշանակալից դերը, որը գիխավոր հեռանկարում ևս չի նվազելու:

Մոլիբդենի արտադրության տեխնոլոգիական ստադիաների շղթան հանրապետության տարածքում գեռնս չի ավարտվում: Բացակայում է մետաղային մոլիբդենի ստացման ստադիան: Ե՛վ Թաշարանում, և՛ Ագարցակում կատարվում է հանքանյութի արդյունահանում (բաց եղանակով) և հարստացում միայն¹: Թողարկող մոլիբդենային խտանյութը ուղարկվում է հանրապետությունից դուրս: Պետք է հասունացած համարել այդ խտանյութը տեղում մշակելու և մետաղային մոլիբդեն ստանալու հարցը: Նրա դրական լուծումով կավարտվի մոլիբդենի արտադրության տեխնոլոգիական ստադիաների շղթան ևս:

Հայկական ՍՍՀ գունավոր մետալուրգիան 1970-ական թվականներին հարստացավ մի կարևոր ենթաճյուղով ևս՝ ոսկու հանքաքարի արդյունահանուրյամբ ու վերամշակումով: Ոսկու հանքաքարը, որն առաջին արդյունահանվում է միայն ջողոված, վերամշակվում է Արարատի ոսկու կորզման կոմբինատում, հանույթի վայրից շուրջ 200՝ կմ հեռավորության վրա: Հանքանյութի վերամշակման արտադրությունը աշքի է ընկնում թունավոր թափունների մեծ ծավալով: Նրա կառուցման վայրը որոշելիս վճռական նշանակություն է ունեցել Սևանի ավագանի բնությունը և լճի ջրային պաշարները շաղտութելու հանգամանքը:

Հանքանյութի վերամշակումը հանքավայրին մոտիկ՝ Սևանի ավագանում կազմակերպելու դեպքում անխուսափելի էր դառնում լճի թունավորումը:

¹ Սինչե վերջին տարիներս գործում էր նաև Դաստակերտի պղնձամոլիբդենային կոմբինատը: Այժմ այն փակված է հանքավայրի պաշարների սպառման պատճառով:

Այս ենթաճյուղում նույնպես տեխնոլոգիական ստադիաների շղթան իր ավարտին չի հասնում, ընդհատվելով ոսկեփոշու թողարկումով։ Ընթացիկ հնգամյա պլանով շահագործման են հանձնվելու նաև Մեղրաձորի ու Լիճքվազի ոսկու հանքավայրերը։

Բազմամետաղային հանքանյութի հարստացման միակ ձեռնարկությունը Սխմբալայի ֆաբրիկան է, որտեղ ոչ հեռու գտնվող Շամլուղի հանքավայրի բազայի վրա ստացվում է ցինկի և կապարի խտանյութ։ Ինթացիկ հնգամյակում շահագործման կհանձնվի նաև Շահումյանի բազմամետաղային հանքավայրը Ղափանում։

Հանրապետությունում զգալի տեսակարար կշիռ ունի Փլումինի արտադրությունը, որը հիմնադրվեց հետպատերազմյան առաջին տարիներին Երևանում (Քանաքեռի ալյումինի գործարան)։ Տեխնոլոգիական ստադիան ընդգրկում էր այսպես կոչված «բարձր հարկերը», այն է՝ մետաղային ալյումինի էլեկտրաձուլումը, գլանվածքի, ինչպես նաև փայլաթիթեղի (Փոլգա) ստացումը։ Անհրաժեշտ հումքը արգնահողի (կավահող) ձևով ստացվում էր Միության հեռավոր շրջաններից և արտասահմանից¹, Վերջերս էկոլոգիական նկատառումներով գործարանում դադարեցվեց առաջնային ալյումինի էլեկտրաձուլումը, որը մեծ շափերով աղտոտում էր Երևան քաղաքի օդային ավազանը, և այժմ այստեղ թողարկվում է միայն տարրեր պրոֆիլի գլանվածք և բազմաբնույթ փայլաթիթեղ։

Ամփոփելով ասվածը գունավոր մետալուրգիայի մասին և հաշվի առնելով հանրապետության ներսում, ինչպես նաև ՍՍՀՄ այս ճյուղում ձևավորվող իրադրությունը, կարող ենք ընդգծել, որ նրա հեռանակարային զարգացման պայմանները բարենպաստ են։ Ապագայում էլ ամելու է ճյուղի արտադրանքի նկատմամբ միութենական ու տեղական պահանջակը, բարձր են լինելու ճյուղի տեխնիկատնտեսական ցուցանիշները, որոնք և ապահովելու են հանրապետության ձեռնարկությունների բարձր մրցունակությունը երկրի նույնատիպ ձեռնարկությունների շարքում։

Հետագա զարգացումը ապահովելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք տնտեսական, տեխնիկական ու էկոլոգիական պրոբլեմներ, որոնց շարքում հարկ է առանձնացնել հատկապես հետևյալները՝

ա) երկրաբանական-հետախուզական աշխատանքների ծավալումը և ճյուղի հումքային բազայի ընդլայնումը,

¹ Նախատեսվում էր Թեժ սարի հանքավայրի նեֆելինային սիենիտների կոմպլեքսային օգտագործումը և արգնահողի ստացումը տեղում՝ այդ նպատակով կառուցվող Հրազդանի լեռնագիտական հզոր կոմբինատում։ Սակայն Մարմարիկի հովտի հանգստի գոտու բնական միջավայրի պահպանության նկատառումներով, ինչպես նաև հումքի մշակման տեխնոլոգիայի թերությունների պատճեռով 1977 թվականից դադարեցվեց կոմբինատի կառուցումը։ Հանրապետությունում սեփական արտադրության արգնահոգ ունենալու հարցը իր լուծումը չստացվալ։

բ) արդյունաբերական պաշարների կոնդիցիայի բարձրացումը, որը հնարավորություն կտա օգտագործելու նաև համեմատաբար աղքատ հանքանյութը,

գ) հանքանյութի օգտագործման կոմպլեքսայնության աստիճանի բարձրացումը և դրա պարունակած նաև մյուս մետաղների ու օգտակար տարրերի կորզումը,

դ) արտադրության՝ հանրապետությունում բացակայող տեխնոլոգիական ստադիաների ստեղծումը, որն ավելի ամբողջական ու կոմպլեքսային կդարձնի ճյուղը, կբարձրացնի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման աստիճանը, հետեւապես և՝ արտադրության արդյունավետությունը,

ե) բնական միջավայրի վրա ճյուղի ձեռնարկությունների բացասական ազդեցության վերացումը: Այս հանգամանքը ոչ միայն թելադրում է տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործում և անթափոն արտադրությունների ստեղծում, այլև առանձին արտադրությունների փակում կամ տեղափոխում:

Սև մետալուրգիան Հայկական ՍՍՀ-ում ներկայացված է միայն մասնակիորեն, ճյուղի հիմնական արտադրությունն իր տեխնոլոգիական գլխավոր ստադիաներով հանդերձ (երկաթաքարի հանույթ, հարստացում, շուգունի ծովում, պողպատի ծովում, գլանվածքի ստացում) բացակայում է, բայց առկա են նրա որոշ օժանդակ ու հարակից արտադրություն-



Նկ. 16. Բումանյանի հրակայուն աղյուսի գործարանում:

Ներ: Դրանք են՝ հրակայուն նյութերի արտադրությունը (Թումանյանի հրակայուն նյութերի գործարան) և արտադրական նշանակության մետաղակիրերի արտադրությունը (Չարենցավանի կենտրոնական ձուլարան),

Առանձնահատուկ տեղ է գրավում Երևանի մաքուր երկաթի փորձարական գործարանը, որը ներկայում արտադրանք տալով հանդերձ, կոչված է փորձարկել հանրապետության տարբեր հանքավայրերի երկաթաքարի մետալուրգիական մշակման տեխնոլոգիան: Մասնավորապես, խնդիր է դրված արտադրական պայմաններում փորձարկել Հրազդանի հանքավայրի երկաթաքարը և ստացված արդյունքներն օգտագործել արդիական մետալուրգիական գործարանի նախագծման ու կառուցման համար, որում շրջանցելով շուգունի ստացման (դոմենյան) պրոցեսը, կարելի կլինի վերականգնման մեթոդով (Էլեկտրաքիմիական եղանակով), մաքուր՝ սպունգային երկաթ արտադրել: Նման երկաթը լայն կիրառություն ունի հատկապես էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ:

Զնայած երկաթի բավականին հարուստ պաշարների առկայությանը Հայկական ՍՍՀ-ում, մետալուրգիական լրիվ ցիկլի ձեռնարկության ստեղծման համար անհրաժեշտ տնտեսական պայմաններ դեռևս չեն հասունացել: Մի շարք այլ գործոնների հետ միասին խոշընդունող դեր են կատարում տեխնոլոգիական վառելիքի (կոքսացող քարածիխ) բացակայությունը և զրային սուլ պաշարները:

ՀԱԲԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Խել տեղ է գրավում մետալուրգիական արդյունաբերությունը Հայկական ՍՍՀ արդյունաբերական համակրում:

2. Նկարագրեք հանրապետության մետալուրգիական արդյունաբերության ճյուղային կառուցվածքը:

3. Մետալուրգիական արդյունաբերության հետագա զարգացումը ինչպիսի՞ տեսական, տեխնիկական ու էկոլոգիական պրոբլեմների հետ է կապվում:

6.4. ԳԻՄԱՆՏԱԿԱՑԻՒՆ ՀԱՄԱԼԻՐ

Դժվար է գերազնահատել քիմիական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության քիմիացման դերը արդի ինդուստրիալ հասարակության զարգացման համար: Քիմիացումը արտադրական պրոցեսների էլեկտրաքիմիացման, մեքենայացման, ավտոմատացման ու կոմպյուտերացման հետ միասին ապահովում է արդի գիտատեխնիկական առաջընթացը:

Քիմիական արդյունաբերությունը, թողարկելով նախօրոք տրված հատկություններով և մեծ ժամանակում անուն նոր նյութեր

բարելավելով բազմաթիվ բնական նյութերի որակը, տարալուծելով ու սինթեզելով նոր միացություններ, ընդլայնում է արդյունաբերության ու շինարարության հումքային բազան, արագացնում ու էժանացնում շատ տեխնոլոգիական պրոցեսներ: Գյուղատնտեսությանը մատակարարելով քիմիական պարարտանյութեր ու թունաքիմիկատներ, նաև խթանում է վերջինիս արդյունավետության բարձրացումը: Քիմիական արդյունաբերությունը մեծ շափով նպաստում է լայն սպառման առարկաների գծով բնակչության պահանջարկի ավելի լրիվ բավարարմանը:

Ասվածի հիման վրա հասկանալի է, թե ինչու քիմիական արդյունաբերության վիճակը և տնտեսության քիմիացման աստիճանը դիտվում է որպես այս կամ այն երկրի տնտեսական զարգացման մակարդակի ցուցանիշ:

Սովետական Հայաստանի ֆիմիական արդյունաբերության հիմքերը դրվեցին 20-ական թվականների վերջերին միայն (տես՝ գլուխ 3-րդ), Դրան հաջորդող համեմատաբար կարմ ժամանակամիջոցում քիմիական արդյունաբերությունը դարձավ հանրապետության ինդուստրիալ հզորության հիմքերից մեկը, ժամանակակից արդյունաբերության մի բարդ ու բազմեզր բնագավառ:

Ներկայում քիմիական արդյունաբերության ճյուղը ամփոփում է դրեթե երկու տասնյակ արդիական ձեռնարկություններ, որոնք թողարկում են հարյուրավոր անուն արտադրանք, սկսած մեծածավալ հանքային պարարտանյութերից, ծծմբաթթվից ու ավտոմոբիլային դողերից, ավարտած քիմիական ու եկատիվներով, որոնց ծավալը շափում է ընդունական կիլոգրամներով ու գրամներով:

Քիմիական արդյունաբերությունը անցած չորս տասնամյակում եռակի անգամ ավելի արագ է աճել, քան հանրապետության ամբողջ արդյունաբերությունը: Սակայն վերջին տարիներս, երբ էլեկտրատար, ինչպես նաև էկոլոգիական առումով վնասակար արտադրությունները սահմանափակելու կուրս վերցվեց, արդյունաբերության այս ճյուղի զարգացումը որոշ շափով դանդաղեց և այժմ գտնվում է հանրապետության արդյունաբերության զարգացման միջին տեմպերի մակարդակին:

Զարգացման թափի որոշ թուլացումը ուղեկցվում է կառուցվածքային էական տեղաշարժերով, որոնք լրջորեն փոխում են ճյուղի բնույթը և մասնագիտացումը:

Քիմիական արդյունաբերության երևան գալը և արագ զարգացումը մեր հանրապետությունում հենվել է հետևյալ երեք հիմնական նախադրյալների վրա:

ա) հանքային քիմիական հումքի՝ քիմիապես մաքուր կրաքարի (տրավերտինի) խոշոր պաշարների առկայությունը,

բ) Սևան-Հրազդան էլեկտրակայանների կասկադի կառուցումը և էժան էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը 30—40-ական թվականներին ուրիշ խոշոր սպառող չուներ,

գ) պղնձամարդունաբերության թափոնները որպես քիմիական հումք գտագործելու մեծ հնարավորությունները:

Այս պայմանների շնորհիվ հանրապետությունում ձևավորվեցին, այսպես կոչված, ծանր քիմիայի մի շարք արտադրություններ, որոնց համար բնորոշը արտադրամիջոցների թողարկումն էր այնպիսի քանակով, որը բազմիցն անգամ գերազանցում էր հանրապետության ներքին պահանջները: Մյուս բնորոշ կողմն այն էր, որ այդ արտադրությունները հիմք ունենալով տեղական հանածո ռեսուրսները, իրենց բնույթով բազային դեր էին կատարում և մի շարք նոր արտադրությունների սկիզբ դրեցին հանրապետությունում:

Ներկայումս Հայկական ՍՍՀ-ում ուրվագծվում են քիմիական արտադրությունների հետեւյալ 5 համալիրները.

1. Բնական գազի վերամշակման բազայի վրա սինթետիկ կառաջակի և մի շարք այլ միացույթյունների ստացումը:

Սինթետիկ կառուցուկի արտադրությունը Հայկական ՍՍՀ-ում մինչև վերջերս հենվում էր կրաքարի, դրանից ստացվող կալցիումի կարբիդի և վերջինիս ու ջրի փոխներգործության արդյունք հանդիսացող ացետիլենի վրա: Բարձրորակ քլորոպարենային կառուցուկից բացի, այդ համալիրը իր մեջ ամփոփում է նաև բազմաթիվ ածանցյալ և ուղեկից նյութերի արտադրությունները՝ վինիլացետատի, պոլիվինիլային սպիրտի, էլեկտրամեկուսիշ լաքերի ու խեժերի, ացետիլցելյուզոզայի, ացետատային մետաքսի, ավտոմոբիլային դողերի, ռետինատեխնիկական իրերի:

Բնական գազի մուտքը երևան էական փոփոխություն՝ մտցրեց համալիրի հումքային բազայի մեջ: Հնարավոր դարձավ հրաժարվել էլեկտրատար կարբիդային ցիկլից և պահանջվող ացետիլենը ստանալ բնական գազից: Հետագայում հրաժարվեցին նաև ացետիլենի ստացումից և բնական գազի բազայի վրա կազմակերպվեց բութադիենի արտադրությունը, որը ապահովում է ավելի էժան ու որակյալ քլորոպարենային կառուցուկի ստացումը և վնասակար արտանետվածների որոշ կրճատումը:

2. Ազոտային պարարտանյութերի և այլ միացույթյունների ստացումը: Սըա հմքում ընկած էր կալցիումի կարբիդի և օդից անջատվող ազոտը: Այս համալիրը մեծ քանակությամբ թողարկում է ամիակ, ազոտաթթու, կարբամիդ, մելամին և մի շարք այլ նյութեր, որոնք լայն կիրառություն ունեն գյուղատնտեսության և նյութական արտադրության այլ բնագավառներում: Բնական գազը այստեղ նույնպես էական փոփոխությունների պատճառ դարձավ: Ամիակի և մյուս ազոտային միացույթյունների ստացումը այստեղ նույնպես փոխադրվել է բնական գազի

վրա և այդ նպատակի համար կալցիումի կարրիղի օգտագործումը դադարեցվել է: Այժմ իրականացվում է Կիրովականի քիմիական գործարանի արմատական վերակառուցում, որը հնարավորություն կտա հրաժարվել մի շարք հնացած արտադրություններից և ներդնել նորագույն տեխնոլոգիա:

3. Արտադրությունների երրորդ խումբը նույնպես խոր արմատներ ունի հանրապետության էկոնոմիկայում: Այն կապված է գունավոր մետալուրգիայի բափոնների, մասնավորապես պղնձաձուլության պրոցեսում անջատվող ծմբազազերի և այլ նյութերի ուժիլացման նետ, որի արդյունքը ծմբաթթվի ու պղնձարշասպի ստացումն է:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս արտադրատեսակների մեծ մասն արտահանվում է:

4. Առանձին բնագավառ է կազմում կենցաղային ֆիմիան, որն օգտագործելով քիմիական մյուս համալիրներում թողարկվող մի շարք նյութեր, արտադրում է ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերում, ինչպես նաև բնակչության կենցաղում լայն կիրառություն ունեցող լաքեր ու ներկեր, լվացող հեղուկներ, թունաքիմիկատներ, պոլիմերային պլաստիկատներ և լայն սպառման այլ ապրանքներ: Սա ներկայումս հանրապետության քիմիական արդյունաբերության ամենաարագ աճող ենթաճյուղն է:

5. Քիմիական արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունների արտահայտություն է, մասնավորապես, փոքր ծավալ և քաշ ունեցող արտադրությունների կազմակերպումը, այլ կերպ ասած, փոքր ֆիմիայի զարգացումը: Դրան են պատկանում քիմիական ուսակտիվները, վիտամինները և քիմիական սինթեզի այլ պրոդուկտներ, որոնց բաժինը ամբողջ ճյուղի արտադրանքի ծավալում արդեն զգալի տեղ է գրավում: Այս արտադրությունների այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են փոքր նյութատարությունը, ոչ էներգատարությունը, մեծ աշխատատարությունն ու էկոլոգիապես պակաս վնասակար լինելը բարենպաստ պայմաններ են ստեղծում Հայկական ՍՍՀ-ում դրանց հետագա զարգացման ու ծավալման համար:

Ինչպես վառելիքաէներգետիկ արդյունաբերության ու մետալուրգիայի, այնպես էլ քիմիական արդյունաբերության համար հատկանշական է մեծ տարածքային համակենտրոնացումը: Արդյունաբերության այս ճյուղը տեղաբաշխված է հիմնականում երեք կենտրոնում: Ըստ որում, դրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն դիմագիծը, արտադրական մասնագիտացումը և, շհաշված առանձին բացառություններ, ներկայացված է տեխնոլոգիական ստադիաների միասնական շղթայով:

Ամենահզոր կենտրոնը Երևանն է, որտեղ ամփոփված են բնական գազի բազայի վրա սինթետիկ կառուցուկի և այլ պոլիմերային ու մոնո-

մերային միացությունների, կենցաղային օգտագործման նյութերի ու լրերի, ինչպես նաև քիմիական ռեակտիվների ու կենսաբիմիական միացությունների արտադրությունները։ Երևանում ներկայացված համալիրներն ու տեխնոլոգիական ստադիաների շղթաները մասսամբ շարունակվում են Կիրովականում (ացետիլ ցելուկոզայից ացետատային մանրաթելի և ծխախոտների ֆիլտրերի ստացումը), Աբովյանում ու Գարենցավանում (կենսասակտիվ նյութերի ստացումը)։

Երևանի քիմիական արդյունաբերության արտադրական դիմագիծը սրոշող ձեռնարկություններն են «Նախրիտ» գիտարտադրական միավորումը, «Պոլիվինիլացետատ», ավտոմոբիլային դողերի, քիմիական ռեակտիվների գործարանները, «Պոլիպլաստ», ներկերի ու լաքերի, կենցաղային քիմիայի ֆաբրիկաները։

Քիմիական արդյունաբերության միութենական շափանիշի խոշոր կենտրոն է Կիրովականը, որի երկու ձեռնարկությունները թողարկում են ժողովրդատնտեսական մեծ արժեք ունեցող տարրեր տեսակի արտադրանք՝ հանքային պարարտանյութեր և ազոտային այլ միացություններ, արհեստական բյուրեղաքար, ացետատային մանրաթել և այլն։

Ալավերդաւմ կենտրոնացված քիմիական արտադրությունները մըտնում են լեռնամետալուրգիական կոմբինատի կազմի մեջ։ Պղնձաձուլության թափոնների ուտիլացման միջոցով նրանք թողարկում են ծծմբաթթու ու պղնձարցասպ։

Հայկական ՍՄՀ քիմիական արդյունաբերության զարգացումը ընթացիկ հնգամյակում և գլխավոր հեռանկարում ապահովվում է գլխավորապես գործող ձեռնարկությունների վերակառուցման, վերապինման ու ընդլայնման, հին տեխնոլոգիայի նորացման, մասսամբ նաև նոր արտադրությունների ստեղծման միջոցով։

Ճյուղի զարգացման հեռանկարը որոշող վերը քննարկված գործոններից բացի, ներկայումս առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում բնական միջավայրը աղտոռումից զերծ պահելու և հումքային ռեսուրսները ռացիոնալ ձևով օգտագործելու անհրաժեշտությունը։ Ներկայումս մեզ համար կենսական նշանակություն ունի այն, որ նոր ստեղծվող քիմիական ձեռնարկություններն ու արտադրությունները բավարարեն այդ պահանջը և շկեղոտուն շրջապատի օդը, ջուրը, հողը, շվճանակները և այլն։

Այս պրոբլեմի հետ են կապված Երևան քաղաքում սինթետիկ կառւչուկի հին արտադրության՝ «Նախրիտ-1-ի» փակումը, որը կատարվեց վերջերս հասարակության պահանջով։

Քիմանտառային համալիրի մեջ է մտնում նաև անտառային, փայտամշակման և ցելյուլոզայի, թղթի արդյունաբերական ճյուղը։ Սա թե՛զբաղվածների քանակով, թե՛ համախառն արտադրանքի ծավալով հան-

րապետությունում աշքի ընկնող տեղ չի գրավում՝ 2—3%, Թույլ է նաև նրա հումքային բազան։ Արդեն ասվել է, որ Հայկական ՍՍՀ անտառները առաջին կատեգորիայի են, այսինքն հիմնականում սանիտարական անտառահատում է թույլատրվում և փայտամթերման միջին տարեկան ծավալը անցած հնգամյակում չի գերազանցել 8 հազար մ³-ից։ Նման պայմաններում, հասկանալի է, այս ճյուղը չի կարող լուրջ հույսեր կապել տեղական հումքի հետ։ Բավական է ասել, որ պահանջվող փայտանյութի հիմնական մասը ներմուծվում է։

Բայց միաժամանակ կասկածից վեր է հանրապետության էկոնոմիկայի, բնակչության պահանջմունքների բավարարման համար փայտամշակման արդյունաբերության կարևոր նշանակությունը։ Այն մեր պայմաններում թողարկում է գլխավորապես կահույք, փայտե շինարարական մասեր (դռներ, պատուհաններ, մանրահատակ), տարբեր տեսակի արկղներ առևտրական ու արտադրական կազմակերպությունների կարիքների համար, մասամբ նաև թուղթ։ Բացի այդ, սույն ճյուղը աշքի է ընկնում թույլ համակենտրոնացմամբ, ձեռնարկությունների ցրվածությամբ տարբեր արդյունաբերական կետերի ու կենտրոնների միջև։

Հայկական ՍՍՀ համար բնորոշ է այն, որ այստեղ բացակայում են անտառային, փայտամշակման, ցելյուլոզաթղթի արդյունաբերության ճյուղին հատուկ մի շարք կենտրոնական արտադրությունները։ Դա անհնար է դարձնում փայտամշակման տեխնոլոգիական ստադիաների լրիվ շղթայի ձևավորումը։ Մեզանում ներկայացված են փայտանյութի միայն մեխանիկական մշակման ստադիաները և ամբողջությամբ բացակայում են քիմիական մշակման ստադիաները (հիդրոլիզ, փայտապիրտի, խեծանյութերի, ցելյուլոզայի և այլ ածանցյալների ստացում)։

Այս ճյուղի տեղաբաշխումը մեզանում ձևավորվել է հետևյալ երկու գլխավոր գործուների անմիջական ազդեցության տակ՝ ա) անտառային շրջաններում տեղական փայտանյութի առկայությունը (Խշեան, Դիլիջան, Ծուռնուխ, Բերդ), բ) պատրաստի արտադրանքը տեղում սպառելու հնարավորությունը և տրանսպորտային հարմար դիրքը (ներմուծվող հումքի առաքումը հեշտացնելու առումով)։ Այս երկրորդ ազդակի ազդեցության տակ մասնավորապես կահույքի խոշոր արտադրություն է ստեղծվել Երևանում, Հոկտեմբերյանում, Լենինականում, Կիրովականում, Կամոյում, Ղափանում։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՇԵՆՔ

1. Որո՞նք են Հայկական ՍՍՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացման նախադրյալները։

2. Թվարկեք Հայկական ՍՍՀ քիմիական արդյունաբերության գլխավոր ճյուղային արտադրական համալիրները։

3. Որո՞նք են քիմիական արդյունաբերության գլխավոր կենտրոնները և էկոլոգիական ինչ պրոբլեմներ են կանգնած դրանց առջև:

4. Բնութագրեք և գնահատեք անտառային, փայտամշակման և ցելուղոզյի-թղթի արդյունաբերության զարգացման նախադրյակները և առանձնահատկությունները:

6.5. ՄԵԹԵՆԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Վիթխարի է մեքենաշինության դերը գիտատեխնիկական առաջընթացը ապահովելու և սոցիալիստական հասարակության զարգացումը արագացնելու կոնցեպցիան իրականացնելու գործում։ Դրա շնորհիվ է կատարվում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ու բնագավառների տեխնիկական վերապինումը, արտադրության կոմպլեքսացին մեքենայացումն ու ավտոմատացումը, էլեկտրականության կիրառումը արտադրության մեջ ու կենցաղում։ Ընդունված է մեքենաշինության, հատկապես նրա առաջադիմական ճյուղերի՝ ուղիղութեականության, կոմպյուտերային տեխնիկայի արտադրության որակական ու քանակական ցուցանիշներով ևս դատել այս կամ այն երկրի տնտեսական զարգացման մակարդակի, արտադրական կուլտուրայի ու պոտենցիալի մասին։

Ինչպես հայտնի է, Սովետական Հայաստանի ներկայիս տարածքում մինչև հեղափոխությունը գործնականում բացակայել են մեքենաշինությունն ու մետաղամշակումը, իսկ մինչև Հայրենական մեծ պատերազմը այդ ճյուղի կազմում շկար մեքենաներ ու սարքեր, արտադրամիջոցներ արտադրող և ոչ մի ժամանակակից գործարան։

Պատերազմի տարիներին հանրապետության մեքենաշինության մեջ սկիզբ առած քանակական ու որակական տեղաշարժերը նոր թափով ծավալվեցին հետպատերազմյան հնագամյակների ընթացքում։ Արդյունաբերության ճյուղերի շարքում զարգացման տեմպերով նա դուրս եկավ առաջին տեղը, բազմիցս գերազանցելով թե հանրապետության ամբողջ արդյունաբերության, թե ՍՍՀՄ համապատասխան ճյուղի միջին ցուցանիշները։

Ներկայումս Հայկական ՍՍՀ մեքենաշինությունը իրենից ներկայացնում է մի բարդ ճյուղային համալիր, որը հանրապետության արդյունաբերության մեջ առաջին տեղն է գրավում բոլոր հիմնական ցուցանիշներով՝ ձեռնարկությունների քանակով (180-ից պակելի, որը կազմում է հանրապետության բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների սպելի քան $\frac{1}{4}$ -ը), արդյունաբերական-արտադրական անձնակազմի թվով (մոտավորապես կեսը), համախառն արտադրանքի ծավալով (ավելի քան 35%), Հիշենք, որ ՍՍՀՄ համապատասխան միջին ցուցանիշները նկատելի շափով պակաս են։

Պատմական կարճ ժամանակամիջոցում Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում մեքենաշինության կողմից նման վճռական դիրքերի նվաճումը կարիք ունի հատուկ բացատրության, որովհետև, թվում է, թե տեղում սկսեալիների արտադրության բացակայությունը պետք է արգելակեր այդ ճյուղի զարգացումը:

Իսկապես, Հայկական ՍՍՀ առաջմ չունի ծանր՝ մետաղատար մեքենաշինության համար այդքան անհրաժեշտ սկսեալների սեփական արտադրությունը՝ Սակայն, այստեղ առկա են մեքենաշինության ոչ մետաղատար ճյուղերի զարգացման բարենպաստ պայմաններ ու նախադրյալներ։ Առաջին հերթին դա վերաբերում է համեմատաբար արագ աճող աշխատանքային ուսուրսներին, որոնք ընդհանուր առմամբ աշխատ են ընկնում համեմատաբար բարձր կրթական ցենզով։ Այդ հանգամանքը բավականին հեշտացնում է ժամանակակից մեքենաշինական ձեռնարկությունները ինժեներատեխնիկական ու բանվորական կաղրերով ապահովելու գործը։

Նպաստավոր հանգամանք է նաև այն, որ մեզանում բացառությամբ սկսեալների, թողարկվում են գրեթե բոլոր հիմնական նյութերը, որոնք անհրաժեշտ են արդիական մեքենաներ ու սարքեր արտադրելու համար՝ պղինձ ու ալյումին, տարրեր տեսակի կարելներ, պլաստմասսաներ, ուղղութեանիկական իրեր, տեխնիկական քարեր, պլաստիկներ, ապակյա թելեր և այլ մեկուսիչ նյութեր, զանազան տեսակի էմալներ ու ներկեր։

Մեքենաշինության զարգացման պայմանները քննարկելիս շպետք է աշխաթող անել բնակչության տարաբնակեցման այն առանձնահատկությունը, որ ազատ աշխատանքային ուսուրսները մեծ մասամբ ցըրված են մանր ու միջին քաղաքներում, ինչպես և խոշոր գյուղերում, Նման տեղաբաշխում ունեցող աշխատանքային ուսուրսների ուսցիոնալ օգտագործման համար ամենից ավելի հարմար է մեքենաշինությունը, որը տեխնոլոգիական հնարավորություն է տալիս տարրեր վայրերում ունենալ ոչ խոշոր, նեղ մասնագիտացված ձեռնարկություններ կամ առանձին արտադրամասեր ու մասնաճյուղեր։ Վերջապես, ճյուղի զարգացման համար դրական ազդակ է վերջին տասնամյակների ընթացքում հանրապետությունում ստեղծված մեքենաշինական թեքման գիտահետազոտական, նախագծային ու կոնստրուկտորական հիմնարկությունների բավականին լայն ցանցը, ինչպես նաև մեքենաշինության տարրեր ճյուղերի գծով միջնակարգ և բարձրագույն կրթությամբ մասնագետներ պատրաստելու հնարավորությունը։

Նշենք մի պայման ևս։ Հանրապետության ներսում իրացվող մեքենաշինական արտադրանքի ծավալը մեծ չափերի հասնել չի կարող,

բայց դրան հակառակ, միութենական շուկայի պահանջարկը հսկայական է և գնալով ավելի է ընդլայնվում:

Այս պայմանների ու նախադրյալների շնորհիվ էլ ձեւվորվել է Հանրապետության մեքենաշինության առկա կառուցվածքը, ճյուղը ձեռք է բերել ինքնատիպ արտադրական դիմագիծ և որոշել իր ուրույն տեղը ՍՍՀՄ մեքենաշինության համակարգում:

Բնական է ու հիմնավորված, որ ամբողջությամբ վերցրած Հայկական ՍՍՀ մեքենաշինության զարգացման գիմավոր միտումը ոչ մետաղատար, գիտատար ու աշխատատար ճշգրիտ մեքենաների և սարքերի թողարկման գերադաս աճն է, մի բան, որ առաջիկայում ևս պետք է շարունակվի ու ավելի խորանա:

Առայսօր այս ճյուղի համախառն արտադրանքի գրեթե կեսը բաժին է ընկնում էլեկտրատեխնիկական արդյունաբերությանը. որի ծավալով Հայկական ՍՍՀ-ն զիշում է միայն ՌՍՖՍՀ-ին ու Ուկրաինային: Սույն ենթաճյուղի ավելի քան մեկ տասնյակ արդիական գործարաններ թողարկում են բավականին լայն տեսականի ունեցող արտադրանք: Հատկապես մեծ ծավալով են թողարկվում պղնձե ու ալյումինի տարբեր նշանակության ու տրամաչափի կարելային իրեր, ուժային տրանսֆորմատորներ, փոփոխական հոսանքի գեներատորներ, շարժական էլեկտրակայաններ, տարբեր հզորության էլեկտրաշարժիչներ, էլեկտրազարժիշտման սարքավորում, սովորական լուսավորության, լուսմինեսցենտրային և հատուկ տիպի էլեկտրական լամպեր, լուսատեխնիկական սարքավորում, կենցաղային օգտագործման մի շարք իրեր և այլն:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության խոշորագույն կենտրոնը երևանն է, որը որպես այդպիսին իր մրցակիցը շռնի ոչ միայն Սովետական Անդրկովկասում, այլև ողջ արտասահմանյան Մերձավոր Արևելքում ու Արևմտյան Ասիայում: Այստեղ են գտնվում բազմահազարանոց կոլեկտիվներ ունեցող այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Լենինի անվան հայկական էլեկտրամեքենաշինական, էլեկտրատեխնիկական, էլեկտրաշարժիչների, էլեկտրասարքերի և այլ արտադրական ու գիտարտադրական միավորներ, առանձին հզոր գործարաններ:

Երկրորդ տեղում է Լենինականը (էլեկտրատեխնիկակական, միկրոէլեկտրաշարժիչ, կենցաղային էլեկտրական իրերի ձեռնարկություններ),

Վերջին տարիներին ենթաճյուղի միութենական նշանակության ձեռնարկություններ են ստեղծվել Գորիսում, Ստեփանավանում և այլուր:

Միութենական շափանիշով մեծ ծավալ ունի հաստոցաշինական-գործիքաշինական ենթաճյուղի արտադրանքը, որի գծով Հայկական ՍՍՀ-ն երկրում գրավում է 5-րդ տեղը:

Առաջին մետաղահատ հաստոցը մեղանում պատրաստվել է Հայրե-

Նական պատերազմի տարիներին, Ներկայումս մասնագիտացված 7 հաստոցաշխնական գործարաններում թողարկվող հաստոցների թիվը հաշվվում է տասնյակ հազարներով:

Հանրապետությունում արտադրվում են մետաղահատ հաստոցների բոլոր հիմնական տիպերի (խառատային, շաղափող, ֆրեզերային, ներտաշ, հղկող) շուրջ 50 տարատեսակներ, այդ թվում ավտոմատ, ճշգրիտ ու գերճշգրիտ, էլեկտրակայծային, թվածրագրային կառավարման բազմաօպերացիոն, և այլն:

Կարենոր նշանակություն ունի ժամանակակից մետաղահատ (այդ թվում՝ ալմաստե) գործիքների միութենական նշանակության արտադրությունը, որը ոչ միայն բավարարում է հանրապետության մեքենաշինության հարաձուն պահանջները, այլև մեծ շափով արտադրանք է առաքում Սովետական Միության նույնիսկ ամենահեռավոր շրջանների ձեռնարկություններին:


Հայկական ՍՍՀ հաստոցաշխնության ու գործիքաշինության կենտրոններն են Երևանը (Զերժինսկու անվան հաստոցաշխնական, ֆրեզերային հաստոցների, արհեստական ալմաստների ու ալմաստե գործիքների գործարաններ), Գարենցավանը (հաստոցաշխնական, գործիքաշխնական գործարաններ), Լենինականը (հղկող հաստոցների, դարրնամամլիչ սարքավորման գործարաններ), Կիրովականը (ճշգրիտ հաստոցների գործարան), Հոկեմբերյանը (հաստոցաշխնական գործարան):

Հայկական ՍՍՀ մեքենաշինության շատ կարևոր ու հեռանկարային ենթաճյուղերից է սարգաշինությունը, ավտոմատացման միջոցների ու կառավարման սիստեմների արագությունը: Սա իր արտադրանքի ծավալով ՍՍՀՄ-ում գրավում է 4-րդ տեղը: Ենթաճյուղի արտադրանքում մեծ է հատկապես միկրոամպերմետրերի, միկրովոլտմետրերի, լարման ցուցիչների, խոնավաշափերի, լոգոմետրերի և մի շարք այլ ճշգրիտ սարքերի ու մեխանիզմների բաժինը, որոնք լայն կիրառություն ունեն տեխնոլոգիական պրոցեսների կարգավորման ու ավտոմատ վերահսկողության բնագավառում:

Հատուկ տեղ ունի կենցաղային ու արտադրական ժամացույցների արտադրությունը, որի ծավալով նույնպես Հայկական ՍՍՀ երկրում գրավում է 3-րդ տեղը (ՌՍՖՍՀ-ից ու Բելոռուսիայից հետո):

Ենթաճյուղի հզոր կենտրոններ են Երևանը, Լենինականը, Կիրովականը: Հանրապետության մի շարք միջին ու փոքր քաղաքներում գործում են ոչ մեծ հզորության ինքնուրույն ձեռնարկություններ կամ մասնաճյուղեր:

Մեքենաշինության ամենաերիտասարդ ու արագ աճող ենթաճյուղերից են ռադիոարդյունաբերությունը և էլեկտրոնային արդյունաբերու-



Նկ. 17. Հայկական ՍՍՀ մեքենաշինական համալիրում մեծ է սարքաշինական երթաճյուղի դերը: «Հայէկտրապարատ» արտադրական միավորման գլխամասային ձեռնարկությունում:

թյունը, որոնք մասնագիտանում են արտադրական կիրառություն ունեցող էլեկտրոնային տեխնիկայի, ռադիոսարքերի, կապի միջոցների արտադրության գծով:

Ընթացիկ հնգամյակում այս ճյուղի արտադրանքի ծավալը կրկնապատկվելու է, զգալիորեն մեծանալու է նրա տեսակարար կշիռը հանրապետության մեքենաշինության համալիրում:

Մեծ է հանրապետության դերը հատկապես էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ու համակարգերի նախագծման ու արտադրության բնագավառում: Այս աշխատանքները մեզանում սկսվել են 50-ական թվականների վերջին միայն: Առաջին մեքենաները կառուցվում էին բացառապես էլեկտրոնային լամպերի կիրառմամբ: Դրանց երկրորդ սերունդը հիմնվում էր կիսաշաղորդչային տեխնիկայի վրա, իսկ երրորդ և չորրորդ սերունդների հիմքում արդեն ինտեգրալ միկրոսխեմաներն էին ընկած:

Էլեկտրոնային ու ռադիոսեխնիկական արդյունաբերության կենտրոններ են Երևանը, Հրազդանը, Էջմիածինը:

Մեքենաշինության վերը նկարագրված ճյուղերը որոշում են Հայկական ՍՍՀ մասնագիտացումը, նրա տեղը աշխատանքի համամիութենական բաժանման համակարգում: Սակայն, ստեղծվել ու զարգանում են մի ամրող շարք ենթաճյուղեր ու արտադրություններ ևս, որոնք ճիշտ է, մասնագիտացման մեջ որոշիչ դեր չեն խաղում, բայց կարևոր տեղ ունեն

թե՛ հանրապետության էկոնոմիկայում, թե՛ երկրի համապատասխան ճյուղերում և մասնակցում են մեքենաշինական արտադրանքի միջջաշնային փոխանակման մեջ։ Դրանցից են ավտոմոբիլների ու ավտոբեռնիշների, կոմպրեսորների ու դարբնամամլիչ հաստոցների, զոդման հարմարանքների ու վերամբարձ կոռունկների, վերելակների, ոչ ստանդարտ սարքավորումների և մի շարք այլ մեքենաների ու մեխանիզմների արտադրության ճյուղերն ու արտադրությունները։

Առաջիկա տարիներին և գլխավոր հեռանկարում՝ մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանում էլ ավելի են արագանալու մեքենաշինական համալիրի զարգացման տեմպերը, տեղի են ունենալու էական կառուցվածքային փոփոխություններ։ Տասներկուերրորդ հնգամյակում մեքենաշինական արտադրանքի ծավալը աճելու է ավելի քան 54 %-ով, որը 2,1 անգամ ավելի արագ է, քան հանրապետության արդյունաբերության զարգացումն է ամբողջությամբ վերցրած։ Կիրականացվի բոլոր մեքենաշինական ձեռնարկությունների տեխնիկական վերազինում, ավելի քան 60 արտադրական միավորումների, գործարանների ու մասնաշյուղերի վերակառուցում և ընդլայնում։ Լայն կիրառություն կտնեն ճկուն վերակարգավորվող արտադրությունները, միկրոպրոցեսորային տեխնիկան ու որոբոտոմանիպոլյատորային կոմպլեքսները, տարբեր տիպի ավտոմատացված սիստեմները, մետաղամշակման առաջադիմական, սակավաթափոն ու անթափոն տեխնոլոգիան։ Այստեղ, ի տարբերություն արդյունաբերության մյուս ճյուղերի, գործող ձեռնարկությունների տեխնիկական վերազինման ու վերակառուցման հետ մեկտեղ, կկատարվեն մեծ ծավալի կապիտալ շինարարական աշխատանքներ, կկառուցվեն մի շարք նոր ձեռնարկություններ թե խոշոր և թե միջին ու փոքր քաղաքներում։ Կորպվի մեքենաշինական համալիրի նոր ենթաճյուղի՝ առանցքակալների արտադրության հիմքը (առանցքակալների գործարանը կառուցվում է Թալինում)։

Հանրապետության մեքենաշինական համալիրում ներկայում կատարվող տեղաշարժերից, որոնք տնտեսաշխարհագրական կարևորություն են ներկայացնում և առաջիկայում էլ տիրապետող են լինելու հարկ է հիշատակել հետեւյալները՝

ա) ճյուղային կառուցվածքի հետագա բարելավումը ոչ նյութատար, գիտատար ու աշխատատար ճշգրիտ մեքենաների ու սարքերի արտադրության գերազանցական զարգացման միջոցով,

բ) գործող ձեռնարկությունների տեխնիկական վերազինման ու վերակառուցման հետ մեկտեղ համեմատաբար մեծ թվով նոր գործարանների կառուցումը,

գ) նոր կառուցվող ձեռնարկությունների մեծ մասի տեղաբաշխումը փոքր քաղաքներում ու գյուղական վայրերում, որը նկատելիորեն կընդ-

Հայնի ճյուղի տարածական հիմքը և կմեծացնի նրա վերափոխող ազ-դեցությունը տնտեսապես ետ մնացող շրջանների վրա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք մեքենաշինական համալրի դերը և տեղը Հայկական ՍՍՀ էկո-նոմիկայում:
2. Ի նշ գործոններ են նպաստում Հայկական ՍՍՀ մեքենաշինական համալրի առաջանցիկ զարգացմանը:
3. Բնութագրեք մեքենաշինության ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխումը:

8.6. ՇԻԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Շինանյութերի արդյունաբերությունը որպես ինդուստրիալ ճյուղ հանրապետությունում ձևավորվել է 20-ական թվականների վերջերին: Նրա զարգացումն ամբողջությամբ պայմանավորված է շինարարության հարաճուն ծավալով, որի պահանջարկը և կոչված է այն բավարարելու Հայտնի է, որ այս ճյուղի մեջ տարրեր ձեռնարկություններ միավորվում են ըստ արտադրանքի նպատակի, թեև թե՛ տեխնոլոգիական առանձնա-հատկություններով, թե՛ հումքի բնույթով դրանք խիստ զանազանվում են իրարից:

Հայտնի է, որ ամենամասսայական տեղական շինանյութերի արտա-դրության հնարավորությունները առկա են գրեթե ամենուրեք: Դրա հետ մեկտեղ շինանյութերը սովորաբար մեծածավալ են և ոչ տրանսպորտա-հարմար: Ուստի և, որպես կանոն, արդյունաբերության այդ ճյուղի զար-գացումը ելնում է գլխավորապես տեղական կարիքներից, աշքի չի ընկ-նում շրջանային ապրանքայինության բարձր գործակցով և մասնագի-տացման ճյուղ չի դառնում:

Սակայն ճյուղի համար հատուկ այդ օրինաչափությունները Հայկա-կան ՍՍՀ կոնկրետ պայմաններում նկատելիորեն խախտված են: Բնա-կան շինանյութերի որոշ տեսակներ իրենց ֆիզիկամեխանիկական ու դե-կորատիվ բարձր հատկություններով, ինչպես նաև արդյունահանման ու վերամշակման տեխնիկատնտեսական նպաստավոր ցուցանիշների շնոր-հիվ ձեռք են բերել միջջանային նշանակություն: Այլ կերպ ասած, դրանց արտադրությունը հանրապետության համար մասնագիտացման ճյուղի դեր է խաղում:

Հայկական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերության ճյուղը ներկա-յացված է ավելի քան տասնյակ ինքնուրույն ձեռնարկություններով, որ-տեղ զբաղված է ամբողջ արդյունաբերաարտադրական անձնակազմի մո-տավորապես 8 % և թողարկվում է արդյունաբերական արտադրանքի բնդանուր ծավալի 6%-ը:

Իհարկե, սխալ կլիներ այս համեմատաբար փոքր թվերով որոշել շինանյութերի արդյունաբերության դերը Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում, Այդ դերը շատ ավելի մեծ է, որովհետև առանց անհրաժեշտ քանակի բազմազան շինանյութերի տեղական արտադրության անհնար էր ապահովել այն վիթխարի ծավալի կապիտալ շինարարությունը, որը իրագործվել է հանրապետությունում և որի շնորհիվ անհամեմատելի շափով աճել են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հիմնական ֆոնդերը:

Հայկական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերության ճյուղում առանձնանում են արտադրությունների հետևյալ երեք խմբերը. բնական շինանյութերի (որմնաքարի, թեթև լցանյութերի, խճի, ավազի) արդյունահանում ու նախնական մշակում, մածող (կապակցող) նյութերի՝ ցեմենտի, գաշի, կրի արտադրություն և բետոնի ու երկաթբետոնի կոնստրուկցիաների ու իրերի պատրաստում:

Միջջրջանային նշանակություն ունի հատկապես արտադրությունների առաջին խումբը՝ բնական շինանյութերի արդյունահանումն ու նախնական մշակումը: Այստեղ մեծ արժեք են ներկայացնում հրաբխածին նյութերը, մասնավորապես տարրեր գույների ու երանգների տուֆերն ու ֆելզիտները, պեղլիտը և լիթոփիդային պեմզան, որոնց պաշարներով Հայկական ՍՍՀ-ն երկրում գրավում է առաջին տեղը:

Նախկինում մասսայական շինարարության մեջ որպես որմնաքար օգտագործվում էր բացառապես տուֆը՝ մեղիս կոչվող շարվածքի համար վերջին տասնամյակներում շինարարության ինդուստրիալ մեթոդների լայն կիրառությունը էապես փոխեց շինանյութերին ներկայացվող պահանջը: Շենքերի կառուցման հիմնական եղանակը նախկին քարե շարվածքի փոխարեն դարձավ պատրաստի մասերի ու հանգույցների հավաքումը: Դա հանգեցրեց որմնաքարի պահանջարկի նվազմանը, բայց և տուֆին հաղորդեց նոր՝ շենքերի երեսապատման ֆունկցիա:

Դրա հետ կապված էլ, ներկայում տուփի խոշորագույն քարհանքերի համար հիմնական արտադրանք է համարվում ոչ միայն որմնաքարը, այլև երեսապատման սալաքարը:

Հայկական ՍՍՀ տարրեր շրջաններում տարածված տուփի արդյունահանման բազմաթիվ մեծ ու փոքր կենտրոններից հիշատակենք Արթիկը, Քարակերտը, Աշտարակը, Անիպեմզան: Արթիկում ստեղծված է նաև արհեստական տուփաբերություն՝ առաջինը հանրապետությունում, որի համար հումք են ծառայում հանքի շահագործման ընթացքում գոյացող թափոնները՝ տուփաքարի ջարդոնը, որի ծավալը ավելին է, քան արդյունահանվող պիտանի որմնաքարինը:

Երկրում բավականին մեծ տեսակարար կշիռ ունի թեթև լցանյութերի՝ պեղլիտի, լիթոփիդային պեմզայի ու հրաբխային խարամի արտա-

գրությունը: Սրանք լայնորեն օգտագործվում են ցեմենտի տարրեր տեսակների, բետոնների և երկաթ-բետոններին իրերի արտադրության համար, հաղորդելով շինվածքներին թեթևություն, առաձգականություն, ձայնամեկուսիչ, զերմամեկուսիչ, հրակայուն ու թթվակայուն հատկություններ: Բացի այդ, պեղյալու քիմիական վերամշակման շնորհիվ կարող է օգտագործվել մի շարք այլ արժեքավոր նյութեր, այդ թվում բյուրեղապակի ստանալու համար:


Լցանյութերի արտադրության առավել խոշոր կենտրոններն են Արագածոտն (պեղյալ), Անիպեմզան, Պեմզաշենը:

Խճի (լայն կիրառություն ունի հատկապես ճանապարհաշինության մեջ) և ավագի արտադրությունը աշքի է ընկնում համակենտրոնացման ավելի ցածր աստիճանով: Ընդունված է ամեն մի խոշոր շինարարության համար այդ նյութերի հանքավայրը շահագործել մոտակայքում, թեկուղ և ժամանակավորապես: Այնուհանդերձ, գործում են մի շարք խոշոր հանքավայրեր, որոնք ունեն հանրապետական և նույնիսկ միջանրապետական նշանակություն: Այդպիսիք են մասնավորապես Այրումի և Մեղրիի խճի հանքավայրերը համապատասխան գործարաններով, որոնց արտադրանքը օգտագործվում է նաև հարեան Վրաստանի և Աղբբեշանի երկաթուղային շինարարության համար:

Մյուս բնական շինանյութերից Հայկական ՍՍՀ-ում լայն կիրառություն ունեն բազալտը, որի խոշոր հանքավայրեր են գործում գրեթե բոլոր խոշոր քաղաքների շրջակայքում, գրանիտը (Փամբակի հանքավայր) և մարմարը, որն օգտագործվում է երեսապատման սալերի և խճի ձևով: Մարմարի և այլ բնական կարծր քարերի մշակման արդիական ձեռնարկություններ կան Երևանում և Նուռնուսում:

Շինարարության ծավալի հետագա աճի և հատկապես նրա բնույթի փոփոխման (ինդուստրիալ մեթոդների ներդրման) հետ զուգընթաց մեծանում է մածող նյութերի նշանակությունը: Դրանցից գլխավորը ցեմենտն, է, որը Հայկական ՍՍՀ-ում ունի հզոր հումքային բազա: Մինչև 60-ական թվականների վերջը հանրապետությունում գործում էր միակ՝ Արարատի ցեմենտի-շիֆերի կոմբինատը, որը շահագործման է հանձնվել 30-ական թվականներին: Այստեղ ցեմենտից բացի թողարկվում են նաև շիֆեր և ասբոշիֆերային խողովակներ:

Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի շինարարությունը դադարեցնելու կապակցությամբ և Մարմարիկի գոտին ցեմենտի փոշու բացասական ազդեցությունից զերծ պահելու նպատակով բացի այն, որ դադարեցվեց լեռնաքիմիական գործարանի կառուցումը, որոշված է ընթացիկ հնգամյակում փակել նաև ցեմենտի գործարանը և դրա փոխարեն ավելացնել Արարատի գործարանի հզորությունները:



Նկ. 18. Բարձր չէ բնական շինանյութերի հանքավայրերի շահագործման տեխնիկական մակարդակը։ Փամբակի գրանիտի հանքավայրում։

Ներկայումս գործող երկու գործարանները միասին արտադրում են շուրջ 2 մլն տոննա ցեմենտ, որը հիմնականում բավարարում է Հանրապետության պահանջները։

Բավարար շափով արտադրվում է նաև կրի (ծրեան, ջազուռ), ինչպես ցեմենտի, այնպես էլ կրի հումքային բաղան գործնականում չի

սահմանափակում նրանց արտադրության հետագա ընդլայնման հնարավորությունները:

Համեմատաբար երիտասարդ ճյուղ է շինարարական նենապակու, սանհիտարա-տեխնիկական իրերի և արհեստական երեսապատման սալիկների արտադրությունը, որը կենտրոնացված է Երևանում ու Լենինականում:

Վերջին տարիներին բուռն զարգացում է ապրում հատկապես բետոննե և երկարբետոննե իրերի ու հավաքովի կոնստրուկցիաների արտադրությունը: Սրանց ծավալը այսօր արդեն զգալի չափով գերազանցում է մյուս խոշոր շինարարական նյութերի ծավալը միասին վերցրած: Մոտակա հեռանկարում էլ շարունակվելու է դրանց արտադրության գերադասածը, որը թելաղովում է շինարարական ինդուստրիայի հետագա բարեփոխման, ինդաւատրիալ մեթոդների ավելի լայն ներդրման անհրաժեշտությամբ:

Ի տարբերություն բնական շինանյութերի արտադրության, որը կազմակերպվում է անմիջապես հանքավայրում, բետոնն ու երկաթ-բետոննե իրերի արտադրությունը առավելապես հարում է շինարարության, այսինքն սպառման վայրին: Ահա այդ պատճառով էլ բետոնի, երկաթբետոննե իրերի և տնաշինական գործարանները տեղաբաշխված են գըլխավորապես այն կենտրոններում, որտեղ խոշոր ծավալի կապիտալ շինարարություն է իրագործվում: Իհարկե, առանձին դեպքերում մասնագիտացված գործարանները, որոնք հատուկ նշանակության կոնստրուկցիաներ ու իրեր են արտադրում, կարող են սպասարկել հեռավոր շրջաններին ևս: Այդպիսիք են օրինակ՝ ոռոգման ջրանցքների երեսապատման բետոննե տաշտակները, էլեկտրահաղորդման գծերի շինարարության համար անհրաժեշտ սյաները և մի շարք այլ կոնստրուկցիաներ, որոնց պահանջարկը ցրված է ընդարձակ տարածությունների վրա:

Արտադրությունների սույն՝ 3-րդ խմբի առավել աշքի ընկնող կենտրոններն են Երևանը, Լենինականը, Կիրովականը, Արովյանը, Չարենցավանը:

Շինանյութերի արդյունաբերության հետ մեկտեղ ծագող և անհետաձգելի լուծման կարիք ունեցող հարցերի թվում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում համբային ուսուցաների ուսցիունալ օգտագործումը և բնական միջավայրի պահպանումը: Ուսուցաների ուսցիունալ օգտագործումը ենթադրում է մի կողմից, հանքավայրերի խորթային շերտերի օգտագործում և տուֆի, բազալտի, գրանիտի, մարմարի, արդյունահանման ընթացքում գոյացող թափոնների լրիվ ուժիլացում և մյուս կողմից՝ հումքի, երր այդ հնարավոր է, արդյունաբերական խոր վերամշակում և բազմանպատակ կիրառություն: Այդ երկու ուղղությամբ

Էլ առաջին քայլերն արդեն արվել են, սակայն հնարավորությունները շատ ավելի մեծ են և դրանց մի շնչին մասն է առայժմ օգտագործվում:

Երկրորդ հարցը՝ բնական միջավայրի պահպանումը՝ առնչվում է գլխավորապես այն փաստի հետ, որ հանքային շինանյութերի հանույթը կատարվում է բաց հանքերում, ընդգրկելով փոքր խորություն, բայց ընդարձակ տարածություններու դրա հետևանքով էլ գյուղատնտեսական հողահանդակները զգալի վնաս են կրում, ոչնչացվում է հողային շերտը, հարյուրավոր հեկտար հողատարածություններ գյուղատնտեսական օգտագործման համար դառնում են անպետք:

Մեզանում գործող հողային օրենսդրության համաձայն ամեն մի օգտագործված հանքավայրի տեղում նույն այդ ձեռնարկության ուժերով ու նրա հաշվին պետք է կատարվեն վերակուլտիվացիայի աշխատանքներ. պետք է վերականգնվի հողածածկը կամ էլ պայմաններ ստեղծվեն այդ տարածություններ այլ նպատակներով օգտագործելու համար (ջրավազանի ստեղծում, ջերմոցների կառուցում, անտառապատում և այլն):

Քանի որ արդեն սպառված կամ մասնակիորեն օգտագործված ու լքված հանքերի թիվը բավականին մեծ է, դրանց վերակուլտիվացիան և գյուղատնտեսական օգտագործման ոլորտի մեջ ընդգրկելը ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն ունեցող հարց է, որի լուծումը մեծ ջանքեր ու հետևողականություն է պահանջում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԱՐ

1. Բնութագրեք շինանյութերի արդյունաբերության հումքային բաղան և ճյուղային կառուցվածքը:

2. Խնձորիսի՝ էկոլոգիական պրոբլեմներ են կապված շինանյութերի արգյունաբերության հետ:

6.7. ԲՆԹԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԳՐԵՐՈՒԹՅՈՒՆ

Թեթև արդյունաբերությունը լայն տարածում ունեցող ճյուղերից է: Այն կոչված է ապահովելու բնակչության պահանջմունքները գործվածքեղենի, պատրաստի հագուստեղենի, կոշկեղենի և լայն սպառման առարկաների այլ տեսակների գծով: Այդ հանգամանքն էլ հենց պայմանավորում է ճյուղի տեղաբաշխման հարցում սպառման գործոնի վճռական դերը, գլխավոր արտադրությունների կենտրոնացումը բնակչության մեծ կուտակումներ ունեցող վայրերում:

Այս ճյուղի համար հատկանշական է նաև սերտ կապը գյուղատրնտեսական որոշ արտադրությունների հետ (թելատու կուլտուրաների մշակում, անասնապահություն), չնայած, որ հումքային ուսուրաների առկա-

յությունը տեղում երբեք էլ թեթև արդյունաբերության զարգացման վրձ-
ռորոշ պայման չի կարող դիտվել:

Սովետական Հայաստանը պատկանում է այն շրջանների թվին, որոնք
աշխի չեն ընկնում թեթև արդյունաբերության համար հումքի հարուստ
քաղաքով: Ավելին, թեթև արդյունաբերության և գյուղատնտեսական հա-
մապատասխան արտադրությունների միջև հնարավոր կապերն էլ թույլ
են զարգացած: Եվ որպես հետեւանք այդ բոլորի, հնարապետության ար-
դյունաբերության այդ ճյուղն իր պահանջների գերակշիռ մասը բավա-
րարում է ոչ թե տեղական, այլ ներմուծվող հումքի հաշվին: Այդ վիճակը
պահպանվում է նույնիսկ այն դեպքում, եթե տեղի քիմիական արդյունա-
բերությունը վերջին տարիներին սկսեց այդ ճյուղին առաքել մեծ քանի-
կությամբ քիմիական մանրաթել և կաշվի փոխարինողներ:

Այդուհանդերձ, թեթև արդյունաբերությունը Հայկական ՍՍՀՄ-ում
առաջնակարգ դիրք է գրավում: Նրան բաժին է ընկնում արդյունաբերա-
կան ձեռնարկությունների ընդհանուր թվի շուրջ 17% (120 միավորում,
գործարան ու ֆաբրիկա), արդյունաբերարտադրական անձնակազմի
մեկ քառորդը և համախառն արտադրանքի մեկ քառորդը: Ներկայումս այն
հանդես է գալիս որպես արդյունաբերության մի բազմաճյուղ բնագավառ,
որի արտադրանքի որոշ տեսակների ծավալը զգալիորեն գերազանցում է
Հանրապետության ներքին պահանջը: Դրանցից են, մասնավորապես,
տրիկոտաժեղենը, գուլպեղենը, գորգեղենը, կաշվե կոշիկները, որոնց ար-
տադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով Հայկական ՍՍՀ-ում
ավելի բարձր է, քան միջին միութենական ցուցանիշներն են: Հատկա-
նշական է, որ արտահանվում է բոլոր տեսակի գործվածքների, տրիկո-
տաժեղենի, գուլպեղենի և կոշկեղենի շուրջ 3/4-ը, պատրաստի հագու-
տեղենի կեսից ավելին:

Այս թվերը վկայում են հանրապետության թեթև արդյունաբերության
ճյուղի բարձր շրջանային ապրանքայնության, ՍՍՀՄ աշխատանքի տերի-
տորիալ բաժանման համակարգում նրա ակտիվ մասնակցության մասին:

Թեթև ինդուստրիայի ճյուղային կառուցվածքում առաջին տեղը գրա-
վում է տեխստիլ արդյունաբերությունը, որը թողարկում է տասնյակ մի-
լիոնավոր m^2 բամբակե ու բրդե գործվածքեղեն, շուրջ 100 մլն հատ տրի-
կոտաժեղեն, 90 մլն գույգ գուլպեղեն և 2 մլն m^2 գորգեղեն, ինչպես նաև
մեծ քանակությամբ շիշուսված կտորեղեն, ժանյակային գործվածքեղեն
և արդուզարդի իրեր:

Տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոնը Երևանն է, որ-
տեղ գործում են մի քանի տասնյակ ձեռնարկություններ ու արտադրու-
թյուններ: Այստեղ են գտնվում նաև հանրապետության մետաքսե ու բրդե
գործվածքեղենի միակ ֆաբրիկաները:

Բամբակե տեքստիլի և գուլպեղենի արտադրության հզոր կենտրոն է

Հենինականը, տրիկոտաժեղենինը՝ Կիրովականը, մեքենայական հյուսվածքի գորգերինը՝ հշեանը, բամբակե մանվածքեղենինը՝ Մարալիկը:

Այդ զինավոր կենտրոններից բացի, տեխստի արդյունաբերության ալիքի ընկնող արդիական ձեռնարկություններ են գործում նաև Գորիսում, Ստեփանավանում, Կամոյում, Սովետաշենում, Նոր Խարբերդում և մի շարք այլ բնակավայրերում:

Զարգացման բարձր մակարդակի է հասել կաշվի-կոշիկի արդյունաբերությանը, որը թողարկում է տարրեր տեսակի բնական կաշիներ (*Ս. Շահումյանի անվան կաշվի գործարանը Երևանում*), շուրջ 20 մլն զույգ կոշիկ (*«Մասիս», «Նախիք» և «Լյուքս» միավորումների ձեռնարկությունները*):

Այս ճյուղի խոշորագույն կենտրոնը դարձյալ երեանն է:

Թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքում զգալի է կարի արտադրության տեղը, որը թողարկում է լայն տեսականի ունեցող պատրաստի հագուստեղեն: Խոշորագույն մասնագիտացված ձեռնարկությունները տեղաբաշխված են Երևանում, Լենինականում, Վիրովականում և Ալավերդիում:

Եզակի տեղ է գրավում Կիրովականի՝ հանրապետությունում միակ մորթու-մուշտակեղենի ֆաբրիկան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնակչագրեթ Հայկական ՍՍՀ թերև արդյունաբերության հումքային բազան ե ճյուղային կառուցվածքը:

2. Թվարկեթ թեթև արդյունաբերության տեղաբաշխման առանձնահատկությունները և զինավոր կենտրոնները:

6.8. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃԵՌՆԴԵՐ

Արդյունաբերության այլ ճյուղեր բաժնում միավորված ճյուղերը ներկայում Հայկական ՍՍՀ էկոնոմիկայի համար պրոֆիլային չեն և արտադրանքի ընդհանուր ծավալով էլ աշքի չեն ընկնում: Բայց դրանք ներկայացնում են ժամանակակից արտադրության կարևոր բնագավառներ և ունեն համեմատաբար մեծաթիվ (շուրջ 8 տասնյակ) ձեռնարկություններ:

Իրենց ժողովրդատնտեսկան ֆունկցիաներով, ինչպես և զարգացման նախադրյալներով ու հեռանկարներով այդ ճյուղերը մեծապես տարբեր վում են իրարից:

Հումքային ամուր բազա ունի ապակու և հախնապակի-նենապակու արդյունաբերությունը: Այդպիսի բազա են ծառայում պեղլիտները, հրաբխային խարամները և նեֆելինային սիենիտները, որոնք առատորեն տարածված են հանրապետության տարածքում: Այս ճյուղի ձեռնարկություն-

Ներ են գործում Արզնիում, Հոկտեմբերյանում, Բյուրեղավանում, Երևանում, Արտաշատում և Լենինականում։ Դրանք թողարկում են շահեր ու բանկաներ սննդի արդյունաբերության, ջաներ ու ապակե մասեր լուսատեխնիկական արդյունաբերության համար, կենցաղային օգտագործման հախճապակե, ճենապակե ու բյուրեղավակե իրեր և այլն։

Առանձնակի տեղ է գրավում ժամանակակից տեխնիկական առաջընթացի համար մեծ նշանակություն ունեցող ապակե թելերի ու ապակե պլաստիկների արտադրությունը։ Մրա մասնագիտացված ձեռնարկությունը գործում է Սևան քաղաքում։

Այլ ճյուղերի զարգացման առավել լայն հեռանկարներ ունեն մանրէակենսաբանականը և բժշկականը։ Մրանք ստեղծվելով միայն վերջերս, աշխի են ընկնում զարգացման բարձր տեմպերով։ Այդ ճյուղերը առաջմներկայացված են երեք ձեռնարկություններով։ Արովյանի կենսաակտիվ պատրաստուկների, Զարենցավանի լիզինի գործարաններով և Երևանի գեղագործական ֆաբրիկայով։

Ուշադրության է արժանի նաև խորդենու յուղի ստացումը, որը կազմակերպված է Հոկտեմբերյանում։ Մրա հիմքի վրա հանրապետությունում ստեղծված է արդյունաբերության նոր՝ պարֆյումերիայի-օծանելիքի ճյուղ։

Մնացած ճյուղերի շարքում նշենք պոլիգրաֆիական արդյունաբերությունը, որն ձեռնարկություններ ունի բոլոր շրջանային կենտրոններում ու խոշոր քաղաքներում, բայց որի արտադրանքի ճնշող մեծամասնությունը բաժին է ընկնում Երևան քաղաքին։ Այսուհետև, աշխի են ընկնում երաժշտական գործիքների, ոսկերչական իրերի ու պերճանքի առարկաների, խաղալիքների արտադրությունները, որոնք էլ հենց ամբողջացնում են հանրապետության արդյունաբերական ճյուղային կառուցվածքը։

Ի մի բերելով շարադրվածը, կարող ենք նշել, որ Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղային կազմը սովետական իշխանության տարիներին անճանաչելիորեն փոխվել է, ձևավորվել են փոխկապակցված ու իրար լրացնող բազմաթիվ նոր ճյուղեր ու արտադրություններ։ Ցուրաքանչյուր ճյուղ ու արտադրություն, տեղաբաշխվելով իրեն հատուկ օրինաշափություններով, պետական պլանավորման հիման վրա, արդյունաբերական զարգացման միասնական ոլորտի մեջ են ընդգրկել հանրապետության բոլոր վարչական շրջանները, ապահովելով նրանց արդյունաբերական-արտադրական կապերի զարգացումը և արդյունաբերության տերիտորիալ կազմակերպման շատ թե քիչ արդիական մակարդակը։

Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը իր հարուստ ճյուղային կառուցվածքով, դինամիկորեն զարգացող ու անընդհատ կատարելագործվող միջճյուղային ու ներճյուղային տնտեսական-արտադրական կապերով ներկայումս հանդես է գալիս որպես մի այնպիսի նոր որակի տըն-

տեսական օրգանիզմ, որին հատուկ են արդյունաբերական համալիրի՝ տնտեսաշարհագրական կարևոր տիպոլոգիական միավորի բոլոր գըլիավոր հատկանիշները: Դրա հետ մեկտեղ, չի կարելի չնշել, որ այդ համալիրի ներսում միշտ չէ, որ ճյուղերի ու ենթաճյուղերի միջև հաստատվել են տնտեսական-արտադրական ռացիոնալ կապեր: Այդպիսի նոր կապերի հաստատումը և եղածների կատարելագործումը հանրապետության արդյունաբերության կոմպլեքսայնության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման կարևոր ուղղերվ է:

ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՊԱՋԱԴՐԱՆՁԵՆԵՐ

1. Տվյալ Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ընդհանուր ընութագիրը:
2. Խնչն է մեզ իրավունք տալիս Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը համարել միասնական տնտեսական օրգանիզմ, արդյունաբերական համալիր:

ԳԼՈՒԽ 7

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽԵՄԱՆ ՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԽԵՐԸ

Արդյունաբերության տարածքային կազմակերպումը հասարակության տարածքային կազմակերպման մասնավոր դեպքն է, բաղադրի մասը, որը սակայն հասարակական զարգացման արդի էտապում առաջնակարգ, որոշ իմաստով և վճռորոշ դեր է կատարում:

Հասարակության տարածքային կազմակերպում ասելով պետք է հասկանալ տարածքի օգտագործման այնպիսի նամակարգի ստեղծում, որը քոյլ է տալիս տվյալ տարածեում որոշակի սկզբունքներով ու համամասնությամբ տեղաբաշխել բնակավայրերը, յուրացնել բնական ռեսուրսները, օգտվել ջրամատակարարման և սենյի հայրայրման աղբյուրներից, տեղաբաշխել արտադրամիջոցների ու սպառման առարկաների արտադրության վայրերը, առանձնացնել հանգստի գրադիտները, տեղադրել բուժական, կրթական ու գիտական հիմնարկները:

Արդյունաբերության տարածքային կազմակերպումը գործ ունի տարածքի արդյունաբերական օգտագործման, արդյունաբերական կարողությունների տեղաբաշխման, տվյալ տարածքում արդյունաբերական ձեռնարկությունների միջև տնտեսական-արտադրական կապերի հաս-

տատման (տրանսպորտի օգնությամբ), այդ ձեռնարկությունները ջրով, էլեկտրաէներգիայով, վառելիքով, հումքով ապահովելու և նման բնույթի այլ երկութիւնների հետ, որոնցով պայմանավորվում է արտադրական պրոցեսի նորմալ ընթացքը:

Դժվար չէ կուահել, որ «տարածքային կազմակերպում» հասկացությունը չի նույնանում «տեղարաշխում» հասկացության հետ: Այն ավելի լայն է, քան որևէ առանձին ճյուղի կամ արտադրության «տեղարաշխումը», քան նույնիսկ տարբեր ճյուղերի ու արտադրությունների «փոխադարձ տեղարաշխումը»: Բնակության վայրերի, արտադրությունների, հանգստի գոտիների, բուժական, կրթական և այլ հիմնարկությունների լոկ երկրաշափական փոխադարձ տեղադրումից բացի, «տարածքային կազմակերպում» հասկացության մեջ մտնում են նաև այդ օրյեկտների փոխարաբերությունները, այսինքն փոխադարձ կապերը և այն բռնը երեսույթներն ու առնշուրյաւնները, որոնց ամբողջությունը ստեղծում է հասարակական կյանքի տարածական համակարգը: Թայց և միաժամանակ արտադրության տարածքային կազմակերպումը կարող է իրականանալ բուն արտադրության և այն սպասարկող օրյեկտների տարածական տեղարաշխման միջոցով:

Այսպիսով, կարող ենք ասել, որ արտադրական ու ոչ արտադրական հիմնական ֆոնդերի կոնկրետ տեղարաշխումը հասարակության «տարածքային կազմակերպման» նյութականացված դրսերումն է:

Սոցիալիզմի պայմաններում արդյունաբերության տարածքային կազմակերպման հիմնական գաղափարը հանգում է արտադրության արդյունավետության բարձրացմանը, նյութական միջոցների ու աշխատանքի նվազագույն ծախսումով արտադրանքի առավելագույն քանակի ստեղծմանը: Այդ գաղափարը կյանքում իրագործվում է սոցիալիստական հասարակության գիտական պլանավորման, մասնավորապես տարածման վկանակում միջոցով:

Արդյունաբերության սոցիալիստական տարածքային պլանավորումը հիմնվում է ճյուղերի տեղաբաշխման այն օրենքների ու օրինաշափությունների վրա, որոնք գործում են սոցիալիստական հասարակարգում, բնելով սոցիալիզմի գլխավոր տնտեսական օրենքից:

Այդ օրինաշափություններից գլխավորներն են.

ա) արդյունաբերական արտադրության պլանային համաժամանական (պրոպորցիոնալ) տեղաբաշխումը երկորի տարածքում այն հաշվով, որպեսզի ապահովվի բնական, նյութական ու աշխատանքային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում,

բ) արտադրության տեղաբաշխումը հումքի, վառելիքի, էներգիայի աղբյուրների, ինչպես նաև բանվորական ուժի կուտակման վայրերին ու պատրաստի արտադրանքի սպառման շրջաններին մոտիկ լինելու սկզբ-

բունքով։ Սույն սկզբունքի կիրառումով առաջին հերթին ապահովվում է տրանսպորտային ծախսերի կրճատումը,

գ) գիտատեխնիկական նվաճումների հաշվառումը և արտադրության հասարակական կազմակերպման առաջադիմական ձևերի լայն կիրառումը (համակենտրոնացում, կոմբինացում, մասնագիտացում, կոռպերացում),

դ) փոխպայմանավորված ձեռնարկությունների ու արտադրությունների տարածական ռացիոնալ զուգորդումը և տարրեր մասշտարի տարածքային համալիրների ձևավորումը,


ե) տարածքային-արտադրական համալիրների մասնագիտացումը արտադրանքի այն տեսակների գծով, որոնք տվյալ բնական ու տնտեսական պայմաններում կարող են ստացվել աշխատանքի ու արտադրամիջոցների նվազագույն ծախսումներով։

Հանրապետության տնտեսական զարգացման տարրեր փուլերում և բնական ու տնտեսական տարրեր իրադրություններում այս սկզբունքներից յուրաքանչյուրը կարող է դրսեռպես տարրեր ուժգնությամբ, առավել ընդգծելով արդյունաբերության տարածքային կառուցվածքի այս կամ այն հատկանիշը։

Սոցիալիստական շինարարության անցած տարիներին հանրապետության մեզ ծանոթ տնտեսական վերելքի դրսեռումներից մեկը եղել է արդյունաբերության տարածական հիմքի անընդհատ ընդլայնումը, նորանոր շոշանների ու բնակավայրերի ընդգրկումը արդյունաբերական զարգացման ոլորտի մեջ։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության տարածքային կառուցվածքում առանձնանում է գլխավոր երկաթգծին՝ հանրապետության տրանսպորտային մայրուղուն զուգահեռ ձգվող և նրան հարող «արդյունաբերական շերտը»։ Այն ներառում է իր մեջ Հայկական ՍՍՀ բոլոր արդյունաբերական կետերի ու կենտրոնների գրեթե $\frac{3}{4}$ -ը և սկսվելով հանրապետության Հյուսիսային սահմանից, երկաթգծի երկայնքով ձգվում է Դեբեդ և Փամբակ գետերի հովատով, անցնում է Ծիրակի դաշտը և Արագածի արեմբտյան ստորոտներում դուրս գալիս Արարատյան դաշտ։ Հասնելով Երևանին, նա ճյուղավորվում է 1. դեպի հյուսիս՝ Հրազդան գետին զուգահեռ մինչև Սևանի ավազանը և Աղստևի գետահովիտը և 2. դեպի Արարատյան դաշտի հր.-արլ. հատվածը՝ Արտաշատ ու Արարատ։

Զգալի թվով արդյունաբերական կետեր ու կենտրոններ գտնվում են այս գլխավոր արդյունաբերական շերտից դուրս։ Դրանց ձեավորմանը ու զարգացմանը խթանող գործոնները տարրեր են՝ օգտակար հանածոների արժեքավոր հանքավայրերի շահագործում (Ղափան, Քաջարան և այլն), գյուղատնտեսական հումքի վերամշակում (Բերդ, Կրասնոսելսկ և այլն), կուրորտային տնտեսության սպասարկում (Ձերմուկ) և ազատ աշխա-




Արդյունաթերական Կետեր



ԱՐԴՈՒՍԱԹԵՐԱԿԱՆ ԴԱԿՈՒՄԵՆՏԸ

Եղանակի մեծությունը համապատասխանությունը կազմում է 100%:



տանքային ռեսուրսների առկայություն:

Վերջին ժամանակներս արդյունաբերության տեղաբաշխման վրա ազելի ու ավելի մեծ ազդեցություն է ունենում հատկապես վերջին գործոնը՝ աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխումը, մասնավորապես ազատ ռեսուրսների առկայությունը մի շարք շրջաններում։ Այժմ զգալի թիվ են կազմում այն արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք ստեղծվել են մի շարք հեռավոր գյուղատնտեսական շրջաններում գլխավորապես ազատ աշխատանքային ռեսուրսների առկայության չնորհիվ։ Այդպիսիք ստեղծվել են հատկապես Գորիսում, Կամոյում, Մարտունիում, Ապարանում, Թալինում և մի շարք այլ բնակավայրերում, որտեղ վերոհիշյալ մյուս գործոնները կամ բացակայում են, կամ էլ թույլ են արտահայտված։

Արդյունաբերության տարածական հիմքի ամրապնդումն ու հզորացումը երկմիասնական պրոցես է, որն իր արտահայտությունն է գտնում մի կողմից արդյունաբերական կետերի ցանցի ընդարձակման, նոր արդյունաբերական բնակավայրեր հիմնադրելու, և մյուս կողմից՝ արդեն գոյություն ունեցող արդյունաբերական բնակավայրերի խոշորացման ու հզորացման մեջ։

Դեռևս Կ. Մարքսն է նշել, որ արդյունաբերապես առավել զարգացած երկիրը պակաս զարգացած երկրին ցույց է տալիս լոկ նրա սեփական ապագայի պատկերը։ Տնտեսապես զարգացած երկրների մեծ մասի արդյունաբերության տարածքային կառուցվածքի ձևավորման ուղին սխեմատիկ ձեռվ կարելի է պատկերել հետեւյալ կերպ։ Սկզբում տարրեր բնակվայրերում ստեղծվում են առանձին արդյունաբերական ձեռնարկություններ, որի շնորհիվ ձևավորվում են արդյունաբերական կետերը իրենց արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի առանձին տարրերով։ Այս հանգամանքը դեպի այդ կետերն է ձգում նոր ձեռնարկություններ։ Նույն բնակվայրի ներսում, տարրեր ձեռնարկությունների միջև սկսում են հաստատվել որոշակի արտադրական-տնտեսական կապեր։ արդյունաբերական կետը զարգանալով, աստիճանաբար վերափոխվում է արդյունաբերական կենտրոնի։

Հասկանալի է, որ դրանով չի ավարտվում նոր արդյունաբերական կետերի ստեղծումը։ Ավելին, նախկին առանձին կետը վերածվելով արդյունաբերական խոշոր կենտրոնի, ինքն է սկսում իր շրջակայքում նոր կետերի հիմնադրմանը նպաստող գործոնի դեր կատարել։

Արդյունաբերական կետերի ու կենտրոնների ցանցի ընդլայնումն ու խտացումը, դրանց միջև արտադրական կապերի զարգացումը, ի վերջո, կարող է հանգեցնել այդ կետերի ու կենտրոնների տարածական զուգորդումների՝ արդյունաբերական հանգույցների և ամբողջական արդյունաբերական շրջանների ստեղծմանը, որոնք ոչ այլ ինչ են, քան արդյունաբերական տարածքային-արտադրական համակիրներ։ Դրանք սոցիալիստական արդյունաբերության տարածքային կազմակերպման արդիական ամենահասուն ձևն են։ Դասընթացի նախորդ բաժիններից հայտնի է, որ նախասովկետական Հայաստանում ցենզային արդյունաբերությունը ներկայացված է եղել շուրջ երկու տասնյակ մանր ու միջին ձեռնարկություններով՝ կենտրոնացված ընդամենը ութ բնակվայրերում, որոնց միջև բացակայում էին տնտեսական-արտադրական կապերը։

Սովետական իշխանության առաջին տարիներին արդեն ժողովրդական տնտեսության վերականգնման հետ մեկտեղ առանձին արդյունաբերական ձեռնարկություններ հիմնադրվեցին նոր բնակավայրերում։ Այդ պրոցեսն առավել ուժեղացավ ինդուստրացման տարիներին, ընդդրկելով արդեն մի քանի տասնյակ բնակավայրեր։ Զուգահեռաբար զարգացան տարածքային տնտեսական-արտադրական կապերը։

Առավել էական տեղաշարժեր կատարվեցին հետպատերազմյան տարիներին, երբ արդյունաբերական ընդլայնական զարգացումը ակընհայտորեն ուղեկցվում էր տարածքային կազմակերպման որակական փո-

փոխություններով՝ արագացված թափով ձեւավորվում էին արդյունաբերական կենտրոններն ու արդյունաբերական հանգույցները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բացատրեք հասարակության տարածքային կազմակերպման էությունը:
2. Որո՞նք են արդյունաբերության տեղաբաշխման գլխավոր սկզբունքները, որոնց վրա էլ հիմնվում է արդյունաբերության տարածքային պլանավորումը:
3. Որո՞նք են Հայկական ՍՍՀ արդյունաբերության տեղաբաշխման բնորոշ առանձնահատկությունները:

7.2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԶԵՎ

Հայկական ՍՍՀ արդյունաբերության տարածքային կառուցվածքի վերլուծության համար ելակետ է հանդիսանում մեզ արդեն հայտնի այն փաստը, որ ինքնուրույն հաշվեկշռով աշխատող ավելի քան 700 արդյունաբերական ձեռնարկությունները տեղաբաշխված են մոտավորապես 140 բնակավայրերում, այդ թվում 58 քաղաքային բնակավայրերում և ավելի քան 7 տասնյակ գյուղերում, որոնք ցրված են հանրապետության բոլոր 37 վարչական շրջաններում:

Եթե հիմնվելով այս թվերի վրա, փորձենք հաշվել բնակավայրերում արդյունաբերական ձեռնարկությունների կուտակման միջին ցուցանիշը, կամ, դա նույնն է, թե արդյունաբերության տարածքային համակենտրոնացման աստիճանը, ապա կստացվի, որ ամեն մի բնակավայրին միջին հաշվով ընկնում է 5 արդյունաբերական ձեռնարկություն։ Սակայն իրական պատկերը շատ հեռու է այդ միջին ցուցանիշից, որն ակնառու երևում է ստորև բերվող № 18 աղյուսակից։

Պարզվում է, որ բնակավայրերի ավելի քան կեսում առկա է միայն մեկական արդյունաբերական ձեռնարկություն և միայն 11-ում, այսինքն բնակավայրերի ընդամենը 8 %-ում՝ 10-ից ավելի ձեռնարկություն։ Ըստ որում, դրանցից և ոչ մեկում, բացառությամբ ծրեանի, արդյունաբերական ձեռնարկությունների թիվը չի անցնում 50-ից։

Արդյունաբերական ձեռնարկություններ ունեցող բնակավայրերը ցրված են հանրապետության տարածքում անհավասարաշափ (գծ. 19), Տարածքի մեծ մասում այդ բնակավայրերը հանդես են գալիս «միայնակ»՝ կազմելով բավականին ցրված պատկեր։ Մի քանի շրջանում է միայն, որ դրանք գոյացնում են տարբեր շափսի կուտակումներ ու խըմբավորումներ (տես սույն գլխի հաջորդ բաժինները)։ Խնդնըստինքյան հասկանալի է, որ բնակավայրերի կուտակումներն ու խմբավորումները երեան են գալիս ոչ թե պատահականորեն, այլ որոշակի օրինաշափու-

Արդյունաբերական ձեռնարկությունների թիվը	Բնակավայրերի թիվը
1	76
2—5	38
6—10	15
11—20	8
21—50	2
51—100	—
101—200	—
200-ից ավելի	1

թյուններով, օրյեկտիվ գործոնների ազդեցության ներքո։ Ըստ որում, այս երկույթն իրենով նշանավորում է արդյունաբերության տարածքային կազմակերպման ավելի բարձր աստիճան, քան արդյունաբերական բնակավայրերի ցրված, «միայնակ» տեղաբաշխումն է։

Գնահատելով հանրապետության արդյունաբերության տարածքային կազմակերպման արդի վիճակը, պետք է նշենք, որ երկրի շատ այլ ինդուստրիալ շրջանների համեմ ատությամբ այստեղ շատ մեծ թիվ են կազմում մեկ ձեռնարկություն ունեցող բնակավայրերը։ Բայց և միաժամանակ ակնառու է, որ Հայկական ՍՍՀ արդեն դուրս է եկել արդյունաբերության այսպես կոչված «օջախային» «օազիսային» տեղաբաշխման փուլից (որին հատուկ է հարակից շրջապատի հետ տնտեսական շատ թույլ կապեր ունեցող «անհատ» արդյունաբերական բնակավայրերի առկայությունը) և թեակոխել է զարգացման ավելի հասուն փուլը։ Եթե տիրապետող են դառնում արդյունաբերական բնակավայրերի օրինաշափորեն ձևավորվող խմբավորումները։

Արդյունաբերական բնակավայրերի խմբավորումները որոշակի պայմաններում վերաճում են արդյունաբերական հանգույցների։

Արդյունաբերական հանգույցը դա տարածականութեն իրաց մոտ գտնվող, փոխադարձորեն պայմանավորված արդյունաբերական կենտրոնների և նրանց կից բնակավայրերի ամբողջական նամակարգն է, որի համար ընդհանուր են տրանսպորտային դիրքն ու նաղորդակցության ուղիները, աշխատանքային ուսուրսներն ու էլեկտրաէներգիայի և զազամատակարգման աղբյուրները, շինարարական նյութատեխնիկական բազան և արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի մյուս գլխավոր տարրերը։ Կարևոր հատկանիշ է հանգույցի մեջ մտնող արդյունաբերական կետերի ու կենտրոնների տնտեսական կապերի առկա-

յությունը՝ Զարգացման բարձր մակարդակի դեպքում այդ կապերը կարող են դրսեռդրվել կոմբինացման ու կոռպերացման ձևով¹:

Արդյունաբերական (տնտեսական) հանգույցը լինելով տարածքային-արտադրական համալիրի տարատեսակ, ապահովում է տարածքի առավել նպատակասլաց օգտագործումը և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացումը:

Սովետական Միության նոր յուրացվող կամ թույլ յուրացված շըրշաններում համապատասխան նախադրյալների առկայության դեպքում պլանային կարգով նախագծվում ու կառուցվում են այդպիսի արդյունաբերական տարածքային համալիրներ:

Այդպիսիք են Կրասնոյարսկի, Սայանյան, Անգարսկի, Բրատսկի, Ուստ-Նիժնիմսկի, Հարավ-Տաջիկական և մի շարք այլ համալիրներ, որոնք միասնական պլանով ստեղծվում են ՍՍՀՄ արևելյան շրջաններում:

Սովետական Հայաստանում, ինչպես և յուրացվածության բարձր աստիճան ունեցող այլ շրջաններում արդյունաբերական հանգույցները ձևավորվում են, որպես կանոն, ոչ պլանային կարգով, այլ առկա արտադրողական ուժերի և նախկինում ստեղծված ենթակառուցվածքի համատեղ օգտագործման, տնտեսական-արտադրական փոխադարձ կապերի հաստատման շնորհիվ։ Այս երեսությունները, եթե նույնիսկ դեռևս դուրս են մնում միասնական կոմպլեքսային պլանավորումից, օբյեկտիվորեն ծավալվում ու զարգանում են սոցիալիստական արդյունաբերության տեղաբաշխման օրինաշափություններին համապատասխան։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության տարածքային կառուցվածքի վերլուծության հիման վրա առանձնացվում են արդյունաբերական (տքնտեսական) 6 հանգույցներ՝ Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Հրազդան-Սևանի և Ղափան-Քաջարանի։ Դրանց մի մասը արդեն ձևավորված, ավելի կամ պակաս շափով հասուն արդյունաբերական հանգույցներ են, որտեղ այսօր արդեն ակնբախ են արդյունաբերության տարածքային կազմակերպման այս ձևին հատուկ առավելությունները։ Մյուսները գտնվում են զարգացման սկզբնական փուլում, նոր միայն ուրվագծվում են նրանց սահմանները և արտադրական կառուցվածքը։

¹ Ի տարբերություն տնտեսական աշխարհագրության և ռեգիոնալ տնտեսագրատության կողմից ընդունված այս բովանդակության, «արդյունաբերական հանգույց» տերմինը բաղաբաշխնարարներն ու ճարտարապետները օգտագործում են այլ իմաստով։ դրա տակ նրանք հասկանում են նույն բնակավայրի սահմաններում արդյունաբերական ձեռնարկությունների միավորումը կոմպակտ տարածքում՝ կոմունիկացիաների ու որաշ օժանգակ կառույցների համատեղ օգտագործման նպատակով (ձեռնարկությունների բլոկ)։ Հասկացությունների խառնաշփոթությունը թույլ շտալու նպատակով՝ առաջարկություններ են արվում տնտեսական աշխարհագրության և ռեգիոնալ տնտեսագիտության ավանդական արդյունաբերական հանգույցը՝ փոխարինել տնտեսական հանգույց գիտարառը։

Հայկական ՍՍՀ տնտեսական կյանքում արդյունաբերական այդ հանգույցների նշանակությունը ճիշտ պատկերացնելու համար նշենք, որ դրանց բաժին է ընկնում հանրապետության ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի, ինչպես նաև արդյունաբերական-արտադրական անձնակազմի ու հիմնական ֆոնդերի ավելի քան 90 %, ինչպես այն հանգամանքին, որ այդ հնագույցները միավորում են արդյունաբերական կետերի ու կենտրոնների ընդհանուր թվի մեկ քառորդը միայն:

ՀԱՐՁԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱԿԱՆՆԵՐ

1. Ի՞նչ քան է արդյունաբերական հանգույցը և ինչո՞ւ է այն համարվում արգյունաբերության տարածքային կազմակերպման առաջադիմական ձևն:

2 Ի՞նչ պայմաններում են ձևավորվել Հայկական ՍՍՀ արդյունաբերական (տնտեսական) հանգույցները: Թվարկեցներ այդ հանգույցները:

7.3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ (ՏՆՏԵՍԱԿԱՆ) ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երեանի արդյունաբերական (տնտեսական) հանգույցը: Սա խոշորագույնն է Հայկական ՍՍՀ-ում և խոշորներից մեկը՝ Անդրկովկասում: Ընդգրկում է հանրապետության հզորագույն արդյունաբերական կենտրոն Երևանը, խոշոր և միջին կենտրոններ և կետեր Աբովյանը, Արգնին, Նոր Հաճընը, Բյուրեղավանը, որոնք ընկած են Երևանից հյուսիս, երևան—Հրազդան երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների վրա, Էջմիածինը, Հոկտեմբերյանը, Արտաշատը, Մասիսը, Աշտարակը և Նրանց հետ միասին տարաբնակեցման միասնական համակարգ կազմող քաղաքատիպ ավաններն ու գյուղական բնակավայրերը՝ հանգույցի կենտրոնից մինչև 40—50 կմ հեռավորության վրա:

Երեանի հանգույցը իրենից ներկայացնում է ավելի քան 300 կոմբինատիվ գործարանների, գործարանների, ֆաբրիկաների, հանքերի, էլեկտրակայանների մի հզոր համալիր, որն ունի էլեկտրաէներգիայի, գազի, մասսամբ ջրի միասնական մատակարարում, հաղորդակցության ճանապարհների միասնական ցանց: Հանգույցի զբաղեցրած տարածքի համար ընդհանուր է աշխարհագրական-տրանսպորտային դիրքը: Այստեղ են հատվում Երևան—Հրազդան—Սևան—Զող, Հրազդան—Աղստաֆա, Երևան—Լենինական—Թրիլիսի, Երևան—Նախիջևան—Բաքու երկաթգծերը և տարրերուղղությունների խճուղիները, որոնք ապահովում են ոչ միայն ներհանգուցային, այլև արտաքին հաղորդակցությունը:

Հանգույցում կենտրոնացված է շուրջ 1,5 մլն. քաղաքային բնակչություն, հանրապետության արդյունաբերա-արտադրական անձնակազմի և հիմնական ֆոնդերի մինչև $\frac{2}{3}$ -ը, թողարկվում է արդյունաբերության համախառն արտադրանքի $\frac{3}{4}$ -ից ավելին:

Լինելով Հայկական ՍՍՀ ամենաբարձր զարգացման հասած արդյունաբերական հանգույցը, նա աշքի է ընկնում արտադրության բարդ կառուցվածքով: Այստեղ ստեղծված են թե՛ արդյունահանող, թե՛ վերամշակող, թե՛ էլեկտրաէներգետիկական բավական հզոր արդյունաբերություն, սակայն պրոֆիլային են վերջին երկու ճյուղերը: Արդյունահանող արդյունաբերությունը ներկայացված է բնական շինանյութերի և քարաղի հանույթով, որոնք, ճիշտ է, օրգանապես կապված են հանգույցի արդյունաբերական համալիրին, բայց դրանց դերը ուղղաձիգ ու հորիզոնական արտադրական կապեր հաստատելու հարցում համեմատաբար փոքր է:

Վերամշակող արդյունաբերությունը, ի տարրերություն արդյունահանողի, աշքի է ընկնում մեծ բազմազանությամբ և միջյուղային ու ներճյուղային շատ սերտ կապերով:

Հատկանշական է էլեկտրաէներգիայի մեծ դերը հանգույցի արդյունաբերական համալիրում: Հանգույցի սահմաններում են տեղակայված հանրապետության էներգետիկական հզորությունների շուրջ $\frac{2}{3}$ -ը (Ասումային, ծրեանի ջերմային, Հրազդան գետի վրա կառուցված ՀԷԿ-երի գասկաղի 3 աստիճանները, մի քանի այլ մանր հիդրոէլեկտրակայաններ), որոնք էլեկտրական էներգիա են մատակարարում ոչ միայն ծրեանյան հանգույցին, այլև հանրապետության շատ այլ շրջանների և մասամբ էլ Անդրկովկասի միասնական էներգահամակարգին:

Առանձնահատուկ կարևորություն ունեն արտադրական ներհանգույցային հորիզոնական կապերը, որոնց շնորհիվ էլ, ըստ էության, բնակավայրերի ու արդյունաբերական ձեռնարկությունների պատահական խմբակցությունները վերածվում են միասնական տնտեսական օրգանիզմի, տվյալ դեպքում՝ արդյունաբերական (տնտեսական) հանգույցի:

Հանգույցի համար բնորոշ է այն, որ ներքին տնտեսական-արտադրական կապերը խիստ արտահայտված միակենտրոն բաշխում ունեն. դրանք թե՛ռված են ծրեանում, մի բան, որ բացատրվում է վերջինիս որոշիչ, տիրապետող նշանակությամբ ու դիրքով հանգույցի մյուս արդյունաբերական կենտրոնների նկատմամբ: Բանն այն է, որ հանգույցի ծրեանից դուրս գտնվող արդյունաբերական կենտրոնների ու կետերի մեծ մասը ստեղծվել ու զարգանում են ինչ-որ շափով ծրեանի շնորհիվ, նրա «պատվերով» և հաճախ որպես արբանյակ բնակավայրեր նրան լրացնող ֆունկցիա են կատարում:

Հակառակ դրան, թույլ են զարգացած այն կապերը, որոնք շրջանցելով երևանը, հանգույցի մյուս քաղաքները կապում են միմյանց հետ Սակայն, հանգույցի հետագա զարգացման ու հասունացման հետ մեկտեղ, ապագայում այդ կապերը պետք է ամրապնդվեն ու դառնան ավելի բազմազան:

Զարգացման բարձր մակարդակի վրա են գտնվում աշխատանքային ուսուրաների ներհանգույցային կապերը: Հանրապետության ոչ մի այլ հանգույցում այնպիսի ծավալ չի ընդունել բնակչության ճոճանակային միգրացիան, ինչպես այստեղ: Հազարների է հասնում այն աշխատողների թիվը, որոնք բնակվելով երևանում, ամեն օր աշխատանքի են մեկնում հանգույցի մյուս կենտրոնները, կամ ունենալով վերջիններս որպես բնակության մշտական վայր, աշխատում են մայրաքաղաքում:

Տեսանելի հեռանկարում երևանի արդյունաբերական հանգույցը կղարգանա առաջին հերթին գործող ձեռնարկությունների վերակառուցման ու ընդարձակման շնորհիվ: Բայց և միաժամանակ չի դադարի նոր ձեռնարկությունների և նույնիսկ արդյունաբերական կետերի ու կենտրոնների ստեղծումը հանգույցի՝ երևան քաղաքից դուրս գտնվող շրջաններում:

Վերջին տարիներին երևանում արդյունաբերության զարգացման նախկին քարձր տեմպերը և նոր ձեռնարկությունների կառուցումը սահմանափակելու ընդհանուր ձգտում է նկատվում, որը շատ տեսակետներից նպատակահարմար է և տնտեսապես հիմնավորված: Օրինակ, վերջին տասնամյակում երևան քաղաքի արդյունաբերության աճի տեմպերը գրեթե կրկնակի անգամ ավելի դանդաղ են, քան հանրապետության միշտին ցուցանիշն է: Բայց մյուս կողմից, ամբողջ հանրապետության և հանգույցի հետագա զարգացման, արտադրական կառուցվածքի կատարելագործման շահերը թույլ չեն տալիս ամբողջապես հրաժարվել այստեղ նոր ձեռնարկություններ ու արտադրություններ կառուցելուց: Եվ ահա, այս հակասությունը մասսամբ լուծվում է նրանով, որ երևանի համար «նախատեսված» նոր ձեռնարկությունները տեղադրվում են թեև ոչ անհրաժեշտ սահմաններում, բայց նրան անմիջապես մոտ վայրերում:

Պետք է ենթադրել, որ առաջիկայում հանգույցի արդյունաբերական պոտենցիալի հետագա աճի հետ միասին տեղի կունենա հիմնական ֆոնդերի որոշ վերաբաշխում հօգուտ ավելի փոքր կենտրոնների ու կետերի: Աս, իր հերթին, կհանգեցնի արտադրական-տարածական կապերի որոշ վերակառուցման:

Ինչ վեաբերում է հանգույցի տարածքային ընդարձակմանը, ապա դա կարող է տեղի ունենալ Արարատ քաղաքի և Վեդի քաղաքատիպ ավանի հաշվին, որոնք այսօր արդեն հանգույցի կենտրոնի հետ բավա-

կան սերտ տնտեսական-արտադրական կապեր են հաստատել, հարում են այդ կենտրոնին և, միաժամանակ, ինքնուրուց հանգույց ստեղծելու հեռանկար շունեն:

Որոշակի է նաև այն միտումը, որ Երևանի հանգույցը ընդարձակվելով նաև դեպի Հյուսիս, աստիճանաբար կարող է իր մեջ ներառել Հրազդան—Սևան հանգույցը, առաջացնելով ավելի հզոր տարածքային արտադրական համալիր: Այսօր արդեն վիճելի է որոշ բնակավայրեր (Չարենցավան, Լուսակերտ) այս կամ այն հանգույցի մեջ մտցնելու հարցը:

Լենինականի արդյունաբերական (տնտեսական) հանգույց: Իր հզորությամբ ու հասունության աստիճանով սա Երկրորդն է Հայկական ՍՍՀ-ում, բավականին մեծ չափով առաջնությունը զիշելով Երևանի հանգույցին: Դա վերաբերվում է թե՛ արդյունաբերության զարգացման քանակական ցուցանիշներին և թե՛ հանգուցաստեղծ գործուների մակարդակին ու բովանդակությանը՝ առաջին հերթին ներքին տնտեսական-արտադրական կապերի խորությանն ու բազմազանությանը:

Հանգույցը ձևավորվելով ու զարգանալով լենինական քաղաքի հիման վրա, ի մի է համախմբում նաև Արթիկը, Մարալիկը, Պեմզաշենը, Անիպեմզան և Կից շրջանների տասնյակ գյուղական բնակավայրերը:

Հանգույցի համար տնտեսական-տրանսպորտային առանցք են հանդիսանում Երկաթուղային մայրուղու լենինականին հարող հատվածը դեպի Արթիկ ձգվող ճյուղավորումով, ինչպես նաև լենինականից դեպի Հս.-արլ. և Հր. ձգվող ավտոխճուղիները: Սովետական Միության և Թուրքիայի միջև տնտեսական-առևտրական կապերի զարգացման արդի ցածր մակարդակի պայմաններում երկաթգծի արևմտյան ճյուղավորումը գլխավորապես տարանցիկ նշանակություն ունի և հանգուցաստեղծ ֆունկցիա գրեթե շի կատարում:

Լենինականը կենտրոնական բաշխիչ դիրք ունի էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարման գործում: Այն բարձր լարման էլեկտրահաղորդման գծերով միացած է Հրազդանին ու Երևանին, իսկ խողովակաշարով՝ Ղազախ-Երևան մագիստրալային գազամուղին: (Հանգույցի սահմաններում գտնվող միակ լենինականի ՀԷԿ-ը աշքի ընկնող գեր խաղալ շի կարող):

Այստեղ, հատկապես լենինականի շուրջը մինչև 20—25 կմ շառավիղով գոյություն ունի արդյունաբերական տարբեր ձեռնարկություններին սպասարկող բնակչության ճոճանակային միգրացիա, որը գնալով ուժեղանում է:

Հանգուցաստեղծ մյուս գործուները դեռևս թույլ են արտահայտված, թեև ակտիվորեն զարգանում են: Դա վերաբերում է մասնավորա-

պես ներհանգուցային արտադրական կապերին, որոնք նկատելի են հատկապես կենինականի ներսում և կենինականի՝ մի կողմից և Արթիկի ու Մարալիկի միջև՝ մյուս կողմից: Այդ կապերն ընդգրկում են տեքստիլ, մեքենաշինական և շինանյութերի արդյունաբերության ճյուղերը:

Լենինականի հանգույցի արդյունաբերությունը ծրեանի համեմատությամբ թեև շատ ավելի սակավաճյուղ է, բայց կառուցվածքի առումով արդեն բավականին բարդ է և իր զարգացման ընթացքում կարիք ունի պլանային կարգավորման ու կատարելագործման: Հանգույցի առաջատար ճյուղերն են մեքենաշինությունը, տեքստիլ, շինանյութերի և սննդի արդյունաբերությունը:

Մեքենաշինությունը և տեքստիլ արդյունաբերությունը զուրկ են տեղական հումքային բազայից և հարում են առավելապես աշխատանքային ուսոււրսների կուտակման և տրանսպորտային շատ թե քիչ նպաստավոր դիրքադրություն ունեցող վայրերին (Լենինականից բացի, այդպիսիք են Արթիկը և Մարալիկը):

Ծինանյութերի և սննդի արդյունաբերության ճյուղերը ամբողջությամբ տեղական հումքի արգասիք են, որը և պայմանավորում է նրանց ճյուղային կառուցվածքն ու արտադրական մասնագիտացումը: Առաջինի գծով դա բնական շինանյութերի՝ տուփի, պեմզայի, կրի, բազալտի արդյունահանումը և մասսամբ էլ մշակումն է, իսկ սննդարդյունաբերության գծով՝ անասնապահական մթերքների վերամշակումը (կաթի, յուղապահնրագործական և մսի արդյունաբերություն): Դրանք ավելի ցրված տարածում ունեն և, բացառությամբ մսի արդյունաբերության, մեծ մասամբ տեղաբաշխված են Լենինականից դուրս:

Արդյունաբերության նման ճյուղային կառուցվածքի ու տեղաբաշխման պատճառով էլ Լենինականի ներհանգուցային տնտեսական-արտադրական կապերի տարածական պատկերում բնեռացումը շատ ավելի թույլ է, քան ծրեանինն է:

Մոտ ապագայում հանգույցի զարգացումը պետք է ընթանա արդեն ձեւվորված արդյունաբերական կետերի ու կենտրոնների հետագա աճի և վերը նշված մասնագիտացման ճյուղերի ընդլայնման ուղիով: Նոր ճյուղերի և արդյունաբերական նոր կետերի ու կենտրոնների ստեղծման համար օբյեկտիվ նախադրյալները թույլ են: Որոշակի պայմաններում կարող է տեղի ունենալ հանգույցի սահմանների ընդարձակում, հատկապես դեպի ճյուսիս, որտեղ հանգույցի մեջ կընդգրկվեն Ամասիս և Ղուկասյան շրջանային կենտրոնները: Ներկայումս արդեն այդ բնակավայրերում գործում են Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր:

Կիրովականի հանգույցը իր արտադրական պոտենցիալով հանրապետությունում երրորդն է: Հատկանշական են նաև հանգույցի զարգաց-

ման բարձր տեմպերը ինչպես անցած տասնամյակում, այնպես էլ ներկայումս: Հիշենք, որ մինչև 30-ական թվականները այստեղ արդյունաբերությունը լրիվ բացակայել է: Նրա ի հայտ գալը կապվում է Զորագետի ՀՀԿ-ի և Կիրովականի քիմիական գործարանի շինարարության հետ, որոնք ավելի ուշ դեպի իրենց ձգեցին մի շարք այլ ձեռնարկություններ ևս: Այդ բազայի վրա ձեսվորված Կիրովականի արդյունաբերությունն էլ հենց հիմք ծառայեց համանուն հանգույցի ձեսվորման համար, որն իր մեջ է միավորում նաև Սպիտակ քաղաքը, Զորագետ քաղաքատիկ ավանը և դրանց միջև ընկած բնակավայրերի համակարգը:

Հանգուցաստեղծ գործոնների թվում նշենք հիշյալ արդյունաբերական կետերի ու կենտրոնների տարածական մոտիկությունը, ընդհանուր տնտեսաշխարհագրական դիրքը, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման ու գազամատակարարման ցանցի, ինչպես նաև հաղորդակցության ճանապարհների միասնությունը: Բավկականին որոշակի է նաև շինարարական ինդուստրիայի նյութատեխնիկական բազայի ընդհանրությունը: Հանգույցի գոյությունը հաստատվում է նաև այնպիսի փաստերով, ինչպիսիք են այդ տարածքում տեղադրված արդյունաբերական ձեռնարկությունների նյութատեխնիկական մատակարարման և աշխատանքային ուսուլըների գծով զարգացող հորիզոնական կապերը, որոնց հանգուցակետը Կիրովական քաղաքն է:

Ինչ վերաբերում է ներհանգուցային արդյունաբերարտադրական կապերին, ապա դրանք առայժմ թույլ են արտահայտված և ընդգրկում են մեքենաշինությունը, տեքստիլ-տրիկոտաժեղենի արտադրությունը (Կիրովական—Սպիտակ) և շինանյութերի արդյունաբերությունը (Կիրովական—Փամբակ):

Կիրովականի հանգույցի հեռանկարային զարգացման նախադրյալների և արդեն ուրվագծվող միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ մոտ ապագայում հանգույցի արդյունաբերական համալիրի մեջ կարող է ներգրավվել նաև Ստեփանավան քաղաքը, որի հետևանքով նկատելիորեն կընդլայնվի հանգույցի տարածական կազմը: Մյուս կողմից, արագացված տեմպերով շարունակվելու է Կիրովականի ու Սպիտակի արդյունաբերական զարգացումը, կարող են ստեղծվել նաև արդյունաբերական նոր կետեր ու կենտրոններ (այդպիսին դառնալու լավ հնարավորություններ ունի մասնավորապես Կիրովականի արվարձաններից Մեղրուտ գյուղը՝ Գուգարքի շրջանի վարչական կենտրոնը):

Ալավերդու հանգույցը տարածական առումով ընդգրկում է Դեբեդ գետի նեղ հովտում, երկաթուղու և ավտոխճուղու վրա ընկած արդյունաբերական կենտրոններն ու կետերը և անմիջականորեն դրանց հարող գյուղական բնակավայրերի ցանցը: Այդ կենտրոններն ու կետերն են Ալավերդի քաղաքը, Ախթալա, Շամլուղ, Թումանյան և Այրում քաղա-

Քատիպ ավանները, որոնք խմբավորված լինելով համեմատաբար ոչ ընդարձակ տարածքում, ունեն ընդհանուր ջրամատակարարման աղբյուր, էլեկտրաէներգիայի ու բնական գազի բաշխման, ինչպես նաև ներքին հաղորդակցության ուղիների միասնական ցանց: Հանգույցի բոլոր մասերի համար ընդհանուր է աշխարհագրական-տրանսպորտային դիրքը: Միասնական է նաև շինարարական բազան:

Ալավերդու հանգույցի համար հատկանշական է արդյունաբերության գլխավոր ճյուղում հաջորդական տեխնոլոգիական ստադիաների առկայությունը և դրանց միջև արտադրական կապերի զարգացման բարձր մակարդակը: Խոսքը գունավոր մետալուրգիայի (պղնձի արտադրության) մասին է, որի բազայի վրա և ձեւավորվել է սույն արդյունաբերական-տերիտորիալ համալիրը:

Ալավերդու հանգույցը հանրապետությունում գեռևս միակն է, որտեղ արդյունաբերության գլխավոր, տիրապետող ճյուղի տեխնոլոգիական ստադիաների լրիվ շղթան սկսվում և ավարտվում է տեղում, ընդգրկելով հանգույցի տարբեր բնակավայրեր (պղնձահումքի արդյունահանումն ու հարստացումը Շամլուղում և Ախթալայում, խտանյութի մետալուրգիական վերամշակումը, պատրաստի արտադրանքի ստացումը և թափոնների ուղիղացումը Ալավերդում): Ընդ որում, նրան է բաժին ընկնում հանրապետության և ու ուաֆինացված պղնձի, ցինկի ու կապարի խտանյութի, ծծմբաթթվի, պղնձարշասպի, հրակայուն նյութերի (թումանյան) ամբողջ արտադրությունը:

Զնայած սննդի, թեթև արդյունաբերության և այլ ճյուղերի որոշ արտադրությունների առկայությանը, հանգույցը խիստ արտահայտված ծանր արդյունաբերական թեքում ունի և այդ տեսակետից նմանվելով Ղափան-Քաջարան հանգույցին, ամբողջովին տարբերվում է մյուս հանգույցներից:

Ալավերդու հանգույցի զարգացման հեռանկարները կապվում են գլխավորապես պղնձի արդյունաբերության հումքային բազայի ամրապնդման և Դեբեդի ջրային ռեսուրսների կոմպլեքսային օգտագործման հետ: Հարց է դրված առաջիկայում ավարտել Արմանիսի պղնձի (Ստեփանավանի շրջան) և մի քանի այլ հանքավայրերի հետափուզումը: Դրանց հանքաքարը պետք է հարստացվի ու վերամշակվի Ախթալայի ու Ալավերդու ձեռնարկություններում: Սա կընդարձակի հանգույցի սահմանները դեպի արևմուտք: Դեբեդի կոմպլեքսային օգտագործման շնորհիվ կընդարձակվեն ոռոգելի հողատարածությունները, որոնք բազա հանդիսանալով գյուղատնտեսական հումքի արտադրության ավելացման համար, կիմիանեն սննդի արդյունաբերության զարգացմանը:

Հրազդան—Սևան հանգույցը ամենաերիտասարդն է հանրապետությունում: Սկսվելով ձեւավորվել բավական ուշ, միայն 60-ական թվա-

կաններից, բայց զարգանալով արագ թափով, նա արդեն իր որոշակի դեմքն ունեցող արդյունաբերական-տերիտորիալ համալիր է դառնում։ Հանգույցն աչքի է ընկնում բարենպաստ նախադրյալներով, որոնք պայմանավորում են նրա զարգացման բարձր տեմպերը և լայն հեռանկարները։

Այդ նախադրյալներից գլխավորներն են.

ա) նպաստավոր տնտեսաշխարհագրական դիրքը հանրապետության տարածքի կենտրոնական հատվածում, Երևանը Սևանի ավազանի և հյուսիսային շրջանների հետ կապող երկաթուղիների հատման վայրում, Երևանի հզոր հանգույցին անմիջապես մոտիկ,

բ) զարգացած արտադրական ենթակառուցվածքը, որը ստեղծվել է Սևան—Հրազդան ոռոգիչ-էներգետիկ համալիրի շնորհիվ,

գ) շերմային և հիդրավլիկ հզոր էլեկտրակայանների և նեֆելինային սինիտների կոմպլեքսային օգտագործման համար նախկինում ստեղծված արտադրական շենքերի առկայությունը։

Հանգույցը ընդգրկում է Հրազդան, Սևան, Գարենցավան քաղաքները և դրանց կից գյուղական և քաղաքային բնակավայրերը։

Հանգուցատեղծ կարևոր գործոնի դեր է կատարում նաև տրանսպորտային ցանցի, էլեկտրաէներգիայի, բնական գազի և ջրամատակարարման աղբյուրների ընդհանրությունը։

Հրազդան—Սևան հանգույցի արդյունաբերական կառուցվածքում ակնհայտ է էլեկտրաէներգետիկայի բացարձակ գերակշռությունը, որը առաջիկայում ավելի է մեծանալու։

Այն ներկայացված է Հրազդան գետի հիդրոէլեկտրակայանների կասկադի առաջին երեք աստիճաններով (Սևանի ստորգետնյա, Աթարբեկյանի ու Գյումուշի ՀԷԿ-եր) և հանրապետությունում խոշորագույն՝ Հրազդանի ՊՇԷԿ-ով։ Դրանք Հայկական ՍՍՀ միասնական էներգահամակարգում կենտրոնական դիրք են գրավում, էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերի խիտ ցանցով միացած են հանրապետության գրեթե բոլոր շրջանների հետ, որոնց և առաջում են արտադրած էլեկտրաէներգիայի մեծ մասը։

Մինչև վերջերս հանգույցի զարգացման հեռանկարը կապվում էր նեֆելինային սիենիտների կոմպլեքսային օգտագործման և այդ նպատակով կառուցվող Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի մեջ մտնող տասնյակ ձեռնարկությունների ու արտադրությունների հետ։ Սակայն այդ համալիրի շինարարությունը դադարեցնելու և վերապրոֆիլացման կապակցությամբ արմատապես փոխվեց հանգույցի արտադրական մասնագիտացումը։ Էլեկտրաէներգետիկայի հետ մեկանական պլան մղվեց ճշգրիտ, էլեկտրոնային մեքենաշինությունը։ Այսօր արդեն հանրապետության խոշորագույն մեքենաշինական ձեռնարկություններից է

դարձել «Հրազդանի մեքենաշինարար» միավորումը: Բացի այդ, գործում են հաստոցագործիքաշինության, ավտոմոբիլաշինության, սարքաշինության և այլ աշխի ընկնող ձեռնարկություններ Զարենցավանում, Սևանում, Հրազդանում ու Գագարինում:

Հանգույցի արդյունաբերության ճյուղային կառուցվածքում կարեվոր տեղ են գրավում նաև ապակե թելերի, ծխախոտի ֆերմենտացիայի, ալյուրի ու խտացրած կերերի (Սևան), սև մետաղե ձուլածոների, լիզինի (Զարենցավան) արտադրությունները: Առայժմ հանգույցի համար մասնագիտացման ճյուղ է նաև ցեմենտի թողարկումը, որը, սակայն մոտ ապագայում կվերացվի:

Ղափան—Քաջարանի արդյունաբերական (տնտեսական) հանգույցը իր տարածքով ընդարձակ չէ. այն ընդգրկում է Ղափան ու Քաջարան քաղաքները և դրանց միջև Ողջի նեղ գետահովտով ձգված մի քանի գյուղական բնակավայրեր:

Պաշտոնապես հաստատված համապատասխան այս տարածքը ներկայում կառուցվածքում է որպես մեկ միասնական, այսպես կոչված, ուղղունալ քաղաք, որն ունի ընդհանուր էլեկտրագույնական համակարարման աղբյուրներ և ինժեներական կոմունիկացիաների միասնական ցանց:

Արտադրության ճյուղային կառուցվածքի առումով հանգույցը ամենից ավելի միաստարքն է և աշխի է ընկնում խիստ արտահայտված նեղ մասնագիտացմամբ: Դա ըստ էության հանգեցրել է տնտեսության միակողմանի և ոչ կոմպլեքսային զարգացմանը: Այս տեսակետից սույն հանգույցը առանձնանում է մյուսների շարքում: Ի դեպ, առայժմ բազմաճյուղ տնտեսության կոմպլեքսային զարգացման նախադրյալներն են այստեղ ավելի սահմանափակ են, քան մյուս հանգույցներում:

Դա պայմանավորված է նախ և առաջ հանգույցի անբարենպաստ տնտեսաշխարհագրական դիրքով (ծայրամասային վիճակը, երկաթուղարքին ու խճուղային մայրուղիներից հեռու գտնվելը) և լեռնային, մասնատված մակերևույթով, որը նվազագույնի է հասցնում քաղաքաշինական, տարածքի գյուղատնտեսական օգտագործման և բնակչության խիտ ու կոմպակտ տարաբնակեցման հնարավորությունները:

Արդյունաբերության զարգացման որոշիչ նախադրյալը ընդերքի հանքային հարստություններն են, որոնց օգտագործումն էլ հենց որոշում է հանգույցի արտադրական դեմքը և նրա տեղը հանրապետությունում: Օգտագործվում են պղնձի (Ղափան) և պղնձամոլիրդենային (Քաջարան, Ագարակ) հանքավայրերը: Դրանց բազայի վրա գործող արտադրությունները (հանքաքարի արդյունահանում ու հարստացում) ոչ թե լրացնում, այլ կրկնում են միմյանց, ուստի և միավորող տեխնոլոգիական կապեր ստեղծել շեն կարող: Դրան հակառակ, ընդհանուր է այդ

արտադրությունները սպասարկող բազան (Նյութատեխնիկական մատակարարում, սարքավորումների վերանորոգում և այլն):

Հանգույցը մոլիբդենի և պղնձի խտանյութի խոշորագույն արտադրողն է Հանրապետությունում և ամբողջ Անդրկովկասյան տնտեսական շրջանում: Արդյունաբերական մյուս ճյուղերը (սննդի, շինանյութերի, թեթև, փայտամշակման) տեղական, սպասարկող ֆունկցիա են կատարում: Բացառություն են կազմում վերջերս միայն Ղափանում ստեղծված աշխատատար, ոչ մետաղատար մեքենաշինական և տեքստիլ-տրիկոտաժի որոշ արտադրությունները, որոնք կարող են ընդլայնվել ու զարգանալ:

Ապագայում ևս հանգույցի գարգացումը կապվում է լեռնահանքային արդյունաբերության ընդլայնման, նոր հանքավայրերի շահագործման հետ (ընթացիկ հնգամյակում շահագործման կհանձնվեն Շահումյանի բազմամետաղային հանքավայրերը): Նոր հանքավայրերի հայտնաբերումը, հետազոտված պաշարների մեծացումը և հումքի արդյունանման ավելացումը այն հաշվով, որպեսզի գերազանցի գործող մետաղորդիական ձեռնարկությունների պահանջը, հնարավորություն կտաղնելու հանգույցում մետաղածուլություն ստեղծելու խնդիրը: Այս հարցի դրական լուծման դեպքում միայն Ղափան—Փաշարան հանգույցում երեվան կգան արտադրական-տեխնոլոգիական գարգացած կապեր, արդյունաբերությունը կստանա բազմամյուղ բնույթ: Այդ դեպքում, Ղափանից ու Փաշարանից բացի, մեկ միասնական արդյունբերական-տերիտորիալ համալիրի մեջ կընդգրկվեն նաև Ագարակ ու Մեղրի քաղաքային բնակվայրերը: Դրան նպաստող հանգամանք է նաև Մեղրի—Փաշարան ավտոբունուղին, որը հանգույցին տվեց երկրորդ ելքը դեպի երկաթուղարիծը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերլուծեց յուրաքանչյուր արգամարերական հանգույցը, ավել նրանց համեմատական բնութագիրը:
2. Գնահատեցեք դրանց զարգացման հուսնկարները:

7.4. ԱՐԴՅՈՒՆԱԲՈՒՐԱԿԱՆ ԱՅԼ ԿԵՑԵՐ ՈՒ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Վերը բնութագրված 6 հանգույցները թեև որոշիչ են Հայկական ՍՍՀ արդյունաբերության արդի տեղաբաշխման ու տարածքային կազմակերպման համար, այնուամենայնիվ չեն տալիս նրա ամբողջական, առավել ևս՝ սպառիչ պատկերը: Դրանցից դուրս արդյունաբերությունը տեղաբաշխված է ևս մի քանի տասնյակ կետերում, որոնք ցրված են

բոլոր շրջաններում, հանրապետության ամբողջ տարածքով մեկ օթեքարտեզի վրա արդյունաբերական բոլոր կետերն ու կենտրոնները միացնենք դրանց փոխադարձ կապերը պատկերող գծերով, ապա կստացվի մի բարդ հյուսվածք: Այդ հյուսվածքի հատկապես խիտ մասերը, որտեղ հանգուցվող կապերը առավել մեծ թիվ են կազմում, համընկնում են վերը նկարագրված արդյունաբերական վեց հանգուցների հետ: Մնացած կետերը ավելի ցրված են, դրանց միացնող կապերի ցանցը՝ ավելի նոսր: Այդ բոլորով հանդերձ, հենց դրանք են, որ ամբողջական տեսք են հաղորդում հանրապետության արդյունաբերության տարածքային կառուցվածքին, դարձնելով այն մեկ միասնական տարածական համակարգ:

Արդյունաբերական հանգուցներից դուրս մնացած առավել խոշոր կետերն ու կենտրոնները ընկած են գլխավորապես բնական երեք շրջաններում՝ Աղստև գետի ավազանում, Սևանա լճի ավազանի հարավային հատվածում և Որոտան գետի ավազանում:

Այդ շրջաններից յուրաքանչյուրում առկա են արդյունաբերական գարգացումը խթանող որոշակի գործոններ: Ամբողջ հանրապետության, հետեապես և այդ շրջանների համար ընդհանուր հանդիսացող պայմաններից բացի, որոնց մասին խոսվեց սույն գլխի սկզբում, Աղստևի ավազանում առաջնակարգ նշանակություն են ձեռք բերում իշխան—Հրազդան երկաթուղագիծը և որոշ օգտակար հանածոների արդյունաբերական պաշարների առկայությունը: Սևանի ավազանի համար առավել կարեոր են աշխատանքային ռեսուրսների արագ աճը և բնակչությանը տեղում աշխատանքով ապահովելու անհրաժեշտությունը: Որոտան գետի ավազանի համար որոշիլ դեր են կատարում կառուցված ու կառուցվող հիդրոէլեկտրակայանները, դրանց շնորհիվ ստեղծված արտադրական ենթակառուցվածքը և օգտակար հանածոների որոշ հանքավայրերի արդյունաբերական յուրացման բարենպաստ հեռանկարները:

Այս բոլորը, արդեն ստեղծված արդյունաբերության հետ մեկտեղ, իրավունք են տալիս կանխագուշակել այդ շրջաններում արդյունաբերական նոր հանգուցների սաղմնավորումը:

Աղստևի ավազանում այսօր արդեն առկա են միջին մեծության 3 արդյունաբերական կենտրոններ՝ իշխանը (տեքստիլ արդյունաբերության, փայտամշակման, սննդի արդյունաբերության, մեքենաշինության), Դիլիջանը (մեքենաշինության, փայտամշակման, սննդի արդյունաբերության) և Բերդը (սննդի արդյունաբերության, փայտամշակման):

Սևանի ավազանի հարավային հատվածում աշքի ընկնող արդյունաբերություն է ստեղծված կամոյում (էլեկտրատեխնիկական, սարքաշինական, սննդի, տեքստիլ արդյունաբերություն, մեքենաշինություն), Մարտունիում (տեքստիլ, սննդի արդյունաբերություն, մեքենաշինություն), Վարդենիսում (սննդի, տեքստիլ արդյունաբերություն) և Զողոյւմ (լեռնահանքային արդյունաբերություն):

Խնշ վերաբերում է Որոտանի ավագանին, ապա այստեղ արդեն ձևավորված արդյունաբերական կետերի ու կենտրոնների թիվը ավելի պակաս է, բայց դրա փոխարեն առկա են 3 շրջանային հիդրոէլեկտրակայաններ:

Արդյունաբերական կենտրոններից Գորիսը աշքի է ընկնում էլեկտրատեխնիկական մեքենաշինությամբ, տեքստիլ և սննդի արդյունաբերության ճյուղերով:

Սիսիանը զարգանում է որպես մեքենաշինության և սննդի արդյունաբերության կենտրոն:

Հեռավոր ապագայում Որոտանի ավագանի արդյունաբերական հանգույցի զարգացման համար ազդակի դեր կարող է կատարել Սվարանցի երկաթի հանքավայրի շահագործումը:

Հայկական ՍՍՀ տարածքում արդեն ձևավորված 6 և սաղմնավարվող 3 հանգույցներից դուրս մնացած արդյունաբերությունը տեղաբաշխված է գլխավորապես շրջանային կենտրոններում, ինչպես նաև մի քանի այլ կետերում:

Այսօր արդեն ակնհայտ է, որ դրանցից մի քանիսը որոշակիորեն հարում են այս կամ այն հանգույցին և մոտ ապագայում, հավանական է «կնվաճվեն» դրանց կողմից: Այդպիսիք են՝ Արարատը (Կրաքարի, ցեմենտի և ուկու խտանյութի արտադրություն), Վեդին (սննդի արդյունաբերություն), Ամասիան, Ղուկասյանը, Թալինը, Ապարանը (սննդի արդյունաբերություն, մեքենաշինություն):

Մնացած կետերն ու կենտրոնները առայժմ հանդես են գալիս որպես մեկուսացած «արդյունաբերական օջախներ», չնայած այն բանին, որ առանձին դեպքերում այդտեղ ստեղծված են հանրապետական և նույնիսկ միութենական նշանակության ձեռնարկություններ: Այդպիսիք են, մասնավորապես, Արագածը (պեղլիտի արդյունահանում ու վերամշակում), Կալինինոն, Ազիզբեկովը, Զերմուկը:

Ինչպես ամեն մի տնտեսական շրջանի ու հանրապետության, այնպես էլ Սովետական Հայաստանի արդյունաբերության տարածքային կառուցվածքը կարիք ունի անընդհատ փոփոխման ու կատարելագործման: Սոցիալիստական արդյունաբերության տեղաբաշխման օրինաչափություններին համապատասխան առաջիկայում ևս հանգույցների ձևավորմանը գուգընթաց երեան են գալու առանձին «մեկուսացած» ձեռնարկություններ, արդյունաբերական կետեր ու կենտրոններ: Այդպիսի օրենքեկտների ստեղծումը մինչև այժմ եղել է տնտեսապես հետ մնացող շրջանները արդյունաբերական զարգացման ոլորտի մեջ ներգրավելու հիմնական միջոցը: Հեռանկարում ևս սույն միջոցը իր կարևոր նշանակությունը կպահպանի: Դա վերաբերում է հատկապես տնտեսապես հետ մնացող լեռնային ու նախալեռնային շրջաններին, որոնց համար մշակվել և իրականացվում է կոմպլեքսային զարգացման ծրագիր, նկատի ունենալով

առաջին հերթին արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերի ու արտադրամասերի ստեղծումը խոշոր գյուղերում, ինչպես նաև սոցիալական ենթակառուցվածքի առաջանցիկ զարգացումը:

Հանրապետության արդի տնտեսական պոտենցիալի, կառավարման ու պլանավորման անընդհատ կատարելագործման և ներկայութեամ տարվող շրջանային հատակագծման աշխատանքների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ավելի ակտիվորեն ազգել արդյունաբերության տարածքային կազմակերպման վրա և առանձին ձեռնարկությունների պլանային տեղարաշխումից անցնել արդյունաբերական համայիրների ու հանգույցների նախագծմանն ու կառուցմանը: Կոմպլեքսային նախագրծման ու հատակագծման այս ուղին է, որ ապահովում է տարածքի գիտականորեն հիմնավորված օգտագործումը, արտադրողական ուժերի տարածական ռացիոնալ կառուցվածքը, որպես հետևանք այս բոլորի՝ հասարակական արտադրության արդյունավետության հետագա բարձրացումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՆՐԱԿԱՆԵՐ

1. Որո՞նք են արդյունաբերական հանգույցներից դուրս գտնվող գիտական արդյունաբերական կետերն ու կենտրոնները:
2. Կուպիսի՞ն նոր արդյունաբերական հանգույցներ կարող են ձևավորվել ապագայում:

ԳԼՈՒԽ 8. ԱԳՐԱՐԴՐՈՒՅԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

8.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԱԹՐԱԿԱՐԸ

Նյութական արտադրության ոլորտում առանձնահատուկ տեղ է գրավում մարդու կենսագործունենության համար անհրաժեշտ մթերքների արտադրությունը, որով զբաղվում են գյուղատնտեսությունը և սննդի արդյունաբերությունը: Թափական է ասել, որ աշխարհում ժողովրդական սպառման առարկաների շուրջ երեք քառորդը ստացվում է գյուղատրնտեսությունից և գյուղատնտեսական հոմքը վերամշակող անդի արդյունաբերությունից:

Ակնհայտ է այս երկու ճյուղերի օրգանական կապը. սննդի արզունաբերությունը իր գրեթե ամբողջ հումքը ստանում է գյուղատնտեսությունից: Սննդի արդյունաբերության տեխնոլոգիական պրոցեսը, ամբողջ բովանդակությունը ոչ այլ ինչ է, քան գյուղատնտեսության մեջ արտադրվող մթերքների արդյունաբերական վերամշակում սպառողին առաքելու նպատակով: Այդ ճյուղերի զարգացման, ձեռնարկությունների միջնատնտեսական-արտադրական կապերի որոշակի մակարդակում դրանք թե՛ գենետիկական և թե՛ կազմակերպական առումով միավորվում են միասնական ագրոարդյունաբերական համալիրի մեջ: Ներկայումս այդպիսի համալիր է իրենից ներկայացնում Սովետական Հայաստանի գյու-

ղատնտեսությունը և գյուղատնտեսական հումքը վերամշակող սննդի արդյունաբերությունը։ Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրը իր մեջ է միավորում 1136 ձեռնարկություն (1986 թ. սկզբի տըվ-յալներով), որից կողեկտիվ և սովետական տնտեսություններ—793

միջտնտեսային ձեռնարկություններ ու կազմակերպություններ—72 սննդի արդյունաբերության ձեռնարկություններ—135

գյուղական շինարարական կազմակերպություններ—136

ինչպես ժողովրդական տնտեսության ամեն մի այլ ճյուղ, այնպես էլ ագրոարդյունաբերական համալիրը ձեռվորվում է իր արտադրության ընդհանուր առանձնահատկությունների և տվյալ շրջանի բնական, պատմական ու տնտեսական պայմանների ազդեցության ներքո։

Ագրոարդյունաբերական համալիրի ընդհանուր առանձնահատկություններից նախ և առաջ նշենք հետեւյալը. գյուղատնտեսական արտադրությունը բացառապես հենվում է հողի՝ որպես գլխավոր արտադրամիջոցի, ու շրային ռեսուրսների օգտագործման և գյուղատնտեսական բույսերի ու կենդանիների աճեցման ու օգտագործման վրա։ Հստորում, այստեղ վերաբերության պրոցեսը միահյուսվում է բույսերի ու կենդանիների աճի ու զարգացման բնական պրոցեսի հետ, որը ընթանում է կենսաբանական օրենքներով։ Թույսերի ու կենդանիների վերացության սեփական, բնական ցիկլի, ինչպես և սեզոնայնուրյան առկայությունը խոր կենիք է բողոքում ամբողջ գյուղատնտեսական արտադրության վրա և դրանով էլ նենց տարբերում այն ժողովրդական տնտեսության մյուս նյօսլերից։

Դյուղատնտեսական արտադրության կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ այս ճյուղը ընդգրկում է ընդարձակ տարածություններ, աշքի է ընկնում ոչ թե կետային (ինչպես բնակչությունը կամ արդյունաբերությունը), ոչ թե գծային (ինչպես տրանսպորտային ուղիների), այլ գերազանցապես տարածքային համատարած տեղաբաշխումով։ Սրան պետք է ավելացնել նաև այն, որ գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցը՝ հողը, ունի որոշակի հաստատուն տարածական բաշխում, զանգվածային տեղափոխման ենթակա չէ և. միաժամանակ, ի տարբերություն այլ արտադրամիջոցների, ճիշտ օգտագործելու դեպքում ֆիզիկապես ու բարոյապես չի մաշվում, չի սպառվում, այլ ընդհակառակը, անընդհատ բարելավվում է, բարձրանում է նրա բերրիությունը։

Համալիրի մյուս բաղադրիչի՝ սննդի արդյունաբերության համար հատուկ է նրա բացարձակ կախվածությունը գյուղատնտեսությունից, նրա արտադրատեսակներից, որոնց ծավալը, տեղափոխման, լերամշակման և պատրաստի արտադրանքը սպառողին առաքելու առանձ-

Նահատկությունները պայմանավորում են սննդի արդյունաբերության արտադրական կառուցվածքն ու տարածական տեղաբաշխումը:

Ազգային կառուցվածքն է ամալիեի ընդհանուր առանձնահատկությունների իմացությունը անպայմանորեն նպաստում է կոնկրետ երկրում կամ շրջանում ժողովրդական տնտեսության այս կոմպլեքսային ճյուղի աշխարհագրական վերլուծմանը, նրա հատկանշական կողմերի բացահայտմանը և գիտական հիմունքներով տարածական կազմակերպմանը:

Հնչակես տեսանք սույն գրքի առաջին մասում, Սովետական Հայաստանի հողակիմայական պայմանները խիստ տարատեսակ են: Այս հանգամանքը, անշուշտ, վճռական դեր է խաղում գյուղատնտեսության մեջ ճյուղային և տարածական բազմազանության խորացման համար, մի բան, որը եղել և մնում է մեր հանրապետության ամենաբնորոշ գծերից մեկը ինչ վերաբերում է սննդի արդյունաբերությանը, ապա վերը ասվածից բացի, նրա զարգացման ու տեղաբաշխման համար վճռական դեր են խաղում հանրապետության բնակչության տեղաբաշխումը և տարաբնակեցման առանձնահատկությունները, որոնց վերլուծությունը տրվեց դասընթացի 4-րդ գլխում:

Հողային ոեօւուսների օգտագործման առանձնահատկությունները: Գյուղատնտեսության աշխարհագրական առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները բնութագրող ցուցանիշներից են հողային ֆոնդի կառուցվածքը և նրա բաշխումը ըստ հողօգտագործողների և հողահանդակների:

Նախ նշենք, որ դեռևս 1920 թ. հողի ու ջրային հարստությունների ազգայնացումով՝ հիմքեր ստեղծվեցին հողօգտագործման և գյուղատնտեսական արտադրության կազմակերպման սոցիալիստական ձևերին անցնելու համար: Հողը, լինելով համաժողովրդական սեփականություն, ներկայում օգտագործվում է հանրապետության շուրջ 870 գյուղատնտեսական ձեռնարկությունների կողմից բուն գյուղատնտեսական արտադրության համար, ինչպես նաև բավականին մեծ թվով ոչ գյուղատնտեսական ձեռնարկությունների կողմից՝ այլ նպատակներով:

Առ 1-ը նոյեմբերի 1985 թ. Հայկական ՍՍՀ հողային ֆոնդը (ամբողջ տարածությունը) հողօգտագործողների մեջ բաժանվում էր հետեւյալ կերպ (տես աղյուսակ 19):

Ինչպես տեսնում ենք, Հայկական ՍՍՀ ընդհանուր տարածության մոտավորապես 78%-ը գտնվում է գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների ու տնտեսությունների տրամադրության տակ: Այս տոկոսը զգալի չափով բարձր է, քան ՍՍՀՄ-ի և միութենական մյուս հանրապետությունների ցուցանիշներն են:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲԱԺԵԽՈՒՄԸ ՀՈՂՕԳՑԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԶԵՎ

Հողօգտագործողներ	Հողային ֆոնդ	
	Հազ. հա	%
Փյուղատնտեսական ձեռնարկություններ ու կազմակերպություններ որից՝	2304	77,5
Կոլտնտեսություններ սովորողներ և այլ պետական տնտեսություններ	620	20,8
Միջանտեսային գյուղատնտ. ձեռնարկություններ ու կազմակերպություններ	1613	54,2
Պետական ֆոնդ և անտառային կազմակերպություններ	27	0,9
Անդամներ	537	18,1
Այլ հողօգտագործողներ	133	4,4
Ընդամենը	2974	100,0

Ինչպես արդեն մեզ հայտնի է, իր ինդուստրացման մակարդակով Սովետական Հայաստանը միութենական հանրապետություններից շատերին գերազանցում է: Թվում է, թե այդ պայմաններում գյուղատրնտեսական օգտագործման հողերի բաժինը ավելի պակաս պետք է լիներ: Սակայն իրականում հակառակ պատկերն է դիտվում, որը բացատրվում է հողահանդակների կառուցվածքով, մասնավորապես անտառածածկ տարածությունների սահմանափակությամբ:

Հաջորդ՝ 20-րդ աղյուսակը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական արտադրության համար պիտանի հողատարածությունները՝ գյուղատընտեսական հանդակները, շատ ավելի սահմանափակ են, քան գյուղատնտեսական ձեռնարկություններին ու տնտեսություններին տրամադրված հողերի ընդհանուր տարածությունն է:

Սույն աղյուսակը որոշակի պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպիսի ծավալ և որակ ունի մեր հանրապետության գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցը, ինչպես, ի՞նչ նպատակի համար է այն օգտագործվում:

Գյուղատնտեսական հանդակները ներկայումս զբաղեցնում են հանրապետության ընդհանուր տարածության կեսից էլ պակասը՝ մոտավորապես 47 %:

Անցած տասնամյակների ընթացքում գյուղատնտեսական հանդակների թե՛ ընդհանուր տարածության և թե՛ կառուցվածքի մեջ էական փո-

Հողահանդակներ	Տարածությունը	
	հազ. հա.	%
1. Գյուղատնտեսական հանդակներ այդ թվում՝ վարելանող բազմամյա տնկարկներ խոտհարքներ արոտավայրեր	1885 487 86 138 672	46,6 16,4 2,9 4,6 22,7
2. Տնամերձ հողեր (վարելանող, բազ- մայիշ տնկարկներ, շինություններ, բա- կեր)	45	1,5
3. Այլ հողահանդակներ այդ թվում՝ անտառներ ու թփուտներ ջրային տարածություններ ճանապարհների, շինությունների, բակե- րի, հրապարակների գրաղեցրած հողա- տարածություններ գյուղատնտեսության մեջ շօգտագործվող այլ հողահանդակներ	1544 416 152 ?? 899	51,0 14,0 5,1 2,6 30,2
Ընդամենք	2974	100,0

Փոխություններ են կատարվել: Ընդհանուր տարածությունը, օրինակ, 1940 թ. Համեմատությամբ, կրճատվել է ավելի քան 700 հազ հեկտա-
րով: Բայց վերջին տարիներին նկատվում է դանդաղ, բայց կայուն աճ:

Այստեղ, իհարկե, որոշակի դեր խաղացել են հանրապետության ինդուստրացումը և մեծ ծավալի կապիտալ շինարարությունը: Սա ան-
խուսափելի որոշեն պետք է հանգեցներ գյուղատնտեսական հողերի որոշ կրճատման: Գնայած այն հանգամանքին, որ քաղաքաշինության պրակ-
տիկայում և արդյունաբերական, տրանսպորտային և այլ ոչ գյուղա-
տնտեսական օբյեկտների տեղաբաշխման ու հատակագծման ընթաց-
քում մշակովի հողերի շռայլում է թույլ տրվել, այնուամենայնիվ, գյու-
ղատնտեսական հանդակների նման կրճատման հիմնական պատճառը
այլ է: Գյուղատնտեսական արտադրության անընդհատ համակենտրո-
նացման և մեքենայացման պահանջներին համապատասխան ոելիեֆա-
յին և այլ բնական անբարենպաստ պայմաններ ունեցող հողակտորների

օգտագործումը դարձել է տնտեսապես աննպատակահարմար Դրանք դուրս գրվելով, մտցվել են գյուղատնտեսական օգտագործման համար ոչ պիտանի հողահանդակների մեջ:

Վերջին տարիների որոշ աճը կատարվում է հողերի մելիորացիայի հիման վրա՝ նախկին անօգտագործելի տարածությունները գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավվելու շնորհիվ:

Գյուղատնտեսական հանդակների կառուցվածքում առավել աշքերն կնկնող տեղաշարժը արոտավայրերի ու վարելահողերի ընդհանուր տարածության կրճատումն է: Դեռևս 1940 թ. արոտավայրեր են համարվել շուրջ 1.300 հազ. հա հողատարածություններ, վարելահողերը կազմել են 630 հազ. հա (ներկայումս համապատասխանաբար 672 հազ. և 487 հազ.):

Դրան հակառակ, նկատելիորեն ընդարձակվել են այգիները՝ 29 հազ. հա-ից հասնելով 86 հազ. հա:

Ներկայումս Սովետական Հայաստանում այնպիսի վիճակ է ստեղծված, երր այլևս չպետք է բույլ տրվի գյուղատնտեսական հանդակների հետագա կրճատում: Ավելին՝ անհրաժեշտ է ավելի մեծ քափի հաղորդել նոր հողերի յուրացման աշխատանքներին:

Ինչպես արդեն նշվել է, գյուղատնտեսական հողային ռեսուրսների պահպանման առումով հանրապետությունում հակայական նշանակություն ունի էռոգիայի դեմ պայքարի կազմակերպումը, որը գյուղատրնտեսության զարգացման միջոցառումների համալիրում դիտվում է որպես կարևորագույն պետական նշանակություն ունեցող խնդիր:

Էռոգիայի ենթարկված հողերում բերքը կրկնակի և ավելի անգամ պակաս է ստացվում, քան չէռոգացված տեղամասերում է:

Հանրապետության տարբեր շրջանների կոնկրետ բնական պայմաններին համապատասխան տարրեր բնույթի հակաէռոգիոն միջոցառումներ են կիրառվում: Մշակված են ջրային և հողմնային էռոգիայի դեմ պայքարի կոմպլեքսային ձևեր, որոնք ընդգրկում են կազմակերպչական-տնտեսական, ագրոտեխնիկական, անտառաբարելավման, արոտավայրերի քարելավման և ջրատեխնիկական միջոցառումներ: Կռնկրետ միջոցառման ընտրությունը պայմանավորվում է ամեն մի շրջանի բնական պայմաններով, էռոգիայի բնույթով, տարածման շափերով ու զարգացման աստիճանով:

Աշքի քնկնող միջոցառում է նաև քարերի մաքրման, աղազերծման և հողերի մելիորացիայի այլ մեթոդների կիրառման շնորհիվ նախկին զուրի ու աղուտների վերածումը վարելահողերի և ներգրավումը երկրագործության մեջ:

Ուսումնական համարակարությունների լրիվ օգտագործման և հիշյալ միջոցառումների կիրառման շնորհիվ առաջիկայում կարելի կլինի զգալի

շափով ընդարձակել ակտիվ օգտագործվող հողատարածությունները:

Գյուղատնտեսական արտադրության ոլորտի մեջ նոր տարածությունների ընդգրկումը, յուրացված հողերի բարելավման և դրանց ավելի ինտենսիվ օգտագործման անհրաժեշտությունը մեր հանրապետությունում հատկապես սրբած է այն պատճառով, որ այն ՍՍՀՄ ամենասակավահող շրջանների շարքում է գտնվում: Բավական է ասել, որ Հայկական ՍՍՀ բնակչության մեկ շնչին ընկնում է ընդամենը 0,4 հա գյուղատնտեսական հանդակ, այսինքն 5 անգամ պակաս, քան ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած: Նույն վիճակն է նաև վարելահողերի գծով:


«Սակավահող հանրապետություն» գնահատականը Հայկական ՍՍՀ-ի համար հաստատվում է ոչ միայն և ոչ այնքան գյուղատնտեսական հողերի սահմանափակ տարածության փաստով, որքան ընդհանրապես բոլոր հողահանդակների, այսինքն ամբողջ տարածքի փոքր շափուրով: Այն դեպքում, եթե բնակչության մեկ շնչին ընկնող տարածքի ՍՍՀՄ միջին ցուցանիշը ավելի քան 9 հա է, Հայկական ՍՍՀՄ-ում այն հավաաար է 0,9 հա-ի:

Եթե նկատի ունենանք, որ հիպսոմետրիկ մեծ բարձրությունների, գառիթափ բանջերի և բնական այլ հատկանիշների (տես գլուխ 1) պատճառով տարածքի մի գգալի մասը անհարմար հողատարածություններ են, ապա պետք է հանգենք այն եզրակացության, որ Հայկական ՍՍՀ-ում գյուղատնտեսական հողատարածությունների՝ գյուղատնտեսության գլխավոր արոտադրամիջոցի ընդարձակման հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան կարող է թվալ: Ենթադրվում է, որ վարելահողերի տարածությունը կարելի է հասցնել 510—520 հազ. հա, այսինքն ներկայիս համեմատությամբ ավելացնել 10—15 %-ով, իսկ բազմամյա տնկարկներին՝ շուրջ 210 հազ. հա:

Նման պայմաններում գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացման գլխավոր, մեր հանրապետության համար գրեթե միակ ուղին արտադրամիջոցի օգտագործման բարելավումն է, գյուղատնտեսական հանդակների կառուցվածքի անընդհատ կատարելագործումը և բերրիության բարձրացումը:

Հայկական ՍՍՀ-ում գյուղատնտեսական հանդակների ռացիոնալ օգտագործման գլխավոր պայմանը մշակովի հօդերի արհեստական ոռոգումն է՝ մեզանուա հողերի մելիորացիայի գլխավոր տեսակը, և արտների ջրարրիացումը (գծ. 20):

Բավականին բարձր է այս միջոցառումների տնտեսական արդյունավետությունը: Օրինակ, արհեստական ոռոգման համար կատարվող կապիտալ ներդրումները փոխհատուցվում են ընդամենը 2—3 տարում, արոտավայրերի ջրարրիացման համար՝ 4—5 տարում: Ձրովի հողերը կազմելով հանրապետության ակտիվ օգտագործվող տարածություն-



Նկ. 20. Հայկական ՍՍՀ ռոռոգման զոնաները

ների (վարելահող, բազմամյա տնկարկներ) շուրջ կեսը, տալիս են այդ տարածություններից ստացվող գյուղատնտեսական համախառն՝ արտադրանքի շուրջ 80 % -ը:

Սովետական իշխանության հենց առաջին տարիներին Վ. Ի. Լենինը հատուկ նամակով դիմելով Կովկասի կոմունիստներին, նշում էր, որ «ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»¹:

Սոցիալտնտեսական հայտնի միջոցառումների հետ մեկտեղ, հողերի ոռոգումը մեզանում, իսկապես, այն գլխավոր լժակն էր, որի շնորհիվ գյուղատնտեսությունը ձեռք բերեց մեծ նվաճումներ:

¹ Վ. Ի. Լենին, Ելք, Համ. 43, էջ 239.

Ներկայումս ոռոգելի հողերի ընդհանուր տարածությունը հասնում է շուրջ 315 հազ. հա., որը երեք անգամ ավելի է, քան եղել է 1913 թ.: Դրանց հիմնական զանգվածները գտնվում են Արարատյան դաշտում, զգալի տարածություններ կան նաև Ծիրակում, Որոտանի, Աղստևի, Սևանի, Դեբեղի ավազաններում:

Հողերի արհեստական ոռոգման կազմակերպումը ներկայումս դարձել է տնտեսական գործունեության մի ինքնուրույն բնագավառ, որով զբաղվում է մելիորացիայի և ջրային տնտեսության հանրապետական-միութենական մինիստրությունը: Հանրապետության շրջաններում նաև ունի իր ստորաբաժանումները:

Հայկական ՍՍՀ առավել խոշոր ոռոգիչ համակարգերը ստեղծվել են սովետական իշխանության տարիներին կամ արմատապես վերակառուցվել են, դարձել արդիական ինժեներական կառուցներ: Ալղափսիք են, օրինակ, Արտաշատի, Հոկտեմբերյանի, Թալինի, Արգնի-Շամիրամի, Մտորին Հրազդանի, Ծիրակի, Կոտայքի, Որոտանի և մի շարք այլ ինք-



Նկ. 21. Արհեստական ոռոգումը Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտ պայմաններից է: Վերջին տասնամյակում կառուցվել են մի շարք մայր ջրանցքներ: Մի հատված Թալինի շրանցքից:

Նահոս ջրանցքներ, որոնցով ոռոգվում են հանրապետության առավել ընդարձակ հարթավայրային տարածությունները:

Վերջին տարիներին մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել պոմպակայանների ստեղծման և մեքենայական ոռոգման ընդարձակ-

ման ռազմությամբ, որի շնորհիվ ջրովի են դարձել սարավանդների և գետահովիտների բարձրադիր լանջերի հազարավոր հեկտար հողատարածություններ: Դեռևս հիսունական թվականների սկզբներին մեխանիկական ոռոգումով ընդգրկված հողատարածությունները չեն հասել նույնիսկ 5 հազ. հա, կազմելով ոռոգվող տարածությունների միայն 2%, մինչդեռ ներկայումս դրանք տասնապատիկ անգամ ավելի են և կազմում են ընդհանուր տարածությունների 16%: Մեխանիկական ոռոգման ամենախոշոր օբյեկտներն են նոյեմբերյանի (սնվում է Դեբեղից), Արեշտի, Մխչյանի (անվում են Սև ջրից), Գետափ—Աղավնածորի (սնվում է Արփայից) պոմպակայանները տասնյակ կիլոմետրերի հասնող ջրմուղ խողովակաշարերով, որոնց շնորհիվ զգալի քանակությամբ ոռոգման ջուր է մղվում հարյուրավոր մետր բարձրության վրա:


Ոռոգվող հողերը տրամադրվում են առաջին հերթին խաղողի, կորիզավոր պտուղների, բանջարեղենի, մասամբ տեխնիկական կուլտուրաների (հատկապես շաքարի ճակնդեղ, խորդենի), հացահատիկի և ցանովի խոտարույսերի մշակության համար:

Հայկական ՍՍՀ պայմաններում ոռոգման պահանջ ունեն ոչ միայն ակտիվ մշակվող հողատարածությունները, այլ նաև խոտհարքներն ու արոտավայրերը: Վերջիններիս ոռոգումը, շրային ուսուրաների սահմանափակության պատճառով, լայն ծավալ չի ստանում: Առ այսօր ոռոգում են արոտավայրերի ու խոտհարքների 2%-ից էլ պակասը, շնայտ նրան, որ ոռոգման շնորհիվ զգալիորեն մեծանում է դրանց բերքատվությունը:

Սրան հակառակ, մեծ են արոտավայրերի ջրարբիացման նվաճումները: Այս գործը հանրապետությունում սկսվել է միայն 50-ական թվականների վերջերին, բայց ներկայումս հանրապետության արոտավայրերի հիմնական մասը արդեն ջրարբիացված է:

Տարեցտարի մեծանում են ջրաշինարարական աշխատանքների ժամանակ, դրանց համար կատարվող պետական հատկացումները: Ընթացիկ՝ XII հնգամյակում նախատեսվում է շահագործման հանձնել 35 հազ. հա ոռոգելի հողատարածություն, հազարավոր հեկտարների վրա վերակառուցել ոռոգիչ համակարգերը, նորոգել բաշխիչ ցանցը, բարձրացնել դրանց օգտակար գործողության գործակիցը, որը ներկայումս խիստ ցածր է, ընդամենը 0,5: Ներդրվելու է ջրման նոր տեխնիկա, ավելի մեծ տարածում են ստանալու նոր մեթոդները, այդ թվում՝ անձրևացման ու ընդգետնյա կաթիլային:

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական ոռոգման հետագա զարգացման մասին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի հատուկ որոշումով նախատեսվող՝ 1 մլրդ մ³ գումարային տարողությամբ 16 ջրամբարներից, որոնք պետք է շահագործման հանձնվեն մինչև 2000 թ., ընթացիկ հնգամյակում կգոր-



Նկ. 22. Արհեստական ոռոգման արդյունավետության բարձրացման և ջուրը խնայողաբար օգտագործելու կարևոր միջոց է ոռոգման առաջադիմական եղանակ-ների ներդրումը։ Արհեստական անձրևացում Արարատյան դաշտում։

Ժարկվեն Կապսի, Եղվարդի և Գետիկի ջրամբարները։

Այս և նման բնույթի այլ միջոցառումների շնորհիվ նպատակ է դրվում բարձրացնել ջրատնտեսական աշխատանքների կուլտուրան, նվազեցնել ջրի կորուստը և նոր աստիճանի բարձրացնել ոռոգվող հողերի օգտագործման մակարդակն ու տնտեսական արդյունավետությունը։

Գյուղատնտեսության զարգացման ու մասնագիտացման ճիմնական ռեղլությունները. Բազմազան բնական պայմանների ազդեցության տակ և երկարատև պատմական զարգացման ընթացքում Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը ձեւվորվել է որպես նյութական արտադրության մի ավանդական ու բազմանձուղ բնագավառ։

Նրա զարգացման ուղղում, կառուցվածքային գլխավոր փոփոխություններին ծանոթացանք սույն գրքի 2-րդ գլխում։ Այժմ էլ գյուղատնտեսությունը շարունակում է մնալ հանրապետության ժողովրդական տնտեսության առավել դինամիկ ճյուղերից մեկը, որտեղ տեղի են ունենում քանակական ու որակական էական տեղաշարժեր։

Այդ տեղաշարժերից առավել նշանակալիցը գյուղատնտեսության ինտենսիվության կայուն բարձրացումն է, որն արտահայտվում է նախ և

առաջ միավոր տարածության վրա ներդրվող անմիջական աշխատանքի ու միջոցների և ստացվող արդյունքի անընդհատ ավելացումով:

Ինչպես տեսանք, գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հաշվին գյուղատնտեսական արտադրության աճը մեր հանրապետության պայմաններում մեծ լինել չի կարող, ավելին, նախկինի համեմատությամբ այդ հանդակները զգալիորեն կրճատվել են: Դրան հակառակ, կայուն կերպով աճում է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվության աստիճանը: Ներկայումս, օրինակ, 100 հա հողատարածության հաշվով մսի արտադրությունը Հայկական ՍՍՀ-ում կազմում է 79 ցենտներ ՍՍՀՄ-ի 31, Վրացական ՍՍՀ 53 և Աղրբեջանական ՍՍՀ 41 ցենտների դիմաց, իսկ կաթի արտադրությունը՝ համապատասխանաբար 403, 177, 217 և 232 ցենտներ:

Այս բոլորի հետևանքով Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության միջին տարեկան համախառն արտադրանքը ընթացիկ հնգամյակում գտնվում է 950—990 մլն. լ. մակարդակի վրա և 1940 թ. համեմատությամբ աճել է շուրջ 5,5 անգամ, չնայած այն հանգամանքին, որ գյուղատնտեսության մեջ աշխատողների թիվը նույնիսկ կրճատվել է, իսկ արդյունաբերության և մյուս ճյուղերի զարգացման ավելի բարձր տեմպերի հետևանքով նրա տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ մեծ շափով նվազել է: Ազգային եկամուտի մեջ գյուղատնտեսության բաժինը կազմում է մոտավորապես 15, իսկ ընդհանրական հասարակական արդյունքում՝ 10 %:

Ներկայումս հանրապետության 865 գյուղատնտեսական ձեռնարկություններից ու կազմակերպություններից 280-ը կոլեկտիվ տնտեսություններ են, 513-ը սովորական և 72-ը միջտնտեսային ձեռնարկություններ ու կազմակերպություններ: Սրանց մեծությամբ (որը գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացման աստիճանն է ընութագրում) Հայկական ՍՍՀ-ն երկրում գրավում է վերջին տեղերից մեկը: Այստեղ յուրաքանչյուր ձեռնարկությանը ընկնում է ընդհամենը 1600 հա գյուղատնտեսական հանդակ, այդ թվում 560 հա. վարելահող, մինչդեռ ՍՍՀՄ-ում միջին հաշվով համապատասխանաբար 11 հազ. հա և 4,6 հազ. հա:

Մի շարք պատճառների թվում այստեղ առաջինը պետք է նշել՝ խիստ մասնատված լեռնային ռելիեֆը և մանր հողակտորների առկայությունը, որը դժվարացնում է մի քանի բնակավայր միավորող ձեռնարկությունների՝ բազմագյուղ կոլտնտեսությունների ու սովորական ստեղծումը:


Հանրապետության տարածքի այս առանձնահատկությունը արգելքներ է ստեղծում նաև գյուղատնտեսական մի շարք աշխատանքների մեջ:

Քենայացման համար: Այնուհանդերձ, Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը ներկայումս համեմատաբար բարձր մեքենայացված մի ճյուղ է, որտեղ արտադրության գլխավոր դեմքը դարձել է մեխանիզատորը:

Հայկական ՍՍՀ-ում առաջին տրակտորը հայտնվել է միայն 20-ական թվականներին: Այժմ արտադրության այս ճյուղում զբաղված են տասնյակ հազարավոր տրակտորներ, հացահատիկահավաք կոմբայններ, բեռնատար ավտոմեքենաներ և հազարավոր այլ մեքենաներ ու մեխանիզմներ: Գյուղատնտեսական արտադրության մեջ ավելի լայն կիրառություն է գտնում էլեկտրականությունը: Այս բոլորի շնորհիվ հսկայական չափով աճել է ճյուղի էներգազինվածությունը:

Միայն վերջին 15 տարվա ընթացքում շուրջ 2,5 անգամ մեծացել է գյուղատնտեսական արտադրական հիմնական ֆունդերի ծավալը, կրկնապատկվել է մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությունը:

Գյուղատնտեսության կազմակերպման բարելավումը և նյութա-



Նկ. 23. Հայկական ՍՍՀ սակավահողության պայմաններում որպես հեռանքարային ճյուղ է դիտվում փակ գրունտի բուսաբուծությունը: Ձերմատնային կորինտա Մասիսի շրջանում:

Մեխնիկական բազայի նման հզորացումը հանգեցրին գյուղատնտեսական մթերքների արտադրության զգալի մեծացման: 1981—1985 թթ. միջին տարեկան արտադրությունը կազմել է հացահատիկ՝ 277, բանջարաբուստանային կուլտուրաներ՝ 517, խաղող՝ 252, պտուղներ՝ 182, ծխախոտ՝ 14, միս՝ 100, կաթ՝ 539 հազ. տոննա:

Վերջին տարիներս երկրում ձեռնարկված մի շարք լուրջ միջոցառում-

Ների շնորհիվ արագացել են գյուղատնտեսական արտադրանքի աճի տեմպերը, թեև դրանք ևս չեն բավարարում հանրապետության հարածունականությանը:

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը բազմաճյուղ է: Այդ ճյուղերը ըստ իրենց նշանակության բաժանվում են երկու խմբի՝ ճյուղեր, որոնք որոշում են հանրապետության տեղը աշխատանքի համամիտվենական բաժանման համակարգում, այլ կերպ ասած, որոշում են հանրապետության միութենական մասնագիտացումը: Այդ ճյուղերն են խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջարաբուծությունը, ծխախոտագործությունը և երեւայուղատու կուլտուրաների մշակությունը:

Երկրորդ խմբի ճյուղերը ունեն տեղական (հանրապետական) և աշխատանքի համամիութենական բաժանման տեսակետից օժանդակ նշանակություն: Դրանք են հացահատիկային ու կերային կուլտուրաների, կարտոֆիլի և շաբարի նակնդեղի մշակությունը, ինարկե նաև անասնապահությունը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում երկրագործությունը և անասնապահությունը գրեթե հավասար բաժին ունեն. աննշան շափով գերակշռում է երկրագործությունը (2—3 %-ով): Ենթադրվում է, որ առաջիկայում այս տարրերությունը կշարունակի աճել հօգուտ երկրագործության:

Հայկական ՍՍՀ, ինչպես և ՍՍՀՄ մյուս շրջանների գյուղատնտեսության զարգացման գլխավոր ուղղությունները և մասնագիտացաւմը ձևավորվում են հետևյալ 3 որոշիչ գործոնների ազդեցության ներքո.

ա) տեղի հողակիմայական առանձնահատկությունները և նվազագույն ծախսումներով գյուղատնտեսական կուլտուրաներ մշակելու բնական հնարավորությունները,

բ) գյուղատնտեսական մթերքների գծով երկրի պահանջմունքների ծավալն ու կառուցվածքը և այդ պահանջմունքները բավարարելու, ՍՍՀՄ սպարենային ծրագրի կատարման գործում հանրապետության մասնակցությունը մեծացնելու անհրաժեշտությունը:

Դա հանգեցնում է աշխատանքի ընդհանուր-միութենական բաժանման մեջ արտադրական մասնագիտացման հետագա խորացմանը, մասնագիտացման ճյուղերի գերադաս զարգացմանը:

գ) նվազ փոխադրահարմար մթերքների գծով (կաթնեղեն, բանջարեղեն, բոստանային կուլտուրաներ, կարտոֆիլ, մրգեր, ծու և այլն) հանրապետության բնակչության պահանջմունքները առավել լրիվ բավարարելու անհրաժեշտությունը:

Սույն գործոնների շնորհիվ Հայկական ՍՍՀ-ում ձևավորվել են գյուղատնտեսության վերը թվարկված հիմնական ճյուղերը:

Ճյուղային մասնագիտացումը տարածության մեջ դրսեռքում է շրջանային մասնագիտացման ձևով:

Տարբերվում են հանրապետության ընդհանուր մասնագիտացում (ՍՍՀՄ աշխատանքի տերիտորիալ բաժանման համակարգում) և տարբեր շրջանների ու գոտիների մասնագիտացում (աշխատանքի ներհանրապետական տարածքային բաժանման համակարգում): Ինչպես ելուղային, այնպես էլ շրջանային մասնագիտացումը նյութականանում, մարմնավորվում է մասնագիտացման Յ-րդ ձևի՝ առանձին զյուղատնտեսական ձեռնարկությունների մասնագիտացման միջոցով:

Նախկինում, փակ նատուրալ տնտեսաձևի պայմաններում գյուղացին ձգտել է ըստ հնարավորին «ամեն ինչ» մշակել, արտադրել տեղում, իր սեփական տնտեսությունում: Հետագայում հասարակական արտադրության զարգացման հաջորդ փուլերում ծավալվող ապրանքային արտադրությունը և աշխատանքի բաժանման խորացումը միաժամանակ նշանակում էր մասնագիտացման խորացում: Խսկ մասնագիտացումը արտադրության համակենտրոնացման հետ միասին հանդես է գալիք որպես գյուղատնտեսության հետագա զարգացման ու արդյունավետության բարձրացման կարևոր ուղի: Բանն այն է, որ մասնագիտացված խոշոր տնտեսություններում ավելի արդյունավետ են օգտագործվում արտադրության միջոցները, բարձր է աշխատանքի արտադրողականությունը, ցածր է արտադրանքի ինքնարժեքը:

Հայկական ՍՍՀ-ում գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրական մասնագիտացումը նոր է միայն ամբողջ թափով ծավալվում: Ըստ որում կոլտնտեսությունները այդ հարցում նկատելի որեն հետ քն մնում սովխողներից: Դեռևս կոլտնտեսությունների գրեթե կեսում հաշվվում է 8—10—12 ճյուղ: Որպես կանոն ոչ մի կոլտնտեսությունում այդ թիվը 6-ից պակաս չէ: Սովխողների մեջ գերակշռում քն 3—4 ճյուղ ունեցողները:

Նպատակ է դրված աստիճանաբար հրաժարվել տնտեսությունների անհարկի բազմաճյուղայնությունից: Յուրաքանչյուր սովխողի համար արդեն պետականորեն սահմանված են արտադրական մասնագիտացման գլխավոր ուղղությունները:

Սովխողների գրեթե կեսը ունի կաթնամսատու ուղղություն, երկրորդ տեղում են խաղողագործական և պտղախաղողագործական սովխողները, սրանց հաջորդում են բանշարարութական, ոչխարաբութական, խողաբութական, ճակնդեղագործական, հացահատիկային և այլ մասնագիտացման տնտեսությունները:

Ներկայումս գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու համակենտրոնացումը զուգորդվում է միջանտեսային կոռպերացման և ագրարայունաբերական ինտեգրացման հետ: Այս հանգամանքը հնա-

րավորություն է տալիս երկրի էկոնոմիկայի այս կարևոր ճյուղը ևս տեղափոխել ժամանակակից ինդուստրիալ հիմքի վրա: ՍՍՀՄ սոցիալիստական զարգացման արդի փուլում սա հանդիսանում է գյուղատնտեսության զարգացման գլխավոր ուղղությունը:

Մի շաբթ այլ հանրապետությունների հետ համեմատած Հայկական ՍՍՀ այս բնագավառում նկատելիորեն հետ է մնում: Վերջին տարիներին լայն թափ հաղորդվեց միջտնտեսային ձեռնարկությունների, անասնապահական համալիրների զարգացմանը, ավելի լրիվ շափով սկսեցին օգտագործել գյուղատնտեսության կազմակերպման այդ առաջադիմական ձեռների առավելությունները և դրանով իսկ արագացնել գյուղատրնտեսական արտադրության փոխադրումը ինդուստրիալ հիմքի վրա:

Հայկական ՍՍՀ 7 տասնյակին գերազանցող գյուղատնտեսական միջտնտեսային ձեռնարկությունների, կազմակերպությունների և միավորումների մեծ մասը անասնապահական (թոշնաբուժականի հետ միասին) և գյուղատնտեսական կենդանիների արհեստական բեղմնավորման ձեռնարկություններն են: Ավելի փոքր թիվ են կազմում բուսաբուժական բնույթի ձեռնարկությունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տվեր ագրոարդյունաբերական համալիրի ընդհանուր բնութագիրը:
2. Բնութագրեր Հայկական ՍՍՀ հողային ֆոնդը ըստ հողօգտագործողների և հողահանդակների:
3. Որո՞նք են Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունները:

8.2. ԲՈՒՍԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Հայկական ՍՍՀ հողակիմայական պայմանների բազմազանությունը և գյուղատնտեսական կուլտուրաների էկոլոգիական հատկանիշները, սխալ չի լինի ասել, որ հանրապետության տարածքում հնարավոր է զբաղվել երկրագնդի մերձարևադարձային և ավելի ցուրտ գոտիներում տարածված գրեթե բոլոր կուլտուրական բուսերի մշակությամբ:

Սակայն տնտեսական գործոնների ազդեցության տակ մեր հանրապետության տարածքում ևս պատմական զարգացման երկարատև ժամանակաշրջանում ձևավորվել է մշակող բույսերի մի որոշակի խումբ: Վերհիշենք, որ այդ բույսերի տեսականին, նկատի ունենալով մեր ոչ ընդարձակ տարածքը, բավականին հարուստ է, որը և բուսաբուժությանը հաղորդում է խիստ ընդգծված բազմաճյուղ բնույթ: Սա իր կնիքն է

Թողնում գյուղատնտեսական ձեռնարկությունների տնտեսական ցուցանիշների վրա և արգելակում է նրանց մասնագիտացումը:

Հայկական ՍՍՀ բուսաբուծության բնական նյութական հիմքը՝ ակտիվ օգտագործվող կամ մշակովի հողերը (վարելահողեր, բազմամյա տնկարկներ), ինչպես տեսանք, կազմում են ընդամենը 573 հազ. հա. որը հավասար է հանրապետության տարածքի 19 %-ին և գյուղատնտեսական հանդակների ընդհանուր տարածության 41 %-ին:

Բուսաբուծության համախառն արտադրանքը, որոշ չափով գերազանցելով անասնապահության արտադրանքին, իր հերթին մոտավորապես $\frac{2}{3}$ -ով ծեավորվում է դաշտավարության և ավելի քան $\frac{1}{3}$ -ով՝ այդ գեգործության հաշվին:

Դաշտավարության վերջին տարիներին նկատելիորեն կայունացել է ինչպես ընդհանուր առմամբ գյուղատնտեսական հանդակների, այնպես էլ դաշտավարության մեջ օգտագործվող հանդակների, այսինքն՝ վարելահողերի տարածությունը:

Տասնամյակներ առաջ, երբ հանրապետությունում դեռևս տիրապետող էր էքստենսիվ երկրագործությունը, երբ ձեռքի աշխատանքի պայմաններում ցանքերի տակ կարելի է օգտագործել նույնիսկ ամենափոքր վարելահարմար հողակտորները, վարելահողերի, հետևապես և գյուղատնտեսական կուլտուրաների ցանքերի ընդհանուր տարածությունը շատ ավելի մեծ էր:

Վերջին տասնամյակներում հանրապետության ցանքատարածությունների կառուցվածքը էական փոփոխություններ է կրել (նկ. 24):

Ներկայումս Հայկական ՍՍՀ ցանքատարածությունները կազմում են շուրջ 450 հազ. հա., որոնք ունեն հետևյալ կառուցվածքը (տես աղյուսակ 20):


Աղյուսակ 20

ՑԱՆՔԱՑԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (1985 թ.)


	Հազ. հա	%
Հացահատիկային կուլտուրաներ	136	30,2
Տեխնիկական կուլտուրաներ	11	2,4
Կորուսիք և բանջարա-բռնտանային	42	9,2
Կուլտուրաներ	258	58,2
Կերային կուլտուրաներ		

Ցանքատարածությունների տարածական բաշխումը ուղղակի պատկերացում է տալիս դաշտավարության տեղաբաշխման և տարածքային տարրերությունների մասին: Գյուղատնտեսության այս ճյուղի տարածումը սահմանափակվում է մի կողմից հիպոսմետրիկ բարձրություններով, մյուս կողմից տեղանքի թեքություններով: Մեր հանրապետության գյուղատնտեսում նրա վերին սահմանը, որպես կանոն, ինչպես արդեն


433.7 հզ.հա




414.9 հզ.հա




408.8 հզ.հա



442.0 հզ.հա



446.0 հզ.հա



ԳՅՈՒՂԱՏՏԵՍԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԸ՝

Հացահատիկ

Տօնսիկական

Կարտոֆիլ և
ըսնչարաբուտանային

Կեռային

Ի վանդակը
համապատասխանում է 1 %

Նկ. 24. Հայկական ՍՍՀ ցանքատարածությունների կառուցվածքը:

գիտենք, համընկնում է 2200 մ բարձրաշափական գծի հետո, ինչ վերաբերում է լանջերի թեքություններին, ապա օգտագործվում են առավելագույնը մինչև 16° թեքությունները:

Բնական այս սահմանափակումների, ինչպես և իր՝ դաշտավարության և գյուղատնտեսության մյուս ճյուղերի զարգացման բնատնտեսական պայմանների ազդեցության տակ ձեռվորվել է դաշտավարության տեղաբաշխման ներկայիս պատկերը. դաշտավարական կուլտուրաների առավել ընդարձակ զանգվածները գտնվում են Արարատյան գոգավորության հատակային ու նախալեռնային հատվածներում, Շիրակում ու Սևանի ավազանի հր. մասում: Բայտ որում, բոլոր վարելահողերի շուրջ $\frac{1}{3}$ ընկած է մինչև 1500 մ բարձրությունների, իսկ $\frac{2}{3}$ -ը՝ 1500—2200 մ բարձրությունների վրա: Առաջին գոտին աշքի է ընկնում բացառապես ոռոգելի հողերով, որոնք օգտագործվում են հիմնականում բարձր եկամտարեր կուլտուրաների տակ: Երկրորդ գոտում հնարավոր է զրաղվել նաև դեմի հողագործությամբ: Ոռոգումը այստեղ ոչ թե հան-

դես է գալիս իրրե դաշտավարության գոյության անհրաժեշտ պայման (ինչպես նախորդ գոտում է), այլ բերքատվության բարձրացման միջոց (գծ. 10):

Հատկանշական է հանրապետության զյուղատնտեսական դաշտերի մասնատվածությունը: Վարելահողերի ընդհանուր տարածության շուրջ 63 % բաղկացած է մինչև 1 հա մեծության և միայն 4 %-ը՝ 10 հա և ավելի մեծության հողակտորներից: Ամբողջ հանրապետության համար հողակտորների միջին մեծությունը ընդամենը 2 հա է (Ստավրոպոլի երկրամասում՝ 220 հա, Արևմտա-Ղազախստանյան մարզում՝ 253 հա):

Հայկական ՍՍՀ ամենախոշոր դաշտավարական շրջանը Վարդենիսն է, որտեղ ցանքատարածությունները գերազանցում են 26 հազ. հա: Սրան հաջորդում են Ախուրյանը (25 հազ. հա), Արթիկը (20 հազ.), Թալինը, Սրբիանը, Մարտունին (ոչ պակաս 17 հազ.): Ամենափոքրը Մեղրու շրջանն է, որտեղ ցանքատարածությունները 1800 հա-ից շեն անցնում, այսինքն շատ ավելի քիչ, քան, օրինակ, Հյուսիսային Կովկասի միջին մեծության մեկ տնտեսության ցանքատարածությունն է:

Վերադառնալով ցանքատարածությունների կառուցվածքին (աղյուսակ 20) կարող ենք նկատել, որ այնտեղ ամենամեծ բաժինը ունեն կերպային և հացահատիկային կուլտուրաներ՝ ցանքերի ընդհանուր տարածության 88 %:

Սակայն, հասկանալի է, որ գյուղատնտեսական կուլտուրաների տեսակարար կշիռը արտադրանքի արժեքային արտահայտությամբ և նրանց հերթականությունը այլ է: Եթե դաշտավարության ամրող արտադրանքը ընդունենք 100 %, ապա յուրաքանչյուր ճյուղի բաժինը կունենա մոտավորապես հետևյալ թվային արտահայտությունը՝

հացահատիկային կուլտուրաներ՝ շուրջ 10 %,

տեխնիկական կուլտուրաներ՝ մոտավորապես մեկ քառորդը,

կարտոֆիլ և բանջարաբոստանային կուլտուրաներ՝ շուրջ կեսը և կերպային կուլտուրաներ՝ գրեթե 20 %:

Համեմատելով սույն տվյալները աղյուսակ 20-ի հետ, տեսնում ենք, որ, օրինակ՝ կերպային կուլտուրաները զբաղեցնելով ամենամեծ ցանքատարածությունները, արտադրանքի արժեքով գրավում են միայն նախավերջին տեղը: Հացահատիկային կուլտուրաները ըստ ցանքատարածության լինելով երկրորդ տեղում, ըստ արտադրանքի արժեքի վերջին տեղում են: Նման բնույթի տարբերություններ կան նաև տեխնիկական, բանջարաբոստանային կուլտուրաների ու կարտոֆիլի գծով:

Հացահատիկային կուլտուրաները նախասովետական տարիներին ցանքատարածությունների կառուցվածքում բացարձակորեն գերակշռել

են, կազմելով մոտ 90 %, Բավականին մեծ է եղել մշակվող հացահատիկների տեսականին:

Սովետական իշխանության տարիներին, ընդհուպ մինչև 50-ական թվականների կեսերը, հացահատիկի ցանքատարածությունները մեծապես աճել են, կազմելով առավելագույնը մոտ 400 հազ. հա (1952 թ.), Ցանքատարածությունների նման ընդարձակումը, տուրք տալով զարգացման էքստենսիվ ուղղուն, հասկանալի է, չէր նպաստում հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացմանը և արդյունավետության բարձրացմանը։ Սակայն ամբողջ երկրում հացի սուրբ պրոբրեմի առկայության և գյուղատնտեսությանը հատկացվող միջոցների սղության պայմաններում, հացահատիկի արտադրության զարգացումը տեղի բռնընթաց նույնիսկ այլ կուլտուրաների հաշվին, հանդիսանում էր պետական քաղաքականություն և դիտվում էր որպես հացի պրոբրեմի լուծման միջոց։

Հետագայում, երկրի տնտեսական հզորացման հետ մեկտեղ հացահատիկի արտադրությունը ավելացնելու նոր, ավելի արդյունավետ ուղիներ գտնվեցին և պայմաններ ստեղծվեցին մի շաբթ մարզերում ու հանրապետություններում, դրանց թվում և Հայկական ՍՍՀ-ում, պահանջնելու հացահատիկի ցանքերը և ազատված հողերը տրամադրելու երկրագործության այլ ճյուղերի զարգացման նպատակին։

Ներկայումս հացահատիկների տարածությունը (140 հազ. հա) շուրջ 2,5 անգամ պակաս է իր երբեմնի առավելագույն ցուցանիշից, Պակասել է նաև մշակվող հացահատիկային կուլտուրաների տեսականին, որը ներկայումս ընդգրկում է հիմնականում ցորեն, գարի (հացահատիկների ցանքատարածությունների շուրջ 94 %), որոշ շափով նաև եգիպտացորեն, լորազգիներ, վարսակ, հաճար, Ամբողջովին դուրս է մղվել բրինձը, պրակտիկորեն դադարել են զրաղվել նաև կորեկի ու տարեկանի մշակությամբ։

Ցորենի ցանքերը (շուրջ 70 հազ. հա) գերակշռում են գարու ցանքերին (58 հազ. հա), ըստ որում, եթե ցորենը հիմնականում աշխանացան է, ապա գարին՝ գարնանացան։

Չնայած ցանքատարածությունների զգալի կրճատմանը, հացահատիկի արտադրությունը հանրապետությունում ոչ միայն չի կրճատվել, այլև նախասովետական ժամանակաշրջանի համեմատությամբ գրեթե կրկնապատկվել է։

Նման արդյունք ձեռք է բերվել ժամանակակից ազրոտեխնիկական միջոցների կիրառման և մշակվող սորտերի բարելավման և որպես արդյունք այս բոլորի՝ բերքատվության զգալի բարձրացման հաշվին։ Թեև առայժմ հացահատիկների բերքատվությունը մեզանում բարձր համարել չի կարելի՝ 1 հա-ից շուրջ 20 ցենտներ, այնուամենայնիվ նախահեղափոխական տարիների համեմատությամբ ավելի քան եռապատկվել

Է: Հստ որում, ներկայումս կան տնտեսություններ, որոնք մեկ հա-ից հավաքում են 40—50 ցենտներ բերք:

Ներկայումս պարենային և ֆուրաժային հացահատիկի գծով Հայ-կական ՍՍՀ պահանջը տեղական արտադրության հաշվին բավարպում է միայն 1/3-ի շափով:

Մեզանում հացահատիկ մշակում են գրեթե ամենուրեք, սկսած 400—500 մ բարձրաշափական նիշերից մինչև երկրագործության վերին սահմանը՝ 2200 մ (գարու էկոլոգիական առանձնահատկությունները հնարավորություն են տալիս առանձին նպաստավոր տարիներ բերք ստանալ նույնիսկ 2600—2700 մ բարձրության վրա): Բայց դրանց աճի ու զարգացման լավագույն պայմանները առկա են 800—2000 մ բարձրության գոտիներում: Այստեղ էլ հենց կենտրոնացված են հանրապետության հացահատիկ արտադրող գլխավոր շրջանները (Շիրակում, Սևանի ավազանում, Արարատյան գոգավորությունում և Զանգեզուրում):

Տեխնիկական կուլտուրաների թե՛ տեսականին, թե՛ ցանքատարածությունները շատ թե քիչ շափով կայունացել են միայն վերջին տասնամյակներում: Նախասովետական շրջանում մեր տարածքի համար ավանդական հանդիսացող և լայնորեն տարածված այնպիսի կուլտուրա, ինչպիսին էր բամբակենին, հանվել է ցանքաշրջանառությունից: Լայն տարածում են ստացել նոր կուլտուրաները՝ ծխախոտը, շքարի ճակնդեղը և խորդենին: Սրանցից բացի, ներկայումս առանձին տեղերում մշակվում են նաև գանգրավուշ, արևածաղիկ և կանեփ, որոնք սակայն ապրանքային նշանակություն չունեն:

Նախասովետական շրջանում տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները կազմել են ավելի քան 20 հազ. հա, որից 15 հազ. հա զբաղեցված է եղել բամբակենու տակ: Դրանք իրենց ամենամեծ շափերին (42,5 հազ. հա) են հասել 1950 թ., որից հետո աստիճանաբար սկսել են նվազել, հասնելով ներկայում 11 հազ. հա: Այդ նվազումը տեղի է ունեցել բամբակենու ցանքատարածությունները ամբողջությամբ վերացնելու (1968 թ.), գանգրավուշը գրեթե ամբողջությամբ հանելու և շաքարի ճակնդեղի մշակությունը որոշ շափով սահմանափակելու հաշվին:

Ներկայումս համեմատաբար ընդարձակ տարածություն է զբաղեցնում ծխախոտը՝ 4,8 հազ. հա (1931 թ. 0,1 հազ. դիմաց): Այս կուլտուրան հայտնվել է հանրապետության ներկայիս տարածքում, 19-րդ դարում, սակայն մինչև սովետական կարգերի հաստատումը այդպես էլ ապրանքային նշանակություն ձեռք շի բերել: Միախոտագործության զարգացումը և ապրանքային ճյուղի վերածվելը ըստ էության սկսվում է 20-ական թվականների սկզբներից: Իսկ ներկայումս արդեն տեխնի-

կական կուլտուրաների շարքում ծխախոտին բաժին է ընկնում ամենամեծ համախառն արտադրանքը (ավելի քան 70 %):

Հայկական ՍՍՀ-ում ծխախոտագործությամբ զբաղվում են ինչպես ոռոգվող, այնպես էլ անցրդի հողերում, նախալեռնային ու լեռնային շրջաններում, 800—2100 մ բացարձակ բարձրության վրա: Ծխախոտագործությամբ զբաղվում են հանրապետության վարչական շրջանների գրեթե $\frac{2}{3}$ -ում, ըստ որում մեկ տասնյակից ավելի շրջանների համար այն մասնագիտացման առաջատար ճյուղ է: Աչքի են ընկնում հատկապես Շամշադինի, Իջևանի, Մարտունու, Վարդենիսի, Նոյեմբերյանի շրջանները, որոնք արտադրում են հանրապետության ծխախոտի կեսից ավելին, իսկ ամբողջ հանրապետությանը բաժին է ընկնում ՍՍՀՄ-ում արտադրվող բարձրորակ դեղին ծխախոտի մինչև 12 %-ը:

Ծխախոտագործությունը հանրապետության ամենաեկամարեք ճյուղերից է (զիշում է միայն խաղողագործությանն ու խորդենու մշակությանը): Բույսի մեկ հեկտարի բերքատվությունը անցած 15—20 տարում գրեթե կրկնապատկվել է և ներկայումս միշին հաշվով կազմում է 20—25 ցենտներ: Սակայն առաջավոր շրջանների ու տնտեսությունների փորձը ցույց է տալիս, որ այս ցուցանիշը ևս կարելի է զգալի չափով բարելավել:

Իր նշանակությամբ երկրորդ տեխնիկական կուլտուրան շաբարի նակնդեղն է, որը տարածվել է Հայկական ՍՍՀ-ում 30-ական թվականների սկզբներին¹:

Թանձարաբուտանային կուլտուրաների մշակության հիմնական շրջանը Արարատյան դաշտն է, որտեղ ստացվում է բոստանային կուլտուրաների (ձմերուկ, սեխ) և զերմասեր բանջարեղենի (պոմիդոր, տափղեղ, բաղրիջան) բարձր բերք: Հիշյալ կուտուրաները մշակվում են նաև հսարլ. և հր. արլ. լեռնահովիտների հատակային մասերում:

Առանձին շրջան է ներկայացնում լեռնային գոտին (1500—2000 մ), որը մասնագիտանում է պակաս զերմասեր ու ցրտադիմացկուն բանջարեղենի (կաղամբ, գազար, սեղանի ճակնդեղ) արտադրության գծով:

Վարչական շրջանների թվում բանջարաբոստանային կուլտուրաների համախառն արտադրությամբ աշքի են ընկնում հատկապես էշմիածինը, Մասիսը, Հոկտեմբերյանը, այնուհետև՝ Արտաշատը, Արարատը, իսկ նախալեռնային և լեռնային գոտում՝ Ախուրյանը, Աբովյանը, Հրազդանը, Գուգարքը:

¹ Տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ Հայաստանում շաբարի մակընդեղի մշակման փորձեր կատարվել են դեռև 18-րդ դարից, իսկ անցած դարի կեսերին էրմիածնի վանքի հողերում մշակվող ճակնդեղի բաշարի վրա որոշ ժամանակ գործել է շաբարի փոքրիկ գործարան:

Հողատարածություններում և աշքի են ընկնում բավականին բարձր և կամտաբերությամբ (5—7 անգամ ավելի, քան հացահատիկն է):

Բուսաբուծության այս ճյուղի զարգացման գործում մեծ է զերմոցային տնտեսության դերը: Զարգացած շերմոցային տնտեսությունը անհրաժեշտ է մի կողմից, որոշ կուտուրաների ագրոտեխնիկայի առումով (սածիների աճեցման համար), մյուս կողմից՝ տարգա ցուրտ ժամանակաշրջանում բնակչությանը թարմ բանջարեղեն (գլխավորապես պոմիդոր և վարունգ) հայթայթելու համար:

Ներկայումս Հայկական ՍՍՀ շերմոցների ընդհանուր տարածությունը չի հասնում 100 հա-ի (Հրազդան, Արովյան, Ախուրյան և այլ շրջաններում), բայց ընթացիկ հնգամյակում նախատեսվում է հանրապետության տարբեր շրջաններում ստեղծել նոր հզոր շերմոցներ: Կառուցվելու են Հրազդանի ՊՇԵԿ բազայի վրա Սևանի (54 հա) և Հայկական աստոմային էլեկտրակայանի բազայի վրա «Արշալույս» (54 հա) շերմոցային կոմբինատաները, որոնք հաջորդ հնգամյակում ավելի են ընդարձակվելու նպատակ է դրվում ապահովել բանջարեղենի արտադրության շեշտակելի վերելքը և Հայկական ՍՍՀ դարձնել ամբողջ Սովետական Միության շահանիշով ձմեռային բանջարաբուծության կարևոր բազա:

Կարտոֆիլաբուծությունը Հայկական ՍՍՀ համար մասնագիտացման ճյուղ չէ, բայց բնակչության պահանջմունքները բավարարելու տեսակետից կարեոր նշանակություն ունի (կարտոֆիլը այն կենսամթերքների թվին է պատկանում, որի փոխադրունակությունը ցածր է և այդ պատճառով էլ խնդիր է դրված հանրապետության պահանջները բավարարել տեղական արտադրության հաշվին և հրաժարվել նրա ներմուծումից Ռուսաստանի ոչ սեահողային մարզերից):

Սովետական իշխանության տարիներին կարտոֆիլի ցանքատարածությունները տարեցտարի աճել են, որոշ տատանումներ նկատվել են պատերազմի և հետպատերազմյան առաջին տարիներին, երբ դրանք հասնելով առավելագույն շափերի, հետագայում նվազեցին, կայունանալով 19—20 հազ. հա-ի սահմաններում: Դա 1913 թ. մակարդակից ավելի է շուրջ 3 անգամով: Ավելի նկատելի է համախառն բերքի աճը 1913 թ. 474 հազ.-ից շուրջ 3 մլն. ցենտներ, այսինքն ավելի քան 6 անգամ: Հասկանալի է, որ սա բացատրվում է կարտոֆիլի բերքատվության ավելի արագ աճով: Չնայած այն բանին, որ Հայկական ՍՍՀ այս ցուցանիշներով դեռևս զգալի շափով զիշում է կենտրոնական ծվորապյակարտոֆիլացան երկրներին, ինչպես նաև Բելոռուսական և մերձբալթյան սովետական հանրապետություններին, բայց գերազանցում է հարեվան Ադրբեյջանին ու Վրաստանին, գտնվելով մոտավորապես ՍՍՀՄ միջին յակարդակի վրա (140—160 ց/հա):

Մեզանում կարտոֆիլ աճում է բոլոր բնական ուղղաձիգ գոտինե-

բում: Հնդսմին Արարատյան դաշտում և հր.-արլ. Հովտային շրջաններում (մինչև 1100—1200 մ) միայն զրովի, մնացած շրջաններում՝ նաև անջրդի պայմաններում:

Հայկական ՍՎՀ կարտոֆիլացան առավել աչքի ընկնող շրջաններն են Դեբեդի ավազանը (Հատկապես Կալինինոյի, Ստեփանավանի ու Գուգարքի վարչական շրջանները), Սևանի ավազանը (Մարտունու, Կամոյի, Սևանի, Վարդենիսի շրջաններ), Հս.-արևելքը (Կրասնոսելսկի, Շամշադինի շրջաններ): Վերջին տարիներս այս բնագավառում ավելի ու ավելի մեծ բաժին է ձեռք բերում Արարատյան դաշտը, որն ի տարրերություն մյուս շրջանների, մասնագիտանում է վաղահաս կարտոֆիլի մշակության մեջ և դրա շնորհիվ ներկայումս բնակչությունը թարմ կարտոֆիլ սկսում է ստանալ 1—1,5 ամիս ավելի վաղ, քան նախկինում էր: Այս տեսակետից առանձնանում են հատկապես Մասիսի և Էջմիածնի շրջանները:

Կերային կուտուրաները հանրապետության ցանքատարածությունների կառուցվածքում գրավելով առաջին տեղը, ինչպես տեսանք, զբացեցնում են շուրջ 260 հազ. համ կամ ընդհանուր ցանքատարածությունների 58 %-ը: Մեր սակավահող հանրապետությունում նման ընդարձակ տարածությունները կերային կուտուրաներին տրամադրելը վկայում է այն հսկայական նշանակության մասին, որը ներկայումս տրվում է դաշտային կերարտադրությանը որպես անասնապահության զարգացման կարևոր պայմանի:

Կերային կուտուրաների նկատմամբ այս նոր վերաբերմունքը ավելի ակնառու է դառնում, երբ պարզվում է, որ նախկինում դրանց մշակությունը մեզանում գրեթե բացակայել է: Նույնիսկ 1913 թ. նրանք տարածված են եղել միայն Արարատյան դաշտում և զբաղեցրել են ընդամենը 4 հազ. հա տարածություն:

Սովետական իշխանության տարիներին անասնապահության զարգացման, հատկապես ձմեռային մսուրային շրջանում նրա կերային բազան ամրապնդելու և անասնակերի մեջ սպիտակուցային պակասը լրացնելու անհրաժեշտությունը հրամայական պահանջ էին դնում ստեղծելու և ծավալելու դաշտային կերարտադրությունը: Սկսած 30-ական թվականների սկզբներից կերային կուտուրաների ցանքատարածությունները արագորեն ընդարձակվում են, բարելավվում է դրանց կառուցվածքը, աճում է բերքատվությունը:

Հանրապետության բնական պայմանների բազմազանությանը համապատասխան բավականին մեծ է նաև այստեղ տարածված կերային կուտուրաների տեսականին՝ բազմամյա ու միամյա խոտարույսեր, հացազգիներ, լոբազգիներ, արմատապտուղներ (Կորնգան, առվույտ, վիկ, երեքնուկ, շաբդար, գարի, վարսակ, սոյա, եգիպտացորեն, ոլոռ,

արևածաղիկ, կերային կաղամբ, շաքարի ճակնդեղ և այլն): Սրանք որպես անասնակեր օգտագործվում են խոտի, սիլոսի, սենաժի և խոտալուրի ձևով:

Տարրեր բնական գոտիներում սրանք տարրեր հարաբերակցություն և բերբատվություն ունեն: Ամենաբարձր արդյունքը ստացվում է ցածրադիր գոտում՝ մեկ հեկտարից 7—10 հազ. կերային միավոր, ամենացածրը՝ լեռնային գոտում (ոչ ավելի, քան 3 հազ. կերային միավոր):

Հանրապետության վարչական շրջաններից կերային կուլտուրաների ամենամեծ ցանքատարածություններն ունեն Վարդենիսը, Սիսիանը, Ախուրյանը, Մարտունին, Ղոկասյանը, Կալինինոն, Կամոն, Թալինը, Ամասիան, այսինքն լեռնային ու մասամբ նախալեռնային շրջանները: Այստեղ ցանքատարածությունների կառուցվածքում գերակշռում են ցանովի խոտարույսերը, մինչդեռ ցածրադիր գոտում, հատկապես Արարատյան դաշտում ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն ջերմասեր եգիպտացրենը (կանաչ զանգված ստանալու համար) և ճակնդեղը:

Այգեգործությունը Հայկական ՍՍՀ երկրագործության առաջատար ու եկամտաբեր ճյուղերից է: Ունենալով իր զարգացման համար բնական ու տնտեսական բարենպաստ պայմաններ, այն որոշում է հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացման կարևոր ուղղություններից մեկը, ապահովելով բնակչությանը մի շարք անհրաժեշտ սննդամթերքներով, իսկ գինու-կոնյակի ու պահածոների արդյունաբերությունը՝ հումքով:

Այգեգործությունը, որն ի տարրերություն դաշտավարության, գործունի կուլտուրական ծառաբույսերի՝ բազմամյա տնկարկների հետ, բաժանվում է խաղողագործութան և պտղաբուծության:

Խաղողագործությունը հանրապետության տարածքի հնագույն ճյուղերից է և հազարամյակների պատմություն ունի: Միշտ էլ նա եղել է մեր ցածրադիր շրջանների բնակչության գլխավոր զբաղմունքներից մեկը:

Սովետական իշխանության հաստատմանը անմիջապես նախորդող տարիներին խաղողագործությունը մեծապես վնասվեց, այգիների առանց այն էլ ոչ ընդարձակ տարածությունը գրեթե կիսով շափ կըրճատվեց: Նախասովետական՝ 1913 թ. մակարդակը վերականգնվեց միայն 1928 թ.: Ներկայումս խաղողի այգիները զբաղեցնում են շուրջ 33 հազ. հա տարածություն, մոտ քառապատիկ ավելի, քան 1913 թ. էր: Խաղողի այգիների ընդարձակումը տեղի է ունեցել գլխավորապես Արարատյան գոգավորության նախաեռնային շրջանների ղուրի, ինչպես նաև նախկին ձմեռային արոտների յուրացման հաշվին, երբ նոր զրանցքների կառացումով (Հոկտեմբերյանի, Թալինի, Արզնի—Շամիրամի, Ար-

տաշատի և այլն) այդ հողերը դարձան ոռոգելի, նոր ջրանցքների կառուցման և լանջերի դարձանդավորման միջոցով՝ խաղողի այգիները զգալի շափով ընդարձակվեցին նաև հանրապետության հյուսահսային ու հս.-արլ. շրջաններում:

Մեկ հեկտարի միջին բերքատվությունը էական փոփոխություն չի կրել և կախված տարվա եղանակային փոփոխություններից, ենթակա է մեծ տատանումների. առավելագույնը եղել է 125 (1981 թ.), նվազագույնը՝ 49 ցենտներ (1983 թ.): Բերքատվության անկման գլխավոր՝ պատճառները գարնանային ցրտահարություններն են և գարնանային ու աշնանային տեղումների աննպաստ ռեժիմը (գարնանը այն խանգարում է փոշոտմանը, աշնանը՝ խաղողաբաշխին):

Խաղողի համախառն արտադրանքի գծով (բարենպաստ տարիներին շուրջ 200—220 հազ. ցենտներ) Հայկական ՍՎՀ տեսակարար կշիռը երկրում բարձր չէ՝ ընդամենը 4—5%: Այդ ցուցանիշով նա զիջում է խաղողագործական միութենական հանրապետությունների մեծ մասին (Աղբեզան, Մոլդավիա, Ուկրաինա, Ռուսաստան, Վրաստան, Ուզբեկստան):

Մեր հողակլիմայական պայմանները, ինչպես նաև գյուղատնտեսության ներկայումս հաստատված կառուցվածքը խաղողի այգիների մեծաշափ ընդարձակման հնարավորություն չեն ընձեռում: Մի կողմից, տնտեսապես ձեռնտու է խաղողագործությունը զարգացնել միայն մինչև 1400 մ բացարձակ բարձրություն ունեցող շրջաններում, որոնց տարածքը, ինչպես հայտնի է, խիստ սահմանափակ է: Մյուս կողմից, հանրապետության էկոնոմիկայի համամասնական զարգացման շահերը պահանջում են զարկ տալ նաև երկրագործության մյուս ճյուղերին և շկրճատել ոռոգվող հողերում մշակվող մյուս կուլտուրաների ցանքատարածությունները: Մասնագետների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եղած հնարավորությունների առավելագույն օգտագործման դեպքում էլ խաղողի այգիների տարածությունը կարելի է ընդամենը կրկնապատկել:

Ինչպես տեսնում ենք, սա չի կարող դիտվել որպես այս ճյուղի զարգացման գլխավոր ռեզերվ: Այսպես թե այնպես, որ սահմանափակ է և մշտապես ազդող դրական գործոն լինել չի կարող: Դիխավոր ռեզերվը խաղողի նոր այգիների բերքատվության և խաղողի շաքարայինության բարձրացումն է, որ կարող է ապահովվել ագրոտեխնիկայի շեշտակի բարելավման և նոր սորտերի ստացման ու ճիշտ տեղաբաշխման շնորհիվ:

¹ Խաղողի այգիների առավելագույն տարածության ընդունված թիվը հավասար է 72,5 հազ. հա:Տես՝ Պ. Բ. Արզմանյան. Պլուտոստու և անոցրածության բարձրացումն է, որ կարող է ապահովվել ագրոտեխնիկայի շեշտակի բարելավման և նոր սորտերի ստացման ու ճիշտ տեղաբաշխման շնորհիվ.

Հազարամյակների ընթացքում Հայաստանում ժողովրդական սելեկցիայի շնորհիվ ստեղծվել է խաղողի տեխնիկական և սեղանի տեղական սորտերի մեծ բազմազանություն: Դրանցից լավագույնները ներկայում լայն տարածում ունեն: Վերջին տարիներին տեղական սորտերը լրացվել են եվրոպական ու անդրկովկասյան սորտերով, որոնք մեր հողակլիմայական պայմաններում լավ արդյունք են տալիս, ինչպես նաև խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության հայկական գիտահետազոտական ինստիտուտի ստացած նոր սորտերով: Ներկայումս մեզանում առավել լայն տարածում ունեցող սորտերն են՝ Ոսկեհատը (բոլոր այգիների տարածության ավելի քան 21%), Ըկացիթելին (17%), Մըսխալին (16%), Գառան դմակը, Կախեթին, Արենին:

Տեխնիկական սորտերի մշակումը, այլ կերպ ասած՝ արդյունաբերական խաղողագործությունը զարգացած է գիշավորապես Արարատյան գինիների հումք ծառայող սորտերի և թարմ օգտագործման՝ սեղանի գինիների հումք ծառայող սորտերի և թարմ օգտագործման՝ սեղանի խաղողի արտադրության գծով: Նախալեռնային գոտում, որտեղ խաղողագործությունը տարածվեց միայն վերջին տասնամյակներում, գերակշռությունը են կոնյակի, սեղանի և շամպայն գինիների սորտերը:

Հայկական ՍՍՀ խաղողագործության երկրորդ շրջանը հս.-արլ. է, որտեղ առավել տարածված են սեղանի և շամպայն գինիների սորտերը: Նման ուղղություն ունի նաև երրորդ շրջանը՝ Արփայի հովիտը: Եվ, վերջապես, շորրորդ շրջանը՝ Հարավային Զանգեզուրը, աշքի է ընկնում թունդ և կիսաքաղցր գինիների սորտերով:

Հայկական ՍՍՀ 37 գյուղական վարչական շրջաններից խաղողագործությամբ զբաղվում են 19-ում: Հանրապետության համախառն արտադրանքում առավել մեծ բաժին ունեն Արարատյան դաշտի և նախալեռնային գոտու շրջանները, հատկապես Արտաշատի, Արարատի, Հոկտեմբերյանի և Էջմիածնի, որոնք խաղողագործության հնագույն շըրջաններն են: Նոր շրջաններից (նոր յուրացված հողերում) առավել մեծ արտադրանք են տալիս Բաղրամյանը և Նախրին:

Խաղողագործական մյուս գոտիներում աշքի են ընկնում Շամշադինի ու Նոյեմբերյանի (հս-արևելք), Մեղրու (Զանգեզուր) և Եղեգնաձորի (Վայք) շրջանները:

Պտղաբուծությունը սովորական իշխանության տարիներին ամենաարագ զարգացող ճյուղերից է: Պտղատունների տնկարկների ընդհանուր տարածությունը այդ ժամանակաշրջանում աճել է մոտ 12 անգամ, 1913. 4,4 հազ. հա-ից 1987 թ. հասնելով 53,5 հազ. հա: Տարածությունների ընդարձակման հետ մեկտեղ հանրապետության էկոնոմիկայում էկանորեն բարձրացավ նրա նշանակությունը: Եթե նախկինում, որպես կանոն, պտղատու ծառերը ցրված էին խաղողի այգիներում ու միջնակ-

ներում, նրանց հոծ տնկարկները բացակայում էին, ապա ներկայումս ստղծված են տարրեր պտղատուների մասնագիտացված ընդարձակ այգիներ, որտեղ հնարավոր է կիրառել ագրոտեխնիկական որոշակի միջոցառումներ և մեքենայացնել աշխատանքները։ Սա նշանակում է, որ այգեգործությունը արդեն արդյունաբերական բնույթ է ստացել։

Եթե նախասովետական շրջանում պտղաբուծության տեսակարար կշիռը կազմել է ամբողջ գյուղատնտեսության մեջ մոտ 2 %, իսկ պտղաբուծության ու խաղողագործության մեջ՝ 14 %, ապա ներկայումս այն բարձրացել է համապատասխանաբար ավելի քան 15 % և 50 %։

Հայկական ՍՍՀ-ում մշակվող պտղատուների տեսականին բավականին մեծ է, ավելի քան երեք տասնյակ։ Լայն տարածում ունեն ինչպես տեղական, այնպես էլ դրսից բերված՝ ինտրոդուցված սորտերը։

Պտղատու տնկարկների կառուցվածքում հիմնականը հնդավարերներն են (ինձորենի, տանձենի, սերկելենի), որոնց բաժինը հասնում է 50 % (ըստ տարածության) և կորիզավորներ՝ 43 % (ծիրանենի, դեղձենի, սալորենի, բալենի, կեռասենի, հոնի և այլն)։ Մնացած տարածությունը զբաղված է ընկույզապտուղների (ընկույզենի, նշենի, պիստակենի) և մասամբ մերձարևադարձային (թզենի, նոնենի, փշատենի) տնկարկներով։ Պտղատու տեսակների, հետևապես և դրանց էկոլոգիական առանձնահատկությունների բազմազանությունը պայմանավորել են դրանց տարածումը ամենատարբեր բնական գոտիներում՝ սկսած 400 մ-ից մինչև 2100 մ հաշված ծովի մակարդակից։ Այլ կերպ ասած, պտղատու տնկարկներ կան գործնականում հանրապետության բոլոր վարչական շրջաններում։ Սակայն պտղաբուծությունը հատկապես մեծ ապրանքային նշանակություն ունի հանրապետության հս-արլ. շրջաններում (մասնավորապես նոյեմբերյանում), Արարատյան դաշտում, Արարատյան գոգավորության նախալեռնային գոտում, Զանգեզուրի հարավում (Մեղմի) և Վայքում։

Վերջին ժամանակներս պտղաբուծությունը (հնդավարերի որոշ տեսակները) հաջողությամբ զարգանում է նաև լեռնային շրջաններում։

Հատապտուղները սահմանափակ տարածում ունեն (տարածված են նախալեռնային գոտում և մերձարևադարձային շրջանում) և ներկայացված են մորիով ու սև հաղարջով։

Հայկական ՍՍՀ համար առավել տիպական են և պտղաբուծության մասնագիտացման ուղղությունը որոշում են կորիզավորները։ Սրանց մեջ գլխավորը ծիրանն է։ Ծիրանենի մշակվում է հանրապետության շրջանների մեծ մասում, 400—1600 մ բարձրությունների վրա։ Հատկապես արժեքավոր են Երևանի, Սաթենի, Խոսրովինի և մի քանի այլ տեղական սորտերը, որոնք համաշխարհային սելեկցիայում աշքի ընկնող

տեղ են գրավում և մտցված են ՍՍՀՄ շատ շրջանների ստանդարտ տեսականու մեջ:

Աշքի ընկնող տեղ է գրավում նաև դեղձը, որի տնկարկները տառածված են գերազանցապես ցածրադիր շրջաններում, մինչև ծ. մ. հաշված 900—1000 մ բարձրությունները: Առանձին դեպքերում միայն այն կարող է բարձրանալ մինչև 1400 մ:

Դեղձի սորտային կազմը նույնպես բազմազան է, սակայն նրա տնկարկների գրեթե $\frac{3}{5}$ -ը բաժին է ընկնում նարինչենի և կոծ սորտերին:

Այս արժեքավոր պտղի արտադրության մեծ մասը կենտրոնացված է Հոկտեմբերյանի և Նոյեմբերյանի վարչական շրջաններում:

Անցած տասնամյակների ընթացքում շեշտակիորեն ավելացավ հնդավորների, հատկապես խնձորենու և տանձենու տարածությունը: Նոր արդյունաբերական այգիներ են ստեղծվել գլխավորապես Արարատյան գոգավորության նախալեռնային գոտում, դրանց տարածությունը զգալի շափով ընդարձակվել է հանրապետության հս-արլ. շրջաններում, այդ պտուղների ապրանքային արտադրություն է սկսվել Սևանի ավազանում, Միսիանում, Ախուրյանում և մի շարք այլ լեռնային շրջաններում: Հենց այս նախալեռնային ու լեռնային գոտիներն ել առավել շափով համապատասխանում են հնդավորների կենսաբանական պահանջներին և դրանց մշակության ամենահեռանկարային շրջաններն են:

Պտղատուների մյուս երկու խումբը՝ ընկուզապատուղները և մերձարեադային կուլտուրաները շատ ավելի սահմանափակ տարածուա ունեն: Առաջիկայում ևս չի նախատեսվում դրանց էական ընդարձակում, շնայծ նրան, որ մասնավորապես, ընկուզենու տնկարկների ընդարձակման բնական պայմանները թե՛ ցածրադիր, թե՛ նախալեռնային գոտում նպաստավոր են:

Թնչ վերաբերում է մերձարևսադարձային կուլտուրաներին, ապա դրանք արդյունաբերական նշանակություն ունեն միայն Մեղրու, Նոյեմբերյանի, Շամշադինի, Իջևանի շրջանների ցածրագիր մասերում և Արարատյան դաշտի որոշ հատվածներում:

ՀԱՐՑԻՐ ԵՎ ԱՐԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ

1. Վերլուծեք Հայկական ՍՍՀ դաշտավարության ճյուղային կառուցվածքը, ըստ ցանքատարածությունների և ռամախառն արտադրանքի:

2. Գնահատեք Հայկական ՍՍՀ խաղողագործության ու պտղաբուժության զարգացման բնական ու անտեսական նախադրյալները և հեռանկարները:

Անասնապահությունը գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից է, որի զարգացմանը ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում վերջին տասնամյակների ընթացքում հսկայական նշանակություն է արվում։ Անասնապահությունը տնտեսական առումով ու այլ ինչ է, քան տարբեր տեսակի բուսական մթերքների «վերամշակումը» ավելի արժեքավոր մթերքների՝ կաթի, մսի, բրդի, կաշվի։ Մեր երկրում կենդանական ծագում ունեցող մթերքների պահանջարկի անընդհատ աճի հետևանքով ավելի ու ավելի է մեծանում այս ճյուղի տնտեսական նշանակությունը։

Անասնապահությունը միշտ էլ Հայկական բարձրավանդակի բնակչության ավանդական զբաղմունքներից է եղել։ Սակայն ընդհուպ մինչև սովետական իշխանության հաղթանակը նա ունեցել է խիստ արտահայտված էքստենսիվ բնույթի։

Բուսաբուծության համեմատությամբ անասնապահությունը զարգացման անբարենպաստ պայմաններում է գտնվել նաև սովետական իշխանության առաջին տասնամյակների ընթացքում։ Տարբեր պատճառներով մեծ շափով պակասել է անասունների ընդհանուր գլխաքանակը, Ռյազարների ու այծերի 1916 թ. գլխաքանակը վերականգնվել է միայն 40-ական թվականների վերջերին (շնայած նրան, որ 1920 թ. համեմատությամբ ավելացել է 3,5 անգամ), իսկ խոշոր եղջերավոր անասուններինը՝ 60-ական թվականների վերջերին (1920 թ. համեմատությամբ աճը կազմել է նույնպես ավելի քան 3 անգամ)։

Տնտեսական ու կազմակերպական մի շարք միջոցառումների շնորհիվ 60-ական թվականներից սկսած ապահովում է անասնապահության անշեղ զարգացում, նրա բոլոր ցուցանիշների անընդհատ բարելավում։ Աճում է անասունների գլխաքանակը, մեծանում է մթերատվությունը և որպես վերջնական արդյունք՝ ավելանում է անասնապահական մթերքների արտադրանքը։ Օրինակ՝ 1981—1985 թվականների ընթացքում միշտին տարեկան արտադրանքը 1956—1960 թվականների համեմատությամբ աճել է մսի գծով՝ շուրջ եռակի շափով, կաթի գծով՝ գրեթե կրկնակի անգամ, ձվի գծով՝ գրեթե 4,5 անգամ, բրդի գծով՝ մեկ երրորդով։ Այդ ցուցանիշների կայուն աճ ապահովում է նաև ընթացիկ հնգամյակում։

Անասնապահության զարգացման համար անհրաժեշտ պայման է կերային բազայի անընդհատ ամրապնդումը։ Անասունների կերակրումը մեզանում կատարվում է արոտամսուրային սիստեմով, որը պահանջում է կերի որոշակի քանակական հարաբերակցություն տարվա տաք և ցուրտ սեղոններին։ Հայկական ՍՍՀ-ում անասնապահության թույլ տի-

դը եղել և մնում է մսուրացին կերի պակասը ձմռան ամիսներին և վաղ գարնանը:

Վերջին տարիներին դրական տեղաշարժեր են նկատվում հանրապետության անասնակերի կառուցվածքում: Անասնակերի ընդհանուր քանակի չական աճի հետ մեկտեղ, ավելի արագ տեմպերով է աճում դաշտային, ինչպես նաև գործարանային կերարտադրությունը, որի շնորհիվ ամրապնդվում է առաջին հերթին մսուրացին շրջանի կերային բազան:

Ներկայումս Հայկական ՍՍՀ-ում ծախսվող անասնակերի ընդհանուր քանակությունը կազմում է շուրջ 2 մլն. տոննա կերային միավոր, որը մեկ պայմանական գլուխ խոշոր եղջերավոր անառունի հաշվով հավասար է մոտ 24 ցենտների: Օրինակ, 1970—1985 թթ. անասնակերի ընդհանուր ծավալը աճել է 1,5 անգամ, մինչդեռ խտացված և հյութալի կերինը՝ 2—3 անգամ: Միաժամանակ գրեթե 1,5 անգամ նվազել է արոտային կերի ծավալը:

Ինչքան ավելի բարձր է անաօնապահության մակարդակը, ինչքան ավելի լայն է ինդուստրիալ հիմունքների կիրառումը, որպես կանոն այնքան ավելի մեծ է խտացրած ու հյութալի կերի բաժինը:

Ներկայումս հանրապետությունում գործում են համակցված կերի պետական խոշոր գործարանները Երևանում, Թալինում, Սպիտակում և Սևանում, ինչպես նաև միջտնտեսային գործարան Քաղսիում: Կարեորնշանակություն ունեն նաև Զարենցավանի լիգինի գործարանը և այրաղաց կոմբինատների համակցված կերի արտադրամասերը:

Արդյունաբերական կերարտադրության առաջանցիկ զարգացման հետ մեկտեղ մեծ ուշադրություն է դարձվում արոտային կերացագության հետագա բարելավմանը:

Վաղուց ի վեր Հայաստանը հոշակված է եղել իր հարուստ բնական արոտավայրերով ու առատ խոտհարքներով, որոնք միասին վերցրած կազմում են հանրապետության ներկայիս գյուղատնտեսական հանդակների գրեթե 60 %, այդ թվում արոտավայրերը՝ 50 % (672 հազ. հա) և խոտհարքները՝ 10% (138 հազ. հա):

Կերային հանդակները հանրապետության լեռնային տարածքի մնական գոտիականությանը համեմատ ունեն ուղղաձիգ տարածում: Գերակշռող գոտիական տիպը ենթալպյանն է (2200—2600 մ բարձրության վրա), ապա տափաստանային (1200—2200 մ), Զգալի տարածություն էն գրավում նաև անտառի վերին սահմանին հարող, ինչպես նաև ալպիական արոտավայրերն ու խոտհարքները:

Արոտավայրերի մեծ մասը, հատկապես ենթալպյան, մասամբ նաև տափաստանային գոտում, մեծ արժեք է ներկայացնում խոշոր եղջերավոր անասունների համար: Այստեղ խոտածածկը խիտ է, բավականին:

բարձր, բուսակազմը՝ հարուստ: Ընդարձակ են համեմատաբար հարթ և ոչ քարքարոտ տեղամասերը: Սակայն մեծ տարածություն են զբաղեցնում նաև կարճ խոտածածկ, քարքարոտ ու զառիթափ տեղանք ունեցող արոտավայրերը, որոնք խոշոր եղջերավոր անասունների համար պիտանի չեն, բայց արժեքավոր են մանր եղջերավորների համար: Դրանք շատ են հատկապես տափաստանային և ալպիական գոտիներում:

Հայկական ՍՍՀ-ում որոշ շափով տարածված են նաև ձմեռային արոտավայրերը, որոնք, սակայն, գտնվելով հիմնականում Արարատյան գոգավորության կիսանապատային գոտում, ոռոգիչ ջրանցքների ազդեցության ոլորտում, աստիճանաբար յուրացվում են երկրագործության կողմից և վերածվում վարելահողերի կամ բազմամյա տնկարկների:

Սովետական իշխանության տարիներին մեծ աշխատանք է կատարվել արոտավայրերի ուղղիոնալ օգտագործման, արոտային շրջանում անասնապահության արդյունավետությունը բարձրացնելու, անասնապահների աշխատանքային պայմանները բարելավելու ուղղությամբ: Արոտավայրերը հիմնականում արդեն ջրարդիացված են, ստեղծված է անասնաբուժական ծառայություն: Այս բոլորի շնորհիվ բարելավել է անասունների ամառային կերահայթայթումը և բարձրացել նրանց մթերատվությունը:

Հանրապետությունում լայն տարածում ունի արոտային աճանապահության վարման ուղղաձիգ-գոտիական սիստեմը, որը իրականացվում է արոտների միջջրջանային ու ներջրջանային օգտագործման միջոցով: Պետական հողային ֆոնդից շուրջ 260 հազ. հա արոտավայրեր, որոնք գտնվում են բարձր լեռնային գոտում, հատկացված են գլխավորապես ցածրադիր և նախալեռնային գոտիների կոլտնտեսություններին ու սովխոզներին երկարաժամկետ օգտագործման համար: Արոտավայրերի միջջրջանային օգտագործումը լայն տարածում գտավ հատկապես 1951 թ. հետո, երբ ամբողջ Անդրկովկասում դադարեցվեց դրանց միջհանրապետական օգտագործումը:

Միաժամանակ ակնհայտ է մի այլ երևույթ ևս. Հանրապետության շատ շրջաններում անասունների շափից ավելի խտության, արոտավայրերի գերբեռնվածության և անկանոն օգտագործման հետեանքով խիստ վատացել է վերջիններիս վիճակը, պակասել են օգտակար բուսատեսակները, ավելացել են մոլախառերը, ընկել է բերքատվությունը, զարգանում են էռոգիոն պրոցեսները:

Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնական կերային հանդակների բարելավման միջոցառումների որոշակի համակարգ կիրառելու դեպքում կարելի է արմատապես շտկել վիճակը,

կանխել նշված բացասական երևոյթները։ Ավելին, հնարավոր է առնվազն կրկնապատկել անասնակերի այն քանակը, որ ներկայումս ստացվում է բնական կերահանդակներից։ Այդ միջոցառումներից են՝ արդտավայրերում ու խոտհարքներում քարերի հավաքումն ու գուղձերի ոչնչացումը, մոլախոտերի ոչնչացումը քիմիական կամ մեխանիկական եղանակով, հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառումը, արհեստական ոռոգումը։ Այս ամենը բնական կերահանդակների, այսպես կոչված, մակերեսային քարելավման միջոցառումներն են։ Արմատական բարելավման դեպքում ապահովվում է բնական խոտածածկի վերականգնումը վարելու և ցանքս կատարելու միջոցով։ Արդյունավետ է արդտավայրերը հատվածների բաժանելը և որոշակի հերթականությամբ դրանցում արածեցնելը։

Հայկական ՍՍՀ անասնակերի բազան ամրապնդելու մյուս կարևոր ազդյուրը դաշտային կերարտադրության ավելացումն է, որը կարող է կատարվել կերային կուլտուրաների ցանքատարածությունների որոշ ընդարձակման, բայց ավելի շատ՝ դրանց կառուցվածքի բարելավման և բերքատվության բարձրացման միջոցով։

Անասնապահության նյուղային կառուցվածքը ձևավորվում է բնակչության պահանջմունքների, տեղական տնտեսական ու բնական պայմանների ազդեցության ներքո։ Նշված երեք կոմպոնենտներից առաջին երկուսը Հայկական ՍՍՀ-ում արմատական փոփոխություններ են կրել, որի պատճառով էլ անցած տասնամյակների ընթացքում լուրջ տեղաշարժեր են կատարվել հանրապետության անասնապահության ճյուղային կառուցվածքի, որոշ իմաստով նաև տնտեսական ֆունկցիաների մեջ։

Նախ նշենք, որ նախկինում անասնապահությունը ոչ միայն միերք էր արտադրում, այլև տալիս էր քաշող ուժ։ Նախասովետական շրջանում և ընդհուպ մինչև 1930-ական թվերը գյուղատնտեսության մեջ և խճուղային տրանսպորտում օգտագործվող ողջ «էներգետիկ հղորությունը» կազմում էին անասունները։ Ներկայումս դրությունն ամրողանվել այլ է։

Հենվելով համախառն արտադրանքի ցուցանիշի վրա, կարելի է ձայկական ՍՍՀ անասնապահության արդի կառուցվածքը ներկայացնել հետևյալ տեսքով։ Եթե ճյուղի ամբողջ համախառն արտադրանքը ընդունենք 100, ապա առաջին տեղը կպատկանի տավարաբուժությանը (խոշոր եղջերավոր անասնապահությանը)՝ մոտավորապես կեսը, երկրորդը՝ ոչխարաբուժությանը՝ շուրջ $\frac{1}{5}$ -ը, երրորդը՝ թոշնարութությանը, այնուհետև հաջորդում են խոզաբուժությունը, մեղվարութությունը և մնացած ճյուղերը։

Տավարաբուժությունը հանրապետության մսի, կաթի և յուղապահութագործական արդյունարերության գլխավոր հումքամատակարարն է և

վճռական նշանակություն ունի բնակչության պահանջարկը այդ արժեքավոր կենսամթերքների գծով բավարարելու գործում:

Սովետական իշխանության տարիներին տավարարության զարգացման ուղղությամբ լուրջ հաջողություններ են ձեռք բերվել: Զարգացման էքստենսիվ ու ինտենսիվ ուղիների գուգորդման հիման վրա զարկ է տրվել, մի կողմից, անասունների գլխաքանակի ավելացմանը, մյուս կողմից՝ տավարի ցեղի ու նախիրի կազմի բարելավմանը:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 80-ական թվականներին գտնվում է 860—870 հազ մակարդակի վրա, որը գերազանցում է 1941 թ. ցուցանիշը ավելի քան 40 %-ով:

Քսանական թվականներից սկսած հանրապետությունում տոհմաբուժական լայն աշխատանքներ են ծավալվել: ՍՍՀՄ տարբեր շրջաններից ներմուծվել են մեծ քանակությամբ ցեղական անասուններ, կազմակերպվել են տասնյակ տոհմաբուժարաններ, ստեղծվել են հանրապետության պայմաններին համապատասխանող բարձր մթերատու ցեղեր: Այս բոլորի շնորհիվ արմատապես բարելավվել է խոշոր եղջերավոր անասունների ցեղային կազմը:

Ներկայումս հանրապետության բոլոր շրջանների համար պլանային է հանդիսանում տեղում բուժված կովկասյան գորշ ցեղը, որը կազմում է կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների խոշոր եղջերավոր անասունների ընդհանուր գլխաքանակի ավելի քան 96 %-ը: Մնացածը գրեթե ամբողջությամբ բաժին է ընկնում երկրորդ պլանային ցեղին՝ սիմենտալյանին, որը, տարածված է սահմանափակ թվով տընտեսություններում:

Հայկական ՍՍՀ բնական և տնտեսական պայմանների հաշվառման հիման վրա տավարաբուժության համար ընտրված է կաթնամսատու և մասամբ կաթնատու (մերձքաղաքային տնտեսություններում) ուղղությունը, որի հետագա զարգացումն էլ հենց ապահովում է հիշյալ ցեղերի շնորհիվ:

Տավարաբուժության կարևոր ցուցանիշ է նախիրի կառուցվածքը: Այն անմիջականորեն կախված է տավարաբուժության զարգացման ուղղությունից: Նրա միջոցով է կարգավորվում գլխաքանակի վերարտադրությունը, որի հետագա զարգացումն էլ համապատասխան է հարաբերակցությունը, նախկինում, երբ բանող անասունի մեծ կարիք կար, և այդ անասունն էլ հիմնականում եղն ու գոմեղն էր, նախիրի կազմում փոքր էր կովերի տեսակարար կշիռը: Հետագայում տավարաբուժության նոր մասնագիտացմանը համապատասխան էապես փոխվեց նաև նախիրի կազմը: Ներկայումս գրեթե ամբողջությամբ վերացել են որպես քաշող ուժ ծառայող եղներն ու գոմեղները, մեծ չափով ավելացել է կովերի գլխաքա-

նակը, օթե 1916 թ. վերջինս կազմել է ընդամենը 32 %, իսկ 1951 թ. 29-ից էլ պակաս, ապա ներկայումս անցնում է 37%¹:

Նշված տեղաշարժերի շնորհիվ զգալիորեն բարելավվել են տավարաբուծության տնտեսական ցուցանիշները, աճել է անասունների մթեցատվությունը, մեծացել է արտադրանքի ծավալը: Օրինակ, մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը 1940 թ. 0,6 հազ. կգ դիմաց ներկայումս կազմում է ավելի քան 1,6 հազ. կգ, իսկ միայն կոլտնտեսություններում՝ 2,3 հազ կգ:

Ի տարբերություն անասնապահության մյուս ճյուղերի, տավարաբուծության տեղաբաշխումը հանրապետության տարածքում ավելի ճամաշափ է: Խոշոր եղբերավոր անասունների գլխաքանակը վարչական շրջանների մեծագույն մասում կազմում է 15—25 հազ. գլուխ: Այդ թիվը առավել փոքր է Մեղրու և Նախիրի շրջաններում (մինչև 10 հազ.), առավել մեծ Միսիանի, Մարտունու և Ախուրյանի շրջաններում (30 հազ.-ից ավելի):

Քանի որ վարչական շրջանների տարածքի շափերը տարբեր են, ուստի գլխաքանակի բացարձակ թվերը տեղաբաշխման սպառիչ պատկերը չեն տալիս: Հարկ է լինում օգտագործել նաև այնպիսի տեսակարար ցուցանիշ, ինչպիսին է խտությունը: Անասնապահության մեջ ընդունված է խտության ցուցանիշը՝ որոշել ոչ թե ամբողջ տարածքի, այլ գյուղատնտեսության մեջ օգտագործվող տարածքի՝ գյուղատնտեսական հանդակների նկատմամբ: Այդպիսի մոտեցմամբ ստացվում է, որ հանրապետության միջին ցուցանիշին 1,5—2 անգամ գերազանցում են Մասիսի, Արտաշատի, Էջմիածնի, ինչպես նաև Ախուրյանի, Արթիկի ու Արգածի շրջանները: Խոտության ամենափոքր ցուցանիշները (30—40 գլուխ) ունեն Թալինի, Սիսիանի, Իջևանի, Ազիզբեկովի և Աբովյանի շրջանները: Մյուս շրջաններում խոշոր եղբերավոր անասունների խտությունը հավասար կամ մոտ է հանրապետության միջին ցուցանիշին:

Անասնապահական շրջանների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Կալինինոյի և Հատկապես Ստեփանավանի շրջանները, որոնք անասնապահական մթերքների արտադրության մեջ առաջնակարգ տեղ գրավելուց բացի աշքի են ընկնում նաև որպես տուհմային անասնաբուծության կենտրոններ: Այստեղ ոչ միայն զբաղվում են խոշոր եղբերավոր անասունների նոր ցեղեր ստանալու գիտագործնական աշխատան-

1. Այնուհանդերձ, դեռևս ձեռք չի բերված նախիրի ուսցիունալ կառուցվածքը: Մասնագետների ուսումնասիրությունների համաձայն Հայկ ՍՍՀ կոնկրետ պայմաններում ուսցինալ է համարվում այն կառուցվածքը, որտեղ կովերի տեսակարար կշիռը 45—50% -ից պակաս չէ: Ըստ որում, մերձքաղաքային տնտեսություններում այն պատք է հասնի մինչև 60—70% -ի:

քով, այլև ամեն տարի հանրապետության այլ շրջաններն ին առաքում հազարավոր գլուխ ցեղային մատղաշ, լուրջ ավանդ մուծելով հանրապետության խոշոր եղբերավոր անասունների ցեղային կազմի բարելավման գործում:

Մանր եղբերավոր անասունապահությունը ճյուղի համախառն արտադրանքում կիսում է 2-րդ—3-րդ տեղերը թոշնաբուժության հետ, տավարաբուժությանը զիշելով ավելի քան կրկնակի անգամ:

Հայկական ՍՍՀ բնական պայմանները բնդհանուր առմամբ բարենպաստ են ոչխարաբուժության զարգացման համար, և դա առաջին հերթին լեռնային արոտների շնորհիվ, որոնց մի զգալի մասը, ինչպես արդեն ասվել է, պիտանի չեն խոշոր եղբերավորների համար:

Մանր եղբերավոր անասունների հոտի հիմնական մասը կազմում են ոչխարները և շատ փոքր մասը՝ այժերը: Ըստ որում, վերջիններիս ոչ մեծ տեսակարար կշիռն էլ արագորեն նվազում է և այդ ճյուղը հանրապետության շատ շրջանների համար ըստ էության արդեն կորցրել է իր տնտեսական նշանակությունը: Այսպիսով, մանր եղբերավոր անասունապահությունը մեր հանրապետության պայմաններում գործնականում նույնանում է ոչխարաբուժության հետ:

Մանր եղբերավոր անասունների գլխաքանակը անցած տասնամյակների ընթացքում մեծ տատանումներ է տվել, 1916 թ. 1,2 մլն-ից 1920 թ. նվազել է մինչև 0,35 մլն-ի, հաջորդ ութ տարիների ընթացքում հասել և նույնիսկ գերազանցել է նախասովետական մակարդակը, որից հետո կրկին նվազել է, ապա կայուն աճ է տվել 30-ական թվականների կեսերից սկսած, որը դարձյալ խախտվել է պատերազմի պատճառով և կրկին վերականգնվել նրան հաջորդող տարիներին, 1960 թ. առաջին անգամ անցնելով 2 մլն. սահմանագիծը: Առավելագույն թվին հասել է 70-ականի կեսերին (2,33 մլն), որից հետո սկսվել է պլանային նվազումը: Ներկայումս գտնվում է 1,9 մլն. մակարդակի վրա: Կերպին բազայի սահմանափակության պատճառով, ինչպես նաև նկատի ունենալով արոտների բեռնվածությունը կարգավորելու անհրաժեշտությունը ոչխարների գլխաքանակի պլանային նվազման միտումը պահպանվելու է նաև առաջիկայում: Ինչպես տավարաբուժության, այնպես էլ ոչխարաբուժության զարգացման համար հիմնական ուղի է ընտրված նրա հետագա ինտենսիվացումը, հոտի կառուցվածքի բարելավումը և մթերատվության բարձրացումը:

Սովետական կարգերի հաղթանակից հետո մի տևական ժամանակ ոշխարաբուծության համար որպես գլխավոր ուղղություն հաստատված է եղել բրդամսատու ուղղությունը: Դրան համապատասխան էլ վերակառուցվում էր Հոտը, բոծվում ու տարածվում էին կիսանրբագեղմ ու նրբագեղմ ցեղի ոշխարներ, որոնք ներկայումս հոտի ընդհանուր գլխաքանակում ճնշող մեծամասնություն են կազմում: Այս բոլորի շնորհիվ ավելի արագ թափով ավելացել է բրդի արտադրությունը: Եթե 1913 թ. այն կազմել է ընդամենը 2,3 հազ. տոննա, 1956—60-ականներին (միշտին տարեկանը)³՝ 3,5 հազ. տոննա, ապա վերջին տարիներս հասել է 4,5 հազ. տոննայի:


Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բրդատու ուղղության ոշխարները սովորաբար թուլակազմ են և դժվար են դիմանում մեր լեռնային խստաշունչ պայմաններին, որի հետեւանքով էլ կորուստները մեծ հն և տնտեսական արդյունավետությունը ցածր, այժմ վերանայվում է ու ճշտվում ոշխարաբուծության գլխավոր ուղղությունը: Թե՛ զոտեխնիկական, թե՛ տնտեսական տեսակետից առավել նպատակահարմար է Հայկական ՍՍՀ-ում զարգացնել մսաբրդակաթնատու ուղղության ոշխարաբուծությունը: Սա, ճիշտ է, չի ապահովում մեծ քանակությամբ բարձր որակի բրդի ստացում, բայց ավելացնում է ոշխարի մսի և կաթի արտադրությունը, որն ավելի է համապատասխանում աեղական բնակչության սննդի առանձնահատկություններին: Մյուս կողմից, ի հաշիվ նրբագեղմ ոշխարների գլխաքանակի կրճատման, ավելանում է կիսանրբագեղմ և հատկապես կոպտաբուրդ ոշխարների գլխաքանակը: Դրանց բուրդը նույր գործվածքների արտադրության համար գրեթե պիտանի չէ, բայց մեծ արժեք է ներկայացնում գորգագործության համար, որը ինչպես հայտնի է, մեր հանրապետությունում լայն տարածում ունի:

Հիշյալ նկատառումներով էլ Հայկական ՍՍՀ-ի համար հաստատված են ոշխարների մսաբրդակաթնատու հետեւյալ երեք ցեղերը՝ բալբաս, Արագածի ցեղախումբ և Հյուսիս-կովկասյան: Կատարված է նաև այդ ցեղերի շրջանացում, որոշված են այն վարչական շրջանները, որտեղ պետք է գրաղվեն այս կամ այն ցեղերի ոշխարաբուծությամբ:

Ոշխարաբուծությունը ևս, ինչպես և տափարաբուծությունը առկա է առանց բացառության բոլոր վարչական շրջաններում և շոշափելի ազդեցություն է ունենում նրանց էկոնոմիկայի զարգացման վրա: Որպես կանոն, ոշխարաբուծության նշանակությունը ավելի մեծ է լեռնային ու նախալեռնային շրջաններում: Ոշխարների առավել մեծ գլխաքանակով

առանձնանում են Վարդենիսի, Թալինի, Մարտունու, Սիսիանի, Եղեգնաձորի, Գորիսի շրջանները: Դրանցից յուրաքանչյուրում ոչխարների ընդհանուր գլխաքանակը գերազանցում է 100 հազ.-ին (առավելագույնը Վարդենիսում է՝ շուրջ 180 հազ.): Անասնապահության այս ճյուղի գծով ամենամթուլ զարգացած շրջաններն են Մասիսը, Նախին, Էջմիածինը, Նոյեմբերյանն ու Շամշադինը, սրտեղ ոչխարների գլխաքանակը լի անցնում 20—30 հազ.-ից: Մնացած վարչական շրջանները գրավում են միջին տեղ (30—100 հազ. գլուխ):

Թոշնաբուժության Հայկական ՍՍՀ անասնապահության ամենա-



Նկ. 25. Անասնապահության ինտենսիվացման գլխավոր ուղիներից է նրա փոխարումը արդյունաբերական հիմքի վրա: Թոշնաբուժական ֆաբրիկա:

արագ աճող ճյուղն է, ներկայումս տալիս է արտադրվող մսի մինչև մեկ քառորդը: Բոլոր կատեգորիայի տնտեսություններում հաշվվում է ավելի քան 12 մլն. թէ թոշուն: Այստեղ ի տարրերություն անասնապահության մյուս ճյուղերի, վճռական գեր են խաղում պետական տնտեսությունները, հատկապես թոշնաբուժական ֆաբրիկաները և ինկուբատորային-թոշնաբուժական կայանները: Այդպիսիք ստեղծված են գերազանցապես խոշոր քաղաքների ու արդյունաբերական կենտրոնների մերձակայքում:

Շրջանացված են հավերի երկու ցեղ՝ ոռոսական սպիտակ, որը ձվատու ուղղություն ունի և երեանյան՝ մսատու ուղղությամբ:

Թոշնաբուժական մթերքների արտադրության ընդհանուր ծավալում

առավել մեծ բաժին ունեն մերձերևանյան շրջանները (մասնավորապես՝ էջմիածնի, Նախիջևանի, Արտաշատի ու Շահումյանի) և Երակը:

Հայկական ՍՍՀ-ում հավերից բացի որոշ շափով տարածված են նաև սագերը, բաղերը և հնդուհավերը:

Խոզաբուրյունը մսի արտադրությունն ավելացնելու լայն հնարքավորություններ է ընձեռում: Այն աշբի է ընկնում հոտի վերարտագրության բարձր տեմպերով և հասունացման կարճ ժամկետով:

Հայկական ՍՍՀ-ում խոզաբուրյության զարգացման բնական և տընտեսական նպաստավոր նախադրյալներ կան, սակայն դրանք օգտագործվում են ոչ լրիվ շափով: Ճյուղի բաժինը անասնապահության համախառն արտադրանքում դեռևս ցածր է, 10%-ից էլ պակաս, բայց սիայն մսի արտադրության գծով մոտենում է մեկ քառորդին:

Վերջին տարիներս այս բնագավառում իրագործվող մի շարք կազմակերպչական-տնտեսական միջոցառումների շնորհիվ խոզաբուրյունը նկատելի վերելք է ապրում: Կառուցվել են խոշոր խոզաբուժական համալիրներ Սովետաշենում (մերձերևանյան շրջան), Թալինում և այլ վայրերում, ստեղծվում են միջտնտեսային մասնագիտացված համալիրներ: Այս բոլորը կոչված են զգալիորեն ավելացնելու խոզի մսի արտադրությունը և խոզաբուրյունը ևս, թոշնաբուժության նման, արագ թափով փոխադրել արդյունաբերական հիմքի վրա:

Հանրապետությունում խոզաբուժությամբ զբաղվում են գրեթե ամենուրեք: Սակայն նրա ավանդական շրջան է համարվում հանրապետության հյուսիս-արև. անտառային գոտին, որտեղ առատ է բնական կերը (Շամշադին, Իջևան, Թումանյան, Նոյեմբերյան):

Մեղվաբուծության մեծ նշանակությունը պայմանավորված է ոչ միայն բարձրորակ և թանկարժեք սննդամթերք հանդիսացող մեղրի ու սրդյունաբերության մեջ լայն կիրառություն ունեցող մեղրամոմի արտադրությամբ, այլև այն բանով, որ մեղրուները անփոխարինելի դեր են կատարում բազմաթիվ գյուղատնտեսական կուլտուրաների փոշոտման գործում, նպաստում են դրանց բերքատվության բարձրացմանը և սերմերի բարելավմանը: Ապացուցված է, որ մեղրուների միջոցով փոշոտվելու դեպքում գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունն աճում է մինչև 30% -ով:

Անցած տասնամյակներում անասնապահության այս կարևոր ճյուղը որոշ նվաճումներ է ձեռք բերել, ավելացել է մեղվալնտանիքների բանակը, աճել է արտադրվող մեղրի ու մեղրամոմի ծավալը, ընդարձակվել է նրա տարածման արեալը: Այս բոլորով հանդերձ, մեղվաբուժությունը Հայկական ՍՍՀ-ում դեռևս մնում է չօգտագործված հնարավորությունների բնագավառը: Հանրապետության բնական պայմանները՝ վեցետացիոն ժամանակաշրջանի մեծ տեսողությունը, բուսականության

ուղղածիք գոտիականությունը, մեղրահյութ պարունակող բուսատեսակ-
ների բազմազանությունը ամուր հիմք են ստեղծում մեղվաբուժությունը
Հայկական ՍՍՀ շատ շրջաններում բարձր եկամտաբեր ապրանքային ճյուղ
դարձնելու համար:

Հայկական ՍՍՀ անասնապահության մյուս ճյուղերը տնտեսական
մեծ նշանակություն և լայն տարածում չունեն: Գազանաբուժությունը
ներկայացված է Լեռմոնտովոյի աղվեսաբուժական և Սև ջրի կուղա-
բուժական պետական մասնագիտացված տնտեսություններով:

Ներամապահությունը, որ մի ժամանակ շատ շրջաններում տարած-
ված ճյուղ է եղել, այժմ կորցրել է իր նշանակությունը:

Նույն վիճակում է գտնվում նաև ծիաբուժությունը, որը գյուղա-
տնտեսական աշխատանքների և տրանսպորտի լայն մեքենայացման
դարում իր տնտեսական ֆունկցիաները զիջել է մեխանիկական ու
էլեկտրական շարժիչների օթեական 1941 թ. Հայկական ՍՍՀ ծիերի
գլխաքանակը կազմում էր մոտ 60 հազ., ապա այժմ այն նվազել է
մինչև 9 հազ.: Զիաբուժությունը իր որոշակի օժանդակ դերը դեռևս
պահպանել է Զանգեզուրի և Հանրապետության հա.-ի լեռնային շրջան-
ների, մասնավորապես Գորիսի, Ղափանի, Միսիանի, Թումանյանի, Կապ-
լինինոյի և Խշանի տնտեսություններում:

Լայն առումով անասնապահության ճյուղերի շարքին է դասվում նաև
ձկնաբուժությունը: Երկար տարիներ ապրանքային ձկնաբուժության
միակ զրավագանը մեզանում եղել է Սևանա լիճը: Սրա մակարդակի
իշեցման հետ մեկտեղ անհամեմատ վատացել են ձկնային պաշարների
վերականգնման բնական պայմանները, բայց դրան հակառակ, ստեղծ-
վել են արհեստական ձկնաբուժարաններ (Կամո, Սևան, Կարճաղբյուր և
այլն), որոնք յուրաքանչյուր տարի միլիոնավոր ձկնիկներ են աճեցնում
և բաց թողնում լին: Բացի այդ, ձկնաբուժարաններ են ստեղծված նաև
Հանրապետության մի քանի այլ բնական ու արհեստական լճերում,
ինչպես նաև Արարատյան դաշտում այդ նպատակով հատուկ կառուց-
ված ջրավագաններում: Այս միջոցառումների շնորհիվ ներկայումս
Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ձկնային տնտեսու-
թյան վարչության սիստեմում տարեկան արտադրվում է մինչև 6 հազ.
տոննա ձուկ:

ՀԱՐՖՈՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Հայկական ՍՍՀ անասնապահության զարգացման բնական ու
տնտեսական պայմանները:

1. Բնութագրեք սննդի արդյունաբերության ճյուղային կառուցվածքը:

8.4. ԿՅՈՒՂԱՏԱՏԵՍԱԿԱԱ ՄԽԵՐՁԻՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ (ՄԽՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ)

Ազրուարդյունաբերական համալիրում առանձնահատուկ տեղ է գրավում սննդի արդյունաբերությունը, որը գրաղված է երկրագործությունից, անասնապահությունից և ձկնորսությունից ստացվող մթերքների արրջյունաբերական վերամշակմամբ։ Արդյունաբերության այս ճյուղը իր մեջ միավորելով ավելի քան 140 արտադրական միավորումներ, կոմբինատներ, գործարաններ ու ֆարմական եր (հանրապետության ընդհանուր թվի շուրջ 20 %), թողարկում է հանրապետությունում արտադրվող ժողովրդական սպառման ապրանքների ընդհանուր ծավալի 40 %, կամ ամբողջ արդյունաբերական արտադրանքի 24 %։

Հանրահայտ է, որտեղ կա մշտական բնակչության շատ թե քիչ խոշոր կուտակում, այնտեղ ստեղծվում է տարբեր տեսակի սննդամթերքների արտադրություն։ Նյութական արտադրության այս ճյուղը բնակչության գոյության, աշխատավորների կենսամակարդակի բարձրացման և բանվորական ուժի վերարտադրության նյութական անհամեցած ապահոված է։ Նրա արտադրանքն ունի ամենասասայական, ու ու ամենօրյա սպառում և ամբողջությամբ այլ տեղերից հայթայթվել չի կարող։ Այդ պատճառով էլ սննդարդյունաբերության արտադրությունների մեծ մասը հանդիպում է ամենուրեք, ամեն մի արդյունաբերական կետում ու կենտրոնում։

Բացառություն չի կազմում նաև Սովետական Հայաստանը։ Այդ իմաստով էլ գուցե, հարկ վիճներ հատուկ քննության ենթարկել հանրապետության սույն ճյուղը, եթե այն, նշված հատկանիշից բացի, օժտված վիճներ շրջանային ապրանքայնության համեմատաբար մեծ գործակցուլ, շմասնակցեր աշխատանքի միութենական քածանմանը,՝ էական դեր շխաղար որոշ սննդամթերքների արտադրության միութենական հաշվեկշռում, հետեւապես և հանրապետության համար մասնագիտացման չյուղ շդիտվեր։

Հասկանալի է, որ այս ճյուղը նման հատկանիշ ձեռք է բերել ոչ թե մասսայական ու ամենօրյա սննդամթերքների, այլ բարձրարժեք ու համեմատաբար սահմանափակ ու միաժամանակ տրանսպորտահարմար արտադրանքի շնորհրդ։ Առաջին հերթին դա վերաբերում է խաղողի, հարավային մրգերի ու բանջարեղենի վերամշակման արդյունքին՝ կոնցակին, պահածոներին ու գինուն։

¹ Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ հանրապետության բնակչության մեկ շնչի հաշվով պարենային մթերքների որոշ տեսակների սպառումը գիտականորեն սահմանված ֆիզիոլոգիական նորմայից պակաս է, օրինակ, մսի գծով՝ 21 % -ով, ձկի գծով՝ 27 %, ձկան 268

Գինու-կոնյակի արդյունաբերությունը միավորում է գինենյութի նախնական վերամշակման, ինչպես նաև վերջնական մշակման ու լցորդման ավելի քան տասնյակ գործարաններ։ Արտադրանքի տեսականին մեծ է՝ տասնյակ մակնիշի կոնյակներ, սեղանի, աղանդերային և շամպայն գինիներ և այլն։ Սրանց արտադրանքի մեծ մասը առաքվում է Հանրապետությունից դուրս, այդ թվում նաև արտասահմանյան երկրներ։

Գինու-կոնյակի արտադրության ճյուղը Հայկական ՍՍՀ սննդի արդյունաբերության համար լինելով պրոֆիլային, այնուամենայնիվ, քանակական առումով ՍՍՀՄ-ում համեստ տեղ է գրավում, զիշելով խաղողագործական հանրապետությունների մեծ մասին։ Ճյուղի արտադրանքի քանակական աճը մեզանում կարգավորվում է հիմնականում գյուղատնտեսական հողմային ռեսուրսներով, որոնք ընդհանուր առմամբ սահմանափակ են։ Այս հանգամանքը թելադրում է հատուկ ուշադրություն դարձնել որակական ցուցանիշներին և զարկ տալ հատկապես բարձրական կոնյակների, աղանդերային և շամպայն գինիների արտադրությանը։

Կրկնելով խաղողագործության տարածման պատկերը, գինու-կոնյակի ձեռնարկությունները տեղաբաշխված են գլխավորապես Արարատյան դաշտում։ Կոնյակի արտադրությունը կենտրոնացված է Երևանում և Հոկտեմբերյանում, գինիներինը՝ Երևանում, Էջմիածնում, Արտաշատում, Աշտարակում, Վեդիում, Հոկտեմբերյանում և մի շարք այլ կետերում։

Միջին հզորության գինու գործարաններ կան նաև հանրապետության հյուսիս-արևելյան (Բերդ, Իջևան) և հարավ-արևելյան (Մեղրի, Եղեգնաձոր) խաղողագործական շրջաններում։

Հանրապետության գինու-կոնյակի գինավոր արտադրողը՝ «Արարատ» միավորումը, իր գործարաններն ունի նաև ՌՍՖՍՀ-ում (Մոսկվա, Լենինգրադ, Սարատով) և Ուկրաինայում (Կիև), օրոնք Հայկական ՍՍՀ-ից ստանալով պատրաստի գինենյութը տակառներով, տեղում լցնում են շատերը և առաքում մերձակա մարզերի սպառողներին։

Ներկայումս սննդի արդյունաբերության այս ճյուղը վերակառուցվում է։ Կատարվում է ձեռնարկությունների վերապրոֆիլավորում, կըրճատվում է օդու և գինիների արտադրությունը, ընդարձակվում է խաղո-

գծով՝ 50% և այլն։ Բացի այդ, մասսայական և ամենօրյա սննդամթերքների սեփական արտադրությունը գրանց սպառման ընդհանուր հաշվեկշռում դանդաղ է աճում և ներկայումս կազմում է, օրինակ, մսի գծով՝ 64%, կաթի ու կաթեամթերքի գծով՝ 35% և այլն (տես՝ Հայաստանի կոմիտեի կենտրոնի 1987 թ. հունիսյան պլենարի նյութերը, «Սովորական Հայաստան» օրաթերթ, 29 հուլիսի 1987 թ.)։

դից և մրգերից ստացվող հյութերի և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը:

Երջանային ապրանքայնության մեծ գործակից ունեն մրգի ու բանջարեղնի պահածոները, որոնց արտադրության (շուրջ 500 մլն պայմանական տուփ) կենտրոնները հիմնականում համընկնում են գինուկոնյակի արտադրության կենտրոններին: Բացառություն է կազմում նույնամբ շրջանը, որտեղ գտնվում է հանրապետության պահածոների արդյունաբերության խոշորագույն ձեռնարկություններից մեկը՝ Արդումի գործարանը:

Նշենք, որ ՍՍՀՄ տարբեր շրջաններ և արտասահման է արտահանվում Հայկական ՍՍՀ-ում արտադրվող կոնյակի ու գինիների 80 % և պահածոների 90 %-ը:

Մասնագիտացման համեմատաբար բարձր աստիճան ունի պահետագործությունը, որը տեղական սպիտակ պանիրներից բացի մեծ քանակությամբ արտադրում է նաև այսպես կոչված դեսերտային (Սովետական, Շվեյցարական, Ռոկֆոր և այլն) պանիրներ: Պանրագործությունը, ինչպես և նրան հումք մատակարարող անասնապահությունը աշքի է ընկնում իր ցրված (դիսպերսիոն) տեղաբաշխումով: Գրեթե բոլոր անասնապահական շրջաններում գործում են մանր ու խոշոր մի քանի պահարագործարաններ, որոնք կազմակերպութեն միավորվում են գլխավորող գործարանի շուրջը: Վերջիններս, որպես կանոն, տեղավորված են շրջանային կենտրոններում: Այսուհետեւ հանրապետության շրջանների շարքում կան մի քանիսը, որոնք թե՛ արտադրանքի քանակով և թե՛ մասնագիտացման աստիճանով առանձնանում են: Դրանք են՝ Կալինինոն, Ստեփանավանը, Վարդենիսը, Ղուկասյանը, Թալինը, Եղեգնաձորը, Միսիանը, Ալմասիան:

Հայկական ՍՍՀ արդյունաբերության ճյուղի համար պրոֆիլային է նաև հանքային ջրերի արտադրությունը, որի տեսակարար կշիռը ՍՍՀ Միությունում զգալի է: Այսօր հանրապետության հարյուրավոր հանքային աղբյուրներից արդյունաբերական մասշտաբներով օգտագործվում են միայն 8-ը, իսկ տարեկան գումարային դեբիտի հաշվով՝ 1 %-ից էլ պակասը: Աղբյուրների մեծ մասի ջրերի լցարկումը ամբողջությամբ կատարվում է տեղում («Ալբանի», «Հանքավան», «Լիճք», «Սևան», «Դիլիջան», «Էջման»), իսկ «Բջնի», «Զերմուկ» և «Ալրարատ» ջրերինը՝ և տեղում, և հանքաղբյուրներից մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա, սպառման վայրին կամ երկաթուղուն մոտիկ:

Նկատի ունենալով հարուստ պաշարների առկայությունը և հանքային ջրերի նկատմամբ եղած մեծ պահանջարկը ՍՍՀՄ-ում և արտասահմանում, արտադրության այս ճյուղի զարգացման հեռանկարները պետք է գնահատել որպես խիստ նպաստավոր:

Հայկական ՍՄՀ սննդարդյունաբերության որոշ ճյուղեր, ճիշտ է, ամբողջությամբ կոչված են բավարարելու հանրապետության ներքին պահանջները և մասսայական սպառում ունեցող արտադրանք են թողարկում, բայց և միաժամանակ շունեն ցրված տեղաբաշխում: Այդպիսիք են, մասնավորապես, ալրադաց և մսի արտադրությունները: Հստորում երկուսի համար էլ բնորոշ է տեղական սուղ հումքային բազան և կախվածությունը ներմուծվող հումքային ռեսուրսներից:

Ալրադաց արդյունաբերությունը կենտրոնացված է համեմատաբար հարմար աշխարհագրական-տրանսպորտային դիրք ունեցող վայրերում՝ Երևանում, Սևանում և Սպիտակում: Այդ կետերում գտնվող բավականին հզոր արդիական ալրադաց կոմբինատներից յուրաքանչյուրը ապասարկում է վարչական շրջանների որոշակի խումբ:

Մսի արդյունաբերության (մսի, երշիկեղենի և մասամբ մսի պահածոների արտադրություն) տեղաբաշխման վրա ևս վճռական ազդեցություն են ունենում սպառման շրջանին մոտիկ գտնվելը և վայրի տրանսպորտային նյասստավոր դիրքը: Այդ գործոնների շնորհիվ էլ հանրապետության մսի կոմբինատները տեղադրված են Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ղափանում:

Որոշ առումով այս ճյուղերին նմանվում է ծխախոտի արդյունաբերությունը: Այն տարբերությամբ միայն, որ հումքի նախնական մշակումը (ֆերմենտացիա) հարում է հումքի վայրին, իսկ վերջնական վերամշակումը՝ պատրաստի ծխախոտի թողարկումը, սպառման վայրին, Այդ օրինաշափության համաձայն էլ ֆերմենտացիոն ֆաբրիկաները տեղաբաշխված են ծխախոտագործական շրջաններում (Բերդ, Այգեհովիտ, Իշևան, Սևան, Գորիս), իսկ միակ ծխախոտի ֆաբրիկան՝ Երևանում:

Առանձնահատուկ տեղ ունի կերակրաաղի արտադրությունը, որը ներկայացված է Ավանի աղահանքով (Երևանում): Այստեղ կատարվում է քարաղի հանույթ, մաքրում և աղի լուծույթի թորման միջոցով բարձրորակ խոհանոցային աղի ստացում: Հանրապետությունում մեծ ծավալով կերակրաաղ սպառվում է քլորոպրենային սինթետիկ կառւզուկի արտադրության համար:

Արտադրանքի ծավալով փոքր, բայց հանրապետության համար կարևոր նշանակություն ունի շաբաթի արդյունաբերությունը (Սպիտակի շաբաթի գործարան), ողջ շաբաթավագից բացի, թողարկում է նաև լիմոնաթթու և խտացրած անասնակեր: Զարգանում է տեղական և ներմուծվող (Կուբայից) հումքի վրա:

Սննդի արդյունաբերության մյուս ճյուղերը, որոնք կոչված են բնակչության ապահովել ամենօրյա մասսայական սննդամթերքով (հացի, կաթի ու թարմ կաթնամթերքների, ոչ ալկոհոլային խմիչքների),

Հարում են սպառման վայրերին և բավականին լայն տարածում ունեն, ընդհուպ մինչև բոլոր շրջանային կենտրոնները և բազմաթիվ խոշոր գյուղական բնակավայրերը:

Հայկական ՍՍՀ սննդի արդյունաբերության համար կազմակերպչական առումով հատկանշական է այն, որ պետական ձեռնարկություններից բացի, բավականին մեծ թիվ են կազմում Հայկոռպին պատկանող, ինչպես և կոլտնտեսային ձեռնարկությունները:

Հայկական ՍՍՀ սննդարդյունաբերությունը նույնպես սովետական իշխանության տարիներին կրել է վիթխարի քանակական ու որակական փոփոխություններ: Այնուամենայնիվ, նրա արտադրանքի աճի տեմպերը հանրապետության արդյունաբերության միջին տեմպերի, առավել ևս նրա առաջատար ճյուղերի տեմպերի համեմատությամբ, բարձր չեն եղել, չնայած նրան, որ ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ սննդի արդյունաբերությանը գերազանցել են մի քանի անգամ:

Զարգացման տեմպերի նման հարաբերակցությունը շարունակվելու է առաջիկայում ևս, քանի գեռ հանրապետության գյուղատնտեսությունը ի վիճակի է մթերքների որոշակի տեսակներով բնակչության անմիջական պահանջարկը բավարարելուց բացի, ավելացնել արդյունաբերական մշակման համար նախատեսվող գյուղատնտեսական հումքի ծավալը: Խսկ այդ հումքի ավելացման հնարավորությունները բնակչության թվաքանակի, ինչպես նաև նրա պահանջարկի արագ աճի պայմաններում տարեցտարի նվազում են:

ՀԱՐԳԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՑՆԵՐ

1. Բնութագրեք սննդի արդյունաբերության ճյուղային կառուցվածքը:
2. Վերլուծեք դրա կապը հանրապետության բնական ու տնտեսական պայմանների հետ:
3. Թվարկեք սննդի արդյունաբերության առաջատար ճյուղերի գյուղավոր կենտրոնները:

8.5. ԳՅՈՒՂԱՏԱՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՇՐՋԱՆԱՑՄԻ ԹԱՌԻՖԱԴՐԸ

Սույն գլխի նախորդ բաժիններում ագրոարդյունաբերական համալիրի մեջ մտնող ճյուղերի վերլուծության ընթացքում մենք ծանոթացանք նաև դրանց տեղաբաշխման հետ: Սակայն առանձին ճյուղերի տեղաբաշխումը գեռնս բավարար չէ ամբողջական օրյեկտի, տվյալ դեպքում ագրոարդյունաբերական համալիրի տարածական կառուցվածքի ընդհանրական պատկերը բացահայտելու և գնահատելու համար: Աշխարհագրական մոտեցումը ենթադրում է և հնարավորություն է տալիս ագ-

րուրդյունաբերական համալիրը, այլ կերպ ասած գյուղատնտեսությունը գյուղատնտեսական հումքի արդյունաբերական վերամշակման հետ մեկտեղ, դիտել որպես մեկ միասնական տնտեսաաշխարհագրական օբյեկտ, ճյուղային տարածքային մեկ համակարգ և կատարել նրա տարածական վերլուծությունը՝ տնտեսական շրջանացումը:

Գյուղատնտեսական շրջանացման էության մասին մասնագետների մոտ միասնական կարծիք չկա: Ավելի հիմնավորված է և լայն տարածում ունի այն տեսակետը, որ գյուղատնտեսական շրջանացումը, որպես տնտեսական շրջանացման տարատեսակ, պետք է հենվի բուն ճյուղի տարածական առանձնահատկությունների վերլուծության վրա. առանձնահատկություններ, որոնք ձևավորվում են բազմապիսի սոցիալ-տնտեսական ու բնական պայմանների ազդեցության ներքո: Բայց քանի որ գյուղատնտեսությունը բնական պայմաններից ավելի ուժեղ կախվածության մեջ է գտնվում, քան ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը, հետազոտողների մի մասը գյուղատնտեսության շրջանացումը ներկայացնում է որպես այդ ճյուղի բնական պայմանների շրջանացում:

Իհարկե, բնական պայմաններն են գյուղատնտեսական արտադրության հիմքը, իսկ դրանց արգասիք հանդիսացող հողը՝ գյուղատնտեսության հիմնական արտադրամիջոցը: Այս փաստի թերագնահատումը կարող է հանգեցնել գիտական և գործնական լուրջ սխալների: Բայց և այնպես, նիշտ չեր լինի արտադրության այս նյուղի տեղաբաշխման ու մասնագիտացման բոլոր հարցերը կապել միայն բնական պայմանների հետ, անտեսելով սոցիալական ու տնտեսական գործոնները թագմաթիվ են այն փաստերը, երբ նույն բնական, բայց տարբեր սոցիալտնտեսական պայմաններում տարբեր մասնագիտացման գյուղատնտեսությունը է ձևավորվում: Դա նշանակում է, որ նրա զարգացման ուղղությունը և մակարդակը որոշող գլխավոր ազդակները պետք է որոնել ոչ թե բնական, այլ սոցիալտնտեսական պայմանների մեջ:

Նկատի ունենալով այս բոլորը, գյուղատնտեսական պետք է համարել ոչ թե նրա բնական պայմանների շրջանացումը այլ այնպիսի շրջանացումը, որը հիմնվում է բուն նյուղի տնտեսական ցուցանիշների, նրակառուցվածքի ու մասնագիտացման վրա: Ինչ վերաբերում է բնական պայմանների շրջանացմանը, ապա դա լինելով բնառեսուրսային շրջանացման տարատեսակ, ենում է բնության տարրերի (հողերի, կլիմայի և այլն) առանձնահատկություններից և գյուղատնտեսության վրա նրանց ունեցած ներգործությունից, ուստի և չի կարող փոխարինել բուն ճյուղի շրջանացմանը: Այն կարող է և պետք է օգտագործվի գյուղատնտեսական շրջանացման համար:

Ելակետային դրույթ է նաև այն, որ տնտեսական շրջանի ամեն մի տեսակ, հետեւապես և գյուղատնտեսական շրջանը ոչ թե բնական և

տնտեսական միատեսակ հատկանիշներով օժտված միատարր արեալ է, այլ տնտեսական մի ամբողջություն, տարածական համակարգ: Ինչպես նշում է Յու. Գ. Սառցկինը «շրջանը ի տարբերություն արեալի, ներքնապես միատարր չէ, քանի որ նրա համար միշտ բնորոշ է այս կամ այն ներքին տարածքային կազմակերպումը, մինչդեռ արեալի համար տիպիկ է միայն ներքին միատարրության վիճակը»¹:

Ինչպես սոցիալտնտեսական ամեն մի երկույթի շրջանացումը, այնպես էլ գյուղատնտեսության շրջանացումը ունի իր տախիոնմիական նամակարգը: Ըստ որում, շրջանացման միավորը ինչքան բարձր դիրք է գրավում այդ տաքսոնոմիական համակարգում, այնքան ավելի բարձր է նրա կոմպլեքսայնությունը: Տաքսոնոմիական համակարգի ցածր աստիճանի միավորները ավելի ու ավելի միատարր են դառնում և ի վերջո կարող են հանդես գալ որպես արեալ:


Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության շրջանացման հարցերով ըգրադպել են սկսած 20-ական թվականներից: Տարբեր ուսումնասիրողների կողմից առաջարկվել են շրջանացման տարբեր սխեմաներ: Ներկայումս պաշտոնապես ընդունված սխեման մշակվել է 50-ական թվականներին գյուղատնտեսների, աշխարհագրագետների ու տնտեսագետների համատեղ ջանքերով: Այդ սխեմային համապատասխան հանրապետությունը բաժանվում է 9 գյուղատնտեսական շրջանների (գծ. 26)², որոնցից յուրաքանչյուրում իր հերթին անշատվում են գյուղատնտեսական ենթաշրջաններ, գոտիներ ու ենթագոտիներ:

Գյուղատնտեսական այդ շրջաններն են՝

1. Արարատյան դաշտը,
2. Արարատյան դաշտի նախալեռները,
3. Ապարան-Հրազդանը (Կենտրոնականը),
4. Սևանի ավագանը,
5. Հյուսիս-Արևելքը,
6. Լոռի-Փամբակը,

¹ Ю. Г. Саушенко. Экономическая география, теория, методы, практика.—М.: Мисль, 1973, с. 415.

² Պաշտոնական սխեմայում դրանք անվանվում են «գյուղատնտեսական գոտիներ», որը ճիշտ համարել չի կարելի: Աշխարհագրության մեջ ընդունված է գոտիները սահմանագծել միատարրության սկզբունքով, մինչդեռ առանձնացված այդ միավորներից յուրաքանչյուրի համար բնորոշ է բնական պայմանների ներքին բազմազանությունը, գյուղատնտեսության ճյուղերի որոշակի գուգործումը, որոշակի արտադրական մասնագիտացումը, ևներքին տերիտորիալ կազմակերպումը: Այլ կերպ ասած դրանք ունեն այն բոլոր հատկանիշները, որոնք հատուկ են շրջանին և ոչ թե գոտուն, ուստի և ճիշտ կլինի այդ միավորների համար օգտագործել շրջանա տերմինը:



Նկ. 26. Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական շրջանացման սխեմա:

7. Շիրակը,
 8. Վայքը,
 9. Զանգեզուրը:

Ստորև բերվում է այդ շրջանների համառոտ բնութագիրը:

1 Արարատյան դաշտ. ընդգրկում է Քաղղամյանի, Հոկեմբերյանի, Էջմիածնի, Մասիսի, Արտաշատի, Արարատի վարչական շրջանները և Երևանի սահմանագծում գտնվող գյուղատնտեսական ձեռնարկությունները (Շահումյանի քաղաքային շրջանը): Հայկական ՍՍՀ աշխատանքի տարածքային բաժանման համակարգում հանդես է գալիս որպես խաղողա-բանջարա-պտղաբուծական շրջան՝ զարգացած կաթնատու անասնապահությամբ, թոշնաբուծությամբ և եթերայուղատու կուլտուրաների մշակությամբ:

Արարատյան դաշտը հանրապետության ամենահզոր գյուղատնտեսական շրջանն է. արտադրում է Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական մթերքների ընդհանուր ծավալի շուրջ 30 %: Շրջանը առաջին տեղն է գրավում այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են գյուղատնտեսական հանդակների միավոր տարածությունից ստացվող համախառն արտադրանքը, մեկ տարբերակով հաշվով արտադրված մթերքների քանակը, արտադրության հիմնական միջոցներով, ինչպես նաև էներգառեսուրսներով ապահովածության մակարդակը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքում բուսաբուծության տեսակարար կշռով ($\frac{3}{4}$) գերազանցում է մյուս բոլոր շրջաններին: Անսանապահության բաժինը $\frac{1}{4}$ -ից պակաս է:

Քաղաքային մեծաթիվ բնակչության առկայությունը, հատկապես մեկ միլիոնանոց երեանի հարեանությունը որոշակի ազդեցություն է ունենում գյուղատնտեսության մասնագիտացման վրա, նրան հաղորդելով մերձադարձային տնտեսության գծեր: Քաղաքային բնակչության ամենօրյա պահանջները բավարարելու նպատակով արտադրվում են մեծ ծավալով կաթ, բանջարեղեն, սեղանի սորտերի խաղող, թոշնառության արտադրանք:

Շրջանի տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են մոտավորապես 800 մ և 3100 մ միջև, որով և պայմանավորված է բնական պայմանների, ինչպես և բուն գյուղատնտեսության ուղղաձիգ գործականությունը:

Բնական պայմանների մեծ բազմազանությամբ հանդերձ, շրջանի տարածքի մեծ մասը՝ մինչև 1000—1100 մ բացարձակ բարձրությունը իրենից ներկայացնում է տափարակ կամ մեղմաթեք հարթություն՝ հանրապետությունում լավագույն ջերմային պայմաններով, երկարատև անսառնամանիք ժամանակաշրջանով (մինչև 240—250 օր): Սա տարվա ընթացքում որոշ կուտուրաների երկու բերք ստանալու հնարավորություն է ընձեռում: Անբարենպաստ են ձմեռային ցածր ջերմաստիճանները, գարնանային ու աշնանային հաճախակի կրկնվող ցրտահարությունները, մինոյորտային տեղումների ընդհանուր պակասը և ռեժիմը:

Գյուղատնտեսական հողահանդակների բաժինը ընդհանուր հողատարածությունում (56 %) զգալի շափով գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշին, ըստ որում, դրանց հիմնական մասը ակտիվ օգտագործման հանդակներն են (վարելահող և բազմամյա տընկարկներ), որոնք տարածված են գլխավորապես 800—1100 մ բարձրություններում:

Արարատյան դաշտը բացարձակ ոռոգման երկրագործության շրջան

Է. Այստեղ են գտնվում հանրապետության ոռոգվող տարածությունների հիմնական մասը և ամենախոշոր ոռոգիչ համակարգերը (Հոկտեմբերյանի, Արտաշատի, Թալինի, Էջմիածնի և այլն):

Անասնապահությունը մյուս շրջանների համեմատությամբ արտահայտված ինտենսիվ բնույթ ունի. ազելի փոքր է արոտային, ավելի մեծ՝ մսուրային տիպի անասնապահության դերը, բարձր է մթերատվությունը: Շրջանի համեմատաբար բարձրադիր՝ 1100 մ-ից վեր ընկած գոտին փոքր տարածություն է գրավում և զբաղեցված է հիմնականում ցածրորակ ամառային արոտներով և գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողատարածություններով: Այս գոտու գյուղատնտեսության հիմնական նյուղերն են էքստենսիվ անասնապահությունը և հացահատիկի մշակումը:

Հանրապետության գյուղատնտեսության ընդհանուր պրոբլեմների շարքում շրջանի համար առանձնահատուկ նշանակություն ունեն աղուտների յուրացումը, ոռոգելի հողագործության կուլտուրայի բարձրացումը, խաղողի այգիների նոսրության վերացումը, հողերի երկրորդային աղակալման դեմ պայքարի կազմակերպումը:

2. Արարատյան դաշտի նախալեռնային շրջանի մեջ միավորված են Թալինի, Աշտարակի, Նախիրի և Աբովյանի գյուղական վարչական շրջանները: Մասնագիտացման առաջատար ճյուղերն են խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Կարևոր ապրանքային նշանակություն ունեն նաև կաթնամսատու ուղղության տավարաբուծությունը, բանջառաբուծությունը, ծխախոտագործությունն ու թոշնաբուծությունը: Գյուղատնտեսության կառուցվածքում բուսաբուծությունը և անասնապահությունը, ի տարրերություն թե Արարատյան դաշտի և թե մյուս բոլոր շրջանների, գրեթե հավասար բաժին ունեն. համախառն արտադրանքի արժեքով աննշան գերակշռություն ունի բուսաբուծությունը:

Այս շրջանի մասնագիտացման վրա ես մեծ է մերձքաղաքային աշխարհագրական դիրքի ազդեցությունը:

Բնական պայմանները բնութագրվում են կիսաանապատային, չոր լեռնատափաստանային ու ալպյան գոտիների առկայությամբ՝ սկսած 1000 մ մինչև 4000 մ բարձրությունը ծովի մակարդակից հաշված: Այսուեղից էլ հողերի ու ագրոկիմայական պայմանների բազմազանությունը, գյուղատնտեսության զարգացման բնական նախադրյալների մեծ տարրերությունները:

Բնակչության և գյուղատնտեսական հանդակների հիմնական մասը կենտրոնացված է մինչև 1400 մ բարձրության նիշերը, որտեղ առաջատարը ոռոգելի հողագործության ինտենսիվ ճյուղերն են՝ խաղողագործությունն ու պտղաբուծությունը, սրսնք էլ հենց որոշում են շրջանի արտադրական դեմքը հանրապետությունում: Այս ճյուղերի դերի մեծա-

ցումը կապված է ոռոգելի տարածությունների ընդարձակման հետ, որը տեղի ունեցավ վերջին տասնամյակներում, մասնավորապես, Արզնի-Շամիրամի, Թալինի ու Կոտայքի մայր շրանցքների կառուցման և նախկին դոերի յուրացման շնորհիվ:

Երջանի գյուղատնտեսական հանդակների կառուցվածքում ըստ տեղանքի բարձրության նվազում է բազմամյա տնկարկների բաժինը և սեծանում է վարելահողերի ու արոտավայրերի բաժինը. 2000 մ-ից բարձր վերջիններս դառնում են տիրապետող:

Նկատի ունենալով բնական ու տնտեսական պայմանների տարբերությունները, շրջանի սահմաններում առանձնացվում է 3 ուղղաձիգ, համեմատաբար միատարր գյուղատնտեսական գոտի՝ ա) եախալեռնային այգեգործական (900 մ—1400 մ բացարձակ բարձրության), բ) լեռնատափատանային դաշտավարական-անասնապահական (1400—1800 մ) և գ) լեռնամարգագետնային, ալպյան անասնապահական (1800 մ-ից բարձր):

Գյուղատնտեսության զարգացման հեռանկարը որոշվում է խաղողի ու պտղատու այգիների տարածությունների ընդարձակման, ինչպես նաև փակ գրունտի (ջերմոցային) բանջարաբուծության զարգացման համեմատաբար լայն հնարավորություններով:

3. Ապարան—Հրազդանի կամ Կենտրոնական (լեռնային) գյուղատնտեսական շրջանի մեջ միավորված են Հրազդանի, Ապարանի և Արագածի գյուղական վարչական շրջանները: Համեմատաբար թույլ զարգացման և գյուղատնտեսության պարզ ճյուղային կառուցվածք ունեցող շրջաններից է: Մասնագիտացման գլխավոր ուղղությունը կազմում են կաթնա-մսա-բրդատու անասնապահությունը և հացահատիկային տրնտեսությունը: Ապրանքային նշանակություն ունեն նաև ծխախոտը և կարտոֆիլը: Աշքի է ընկնում անասնապահական արտադրանքի հետ համեմատած բուսաբուծության արտադրանքի փոքր տեսակարար կշռով: Հայկական ՍՍՀ ինը գյուղատնտեսական շրջանների մեջ սա միակն է, որտեղ ճյուղի արտադրանքի միայն $\frac{1}{3}$ -ն է բաժին ընկնում բուսաբուծությանը և $\frac{2}{3}$ -ը՝ անասնապահությանը:

Երջանի տարածքի համար բնորոշ է բարձրադիր վիճակը (ոչ պակաս 1400 մ), դրանից կախված է՝ ինտենսիվ գյուղատնտեսության համար ոչ նպաստավոր հողակլիմայական պայմանները: Սահմանափակող գործոնի դեր են կատարում հատկապես վեգետացիոն կարճ ժամանակաշրջանը և ամառային ոչ բարձր ջերմաստիճանները:

Գյուղատնտեսական հողահանդակների կառուցվածքում բազմամյա տնկարկների բաժինը դեռևս աննշան է: Բնակչության մեկ շնչի հաշվով այստեղ վարելահողերի և արոտավայրերի ավելի մեծ տարածություն է

ընկնում, քան շրջանների մեծ մասում կամ հանրապետությունում ամբողջապես վերցրած:

Զնայած դրան, բավականին ցածր է գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքի ցուցանիշը:

Տեսանելի հեռանկարում առաջանցիկ զարգացում են ունենալու ջերմոցային բանչարաբուժությունը և այգեգործությունը:

Կենտրոնական շրջանում առանձնացվում է երկու գոտի՝ չոր-լեռնատափատանյային (1400—1800 մ), որտեղ համեմատաբար մեծ տեղունի դաշտավարությունը և բարձր լեռնային (1800 մ-ից բարձր), որտեղ անասնապահության բացարձակ գերակշռություն է դիտվում:

Բարձր լեռնային գոտու որոշ տարածություններ որպես ամառային արոտավայրեր են օգտագործվում այլ շրջանների տնտեսությունների համար:

Շրջանի գյուղատնտեսության հետագա զարգացումն ապահովելու համար դաշտավարության արտադրական կուտուրան և արդյունավետությունը բարձրացնելու հետ մեկտեղ առաջնահերթ նշանակություն ունի արոտավայրերի բարելավումը և ոացիոնալ օգտագործումը:

4. Սևանի ավազանը որպես գյուղատնտեսական շրջան միավորում է Աևանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի և Կրասնոսելսկի գյուղական շրջանները: Այն մասնագիտանում է մսա-կաթնատու-բրդատու անասնապահության, ծխախոտագործության և կարտոֆիլագործության ուղղությամբ: Ապրանքային նշանակություն ունի նաև հացահատիկի (հատկապես ցորենի) արտադրությունը:

Այս շրջանում ևս գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեծ մասը տալիս է անասնապահությունը, բայց նրա գերակշռությունը բուսաբուժության նկատմամբ (56% և 44%), այստեղ անհամեմատ ավելի թույլ է արտահայտված, քան նախորդ՝ Կենտրոնական (իր բնույթով նույնպես բարձր լեռնային) շրջանում է:

Գտնվելով բարձր հիպաոմետրիկ նիշերում (տարածքի հիմնական մասը 1900մ-ից բարձր է, միայն Կրասնոսելսկի շրջանում որոշ սահմանափակ տարածություններ գտնվում են 1400—1900 մ վրա), աշքի և ընկնում համեմատաբար իմսության պայմաններով, որոնք նկատելիորեն սահմանափակում են մշակվող բույսերի տեսականին: և բացառականորեն ազդում ամբողջ գյուղատնտեսության արդյունավետության վրա: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 390—700 մմ միջն, կայուն ձյունածածկույթը տեսում է դեկտեմբերի սկզբից մինչև մարտի վերջը, անսառնամանիք ժամանակամիջոցը՝ 3—7 ամիս:

Նկատվում է խոնավության զգալի պակաս, որի պատճառով էլ արեստական ոռոգումը հանդես է գալիս որպես երաշխավորված բերքի ստացման անհրաժեշտ պայման:

Այգեգործությունը (խնձոր, տանձ, սալոր) գյուղատնտեսության ամենաերիտասարդ ճյուղերից է և նոր միայն սկսում է ապրանքային նշանակություն ձեռք բերել Դաշտավարությունը անասնապահության համար զգալի շափով օժանդակ դեր է կատարում (դաշտային կերարտադրություն): Գյուղատնտեսական հանդակների շուրջ 70 %-ը կազմում են բնական կերային հանդակները, որոնք խոշոր ու մասր եղչերավոր անասունների արոտային կերի բավարար բազա են ստեղծում:

Բնական պայմանների և արտադրական մասնագիտացման հաշվառմամբ շրջանում առանձնացվում է երկու գոտի՝ ա). լեռնատափաստանյին (մինչև 2000—2100 մ), որը հիմնականում զբաղեցված է հացահատիկի, ծխախոտի, կարտոֆիլի և կերաբույսերի ցանքատարածություններով, և բ). բարձր լեռնային (2100—3500 մ), որը ներկայացված է ամառային արոտավայրերով ու խոտհարքերով:

5. Հյուսիս-արևելյան գյուղատնտեսական շրջանի մեջ միավորվում են Շամշադինի, Իջևանի, Թումանյանի և Նոյեմբերյանի վարչական շրջանները: Հանրապետության գյուղատնտեսության մեջ շրջանի արտադրական մասնագիտացմանը սրոշում են պտղաբուծությունն ու խաղողագործությունը, ծխախոտագործությունը, կաթնա-մսա-բրդատու անասնապահությունը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 60 % տալիս է բուսաբուծությունը, մոտ 40%-ը՝ անասնապահությունը:

Շրջանի կարեոր տարրերի գիծը կայանում է նրանում, որ հողային ֆոնդում բավականին մեծ է անտառածածկ տարածությունը, մինչդեռ վարելահողերի բաժինը հազիկ հասնում է 9%: Բնական պայմանները մյուս շրջանների համեմատությամբ ավելի մեղմ են, չերմաստիճանային հակադրությունները՝ թույլ: Տարածքի մեծ մասում համեմատարար թույլ է արտահայտված նաև խոնավության դեֆիցիտը:

Այս բոլորի շնորհիվ, գյուղատնտեսության մի շարք ճյուղերի գարգացման բնական նախադրյալներն այստեղ շատ ավելի բարենպաստ են, քան հանրապետության մյուս գյուղատնտեսական շրջաններում:

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական արտադրության ընդհանուր ծավալում հյուսիս-արևելքի տեսակարար կշիռը առավել մեծ է ծխախոտագործության և պտղաբուծության գծով (յուրաքանչյուր ճյուղի համախառն արտադրանքի մոտավորապես կեսը), որոնցով էլ հանրապետությունում նա գրավել է առաջին տեղը:

Շրջանը բաժանվում է երկու գոտիների՝ ա). ցածրավայրային անտառագործկ շոր լեռնատափաստանյային (375 մ-ից մինչև 900 մ բացարձակ բարձրություններ), որտեղ մեծ է արհեստական ոռոգման պահանջը և հողականացած պայմանները նպաստավոր են շար մերձագեղար-

ձային կուլտուրաների մշակության համար, բ). լեռնաանտառային (900—2200 մ): Այս գոտում անտառի վերին սահմանից բարձր, Գուգարաց լեռնաշղթայի գագաթային որոշ հատվածները ծածկված են ալպյան մարգագետիններով, որոնք օգտագործվում են որպես խոտհարք ու արոտավայր:

Ծրջանի գյուղատնտեսության զարգացման հեռանկարները մեծ չափով կապված են լեռնալանջերի դարավանդավորման, հակաէռողիոն աշխատանքների ծավալման և նոր հողատարածությունների ոռոգման (մեծ մասամբ պոմպակայանների միջոցով) հետ:

6. Լոռի-Փամբակը ընդգրկում է Գուգարքի, Ստեփանավանի և Կալինինոյի գյուղական վարչական շրջանները: Հայկական ՍՍՀ գյուղատրնտէսական աշխատանքի տարածքային բաժանման համակարգում աչքի է ընկնում կաթնամսատու անասնապահությամբ և կարտոֆիլագործությամբ, տոհմային տավարաբուծության գլխավոր շրջանը, որին բաժին է ընկնում հանրապետությունում աճեցվող ցեղային մատղաշի շուրջ 1/3-ը:

Ծրջանի գյուղատնտեսական արտադարանքի ընդհանուր ծավալում անասնապահությունը (ավելի քան 60%) նկատելիորեն գերակշռում է բուսաբուծության նկատմամբ, որի բաժինը հազիվ հասնում է 40%-ի: Անասնապահությունը մեծ տեսակարար կշիռ նաև ունի հանրապետության շափանիշով:

Տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են 900 մ-ի և 3100 մ միջև: Հանրապետության 9 գյուղատնտեսական շրջանների կազմում ամենից ավելի խոնավն է, միակ շրջանը, որտեղ լայն տարածում ունի դեմքի հողագործությունը, իսկ արհեստական ոռոգման անհրաժեշտությունը ծագում է ոչ ամենուրեք և միայն շորային տարիներին:

Հողահանդակների կառուցվածքում գյուղատնտեսական հանդակների բաժինը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է: Համեմատաբար քիչ են գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողատարածությունները, բայց ընդարձակ են անտառներն ու թփուտները: Գյուղատրնտեսական հանդակների $\frac{3}{4}$ կազմում են խոտհարքներն ու արոտները, Այս ցուցանիշը նույնպես հանրապետության միջինից բարձր է: Մրանքավելի են ընկնում հարուստ խոտածածկով և մեծ արժեք են ներկայացնում հատկապես խոշոր եղջերավոր անասնապահության համար:

Երկրագործության ճյուղերից հանրապետության հաշվեկշռում առավել շոշափելի է կարտոֆիլի տեղը՝ ավելի քան 40%: Ապրանքային նշանակություն ունի նաև պտղաբուծությունը:

Ծրջանի սահմաններում որոշակիորեն երկու գոտի է առանձնանում. առաջնաանտառային (մինչև 1500 մ)՝ վարելահողերի գերակշռությամբ

և թ) 1500 մ-ից վերաբերյալ տիրապետող են դառնում բնական կերահանդակները:

7. Եիրակը որպես գյուղատնտեսական շրջան առանձնացված է Ամասիայի, Ղուկասյանի, Ախուրյանի, Արթիկի, Սպիտակի ու Անդի գյուղական վարչական շրջանների սահմաններում: Այն մասնագիտանում է կաթնամսատու անասնապահության, մսա-բրդա-կաթնատու ոչխարարության, շաքարի ճակնդեղի և հացահատիկի մշակության գծով:

Այստեղ անասնապահության գերազանցությունը (գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 60%) առավել նկատելի է, քան լոռի-Փամբակում է:

Տողահանդակների կառուցվածքում առաջին տեղը պատկանում է վարելահողերին (մինչև 52%), և այդ տեսակետից շրջանը առանձնահատուկ տեղ է գրավում ամբողջ հանրապետությունում: Բնական կերահանդակները զբաղեցնում են 47%, որը զգալի շափով պակաս է, քան հանրապետության միջին ցուցանիշն է: Վերջին տասնամյակներում միշտը տնտեսություններ հիմնագրել են պտղատու այգիներ:

Եիրակը բնական պայմանների բազմազանությամբ զիջում է հանրապետության մյուս գյուղատնտեսական շրջանների մեծ մասին: Այդ պայմանների համեմատական միատարրության պատճառը հիպսոմետրիկ բարձրությունների փոքր տարբերություններն են: Տարածքի 3/4-ից ավելին ընկած է 1500—2000մ գոտում, մնացած՝ 2000-ից բարձր:

Ցածրադիր մասի հողերը արհեստական ոռոգման մեծ կարիք են զգում, դեմի հողագործությամբ զբաղվում են հիմնականում Ամասիայի ու Ղուկասյանի վարչական շրջաններում և Արթիկի շրջանի բարձրադիր մասերում: Արհեստական ոռոգումը կատարվում է Եիրակի, Ախուրյանի աջափնյա մայր ջրանցքների և մի քանի այլ՝ փոքր ջրանցքների միջոցով, որոնց մի մասը սնվում է վերջին տարիներին կառուցված ջրամբարներից:

Եիրակը Հայկական ՍՍՀ-միակ շաքարի ճակնդեղ արտադրող գյուղատնտեսական շրջանն է: Զգալի է նրա տեսակարար կշիռը գյուղատնտեսական մի շարք այլ մթերքների գծով ևս. օրինակ, նա տալիս է հանրապետություն արտադրվող հացահատիկի մինչև 1/4-ը, բրդի 1/5, մսի ու կաթի գրեթե 1/6-ը:

Ցանքատարածությունների կառուցվածքում հացահատիկից հետո երկրորդ տեղը գրավում են կերային կուլտուրաները, մասնավորապես բազմամյա ու միամյա խոտերը: Մրանք բնական կերահանդակների հետ սեկտեղ բավարար կերային բազա են ստեղծում անասնապահության համար:

Զնայած շրջանի բնական պայմանների միատարրությանը, այնուամենայնիվ այնտեղ առանձնանում են 2 ուղղաձիգ գոտիներ: Առաջինը նախալեռնային, չոր տափաստանայինն է, որը ծգվում է մինչև 1800 մ բացարձակ բարձրությունը և գերազանցապես դաշտավարական գոտի է: Ամունը այս գոտու անասնապահության համար օգտագործվում են նաև Արագածի և Ղուկասյանի լեռնաշղթայի բարձրադիր լանջերի հարուստ արոտավայրերը: Երկրորդ գոտին լեռնատափաստանայինն է, ընկած է 1800 մ-ից բարձր նիշերում: Այստեղ գերազում է գրեթե բացառապես բնական կերահանդակների օգտագործման վրա հիմնված անասնապահությունը:

8. Վստի միավորում է ընդամենը 2 գյուղական վարչական շրջան՝ Ծղեգնաձորի և Աղիզբեկովի, ու իր տարածքով ամենափոքրն է: Գյուղատնտեսական աշխատանքի ներհանրապետական տերիտորիալ բաժանման համակարգում նա հանդես է գալիս որպես ոչխարաբուժության, կաթնամսատու տավարաբուժության և խաղողագործության շրջան, որտեղ զգալի տեղ են գրավում նաև ծխախոտագործությունն ու պտղաբուժությունը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում անասնապահության բաժինը նկատելիորեն ավելի է (60 %), քան բուսաբուժությանն է:

Շրջանն ընկած է 1100 մ և 3500 մ բացարձակ բարձրությունների միջև: Բնական պայմանները համեմատաբար նպաստավոր են Վայքի միջլեռնային գոգավորության ոլ ընդարձակ հատակային մասում: Խոկ քնդհանուր առմամբ այդ պայմանները դժվարին են. ընդարձակ տարածություններ են գրավում զառիթափ լեռնալանջերը, բարակարկանները և գյուղատնտեսության համար անհարմար այլ հողահանդակները: Անբնրենպաստ են նաև խոնավացման պայմանները: Այս ամենի հետևանքով գյուղատնտեսական հանդակների բաժինը հողային ընդհանուր ֆոնդում հանրապետությունում ամենացածրն է՝ ընդամենը 31 %, որի մեծ մասը գերազանցապես սակավախոտ արոտավայրեր են:

Նման պայմաններում բնական է, որ գյուղատնտեսության առաջատար ճյուղի՝ անասնապահության համախառն արտադրանքի գրեթե կեւր բաժին է ընկնում ոչխարաբուժյանը: Այս ցուցանիշը հանրապետության միջինին զգալի շափով գերազանցում է:

Զնայած շրջանի ոլ ընդարձակ տարածությանը, այն բաժանվում է 3 գյուղատնտեսական գոտիների: Դրանցից առաջինը բարձրանում է մինչև 1400 մ և աշքի է ընկնում խաղողագործության, ծխախոտագործության և պտղաբուժության գերակշռությամբ: Երկրորդ գոտին տարածվում է 1400—1900 մ բարձրաշափական նիշերի միջև: Այստեղ առաջատար է դառնում անասնապահությունը: Երկրագործության մեջ խաղողագործությունն ու ծխախոտագործությունը իրենց տեղը գիշում են

Հացահատիկային տնտեսությանը, ծրբորդ գոտին (1900-ից բարձր) գերազանցապես ներկայացված է ամառային արոտներով և խոտհարքներով, որոնք լայնորեն օգտագործվում են նաև ցածրադիր գոտու տնտեսությունների կողմից:

Վայրում ևս, ինչպես և Հյուսիս-արևելյան գյուղատնտեսական շրջանում լայն տարածում ունի մեխանիկական ոռոգումը, որը ընդարձակ հարթավայրային տարածությունների բացակայության պայմաններում, գետահուներից բարձր ընկած փոքրակոնտուր հողակտորների ոռոգման ջուր հասցնելու միակ միջոցն է:

9. Զանգեզուրը հանրապետության ամենաընդարձակ գյուղատնտեսական շրջաններից է: Այն միավորում է 4՝ Սիսիանի, Գորիսի, Ղափանի և Մեղրու գյուղական վարչական շրջանները: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում անասնապահության բաժինը գերազանցում է 60 % -ին, մինչդեռ բուսաբուծության բաժինը շի հասնում նույնիսկ 40 % -ի:

Զանգեզուրի գյուղատնտեսական մասնագիտացումը որոշող ճյուղերն են կաթնամսատու տավարաբուծությունը, ոչխարաբուծությունը, ինչպես նաև ծխախոտագործությունը, պտղաբուծությունն ու խաղողագործությունը: Շրջանի ցանքատարածություններում մեծ բաժին ունեն հացահատիկներն ու ցանովի կերախոտերք:

Գյուղատնտեսության նման բազմաճյուղ բնույթը պայմանավորված է տարածքի բարձրաշափական չափազանց մեծ տարրերություններով, հետեւապես և բնական միջավայրի ծայրահեղ բազմազանությամբ: Շրջանի տարածքի ցածրադիր ծայր կետերը (375 մ և 3904 մ) ունեն ավելի քան 3500 մ տարրերություն: Այս շրջանը նույնպես աշքի է ընկնում մակերեսույթի խիստ մասնատվածությամբ, լեռնալանջերի մեծ թեքություններով և հողագուրկ, լեռկ տեղամասերի առկայությամբ: Շատ թե քիչ ընդարձակ հարթ տարածությունները, բացի Որոտան գետի ձախափնյա սարավանդից, բացակայում են, վարելահողերը մանր կտորներով ցրված են շրջանով մեկ:

Մեղրի գետի հովտային ցածրադիր հատվածի կիսաանապատացին պայմաններում երկրագործությունը հնարավոր է միայն արհեստական ոռոգման դեպքում: Մնացած շրջաններում արհեստական ոռոգումը գյուղատնտեսական կուլտուրաների երաշխավորված բերք ստանալու անհրաժեշտ նախադրյալ է:

Զանգեզուրում առանձնացված են մասնագիտացման 3 գոտի՝ ա) ցածրագիր՝ մինչև 1400 մ բացարձակ բարձրությունը: Այստեղ է գտնվում հանրապետության չոր մերձարևադարձային երկրորդ շրջանը: բ) անապատափառատանային (1400—2000 մ) և գ) լեռնատափառատանային (2000 մ-ից բարձր):

Երեք գոտու համար էլ բնորոշ է անասնապահության գերակշռությունը, միայն թե գոտիների բարձրության համեմատ այդ գերակշռությունը ավելի ակնհայտ է դառնում:

Ավելի մեծ են երկրագործության կառուցվածքում եղած գոտիական տարրերությունները, եթե ցածրադիր գոտում առաջատարը խաղողագործությունն ու պտղաբուծությունն է, ապա երկրորդ գոտում խաղողագործությունն ամրոշովին բացակայում է, հիմնական ճյուղը դառնում է ծխախոտագործությունը: Օժանդակ (ոչ մասնագիտացման) ճյուղերից առավել ընդարձակ տարածություններ զբաղեցնում է հացահատիկը: Երրորդ գոտում միայն մասամբ են զբաղվում երկրագործությամբ, գոտու ստորին սահմանում հանդիպում են գարու ցանքսեր: Դա գերազանցապես արոտային անասնապահության գոտի է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է գյուղատնտեսական շրջանացման էությունը:
2. Տվյալ գյուղատնտեսական շրջանների մասնագիտացման համեմատական ընութագիրը, ընդգծելով շրջանների զարգացման ընական ու սոցիալ-տնտեսական պայմանների ընդհանրություններն ու տարրերությունները:

ԳԼՈՒԽ 9. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

9.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տրանսպորտը, արդյունաբերության և գյուղատնտեսության հետ մեկտեղ կազմելով նյութական արտադրության ոլորտը, այնուհանդերձ, ի տարրերություն վերջիններիս, շի ստեղծում նոր նյութական արժեքներ: Նրա ծողովրդատնտեսական ֆունկցիան նյութերի միջև արտադրության միջոցներ և մարդիկ փօխադրելը և պատրաստի արտադրանքը սպառողին հասցնելն է, այսինքն մի ֆունկցիա, առանց որի անհնար է դառնում հասարակական արտադրության պերունակությունը: Տրանսպորտի միջոցով է իրականացվում մասնավորապես աշխատանքի հասարակական տարածքային բաժանումը (որի շնորհիվ և ինտեգրացումը), որը տնտեսաաշխարհաշուական գլխավոր երկույթների ու պրոցեսների հիմքերի հիմքն է: Այսադրության կազմակերպման կատարելագործման, համակենտրոնացման, մասնագիտացման ու կոռպերացման անընդհատ զարգացման, արտադրության ընդհանուր ծավալի աճի, բնակչության կենսամակարդակի բարձրացման հետ մեկտեղ մեծանում է տրանսպորտի նշանակությունը:

Տրանսպորտը ամեն մի ռեգիոնի հնբակառուցվածքի կարևորագույն տարրերից մեկն է:

Տրանսպորտի զարգացումը կախված է հասարակության արտղողական ուժերի զարգացման մակարդակից, աշխատանքի տարածքային բաժանման ու ինտեգրացման, շրջանների արտադրական մասնագիտացման խորությունից, արտաքին ու ներքին տնտեսական կապերի ինտենսիվությունից: Տրանսպորտի վրա ուղղակի ազդեցություն են ունենում արտադրողական ուժերի տեղաբաշխումը, ինչպես նաև շրջանի (երկրի) աշխարհագրական դիրքը:

Տրանսպորտի զարգացումը շրջանի արտադրողական ուժերի, արտադրության մյուս ճյուղերի զարգացման հետ գտնվում է պատճառահետևանքային՝ բարդ կապերի մեջ: Հասարակության պատմական զարգացման ընթացքում ամեն մի կոնկրետ շրջանի տրանսպորտի զարգացումը մեծ մասամբ պայմանավորվել է նյութական արտադրության մյուս ճյուղերի զարգացումով ու տեղաբաշխումով: Ժամանակագրական առումով տրանսպորտը որպես սպասարկող ճյուղ հաջորդել է բնակավայրերի և արտադրության այլ ճյուղերի ստեղծմանը:

Երևույթի էությունը շի փոխում այն հանգամանքը, որ տրանսպորտը երևան գալով որպես արտադրության ընդհանուր զարգացման հետևանք, անմիջապես հակադարձ ներգործություն է ունենում վերշինիս վրա: Դառնալով շրջանի ինֆրակառուցվածքի ամենակարևոր տարրը, նա մեծ շափով նպաստում է արտադրության խորացմանն ու ծավալմանը:

Սակայն, եզակի չեն նաև այնպիսի դեպքերը, երբ շրջանի տնտեսական զարգացման հիմքերը դրվել են տրանսպորտի շնորհիվ, ժամանակագրական առումով վերջինս նախորդել է արտադրության մյուս ճյուղերի ստեղծմանը: Տրանսպորտի այսպիսի առաջնային դերը դրսենորվում է հատկապես անմարդաբնակ, տնտեսապես նոր յուրացվող, մասամբ նաև թույլ զարգացած շրջաններում:

Ժամանակակից տրանսպորտի բոլոր ձևերն էլ, բացառությամբ շրայինի, ներկայացված են Հայկական ՍՍՀ-ում՝ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակամուղային, էլեկտրոնային, գրաստային: Ջրային տրանսպորտի Փունկցիաները սահմանափակվում են ոեկրեացիոն (Սևանա լիճ և որոշ շրամբարներ) նպատակներով, իսկ գրաստայինը, որ նախկինում էական նշանակություն է ունեցել, վաղուց արդեն կորցրել է իր միջտնտեսային դերը և այժմ ունի միայն ներտնտեսային նշանակություն և այն էլ միայն գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառում: Մոտ ապագայում տրանսպորտի այդ ձևի նշանակությունը էլ ավելի է ընկնելու, չնայած նրան, որ որոշ գյուղերի լեռնային բարդ ուղիեցիքի պայմաններում սայլերի և հատկապես ձիերի մասնակի օգտադորժման անհրաժեշտությունը կարող է պահպանվել:

Հանրապետության տրանսպորտի հիմնական ճյուղերը ներկայում ա

կազմում են մեկ ամբողջություն, որը ՍՍՀՄ միասնական տրանսպորտային համակարգի բաղկացուցիչ մասն է։ Այն ձեւվորվել ու գարգացել է հանրապետության արտադրողական ուժերի քանակական ու որևէ կական այն տեղաշարժերի պայմաններում, որոնք հատկանշական են վերջին տասնամյակների համար և որոնց մասին խոսվեց գրքի նախորդ բաժիններում։ Այդ տեղաշարժերի հետ մեկտեղ և նրանց կազմում ամբողջովին վերափոխվեց նաև տրանսպորտը։ Ի հայտ եկան դրա նոր ձեւեր, փոխվեցին հին ձեւերի դերն ու նշանակությունը, անհամեմատ բարձրացավ ամբողջ տրանսպորտի տեխնիկական մակարդակը, ընդույնվեց ու վերակառուցվեց ճանապարհային ցանցը։

Տրանսպորտի աշխատանքի գլխավոր ցուցանիշը՝ բեռնաշրջանառությունը, որը շափկում է տոննա կմ-ով, կախված է փախադրված բեռների ծավալից և փախադրման ենուավորությունից։ Փոխադրման հեռավորությունների աճը, Կ. Մարքսի խոսքերով ասած, տնտեսական գարգացմանն ուղեկցող «անխուսափելի շարիք է»։ Բայց, քանի որ, աւելից տեղ փոխադրվում է ընդհանուր արտադրանքի միայն մի մասը (մնացածը արտադրվում և սպառվում է տեղում, շմասնակցելով միջջրչանային ու ներշրջանային փոխադրմանը), ապա բեռնաշրջանառության աճի տեմպերը, որպես կանոն, պետք է զիջեն արտադրանքի աճի տեմպերին։ Կարեռ հանգամանք է նաև այն, որ արտադրության սոցիալիստական տեղաբաշխման սկզբունքներին համապատասխան արդյունաբերական ձեռնարկությունները ստեղծվելով հումքի բազաներին, էներգիայի աղբյուրներին և սպառման վայրերին մոտիկ, հնարավորություն են ընձեռում սահմանափակել բեռնափոխադրումների հեռավորության մեծացումը, որը կարող է հանգեցնել լրացուցիչ տրանսպորտային անշահալիք ծախսերի ուռնացման և բեռնաշրջանառության ցուցանիշի անհարկի ավելացման։

Ուստի շատ բնական ու օրինակափ է, որ տրանսպորտի բոլոր տեսակների բեռնաշրջանառության աճի տեմպերը սովետական իշխանության անցած տասնամյակների ընթացքում թե ամբողջ երկրում, թե շահական ՍՍՀ-ում զգալի շափով զիջում են արդյունաբերության համախառն արտադրանքի աճի տեմպերին։

Ներկայումս հանրապետության տրանսպորտի հիմնական տեսակների (առանց խողովակամուղայինի և էլեկտրոնայինի) բեռնաշրջանառության տարեկան ծավալը կազմում է շուրջ 10 մլրդ տոննա-կմ և վերջին տարիներին ըստ էության շի աճում, որը պետք է համարել դրական երկույթ։

Այսուհետեւ, այդ ծավալը հարյուրապատիկ անգամ ավելին է, քան եղել է նախասովետական տարիներին։ Բեռնաշրջանառության ներկայիս մեծ ծավալը որոշ իմաստով արտահայտում է հանրապետության

տարածքում նյութական արտադրության ոչ միայն ընդհանուր քանակական աճը, այլև նրա տեղաբաշխման մեջ կատարված արմատական տեղաշարժերը, բոլոր շրջանների ինդուստրիալ զարգացումը, արդյունաբերական հանգույցների ստեղծումը, օգտակար հանածոների նոր հանքավայրերի յուրացումը, գյուղատնտեսական շրջանների մասնագիտացման խորացումը, և որպես արդյունք այս բոլորի՝ Հայկական ՍՍՀ ներքին ու արտաքին տնտեսական կապերի ծավալումն ու ինտենսիվացումը:

Բեռնաշրջանառության ցուցանիշի բաղադրիչների՝ բեռների ընդհանուր ծավալի (տոննա) և փոխադրման հեռավորության (կմ) դերը նրա գանակական աճի համար տարբեր է:

Տարածքի փոքրության և գլխավոր տնտեսական կենտրոնների ոչ մեծ ցրվածության պատճառով բեռների ներհանրապետական փոխադրումների միջին հեռավորությունները Հայկական ՍՍՀ-ում մեծ չեն՝ ընդամենը 15 կմ ավտոմոբիլային տրանսպորտում և շուրջ 200 կմ երկաթուղային տրանսպորտում:

Դրական միտում է այն, որ վերջին տասնամյակում բեռնափոխադրումների միջին հեռավորությունը ոչ միայն չի աճում, այլև նկատելիորեն կրճատվել է: Սա է պատճառը, որ բեռների ընդհանուր ծավալի անընդհատ աճի պայմաններում բեռնաշրջանառության ցուցանիշը մնում է անփոփոխ և նույնիսկ կրճատվում է:

Խսկապես, 1940—1985 թթ. երկաթգծով առաքվող բեռների ընդհանուր ծավալը աճել է գրեթե 14 անգամ, հասնելով 19,3 մլն տոննայի, իսկ ավտոմոբիլներով կատարված բեռնափոխադրումների ծավալը՝ 73 անգամ, հավասարվելով 300 մլն տոննայի:

Տնտեսական աշխարհագրության համար հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն բեռների ընդհանուր ծավալն ու փոխադրման հեռավորությունը, այլև դրանց տեսակները, փոխադրումների ուղղությունները, բեռների առաքման ու ստացման վայրերը: Այս բոլորը որոշակի աշխարհագրական իմաստ ունեն և պայմանավորված են այնպիսի գործուներով, ինչպիսիք են արտադրության ու սպառման տեղաբաշխումը, տարբեր ապրանքների արտադրության ու սպառման հաշվեկշռի առանձնահատկությունները, արտադրական ցիկլերի ավարտվածության աստիճանը, արտադրական ձեռնարկությունների մասնագիտացման աստիճանը, տրանսպորտային ցանցի տեղաբաշխումը:

Ընդրւնված է առանձնացնել արտաքին՝ միջինանրապետական և տեղական՝ ներիանրապետական տրանսպորտային-տնտեսական կապեր: Վերջին տասնամյակների ընթացքում արտաքին և ներքին փոխադրումների ընդհանուր ծավալի զգալի աճի հետ մեկտեղ, դրանց հարաբերակցության մեջ էական փոփոխություն լի նկատվել: Առաքվող բեռների

ընդհանուր ծավալի մոտավորապես 40 տոկոսը դուրս է գալիս Հայկական ՍՍՀ-ից, իսկ 60 տոկոսը մնում է նրա սահմաններում։ Արտաքին բեռնափոխադրումների կեսից ավելին բաժին է ընկնում Անդրկովկասից դուրս գտնվող հանրապետություններին, մնացածը՝ Վրաստանին և Աղբեջանին։

Տրանսպորտի բեռնաշրջանառությանը մասնակցող մի քանի հարյուր արտադրատեսակներից կարելի է առանձնացնել մի քանիսը, որոնք ամենից ավելի մասսայական բնույթ ունեն։ Առաջին տեղը գրավում են բնական հանքային շինանյութերը (որմնաքար, խիճ, ավազ, պեղլիտ, կրաքար, պեմզա), ցեմենտը, բետոնները ու երկաթբետոնները շինարարական գետալները և այլ շինանյութեր, այնուհետև մետաղային և քիմիական հանքանյութերը, նավթամթերքները, հացահատիկը, անտառանյութը, քարածուխը, սև մետաղները։

Բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում տարբեր տեսակի շինանյութերի մեծ տեսակարար կշիռը պայմանավորված է նրանց թե արտադրության, թե սպառման վայրերի ցրված բնույթով, տարածքային համակենտրոնացման համեմատաբար ցածր մակարդակով, որը հանգեցնում է մեծ ծավալի տրանսպորտային փոխադրումների անհրաժեշտության։

Բնորոշ է նաև բեռնափոխադրումների ուղղությունների համեմատական անկայունությունը, որը կապված է շինանյութերի հիմնական սպառողի՝ կապիտալ շինարարության տեղարաշխման անկայունության, նրա մեջ կատարվող հաճախակի փոփոխությունների հետ։ Այնուհանդերձ, շինանյութերի գծով տրանսպորտային կապերի բավականին բարդ ու փոփոխվող ցանցում աշքի են ընկնում մի քանի ձեռավագած և կայունացած ուղղություններ, որոնք այդ ցանցի համար առանցքային դեր են կատարում։ Դրանք շինանյութերի արդյունաբերության միջշրջանային նշանակության գլխավոր կենտրոններից (Արարատ, Հրազդան, Արթիկ, Չարենցավան, Արովյան և այլն) ձգվում են դեպի հանրապետության խոշոր քաղաքները, որտեղ մշտապես խոշոր ծավալի կապիտալ շինարարություն է իրականացվում։

Հանքային բեռների, մասնավորապես մետալուրգիական և քիմիական հումքի փոխադրումների համար բնորոշ է նրանց համեմատաբար փոքր ծավալը և փոխադրումների մեծ հեռավորությունը։ Դա վերաբերում է հատկապես պղնձի խտանյութին, որի թողարկման և վերամշագման կենտրոնները գտնվում են հանրապետության հակադիր վայրերում (ծայր հր-արլ. և հյուախ)։

Հացահատիկային բեռնահոսանքների գլխավոր ուղղությունները որոշվում են ալրաղաց կոմքինատների (որտեղ կուտակվում է գյուղատնտեսական շրջաններում մթերվող հացահատիկը) և խոշոր քաղաքա-

յին բնակավայրերի՝ հիմնական սպառողների տեղաբաշխման ցանցով։ Ներմուծվող ապրանքների բեռնահոսանքները ուղղված են դեպի ապառողները՝ գլխավորապես խոշոր քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները։ Քարածխից, նավթամթերքներից, անտառանյութից, սև մետաղներից և մի քանի այլ մասսայական բեռներից բացի, ճիշտ նման բաշխում ունի նաև այրվող գազը, որը փոխադրվում է գազամուղներով, մասսամբ նաև ավտոմորիլային տրանսպորտով (հեղուկ վիճակում):

Հայկական ՍՍՀ բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում (առանց խողովակամուղայինի) տրանսպորտի գլխավոր տեսակների տեսակարար կշիռը հետեւալն է. երկաթուղային՝ 52 տոկոս, ավտոմորիլային՝ ավելի քան 47 տոկոս, օդային՝ 0,4 տոկոս։

9.2. ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երկաթուղային տրանսպորտը իր ժողովրդատնտեսական նշանակությամբ Հայկական ՍՍՀ-ում մնում է առաջինը, չնայած այն բանին, որ 30-ական թվականներից սկսած ընդհանուր բեռնաշրջանառության ծավալում նրա բաժինը աստիճանաբար նվազում է։ Այդ երեսույթը շարունակվում է նաև ներկայումս, բայց ավելի դանդաղ տեմպերով, քան երկու-երեք տասնամյակ առաջ էր։

Հակառակ դրան, ինչպես տեսանք վերևում, արագ թափով աճում են նրա բացարձակ ցուցանիշները՝ առավել բեռների ծավալը և ուղևորների թիվը (ուղևորների թիվը 1960 թ. համեմատությամբ աճել է ավելի քան 2 անգամ և 1985 թ. հասել է 3,3 մլն., թեև 70-ական թվականների վերջերից սկսած նվազում է)։

Անգնահատելի է երկաթուղու գերը հանրապետության արտաքին տնտեսական կապերի ապահովման գործում։

Հայկական ՍՍՀ երկաթուղային ցանցը իր հիմնական գծերով ձևավորվել է նախասովետական շրջանում, 20-րդ դարի սկզբներին, երբ ավարտվեց ցարական Ռուսաստանի կառավարության կողմից ուղղմաստրատեգիական նկատառումներով կառուցվող Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Երևան—Ճուղիա գծերի շինարարությունը։

Սակայն հանրապետության ներկայիս սահմանների ձևավորման հետեւանքով ստացվեց այնպես, որ այդ երկաթուղագծերը հայտնվեցին նրա տարածքի եղյամասերում, գլխավորապես պետական սահմանի մերձակա հատվածում։ Ճանապարհային ցանցի նման գծագրությունն անհնարին էր դարձնում երկաթուղային տրանսպորտի տնտեսական հնարավորությունների լրիվ օգտագործումը։ Հանրապետության տարածքի մեծ մասը, հատկապես ներքին շրջանները զուրկ էին մնում երկաթուղային սպասարկումից։ Այդ վիճակի մեջ էական փոփոխություն մտցրին գլխա-

վոր մայրուղուց դեպի Հանրապետության խորքային շրջանները կառուցված ճյուղավորումները, Քսանական թվականներին կառուցվեցին Լենինական—Արթիկ—Պեմզաշեն և Անի—Անիպեմզա գծերը: Ավելի ուշ ավարտվեց Ղափան—Մինչևան գիծը, որը հետագայում շարունակվելով դեպի Մեղրի և Զուլֆա, Զանգեզուրի լեռնահանքային արդյունաբերության կարևոր կենտրոնը միացրեց նաև Հայկական ՍՍՀ երկաթուղային ցանցին: Հիսունական թվականներին ծավալվեց Երևան—Հրազդան—Սևան գծի շինարարությունը, իսկ նրա շարունակությունը՝ Սևան—Շորժա—Զողոյ հատվածը շահագործման հանձնվեց 1976 թ.:

Հայկական ՍՍՀ տնտեսական կյանքում կարևոր իրադարձություն էր Հրազդան—Դիլիջան—Իջևան—Աղստաֆա գծի շինարարությունը, որն ավարտվեց 1986 թ.: Այն արմատապես բարելավեց Հանրապետության երկաթուղային ցանցի աշխարհագրությունը և մեծապես կնպաստի Հս.-արլ. շրջանների արդյունաբերական զարգացմանը: Բացի այդ, Հանրապետությունը երկաթուղային երրորդ ելքը ստացավ դեպի Հարևան անդրկովկասյան հանրապետությունները:



Նկ. 27. Զայամած ռելիեֆային պայմանների հարուցած դժվարություններին՝ Հայկական ՍՍՀ-ում վերջին տարիներին երկաթուղային շինարարությունը լայն ժամանակակից առաջարկությունների մեջ հատկանիշ է ստացել: Հրազդան-Իջևան նորակառուց երկաթգծի մի հատված:

Նոր շինարարության շնորհիվ երկաթուղիների շահագործվող երկարությունը 1913 թ. 362 կմ դիմաց այժմ կազմում է շուրջ 800 կմ, այսինքն ավելի քան կրկնապատկվել է: Համապատասխանաբար աճեց 19*

Երկաթուղային ցանցի խտությունը, որն արժմ հավասար է 2,7 կմ-ի լուրաքանչյուր 100 կմ² տարածության վրա: Ներկայումս հանրապետության տարածքի մեծ մասի ֆիզիկական հեռավորությունը ուղիղ գծով երկաթուղուց շի գերազանցում 25 կմ-ին: Առավել վատ են ապահովված երկաթուղային ցանցով Կայքը և Զանգեզուրը, որոնց շատ շրջաններ երկաթուղից հեռու են ընկած 100 կմ և ավելի:

Երկաթուղային ցանցով ապահովվածության իրական վիճակը պատկերվում է ոչ թե ֆիզիկական (ուղիղ գծով), այլ տնտեսական հեռավորության ցուցանիշով, այսինքն գոյություն ունեցող այն ճանապարհներով, որոնք բնակավայրերը կապում են երկաթուղային կայարանների հետ: Բնակավայրերի ճնշող մեծամասնությունը, որտեղ բնակվում է հանրապետության բնակչության 90 տոկոսից ավելին, գտնվում է անմիջապես երկաթուղու վրա կամ մինչև 15 կմ հեռավորության գոտում: Սակայն մի շարք շրջանների (Սիսիան, Գորիս, Ազիզբեկով, Մարտունի, Եղեգնաձոր, Կալինինո և այլն) թվով շուրջ 150 գյուղ գտնվում են երկաթուղուց ավելի քան 50 կմ, իսկ դրանցից 2 տասնյակը՝ ավելի քան 100 կմ հեռավորության վրա:

Ինչ վերաբերում է ոեգիռնալ նշանակություն ունեցող բնակավայրերին՝ քաղաքներին ու շրջանային կենտրոններին, ապա դրանց $\frac{1}{3}$ -ից ավելին գտնվում է անմիջապես երկաթուղու վրա (գծ. 28): Սիսիան մի քանիսի տնտեսական հեռավորությունն է գերազանցում 50 կմ-ին, այդ թվում 3-ինը՝ 75 կմ-ին: Դրանք են՝ Զերմանկը (108 կմ), Սիսիանը՝ (98 կմ) և Ազիզբեկովը (75 կմ):

Հայկական ՍՍՀ երկաթգծերի հիմնական մասը շուրջ շորս տասնյակ կայարաններով մտնում է Անդրկովկասյան երկաթուղու մեջ, կազմելով մի առանձին՝ երևանյան բաժանմունք: Մի քանի կայարաններ (Ղափան, Մեղրի), նրանց կից գծամասերով, վարչականորեն ենթարկվում են Աղրբեշանական երկաթուղուն:

Ինչպես արդեն ասվեց, անցած տասնամյակների ընթացքում թե Հայկական ՍՍՀ-ում և թե ամբողջ Անդրկովկասում երկաթուղային տրանսպորտի զարգացումը հիմնականում ընթանում էր ոչ թե նոր գծերի շինարարության, այլ հին գծերի վերակառուցման և ամբողջ նյասի տեխնիկական վերազինման ռոլի: Բավական է ասել, որ մինչև Սևան—Զոռ և Հրազդան—Իշխան—Աղստաֆա գծերի կառուցումն սկսելը հանրապետության երկաթուղային տրանսպորտում կատարված կապիտալ ներդրումների գործեր 95 տոկոսը ծախսվել է հին գծերի վերակառուցման վրա: Հին, փոքր հզորության ոելսերը փոխարինվել են նորերով, բոլոր գծերը էլեկտրիֆիկացվել են: Այդ բոլորից բացի, ամրող ճյուղը հագեցվել է նոր, ավելի արդիական շարժակազմով՝ էլեկտրաբարձրագծով ու շերմաքարշերով, ավելի հզոր բազմասանի և հատուկ բեռ-

նատար վագոններով, անհամեմատելի չափով բարձրացել է աշխատանքների մեքենայացման ու ավտոմատացման մակարդակը։ Որպես արդյունք այս ամենի՝ խստ մեծացել են գծերի թողունակությունը և գնացքների միջին քաշը, բարելավվել են երկաթուղու աշխատանքի բոլոր տեխնիկական ցուցանիշները։

Ինչպես արդեն ասվել է, երկաթուղային տրանսպորտի տեսակարար կշիռը Հայկական ՍՍՀ բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում հասնում է մինչև 52 տոկոս։ Սակայն նրա դերը շատ ավելի մեծ է արտաքին բեռնափոխադրումների մեջ, Բացառապես երկաթուղու միջոցով են կատարվում ինչպես ներմուծվող, այնպես էլ արտահանվող գլխավոր բեռների փոխադրումները։


Հստ որում, ըստ բեռների ծավալի ներմուծումը գերազանցում է արտահանմանը, Դա բացատրվում է այդ բեռների բնույթով։ Եթե ներմուծման մեջ գերակշռում են ծանրաքաշ, մեծածավայ բեռները (ածուխ, անտառանյութ, նավթամթերքներ, մեքենայական սարքավորում, հացահատիկ, սև մետաղներ), ապա արտահանման մեջ հիմնականը համեմատարար թերթեաքաշ բեռներ են, գլխավորապես վերամշակող արդյունաբերության արտադրանքը։

Երկաթուղացանցի տարբեր հատվածներում տարբեր են տիրապետող բեռնահոսանքներ։ Այդ բացատրվում է հանրապետության ներմուծման աշխատանքի տերիտորիալ բաժանման և շրջանների արտադրական մասնագիտացման առանձնահատկություններով։ Այսպես, Երևան—Լենինական—Կիրովական—Ալավերդի—Թբիլիսի հատվածի բեռնահոսանքների մեջ վճռական դեր են խաղում շինանյութերը, մեքենաները, ածուխը, սև և գունավոր մետաղները, լայն սպառման ապրանքները։ Այս հատվածի համար բնորոշ է նաև բավականին մեծ ուղևորաշրջանառությունը։

Բաքվից դեպի Զուլֆա և Երևան ձգվող գծում գլխավորը նավթամթերքներն են, անտառանյութը և հացահատիկը։

Ներքին գծերից Արթիկ—Լենինական հատվածի համար բնորոշ են հանքային շինանյութերը, Երևան—Հրազդան—Սևան—Զողի համար՝ գունավոր մետաղների հանքաքարը, ցեմենտը, կրաքարը, հշեան—Աղստաֆայի համար՝ բենտոնիտային կավը, Ղափան—Մինչեանի համար՝ գունավոր մետաղների խտանյութը, բնական շինանյութերը։

Հայկական ՍՍՀ-ն երկու ուղղությամբ ՍՍՀՄ երկաթուղային ցանցին ելք է տալիս դեպի մերձավոր Արևելքի երկրները՝ Լենինական—Ախուրյան—Կարսով դեպի Թուրքիա, Սիրիա, Իրաք, Միջերկրածովյան նավահանգիստները, իսկ Երևան—Զուլֆա—Թավրիզով՝ դեպի Իրան, ընդհուպ մինչև Պարսից ծոցի նավահանգիստները։ Այս իմաստով էլ Հայկական ՍՍՀ երկաթուղիները ամրող Սովետական Միության, ինչպես և Մերձա-




— Երկաթուղիներ
— Երկաթուղարին կայարաններ

— Ավտոմեքենաներ
— Համապետական նշանակության
— Հաերապետական և տեղական նշանակության

Նկ. 28. Հայէկան ՍՍՀ երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտ

0 10 20 40



Վոր Արևելքի երկրների համար ունեն կարևոր տարածություն, որը մեր երկրի արտաքին տնտեսական կապերի ակտիվացման հետ մեկտեղ տարեցտարի աճում է:

Հայկական ՍՍՀ-ում ձեւվորվել ու զարգանում են 3 երկարուղային հանգույց, որոնց բաժին է ընկնում հանրապետության բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության հիմնական մասը: Գրանք են Երևանը, Լենինականը և Հրազդանը:

Երևանի երկաթուղային կայարանը սկզբում ձեւվորվել է որպես Անդրկովկասյան մայրուղու հարավային՝ Ալեքսանդրապոլ-Զուլֆա ճյուղավորության մի փակուղի: Նա այդպիսին մնաց մինչև Երևան-Հրազդան երկաթգծի կառուցումը: Այժմ Երևանը Մասիս տեսակավորման կայարանի հետ միասին հանրապետության խոշորագույն տրանսպորտային հանգույցն է, որին բաժին է ընկնում երկաթուղային բեռնափոխադրումների ընդհանուր ծավալի կեսից ավելին: Նա առաջին տեղն է գրավում նաև ուղևորների քանակով:

Հայկական ՍՍՀ երկրորդ երկաթուղային հանգույցը լենինականն է: Այստեղ հանգուցվում են 4 ուղղության գծեր: Երկուսը անդրբկասյան նշանակության (դեպի Թբիլիսի և դեպի Նախիջևան-Իաքով), մեկ տեղական (Արթիկ-Պեմզաշեն-Մարալիկ) և մեկ միջազգային (Ախուրյան, Կաղաք Էրզրում, Անկարա):

Երրորդը՝ Հրազդանի հանգույցը նոր միայն ձևավորվում է: Այստեղից ճյուղավորվում է երեք ուղղություն՝ դեպի Երևան, Իջևան—Աղստաֆա և Զորի Ներկայումս կառուցվող երկաթգծի շնորհիվ այդ երրորդ ուղղությունը կշարունակվի մինչև Ձերմուկ:

Հեռանկարում Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի հետագա ծավալման շահերը պահանջում են շարունակել երկաթուղային տրանսպորտի ընդլայնումն ու կատարելագործումը: Հանրապետութան բարդ ուղինքային պայմաններում եղածներին զուգահեռ երկրորդ գծերի անցկացումը տարածքի մեծ մասում ավելի թանկ է նստում, քան նորերի կառուցումը, իսկ հաճախ էլ, հատկապես Դեբեդի և Մեղրու նեղ կիրճերում, կապված է շատ մեծ դժվարությունների հետ: Տեսանելի հեռանկարում կառուցելու համար ավելի հավանական կարող են լինել Ձերմուկից դեպի Զանգեզուր և Վայք, Վարդենիս—Մարտունի—Կամո—Սևան, Լենինական—Բաթումի, Սևանի ավազան—Թարթառ գետի հովիտ—Լեռնային Ղարաբաղ—Եվլախ գծերը իրենց համապատասխան ճյուղավորումներով:

9.3. ԱՎՏՈՄՈՐԽԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Հայկական ՍՍՀ այն երկրների թվին է պատկանում, որտեղ ավտոմորիլային տրանսպորտի դերը խիստ մեծ է և բենափոխադրումների ծավալով ընդհանուր մոտենում է երկարուղային տրանսպորտին, մի քան, որ բնորոշ չէ երկրների մեծ մասի համար: Օրինակ, ի մի վեցցրած ՍՍՀՄ բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում ավտոմորիլային տրանսպորտի բաժինը կազմում է ընդամենը 6 տոկոս, մինչդեռ Հայկական ՍՍՀ-ում 47 տոկոս: Այս ցուցանիշը զգալիորեն պահաս է նաև հարևան՝ Վրացական ու Ադրբեյչանական հանրապետություններում:

Մեզանում ավտոմորիլային տրանսպորտի այդպիսի մեծ դերը բացատրվում է մի կողմից ուղինքային բարդ պայմաններով, որոնք ավելի հարմար են խճուղիներ կառուցելու համար, ու երկաթուղային ցանցի նոսրությամբ և մյուս կողմից՝ հանրապետության տարածքի փոքրությամբ, որի պատճառով տեղական բեռնափոխադրումների միջին հեռավորությունները կարճ են, այսինքն ավելի հարմար ավտոմորիլային, քան երկաթուղային տրանսպորտի համար:

Հայկական ՍՍՀ լեռնագրությունը այնպիսի վիճակ է ստեղծել, որ խճուղիները ավելի խիտ ցանց ունենալով հանդերձ, ոչ միայն ավելի մեծ թվով քաղաքներ ու գյուղեր են ընդգրկում, այլև ավելի կարճ ճանապարհով են իրար միացնում նույնիսկ երկաթուղային կայարանները: Օրինակ, Երևանից—Լենինական հեռավորությունը երկաթուղով ավելի երկար է, քան ավտոխճուղով շուրջ 20 տոկոսով, Երևանից Կիրովական՝ ավելի քան 70 տոկոսով, Երևանից Ալավերդի՝ կրկնակի անգամ:

Այս բոլորից բացի, պետք է նաև նկատի ունենալ, որ հանրապետության գլխավոր քաղաքների ու շրջանային կենտրոնների միմյանցից ունեցած միջին հեռավորությունը շի գերազանցում 60 կմ (մեծ մասին՝ 20—25 կմ, առավելագույնը՝ Դուկասյանից Ղափան՝ շուրջ 450 կմ): Հայտնի է, որ մինչև 200 կմ հեռավորության վրա մասսայական բեռների փոխադրումները տնտեսապես ավելի ձեռնուու է կատարել ավտոմոբիլային, քան թե երկաթուղային տրանսպորտով:

Հայկական ՍՍՀ բոլոր տեսակի ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը հավասար է ավելի քան 12 հազար կմ, որից պիստ ծածկ ունեն 10,4 հազ կմ, կամ 86%, որը նկատելիորեն բարձր է ՍՍՀՄ միջին ցուցանիշից: Նախահեղափոխական շրջանում արդիական ավտոմոբիլային ճանապարհները բացակայել են, եղած անոելու ճանապարհների երկարությունն էլ հասել է ընդամենը 1058 կմ: Դրանցից գլխավորները (Իջևան—Սևան—Երևան—Նախիջևան, Նորաշեն—Միսիւն—Գորիս—Շուշի, Կալինինո—Մտեփանավան—Լենինական—Կարս) վերակառուցվել են ցարական կառավարության կողմից նկատի առնելով նրանց ռազմաստրատեգիական նշանակությունը:

Սովետական իշխանության տարիներին արմատապես վերափոխվեց ավտոմոբիլային ճանապարհների ցանցը, կառուցվեցին նորերը, հին, անրարեկարգ ճանապարհների փոխարեն ստեղծվեցին ժամանակակից ավտոմոբիլային խճուղիներ: Եթե նախկինում բազմաթիվ բնակավայրեր ուղղակի ելք շունեին դեպի գլխավոր ճանապարհները և նրանց հետ կապվում էին հարեւան հանրապետությունների տարածքով (Զանգեզուր, Շամշադին), ապա ներկայումս հանրապետության ավտոմոբիլային ճանապարհները միացված են մեկ միասնական ցանցի մեջ, որն ընդգրկում է գործնականում բոլոր, նույնիսկ ամենահեռավոր գյուղական բնակավայրեր:

Ավտոխճուղիների ամբողջական ցանցի ստեղծման համար հատկապես մեծ նշանակություն ունեցավ Երասխ—Սովետաշեն—Եղեգնաձոր—Միսիան և Բերդ—Իջևան ճանապարհների կառուցումը: Առաջինը հանրապետության միասնական ցանցին միացրեց Զանգեզուրը, իսկ երկրորդը՝ Շամշադինի շրջանը (գծ. 28):

Հայկական ՍՍՀ-ի համար հատկանշական է բարձր լեռնային ավտոճանապարհների (Արագածում մինչև 3200մ բացարձակ բարձրությունը) և մեծ թվով լեռնանցքների առկայությունը: Կարեռը մայրուղիների վրա գտնվող մի շարք լեռնանցքներ ունեն 2000—2400 մ բարձրություն (Պուշկինի, Սևանի, Որոտանի, Միսիանի, Սելիմի և այլն): Պուշկինի լեռնանցքի տակով կառուցված է ավտոխճուղային թունել, այդպիսին ներկայումս կառուցվում է նաև Սևանի լեռնանցքի տակով:

Հայկական ՍՍՀ ավտոմայրուղիները, որոնք ապահովում են գյուղավոր միջնանրապետական կապերը և իրար են միացնում հանրապետության խոշորագույն տնտեսական կենտրոնները, միութենական նշանակության խճողիներ են։ Մնացածներն ունեն հանրապետական և տեղական նշանակություն։ Միութենական նշանակության մայրուղիներից են՝ Ղազախ—Սևան—Երևան—Նախիչևան, Ախալքալաք—Լենինական—

Աշտարակ—Երևան ճանապարհները։

Կախված երթևեկության հաճախականությունից որոշվում է ճանապարհների տեխնիկական կարգը, որն էլ իր հերթին թելաղորում է ծածկի բնույթը, ճանապարհային շերտի լայնությունը և տեխնիկական մի շարք այլ պարամետրերը¹, 'Տեխնիկական առաջին կարգ ունեն Երևան—Սևան, Երևան—Հոկտեմբերյան և Երևան—Արարատ, իսկ երկրորդ կարգ՝ Աշտարակ—Լենինական—Կիրովական և մի շարք այլ ճանապարհներ։


Ավտոմանապարհային ցանցի ընդլայնման ու կատարելագործման հետ մեկտեղ արագ թափով աճում ու հզորանում է ավտոմորիլային պարկը, մեծանում բեռնափոխադրումների ժամկանը։

Այժմ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ավտոմորիլային պարկը բազկացած է ընդհանուր օգտագործման և գերատեսչական տասնյակ հազարավոր բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներից, շհաշված անձնական օգտագործման մեքենաները, որոնց թիվը ևս վերջին տարիներին արագ թափով ավելանում է։

Ավտոմորիլային տրանսպորտի զերը ավելի մեծ է ուղևորների փախադրման գործում։ Միայն ընդհանուր օգտագործման ավտոբուսներով փոխադրվող ուղևորների թիվը տարեկան գերազանցում է 240 մլն., իսկ ուղևորաշրջանառությունը՝ 3,7 մլրդ. ուղևորակմ։ Սա յոթնապատիկ անգամ ավելի է, քան երկաթուղային տրանսպորտի ուղևորաշրջանառությունն է։

Հայկական ՍՍՀ տրանսպորտի արդի մակարդակը բնութագրող էական ցուցանիշը է նաև այն, որ այժմ գործնականորեն բոլոր բնակավայրերը ավտոբուսային մշտական ուղերթներով կապված են շրջանային կենտրոնների, բոլոր շրջանային կենտրոնները՝ Երևանի և շատ այլ քաղաքների, իսկ քաղաքների մեծ մասը՝ միմյանց հետ։ Բացի այդ, բոլոր քաղաքներն ու շրջկենտրոնները ապահովված են տաքսամոտորային տրանսպորտով, շատ քաղաքներ՝ ներքին ավտոբուսային գծերով, իսկ Երևանը, Լենինականն ու Կիրովականը՝ նաև տրոլեյբուսային գծերով։ Ավտոմորիլային տրանսպորտի աշխի ընկնող հանգույցներ են Երևանը,

¹ Օրական 7000 և ավելի մեծենա երթևեկության հաճախականության դեպքում ճանապարհի համար սահմանվում է առաջին տեխնիկական կարգ, մինչև 200 մերենայի դեպքում՝ 5-րդ կարգ։



Նկ. 29. Վերշին տարիներին թեկ ու բավարար, բայց էական նշանակություն։ Է տրվում ավտոռուզեռների սպասարկման մակարդակի բարձրացմանը։ Թեյարան երկան-Սևան ավտոխճուղու վրա։

Անինականը, Կիրովականը, Սևանը, Դիլիջանը, Ղափանը, Աշտարակը, Եղեգնաձորը։

Ի տարրերություն տրանսպորտի մյուս տեսակների, ավտոմոբիլային արանսպորտը դեռևս մեծ վնաս է ճասցնում բնական միջավայրին և առաջին հերթին օդային ու ջրային ավազանին։ Ավտոմոբիլային տրանսպորտի շարժական միջոցները, ինչպես նաև ճանապարհների շինարարությունը, նորոգումն ու շահագործումը սպասարկող մեծ թվով ասֆալտբետոնի գործարանները ներկայումս հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման հզոր աղբյուր։ Անհրաժեշտ են կոմպլեքս միջոցառումներ շրջակա միջավայրի վրա դրանց վնասակար ներգործությունը մեղմացնելու համար։

9.4. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐ

Հայկական ՍՍՀ ներքին և արտաքին տնտեսական-արտադրական կապերի ընդհանուր ծավալում տրանսպորտի մյուս տեսակների բաժինը մեծ չէ։ Սակայն ճիշտ չէր լինի դրանց ժողովրդատնտեսական նշանակությունը որոշել միայն այդ ցուցանիշով։ Արդիական հասարակությու-

նը անհնար է պատկերացնել առանց օդային, խողովակամուլային ու կեկտրոնային տրանսպորտի, որոնց դերը գնալով անում է:

Օդային տրանսպորտը Հայկական ՍՍՀ-ում սկսել է զարգանալ 20-ական թվականների վերջերից: Առաջին երթուղիները Երևանը միացրել են Լենինականի և Հանրապետության մի քանի այլ քաղաքների հետ, իսկ Հանրապետությունից դուրս՝ Մուկվայի, Քբիլիսիի և Բաքվի հետ:

Ներկայումս օդային հաղորդակցությունը տրանսպորտի ամենամասսայական ձևերից է: Հայկական ՍՍՀ բարդ ռելիեֆային պայմաններում և ՍՍՀՄ կենտրոնական շրջանների նկատմամբ նրա ծայրամասային դիրքի պատճառով տրանսպորտի այս տեսակի նշանակությունը շատ մեծ է հատկապես ուղևորների փոխադրման գործում. դրանից օգտվող ուղևորների միջին տարեկան քանակը ներկայումս կազմում է մոտ 1,5 մլն. մարդ: Մրա գլխավոր մասը բաժին է ընկնում արտաքին ուղևորներին:



Նկ. 30. Հայկական ՍՍՀ-ում ուղևորաշրջանառության ցուցանիշով օդային տրանսպորտը ներկայումս գրավում է առաջին տեղը: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանը:

Բեռնափոխադրումների ընդհանուր ծավալը մեծ չէ (1985 թ. 17 հազ. տոննա), սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց կառուցվածքում գերակշռում են փոստային առաքումները, շուտ փշացող և շտապ ու արագ փոխադրություն պահանջող բեռները, օդային տրանսպորտի նշանակությունը այս բնագավառում ևս չպետք է թերագնահատվի:

Հայկական ՍՍՀ օդային ուղիների գլխավոր հանգույցը Երևանն է (երկու օդանավակայան՝ Զվարթնոց ու Երեքունի), որը մշտական ուղիներթներով կապված է Հայկական ՍՍՀ մեկ տասնյակից ավելի բնակավայրերի, ՍՍՀՄ միութենական բոլոր հանրապետությունների մայրաքաղաքների, մի շարք այլ կենտրոնների, ինչպես նաև արտասահմանյան որոշ երկրների մայրաքաղաքների հետ։ Հանրապետության արտաքին կապերը իրականացվում են նաև կենինականի օդանավակայանի միջոցով։

Օդային տրանսպորտի տեխնիկական հագեցվածության մակարդակը ընդհանուր առմամբ բարձր է. օդային գծերում, բացառությամբ մի քանի ներքին ուղիներթների, թոշում են ժամանակակից արագընթաց ուսակտիվ ինքնաթիռներ, կառուցված են արդիական օդանավակայաններ ու թոփշքաղաշտեր, կիրառվում են կատարելագործված ավտոմատ սարքեր ու հարմարանքներ։ Չնայած այս բոլորին, օդային տրանսպորտը մնում է տեխնիկապես ամենաարագ զարգացող ու կատարելագործվող ճյուղերից մեկը։

Խողովակամուղային տրանսպորտը Հայկական ՍՍՀ-ում հայտնվել է միայն 1960 թ., երբ Աղստաֆա-Երևան գազամուղի շահագործումով հանրապետության մայրաքաղաքը և այդ գծի վրա ընկած իջևան, Դիլիջան, Սևան, Հրազդան, Աբովյան քաղաքներն ու մի շարք այլ բնակավայրեր սկսեցին ստանալ Ղարադաղի (Աղրբեշանական ՍՍՀ) բնական գազը։ Հետագայում Անդրկովկասի գազամուղների միասնական ցանցի միջոցով այն միացավ նաև Հյուսիսային Կովկասի և Երանի գազի հանրավայրերին, իսկ Հայկական ՍՍՀ ներսում գազատար խողովակները ձյուղավորվեցին դեպի մյուս արդյունաբերական կենտրոններն ու շըրշանները։ Ներկայում Հայկական ՍՍՀ գազամուղների ընդհանուր երկարությունը շուրջ 5000 կմ է։ Հանրապետությունը դրանց միջոցով տարեկան ստանում է 3—3,5 մլրդ մ³ բնական գազ, որը, ինչպես տեսանք նախորդ բաժիններում, բավականին մեծ տեղ է գրավում վառելիքաներգետիկ հաշվեկշռում։

Աղստաֆա—Սևան—Երևան մայրուղու գլխավոր ճյուղավորումները ձգվում են դեպի Կիրովական—կենինական, Կիրովական—Թումանյան—Ալավերդի, Երևան—էջմիածին—Հոկտեմբերյան, Երևան—Արտաշատ—Արարատ, Սևանից դեպի հարավ—արևելք՝ օղակելով Սևանա լիճը և ճյուղավորում տալով դեպի Զերմուկ։

Աղրբեշանական ՍՍՀ գազատար գլխավոր մայրուղուց դեպի կեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը և Նախիջևանի ԻՍՍՀ ձգվող ճյուղավորումից գազատարներ են կառուցված դեպի Զանգեզուրի գլխավոր տնտեսական կենտրոնները՝ Գորիսը, Սիսիանը, Ղափանը և Քաջարանը։ Այսպիսով, Սովետական Հայաստանի տարածքի մեծ մասը, գրեթե

լոր քաղաքային բնակավայրերն ու արդյունաբերական կենտրոնները և հարյուրավոր գյուղեր արդեն ապահովված են գազամուղներով և ստանում են բնական գազ: Հայկական ՍՍՀ շունենալով իր սեփական բնական գազի հանգավայրերը, այնուամենայնիվ գազիֆիկացման մակարդակով ՍՍՀՄ-ում գրավում է առաջնակարգ տեղ:

Էլեկտրոնային տրանսպորտը շատ ավելի նեղ կիրառություն ունի և բացառապես կապված է էլեկտրաէներգետիկայի զարգացման հետ, որի մասին մանրամասնորեն շարդրված է համապատասխան բաժնում (տես՝ գլ. 5):

ՀԱՐՑԻՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տրանսպորտը ի՞նչ դեր է խաղում աշխատանքի հասարակական տարածքային բաժնման գործում:
2. Բնութագրեք Հայկական ՍՍՀ երկաթուղային տրանսպորտը, Խշդիսի՞ք են նրա զարգացման հեռանկարները:
3. Վերլուծեք Հանրապետության ավտոխճուղային ցանցի առանձնահատկությունները և ավտոմոբիլային տրանսպորտի առաջանցիկ զարգացման պատճառները:

ԳԼՈՒԽ 10. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՂՈՐԾԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ոչ արտադրական ոլորտի հասարակական արդյունքը ի տարրերություն ժողովրդական տնտեսության մյուս՝ արտադրական ոլորտի, դրսեկորվում է ոչ թե նյութականի, իրի, այլ գործունեության ձևով. այն սպասարկում է հասարակուրյանը, բավարարում մարդկանց կենցաղային ու հօգենոր պահանջմունքները: Ոչ արտադրական ոլորտում ազգային եկամուտ չի ստեղծվում, բայց նրա ծառայությունները մտնում են բնակչության անձնական սպառման ֆոնդերի մեջ, ապահովում են մարդկանց կենսապայմանների բարելավումը, որն իր հերթին խթանում է նյութական արտադրության զարգացմանը և ազգային եկամուտի աճին:

Սովետական սոցիալտեսական վիճակագրությունը ոչ արտադրական ոլորտի մեջ ընդգրկում է բնակչության բնակարանային-կոմունար և կենցաղային սպասարկումը, մարդատար տրանսպորտը, կապը (իր այն մասով, որ վերաբերում է կազմակերպությունների սպասարկմանը և բնակչության ոչ արտադրական գործունեությանը), առողջապահությունը, ֆիզիկական կուլտուրան ու սոցիալական սպահովագրությունը, ժողովրդական կրթությունը, կուլտուրան, արվեստը, գիտությունն ու գիտական սպասարկումը, կառավարումը, հասարակական կազմակերպությունները:

Ոշ արտադրական ոլորտի հիմնարկները, բնակչության անմիջական կարիքները բավարարող արտադրական ոլորտի որոշ ձեռնարկությունների հետ մեկտեղ ձևավորում են սպասարկման ոլորտը:

Այսպիսով, ժողովրդական տնտեսության երկու սկզբնական ոլորտների փոխներգործության պրոցեսում ձևավորվում է հատուկ՝ երկրորդային ոլորտ իր սպեցիֆիկ ֆունկցիաներով, բարդ ճյուղային կառուցվածքով:

«Սպասարկման ոլորտի աշխարհագրությունը», որը երբեմն անվանում են նաև «Բնակչության հասարակական սպասարկման աշխարհագրություն», ներկայումն հանդես է գալիս որպես սոցիալտեսական աշխարհագրության հատուկ դիսցիպլին։ Այն ընդհանուր գծերով ձևավորվել է 60-ական թվականներին՝ բնակչության աշխարհագրության շրջանակներում։

Սպասարկման ոլորտի զարգացման մակարդակը ուղղակի կապի մեջ է գտնվում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հետ և մեր պայմաններում արտահայտում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի պահանջները։ ՍՍՀՄ-ում ոչ արտադրական ոլորտում զբաղվածների թիվը ամբողջ զբաղվածների մեջ 1940 թ. 11,7 տոկոսից 1985 թ. հասել է մոտ 27 տոկոսի։ Այդ նույն ժամանակահատվածում Հայկական ՍՍՀ-ում այն համապատասխանաբար կազմել է 10,9 տոկոս և 29,0 տոկոս։ Այնուամենայնիվ, ինչպես ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում, ոչ արտադրական ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը զարգացած կապիտալիստական երկրների համեմատությամբ դեռևս ցածր է (Ճապոնիայում 1986 թ. կազմել է ամբողջ զբաղվածների 56 տոկոսը):

Կուակցության 27-րդ համագումարի կողմից մշակված սոցիալ-տնտեսական զարգացման նոր կուրսի պայմաններում նախատեսվում է էսպես արագացնել սպասարկման ոլորտի զարգացման տեմպերը, ապահովել զյա մակարդակների՝ դեռևս առկա նշանակալից ռեգիոնալ տարբերությունների համահարթումը։

Սովորական իշխանության տարիներին Հայկական ՍՍՀ-ում ևս բնակչության սպասարկման ոլորտը ձևավորվեց որպես ժողովրդական տնտեսության ինքնուրույն արդիական բնագավառ։ Այն առավել արագ թափով զարգացավ 50-ական թվականներից հետո։ Ժողովրդական կըրթության մակարդակով հանրապետությունը դուրս եկավ միջազգային շահիանիշի առաջավոր բնագծեր։ Ստեղծվել և գործում է կենցաղային սպասարկման, առևտորի, կուլտուր-լուսավորական, առողջապահական, սպորտային ու տուրիստական օրյեկտների, գիտական, կոնստրուկտորական ու նախագծային հիմնարկների լայն ցանց։

Նախասովետական Հայաստանում առողջապահությունը որպես ինքնուրուց ճյուղ գտնվել է սաղմնային վիճակում։ Գործում էր ընդամենը 6 հիվանդանոց՝ 212 մահճակալով, մեկ միլիոն բնակչին սպասարկում էին ընդամենը 73 բժիշկ։ Ներկայումս հիվանդանոցային մահճակալների թիվը կազմում է 28 հազ., բժիշկների թիվը՝ շուրջ 14 հազ.։

Միութենական չափանիշներով առողջապահության և բժշկագիտության խոշոր կենտրոն է դարձել Երևանը, որին բաժին է ընկնում հանրապետության հիվանդանոցային մահճակալների շուրջ 40 տոկոսը, բժիշկների ընդհանուր թիվը ավելի քան 60 տոկոսը, բժշկագիտական և ուսումնական հիմնարկների ճնշող մեծամասնությունը։

Արմատապես բարելավվել է գյուղական բնակչության բուժսպասարկման գործը, թեև դեռևս մեծ են դրա շրջանային տարրերությունները։ Այսպես օրինակ, եթե Ազգի գրեկովի, Եղեգնաձորի, Բաղրամյանի, Նոյեմբերյանի, Մարտունու շրջաններում բնակչության 10 հազ. շնչին ընկնում է 35—50 մահճակալ, ապա Ապարանի, Գորիսի, Թալինի, Ստեփանավանի, Թումանյանի և Մեղրու շրջաններում մեկուկեսից-երկու անգամ ավելի։

Բնակչության սպասարկման ոլորտի կարեոր մասն է կազմում կաւրացտային-ռեկրեացիոն սպասարկումը, որը սերտորեն կապված է առողջապահության հետ։


Աշխատավորների հանգստի կազմակերպման զոնաները սովորաբար ստեղծվում են նրանց աշխատանքին մոտ, քաղաքների անմիջական շրջակայքում։ Այստեղ տեղաբաշխվում են բանվորական և ուսանողական պրոֆիլակտորիաներ, պիոներական ճամբարներ, հանգստի բազաներ, հիմնարկ-ձեռնարկությունների պանսիոնատներ, այգեգործական-ամառանոցային կոռպերատիվներ և այլն։ Կուրորտային հիմնարկների տեղաբաշխումը կանխորոշվում է համապատասխան բնական ռեսուրսների առկայությամբ, իսկ տուրիստական բազաներինը՝ բնական, պատմական և այլ հուշարձանների առկայությամբ։

Հայկական ՍՍՀ-ում այժմ առանձնացվում են 8 ռեկրեացիոն շրջաններ և 11 կուրորտային զոնաներ (գծ. 9)։

Հանրապետությունում գործում են 105 սանատորիաներ և հանգստի հիմնարկներ՝ 21,8 հազ. տեղով, որտեղ տարեկան հանգստանում և մուժվում են շուրջ 580 հազ. աշխատավորներ։ Կառուցված են նաև 23 տուրիստական հանգրվաններ՝ 5600 տեղերով և 7 հանգստի բազաներ։ Համապատասխան նյութական բազայի ստեղծման հետ մեկտեղ զարգանում է արտասահմանյան տուրիզմը։

Բնակչության սպասարկման ոլորտի կարեորագույն բնագավառներից է ժողովրդական կրթությունը։

1914/15 ուստարում Սովետական Հայաստանի ներկայիս տարած-



Նկ. 31. Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման համար բնորոշ է տուրիզմի և տուրիստական հաեղրվանների արագ ծավալումը։ Մաթել Սեանա լճի ափին։

քում հաշվվում էին տարրեր տիպի 459 հանրակրթական դպրոցներ՝ 34,7 հազ. աշակերտներով։ Դրանցից ընդամենը 7-ն էին միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ։ 1921 թ. դեկտեմբերին ընդունվեց հասուն տարիքի բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին, որը մեծ դեր խաղաց րնակշության կրթական մակարդակի բարձրացման գործում։ 1929 թ. հանրապետությունում սկսվեց 8—10 տարեկանների ընդհանուր պարտադիր տարրական ուսուցումը, 1940 թ. ընդունվեց 7-ամյա ընդհանուր պարտադիր կրթության անցնելու վերաբերյալ որոշում, իսկ 1970-ական թվականներից սկսած իրականացվում է համընդհանուր միջնակարգ պարտադիր կրթությունը։

1985/86 ուստարում հանրապետությունում գործում էին 1479 հանրակրթական դպրոցներ, որոնցում սովորում էին 601 հազ. աշակերտներ։ Ուսուցիչների թիվը այդ նույն ժամանակաշրջանում կազմում էր 50 հազ. մարդ, որոնց շուրջ 82 տոկոսը ունեին բարձրագույն կրթություն։ Հանրակրթական դպրոցների տեղաբաշխումը ամբողջությամբ կախված է դպրոցահասակ երեխանների թվից և նույնությամբ կրկնում է բնակչության տարարնակեցման պատկերը։ Դպրոցների ճնշող մեծամասնությունը լրիվ միջնակարգ են։ Դրանք բացակայում են միայն փոքր գյուղերում։

Միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարանների թիվը 95 է, որտեղ սովորում են շուրջ 40 հազ. պատանիներ ու աղջիկներ։ Դրանք կենտրոնացված են խոշոր քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում, որտեղ մեծ է պահանջը բանվորական կադրերի նկատմամբ։

Սովետական իշխանության ժնունդ է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությունը ՀՍՀՀ-ում։ Եթե մինչև հեղափոխությունը Հայաստանում շկար ոչ մի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, ապա այժմ հանրապետությունում գործում են 13 բուհեր (պետական համալսարան, պոլիտեխնիկական ինստիտուտ իր 3 մասնաճյուղերով, մանկավարժական՝ 4, գյուղատնտեսական թերման 2, արկեստի՝ 2, բժշկական և ֆիզիկական կուլտուրայի), Դրանցում 1985/86 ուստարում սովորում էին 54,8 հազ. ուսանողներ։ Տեղաբաշխված են նրանք բացի Երևանից, նաև Լենինականում ու Կիրովականում։


Բնակչության 10 հազ. շնչին ընկնող ուսանողների թվով Հայկական ՍՍՀ-ը միութենական հանրապետությունների շարքում գրավում է միջին տեղ, իսկ միության միջին ցուցանիշներից նշանակալիորեն ցածր է (1985 թ. Հայկական ՍՍՀ-ում այն կազմել է 163 ուսանող՝ Միության 190-ի դիմաց)։

Բավականին նշանակալից են միջնակարգ մասնագիտական ուսուցման բնագավառում ձեռք բերված հաջողությունները։ 1985/86 ուստարում հանրապետությունում գործում էին 66 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում էին 48 հազ. ուսանողներ։ Բնակչության 10 հազար շնչին ընկնող սովորողների թվով Հայկական ՍՍՀ-ն այստեղ նույնպես միջին տեղ է գրավում, իսկ միութենական միջին ցուցանիշներից ցածր է։

Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության բնագավառում կարեւոր աշխարհագրական պրոբլեմ է ուսումնական հաստատությունների ցանցի կատարելագործումը և երեանի բեռնաբափումը հատկապես բուհերից։ Հանրապետության 13 բուհերից 11-ը տեղափորված են Երևանում, որը ուսցիոնալ համարել չի կարելի։

Սպասարկման ոլորտում առանձնահատուկ և հարաճում տեղ է գրավում գիտությունը։ Գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում գիտությունը վերածվում է արտադրողական ուժի, ամբողջ ժողովրդագոտնեսական համալիրի զարգացման արագացման և արդյունավետության շեշտակի բարձրացման վճռական գործոնի։

Ներկայումս հանրապետությունում գործում են հարյուրից ավելի գիտահետազոտական հիմնարկներ և բուհերի մի քանի հարյուր ամբողուններ, որտեղ զուտ գիտական և գիտամանկավարժական աշխատանք են կատարում ավելի քան 20 հազար մարդ, որից ավելի քան 7 հազարը



Նկ. 32. Գիտատեխնիկական առաջադիմության ներկայիս փուլում մեծ նշանակություն է տրվում ժողովրդատնտեսական պրոբլեմների լուծման գիտական ապահովմանը: ՀՍՍՀ ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության շենքը:

ունեն՝ գիտությունների դոկտորի և թեկնածուի գիտական աստիճան:

Գիտության մի շարք ճյուղերի գծով (հայագիտություն, աստրոֆիզիկա, մաթեմատիկա, տեսական և կիրառական ֆիզիկա, կենսաքիմիա և այլն) Սովետական Հայաստանը դարձել է միութենական և համաշխարհային ճանաչում ունեցող կենտրոն:

Երևանից բացի, որտեղ գործում են Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, ճյուղային գիտական հիմնարկների և բուհական ամրությունների գրեթե 80 տոկոսը, աշխի ընկնող գիտական կենտրոններ են դարձել Լենինականը, Կիրովականը, Բյուրականը, Էջմիածինը, Աշտարակը:

Սովետական իշխանության տարիներին արմատական փոփոխություններ են տեղի ունեցել բնակչության կուլտուրական սպասարկման բնագավառում: Խնշակես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում հաղթանակել է կուլտուրական հեղափոխությունը: Ժողովրդական կըրթության զարգացման հետ մեկտեղ մեծ վերելք է ապրել գրադարանային ծառայությունը: Եթե նախասովետական Հայաստանում (Հայկական ՍՍՀ ներկա տարածքում) գործում էին ընդամենը 13 ոչ մեծ գրադարաններ՝ մոտ 9 հազ. կտոր գրքային ֆոնդով, ապա 1985 թ. մասսայա-

կան (ոչ մասնագիտական) գրադարանների թիվը հասնում էր 1400, որտեղ կենտրոնացված է շուրջ 22 մլն կտոր գիրք։ Միութենական և համաշխարհային շափանիշի կենտրոններ են դարձել Ա. Մյասնիկյանի անվ. պետական գրադարանը, Գիտությունների ակադեմիայի ֆունդամենտալ գրադարանը, Մատենադարանը՝ Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտը, որը հայկական ձեռագրերի աշխարհի խոշորագույն պահեստարանն է և գիտական ուսումնասիրության կենտրոնը, Երևանի համալսարանի գիտական գրադարանը։ Դրանք բոլորը տեղավորված են Երևանում։

Մեծ ծագալ է ընդունել տպագրական գործը։ Ներկայումս հանրապետությունում լույս է ընծայվում 1100 անունից ավելի գրականություն շուրջ 12 մլն. ընդհանուր տպագրանակով և 180 ամսագրեր, լրագրեր և այլ պարբերական հրատարակություններ։ Հրատարակչական-տպագրական գործի հանրապետության խոշորագույն կենտրոնը Երևան քաղաքն է, թեև ոչ հզոր տպարաններ գործում են նաև հանրապետության մյուս խոշոր քաղաքներում ու բոլոր շրջանային կենտրոններում։

Ստեղծվել է ակումբային հիմնարկների և կինոթատրոնների խիստ ցանց, որն ընդգրկում է հանրապետության բոլոր, այդ թվում նաև գյուղական բնակավայրերը։ 1985 թ. հաշվել է ավելի քան 1250 ակումբային հիմնարկություն և շուրջ 900 կինոտեղակայում։

Սովետական իշխանության հաստատումով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ազգային թատերական և կինոարվեստի ծաղկման համար։ 1921 թ. հիմնադրվեց առաջին հայկական պետական թատրոնը, որն այժմ կրում է Գ. Սունդուկյանի անունը։ Ներկայումս հանրապետության 5 քաղաքներում գործում են 14 պետական թատրոններ (այդ թվում Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի), բազմաթիվ ժողովրդական թատրոններ ու թատերական խմբեր։ 20-ական թվականներից սկսած գործում է «Հայֆիլմը»՝ Համո Բեկնազարյանի անվան հայկական կինոստուդիան Երևանում։

Սպասարկման ոլորտի համակարգում աշքի ընկնող դեր ունի բնակչության կենցաղային սպասարկումը, որը և մատուցվող ծառայությունների ծավալով և բազմազանությամբ առաջատար տեղ է գրավում ամբողջ համակարգում։

Ներկայումս բնակչությանը ցույց տրվող կենցաղային ծառայությունների տեսակները 400-ից անցնում են։ Էականորեն փոխվել է նրանց կառուցվածքը։ Լայն զարգացում են ստացել ծառայությունների արդիական ձևերը՝ ավտոտեխնապասարկումը, վարձով տրվող ապրանքների կետերը, լվացքատները, քիմիական մաքրումը և ներկումը, կենցաղային մեքենաների ու սարքերի, այդ թվում էլեկտրական և ռադիո-

Էլեկտրոնային, վերանորոգումը և այլն։ Դրական տեղաշարժեր են կատարվել գյուղական բնակչության կենցաղային ծառայությունների ոլորտում։ Գյուղերի մեծ մասում ստեղծվել և գործում են կենցաղի մասնագիտացված տներ, կենցաղսպասարկման այլ օբյեկտներ։

Բնակչության սպասարկման գլխավոր ոլորտներից, նրա կենսամակարդակը բնութագրող կարեոր բնագավառներից է բնակարանային և կոմունալ տնտեսությունը։

Ինչպես ամբողջ երկրի մասշտաբով, այնպես էլ հայկական ՍՍՀ-ում բնակչությանը բնակարանով ապահովելու պրոբլեմը դեռևս մնում է ժողովրդի բարեկեցության ու կենսամակարդակի բարձրացման համակարգի ամենահրատապ պրոբլեմներից մեկը։ ՍՍՀՄ-ում ընդունված նպատակային ծրագրին համապատասխան մինչև 2000 թ. հիմնականում լուծվելու է բնակարանային պրոբլեմը այն հաշվով, որ դարի վերջին յուրաքանչյուր ընտանիք ունենա մեկուսացված բնակարան։

Հայկական ՍՍՀ-ում այդ ծրագիրը իրականացնելու համար հարկ կլինի բնակչության բնակարանով ապահովվածության մակարդակը բարձրացնել 45 տոկոսով և մեկ շնչին ընկնող ընդհանուր տարածությունը հասցնել 20 քառ. մ-ի։ Խսկ ներկայումս հանրապետության ընդհանուր բնակելի ֆոնդը կազմում է շուրջ 46 մլն. քառ. մ։ Այդ ֆոնդը մոտավորապես հավասար ձևով բաշխվում է հանրային ֆոնդի և քաղաքացիների անձնական սեփականությունը կազմող ֆոնդի միջև։ Ըստ որում դրա շուրջ 65 տոկոսը բաժին է ընկնում քաղաքային բնակավայրերին և 35 տոկոսը՝ գյուղականին։

Նշանակալի են կոմունալ տնտեսության բնագավառի դրական տեղաշարժերը։ Ներկայումս հանրապետության բոլոր քաղաքային բնակավայրերի և գյուղական բնակավայրերի ճնշող մեծամասնության կառուցապատումն ու բարեկարգումը կատարվում է պաշտոնապես հաստատված գլխավոր հատակագծով։ Դեռևս 60-ական թվականների սկզբին ավարտվել է բնակավայրերի էլեկտրիֆիկացումը։ Այժմ ավարտված է նաև դրանց գաղիֆիկացումը։

Հանրապետությունում արագ տեմպերով են զարգացել սպասարկման ոլորտի մյուս ճյուղերը ևս։ Բայց, չնայած դրան, բնակչության սպասարկման ոլորտը ամբողջությամբ վեցցրած դեռևս շլ հասել ինդուստրիալ հասարակության արդի պահանջների մակարդակին։ Ավելին, դրա որոշ բնագավառների զարգացման ցուցանիշները զիջում են նույնիսկ միութենական ոչ այնքան էլ բարձր միջին ցուցանիշներին։ Օրինակ, հիվանդանոցային մահճակալների ապահովվածությամբ Հայկական ՍՍՀ-ն միութենական հանրապետությունների շարքում վերջինն է։ բնակչության 10 հազ.շնչի հաշվով հիվանդանոցային մահճակալների թիվը հավասար է 84-ի՝ միութենական միջին 130-ի դիմաց։ Կամ մանրածախ առևտորի

ապրանքաշրջանառության գծով. բնակչության մեկ շնչի հաշվով այն կազմել է Հայկական ՍՍՀ-ում 944 ռ-ուց էլ պակաս, ՍՍՀՄ-ում միշտնը շուրջ 1200 ռ. է, իսկ կիտվայում՝ 1600 ռ., էստոնիայում՝ 1700 ռ.:

Դեռևս շլուծված պրոբլեմներ են սպասարկման ոլորտի զարգացման առավել բարձր տեմպերի ապահովումը և շրջանային ճիշտ ճամամասնությունների հաստատումը:

Դեռևս մեծ են քաղաքային և գյուղական բնակչության սպասարկման տարբերությունները, իսկ գյուղական բնակչության մեջ հատկապես հետ է մնում լեռնային գյուղերի բնակչության սպասարկումը: Թվարկված պրոբլեմների լուծումը և ոչ արտադրական ոլորտի առաջանցիկ զարգացումը, որը նախատեսված է ՍՍՀՄ սոցիալտնտեսական զարգացման՝ կուսակցության 27-րդ համագումարի մշակած նոր ստրատեգիայով, պահանջում է ուժերի նոր լարում, մեծ տնտեսական միջոցներ, Այն, միաժամանակ, բարերար ազդեցուրյուն կունենա հանրապետուրյան տնտեսական ամբողջ համալիրի առավել արդյունավետ զարգացման վրա և կնապասի մասնավորապես այնպիսի հարցերի լուծմանը, ինչպիսիք են բնակչության տարաբնակեցման առավել ուղղինալ տարածքային համակարգի ձևավորումը, բնակչության միգրացիոն շարժումների կարգավորումը, լեռնային շրջանների արտադրողական ուժերի զարգացումը, սոցիալտնտեսական զարգացման շրջանային անհամամասնությունների վերացումը: Այն կապահովի բնակչության բարեկեցուրյան և կուտարական մակարդակի շեշտակի ան:

ՀԱՐՑՄՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք սպասարկման ոլորտի գերը հանրապետության սոցիալտնտեսական զարգացման գործում:

2. Թվարկեք սպասարկման ոլորտի գլխավոր նյութերը և ցույց տվեք յուրաքանչյուրի կապը նյութական արտադրության ոլորտի հետո:

3. Որո՞նք են Հայկական ՍՍՀ սպասարկման ոլորտի զարգացման հիմնական պրոբլեմները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱԼՄԱԼԻՄԸ

ԳԼՈՒԽ 11. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵԽՍԱՅԻՆ
ԶԱՐԴԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՀԱՄԱԼԻՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ՈՐԳԵՍ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ՈՒԺԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԻՐՊՄԱՆ ՌԱՑԻՈՆԱԼ ԶԵՎ

Երկրի սոցիալտեսական զարգացման անցյալ տասնամյակների ընթացքում ձևավորվել ու զարգանում է Սովետական Միասնական ժողովրդատնտեսական համալիրը, որի անընդհատ բարդացող ներքին կառուցվածքը ճյուղային կտրվածքից բացի, ունի նաև իր տարածական կտրվածքը։ Այդ տարածական կտրվածքը կամ նույնն է, թե համալիրի տարածական կառուցվածքը ձևավորվում է աշխատանքի հասարակական տարածքային բաժնման շնորհիվ, որը առավել ակնհայտ է դրսենորվում ՍՍՀՄ միասնական ժողովրդատնտեսական համալիրի գործակոր տարածքային բաղադրիչների՝ միութենական հանրապետությունների ու ՍՍՀՄ տնտեսական շրջանների արտադրական մասնագիտացման ու կոմպլեքսային զարգացման միջոցով։

Այս օբյեկտիվ պրոցեսը ղեկավարվում ու կարգավորվում է համապետական պլանավորման միջոցով։ Ամեն մի հանրապետություն ենելով տեղական պայմաններից ու առանձնահատկություններից և հաշվի առնելով ընդհանուր միութենական պահանջը, ստանում է որոշակի մասնագիտացում։ զարկ է տալիս արտադրության այն ճյուղերին, որոնց զարդացման համար տեղում առկա են առավել բարենպաստ բնական ու տնտեսական պայմաններ և որոնց զարգացումը բխում է ՍՍՀՄ համապետական շահերից։

Մյուս կողմից, որևէ հանրապետության կամ շրջանի արտադրական մասնագիտացումը անհնար է առանց նրա ամբողջ տնտեսության հա-

մակողմանի կոմպլեքսային զարգացման, որովհետև կոմպլեքսային զարգացումը տվյալ դեպքում հանդես է գալիս իբրև մասնագիտացման հետագա խորացման պայման, մասնագիտացմանը նպաստող գործոն:

Այսպիսով, մասնագիտացումն ու կոմպլեքսային զարգացումը միմյանց լրացնող այն գլխավոր ռողիներն են, որոնք, ի վերջո, բերում են այս կամ այն հանրապետությունում կամ շրջանում միասնական տրնտեսաշխարհագրական օրգանիզմի գոյացմանը, օրգանիզմ, որը հայտնի է տարածքային-արտադրական համալիր անունով:

Տարածքային-արտադրական համալիրները հասարակական-տնտեսական համեմատարար նոր երեսություն են: Դրանց ձեւավորումն ու զարգացումը կապվում է ժամանակակից ինդուստրիալ հասարակության հետ և համարվում է արտադրողական ուժերի սոցիալիստական տարածքային կազմակերպման առավել ուսցիոնալ ու հեռանկարային ձևը: Այդքանը առաջինը բացատրել և տարածքային-արտադրական համալիրների տեսությունը 1940-ական թվականներին մշակել է պրոֆ. Ն. Ն. Կոլուսովսկին:

Տարածքային-արտադրական համալիրը (ՏԱՀ)՝ որոշակի տարածքի սահմաններում գտնվող արտադրողական ուժերի մի այնպիսի զուգորդություն է, որն ընդգրկելով բնական, աշխատանքային, նյութատեխնիկական և այլ ռեսուրսները, հիմնվում է տվյալ տարածքի և սոցիալական ու արտադրական ենթակառուցվածքի միասնական օգտագործման վրա:

Ներկայումս տիրապետող տեսակետի համաձայն ՏԱՀ կարող է ձեւավորվել տարբեր մեծության և տարբեր տնտեսական պոտենցիալ ունեցող տարածքներում՝ սկսած ժամանակակից խոշոր քաղաքից, վերջացրած առանձին հանրապետություններով և խոշոր տնտեսական շրջաններով: Դրան համապատասխան էլ, տարբեր տարածքային-արտադրական համալիրներ կարող են տարբեր նշանակություն ունենալ՝ միութենական, հանրապետական, տեղական և այլն:

ՏԱՀ-ի հասարակական իմաստը արտադրողական ուժերի ուսցիոնարկագմակերպումը և դրա շնորհիվ էլ արտադրության արդյունավետության բարձրացումն է: Արտադրության արդյունավետության այդ բարձրացումը ձեռք է բերվում տարբեր ուղիներով, որոնցից առանձնահատուկ հետաքըրքրություն են ներկայացնում.

ա) տվյալ տարածքում բնական և տնտեսական պայմաններին առավել շափով համապատասխանող արտադրությունների պլանային բաշխումը,

բ) աշխատանքի հասարակական բաժանման ու արտադրական մասնագիտացման խորացումը,

գ) արտադրության տարբեր ճյուղերի և տարածքային տարբեր մա-

սերի համամասնական զարգացման ապահովումը և տնտեսական-արտադրական միասնության ամրապնդումը,

դ) ներհամալիրային առավել ռացիոնալ տնտեսական-արտադրական կապերի հաստատումը:

Տարածքային-արտադրական համալիրներ կարող են ձեւվորվել երկու ուղղով՝ նպատակային-ծրագրային, երբ նոր յուրացվող տարածքում պլանավորվում, նախագծվում ու կառուցվում է արտադրական և սպասարկման ոլորտի օբյեկտների համալիր, և երկրորդ՝ հին յուրացված շրջաններում պլանային ձեռվ կարգավորվում ու կատարելագործվում է արտադրական և ենթակառուցվածքային օբյեկտների արդեն ձեւվորված արտադրական-տարածքային կառուցվածքը:

Սովետական Հայաստանի միասնական ՏԱՀ-ի ձեւվորումը ընթացի է երկրորդ ուղղով:

Հանրապետության էկոնոմիկայի սոցիալիստական զարգացումը, նրա արտադրողական ուժերի աննախադեպ վերելքը, որը տեղի ունեցավ անցյալ տասնամյակներում, իրենց հետ բերին ոչ միայն հասարակական արտադրության նշանակալից քանակական աճ, այլև որակական և կառուցվածքային արմատական տեղաշարժեր:

Ամեն մի տարածքի արտադրողական ուժերի ներդաշնակ զարգացումը, տարածքային-արտադրական համալիրի ձեւվորումը, անկախ նրա ծավալից ու հզորությունից, ենթադրում է ժողովրդական տնտեսության թե ճյուղային, թե տարածական կառուցվածքի անընդհատ կատարելագործում ու բարելավում և դրա միջոցով էլ ճյուղերի ու արտադրությունների, ինչպես նաև շրջանների միջև արտադրական-տնտեսական ոացիոնալ կապերի հաստատում:

Իսկ այս բոլորը ոչ այլ ինչ է, քան տնտեսության կոմպլեքսային զարգացում, փոխադարձորեն իրար պայմանավորող և արտադրական սերտ կապերի մեջ գտնվող ճյուղերից և շրջաններից բաղկացած միասնական տնտեսական օրգանիզմի՝ տարածքային-արտադրական համալիրի ստեղծում:

Պետք է միաժամանակ ի նկատի ունենալ, որ տարածքային-արտադրական համալիրները ամենուրեք և ամեն պայմաններում չեն, որ կարող են ծագել ու զարգանալ: Դրա համար հարկավոր են նյութական արտադրության զարգացման որոշակի սոցիալ-տնտեսական պայմաններ, որոշակի քանակի ու բազմազանության բնական ռեսուրսներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տվեր տարածքային-արտադրական համալիրի սահմանումը:
2. Տարածքային-արտադրական համալիրը ի՞նչ ուղիներով կարող է նպաստել արտադրության արդյունավետության բարձրացմանը:

11.2. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՇՎԻՐԻ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼԵՐԸ ԵՎ ԳԵԱՎՈՐ ՓՈԽԵՐԸ

**Սոցիալիստական շինարարության տարիներին Հայկական ՍՍՀ էկո-
նոմիկայում կառուցվածքային տեղաշարժերի գլխավոր տենդենցը ար-
տադրական մասնագիտացման հետ մեկտեղ ժողովրդական տնտեսու-
թյան կոմպլեքսային գարգացումն էր, ներքին կապերով հագեցված
ամբողջական համալիրի աստիճանական ձևավորումը, որը կարող էր
տեղի ունենալ միայն որոշակի պայմաններում, որպահակի քաղաքական,
սոցիալական ու բնական նախադրյալների առկայության դեպքում։ Սո-
վետական Հայաստանում միութենական նշանակության մեկ ամբողջա-
կան տարածքային-արտադրական համալիրի ձևավորման համար ոք-
պես այդպիսի նախադրյալներ են ծառայել`**

ա) սովետական իշխանության նադրանակը, Հայկական ՍՍՀ պե-
տական տարածքի ձևավորումը և համապետական պլանավորմանն
անցնելը,

բ) արտադրության միջացների ազգայնացումը և դրանց նկատմամբ
հանրային սեփականության հաստատումը,

գ) Հայկական ՍՍՀ-ի միավորվելը մյուս միութենական հանրապե-
տությունների նետ՝ ՍՍՀՄ-ի մեջ, որը նշանակում էր նաև հանրապետու-
թյունների ժողովրդական տնտեսությունների, նրանց աշխատանքային,
բնական, նյութական ու ֆինանսական ուսուրաների միավորում,

դ) բազմազան բնական ռեսուրսների առկայությունը, որոնց պլա-
նաշափ օգտագործման շնորհիվ հանրապետությունում զարգանում է
բազմաճյուղ տնտեսություն, մասնավորապես արդյունաբերությունը,

ե) արտադրողական ուժերի պլանային (պրոպորցիոնալ) տեղա-
բաշխման և աշխատանքի գիտական տերիտորիալ բաժանման սկզբուն-
քի կիրառումը տնտեսական շինարարության բնագավառում։

Թվարկված նախադրյալների գոյությունը այն օրյեկտիվ հիմքն է,
որի վրա աստիճանաբար ծագեց ու ամրապնդվեց հանրապետության
ամբողջական տարածքային-արտադրական համալիրը։

Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրը ձևավոր-
վել է ոչ թե միանգամից, այլ անցել է պատմական զարգացման մի
հանի փօքեր։

Նախորդ բաժիններից մեզ հայտնի է, որ սովետական իշխանու-
թյանը ժառանգություն անցած արտադրողական ուժերի կոմպլեքսային
զարգացումը գտնվում էր ցածրագույն մակարդակի վրա։ Տարածքային-
արտադրական համալիրի ձևավորման տեսակետից ծայրաստիճան ան-
բարենպաստ էր տնտեսության ինչպես նյուղային-արտադրական, այն-
պես էլ տարածական-շրջանային կառուցվածքը։ Ժողովրդական տնտե-

սության ճյուղերի, ենթաճյուղերի ու արտադրությունների տեսականին աղքատ էր ու սահմանափակ, զգացվում էր հատկապես մշակող արդյունաբերության՝ ճյուղավորված համալիրներ ստեղծելու ընդունակ ճյուղերի (քիմիական, մեքենաշինական և այլն) բացակայությունը: Եղած ճյուղերն ու արտադրություններն էլ (գունավոր մետալուրգիա, սննդի, թեթև թերզարգացած էին, չեին ստեղծել միջյուղային ու ներճյուղային շատ թիշ նշանակալից կապեր:

Վիճակը ավելի վատթար էր արտադրողական ուժերի տարածական-շրջանային կառուցվածքի տեսակետից: Ռուսական կայսրության կազմում Արևելյան Հայաստանի տարածքի վարչատերիտորիալ տրոհվածությունը՝ նրա տարածական մասերի տարբեր նահանգների ու մարզերի մեջ գտնվելը արհեստականորեն խոչընդունում էր տրանսպորտային, առևտրական, կուտուր-կենցաղային և արտադրական միջջրջանային կապերի ծավալմանը: Հայաստանի տարածական տարբեր մասեր տնտեսական, վարչական ու տրանսպորտային առումով հարում էին նրա սահմաններից դուրս գտնվող տարբեր կենտրոնների՝ Թիֆլիսին, Բաքվին, Ելիշավետպոլիսին: Երևանին հարող շրջանը (Հիմնականում Երևանի և Նախիջևանի նահանգները) Հայաստանի տարածքի մի մասն էր միայն ընդգրկում: Ապրանքային արտադրության ցածր մակարդակի և ճանապարհայրկության պայմաններում շատ թույլ էին զարգացած և էպիգոդիկ բնույթ ունեին տարբեր նահանգների մեջ մտնող հայկական շրջանների տնտեսական փոխադարձ կապերը:

Այդ բոլորի հետևանքով նախատվետական Հայաստանի արտադրողական ուժերի տեղաբաշխման համար բնորոշ էր մի վիճակ, որը կարող ենք կոչել ամորֆ-կոնգրուերատային: Այդ վիճակից ներկայիս կառուցվածքային վիճակին անցնելը կարող էր կատարվել աստիճանաբար, տասնամյակներ տևող լուրջ հորքային պրոցեսների շնորհիվ միայն:

Այդ պրոցեսների և դրանց արդյունք հանդիսացող հայկական տերիտորիալ արտադրական համալիրի պատմական զարգացման պարբերացման մեջ առանձին տեղ ունեն 20-ական թվականները: Դրանք, ավելի ճիշտ 1921—1928 թ.թ., Հայկական ՍՍՀ ծոլովդրական տնտեսության վերականգնման տարիներն էին, բայց այդ վերականգնումը նախանեղափոխական մակարդակի և տնտեսական կառուցվածքի պարզ կրկնությունը չեց. վերականգնման հետ մեկտեղ հիմնադրում էին նոր ճյուղեր ու արտադրություններ: Այդ ժամանակահատվածին է վերաբերում քիմիական արդյունաբերության, մետաղամշակության, տեքստիլ, շինանյութերի արդյունաբերության ճյուղերի, ինչպես նաև սննդարդյունաբերության առանձին արտադրությունների երևան գալը:

Հատկանշական է, որ նոր ճյուղերն ու արտադրությունները գլխա-

վորապես հենվում էին տեղական հումքային ռեսուրսների օգտագործման վրա և ստեղծում ներճյուղային ու միջնուղային արտադրական կապեր (կարրիդի կալցիումի, բամբակե մանվածքային ու գործվածքային արտադրությունները, պեմզայի հանուլթը, տեղական մածող նյութերի արտադրությունը, ծխախոտի նախնական մշակումը):

Նոր ստեղծվող արտադրությունները դեռևս սահմանափակվում էին Հումքի պարզունակ վերամշակումով, արտադրական կապերը կարճ էին, ամբողջովին բացակայում էին Հումքի խոր մշակման տեխնոլոգիական շղթաները: Այնուհանդերձ, հանրապետության արտադրողական ուժերի կոմպլեքսային զարգացման սկիզբը դրված էր. արդեն սկսվում էին նշմարվել սոցիալ-տնտեսական ու բնական այն նախադրյալները, որոնց վրա պետք է հիմնվեր Հայկական ՍՍՀ ապագա տերիտորիալ-արտադրական միասնական համալիրը: Հայկական ՍՍՀ կյանքում այս տարիները (1921—1928 թ.թ.) պետք է բնութագրել իբրև տնտեսության կոմպլեքսային զարգացման և միասնական տարածքային-արտադրական համալիրի ձևավորման նախապատրաստման փուլ:

Հաջորդ ժամանակաշրջանը բնդրյալում է նախապատերազմյան հրենամյակների տարիները (1929—41 թ.թ.), երբ լայն ծավալ ստացած նոր կապիտալ շինարարության շնորհիվ հանրապետությունում ստեղծվեցին մի շարք նոր ճյուղեր ու բազային արտադրություններ: Մասնավորապես, արդյունաբերական շինարարության համար բնորոշն այն էր, որ առանձին ձեռնարկությունների ու արտադրությունների հետ մեկտեղ, առաջին անգամ նախագծվեցին և մասամբ շահագործման հանձնվեցին մի քանի ճյուղային հզոր համալիրներ: Սա արդեն որպակական նոր երկնույթ էր: Այս համալիրներն էլ, ըստ էության, ապագայում դարձան ամբողջական տարածքային-արտադրական համալիրի հիմնական օղակները:

1930-ական թվականների առաջին տարիներից ամբողջ թափով ժավակեցին Սևան-Հրազդան էներգետիկ-ոռոգչական համալիրի կառուցման աշխատանքները, քիմիապես մաքուր կրաքարերից՝ տեղական տրավերտիներից ստացվող կալցիումի կարրիդի քիմիական վերամշակման և էժան հիդրոէլեկտրաէներգիայի բազայի վրա ստեղծվեցին Կիրովականի և Երևանի քիմիական համալիրների առաջին արտադրությունները, սկսվեցին պղնձաձուլության օժանդակ նյութերի և թափոնների օգտագործումը (պղնձարջասպի արտադրություն): Տեխնոլոգիական նոր օլակներ հայտնվեցին շինանյութերի արդյունաբերության բնագավառում. նույն կրաքարերի բազայի վրա ստեղծվեց ցեմենտի արտադրություն: Արտադրանք սկսեցին տալ տուֆի մեքենայացված հանքերը, հաջողությամբ պասակեց բազալտի ձուլման կազմակերպումը:

Արդյունաբերության տերիտորիալ կառուցվածքի համար էական նշանակություն ուներ այն փաստը, որ ձեռնարկություններն ու համա-

լիրները ստեղծվում էին ոչ միայն Հին արդյունաբերական կետերում, ինչպիսիք էին Երևանը, Ալավերդին, Լենինականը, այլև նոր բնակավայրերում, ինդուստրիալ զարգացման ոլորտի մեջ էին ներգրավվում նոր շրջաններ: Այդ տարիներին էր, որ դրվեցին Կիրովականի և Արարատի որպես արդյունաբերական կենտրոնների հիմքերը, այն ժամանակի համար հզոր շրջանային հիդրոէլեկտրակայաններ ստեղծվեցին Զորագետ և Հրազդան գետերի վրա: Անցկացվեցին Էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծեր, որոնք հանրապետության տարբեր շրջաններում գործող հիդրոէլեկտրակայանները իրար էին միացնում համատեղ աշխատանքի համար: Դա Հայկական ՍՍՀ միասնական էներգահամակարգի ստեղծման սկիզբն էր:

Ավարտվեց Ալավերդու պղնձաձուկական գործարանի առաջին արմատական վերակառուցումը, ավելացավ արտադրական հզորությունը: Դա հնարավորություն տվեց դադարեցնել պղնձի ձուլումը Ղափանում և հանրապետությունում արտադրվող ամբողջ պղնձի խտանյութի վերամշակումը կենտրոնացնել Ալավերդում: Միաժամանակ, վերակառուցվեցին Ղափանի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկան, որի շնորհիվ սրանց հզորությունը ևս զգալի չափով աճեց:

Իրականացված այս բոլոր միջոցառումների հետևանքով անհամեմատ ընդարձակվեց Հայկական ՍՍՀ արդյունաբերության տարածական բազիսը:

1941 թ. արդեն արդյունաբերությունը ներառում էր իր մեջ շուրջ 200 ձեռնարկություն (1913 թ. 2 տասնյակ), որոնք տեղաբաշխված էին արդեն 50 բնակավայրերում (1913 թ.—ընդամենը 8 բնակավայրում):

Հանրապետության տարածքային մասերի համախմբման, դրանք միմյանց հետ կապելու իմաստով մեծ նշանակություն ունեցավ նաև տրանսպորտային շինարարությունը: Կառուցվեցին Լենինական—Արթիկ և Մինչկան—Ղափան երկաթուղագծերը: Առաջինը Հայկական ՍՍՀ-ի և ամբողջ Սովետական Միավոքյան միասնական երկաթուղային ցանցին միացրեց Արագածի հյուսիս-արևմտյան լանջերը և զարկ տվեց այնտեղի բնական շինանյութերի հարուստ ռեսուրսների օգտագործմանը: Երկրորդ գիծը պայմաններ ստեղծեց տնտեսական-արտադրական սերտ կապեր հաստատել հանրապետության հյուսիսի և ծայր հարավ-արևելքի լեռնահանքային շրջանների միջև, նպաստեց պղնձաձուկության համակենտրոնացմանը (Ալավերդում), ինչպես նաև Զանգեզուրի լեռնահանքային արդյունաբերության հետագա վերելքին:

Համալիրագոյացման տեսակետից էական էին գյուղատնտեսական արտադրության կառուցվածային փոփոխությունները: Աւշադրության:

արժանի է, մասնավորապես, տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների աճը։ Դա կատարվում էր ոչ միայն արդեն մշակվող կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակման (ծխախոտ, բամբակ) հաշվին, այլև նոր կուլտուրաների (շաքարի ճակնդեղ, խորդենի) ներդրման շնորհիվ։ Սա նկատելիորեն ուժեղացնում էր արդյունաբերության վերամշակող ճյուղերի հումքային բազան։

Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում 30-ական թվականներին սկիզբ առած քանակական ու որակական տեղաշարժերը, նոր ճյուղերի ու արտադրությունների ստեղծումը, արդյունաբերական ճյուղային համայիրների կազմակերպումը, այս բոլորը անհրաժեշտորեն հանգեցնում էին տնտեսական-արտադրական բազմապիսի նոր կապերի երևան գալուն, հների հետագա բարդացմանն ու սերտացմանը։ Դրանք արդեն, ի տարբերություն 20-ական թվականների կապերի, ոչ թե սահմանափակվում էին երկու, առավելագույնը երեք արտադրական օդակներով, այլ ընդգրկում էին ավելի մեծ թվով հաջորդական տեխնոլոգիական պրոցեսներ ու արտադրություններ։ Անհամեմատ ընդարձայնվել էր նրանց տարածական հիմքը։

Որակական նոր երեսույթ էր այն, որ Հայկական ՍՍՀ ներքին արտադրական կապերը թե ուղղաձիգ, թե տարածքային առումով նետզիետե մեկ ամբողջական ցանց էին գոյացնում։ Ըստ որում, աստիճանաբար ավելի ցցուն էին դառնում այդ ցանցի մի քանի հանգուցակետեր, որոնք ավելի ուշ, ինչպես կտեսնենք, հանրապետության արտադրողական ուժերի տարածական համակարգի հիմնական օդակները, գլխավոր հիմնակետերը պետք է դառնային։

Գնահատելով Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացման սույն՝ երկրորդ փուլը (1929—1941 թ.թ.), կարելի է նշել, որ այն, ի տարբերություն նախորդ նախապատրաստական փուլի, տերիտորիալ-արտադրական համալիրի սկզբնավորման փուլ է։ Ժամանակահատվածի վերջում արդեն եթևականում ծևավորվում է հանրապետության միասնական ՍՍՀ-ի կմախճը և ուրվագծվում են թե ենուղային, թե տարածքային կառուցվածքի մի քանի գլխավոր առանձնահատկությունները։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945 թ.թ.) Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսությունը, ինչպես տեսանք 2-րդ գլխում, քանակական էական տեղաշարժեր շապրեց։ Բայց այն, ինչ տեղի ունեցավ որակական առումով, մասնավորապես, արտադրողական ուժերի կառուցվածքում, լուրջ հետքեր թողեց տերիտորիալ-արտադրական համալիրի վրա։ Դա էլ հենց հիմք է ծառայում, որպեսզի համալիրի զարգացման պարբերացումը կատարելիս այդ տարիները առանձնացնենք իրու ինքնուրույն՝ տերիտորիալ-արտադրական համալիրի ակտիվ ձևավարման փուլ։

Իսկապես, Հայրենական պատերազմի հենց առաջին տարում Ռւկ-րախնացից և ՌՍՖՍՀ արևմտյան մարզերից տեխնոլոգիական վառելիքի, սարքավորման, կիսաֆարբիկատների և հումքի առաքումը բնդհատվելու հետևանքով խախտվեցին Հայկական ՍՍՀ արտաքին տնտեսական-արտադրական կապերը։ Կարճ ժամանակում ժողովրդական տնտեսությունը վերակառուցվեց ռազմաճակատի պահանջներին համապատասխան, առավելագույն շափով մորիլիզացվեցին ներքին ռեգերվները, հաստատվեցին ներձյուղային ու միջնյուղային նոր արտադրական կապեր։

Արագ տեմպերով ստեղծվեցին արդյունաբերական նոր ձեռնարկություններ ու արտադրություններ։ Մեծ տեղաշարժեր կատարվեցին հատկապես մեքենաշինության մեջ։ Դրվեցին էլեկտրատեխնիկական արդյունաբերության (տրանսֆորմատորների, գեներատորների, կաբելի գործարաններ) և սարքաշինության (ժամացույցների գործարան) հիմքերը։ Այդ տարիներին ստեղծված արտադրություններից հանրապետության համար ամբողջովին նոր էին նաև հրակայուն նյութերի ու շիֆերի, ծծմբաթթվի, սուպերֆուսֆատի, ռետինատեխնիկական իրերի, մահուղի, գուլպեղնի ու տրիկոտաժեղնի արտադրությունը։ Հանրապետության բոլոր շրջաններում կազմակերպվեցին տեղարդկոմբինատներ, որոնք տեղական հումքի հիման վրա ծավալեցին մեծ թվով արտադրատեսակների արդյունաբերական թողարկումը։ Այս ամենը նպաստեց Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության կառուցվածքում նոր օդակների ձևավորմանը և նկատելիորեն արագացրեց թե ուղղաձիգ, թե հորիզոնական տնտեսական-արտադրական կապերի զարգացման ու ամրապնդման պրոցեսը։

Սույն փուլի վերջում արգեն որոշակիորեն ուրվագծվում էին հանրապետության արդյունաբերական համալիրի գլխավոր բաղադրիչները, այն է՝ գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, շինանյութերի արդյունաբերությունը, թեթև ու սննդի արդյունաբերությունը որպես աշխատանքի միջնաբանական բաժանման համակարգում Հայկական ՍՍՀ-ի արտադրական մասնագիտացումը որոշող ճյուղեր։

Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացման հաջորդ ժամանակաշրջանը, որն ընդգրկում է հետպատերազմյան տարիները՝ մինչև 1960-ական թվականների կեսերը, բնորոշ է նրանով, որ հանրապետության միասնական տարածքային-արտադրական համայնքի ձևավորումը և ամբողջականացումը հիմնական գծերով ավարտվում է։ Հիշյալ ժամանակաշրջանի հատկապես վերջին տարիներին առանձնահատուկ ուժգնությամբ է ծավալվում միջնյուղային արտադրությունների ստեղծման և դրա շնոր-

Հիվ հանրապետության նյութական արտադրության ամբողջականացման պրոցեսը:

Հիշյալ տարիներին, ի տարրերություն նախորդ փուլերի, արդյունաբերության մեջ առավել մեծ նշանակություն է ձեռք բերում արդեն ստեղծված արտադրությունների ընդլայնման և արտադրական-տեխնոլոգիական շղթաների հետագա երկարացման, արդյունաբերության «վերին ճանապարհ» գերազանցական միտումը: Ավելի ավարտուն ու ամբողջական են դառնում հանրապետության առաջատար էներգաարտադրական ցիկլերը, որոնց մասին կխոսվի ստորև՝ 12-րդ գլխում: Ավարտվում է հանրապետության միասնական էներգահամակարգի և միասնական ճանապարհային ցանցի ստեղծումը, ինչպես նաև տարբեր տարածային մասերի տնտեսական համախմբումը:

Այս բոլորի շնորհիվ արդեն ակնհայտ են դառնում հասարակական արտադրության ճյուղային ու տարածքային կառուցվածքի այն գլխավոր որակական հատկանիշները, որոնք իրավունք են տալիս հանրապետության արտադրողական ուժերը դիտել իրեն միութենական նշանակության մեկ միասնական տարածքային-արտադրական համալիր:

Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի գարգացման արդի փուլը, որն սկսվել է 60-ական թվականների կեսերից, կարելի է կոչել արդեն ձեավորված համալիրի կատարելագործման փուլ: Նրա համար բնորոշ է այն, որ նոր արտադրությունների և նոր միջնուղային ու ներճյուղային կապերի ստեղծման հետ միասին, տեղի է ունենում հին արտադրությունների ու կապերի նորացում և կատարելագործում: Հատուկ ուշադրություն է դարձվում դրանց ռացիոնալացմանը, որակական ցուցանիշների բարելավմանը:

Եթե մինչև միասնական տարածեային-արտադրական ճամակիրի վերջնական ձեավորումը (նրա զարգացման նախորդ փուլերում) հանրապետության տնտեսական առաջընթացի մեջ գերակռողը նյութական արտադրության ընդլայնման ու ծավալման, այսինքն զարգացման էնտենսիվ ուղին էր, ապա ներկայումս տիրապետող է դառնում ինտենսիվ զարգացման ուղին: Սա բխում է հանրապետության արտադրողական ուժերի արդեն ձեռք բերված արդի ավելի բարձր մակարդակից, միասնական տարածքային-արտադրական համալիրի ավելի հասուն վիճակից:

Արդի փուլը տարածեային-արտադրական ճամակիրի ավելի ուղղիունալ զարգացման, նրա կառուցվածքի անընդհատ կատարելագործման, արտադրական մասնագիտացման նետագա խորացման և ամբողջ ճամակիրի գործունեության տնտեսական արդյունավետության բարձրացման նոր, ավելի լուրջ խնդիրներ է առաջադրում: Այդ խնդիրներն իրենց կոնկրետ արտացոլումն են գտել Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2005 թվա-

կան ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների մեջ՝ Սոցիալ-տնտեսական զարգացման արագացման կուրսը, որի իրականացումը հիմնվում է գիտատեխնիկական առաջադիմության հետագա ծավալման վրա, նախատեսում է հանրապետության էկոնոմիկայում կատարել լուրջ կառուցվածքային փոփոխություններ, բարելավել արտադրողական ուժերի տարածեային կառուցվածքը, բարձրացնել հումքային ռեսուրսների օգտագործման կոմպլեքսայնության աստիճանը, զարկալ առավել ռացիոնալ ներհանրապետական տնտեսական-արտադրական կապերի ծավալման ու խորացմանը: Այս ամենը նոր խթան հանդիսանա հանրապետության՝ մի կողմից մասնագիտացման, մյուս կողմից կոմպլեքսայնության հետագա խորացման համար: Այնուհանդերձ հանրապետության արտադրողական ուժերի կոմպլեքսային զարգացման և դրա հիման վրա հասարակական արտադրության արդյունավետության առավելացման ու բազերվները օգտագործվում են միայն մասնակի շափով: Բոլոր հիմքերը կան ակնկալելու, որ երկրում իրականացվող տնտեսական ոեֆորմը, կառավարման վարչա-հրամայական սկզբունքից տնտեսական սկզբունքներին անցումը օբյեկտիվորեն կիթանեն ՍՍՀՄ հանրապետությունների ու տնտեսական շրջանների, այդ թվում և Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության կոմպլեքսայնության մակարդակի ավելի արագ աճին:

ՀԱՐՑԵՐ ՆՎ ԱՄԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ

- Որո՞նք են Հայկական ՍՍՀ միասնական տարածքային-արտադրական համալիրի ձևավորման առցիալ-քաղաքական, տնտեսական ու բնական նախադրյալները:
- Բայորէք և բնութագրեք Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի ձևավորման առցիալ-քաղաքական, տնտեսական ու բնական նախադրյալները:
- Գնահատեք Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության կոմպլեքսային զարգացման մակարդակը:

ԳԼՈՒԽ 12. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԹՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ

12.1. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ:
ՏԵՂ ՍՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԹԱԺԱՄԱՆԱԿԱՐԿՈՒՄ

Հասարակական արտադրության պատմական առաջընթացը, ինչպես արդեն նշվել է, անպայմանորեն ուղեկցվում է աշխատանքի հասարակական բաժանման (և նրա տարատեսակներից մեկի՝ տարածքային բաժանման) անընդհատ խորացման պրոցեսով, ինչքան բարձր է տվյալ 21 1040

երկրի տնտեսական զարգացման մակարդակը, այնքան ավելի խորն է աշխատանքի հասարակական բաժանումը: Դեռևս Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն էին նշում, որ ազգի արտադրողական ուժերի զարգացման մակարդակը առավել ակնհայտորեն դրսերդում է այն բանում, թե ինչ աստիճան է նրա մոտ զարգացած աշխատանքի բաժանումը:

Ժողովրդական տնտեսության զարգացման ամբողջ պատմությունը միաժամանակ աշխատանքի տարածքային բաժանման ու ինտեգրացման անընդհատ խորացման պատմություն է, երկրի տարբեր տարածքային մասերի, տնտեսական շրջանների ու հանրապետությունների մասնագիտացման, հետեւապես և կապերի ուժեղացման պատմություն:

Ամեն մի շրջանի ու հանրապետության տնտեսական մասնագիտացումը, որը աշխատանքի տարածքային բաժանման ու ինտեգրացման ուղղակի դրսերումն է, ինչպես տեսանք նախորդ բաժնում, կոմպլեքսային զարգացման հետ մեկտեղ լրացնում է տարածքային-արտադրական համալիրի ամբողջական բնութագիրը: Հստ որում, եթե կամպլեքսային զարգացումը բացահայտում է տվյալ տարածքի արտադրողական ուժերի, տնտեսուրյան նյութերի, ենթաճյուղերի և արտադրությանների փոխայինանավորվածությունը, արտադրական ներքին կապերի բնույթը, տնտեսուրյան նյութերի կառուցվածքային հագեցվածությունը, ապա արտադրական մասնագիտացումը պատասխանում է այն հարցին, թե որոնք են զիխավոր, պրոֆիլային նյութերը, ինչպիսին է տվյալ տերիտորիալ-արտադրական համալիրի տեղը ավելի խոշոր միավորի (Երկրի, երկրների խմբի) ժողովրդական տնտեսուրյան մեջ, ինչ տնտեսական ֆունկցիաներ է նա այնտեղ կատարում և վերշապես, ինչպիսիք են նրա արտաքին տնտեսական կապերը:

Ճյուղի շրջանային մասնագիտացումը որոշելու համար բոլորի կողմաց ընդունված ցուցանիշների միասնական համակարգ չկա: Տարբեր հեղինակներ տարբեր ցուցանիշներ են օգտագործում: Սակայն բոլորն էլ համակարծիք են այն հարցում, որ բազմաթիվ ցուցանիշների մեջ զլիավորը արտադրանքի «շրջանային ապրանքային նույթյունն է»: Սա կարող ենք արտահայտել որոշակի գործակով՝ Ա, որը հավասար կլինի արտահանվող արտադրանքի և ամբողջ արտադրանքի հարաբերությանը՝

$$Ա = \frac{\text{արտադրանքի արտահանվող քանակություն}}{\text{արտադրանքի ամբողջ քանակություն}}$$

Ա-ն ցույց է տալիս, թե տվյալ ճյուղի կամ ենթաճյուղի արտադրանքի որ մասն է մնում տեղում և որ մասը ուղարկվում դուրս, մասնակցելով աշխատանքի միջնային բաժանմանը:

Տարբերում են մասնագիտացում նեղ առումով և մասնագիտացում

թերության, բազմապիսի մեքենաշինության, թեթև արդյունաբերության՝ թեյագործության, մերձարեաղարձային պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության և դրանց վրա հիմնվող գինեգործության ու պահածոների արտադրության շրջան: Իր տնտեսական զարգացման մակարդակով Անդրկովկասը ՍՍՀՄ 19 տնտեսական շրջանների շարքում միշտն տեղ է գրավում: Նա զիշում է Կենտրոնական, Դոնեցկ-Մերձդնեպրյան, Ուրալի, Մերձբալթյան, Հյուսիս-Արևմտյան և Պովոլժիեի շրջաններին: Կենտրոնական-Սևահողային, Հարավ-Արևմտյան, Բելոռուսական և Հյուսիս-Կովկասյան շրջանների հետ գրեթե նույն մակարդակի վրա է գտնվում և գերազանցում է մնացած շրջաններին:

Թե՛ տարածքի մեծությամբ (Անդրկովկասի 16 տոկոս), թե՛ բնակչության թվաքանակով (21,9 տոկոս) Հայկական ՍՍՀ շուրջ կրկնակի անգամ զիշում է և Աղրբեշանին, և Վրաստանին: Սակայն արդյունաբերական զարգացման մի շարք տեսակարար ցուցանիշներով նա գրավում է առաջին տեղը: Այդ ցուցանիշներից են՝ արդյունաբերական զարգացման մակարդակը (հասարակական ընդհանրական արդյունքի և ազգային եկամտի մեջ արդյունաբերության բաժինը, բնակչության ընդհանուր թվաքանակում արդյունաբերական բանվորների բաժինը, բնակչության մեկ շնչին ընկնող արդյունաբերական արտադրանքի ծավալը) քաղաքային բնակչության տոկոսը և այլն: Հայկական ՍՍՀ որոշ շափով գերազանցում է նրանց նաև բնակչության մեկ շնչին հասնող ազգային եկամտի քանակով:

Անդրկովկասյան տնտեսական շրջանում Հայկական ՍՍՀ տեղը որոշ շելու համար կարեոր է նաև այն հանգամանքը, որ նրա մասնագիտացման՝ վերը քննարկված 6 ճյուղերից 5-ը ամենաակտիվ մասնակցությունն են ունենում Անդրկովկասի մասնագիտացման գործում: Դրանք են՝ գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, թեթև ու սննդի արդյունաբերությունը:

Նշելով Հայկական ՍՍՀ մասնագիտացման ճյուղերի կարեոր նշանակությունը Անդրկովկասյան տնտեսական շրջանի և ամբողջ երկրի էկոնոմիկայի համար, միաժամանակ պետք է ի նկատի ունենալ, որ առաջին անհրաժեշտություն ներկայացնող որոշ ճյուղեր ու արտադրություններ ամբողջովին բացակայում են (վառելիքային արդյունաբերություն, սև մետաղածուլություն, մեքենաշինական և քիմիական մի շարք արտադրություններ և այլն) կամ թերզարգացած են և չեն բավարարում հանրապետության պահանջները: Բայց դա Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման համար վճռական նշանակություն չի ունենում, քանի որ, Հայկական ՍՍՀ, ինչպես և բոլոր մյուս միութենական հանրապետությունները հենվում են ՍՍՀՄ համապետական ուսուլը

ու ֆոնդերի վրա, թեև կարենոր ցուցանիշ է հանրապետական տնտհաշ-վարկի առումով:

Գտնվելով նույն՝ մերձարևադարձային ջերմային գոտում և միանույն անդրկովկասյան բնական համալիրի կազմում, Հայկական ՍՍՀ, Աղրբե-շանական ՍՍՀ և Վրացական ՍՍՀ, այնուամենայնիվ, իրենց բնական ու տնտեսական պայմաններով ոչ թե նույնությամբ կրկնում, այլ զգալի շափով լրացնում են միմյանց: Ցուրաքանչյուրում տեղական ուրույն պայմանների շնորհիվ զարգանում են արտադրության մի շարք ճյուղեր, որոնք լայն ու բազմազան պրոֆիլ են հաղորդում ամբողջ տնտեսական շրջանի արտադրողական ուժերին, հզորացնելով նրա տնտեսական պո-տենցիալը և ավելացնելով այն ավանդը, որ մուծում է Անդրկովկասը ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ: Անդրկովկասյան հանրապե-տությունների այս հատկանիշը բարենպաստ նախադրյալ է նրանց տրն-տեսական-արտադրական կապերի խորացման և ամբողջ տնտեսական շրջանի էկոնոմիկայի կոմպլեքսային զարգացման համար:

Այնուհանդերձ, Անդրկովկասի ներսում միշեանրապետական կապե-րի, ինչպես և շրջանի էկոնոմիկայի կոմպլեքսային զարգացման հնարա-լուրությունները դեռևս լրիվ շափով չեն օգտագործվում: Անդրկովկաս-յան հանրապետությունների տնտեսա-արտադրական կապերը մի շարք այլ հանրապետությունների ու տնտեսական շրջանների հետ ավելի ծա-վալուն ու բազմակողմանի են, քան միմյանց հետ:

Հայկական ՍՍՀ Անդրկովկասի տերիտորիալ-արտադրական համա-լիրին մասնակցում է քիմիական արդյունաբերության արտադրանքով (ծծմբաթթու, կառուստիկ սոսա, կալցիումի կարբիդ, վինիլացետատ, սին-թետիկ կառուցուկ, ուստինատեխնիկական իրեր, ավտոմոբիլային դողեր, ացետատային մանրաթել և այլն), պղնձով ու ալյումինով, կաբելային իրերով, շատ մեքենաներով ու սարքավորումներով, որոնք նա առաքում է Աղրբեշան և Վրաստան:

Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական համալիրը, իր հերթին, զգալի շափով հենվում է Աղրբեշանից ստացվող նավթամթերքների, բամբակի, նավթաքիմիական ու մեքենաշինական արտադրանքի և Վրաստանից ստացվող սև մետաղների, քարածիխի, մեքենաշինության և արդյունաբերության որոշ այլ ճյուղերի արտադրանքի վրա:

Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական-արտադրա-կան փոխադարձ կապերի հետագա ծավալումը պետք է ընթանա դեռևս զօդտագործված ուղերժների ավելի լայն օգտագործման ուղղությամբ, որոնք ահագին են թե տարբեր ճյուղերի մեջ (միջնուղային կապեր), թե նրանց ներսում (ներճյուղային կապեր): Զօդտագործված հնարավորու-թյուններից ժողովրդատնտեսական առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում սև մետալուրգիայի ցիկլի հետագա զարգացումը, մե-

տաղային մոլիբդենի և մի շարք հազվագյուտ ու ցրված մետաղների արտադրության կազմակերպումը, լեռնային երկրագործության համար գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը, նավթաքիմիական արտադրական ցիկլի հետագա ծավալումն ու կատարելագործումը և բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնք կարող են իրականացվել անդրդեպիկասյան բոլոր հանրապետությունների համատեղ ջանքերով։ Այդ միջոցառումները կարող են նպաստել մի կողմից՝ ամեն մի հանրապետության արտադրական մասնագիտացման հետագա կատարելագործմանն ու խորացմանը, մյուս կողմից՝ Անդրկովկասյան տնտեսական շըրշանի ժողովրդական տնտեսության կոմպելքսայնության ուժեղացմանը։

Իսկ այս բոլորը միայն բարերար ազդեցություն կարող են ունենալ հասարակական արտադրության առավել ուսցիոնալ տերիտորիալ կազմակերպման և արդյունավետության բարձրացման վրա, մեծացնելով ինչպես Անդրկովկասյան տնտեսական շրջանի, այնպես էլ նրա մեջ մտնող յուրաքանչյուր հանրապետության տնտեսական պոտենցիալը և ավանդը միութենական ֆոնդի մեջ։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ

1. Խնդիր են որոշում տարածքի (շրջանի, հանրապետության և ազգի) տնտեսության մասնագիտացման աստիճանը։
 2. Որո՞նք են Հայկական ՍՍՀ մասնագիտացման ճյուղերը
 3. Բնութագրեք Հայկական ՍՍՀ տեղը ՍՍՀՄ-ի և Անդրկովկասի աշխատանքի հասարակական բաժանման համակարգում։
 4. Բնութագրեք Հայկական ՍՍՀ տնտեսական կապերը Վրացական ՍՍՀ և Ադրբեյջանական ՍՍՀ հետ։

12.2. ՏԱՐԱԾՔԱԳԻՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԷՆԵՐԳԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑԻԿԼԵՐԸ (ՇՂԲԱՆԵՐԸ)

Ամեն մի կոնկրետ տարածքային-արտադրական համալիրի կոմպլեքսայնությունն ու արտադրական մասնագիտացումը ձևավորվում ու զարգանում են արտաքին ու ներքին պայմանների համատեղ ազդեցության տակ։ Դրանք ուղղակիորեն կապված են համալիրի կազմի ու արտադրական կառուցվածքի հետ։

Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրը իր ձևավորման սկզբնական փուլում հենվելով շատ սահմանափակ թվով արտադրությունների ու արդյունաբերական կենտրոնների վրա, հետագա ծավալման ու զարգացման ընթացքում ոչ միայն հարստացավ նոր ճյուղերով, արտադրություններով, այլև ընդարձակեց իր տարածական հիմքը, համալիրի մեջ ներգրավելով բնական նոր ռեսուրսներ և նոր տարածական մասեր։

Կարծիքներ կան, որ ամեն մի տարածքալին-արտադրական համապիր, անկախ նրա զարգացման աստիճանից, անպայմանորեն համընկնում է իր վարչաքաղաքական միավորի (պետության, միութենական հանրապետության, ինքնավար հանրապետության և այլն) սահմանների հետ: Ավելի լայն ընդունելություն է գտել այն տեսակետը, որ տարածքային-արտադրական համալիրը մեծ մասամբ ընդգրկում է վարչաքաղաքական միավորի տարածքը ոչ ամբողջությամբ: Դրանց սահմանների ճշշտ համընկումը հնարավոր է բացառիկ դեպքում միայն: ՍՍՀՄ-ում միութենական պետական պլանավորման պայմաններում հաճախ դիտվում է տարբեր վարչաքաղաքական միավորումներում ձևավորվող տարածքային-արտադրական համալիրների փոխադարձ ներթափանցում, որը, ի վերջո, կարող է բերել վարչական սահմանների վերահայման:

Այսօրվա վիճակով Սովետական Հայաստանի ՏԱՀ, ըստ էության քննդգրկում է հանրապետության ամբողջ տարածքը: Նրա արտաքին կոնտուրները հիմնականում համընկնում են հանրապետության սահմաններին: Սայրամասային տարբեր շրջանների և հանրապետության առաջատար տնտեսական կենտրոնների միջև եղած տնտեսական կապերի ինտենսիվության տարբերությունները հարցի էությունը շեն փոխում: Կարելի պորն այն է, որ Հայկական ՍՍՀ բոլոր տարածքային մասերն արդեն, ավել կամ պակաս չափով, ձուլվել են հանրապետության ամբողջական համալիրի արտադրական կարկասի մեջ, իրենց վրա վերցնելով որոշակի ֆունկցիաների կառարումը:

ՏԱՀ-ի որոշակի հատկանիշներով օժտված ամբողջական տնտեսական օրգանիզմի կառուցվածքում որպես արտադրական-ֆունկցիանալ միավաներ են հանդես գալիս էներգաարտադրական ցիկլերը:

Գիտա-տեխնիկական առաջադիմության համեմատ մեծանում է էներգաարտադրական ցիկլերի նշանակությունը նյութական արտադրության ժամանակակից կառուցվածքում: Դրա հետ մեկտեղ մեծանում է դրանց գիտական հետազոտության կարևորությունը: Ավելին՝ էներգաարտադրական ցիկլերի մեթոդն է, որ լավագույն ձևով ապահովում է արտադրողական ուժերի տարածական համակարգերի արդիական տնտեսաաշխարհագրական ուսումնասիրությունը:

Հայտնի է, որ տնտեսաաշխարհագրական վերլուծության ավանդական մեթոդներից մեկը տնտեսության նյուղային կառուցվածքի ուսումնասիրությունն է: Հայկական ՍՍՀ տնտեսության ճյուղային վերլուծությանը նվիրված է սույն գործի երկրորդ բաժինը՝ 5—9-րդ գլուխները:

Նման մեթոդով աշխարհագրական վերլուծությունը բռնել է ժամանակի քննությունը և ապագայում էլ ընդհանուր երկրագրական աշխատանքների մեջ լայն կիրառություն է ունենալու: Արդյունաբերու-

թյան, ինչպես նաև նյութական արտադրության մյուս բնագավառների ներկայիս դասակարգումն ըստ ճյուղերի օգտագործվում է արտադրության կառավարման, պետական հաշվառման ու հաշվետվության կազմակերպման համար։ Այդ իմաստով նա ունի առավելություններ և որևէ այլ բանով փոխարինվել չի կարող։

Այս բոլորով հանդերձ, ճյուղերը տարածվային-արտադրական համալիրների արտադրական կառուցվածքի ուսումնասիրության պահանջներին բավարարել չեն կարող։ Ճյուղային վերլուծության մեթոդը անընդունելի է հատկապես համակարգային մոտեցման ժամանակ, եթե ուսումնասիրության օբյեկտը դիտվում է որպես ինքնուրուցն համալիր՝ իր փոխակապակցված բաղադրիչներով՝ ենթահամակարգերով։ Ճյուղերը հնարավորություն չեն տալիս սահմանազատելու և առանձնացնելու իրենց էությամբ տարբեր արտադրությունները, միասնական արտադրական առանձին փուլերը, ի հայտ բերելու դրանց կապերի տեխնոլոգիական շղթաները, այդ շղթաների առանձին օղակները, որոնց ամբողջությունն էլ հենց կազմում է տարածքային-արտադրական համալիրը։

Ճյուղային մոտեցման ժամանակ ստվերում են մնում նաև արտադրության բնական հիմքը, կոնկրետ արտադրության պրոցեսում ծագող բնություն—հասարակություն փոխագործություններն ու առնչությունները, որոնք տնտեսական աշխարհագրության համար առաջնակարգ նշանակություն ունեն։ Այս բոլոր հարցերի բազմակողմանի վերլուծության լայն հնարավորություն է ընձեռում էներգաարտադրական ցիկլերի մեթոդը։

Մշակելով էներգաարտադրական ցիկլերի տեսությունը, Ն. Ն. Կոլոսվակին ելնում էր այն փաստից, որ նյութական արտադրության բարդ ամբողջությունը բաղկացած է արտադրական պրոցեսների հաջորդական շղթաներից, որոնցից յուրաքանչյուրը սկսվում է որոշակի հումքի մշակումից և ավարտվում պատրաստի արտադրանքի բոլոր հնարավոր տեսակների թղաքառումով¹։ Որշակի հումքի և էներգիայի որաշակի աղբյուրի վրա հիմնվող հաջորդական արտադրական պրոցեսների միաւնությունը Կոլոսվակին կազմեց էներգաարտադրական ցիկլ (ԷԱՑ)։

Այս կամ այն բնական և սուրսի վրա հիմնվող հաջորդական տեխնոլոգիական պրոցեսների ամբողջությունը կարող է ուղղագիծ շղթայի տեսք ունենալ, կարող է և ճյուղավորվել, նմանվելով ծառի, ուստի և ներկայումս ԷԱՑ-ից բացի օգտագործվում է նաև էներգաարտադրա-

¹ Н. Н. Колсовский. Производственно-территориальное сочетание (комплекс) в советской экономической географии. В кн.: Основы экономического районирования, М.: Госполитиздат, 1958, с. 133—172.

Հան շղթա (ԷԱՆ) տերմինը, որն ավելի ճիշտ է արտացոլում երևոյթի էկոլոգիանը:

Էներգաարտադրական ցիկլը (շղթան) թույլ է տալիս տարածքային-արտադրական համալիրի կառուցվածքում առանձնացնել համեմատաբար մեկուսացված ենթահամակարգեր և քանակական ցուցանիշների օգնությամբ որոշել նրանց համամասնությունները և զարգացման մակարդակը, ինչպես և դասակարգել ու գնահատել համալիրի ներքին և արտաքին կապերը: Նկատի պետք է ունենալ, որ տարածքային-արտադրական համակարգում ոչ բոլոր շղթաներն են համարվում առաջատար: Դրանց մի մասը կարող են ունենալ տեղական, մյուսները՝ համամիութենական նշանակություն: Վերջիններս էլ հենց որոշում են համալիրի մասնագիտացումը աշխատանքի համարիութենական բաժանման մեջ:

Ամեն մի էներգաարտադրական շղթա կազմված է հաջորդական փուլերից, որոնք սկսելով հումքի մշակումից, հասնում են մինչև պատրաստի արտադրանքի ստացումը: Դա վերաբերում է հիմնական արտադրական պրոցեսին և դրսենորվում է արտադրական-տեխնոլոգիական «ուղղահայաց» կապերի տեսքով: Հիմնական արտադրական պրոցեսների թափոնների և ուղեկից նյութերի օգտագործման շնորհիվ ստեղծվում են օժանդակ արտադրություններ իրենց արտադրական-տեխնոլոգիական կապերով հանդերձ, որոնք, որպես կանոն, հանդես են գալիս «հրթիգոնական» տեսքով:

Այսպիսով, ԷԱՆ-ների մերօդը ճնարավորակյան է տալիս կատարել տնտեսության զարգացման և տեղաբաշխման ավելի խոր ու բազմակողմանի վերլուծություն, ենթակա և մշակել գիտականորեն ավելի հիմնավորված հեռանկարային տնտեսական պլաններ ու կանխագուշակամմեներ:

ԷԱՆ-ի վերլուծության համար ընդունված է առանձնացնել միաժական տեխնոլոգիական պրոցեսի շրջև հաջորդական փուլ՝ 1. հումքի հանույթը, 2. նրա նախնական վերամշակումը, 3. կիսաֆաբրիկատների արտադրությունը, 4. վերջնական արտադրանքի թողարկումը:

Շղթայի ստորին փուլը իր գոյությամբ նախադրյալներ է ստեղծում հաջորդի համար, որը ձևավորվում է միայն ստորին փուլից հետո, այսինքն նրանց միջև գոյություն ունի ստորադասության որոշակի կարգ:

Ծրկրի, ինչպես նաև առանձին տնտեսական շրջանների բնական, պատմական և տնտեսական պայմանները հանգեցրել են նրան, որ որոշակի շղթաներում կարող են բացակայել առանձին փուլեր, այսինքն շղթաները կարող են լինել լրիվ (ավարտված) և ոչ լրիվ (ընդհատված, հատված):

Էներգաարտադրական շղթաների վերլուծության ու բնութագրման համար էական նշանակություն ունի նաև դրանց արտաքին կապերի ուսումնասիրությունը: Այդ կապերն ընդունված է դիտել երկու տեսանկյունից՝ 1. ըստ կապերի բովանդակուրյան, այսինքն հումքի ու վառելիքի, կիսաֆարբիկատների, վերջնական արտադրանքի, 2. ըստ կապերի դրսեորման ձեփ, այսինքն ներհամալիրային, միջնուղային, միջնիկային, ներշրջանային, հանրապետական, համամիութենական, միջազգային և այլն:

Ժամանակին Ն. Ն. Կոլոսսվակին Սովետական Միության համար բացահայտել է 8 էներգաարտադրական ցիկլ: Ներկայումս առանձնացվում են ավելի մեծ թվով էներգաարտադրական ցիկլեր (շղթաներ), որոնք ավելի ճիշտ են արտահայտում ժամանակակից նյութական արտադրության կառուցվածքը:

Հաշվի առնելով արտադրության զարգացման ու տարածքային կազմակերպման ժամանակակից մակարդակը, առավել ավարտում ու սպառի պետք է համարել Յու. Գ. Սաուշկինի մշակած դասակարգումը, որի համաձայն առանձնացվում են ստորև թվարկվող 14 էներգաարտադրական շղթաները և շղթաների խմբերը:

1. ԱՅ մետաղների ԷԱՇ, որն ընդգրկում է հետևյալ հաջորդական արտադրական պրոցեսները. երկաթաքարի և միախառնվող (լիգերացնող) հանքանյութերի արդյունահանում, հանքանյութի հարստացում, լուգունի ձուլում, պողպատի ձուլում, գլանվածքի արտադրություն, ծանր մեքենաշինություն: Սրան զուգահեռ շղթա է կազմում կոքսացող ածխի արդյունահանումը, ածխի կոքսաքիմիական արտադրությունները:

2: Գունավոր մետաղների ԷԱՇ, որն սկսվում է գունավոր մետաղների հանքանյութի արդյունահանումից և ավարտվում է հանքանյութի պարունակած բոլոր մետաղների ու տարրերի կորզումով, ինչպես նաև թափոնների և ուղեկից նյութերի վերամշակման վրա հիմնվող քիմիական արտադրություններով:

3. Պիճակ վառելիքի ԷԱՇ, որն իր մեջ է ամփոփում էներգետիկական ածխի, այրվող թերթաքարերի և տորֆի արդյունահանումը, հարստացումը և օգտագործումը շերմաէլեկտրակայաններում:

4. Լեռնաշիմիական ԷԱՇ, գլխավոր օգակներն են քիմիական հանքային հումքի՝ ծծմբահրաքարի, ծծմբի, ապատիտների, ֆոսֆորիտների, աղերի, քիմիապես մաքուր կրաքարի արդյունահանումը, հարստացումը, ծծմբաթթվի, հանքային պարարտանյութերի, սողայի, կալցիումի կարբիդի և մի շարք բարդ քիմիական պրոդուկտների ստացումը:

5. Հազվագյուտ մետաղային-քիմիական ԷԱՇ՝ հազվագյուտ մետաղների արդյունահանում, հարստացում, քիմիական բարդ վերամշակում, ատոմային վառելիքի և ատոմային արդյունաբերության այլ պրո-

դուկտների ստացում, ատոմային էլեկտրաէներգետիկա:

6. Գազանավթարդյունաբերական էԱՆ: Սա ամենաբարդ ճյուղավորում ունեցող և բազմափուլ արտադրական պրոցեսների մի շղթա է, որն ընդգրկում է նավթի, ուղեկցող գազերի և բնական գազի արդյունահանումը, դրանց թորումն ու քիմիական մշակումը, բնական գազի ու մազութի օգտագործումը շերմաէլեկտրակայաններում և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

7. Բնական շինարարական նյութերի (ըստ Սառչկինի՝ սիլիկատների) էԱՆ-ը ընդգրկում է սիլիցիումային ու կալցիումական միացությունների արդյունահանման ու մշակման վրա հիմնվող արտադրությունների շղթաները՝ սկսած աղյուսից, խեցեգործական իրերից, մածող նյութերից (ցեմենտ, կիր, գիպս), վերջացած ապակու, հախճապակու, ճենապակու արտադրությունով։ Այս շղթայի մեջ են մտնում նաև բնական քարի (հրաբխային տուֆերի, գրանիտի, բազալտի, մարմարի) և լցանյութերի (պերլիտի, պեմզայի) արդյունահանումն ու մշակումը, քարի ձուլումը (պետրալուրգիա) և հրակայուն ու թթվակայուն նյութերի ստացումը։

8. Հիդրօտեխնիկական էԱՆ: Սա հիմնվում է հիդրոէներգետիկ, ոռոգչական, տրանսպորտային, արդյունաբերական, կոմունալ-կենցաղային նպատակներով մակերեսային ու ստորերկրյա շրերի օգտագործման վրա։ Սրան է վերաբերում նաև օգտագործվող ջրային ռեսուրսների մաքրումը։

9. Հիդրօբերմիկ էԱՆ. Հիմնվում է երկրի ընդերքի խորքային բնական գոլորշիների և տաք շրերի օգտագործման վրա (հիդրոթերմիկ էլեկտրակայաններ, կոմունալ-կենցաղային, շերմոցային ու կուրորտային նպատակների, հանքային շրերի լցման և որոշ քիմիական արտադրությունների համար):

10. Անտառարդյունաբերական էԱՆ: Սրա համար ելանյութ է հանդիսանում անտառափայտը, որի մշակման արտադրական ստանդարտն են՝ անտառի հատումը, փայտանյութի դուրս բերումը, փայտասղոցումը, փայտանյութի մեխանիկական վերամշակումը, քիմիական վերամշակումը, բազմապիսի արտադրատեսակների ստացումը (կահույք, փայտապիրտ, ցելլոզոզ, թուղթ, կերային դրոժներ և այլն):

11. Ագրարդյունաբերական էԱՆ-ների խումբ. Ընդգրկում է գյուղատնտեսական բազմապիսի հումքի արտադրությունը և նրա արտադրանքը վերամշակող սննդի ու թեթև արդյունաբերությունը։ Այս խմբի մեջ պետք է մտցնել նաև բնության վնասաբեր երևույթների՝ հողի էռողիայի, երաշտի, կարկտահարության, բույսերի վնասատուների դեմ մղվող պայքարը, որը գնալով արդյունաբերական բնույթ է ստանում։

12. Օվկիանոսային ԷԱՇ-ՆԵՐԻ խումբ. սրա առանձնացման հիմքում ընկած է Համաշխարհային օվկիանոսի մեկ անբաժան ամբողջություն լինելու հանգամանքը, ինչպես նաև նրա ռեսուրսների կորզման ինքնատիպությունը: Խմբի գլխավոր շղթաներից մեկը հենվում է Համաշխարհային օվկիանոսի կենսաբանական ռեսուրսների օգտագործման վրա՝ սկսած ծովային գազաններից ու ձկներից, վերշացրած զրիմուռներով:

Մյուս կարևոր շղթան կապվում է ծովային շելֆի հանքային հանածոների արդյունահանման, իսկ ապագայում նաև ծովային զրի մեջ լուծված հանքային տարրերի կորզման հետ:

13. Թազմատարր ԷԱՇ-ՆԵՐԻ խումբ: Սա հենվում է ոչ թե բնական ռեսուրսների, հումքի մեկ կոնկրետ տեսակի մշակման, այլ տարրեր ԷԱՇ-ՆԵՐԻ արտադրած պրոդուկտների համատեղ օգտագործման վրա: Դրանք են՝ մետաղները, սինթետիկ նյութերը, սիլիցիումային ու կալցիումային միացությունները, օրգանական ծագման նյութերը: Այս խումբը իր մեջ ընդգրկում է ժամանակակից բարդ մեքենաների (նավեր, ավտոմոբիլներ, էլեկտրատեխնիկական մեքենաներ, տարրեր բնույթի արդյունաբերական սարքավորում) ու սարքերի (այդ թվում էլեկտրոնային), ինչպես նաև բնական ու արհեստական նյութերի խառնուրդից առաջնային ապրանքների (թելերի ու գործվածքեղենի, կոշկեղենի ու հագուստեղենի, կենցաղային և արդյունաբերական օգտագործման իրերի) արտադրությունը:

14. Կենսաֆիմիական ԷԱՇ-ՆԵՐԻ խումբ, որի հիմքում ընկած են միկրոօրգանիզմների օգնությամբ քիմիապես մաքուր տարրերի ու դրանց միացությունների արհեստական աճեցումը կամ կորզումը (անասնակերպարաֆինային նավթից ու նավթամթերքներից, գունավոր ու հազվագյուտ մետաղների կորզում մետալուրգիական թափոններից ու ծովի զրից և այլն):

Ինչպես բխում է ԷԱՇ-ՆԵՐԻ նույնիսկ համառոտ նկարագրությունից, դրանցից յուրաքանչյուրը ծագում ու ձեւվորվում է որոշակի բնական հիմքի վրա, օգուագործելով որոշակի բնական ռեսուրս: Իսկ քանի որ բնական ռեսուրսների ու պայմանների զուգորդումները ամեն մի որոշակի տարածքում ինքնատիպ են, դրանց օգտագործման շնորհիվ ձեւվորվող ԷԱՇ-ՆԵՐԸ իրենց մանրամասնություններում ունեն յուրահատկություններ, շնայած որ ընդհանուր գծերով և զարգացման օրինաշափություններով նրանք ամենուրեք միատեսակ են:

Սովետական Հայաստանի տեղական բնական ու տնտեսական պայմանների առանձնահատկությունների ազդեցության տակ ձեւվորվել են բազականին մեծ թվով էներգաբարտադրական շղթաներ, որոնց ամբողջությունը էլ հենց կազմում է Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համակարգ: Դրանք զարգացման (ավարտվածության) տար-

բեր աստիճանի վրա են գտնվում և տարածքային-արտադրական համալիրի կառուցվածքում տարրեր դեր են կատարում:

Հատկանշական է, որ ընդհանրապես գոյություն ունեցող 14 էԱՇ-ներից Հայկական ՍՍՀ-ում առկա են 12-ը: Գործնականում բացակայում են պինդ վառելիքի էԱՇ-ը (տեղական նպատակների համար արդյունահանվող չնշին բանակության տորփը էական նշանակություն չունի) և սև մետաղների էԱՇ-ը, թեպետև ապագայում նրա երկան գալու նշանները ակնհայտ են:

Հայկական ՍՍՀ-ի 12 էԱՇ-ներից 10-ը արդեն ստեղծել են ավելի կամ պակաս երկարության ու ճյուղավորվածության շղթաներ: Մնացած 2-ը դեռևս ներկայացված են արտադրության մեկ-երկու ստադիաներով:

Արտադրական շղթայի բազմափուլ բնույթով, հետեւապես և զարգացման առավել բարձր մակարդակով աշքի ընկնող էԱՇ-ներից է գունավոր մետաղների էԱՇ-ը:

Ինչպես տեսանք օգտակար հանածոների բաժնից, Հայկական ՍՍՀ-ում այս արտադրական շղթայի զարգացման բնական բազան բավականին լայն է (պղինձ, մոլիբդեն, ալյումին, բազմամետաղներ, ազնիվ մետաղներ): Սակայն մոլիբդենի, ազնիվ մետաղների ու բազմամետաղների արտադրական շղթաները ընդհատվում են արտադրական երկրորդ ստադիայով՝ հանքաբարի հարստացմամբ (ֆլուտացիայով): Հաջորդ ստադիաները շարունակվում են հանրապետության սահմաններից դուրս: Պղնձից սկսվող արտադրական շղթան հասնում է մինչև վերջ, այսինքն մինչև պղնձի գտումը (ուաֆինացումը) և գլանվածքի ստացումը:

Ավելին, հիմնական տեխնոլոգիական շղթան ստեղծել է բարդ ճյուղավորումներ, որոնք հիմնվում են հանքանյութի կոմպլեքսացիին մշակման և թափոնների մի մասի արտադրական օգտագործման վրա (ծծմբաթթու, պղնձարշասպ և այլ նյութեր):

Ինչ վերաբերում է այլումինի ստացման տեխնոլոգիական շղթային, ապա այն ներկայացված է միայն վերին օղակներով (գլանվածքի և փայլաթիթեղի արտադրություն), հումքի արդյունահանումը, հարստացումը և էլեկտրազտումն միջոցով առաջնային ալյումինի ստացումը հանրապետությունում բացակայում է:

Զարգացման բարձր մակարդակի է հասել բնական շինարարական նյութերի (սիլիկատների) էԱՇ-ը: Տիշտ է, բնական շինանյութերի մի մասի արտադրության պրոցեսը սահմանափակվում է միայն մեկ՝ արդյունահանման ստադիայով, բայց կան մի քանի տեսակներ (կրաքար, պեմզա, պեղիտ), որոնք ենթակա են արդյունաբերական վերամշակման և մինչև պատրաստի արտադրանք դառնալը մի քանի ստադիա են անցնում: Առավել երկար շղթա առաջացրել է կրաքարը: Սկիզբ առնելով արդյունահանումից ու նախապատրաստումից, այն ավարտվում է ցեմենտի,

բետոնի, պատրաստի երկաթրետոնյա և շինարարական այլ իրերի արտադրությունով։ Լավ հնարավորություններ կան ապագայում մետաղներին փոխարինող կոնստրուկցիոն նյութերի արտադրության կազմակերպման համար։

Լեռնաքիմիական ԷԱՆ-ի բնական բազան համեմատաբար սահմանափակ է. այստեղ բացակայում են մասնավորապես հանքային պարարտանյութերի (ֆոսֆորական, կալիումական) ստացման հետ կապված արտադրությունները։ Սակայն ծծմբահրաքարային պղնձահանքանյութերի (Ալավերդու և Ղափանի հանքավայրերի), տրավերտինների և կերակրաղի արդյունաբերական մշակման ստաղիանները բավականին երկար շղթա են ստեղծել, որը էական դեր է խաղում հանրապետության տարածքային-արտադրական համալիրի կառուցվածքում։

Առավել հասուն ու ամբողջական շղթաների թվին է պատկանում ճիղրոտեխնիկական ԷԱՆ-ը, որի բոլոր ճյուղավորումներն ու ստաղիանները Հայկական ՍՍՀ-ում առկա են, բացի զրային տրանսպորտից։ Սա մյուս ԷԱՆ-ների մեջ թափանցելու մեծ ուժնի, որի շնորհիվ էլ գառնում է տարածքային-արտադրական համալիրի տարրեր բաղադրամասերը միմյանց կապակցող կարևոր օղակ։

Չնայած հումքային բազայի թուլությանը և արտադրության փոքր ծավալին, ինչնուրույն շլքա է առաջացրել անտառադրյունաբերությանը՝ սկսած անտառահատումից մինչև կահույքի, փայտե պատրաստի մասերի և թղթի արտադրությունը։ Այս շղթայում բացակայում է անտառաքիմիան, որն ապագայում էլ դժվար թե ստեղծվի։

Հիդրօքսիլ ԷԱՆ-ի գարգացման հնարավորությունները նույնպես սահմանափակ են։ Առայժմ նա հիմնվում է հանքային շրերի լցարկման, ինչպես նաև կուրորտային նպատակով օգտագործելու վրա։ Ծղթայի նոր ճյուղերի ստեղծման (մասնավորապես հիդրօքսիլ էլեկտրակայանների) հնարավորությունը բացակայում է։

Գազանավթարդյունաբերական ԷԱՆ-ը Հայկական ՍՍՀ-ում ներկայացված է արտադրության միայն վերջին ստաղիաններով և բնական գազի քիմիական վերամշակումով (ացետիլենի, բուտադիենի և դրանց ածանցյալների ստացում) և մազութով ու բնական գազով աշխատող ջերմաէլեկտրակայաններով։ Հանրապետության, մասնավորապես ծրեվան քաղաքի էկոլոգիական իրադրության բարելավման շահերը պահանջում են բնական գազի քիմիական վերամշակման որոշ արտադրությունների սահմանափակում, իսկ մյուսների փակում։

Հայկական ՍՍՀ համար երիտասարդ շղթա է հազվագյուտ մետաղային-ժիմիական ԷԱՆ-ը։ Մրա հեռանկարները կապվում են Հայկական ատոմային էլեկտրակայանի հետ։ Նրա աշխատանքի դադարեցումով կվերանա և ԷԱՆ-ը։

Էներգաարտադրական շղթաների 4 խմբերից Հայկական ՍՍՀ-ում զարգացման բարձր մակարդակի վրա են գտնվում երկուսը՝ ագրոազգյունաբերականը և բազմատարրը:

Հանրապետության բազմազան բնական պայմաններին և գյուղատնտեսության կառուցվածքին համապատասխան՝ բազմաճյուղ բնույթունի ագրոարդյունաբերական էլլ՛-ների խումբը: Սա իր մեջ ընդգրկում է երկրագործության և անասնապահության ճյուղերի մեծ մասը և դրանց արտադրանքը մշակող արդյունաբերությունը: Այս խմբի արտադրական շղթաները սովորաբար կարմ, բայց բազմազան են: Օրինակ, ինքնուրույն շղթաներ են կազմում շաքարի ճակնդեղի-շաքարի-լիմոնաթթվի-հրուշակեղենի արտադրությունը, ծխախոտի մշակությունը-ֆերմենտացիան-սիգարետների արտադրությունը, խաղողագործությունը-հյութերի-գինուկոնյակի արտադրությունը, անասնապահությունը-մսի-երշիկեղենի-պահածոների արտադրությունը, անասնապահությունը-կաթի-պանրի-յուղի արտադրությունը և այլ շղթաներ:

Ագրոարդյունաբերական բոլոր շղթաներն էլ Հայկական ՍՍՀ սահմաններում հասնում են իրենց ավարտական ստադիային, բացառությամբ ոչխարաբուժաւթյան-բրդի արտադրության-տեքստիլ արդյունաբերության (բրդի լվացումն ու մշակումը կատարվում է ՍՍՀՄ այլ շըրշաններում):

Իիստ ճյուղավորված տեսք ունի բազմաթարր էլլ՛-ների խումբը: Հայկական ՍՍՀ-ում այս խմբի զարգացման պայմանները բարենպաստ են: Առաջին հերթին պետք է ընդգծել բազմապիսի բնական ու արհեստական նյութերի առկայությունը, որոնք արտադրվում են մի շարք այլ, վերը քննացրկված արտադրական շղթաներում: Էական հանգամանք է նաև այն, որ այս խմբի էլլ՛-ների մեջ միավորվում են միայն մշակող արտադրությունները (ոչ արդյունահանող), որոնք մեծ մասամբ աշխատատար են և հարում են աշխատանքային ոխուրաներով հարուստ շըրշաններին: Այդպիսի շրջան է նաև Հայկական ՍՍՀ:

Մեր հանրապետության կոնկրետ պայմաններում բազմատարր էլլ՛-ների ձևավորմանը ակտիվորեն մասնակցում են տեղում արտադրվող գունագոր մետաղները, ռետինատեխնիկական իրերը, արհեստական սուսինձններն ու խեթերը, պլաստմասսաները, ապակե թելն ու ապակե պլաստիկները, ացետատային մետաքսն ու բնական թելերը, քիմիական ներկերն ու արհեստական տեխնիկական քարերը, օրգանական սինթեզի պրոդուկտները և բազմաթիվ այլ արտադրատեսակներ: Այս բոլորի բազայի վրա, լայնօրեն օգտագործելով նաև ՍՍՀՄ մյուս հանրապետությունների հետ ունեցած արտադրական կապերը, ձևավորվել է բազմատարր արտադրական շղթաների մի խիտ ցանց, որը հազարավոր թելերով առնչվում է մյուս գրեթե բոլոր էլլ՛-ների հետ և ավելի ամրապն-

դում դրանց միավորումը մեկ ամբողջական տարածքային-արտադրական համալիրի մեջ:

Մնացած 2 էներգաարտադրական շղթաները, ինչպես արդեն ասվեց, առայժմ ներկայացված են մեկ-երկու ստադիաներով կամ աննշան ճյուղավորումներով: Զնշին է նաև դրանց արտադրանքի ծավալը: Դրանք են օվկիանոսային էԱԾ-ների և կենսաքիմիական էԱԾ-ների խմբը 0վկիանոսային էԱԾ-ների խմբին է պատկանում ձկնորսությունը, որը զարգանում է մի քանի լճերում ու լճակներում, շի ստեղծում արտադրությունների շղթան և ունի տեղական նշանակություն: Կենսաքիմիական էԱԾ-ների խումբը ներկայացված է նավթարդյունաբերության պարագինային մնացորդների վերամշակման վրա հիմնվող լիգինի, ինչպես նաև կենսաբանորեն ակտիվ որոշ միացությունների արտադրություններով: Սույն շղթան հումքային սեփական բազայից զուրկ է:

Նախադրյալներ կան այն բանի համար, որպեսզի ապագայում կենսաքիմիական էԱԾ-ների խումբը հարստանա մետաղային հանքանյութի կենսաքիմիական վերամշակման շղթայով: Միկրորդանիզմների օգնությամբ տարրեր մետաղների և քիմիապես մաքուր տարրերի արհեստական «աճեցումը» կարող է լայն հեռանկարներ բացել մասնավորապես գունավոր մետալուրգիայի մեծաքանակ թափոնների շահավետ օգտագործման համար:

Քննարկված էներգաարտադրական շղթաները ձևավորվելով տեղական բնական հիմքի վրա և տալով բազմազան պատրաստի արտադրանք, ընդգրկում են Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի ամբողջությունը: Դրանք համար կալով իրեն այդ համալիրի կառուցվածքային միավորներ, արտացոլում են նրա բոլոր էական առանձնահատկություններն ու զարգացման պրոբլեմները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁԽՆԵՐ

1. Ի՞նչ առավելություններ ունի տարածքային-արտադրական համալիրի ռառումնահիրության էներգաարտադրական ցիկլերի մեթոդը:

2. Թվարկեք և բնութագրեք Հայկական ՍՍՀ էներգաարտադրական ցիկլերը:

12.3.ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱՎԱՐ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐՈՒՅԵՇՆԵՐԸ

Հայկական ՍՍՀ միասնական տարածքային-արտադրական համալիրը որպես արտադրողական ուժերի տերիտորիալ կազմակերպման տիպուգիական միավոր աշքի է ընկնում որակական այն հատկանիշներով, որոնք ընդհանուր են տարածքային-արտադրական համալիրների համար

ընդհանրապես։ Միաժամանակ այն ունի որոշակիութեն ընդգծված անհատական գծեր ու զարգացման յուրահատուկ պրոբլեմներ, որոնք և տարբերում են նրան երկրի այլ տարածքային-արտադրական համալիրներից։

Ինչպես ամեն մի այլ տարածքային-արտադրական համալիրի, այնպես էլ Հայկական համալիրի անհատական, տարրերի գծերը ձևավորվել են գլխավորապես ֆիզիկաշխարհագրական և տնտեսաշխարհագրական տեղական գործոնների, ինչպես նաև մի շարք արտաքին պայմանների անմիջական ներգործության հետևանքով։

Հարցի համակողմանի հետազոտությունը ուսումնասիրողներիս բերել է այն եզրակացության, որ Հայկական ՍՍՀ ՏԱՀ-ի համար բնորոշ են հետեւյալ առանձնահատկությունները և դրանցից բխող զարգացման գիւավոր պրոբլեմները։

1. Արդյունաբերական արտադրության և կապիտալ շինարարության առաջատար դերը։ Ի տարրերություն երկրի արևելյան շրջանների շատ համալիրների, Հայկական ՍՍՀ համալիրը, ինչպես ասվեց վերևում, ստեղծվել է ոչ թե շուրջացված, «դատարկ» տեղում, այլ զարգացման երկար պատմություն ունեցող արտադրողական ուժերի բազայի վրա, դրանց վերակառուցման ու զարգացման միջոցով։ Այդ պատճառով էլ արդյունաբերությունն ու կապիտալ շինարարությունը առաջատար դիրքեր են գրավել ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար, կատարելով միաժամանակ երկրի նախկին տնտեսական-արտադրական կառուցվածքը բարեփոխող գլխավոր ազդակի դեր։

Սույն գրքի 4-րդ գլխից մեզ արդեն հայտնի է, որ Հայկական ՍՍՀ ընդհանրական հասարակական արդյունքի մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը նախապատերազմյան տարիներին արդեն հասավ 50 տոկոսի, իսկ վերջին տասնամյակում կազմում է 65—69 տոկոս։ Մեծ շափով ամեն է նաև շինարարության տեսակարար կշիռը, հասնելով 11—12 տոկոսի։ Սա նշանակում է, որ ներկայում արդյունաբերությունը և շինարարությունը արտադրում են հանրապետությունում ստեղծվող ընդ-

¹ Եթե ընդհանրապես, տարածքային-արտադրական համալիրների համար ընդհանուր հանդիսացող հատկանիշների բացահայտումը (արտադրողական ուժերի տարածական միասնականություն, ճյուղերի ու արտադրությունների փոխայժմանավորվածություն, միջնորդային ու ներճյուղային ռացիոնալ արտադրական կապեր և այլն) կարեռ է տվյալ տարածքում տարածքային-արտադրական համալիրի առկայությունը կամ բացակայությունը ապացուցելու համար, ապա համալիրի անհատական հատկանիշների, յուրահատկությունների բացահայտումն ու ուսումնասիրումն անհրաժեշտ են տվյալ կոնկրետ համալիրի զարգացման յուրահատուկ պրոբլեմները հառկանալու և դրանց գործնական լուծումը գանելու համար։

Հանրական արդյունքի շուրջ 80 տոկոսը, այսինքն քառապատիկ անգամ ավելի, քան ժողովրդական տնտեսության մնացած բոլոր ճյուղերը միասին վերցրած:

ՍՍՀՄ-ում արդյունաբերությունը տալիս է հասարակական ամբողջական արդյունքի շուրջ 61 տոկոսը, իսկ շինարարությունը՝ 10 տոկոսը, Սրանք որոշ շափով պակաս են Հայկական ՍՍՀ համապատասխան ցուցանիշներից: Հայկական ՍՍՀ-ի հետ համեմատած պակաս է նաև մյուս միութենական հանրապետությունների արդյունաբերության ցուցանիշը, բացառությամբ Ռուսաստանյան Ֆեներացիայի: Իսկ եթե համեմատությունը կատարենք ոչ թե ըստ հանրապետությունների, այլ տարածքային-արտադրական համալիրների, ապա Հայկական ՍՍՀ ակնհայտորեն կզիշի հին յուրացված շրջաններում ձևավորված և բացարձակ արդյունաբերական թերում ունեցող այնպիսի համալիրների, ինչպիսիք են, օրինակ, Դոնեցկ-Մերձդնեպրյան, Ուրալյան, ՀԱ.-արևմտյան շրջանները, Մոսկվայի ու Կեմրովոյի մարզերը: Այս տարածքները միաժամանակ շինարարության խոշոր կենտրոններ են:

Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրում արդյունաբերության արգի տիրապետող դիրքը ձեռք է բերվել հանրապետության ներքին ուսուրսների լայն օգտագործման, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների եղբայրական օգնության և վիթխարի ծավալների կապիտալ զինարարության շնորհիվ: Սովետական իշխանության անցած տարիների ընթացքում (1921—1987 թթ.) Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը գերազանցում է 30 մլրդ ո., որի գգալի մասը բաժին է ընկել արդյունաբերությանը: Ներկայումս արդյունաբերության զարգացման համար ծախսը վում է պետական և կոռուպերատիվ ձեռնարկությունների ու կազմակերպությունների (առանց կոլտնտեսությունների) տարեկան կապիտալ ներդրումների մեկ երրորդից ավելին:

Աշքի է ընկնում կապիտալ ներդրումների տարեկան ծավալի արագ աճը: Եթե առաջին հնգամյակում կապիտալ ներդրումների միջին տարեկան ծավալը ընդունենք 1, ապա 8-րդ հնգամյակի ընթացքում հավասարվել է շուրջ 60-ի, 10-րդում՝ 88-ի, 11-րդում՝ 109-ի: Այժմ մեկ տարվա ընթացքում ավելի շատ կապիտալ ներդրումներ են իրացվում (համարելի գներով), քան իրացվել են 1921—1955 թվականների ընթացքում, կամ գրեթե 1,5 անգամ ավելի, քան 6-րդ հնգամյակի տարիներին (1956—1960 թթ.):

Այդուհանդեմ, հետաքրքիր է նշել, որ եթե 1960-ական թվականների վերջին և 70-ական թվականների սկզբներին ընակլության մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումների ցուցանիշով Սովետական Հայաստանը որոշ շափով մոտեցավ ՍՍՀՄ միջին մակարդակին, ապա վերջին

տարինեղին այդ խզումը նորից մէժանում է. 1985 թ. ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցված բնակչության մեկ շնչի հաշվով կատարվել է շուրջ 650 հազ. ո. կապիտալ ներդրում, իսկ Հայկական ՍՍՀ-ում մոտավորապես 480 հազ. ո.:

Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի զարգացման բնական և տնտեսական պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետության տարածքային-արտադրական համալիրում արդյունաբերության և շինարարության տիրապետող դերը կպահպանվի նաև ապագայում: Բանն այն է, որ այնպիսի արմատական պրոբլեմներ, ինչպիսիք են բնական բազմազան ռեսուրսները հասարակական արտադրության ոլորտի մեջ ներգրավելը, աշխատունակ բնակչությանը աշխատանքով ապահովելը և ընդհանրապես տնտեսական զարգացման բավարար տեմպերի պահպանումը, հատկապես Հայկական ՍՍՀ կոնկրետ պայմաններում կարելի է իրականացնել առաջին հերթին արդյունաբերության և շինարարության գերադաս զարգացումով: Թեև հարկ է նկատի ունենալ կապիտալ շինարարության կառուցվածքում ներկայում կատարվող որակական փոփոխությունը, այն է՝ ավելի մեծ միջոցներ նոր օբյեկտների շինարարության փոխարեն հատկացվում են գործող ձեռնարկությունների վերակառուցման ու տեխնիկական վերազինման նպատակներին:

2. Հայկական ՍՍՀ տերիտորիալ-արտադրական համալիրի հաջորդառննահատկությունը դա հասարակական արտադրության մեջ բնական ռեսուրսների՝ բնական արտադրական ուժերի մասնակցության նամեմատարար մեծ քածինն է:

Արդեն նշվել է, որ հանրապետության տերիտորիալ-արտադրական համալիրի ձևավորման պատմական և սոցիալատնտեսական նախադրյալ-ների հետ միասին էական նշանակություն ունեն նաև բնական ռեսուրսների հարստությունն ու բազմազանությունը: Սակայն բնական, թեկուզ հարուստ և բազմազան, ռեսուրսների առկայությունը ինքնին դեռևս չենշանակում արտադրության կոմպլեքսային զարգացում կամ մասնագիտացում: Դրանց առկայությունը այդպիսի զարգացման լակ հնարակորություն է ստեղծում:

Հայկական ՍՍՀ սոցիալիստական արտադրահարաբերությունների հաստատումով կյանքի կոչվեցին այդ հնարավորությունները, հանրապետության բազմապիսի բնական հարստությունները ի սպաս դրվեցին արդիական հզոր ինդուստրիայի և հայկական տարածքային-արտադրական համալիրի արտադրական կմախքի ստեղծմանը:

Սոցիալիստական շինարարության սկզբնական տարիներին բնության օգտագործումը գնում էր ընդլայնական ուղղությամբ. ընդլայնվում էր արտադրության մեջ ներգրավող բնության տարրերի տեսականին ու

Քանակը՝ Բայց դրանց օգտագործումը մեծ մասամբ պարզունակ էր, «մակերեսային»։ Հետազում սկսեց ավելի մեծ տեղ գրավել բնության տարրերի օգտագործումը «ըստ խորության»։ Կազմակերպվեց արդյունաբերության բնական հումքի որոշ տեսակների ավելի խոր, կոմպլեքսային մշակումն ու վերամշակումը, բնական այդ ռեսուրսների ավելի ռացիոնալ օգտագործումը, հայտնվեցին նոր արտադրական ստադիաներ, նկատելիորեն երկարեցին բոլոր էԱՇ-ները։

Տվյալների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ անմիջականութեն բնությունից ստացվող պրոդուկտները և դրանց վերամշակման արգասիք հանդիսացող արտադրանքը Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքում ավելի մեծ բաժին ունեն, քան ընդհանուր առմամբ ՍՍՀՄ-ում, ինչպես և մի շարք տնտեսական շրջաններում ու միութենական հանրապետություններում։ Այդպիսին է վիճակը նաև բնակչության մեկ շնչին և տարածքի միավոր մակերեսին ընկնող այն նյութերի քանակով, որոնք անմիջապես կորզվում են բնությունից՝ արգյունաբերության կամ բնակչության կողմից օգտագործվելու նպատակով։

Հայկական ՍՍՀ-ի համար հատկանշական է նաև այն, որ արտադրության մեջ օգտագործվող բնութան պրոդուկտների ավելի քան 80 տոկոսը բաժին է ընկնում երկրի ընդերքի հարստություններին՝ մետաղային օգտակար հանածոներին, ինդուստրիալ ու թիմիական հանքային հումքին և հանքային շինարարական նյութերին, իսկ երկրագործության, շրային տնտեսության և անտառային տնտեսության արտադրանքին՝ մինչև 20 տոկոսը։ Մինչդեռ ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում պատկերն այլ է. այստեղ ամենամեծ բաժինն ունեն անտառային տնտեսությունը, երկրագործությունն ու ջրային տնտեսությունը, իսկ ընդերքի հարստություններից՝ հանքային վառելիքը։

Բազմագան ու հարուստ բնական ռեսուրսներն են, որ հիմք են ծառայում հանրապետության տարածքային-արտադրական համակերպագային արտադրությունների, մի շարք կենտրոնական էներգաարտադրական շղթաների համար։

Շատ կարևոր է նաև այն հանքամանքը, որ գլխավորապես բնական ռեսուրսների և դրանց արդյունաբերական մշակման շնորհիվ է մեծապես ընդարձակվել հանրապետության տերիտորիալ-արտադրական համակերպագային բազմագան արտադրությունների, մի շարք կենտրոնական էներգաարտադրական շղթաների համար։

Կարելի է ենթադրել, որ Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացման գլխավոր հեռանկարում տերիտորիալ-արտադրական համակերպագան առևէն

առանձնահատկությունը պահպանվելու է, քանի որ արտադրության ոլորտի մեջ բնական ռեսուրսների նոր տեսակներ ներգրավելու դեռևս չօգտագործված հնարավորությունները ահագին են, իրենց օգտագործմանն են սպասում, մասնավորապես, երկաթի, ուրիշ մետաղային հանքերի, ապատիտների, դոլոմիտների և մեծ թվով այլ բնական ռեսուրսների արդյունաբերական հարուստ պաշարները։ Ըստ որում, հնարավորություն կա թվարկված ռեսուրսներից յուրաքանչյուրի բազայի վրա ստեղծել արդյունաբերկան հզոր համալիր, որը սերտ կապերով կապված կլինի հանրապետության ժողովրդական տնտեսությանը։

Միաժամանակ, սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ նյութական արտադրության մեջ առաջնային բնական ռեսուրսների բաժինը չպետք է աճի քանակապես։ Զարգացման ինտենսիվ ուղղությունների արագ ծավալման, արտադրության տեխնիկական վերագինման ու նոր, առաջավոր տեխնոլոգիայի և կառավարման տնտեսական մեթոդների ներդրման շնորհիվ առաջին պլան է մղվում բնական հանքային ռեսուրսների ավելի խոր ու կոմպլեքսային արդյունաբերական վերամշակումը։ Դրանցից սկսվող արդյունաբերական տեխնոլոգիական շղթաները ավելի են երկարում ու տալիս նոր ճյուղավորումներ, այլ կերպ ասած, ավելի արագ են զարգանում արդյունաբերության «վերին հարկերը»։ Սույն պրոցեսը աներկրայորեն իր հետ բերում է առաջնային հումքի վերամշակման վերջնական արդյունքի հետագա հեռացում իր բնական վիճակից՝ առաջնային հումքից։ Միաժամանակ զարկ է տրվում ռեսուրսախնայող արտադրությունների զարգացմանը։

3. Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի էական տարրերի գծերից է զյուղատնտեսական արտադրության բնական հիմքի տարածական սահմանափակությունը։ Սա բացատրվում է ոչ միայն հանրապետության տարածքի փոքր չափերով, այլև այդ տարածքի ֆիզիկական հատկանիշներով, որոնք էլ ավելի են նեղացնում նրա գյուղատնտեսական օգտագործման հնարավորությունները (տես գլուխ 8)։

Դյուղատնտեսությունը, այնուհանդերձ, մնում է և մնալու է Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի գլխավոր բաղադրամասերից մեկը։ Հանրապետության շրջանների մեծ մասի համար նա տընտեսության առաջատար ճյուղի գեր է կատարում, անմիջական մասնակցություն ունենալով համալիրի արտադրական պրոֆիլի ձեւավորմանը, հատկապես այնպիսի արտադրատեսակների միջոցով, ինչպիսիք են խաղողը, մրգերը, բանջարեղենը, խորդենին, ծխախոտը, շաքարի ճակընդեղը։ Սրանց վրա էլ հենց նշանակալից շափով հիմնվում է ագրոարդյունաբերական էԱՇ-ի խումբը։

Հանրապետության տարածքային-արտադրական համալիրի ձեւագորման վրա զյուղատնտեսության ազդեցությունը արտահայտվում է ոչ

թե նրա արտադրանքի հանակով, որը այնքան էլ մեծ չէ (հանրապետության ընդհանրական հասարակական արդյունքի մեկ տասներորդը), այլ բազմանյուղ բնույթով և շրջանային մեծ տարբերություններով:

Իր բազմանյուղ բնույթի շնորհիվ է, որ գյուղատնտեսությունը լինելով բազա պարուղյունաբերական համալիրի համար, բազմաթիվ կապերի մեջ է մտել արդյունաբերության հետ, հումք մատակարարելով նրա մի շարք ենթաճյուղերին ու արտադրություններին (գինու-կոնյակի, պահածոների, կաշվի, մսի, պանրի, ծիխախոտի և այլ): Սրանով նա էական տեղ է գրավում հանրապետության ամբողջ տարածքային-արտադրական համալիրի արտադրական-ճյուղային կառուցվածքում:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության շրջանային մասնագիտացման տարրերություններին, ապա սրա շնորհիվ հարստացել ու զարգանում են հորիզոնական տնտեսական կապերը, որոնք նպաստում են տրնտեսության տերիտորիալ համախմբանը, այսինքն համալիրի շրջանային կառուցվածքի ամրապնդմանը:

Որևէ երեսով գնահատելիս կարենոր է պարզել նաև նրա զարգացման տեխնիկան ու հեռանկարը:

Հայկական ՍՍՀ տարածքի յուրացման հագարամյակներ առաջ սկըսած պրոցեսը հանգեցրել է մի այնպիսի վիճակի, երբ գյուղատնտեսության համար պիտանի գրեթե ամբողջ տարածությունը արդեն օգտագործվում է: Դոյություն ունեցող հաշվումների համաձայն, ինչպես արդեն ասվել է, առաջիկա տասնամյակների ընթացքում գյուղատնտեսական շրջանառության մեջ լրացուցիչ կարգով կարելի է ընդգրկել ընդամենը 100—150 հազ. հա հողատարածություն, այսինքն գյուղատնտեսության կողմից օգտագործվող տարածքը ավելացնել առավելագույնը 10 տոկոսով:

Այս փաստի աշխարհագրական նշանակությունը բավականին մեծ է: Սա մեզ հետաքրքրող առումով նշանակում է, որ գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվող արտադրողական ուժերի տարածական համակարգը գլխավոր հեռանկարում նկատելի արտաքին փոփոխություններ չի կրի, և այդ իմաստով էլ լուրջ ազդեցություն չի կարող ունենալ հանրապետության տարածքային-արտադրական համալիրի հետագա զարգացման ու կատարելագործման վրա: Դա, միաժամանակ: Նշանակում է, որ գյուղատնտեսական արտադրության զարգացման գըլխավոր ուղին նրա ինտենսիվացումն է, հողի՝ գյուղատնտեսության գըլխավոր արտադրամիջոցի ռացիոնալ օգտագործումը, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատքվության բարձրացումը:

Ինտենսիվ զարգացման ուղին գյուղատնտեսության տարածական հիմքը լրնդարձակելով հանդերձ, բերում է նրա ճյուղային և տարածական

կառուցվածքի բարելավմանը և համախառն արտադրանքի անընդհատ աճին: Այս հանգամանքը, իհարկե, Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի վրա ազդող մշտական գործոնի դեր է կատարելու, բայց, այնուամենայնիվ, որակական տեղաշարժերի պատճառ դառնալ չի կարող:

4. Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի առավել կարեոր առանձնահատկություններից է աշխատանքային ռեսուրսների քվաքանակի արագ աճը և արտադրության աշխատատար ենուղեցի գարգացման բարենպաստ պայմանների առկայությունը: Ինչպես տեսանք դասընթացի սկզբում (գլուխ 2-րդ), աշխատանքային ռեսուրսների տարեկան հավելաճը բավականին մեծ թիվ է կազմում: Դրան գումարվում են նաև աշխատանքային պրոցեսների մեքենայացման հետեւանքով, հատկապես գյուղատնտեսության մեջ ազատվող աշխատավոր ձեռքբերը:

Սա նշանակում է, որ յուրաքանչյուր տարի հանրապետության ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերում հարկավոր է բավականին մեծ թվով աշխատանքային տեղեր ստեղծել ազատ աշխատանքային ռեսուրսները հասարակական արտադրության ոլորտի մեջ ներգրավելու համար:

Նախկինում, մասնավորապես 1930—40-ական թվականներին, եթք տիրապետող էր այն կարծիքը, թե Հայկական ՍՍՀ հարուստ է էլեկտրաէներգետիկ ռեսուրսներով, գարկ էր տրվում էլեկտրատար արտադրություններին (Կիրովի անվան Երևանի սինթետիկ կառուչուկի գործարանը, Մյասնիկյանի անվան Կիրովականի քիմիական գործարանը, ալյումինի էլեկտրոլիզային արտադրությունը և այլն):

Հիսունական թվականներին արդեն ակնհայտ դարձավ, որ հանրապետությունը էլեկտրաէներգիայի պակաս է զգում, մյուս կողմից էլ աշխատանքային ռեսուրսների ռեզերվներ են գոյանում:

Նոր տնտեսական պայմաններում ընտրվեց նյութական արտադրության գարգացման այլ ուղղություն, այն է՝ ոչ էլեկտրատար, աշխատատար ճյուղերի ու արտադրությունների ստեղծումն ու ծավալումը: Սա էր այն գլխավոր տնտեսական նախադրյալը, որի վրա վերջին երկու երեք տասնամյակների ընթացքում արագացված տեմպերով զարգացն մեքենաշինության աշխատատար ճյուղերը՝ սարքաշինությունը, ռադիոէլեկտրոնիկան, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, ինչպես նաև տեքստիլ-տրիկոտաժի և կարի արտադրությունները, հարստացնելով արդյունաբերության «վերին հարկերը»:

Այսպիսով, եթե բնական ռեսուրսների, բնական արտադրողական ուժերի օգտագործումը նշանակում է առաջին հերթին բազային արտադրությունների՝ տարածքային-արտադրական համալիրի ողնաշարի

ստեղծում, ապա մեծ քանակով որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությունը պատճառ է դառնում մշակող արդյունաբերության աշխատատար նյութերի՝ «վերին հարկերի» արագացքած զարգացման, հետեապես և համալիրի արտադրական-նյուղային կառուցվածքի ամրապնդման ու հետագա հագեցման:

Հայկական ՍՍՀ ՏԱՀ-ի աշխատանքային ռեսուրսների հետ կապված սույն առանձնահատկությունը անմիջականորեն առնչվում է մի այնպիսի առաջնակարգ ժողովրդատնտեսական պրոբլեմների հետ, ինչպիսին է աշխատանքային ռեսուրսների օգտագործման շրջանային համամասնությունների կատարելագործումը և փոքր ու միջին քաղաքների առաջանցիկ զարգացումը:

Բանն այն է, որ հասարակական արտադրության մեջ լրնդգրկված աշխատանքային ռեսուրսները կենտրոնացված չեն մեկ-երկու կետում: Նրանք ցրված են հանրապետությունով մեկ՝ ըստ բնակավայրերի ցանցի, նկատելի կուտակումներ տալով հատկապես փոքր և միջին քաղաքներում ու խոշոր գյուղերում, որոնց թիվը, ինչպես գիտենք, բավականին մեծ է:

Ազատ աշխատանքային ռեսուրսների գգալի քանակության առկայությունը փոքր և միջին քաղաքներում ու խոշոր գյուղերում վերամշակվող արդյունաբերության ոլ շատ խոշոր ձեռնարկություններ ստեղծելու գորեղ գործոն է: Իսկ այդ բնակավայրերում արդյունաբերության զարգացումը, նոր ձեռնարկությունների կառուցումը նշանակում է տարածքային-արտադրական համալիրում նոր տարածական օղակների, տնտեսական-արտադրական կապերի նոր հանգուցակետերի ստեղծում, այլ կերպ ասած, այդ համալիրի տարածքային կառուցվածքի հետագա ամրապնդում և հագեցում:

5. Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի աշքի ընկնող առանձնահատկություններից է աշխատանքի ներքին տերիտորիալ բաժանման նամեմատաբար բարձր մակարդակը և այդ բաժանմուն ու աշխատանքի ուղիղունակ տարածական կազմակերպումն ապահովող լրացնապետական ոչ այնքան էլ նպաստավոր պայմանները:

Մինչ այժմ քննարկված առանձնահատկությունների վերջուժությունից ոգովար չէ եղարակացնել, որ Հայկական ՍՍՀ արտադրական համալիրի տարածական կառուցվածքը հանրապետության կոնկրետ պայմաններում ձևավորվել է երկու առաջատար ազգակների ներքո: Դրանք են՝ ա) բնական ռեսուրսների տեղաբաշխումը (հողակլիմայական, հանքային հումքի, ջրերի), և բ) բնակչության տարաբնակեցումն ու աշխատանքային ռեսուրսների տեղաբախշումը:

Առաջին ազգակը վճռական նշանակություն ունի գյուղատնտեսության (առավել ուժեղ՝ երկրագործության), լեռնահանքային, հիդրոէներ-

գետիկ և դրանց վրա հիմնվող արդյունաբերության ճյուղերի համար՝ ծրկրորդը պայմանավորում է վերամշակող արդյունաբերության ավելի սրարձր հարկերի տեղաբաշխումը:

Այսպիսով, Հայկական ՍՍՀ տարբեր կարգի բնական համալիրների՝ արտադրության բնական հիմքի, ինչպես նաև հասարակության գլխավոր արտադրողական ուժի՝ աշխատանքային ռեսուրսների տարածական մեծ տարբերությունները տարբեր շրջանների համար պայմանավորում են տարբեր արտադրական մասնագիտացում, կամ, այլ կերպ ասած, աշխատանքի տարածքային բաժանման առավել խորացում։ Այսօրյեկտիվ պրոցեսը, որը զեկավարվում ու կարգավորվում է սոցիալիստական պլանային տնտեսվարությամբ, այսօր արդեն բերել է մի վիճակի, որն աշքի է ընկնում աշխատանքի տարածքային բաժանման և ինտեգրացման բավականին բարձր մակարդակով։

Բայց մյուս կողմից, մակերևույթի լեռնային բնույթը, ռելիեֆի մակրո և մեզոձևերի դժվարամատչելիությունը օբյեկտիվ դժվարություններ են ստեղծում տրանսպորտային հաջորդակցության համար։ Մասնավորապես երկաթուղային ցանցի համեմատաբար թույլ զարգացումը խոշնդուռում է որոշ շրջանների արտադրական ավելի խոր մասնագիտացմանը և միջջրանային տնտեսական-արտադրական կապերի ավելի արագ զարգացմանը։

Ամփոփելով Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի գլխավոր առանձնահատկությունների վերլուծությունը, պետք է նշել, որ դրանք ուղղակիորեն առնչվում են հասարակական արտադրության ճյուղային-արտադրական և տարածական-շրջանային կառուցվածքի հետագա բարելավման, աշխատանքի տարածքային կազմակերպման հետագա կատարելագործման և ամբողջ արտադրության արդյունավետության անընդհատ բարձրացման պրոբլեմների հետ։ Այդ առանձնահատկություններն են, որ Հայկական ՍՍՀ կոնկրետ պայմաններում հիշյալ պրոբլեմների լուծման միջոցներ ու ուղիներ են թելադրում։ Այստեղից հետևում է, որ տարածքային-արտադրական համալիրի վերը քննարկված, ինչպես նաև այլ առանձնահատկությունների բազմակողմանի ռեսուրսնախրությունը և լավ իմացությունը ունեն ոչ միայն տեսական, ծանալողական, այլև գործնական, կոնստրուկտիվ նշանակություն, հատկապես ուժգույնալ տնտեսաշվարկի անցնելու ներկայիս պայմաններում։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱԽՈՒՆԵՐ

1. Թվարկեք և բնութագրեք Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի գլխավոր առանձնահատկությունները։
2. Առանձնացրեք և զնահատեք այդ համալիրի հետագա զարգացման ու կատարելագործման գլխավոր պրոբլեմները։
3. Փորձեցրեք բացահայտեք համալիրի կատարելագործման նշանակությունը ռեգուլար տնտեսաշվարկի անցնելու համար։

Գորգորդ մաս

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ՄԱՅԻՍԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ: ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՆԱԻԹԱԳԻՐԸ

ԳԼՈՒԽ 13. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ԷՌԻԹՅՈՒՆԸ,
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

13.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԵՏԱզՈՏՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԱՌՈՇՄԱՆ ՄԻՋՈՑ

Գիտական ճանաշության զարգացման բազմադարյան պատմությունը վկայում է, որ ամեն մի գիտութան համար ամենաէականն ու կարելողը ելակետային դրույթներն ու հասկացություններն են: Եթե, օրինակ, մաթեմատիկայի հիմքում ընկած է թվերի մասին հասկացությունը, ֆիզիկայի հիմքում՝ նյութի ու էներգիայի մասին հասկացությունը, կենսաբանության հիմքում՝ նախասկզբնական կենդանի նյութի՝ բջջի մասին ուսմունքը, ապա աշխարհագրության համար այդպիսին, ինչպես նշել է Ն. Կոլոսովսկին, «շրջանների մասին ուսմունքն է»:

Բայց եթե ֆիզիկաաշխարհագրական ցիկլի գիտությունները գործունեն բնական շրջանացման հետ, ապա սոցիալ-տնտեսական աշխարհագրությանը հետաքրքրում են սոցիալ-տնտեսական շրջանները, որոնք ձևավորվում ու զարգանում են սոցիալ-տնտեսական օրենքներով, հասարակության զարգացման ոլորտում:

Բնական շրջանացման առարկա կարող են ծառայել ինչպես աշխարհագրական թաղանթը ի մի վերցրած՝ նրա մեջ մտնող բոլոր բաղադրամասերով հանդերձ (ընդհանուր ֆիզիկաաշխարհագրական շրջանացում), այնպես էլ բնության առանձին տարրերը (կիմայական, ջրաբանական, գեոմորֆոլոգիական, բուսաբանական, Համաշխարհային օվկիանոսի շրջանացում և այլն):

Սոցիալ-տնտեսական շրջանացման¹ առարկա են ծառայում հասարակական երեսվթները, մասնավորապես հասարակական արտադրությունը, որը ամենասերտ փոխայմանավորվածության մեջ է գտնվում սոցիալական ոլորտի հետ։ Այն, ինչպես և նրա նյութական հիմքը հանդիսացող բնական ռեսուրսներն ու պայմանները, տեղից տեղ լուրջ փոփոխությունների են ենթարկվում։

Տարբերում են սոցիալ-տնտեսական շրջանացման երկու տեսակ՝ համատնտեսական և նյուղային։ Դասագրքի նախորդ բաժիններում մեր քննարկած արդյունաբերական ու գյուղատնտեսական շրջանները վերաբերում են ճյուղային շրջանացմանը։ Համատնտեսական շրջանացումը զոր ունի ոչ քե առանձին վերցրած նյութի, այլ նյութերի զուգորդումների, այլ կերպ ասած ժողովրդական տնտեսության հետ, դիտելով այն որպես մի ամբողջություն։

Սոցիալ-տնտեսական շրջանների ձևավորման օբյեկտիվ հիմքը աշխատանքի տերիտորիալ բաժանումն է, որը, ինչպես հայտնի է, աշխատանքի հասարակական բաժանման ձևերից մեկն է, այդ բաժանման տարածական դրսենորումը։

Երկրագնդի վրա բնական միջավայրի բազմազանության ու աշխատանքի տարածքային բաժանման շնորհիվ առկա են սոցիալ-տնտեսական երեսվթների տարածական մեծ տարբերություններ։ Սակայն այդ տարբերությունների բացահայտումը դեռևս տնտեսական շրջանացում չէ։ Որևէ երեսվթի տարածման արեալի որոշումը, տեղից տեղ նրա տարբերությունների բացահայտումը հայտնի է աշխարհագրական դիֆերենցում (տրոհում, զանազանում, առարածանում) անունով, որը չի կարելի շփոթել շրջանացման հետ։ Նշանացումը, ի տարբերություն դիֆերենցման, ամբողջի մեջ բացահայտում է փոխադարձորեն պայմանավորված բաղադրամասերը, որոնցից յուրաքանչյուրը նույնպես հարաբերական ամբողջություն է իրենից ներկայացնում։

Եթե աշխարհագրական դիֆերենցման ժամանակ ամեն մի մասը միատարր է և կապված է մյուսի հետ տարածականորեն՝ որպես հարեսնի, ապա շրջանացման միավորները՝ շրջանները ներքին միատարրություն չունեն։ Նրանց հատուկ է որոշակի տարածական կազմակերպվա-

¹ **Սոցիալ-տնտեսական շրջան և սոցիալ-տնտեսական շրջանացում տերմինները լայնորեն մտել են շրջանառության մեջ 70-ական թվականներից սկսած և ըստ էության փոխարինում են տնտեսական շրջան և տնտեսական շրջանացում տերմիններին։ Դա արտացոլում է այն իրողության, որ գնալով ավելի ակնհայտ է զառնում մեր տնտեսական պլանեների ու ծրագրերի սոցիալական ուղղվածությունը, տնտեսական հարցերի լուծման ժամանակ ավելի մեծ նշանակություն է աղյուս սոցիալական գործոնին, թեև ի սկզբան սովետական տնտեսական շրջանացումը ըստ էության ունեցել է նաև սոցիալական շրջանացման բավանդակության։**

ծուրյունը, ներքին կապերի առկայությունը: Խսկ հարևանների հետ նրա առնշուրյունը որոշված է արտաքին փոխադարձ կապերով: Դրանով էլ նենց շրջանը ձեռք է բերամ ամբողջի հատկություններ:

Այսպես, ուրեմն, եթե արեալի բնորոշ հատկանիշը ներքին միատարրուրյունն է, ապա շրջանինը՝ բազմատարրուրյունը, ներքին կապերը և հարաբերական ամբողջականությունը:

Շրջանները իրենք լինելով ներքին կառուցվածք ունեցող ամբողջություններ, ավելի խոշոր, բարձր կարգի ամբողջության բաղադրիչ մասեր են, որոնք պայմանավորում են միմյանց և գտնվում են սերտ կապերի ու առնչությունների մեջ:

Շրջանի ու շրջանացման տարրեր սահմանումներ են տրված:

Ներկայում առավել գիտական է համարվում և լայն տարածում ունի շրջանի հետևյալ սահմանումը «շրջանը մի տարածք է, որն իր ամփոփած տարրերի ամբողջությամբ տարբերվում է մյուս տարածքներից և ունի միասնություն, բաղադրիչ տարրերի փոխկապակցվածություն, ամբողջականություն, ընդումին այդ ամբողջականությունը տվյալ տարածքի զարգացման օբյեկտիվ պայմանն է և, միաժամանակ, օրինաշափ հետևանքը»¹:

Ինչ վերաբերում է շրջանացմանը, ապա պարզ է, որ դա շրջանների առանձնացումն է: Բայց դա ունի իր որոշակի բովանդակությունն ու մեթոդը, որոնք նույնպես մշակվում են գիտականորեն և ենթակա են անդրնայտ կատարելագործման: Շրջանացման ներկայում առավել ընդունելի սահմանումը տվել է Յու. Գ. Սաուչկինը: Ըստ նրա շրջանացումը «...օբյեկտիվություն ունեցող (բնության մեջ, մարդկանց տարբերակեցման մեջ ու կյանքում, տնտեսության մեջ) տերիտորիալ կառուցվածքը, կարգավորվածությունը, կազմակերպվածությունն ու հիերարխիկ ենթակարգությունը բացահայտելու և ուսումնասիրելու պրոցեսն է: Շրջանների առանձնացումը՝ դա ուղի է դեպի բնության, մարդկանց տարաբնակեցման ու տնտեսության մեջ երևույթների զարգությունների տերիտորիալ կազմակերպման կառավարումը»²:

¹ Э. Б. Алаев. Социально-экономическая география. Понятийно-терминологический словарь.—М.: Мысль, 1983, с. 67.

² Վլայլ սահմանումը «շրջանը» վերցնում է նեղ իմաստով, տարրերելով այն տարածքի տարաբնաման մյուս միավորներից՝ գոտիներից, զոնաներից, արեալներից, Գրականության մեջ (հատկապես ոչ մասնագիտական) «շրջանը» օգտագործվում է նաև լայն իմաստով, երբ դրա տակ հասկանում են որևէ տարածք, ավելի մեծ տարածքի ցանկացած մաս, անկախ դրա որակական հատկանիշներից ու առանձնացման սկզբունքներից:

² Ю. Г. Саушкин, История и методология географической науки (курс лекций). М.: изд.-во Московского университета, 1976, с. 147.

Այստեղ հարկ է հատուկ ուշադրության արժանացնել «հիերախիկ ենթակարգություն» հասկացությունը: Բանն այն է, որ ներքին կազմակերպվածություն ու ամբողջականություն ունեցող տարածքները, որոնք մենք կոչեցինք շրջան, լինում են տարբեր մեծության: Դրանք տարբեր են լինում նաև ըստ ներքին կազմակերպվածության, ամբողջականության և շրջանի մյուս հատկանիշների հասունության աստիճանի: Եվ ահա այդ տարբերությունների հաշվառմամբ էլ առանձնացնում են տարբեր կարգի շրջաններ (օրինակ՝ մակրոշրջաններ, մեզոշրջաններ, միկրոշրջաններ), այսինքն բացահայտվում և ուսումնասիրվում է շրջանների հիերարխիկ ենթակարգությունը:

Սովետական տնտեսական շրջանացման կարևոր դրույթներից է այն, որ տնտեսական շրջանները օբյեկտիվ իրողարյուն են, դրանք գոյություն ունեն մարդկանց գիտակցությունից անկախ: Գիտության խնդիրն է բացահայտել ու սահմանագծել այդ շրջանները, ուսումնասիրել դրանց զարգացման օրենքներն ու օրինաշափությունները և դրանով իսկ հնարավոր դարձնել զարգացման կառավարումը:

Սա հակադրվում է աշխարհագրության իդեալիստական տեսության կողմից տարածվող այն կոնցեպցիային, ըստ որի ինքը՝ շրջանը վիճակագրական կամ քարտեզագրական ֆորմալ կատեգորիա է, իսկ շրջանացման պրոցեսը՝ ոչ այլ ինչ, քան տարբեր ցուցանիշների կամ դրանց խմբերի առանձնացումը քարտեզի վրա, կոնտուրների գծագրումը¹:

Հիմնարար նշանակություն ունի այն դրույթի ընդունումը, որ տընտեսական շրջանացումը, ելենելով շրջանների օբյեկտիվ գոյության փաստից, միաժամանակ պետք է ըստ ամենայնի հաշվի առնի հասարակական արտադրության զարգացման տենդենցներն ու կոնկրետ նեռանկարները, միշտ նպատակամված լինի դեպի ապագան: Դա է, որ ապահովում է սովետական շրջանացման կարևոր հատկանիշներից մեկը՝ «օբյեկտիվ-նախադրյալային» և «դիրեկտիվային-նեռանկարային» մոտեցումների գուգակցումը:

Կարենոր է ընդգծել նաև հետևյալը. շրջանացման յուրաքանչյուր կոնկրետ սխեմա կամ տարսոնոմիական համակարգ ունի որոշակի պայմանականություն և լրիվ շափով նույնական չէ հասարակության ձևավորված տարածքային կառուցվածքի հետ, ճիշտ այնպես, ինչպես ամեն մի մոդել չի կարող նույնական լինել մոդելավորված երևույթի, օբյեկտի հետ:

¹ Տնտեսական շրջանների օբյեկտիվ գոյության ընդունումը շպետք է շփոթել օբյեկտիվիստական մոտեցման հետ, որը ընդունելով շրջանների օբյեկտիվ գոյությունը, միաժամանակ բացառում է դրանց զարգացման ուղղությունների ու տեմպերի կարգավորման, դրանց կառավարման հնարավորությունը:

Տնտեսական շրջանացումը որպես գիտական ուղղություն համեմատաբար կարճաժամկե պատմություն ունի: Նա ձևավորվել է Ռուսաստանում և կապված է կայսրության տարածքի աշխարհագրական հետազոտությունների աշխուժացման հետ:

Շրջանացման առաջին տարրերը հանդես են եկել դեռևս 18-րդ դարում և 19-րդ դարի սկզբներին Վ. Ն. Տատիշչյի, Վ. Ն. Լոմոնոսովի և Հատկապես Կ. Ի. Արսենևի աշխատություններում: Սակայն շրջանացման տեսության գիտական մշակման առաջին փորձերը պատկանում են ուսու հեղափոխական-դեմոկրատ Ն. Պ. Օգարեկին (1813—1876 թթ.):¹ Նա էր, որ առաջին անգամ շարադրեց շրջանացման գիտական դրույթները և հայտնեց շրջանի օբյեկտիվ գոյության միտքը: Օգարյովը շրջանը դիտում էր զարգացման մեջ, դիմամիկայում, ոչ միայն վերլուծելով նրա անցյալն ու ներկան, այլև քննարկելով հեռանկարը, ապագան:

Տնտեսական շրջանացման տեսության մեջ էական ավանդ մուժեց ուսու հայտնի աշխարհագետ, բնախույզ Պ. Պ. Սեմյոնով-Տյանշանսկին (1827—1914 թթ.): Անցած դարի վերջին քառորդում նրա կատարած Ռուսաստանի շրջանացումը հենվում էր տնտեսական հատկանիշների և մասամբ էլ ազգային մոմենտի հաշվառման վրա: Այդ աշխատանքը մանրամասնորեն կոնսպեկտավորել է Կ. Մարքսը և բարձր է գնահատել Վ. Ի. Լենինը: Սեմյոնով-Տյանշանսկու սխեմայով Ռուսաստանը բաժանվում էր 19 տնտեսական շրջանների: Յուրաքանչյուր շրջանի ներսում առանձնացված էին տնտեսական ենթաշրջաններ: «Սեմյոնովյան» շրջանացումը երկար ժամանակ լայն կիրառություն ուներ և խոր հետք է թողել հետագա գիտական հետազոտությունների վրա:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում հոլակավոր քիմիկոս, Ռուսաստանի բնական ռեսուրսների և տնտեսության խոշոր գիտակ Գ. Ի. Մենդելեևի շրջանացումը, որը նա կատարեց առաջին հերթին նկատի ունենալով Ռուսաստանի ինդուստրացման, տարրեր շրջանների բնական ռեսուրսները արդյունաբերական օգտագործման ոլորտի մեջ ներգրավելու շահերը: Այստեղ առաջին անգամ շրջանների զարգացման հեռանկարը գնահատելու փորձ է կատարվում:

19-րդ դարի վերջերին Վ. Ի. Լենինի շնորհիվ սկսվում է տնտեսական շրջանացման նոր՝ մարքսիստական փուլը: Լենինը հսկայական նշանակություն տալով և լայնորեն օգտագործելով սոցիալ-տնտեսական երկույթների շրջանային վերլուծության մեթոդը, զարգացնելով Մարքսի

¹ Ռուսաստանի և Սովետական Միության տնտեսական շրջանացմանը նվիրված աշխատանքների մանրամասն պատմական վերլուծությունը տվել է Ի. Ի. Բելուսովը «Основы учения об экономическом районировании» — М., 1976. մենագրության մեջ:

գրությթները աշխատանքի տերիտորիալ բաժանման մասին, առաջին անգամ մարքսիստական ուսմունքը ստեղծագործում միացրեց Ռուսաստանում ձևավորված տնտեսական շրջանացման մասին ուսմունքի հետ Նա շրջանացման տեսությանը հաղորդեց գիտական հիմնավորվածություն։ Լենինն էր, որ մարքսիստական գիտական գրականության մեջ ներդրեց «շրջան» հասկացությունը։

Շրջանացումը գիտության մեջ և պրակտիկայում հատկապես Հռկամբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո դարձավ երկությների տարածական վերլուծության և տնտեսական կյանքի կազմակերպման ու կառավարման կարևորագույն միջոց։

Երկրի էկոնոմիկայի սոցիալիստական վերափոխման հենց առաջին միջոցառումների հիմքում, սկսած ԳՈԷԼՌՈ-ի պլանի մշակումից (1920 թ.), դրվեց շրջանային մոտեցումը։ Խակ Պետպլանը, որը հիմնադրվեց 1921 թ. ֆետրվարին, իր գործունեության սկզբից ևեթ ճյուղային պլանավորումը սերտորեն զուգակցեց տերիտորիալ պլանավորման հետ։ Պետպլանի ընդերքում էլ հենց մշակվեց Սովետական Ռուսաստանի առաջին համատնտեսական շրջանացման սխեման, որի համաձայն երկիրը բաժանվում էր 21 շրջանի։ Այդ բոլոր աշխատանքները շրջանացման մասին լենինյան գաղափարների իրագործումն էին կյանքում։

Տնտեսական շրջանացումը նոր աստիճանի բարձրացավ Կենտգործկոմի նախագահությանը կից՝ Մ. Ի. Կալինինի ղեկավարությամբ ստեղծված շրջանացման հանձնաժողովի աշխատանքներում։ 1922 թ. հանձնաժողովը ավարտեց երկրի շրջանացման թեզիսների մշակումը, որի հիմնական դրությները մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց գիտական ու կիրառական նշանակությունը։ Հանձնաժողովի մշակած և Վ. Ի. Լենինի հավանությանն արժանացած թեզիսներով շրջանացման և նրա հետապնդած նպատակներին տրվում է կարևոր պետական նշանակություն։ Այդ նպատակներն են։

ա) տնտեսական սկզբունքով երկիրը բաժանել շրջանների, այնպիսի «տնտեսական ավարտուն մասերին, որոնցից յուրաքանչյուրը շնորհիվ «...բնական առանձնահատկությունների, անցյալ ժամանակների կուլտուրական կուտակումների ու բնակչության... կոմբինացիայի ներկայանարարական ժողովրդական տնտեսության ընդհանուր շղթայի մի օղակ»։

բ) նպաստել ազգային ճարշի լուծմանը բոլոր ազգերի ու ազգությունների նյութական ու հոգևոր զարգացմանը օժանդակելու միջոցով։

գ) հիմք նախապատրաստել երկրի այնպիսի վարչատերիտորիալ բաժանման համար, որը ճամապատասխաներ կառավարման նոր սխտեմին և ապահովեր արտադրողական ուժերի արագ զարգացումը։

Տնտեսական շրջանացման տեսակայուն դրությները, որոնք հետագայում էլ անընդհատ զարգացել ու կատարելագործվել են առանձին գիտ-

նականների կողմից և հատկապես կուտակցական ու պետական փաստաթղթերում, դարձել են ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ ընդարձակ տարածքի և նրա տարրեր մասերի տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրության և հասարակական արտադրության տարածքային կազմակերպման, տնտեսության կառավարման միջոց։ Ըստ որում, ժամանակի ընթացքում, ինչքան ավելի հզորանում է երկրի միասնական ժողովրդատնտեսական համալիրը, ինչքան ավելի բարդանում են նրա տարածական կառուցվածքը և տնտեսական կապերը, այնքան ավելի աճում է տնտեսական շրջանացման գիտական ու գործնական նշանակությունը։

Դրա հետ մեկտեղ, սոցիալ-տնտեսական աշխարհագրության տեսական ու մեթոդական առաջընթացին համապատասխան, ավելի հասունացել ու կատարյալ է դարձել տնտեսական շրջանցման մասին տեսությունը։ Ներկայում և գիտական, և գործնական առումով թերի և սխալ կիներ տնտեսական շրջանացման հարցերը քննարկել անկախ տարածքացին-արտադրական համալիրների մասին տեսությունից։

Այդ տեսության հեղինակ Ն. Ն. Կոլոսովսկին սկզբից և եթ նկատել է այն կապը, որ գոյություն ունի տարածքային-արտադրական համալիրների և տնտեսական շրջանների միջև և և այն հարցին, թե ինչպիսին է այդ կապը, սպասիչ պատասխան տվել է Ն. Ն. Բարանսկին, նշելով, որ «Համալիրը որպես արտադրատարածքային զուգորդում՝ դա ամբողջ շրջան չէ (համալիրը չի փոխարինում տնտեսական շրջանի ավելի բարդ հասկացությանը և այն չի հայտարարում չեղյալ), բայց դա շղթայի հիմնական օղակն է (աշխարհագրական շրջանագոյացման պրոցեսի հիմքը), որից պետք է բռնել ամբողջ շղթան դուրս բաշելու համար»¹։

Այժմ ընդունված է համարվում այն կարծիքը, որ բոլոր կարգերի տնտեսական շրջանների ձևավորման հիմքը տարածքային-արտադրական համալիրներն են։ Հասկանալի է, որ ամեն մի կարգի տնտեսական շրջանին համապատասխանում է որոշակի կարգի (բարդության ու մեծության) տարածքային-արտադրական համալիր։

Աշխարհագրական գիտության վերջին հարյուրամյակի զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ շրջանացումը ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում ծառայում է որպես գիտական հետազոտության անփոխարինելի մերող։ Նրա միջոցով կատարվում է ամբողջի տրոնօւմը մասերի և այդ մասերի հետազոտումը։ Ապահովվում է մասի ավելի խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը, մի բան, որ անհնար է այդ մասերը միավորող ամբողջը հետազոտելու ժամանակ։ Մյուս կողմից, առանձին վերցրած մասերի ուսումնասիրությունը և դրանց համադրումն

¹ Н. Н. Баранский. Методика преподавания экономической географии.—М.: Географгиз, 1960, с. 160.

ու համեմատումը նպաստում է ամբողջը ճիշտ ճանաչելուն, ինչպես նաև ընդհանուր օրինաշափությունները բացահայտելուն։ Այս առումով շրջանացումը աշխարհագրական գիտությունների համակարգի համար կատարում է մասնավորապես այն դերը, ինչ պատմության համար պարբերացումը, շրջաբաժանումը։

Այսպիսով, աշխարհագրական ամեն մի օւսումնասիրություն իր տրամաբանական ավարտին է հասնում, եթե կատարվում է շրջանացում։ Ըստ որում, այդ շրջանացումը միաժամանակ կարող է սկիզբ դնել նոր բացահայտված շրջանի՝ ամրողի բաղադրիչ մասի ավելի խոր ու մանրազնին հետազոտությանը, որն իր հերթին դարձյալ պետք է ավարտվի մասի տրոհումով, շրջանի ավելի ցածր կարգի շրջանցումով։ Շրջանացումը որպես գիտական հետազոտության մեթոդ ունիվերսալ նշանակություն ունի ոչ միայն աշխարհագրության, այլև այն բոլոր գիտությունների համար, որոնք առնշկում են երկույթների տարածական փոփոխությունների և առանձնահատկութունների հետ, որոնց հետաքրքրում է ուսումնասիրության օբյեկտի ու առարկայի տարածական կառուցվածքը։ Սոցիալ-տնտեսական շրջանացումը, որպես շրջանացման տարատեսակ, տնտեսական աշխարհագրության մեթոդների համակարգում առաջնակարգ տեղ է գրավում։ Այն անփոխարինելի է որպես արտադրողական ուժերի տարածական կառուցվածքի բացահայտման ու նետազոտության, նաև աշխարհական արտադրության շրջանային տարբերությունների ու առանձնահատկությունների ճանաշման միջոց։ Նա է, որ էներգասարտադրական շղթաների (ցիկլերի) մեթոդի հետ միասին ապահովում է տրնտեսության տարածքայն համալիրների արդիական ուսումնասիրությունը, երկրների տարածական մասերի բնական, ժողովրդագրական և տրնտեսական պոտենցիալի բացահայտումն ու գնահատումը։

Տնտեսական շրջանացումն իր սույն դերով օգտագործվել է նախահեղափոխական Ռուսաստանում, իսկ ներկայումս լայն կիրառություն ունի ինչպես Սովետական Միությունում ու մյուս սոցիալիստական երկրներում, այնպես էլ նոր զարգացող ու կապիտալիստական երկրներում։

Սակայն սոցիալիստական երկրներում տնտեսական շրջանացումը ձեռք է բերում մի նոր՝ կոնստրուկտիվ նշանակություն ևս. գիտական նետազոտության մերոդից բացի նա հանդես է գալիս որպես արտադրության տարածական կառուցվածքի կատարելագործման մեթոդ։ Այս երկրորդ հատկանիշը դրսերզվում է համապետական պլանավորման պայմաններում, երբ տնտեսական շրջանացման միջոցով երկրի տարբեր տարածական մասերում իրականացվում է ժողովրդական տնտեսության ճյուղերի զարգացման կոորդինացումը։ Եթե հարցը ավելի կոնկրետացնենք, ապա դա կնշանակի, որ տնտեսական շրջանացումը ներկայումս հանդես է գալիս որպես նեռանկարային տերիտորիալ պլանավորման մերոդ։

Սոցիալիստական երկրներում տնտեսական շրջանացման այս երկակի բնույթի սպառիչ բնութագիրը տվել է սովետական ականավոր տնտեսաշխարհագետ Վ. Վ. Պոկշիշևսկին: «Շրջանացման հասկացությունը, — գրում է նա, — շատ տարողունակ է: Արտաքնապես այն ներկայանում է երկիրը տերիտորիալ մասերի՝ համալիրների տարաբաժանելու պրոցեսի տեսքով, որոնցից յուրաքանչյուրը ժողովրդական տընտեսության օղակ է հանդիսանում: Միաժամանակ շրջանացումը կարծեսթե այդ պրոցեսի արդյունքն է (շրջանների ցանցը): Բայց ըստ էության այդ հասկացության բովանդակությունը շատ ավելի խորն է: Նրա էությունը կազմում է նույնը ինքը՝ երկրի ամբողջ տարածական-տնտեսական բազմազանության ընկալման աշխարհագրական մեթոդը, որը նպատակամղված է տարածքային-արտադրական համալիրների բացահայտմանը, համալիրներ, որոնք դառնում են տնտեսության պլանավորման և կոնստրուկտիվ վերափոխման միավորներ»¹:

Այսպես ուրեմն, եթե ճյուղային մոտեցման ձամանակ ինքը՝ նյուղն է պլանավորման միավորը, որն առանձնացվում է ժողովրդական տնտեսության ճյուղերի պաշտոնապես ընդունված դասակարգման համաձայն, ապա տարածքային պլանավորման համար այդպիսի միավորներ են տնտեսական շրջանները, որոնք բացահայտվում են գիտության կողմից և հետազոտվում:

Տնտեսական շրջանացման այս կոնստրուկտիվ կողմի օգտագործումը տնտեսության սոցիալիստական պլանային սիստեմի անվիճելի առավելություններից մեկն է և ապահովում է արտադրության և ամբողջ հասարակության գիտական տարածքային կազմակերպումը, երկրի ժողովրդատնտեսական բարդ համալիրի պլանային գարգացման կարգավորումը և գիտականորեն հիմնավորված տարածական համամասնությունների հաստատումը: Այլ բան է, որ կառավարման վարչահրամայական համակարգի պայմաններում անհնար է եղել այս առավելության լիարժեք օգտագործումը: Տնտեսական ոեֆորմի իրականացման և ՍՍՀՄ Պետպրլանի ֆունկցիաների կատարելագործման շնորհիվ սոցիալ-տնտեսական շրջնացման երկրորդ՝ կոնստրուկտիվ նշանակությունը շատ ավելի է աճելու:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՁՆԵՐ

1. Վերլուծեք շրջան և շրջանացում հասկացությունները: Ինչ որակական տարրերություն կա շրջանի և արեալի միջև:

¹ В. В. Покшншевский, Узловые вопросы перспективного размещения производства.— В кн.: Географические проблемы развития крупных экономических районов СССР.— М.: Мысль, 1964, с. 11.

2. Ինչպես է ապահովվում սովետական սոցիալ-տնտեսական շրջանացման «օբյեկտիվ-նախադրյալային» և «դիրքեկտիվային-հեռանկարային» հատկանիշների զուգակցումը:

3. Ցույց տվեք, որ սոցիալ-տնտեսական շրջանացումը գիտական հետազոտության մեթոդից բացի կարող է հանդես գալ որպես հեռանկարային տարածքային պլանավորման մեթոդ:

13. 2. ՍԱՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՏԱՔՍՈՆՈՒՄԱԿԱՆ ՈՒ ՏԱՐԱԾՎԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀ ՏԵՂԸ ԴՐԱՆՑՈՒՄ

Սովետական Հայաստանի, ինչպես և մյուս բոլոր միութենական հանրապետությունների տեղը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ազգային-պետական կառուցվածքում որոշակի է: Այն վավերագրված է սահմանադրական կարգով: Հայկական ՍՍՀ-ն մեկն է 15 իրավահավասար հանրապետություններից, որոնց կամավոր միավորման հետևանքով կազմավորվել է ՍՍՀՄ-ը՝ միասնական միութենական բազմազգ պետությունը: Հայկական ՍՍՀ-ն որպես միութենական հանրապետություն «...սովետներն սովետական սոցիալիստական պետություն է, որը մյուս սովետական հանրապետությունների հետ միավորվել է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության...», սոցիալիստական ֆեդերալիզմի սկզբունքով կազմավորված պետության մեջ¹:

ՍՍՀՄ պետական-տերիտորիալ կառուցվածքը իրենից ներկայացնում է մի բարդ տոքսոնոմիական համակարգ, որտեղ ընդգրկված են բաղաքական (ազգային) տերիտորիալ միավորները (միութենական ու ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր, ինքնավար օկրուգներ) և վարչական տերիտորիալ միավորները (երկրամասերը, մարզերը, վարչական շրջանները և քաղաքային, ավանային ու գյուղական սովետներին ենթակա տարածքները): Միութենական հանրապետությունները, դրանց թվում և Սովետական Հայաստանը, այդ բազմաստիճան տաքսոնոմիկան սանդուղքում հանդես են գալիս որպես ամենաբարձր կարգի միավորներ: Մյուս միավորների ենթակարգությունն ու տեղը նույնպես իր հստակ սահմանադրական ձևակերպումն ունի:

Վիճակն այլ է Սովետական Միության տնտեսական շրջանացման տաքսոնոմիական համակարգի որոշման ու կարգավորման հարցում:

Շրջանացումը ընդհանրապես, նկատի ունենալով թե բնական, թե սոցիալ-տնտեսական շրջանացման տարատեսակները, ինչպես տեսաք նախորդ բաժնում, նպատակ ունի բացահայտել օբյեկտիվությունը ունեցող տարրեր մեծության ու բարդության, տարրեր կառուցվածքի ու

¹ Տես՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության (հիմնական օրենք), «Հայաստան», Երևան, 1977:

որակի տարածական զուգորդումները, ուսումնասիրել դրանք, կարգադասել հիերարխիկ հաջորդականությամբ և նպաստել նրանց կառավարմանը: Դա հիմնվում է այն իրողության վրա, որ շրջանացման յուրաքանչյուր օբյեկտ (հողեր, բուսականություն, կլիմա, մայր ցամաք, օվկիանոս, պետություն, բնակչություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն) ունի բազմազան, չափազանց բարդ, բայց որոշակի տարածական կառուցվածք, բաղադրիչ մասերի իր սեփական հիերարխիան, հետևապետ և շրջանացման իր ուրուլն տոքսոնոմիական համակարգը: Ըստ որում, ինչպես իր՝ շրջանի, այնպես էլ շրջանացման տաքսոնոմիական համակարգի ձևակորումը օբյեկտիվ, մարդկանց կամքից անկախ բնույթ ունի:

Երջանացման տախոնոմիական համակարգի բացահայտումը կապվում է ուսումնասիրվող օբյեկտի բազմակողմանի ու սպառիչ հետազոտության հետ և ունի մեթոդոլոգիական նշանակություն: Եթե շրջանը մենք դիտում ենք որպես տիպոլոգիական միավոր, որպես մի համակարգ, որը մի այլ՝ տաքսոնոմիական ավելի բարձր աստիճանի վրա գտնվող տարածական համակարգի բաղկացուցիչ մասն է և կազմված է ավելի փոքր, ստորին աստիճանի վրա գտնվող համակարգերից, ապա մեծ կարևորություն պետք է տանք այն հարցին, թե արդյոք արդեն ճանաչել ու ճիշտ ենք բցահայտել բարձր կարգի միավորը, որի մեջ ինքը՝ շըրջանը մտնում է, և ցածրակարգ միավորները, որոնցից այն բաղկացած է:

Այս հարցի ամեն մի ոչ ճիշտ լուծում կարող է ուսումնասիրվող օբյեկտի խեղաթյուրված պատկեր ստեղծել և հանգեցնել գիտական ու գործնական սխալ հետևությունների, հատկապես, եթե խոսքը վերաբերում է սոցիալտնտեսական երևույթների շրջանացմանը, որը անմիջականորեն կապված է պետական քաղաքականության հետ:

Չնայած նրան, որ ընդհանրապես շրջանացման տաքսոնոմիական համակարգի գիտատեսական ու գործնական կարենությունը գիտակցվում է բոլորի կողմից, այնուհանդերձ, այն շարունակում է մնալ աշխարհագրական թերմշակ ու վիճելի պրոբլեմների թվում:

Բացառություն չի կազմում նաև սոցիալ-տնտեսական շրջանացումը, որը գործ ունի շատ ավելի բարդ սոցիալտնտեսական գոյացությունների հետ, քան բնական համալիրներն են, որոնց ուսումնասիրությամբ ու շրջանացմամբ զբաղվում են բնական ցիկլի աշխարհագրական գիտությունները:

Դասընթացի նախորդ բաժիններում մենք տեսանք, որ Սովորական Հայաստանը այսօր իրենից ներկայացնում է միութենական նշանակության ամբողջական տարածքային-արտադրական համալիր, որը Սովետական Միության հզոր ժողովրդատնտեսական համալիրում կատարում է որոշակի, միայն իրեն հատուկ տնտեսական-արտադրական

Փունկցիաներ: Դա նշանակում է, որ նա տարրեր կարգի սոցիալ-տնտեսական համալիրների բարդ հիերարխիայում ունի իր կոնկրետ տեղը, որով և որոշվում է նրա արտաքին կապերի բնույթը:

Միաժամանակ, այդ կոնկրետ տեղը ելակետ է ծառայում նրա՝ որպես ամբողջական տնտեսական օրգանիզմի ներքին, կառուցվածքային միավորները, կապերն ու տարածական համամասնությունները ճշտորեն որոշելու ու ճանաչելու համար:

Ուսումնասիրության ամեն մի օբյեկտ, տվյալ դեպքում Սովետական Հայաստանի տնտեսական համալիրը, կարելի է դիտել, քննարկել «դրսից» կամ «ներսից»՝ կախված կոնկրետ նպատակից ու պահանջներից, և կամ էլ միաժամանակ: Այս վերջին դեպքում է, որ կարող է ապահովվել հետազոտության բազմակողմանիությունն ու ամբողջականությունը:

Եվ ահա, հետազոտությունը տաքսոնոմիական սանդղակի ավելի բարձր կարգի միավորների դիրքերից կատարելու դեպքում զննակետը գտնվում է հետազոտվող օբյեկտից դուրս, մինչդեռ ցածր կարգի միավորների՝ նույն այդ օբյեկտը կազմող բաղադրիչների միջոցով հետազոտությունը կատարելիս, զննակետը տեղափոխվում է օբյեկտի ներսը:

Սովետական Միության տնտեսական շրջանացման տաքսոնոմիական համակարգի մշակմանը լրացուցիչ բարդություն են հաղորդում հետևյալ հանգամանքները.

1) **ՍՍՀՄ** տնտեսական շրջանացման պաշտոնապես ընդունված սկզբ-բունքներով ազգային-պետական միավորների (այդ թվում նաև միութենական հանրապետությունների) սահմանները, որոնք անցկացվել են գլխավորապես էթնիկական սկզբունքներով, մնում են անձեռնմխելի, չի խախտվում այդ միավորների տարածքային ամբողջականությունը:

2) **ՍՍՀՄ-ը** կազմող 15 հանրապետությունները, լինելով իրավահավասար, միաժամանակ մեծապես տարբերվում են իրարից բնական ու տնտեսական պոտենցիալի, **ՍՍՀՄ** ժողովրդատնտեսական համալիրում կատարած տնտեսական և արտադրական Փունկցիաների առումով, հետևաբար ունեն շրջանագոյացնող տարբեր հնարավորություններ: Կասկածից վեր է, որ օրինակ, Հայկական ՍՍՀՀ-ն, կստոնական ՍՍՀ կամ նույնիսկ Ղազախական ՍՍՀ որպես տնտեսական տերիտորիալ միավորներ իրենց հզորությամբ, քանակական ու կառուցվածքային ցուցանիշներով չեն կարող համեմատելի լինել Ռուսաստանյան Ֆեդերացիայի կամ Ուկրաինայի հետ:

3) Օբյեկտիվություն ձևավորվող արտադրողական ուժերի տարածքային զուգորդումները, տարբեր մեծության ու բարդության տարածքային-արտադրական համալիրները հաճախ կարող են դուրս գալ մեկ հանրապետության սահմաններից, իրենց մեջ ներառնելով հարևան հանրա-

պետության հարակից տերիտորիաները, դառնալով միջանրապետական տնտեսական գոյացություններ:

Ներկայումս որպես այդպիսի միջանրապետական տնտեսական գոյացություններ են դիտվում, օրինակ, Ֆերգանայի տարածքային-արտադրական համալիրը, որը բաղկացած է 3 միութենական հանրապետությունների՝ Ուզբեկստանի, Տաջիկստանի և Կիրգիզստանի տարածքային մասերից, կամ Հարավ-Աւրալյան համալիրը, որի մեջ ՈՒՖՍՀ մասը կազմող Հարավային Ուրալից բացի միավորվում են նաև Հյուսիսային Ղազախստանի երկաթարեր շրջանները:

4) ՍՍՀՄ տնտեսական շրջանացման կրկնակի ֆունկցիան (այն է՝ գիտական հետազոտության գործիքի և պետական տերիտորիալ պլանավորման մեթոդի) լուրջ դժվարություն է հարուցում շրջանացման միասնական տարսունոմիայի մշակման համար: Եթե առաջին ֆունկցիայի դեպքում, երբ մեր նպատակը արտադրողական ուժերի տերիտորիալ գուգորդումների բացահայտումն ու ուսումնասիրումն է, պաշտոնական, քաղաքական սահմանները վճռական նշանակություն չունեն և հաճախ մղվում են հետին պլան, երկրորդ ֆունկցիայի դեպքում այդ սահմանների նշանակությունը դառնում է բախտորոշ, քանի որ պետական տերիտորիալ պլանավորման համակարգում միութենական հանրապետություններն են, որ իրենց հաստատում սահմաններով հանդես են գալիս որպես պլանավորման առաջին կարգի միավորներ:

Ի նկատի առնելով վերը շարադրվածը և ի մի բերելով քննարկվող հարցի մասին եղած տեսակետները, որոնցով տարբեր ժամանակներում հանդես են եկել մեծ թվով հետազոտողներ, կարող ենք ՍՍՀՄ տնտեսական շրջանացման տարսունոմիական համակարգը պատկերել հիերարխիկ սահմանուղղի հետևյալ աստիճանների ձևով.

1. ՍՍՀՄ տնտեսաշխարհագրական տարածք (կամ տնտեսական գոնա). — ՍՍՀՄ Եվրոպական մաս, Միջին Ասիա՝ Ղազախստանի հետ միասին և ՌՍՖՍՀ Ասիական մաս: Դրանք երկրի ժողովրդատնտեսական միասնական համալիրի ամենախոշոր տարածքային միավորներն են: Ըստ որում, ի տարբերություն Եվրոպա և Ասիա աշխարհամասերի սահմանի, այս տնտեսական տարածքների սահմանով անդրկովկասյան հանրապետությունները մտնում են Եվրոպական տարածքի մեջ:

2. Բազմաշրջան միութենական հանրապետություն— ՌՍՖՍՀ, Ուկրաինական ՍՍՀ:

3. ՍՍՀՄ տնտեսական շրջան (խոշոր տնտեսական շրջան) — ներկայումս գործող շրջանացման սխեմայով դրանց թիվը 19-ն է, որոնցից 14-ը ներհանրապետական են (ՌՍՖՍՀ-ի և Ուկրաինայի մասեր), 2-ը ամբողջությամբ համընկնում են առանձին հանրապետությունների սահմանների հետ (Ղազախստան, Բելոռուսիա), 3-ը միջանրապետական են

(յուրաքանչյուրը միավորում է համապատասխանարար մերձբալթյան. անդրկովկասյան և միջինասիական հանրապետությունները):

4. ՍՍՀՄ տնտեսական ենթաշրջան— այդպիսիք են մերձբալթյան, անդրկովկասյան և միջինասիական միութենական հանրապետություններից յուրաքանչյուրը, ինչպես նաև տաքսոնոմիական սանդուղքի նախորդ՝ 2-րդ և 3-րդ աստիճանի վրա գտնվող միութենական հանրապետությունների տերիտորիալ մասերը (քաղաքական-տերիտորիալ և վարչատերիտորիալ միավորների խմբեր):

Ինչպես տեսնում ենք, նկարագրված հիերարխիկ սանդուղքի շորուաստիճաններով ընդգրկվում են երկրի ազգային-պետական կառուցվածքի առաջին կարգի միավորները՝ բոլոր միութենական հանրապետությունները, բացառությամբ Մոլդավական ՍՍՀ-ի: (Նա իր տնտեսական պոտենցիալով շրավարարելով ՍՍՀՄ տնտեսական շրջանին ներկայացվող պահանջներին, դուրս է մնում 19 շրջանների սխեմայից, բայց պետական տերիտորիալ պլանավորման համակարգում ունենալով առաջին կարգի միավորի նշանակություն, ըստ էության օժտված է ինքնուրույն տնտեսական շրջանի իրավունքով):

4-րդ աստիճանի միավորների՝ ՍՍՀՄ տնտեսական ենթաշրջանների հետագա տրոհման շնորհիվ առանձնացված ավելի փոքր միավորները գտնվում են տնտեսական շրջանացման տաքսոնոմիական համակարգի ցածրադիր մասում, այսինքն այն սահմանից ներքև, որը ՍՍՀՄ «զբանավոր» տնտեսական շրջանացումը բաժանում է այսպես կոչված «կոտորակային»՝ մանրացված տնտեսական շրջանացումից:

Այսպիսով, Սովետական Հայաստանը, ինչպես և Ադրբեյջանը, Վրաստանը և մերձբալթյան ու միջինասիական միութենական հանրապետությունները, ՍՍՀՄ տնտեսական շրջանացման տաքսոնոմիական համակարգում գտնվում են 4-րդ աստիճանի վրա, այսինքն հանդես են գալիս որպես ՍՍՀՄ տնտեսական շրջանների ամենախոշոր բաղադրիչներ՝ ՍՍՀՄ տնտեսական ենթաշրջաններ:

Սակայն սխալ կիրար տնտեսական շրջանացման գործնական կիրառման տեսակետից այս փաստին մեծ կարևորություն տալ: Դրա նշանակությունը ներկայումս ըստ էության դուրս չի գալիս գիտական, ճանաչողական բնագավառից և արժանի է ուշադրության հատկապես ՍՍՀՄ-ի տնտեսաաշխարհագրական մակրոհետազոտություններ անցկացնելու, ինչպես և ուսումնական տեսակետից: Այս նույն նկատառումներով երկրի տնտեսական շրջանացման հիշյալ տաքսոնոմիական համակարգը կիրառվում է նաև պաշտոնական սոցիալտնտեսական վիճակագրության կողմից:

Ինչ վերաբերում է Սովետական Միության պետական-տերիտորիալ կառուցվածքին, ապա, ինչպես տեսանք վերևում, միութենական հան-

րապետությունները, դրանց թվում և Հայկական ՍՍՀ կանգնած են հիերարխիկ բուրգի ամենաբարձր մասում։ Ըստ էության, նույն վիճակը գոյություն ունի նաև պետական տերիտորիալ պլանավորման բնագավառում, այսինքն այն բնագավառում, որին սպասարկելը համարվում է տնտեսական շրջանացման երկու՝ վերը նշված կարևորագույն ֆունկցիաներից մեկը։

Տարածքային պլանավորման տակ հասկացվում է երկրի ժողովրդական տնտեսության տարածքային բաղադրիչների զարգացման պլանների մշակումն ու կոորդինացումը, նպատակ ունենալով կատարելագործել հասարակական արտադրության տերիտորիալ կազմակերպումը և արդյունավետության բարձրացումը։ Տարածքային պլանավորումը բաղկացուցիչ մասն է ժողովրդատնտեսական պլանավորման, որը սոցիալիզմի պայմաններում հանդես է գալիս որպես պետական կառավարման մեթոդ։ Սովետական պետության կառավարումը, ինչպես և ժողովրդատնտեսական պլանավորումը իրականացվում է կոմբինացված՝ ճյուղային-տարածքային սկզբունքով։

Մեր երկրի զարգացման արդի փուլում էկոնոմիկայի կառավարման հարցում առաջնությունը տրվում է ճյուղային սկզբունքին։ Գնայած դրան, ավելի ճիշտ դրա շնորհիվ էլ տարածքային պլանավորման նշանակությունը անընդհատ աճում է։ Այդ հանգամանքը պայմանավորված է այնպիսի օրյեկտիվ պրոցեսով, ինչպիսին է աշխատանքի տարածքային բաժանման ու ինտեգրացման անընդհատ խորացումը, ինչպես նաև արտադրության տարածքային կառուցվածքի անընդհատ կատարելագործման անհրաժեշտությունը։

Սովետական Միության ազգային պետական կառուցվածքի և ժողովրդատնտեսական բարդ համալիրի պայմաններում էկոնոմիկայի կառավարումը և մասնավորապես տարածքային պլանավորումը նույնպես բազմաստիճան բնույթ ունեն։

Սոցիալիստական տարածքային պլանավորման առաջին փորձը վերաբերում է ԳՈԷԼՌՈ-ի պլանին (1920 թ.), որը, ինչպես հայտնի է, հանդիսացավ ժողովրդատնտեսական հեռանկարային պլանավորման նախատիպը։ Միաժամանակ, այդ պլանով դրվեցին երկրի գիտական տընտեսական շրջանացման հիմքերը և մշակվեցին առանձնացված 8 շրջանների էլեկտրիֆիկացման ցուցանիշները։ Հաջորդ քայլը եղավ 1923 թ. միութենական հանրապետությունների պլանային հանձնաժողովների ստեղծումը։ Սկզբնական շրջանում այդ հանձնաժողովները զբաղված էին միայն առանձին արդյունաբերական ձեռնարկությունների և տրեստների ընթացիկ պլանների և կոնտրոլ թվերի կազմումով։ Հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման ցուցանիշներ շէին մշակվում։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման կոնտրոլ թվերում

Հանրապետությունների ու խոշոր տնտեսական շրջանների խնդիրները առաջին անգամ առանձնացվեցին 1926/1927 ֆինանսական տարում:

Սկսած 1931 թվականից ինչպես կենտրոնում, այնպես էլ հանրապետություններում տնտեսական զարգացման կոնտրոլ թվերից անցան միասնական ժողովրդատնտեսական պլանների մշակմանը և, ըստ էության, առաջին հնգամյակի վերջում հիմնական գծերով ձևավորվեց ՍՍՀՄ տարածքային պլանավորման ներկայիս համակարգը, որտեղ միութենական հանրապետությունները հանդես են գալիս որպես պլանավորման առաջին կարգի միավորներ:

Ներկայումս Սովետական Հայաստանի, ինչպես և մյուս բոլոր միութենական հանրապետությունների կոմպլեքսային սոցիալ-տնտեսական զարգացման պլանները, որոնք մշակվում են հանրապետական պլանավորող մարմինների կողմից, ընդգրկում են նյութական արտադրության ու սոցիալական ոլորտի շուրջ երեք հարյուր ընդհանուր և մասնակոր ցուցանիշներ։ Դրանք միավորվում են հետևյալ հիմնական խմբերի մեջ։

ա) ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերն ու համամանությունները, նրա ճյուղային կառուցվածքը, հասարակական արտադրության արդյունավետությունը արդյունաբերության ու սոցիալական ոլորտի շուրջ երեք հարյուր ընդհանուր և մասնակոր ցուցանիշներ։

բ) արտադրանքի կարեռագույն տեսակների արտադրության ծավալը ընամբերային արտադրանք,

գ) կապիտալ ներդրումների ծավալը և ուղղությունը ըստ տնտեսության ճյուղերի,

դ) աշխատանքային ուսուցաների հաշվեկշիռը,

ե) հանրապետության համար կարևոր նշանակության ունեցող արտադրանքի թուղարկման ու սպառման հաշվեկշռային հաշվարկները,

զ) սոցիալական զարգացման ու բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնական ցուցանիշներ,

է) բնական միջավայրի պահպանության հարցեր¹,

Թվարկած խմբերի մեջ ընդգրկված ցուցանիշները մշակվում են պետական պլանների բոլոր երեք մակարդակներում՝ տարեկան, հնգամյա և հեռանկարային։

Այդ ցուցանիշների հիմնական մասը հանրապետությանը նվիրված առանձին բաժնով մտնում է ՍՍՀՄ ժողովրդատնտեսական պլանի մեջ։ Մրա միջոցով է, որ փորձ է արվում ապահովել հանրապետությունների հետագա մասնագիտացումն ու կոմպլեքսային զարգացումը, բնական ու աշխատանքային ուսուցաների ուսցիունալ օգտագործումը ընդհանուր միութենական և ամեն մի հանրապետության շահերի զուգորդման հիման վրա, միջհանրապետական համամասնությունների ու տնտեսական-արտադրական կապերի կարգավորումը։

¹ ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների Պետպահների ներկայումս իրականացվող վերակառուցման և օպերատիվ պլանավորման ֆունկցիաները դրանցից վերցնելու շնորհիվ կենտրոնացված պլանավորման ենթակա ցուցանիշների թիվը զգալիորեն պակասելու է։

Ակնհայտ է, որ այս բոլորը վերաբերում է ՍՍՀՄ առաջին կարգի տարածքային միավորներին՝ միութենական հանրապետություններին և մասամբ էլ խոշոր տնտեսական շրջաններին: Մինչդեռ աշխատանքի տարածքային բաժանման հետագա խորացման պրոցեսը չի սահմանափակվում միայն այդ խոշոր միավորներով: Այն ընդգրկում է շրջանացման տարսունոմիական համակարգի բոլոր միավորները՝ ամենաբարձր աստիճանից սկսած մինչև ամենաստորինը:

Սովետական Հայաստանի և մյուս ող խոշոր հանրապետությունների սահմաններում, որոնք ՍՍՀՄ տնտեսական շրջանացման տարսունոմիական համակարգի 4-րդ աստիճանն են զբաղեցնում, աշխատանքի տարածքային բաժանման ուսումնասիրությունը և տարածքային պլանավորումը հիմնվում են շրջանացման հաջորդ աստիճանի՝ հանրապետությունների սոցիալ-տնտեսական շրջանացման վրա:

ՀԱՄՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կերպուծեք այն գործոնները, որոնք պետք է հաշվի առնել ՍՍՀՄ տնտեսական շրջանացման տարսունոմիական համակարգը որոշելու համար:

2. Բնութագրեք ՍՍՀՄ տնտեսական շրջանացման տարսունոմիական համակարգը, շամեմատեք այն ՍՍՀՄ պետական տարածքային կառուցվածքի հետ:

3. Խնդիրին է Հայկական ՍՍՀ տեղը ՍՍՀՄ պետական-տարածքային կառուցվածքում և անտեսական շրջանացման տարսունոմիական համակարգում:

4. Հայկական ՍՍՀ-ի, որպես համապետական պլանավորման առաջին կարգի միավորի սոցիալ-տնտեսական զարգացման պլանները ի՞նչ ցուցանիշներ են ընդգրկում:

13.3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՐԱԽՉԱՍՏԱԿՈՒԹՈՒՆՆԵՐԸ: ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Սույն գրքի նախորդ բաժիններում հանրապետության ժողովրդական տնտեսության աշխարհագրական գլխավոր առանձնահատկությունների, միասնական տարածքային-արտադրական համալրի կազմի ու մասնագիտացման, ինչպես նաև էկոնոմիկայի առանձին ճյուղերի տարածքային կազմակերպման պրոբլեմների վերլուծությունը մեզ մոտեցրեց տնտեսաշխարհագրական այնպիսի հիմնարար հարցի ուսումնասիրությանը, ինչպիսին ամբողջական ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքն է: Այն անմիջական առնչություն ունի սոցիալ-տնտեսական շրջանացման և վերջինիս միջոցով էլ՝ տարածքային պլանավորման և ամբողջ հասարակության տարածքային կազմակերպման պրոբլեմների հետ:

Հասարակության տարածքային կազմակերպումը բնակչության կողմից տարածքի օգտագործման որոշակի համակարգի ստեղծումն է, որն

ընդգրկում է ժամանակակից բազմաբովանդակ կյանքի բոլոր կողմերը: Պլանային տնտեսության պայմաններում դա հասարակության տարածքային կառուցվածքի համապատասխանեցումն է հասարակության անդամների նյութական ու հոգևոր պահանջներին, անընդհատ կատարելագործումը՝ ի շահ սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերի արագացման, արդյունավետության բարձրացման և տնտեսական պոտենցիալի հզորացման:

Հասարակության տարածքային կառուցվածքը անընդհատ փոփոխվող ու կատարելագործվող դինամիկ երեսվթ է, Այն արտահայտում է տվյալ պահին հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական և գիտատեխնիկական զարգացման մակարդակը և փոփոխվում է վերջինիս հետ մեկտեղ:

Սովետական հասարակության ամբողջ կառուցվածքի, դրա կազմում և տարածքային կառուցվածքի վերափոխումն ու կատարելագործումը անհրաժեշտ պայման է ՄՄԿԿ 27-րդ համագումարի մշակած ստրատեգիական կուրսի հաջող իրականացման համար:

Հասարակության տարածքային կառուցվածքը Սովետական Հայաստանի սահմաններում չէր կարող բացառություն կազմել և անցած տասնամյակների ընթացքում արմատական փոփոխություններ է կրել: Դա շոշափել է հասարակական կյանքի բոլոր ոլորտները, բայց իր նյութական արտահայտությունը գտել է հատկապես այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են վարչա-տարածքային բաժանումը, բնակչության տարարնակեցումը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տրանսպորտը, որոնց տարածքային տեղաշարժերը առանձին-առանձին քննարկվել են դասընթացի համապատասխան բաժիններում:

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը ինչպես և ցանկացած տնտեսական տարածքային համալիրը տարբեր ճյուղերի ու բնագավառների լոկ մեխանիկական գումարը չէ: Ճիշտ այդպես էլ ամբողջ ժողովրդական անտեսության տարածքային կառուցվածքը չի կարելի դիմել որպես տարբեր բնագավառների տարածքային կառուցվածքային միավորների՝ վարչական շրջանի, տարարնակեցման արեալի, արդյունաբերական շրջանի, գյուղատնտեսական շրջանի կամ գոտու, տրանսպորտային շրջանի մեխանիկական միացում: Ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքի յուրաքանչյուր միավոր տարբեր բնագավառների ու նյուղերի աշխարհագրական սինթեզման արդյունք է, նորութակի տնտեսական գոյացություն, իր բնօւյրավ՝ ինտեգրալ միավոր:

Ինչպես այլ ոեգիոնների, այնպես էլ Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացման փորձը ցուց է տալիս, որ տնտեսական ինտեգրալ միավորների ձևավորմանը թեև մասնակցում են հասարակական արտադրության

բոլոր ճյուղերն ու բնագավառները, բայց դրանք տարրեր ֆունկցիա ու դեր են կատարում:

Ժամանակակից ինդուստրիալ հասարակության պայմաններում առաջատար դերն ու առավել ակտիվ ֆունկցիան պատկանում է արդյունաբերությանը:

Նախասովետական Հայաստանի արտադրողական ուժերի թերզարգացածության պատճառով հասարակության որոշակի տարածքային կառուցվածք իր բաղադրիչ միավորներով ու ներքին կապերով ըստ էռթյան դեռ չեր ձևավորվել, այն գտնվում էր ամորֆ վիճակում: Որոշակի տարածքային կառուցվածք ունեցող միասնական տնտեսական օրգանիզմի ձևավորման նախադրյալները նույնպես բացակայում էին: Դարեր առաջ ձևավորված բաժանումը բնապատմական շրջանների (Արարատ, Շիրակ, Լոռի, Զանգեզուր և այլն) լուրջ սոցիալ-տնտեսական բովանդակություն չուներ, իսկ Արևելյան Հայաստանի ցարական վարչական բաժանումը ամբողջովին անտեսում էր թե տնտեսական, թե ազգային-էթնիկական հատկանիշները և լուրջ խոշընդուռ էր տարածքի տնտեսական համախմբման ու միասնական սոցիալ-տնտեսական օրգանիզմի ձևավորման ճանապարհին:

Հաշորդ տասնամյակների ընթացքում Հայկական ՍՍՀ միասնական տարածքային-արտադրական համալիրի ձևավորումն ու գարգացումը հանգեցրին հասարակական արտադրության ժամանակակից տարածքային կառուցվածքին իր ներքին բարդ կապերով ու տարրեր կատեգորիացի բաղադրիչ միավորներով:

Հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՀ բնական, պատմական ու տնտեսական որոշակի գործոնների շնորհիվ ձևավորվել են հասարակական արտադրության տարածքային կառուցվածքի որոշակի առանձնահատկություններ: Դրանք հանդում են հետևյալին:

1. Չնայած հանրապետության տարածքի փոքրությանը, նրա մակերեսույթի մակրոձևերի (խոշոր լեռնաշղթաների ու միջլեռնային գոգավորություններ) առկայությունը ստեղծում է արտադրության, ինչպես նաև մարդկանց կյանքի ու կենցաղի կազմակերպման ինքնատիպ բնական պայմաններ ունեցող շրջանների բազմազանություն:

2. Բնական պայմանների ուղղաձիգ գոտիականությունը և արդյունաբերական նշանակություն ունեցող բնական ռեսուրսների բազմազանությունը այդ շրջանների մեծ մասի համար ստեղծում են բազմաճյուղ, զգալի շափով նաև կոմպլեքսային բնույթի արտադրություն զարգացնելու նախադրյալները:

3. Երկարուղային տրանսպորտը և երա հետ կապված ինֆրակառուցվածքային առողջապահության պահպանական շրջանում տեղաբաշխված լինելով

մեծ մասամբ տարածքի ծայրամասային հատվածներում, ի վիճակի շէին անմիջական դրական ներգործություն ունենալու հանրապետության շըրշանների մեծ մասի վրա:

4. Արդյունաբերությունը գլխավորապես երեանում և նրա շրջակայքում կենտրոնացնելու ուղղությամբ նախկինում տարվող քաղաքականությունը իմանել է Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի անհամաշափ տեղաբաշխումը և հասարակական արտադրության կառուցվածքում Արարատյան զոգավորության բացարձակ գերակշռության հաստատումը:

5. Այդ երեսութին զուգընթաց, հանրապետության մյուս շրջաններում ևս, չնայած որոշ ուշացումով, այնուամենայնիվ ստեղծվել են արցյունաբերական աշխի ընկենող օջախներ ու ամբողջ հանգույցներ, որոնք համեմատաբար ընդարձակ տարածությունների սոցիալ-տնտեսական կյանքը կազմակերպող կորիզի դեր են կատարում և հանդես են գալիս որպես ներհանրապետական տնտեսական կապերի հանգուցակետեր:

Թվարկված գործուներից առաջին երկուսը կայուն են և ապագայում նույնպես շարունակելու են ուղղակիորեն ազդել հասարակության տարածքային կառուցվածքի վրա: Վերջին երեքը դիմամիկ են, ենթակա արագընթաց փոփոխության, հատկապես և փոփոխական են նրանց ներգործության ուժը և նույնիսկ ուղղությունը: Բայց նախկին ներգործության հետևանքները կարող են լինել խորն ու տեսական:

Դժվար չէ նկատել, որ Հայկական ՍՍՀ տարածքային կառուցվածքի նկարագրված հատկանիշները ըստ իրենց բնույթի բաժանվում են երկու խմբի: Մի խումբը ընդգծում է հանրապետության տնտեսական օգանիզմի միասնականության, ամբողջականության ուժեղացման տեսնենցը: Մյուս խումբը հակառակ բնույթի է, վկայում է այդ միասնական օգանիզմի ենթակա ինքնուրույն բաղադրիչների ձեավորման ու զարգացման միտումի մասին: Այս երկու տեսնենցների համատեղ հանդես գալը ամեն մի դիմամիկ համակարգի, ամբողջական սոցիալ-տնտեսական օրգանիզմի գոյության պայմանն է:

Եթե Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունն այսօր հասել է զարգացման այնպիսի աստիճանի, որ իրավունք է տալիս դիտելու այն որպես միութենական նշանակության մեկ միասնական տնտեսական համալիր (իսկ որ իսկապես դա այդպես է, ապացուցվեց գորքի նախորդ բաժիններում), ապա անհրաժեշտ է բացահայտել ու ճանաշել նրա տարածքային բաղադրիչները: Ակնհայտ է, որ որպես այդպիսի բաղադրիչներ չեն կարող դիտվել մեզ արդեն ծանոթ արդյունաբերական հանգույցներն ու գյուղատնտեսական շրջանները, ինչպես և որևէ այլ ճյուղային տերիտորիալ միավորներ:

Միասնական հասարակական արտադրության տարածքային բաղադրիչները կարող են լինել ոչ թե ենուղային, այլ կոմպլեքսային, համատնտեսական, ինտեգրալ: Հենց այդպիսի բնույթ ունեն սոցիալ-տնտեսական շրջանները: Դրանց որպես համատնտեսական ինտեգրալ գոյացությունների ձևավորումը Սովետական Հայաստանում ևս ենթակա է ՍՍՀՄ հասարակական արտադրության տարածքային կառուցվածքի ձևավորման այն համընդհանուր պրոցեսին, որը հանգեցրել է Սովետական Միության տնտեսական շրջանացման բազմաստիճան տաքսոնոմիական համակարգի առաջացմանը:

Ի մի բերելով վերը շարադրվածը, կարող ենք եզրակացնել, որ Հայկական ՍՍՀ հասարակական արտադրության տարածմային կառուցվածքի հիմնական միավորները ինտեգրալ սոցիալ-տնտեսական շրջաններեն են, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին նույնական ունի իր ներքին կառուցվածքը, ավելի փոքր մասշտաբի տարածմային միավորները: Այդ բոլորի բացահայտումը և ուսումնասիրումն էլ հենց հանրապետության սոցիալ-տնտեսական շրջանացման խնդիրն է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք ու գնահատեք Հայկական ՍՍՀ տարածքում հասարակական արտադրության տարածքային կառուցվածքի գլխավոր առանձնահատկությունները:

2. Ազացուցեք, որ այդ առանձնահատկությունների մի խումբը վկայում է հանրապետության տնտեսական օրգանիզմի միասնականությունը, մյուս խումբը՝ այդ միասնական օրգանիզմի ներսում հարաբերականորեն ինքնուրույն բաղադրիչների զարգացումը:

3. Խնչո՞ւ միասնական տնտեսական օրգանիզմի բաղադրիչներ կարող են դիտվել ոչ թե ենուղային, այլ համատնտեսական, ինտեգրալ տարածքային միավորները:

13.4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԱՔՍՈՆՈՄԻԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՀԱՏԿԱԳԾՄԱՆ ԿԱՊԸ

Քանի որ Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացումը պատկանում է «կոտորակային» շրջանացման տարատեսակին, ուստի չի կարող նույնությամբ վերցնել ՍՍՀՄ գլխավոր տնտեսական շրջանացման սկզբունքները, որոնք ինչպես հայտնի է, մանրամասնորեն մշակված են և ունեն պաշտոնական բնույթ: Տարբեր են նաև նրանց խնդիրները, մեթոդներն ու շափանիշները:

Բայց, միաժամանակ, Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացումը նաևդիսանալով ՍՍՀՄ տնտեսական շրջանացման մի մասը, կարող է և պետք է հենվի երա մեթոդոլոգիական, սկզբունքային դրույթների վրա:

ՍՍՀՄ տնտեսական շրջանացման տաքսոնոմիական սանդուղքում Հայկական ՍՍՀ-ն, ինչպես տեսանք, զբաղեցնում է 4-րդ աստիճանը:

Ուստի և Հայկական ՍՍՀ ամենախոշոր միավորը, այսինքն տնտեսական շրջանացման ամենաբարձր տաքսոնոմիական աստիճանը համընկնում է ՍՍՀՄ շրջանացման 5-րդ աստիճանին: Համապատասխանաբար ստորադաս տեղեր են գրավում ավելի փոքր միավորները:

Գիտական-ճանաչողական տեսակետից այստեղ կարեռն այն է, որ դեպի ստորին կարգի տաքսոնոմիական աստիճանները իշխելիս փոքրանում է ընդգրկման ծավալը, բայց «խոշորանում է» հետազոտության մասշտաբը, այսինքն հնարավոր է դառնում այդ հետազոտությունը կատարել ավելի մանրամասն ու խոր, ավելի «խոշոր մասշտարով»:

Ենելով Հայկական ՍՍՀ՝ որպես վարչական մարզային բաժանում չունեցող հնարապետության հասարակական արտադրության և սոցիալական ոլորտի տարածքային կառուցվածքի առանձնահատկություններից, մենք կարող ենք առանձնացնել նրա շրջանացման տաքսոնոմիական համակարգի հետևյալ աստիճանները՝ տաքսոնները.

ՍՍՀՄ շրջանացման տաքսոնոմիա

5-րդ աստիճան

Հայկական ՍՍՀ շրջանացման տաքսոնոմիա

1-ին աստիճան՝ Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական շրջան (որոշակի վարչական շրջանների և դրանց հավասարեցված՝ հնարապետական ենթակայության քաղաքների խումբ),

6-րդ աստիճան

2-րդ աստիճան՝ սոցիալ-տնտեսական ենթարշան (վարչական շրջանների և հնարապետական ենթակայության քաղաքների ավելի փոքր խումբ կամ մեկ առանձին վարչական շրջան),

7-րդ աստիճան

3-րդ աստիճան՝ վարչական շրջան

8-րդ աստիճան

4-րդ աստիճան՝ տնտեսական միկրօջրշան (վարչական շրջանի մի մասը)

Ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական շրջանացման գործնական-կիրառական նշանակությանը, ապա այն ևս ըստ տաքսոնոմիական աստիճանների էական փոփոխություններ է կրում:

Եթե ՍՍՀՄ գլխավոր շրջանացումը ծառայում է միութենական նշանակության հարցերի, արտադրության տարածքային կազմակերպման միջնանրապետական պրոբլեմների լուծմանը, ապա «կոտորակային» շրջանացումը որպես տարածքային պլանավորման և հասարակության 370

Եթ միավորի բացահայտմանը, դրա կազմի ու սահմանների նշգրտմանը:

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ժամանակակից բավականին բարդ տարածքային կառուցվածքում, որպես նրա ինքնուրույն ֆունկցիոնալ մասեր՝ հանրապետական սոցիալ-տնտեսական շրջաններ, հանդես են գալիս այն տարածքային միավորները, որոնք ունեն հետևյալ հատկանիշները.

1) առկա է տարածքը ի մի համախմբող, նրա համար կազմակերպիչ կորիզի դեր կատարող բավարար հզորության տնտեսական կենտրոնը (կենտրոնները),

2) ձեռավորվել ու զարգանում է ներքին տնտեսական կապերի (տրանսպորտային-տնտեսական, արտադրական, կուլտուրկենցաղային, աշխատանքային) շատ թե քիչ կայուն համակարգ:

3) աշխատանքի ներհանրապետական բաժանման համակարգում ունի իր օրոշակի տնտեսական ֆունկցիաները, շրջանային մասնագիտացումը,

4) առկա է միասնական տրանսպորտային կողմնարոշումը և ներքին տրանսպորտային ուղիների ամբողջական ցանցը,

5) զարգացման տվյալ փուլում ունի առաջնահերթ լուծում պահանջող ուրույն սոցիալ-տնտեսական պրոբլեմ:

Հասկանալի է, որ ամեն մի կոնկրետ տնտեսական շրջանում թվարկված հատկանիշները չեն կարող նույն կարենորությունն ու հարաբերակցությունը կամ զարգացման նույն մակարդակն ունենալ: Ինչպես կտեսնենք ստորև, այդ հատկանիշները տարբեր շրջաններում տարբեր ուժգնությամբ են դրսենորվում և շրջանագոյացնող տարբեր նշանակություն են ձեռք բերում: Որոշ հատկանիշներ մի տնտեսական շրջանում կարող են զարգացման բարձր մակարդակի հասած լինել և նրա ձեռփորման գործում ունենալ վճռական նշանակություն, մինչդեռ մյուս շրջաններում դեռևս գտնվել սաղմնային վիճակում ու շրջանաստեղծ էական ֆունկցիա շկատարել: Թայց այդ դեպքում պետք է ակնհայտ լինեն նրա զարգացման միտումը, ապագայում այդ հատկանիշի ձեռավորման նախադրյալները:

Քննարկենք Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանների հիշատակված հատկանիշները մեկ առ մեկ և նրանց դրսեռման առանձնահատկությունները:

1. Հայկական ՍՍՀ-ում բավարար նզորության տնտեսական կենտրոնների ի հայտ գալը, որոնք համեմատաբար ընդարձակ տարածքի ամբողջ տնտեսական կյանքը կազմակերպող կորիզի ֆունկցիա կարող են կատարել, բացառապես կապված է արդյունաբերության հետ: Արդյունաբերության ազդեցությունը դրսենորվում է նախ և առաջ ժամանակա-

կից քաղաքների՝ որպես կանոն արդյունաբերական կենտրոնների միջոցով: Որևէ, շատ թե քիչ հզոր արդյունաբերական քաղաքը զարգանալով որևէ վայրում, հարակից տարածքի հետ մտնում է բազմապիսի կապերի ու առնչությունների մեջ, որոշակի, համակենտրոն արեալներով դեպի իրեն է ձգում այդ տարածքը, դրա համար դառնում կազմակերպող կողմեց:

Եթե շրջանագոյացնող ուժը նկատելի է մեկ առանձին վերցրած արդյունաբերական քաղաքի համար, ապա առավել ևս ակնհայտ է արդյունաբերական հանգույցի համար, որը շատ ավելի բարդ ու հզոր արտադրական, սոցիալ-հասարակական գոյացություն է, քան առանձին վերցրած քաղաքը:

Դրբի 4-րդ և 7-րդ գլուխներից մեզ հայտնի է, որ Հայկական ՍՍՀ-ում տարրեր քաղաքների շրջանագոյացնող դերը, տնտեսական ձգման ուժը տարրեր է: Դա կախված է բազմաթիվ հանգամանքներից, որոնց շարքում աշքի են ընկնում հատկապես քաղաքի մեծությունը, ֆունկցիոնալ տիպը, արդյունաբերական կառուցվածքը, արտաքին տրանսպորտի զարգացման աստիճանը, ճանապարհների ցանցը, ենթակառուցվածքի այլ տարրերի զարգացման աստիճանը, հարակից տերիտորիաների հետունեցած կապերի բնույթը, ուղղությունը, հեռավորությունն ու ինտենսիվությունը և վերջապես ժամանակի գործոնը:

Ներկայումս Հայկական ՍՍՀ տարածքով մեկ սփոված շուրջ 150՝ արդյունաբերական կետերն ու կենտրոնները ստեղծել են տարրեր կարգի ու նշանակության սոցիալ-տնտեսական ու արտադրական կապերի միքարդ ցանց, որը դժվարացնում է այդ կետերի ու կենտրոնների շրջանագոյացնող դերի և ազդեցության ոլորտների բացահայտումը: Այնուամենայնիվ, հանրապետության տնտեսական շրջանացման առաջին կարգի միավորների ձեւավորման վրա վճռական ազդեցություն ունեցող քաղաքների շարքում որոշակիորեն առանձնանում են երկու տիպեր՝ ա) բաղադրելու, որոնց շրջանագոյացնող ֆունկցիան ակնհայտ է և դրանուրվում է անմիջական ձեռվ, թեև այդ ֆունկցիան զգալիորեն ուժեղանում է այն հանգամանքով, որ այդ քաղաքները միաժամանակ արդյունաբերական հանգույցների կենտրոններ են; Դրանք են՝ Երևանը, Լենինականը և Կիրովականը; բ) Քաղաքներ, որոնք առանձին վերցրած հանրապետական շրջան ստեղծելու ուժ չունեն, բայց այդպիսին ձեռք են բերում արդյունաբերական հանգույցի նետ մեկտեղ ու նրա միջոցով, լինելով վերջինիս ձեւավորման հիմնական կորիզը: Այդպիսիք են Հրազդանը և Ղափանը:

Մյուս քաղաքներն առաջին կարգի շրջանագոյացնող ֆունկցիա չեն կարող կատարել երկու պատճառով. մի մասը գտնվում է խոշոր կենտրոններին անմիջապես մոտիկ և ինքնուրույն «ձգողական դաշտ»,

ստեղծել ի վիճակի շէ (Աբովյան, Էջմիածին, Մասիս և այլն), մյուս մասը թեպետ ստեղծում է այդպիսի «դաշտ», բայց փոքր հզորություն ունի, որը բավարար չէ հանրապետական նշանակության ռեգիոն ձևավորելու և դրա կենտրոնի ֆունկցիա կատարելու համար:

Ներկայումս Հայկական ՍՍՀ տարածքը գրեթե ամբողջությամբ բաժանված է մեզ արդեն ծանոթ ճ արդյունաբերական հանգույցների ազդեցության ոլորտների միջև։ Սակայն իրականում այդ ոլորտների սահմանագծումը իրենից մեծ բարդություն է ներկայացնում։

Բանն այն է, որ որևէ հանգույցի ազդեցության ոլորտը չի ավարտվում այնտեղ, որտեղ սկսվում է հարեւանինը։ Այդ երկու հանգույցները բաժանող տարածքի բավական ընդարձակ շետում առկա է թե մեկ, թե մյուս հանգույցի ազդեցությունը։ Ավելին, առանձին գործոնների գծով որևէ հանգույց իր ոլորտի մեջ կարող է առնել ոչ միայն բաժանող տարածքի մեծ մասը, այլև ամբողջ հարեւան հանգույցը։ Այդ տեսակետից բնորոշ է Երևանի օրինակը։ Բացարձակ գերակշռող հզորության և տիրապետող դիրքի պատճառով այդ հանգույցի «ձգողական դաշտը» ընդգրկում է ամբողջ հանրապետությունը, և նրա ազդեցությունը նույնիսկ շատ հեռավոր շրջանների վրա որոշ կապերի գծով ավելի նկատելի է, քան վերջիններիս ավելի մոտ գտնվող հանգույցինը։ Դա առավել աշքի է ընկնում այն գործոնների ու կապերի գծով, որոնք պայմանավորված են Երևանի՝ որպես հանրապետության մայրաքաղաքի վարչա-քաղաքական ֆունկցիաներով։

Այսպիսով, հանրապետության սոցիալ-տնտեսական շրջանները մենք կարող ենք փնտրել հիշյալ վեց արդյունաբերական հանգույցների ոլորտում, շմոռանալով, իհարկե, այն հանգամանքը, որ այդ շրջանները կարող են լինել ոչ միայն միակենտրոն, այլև բազմակենտրոն։ Դա նշանակում է, որ ամեն մի արդյունաբերական հանգույցի շուրջը անպայմանորեն չէ, որ գոյանում է մեկ առանձին տնտեսական շրջան։ Առանձին տնտեսական շրջաններ կարող են ձևավորվել երկու և ավելի արդյունաբերական հանգույցների բազայի վրա։

Սովետական Հայաստանի կոնկրետ պայմաններում համեմատարար հեշտությամբ լոկալացվող «ձգողական դաշտ» ունեն Երևանի, Լենինականի, Ղափան-Քաջարանի և Հրազդան-Սևանի հանգույցները, մինչդեռ Կիրովականի և Ալավերդու «դաշտերը» շատ տեղերում համաձաւվալում են, նույնանում։

2. Ներքին սոցիալ-տնտեսական կապերի կայուն նամակարգի առկայությունը տնտեսական շրջանի գոյուրյան անհրաժեշտ պայման է այն պատճառով, որ դա է հաղորդում տնտեսական գոյացությանը որոշակի ամբողջականություն, կօմպլեքսայնություն։ Ներքին կապերը հանդես են գալիս որպես վկայություն այն բանի, որ տնտեսական գոյացու-

թյունը ամորֆ չէ, այլ ունի իր կառուցվածքը, աշխատանքի ներքին բաժանումը, միմյանց լրացնող տարածքային մասերը, հետևապես և կոմպլեքսայնության որոշակի աստիճանը։ Ակնհայտ է, որ սոցիալ-տնտեսական շրջանացման տաքսոնոմիական համակարգում ինչքան ավելի ստորին աստիճանի վրա է գտնվում տարածքային միավորը, այնքան ավելի պարզունակ է ներքին կառուցվածքը, թույլ են ներքին կապերը, այնքան ավելի ցածր է կոմպլեքսայնության աստիճանը։

Ներշրջանային տնտեսական կապերը խորանում, կենտրոնանում են արդյունաբերական հանգույցների շուրջը, չնայած նրան, որ առանձին գծերով կարող են թափանցել հարեւան հանգույցների «թագավորությունը» և նույնիսկ անցնել հեռավոր շրջաններ։ Դրանք արդեն դադարում են ներքին կապեր լինելուց, դառնում են արտաքին կապեր և որոշում են տվյալ շրջանի արտադրական մասնագիտացումը ավելի խոշոր միավորի, տվյալ դեպքում՝ հանրապետության կազմում։ Այս դեպքում մենք գործ ունենք արդեն աշխատանքի ոչ թե ներշրջանային, այլ ներհանրապետական տարածքային բաժանման հետ, ոչ թե առանձին շրջանի, այլ ամբողջ հանրապետության միասնական համալիրի հետ։

Տնտեսական շրջանացման կոնկրետ սխեման որոշելիս անհրաժեշտ է այս արտաքին կապերը անտեսել։ Պետք է հաշվի առնվեն միայն ներքին, արդյունաբերական հանգույցների շուրջը հանգուցավորվող տեղական մասսայական կապերը, որոնք ինչ-որ տարածության վրա աստիճանաբար մարում են, չեզոքացվում հարեւան հանգույցի կապերի կողմից։

Սոցիալ-տնտեսական շրջանացման և հասարակության տարածքային կազմակերպման համար տարբեր տեսակի՝ տնտեսական-արտադրական, տրանսպորտային, կուլտուր-կենցաղային, աշխատանքային և այլ կապերի նշանակությունը դժվար է գերագնահատել։ Դրանք արտահայտելով շրջանի տնտեսության ճյուղային ու տարածքային կառուցվածքը, կոմպլեքսայնության աստիճանը, շատ նուրբ ձևով արձագանքում են դրանցում կատարվող ամեն մի փոփոխության։ Այդ կապերի բարելավումն ու կատարելագործումը կարող են հանգեցնել հասարակական արտադրության ծախքերի կրծատմանը, նրա արդյունավետության բարձրացմանը։ Հատկապես, որ այդ կապերը հեշտությամբ են ննթարկվում պլանային կարգավորման։

3. Տնտեսական շրջանի հատկանիշների շարքում կարևոր նշանակություն ունի շրջանային մասնագիտացումը, որով և ըստ էուրյան որոշվում են աշխատանքի ներհանրապետական բաժանման մեջ շրջանի տեղը, անտեսական ֆունկցիաները։ Մասնագիտացումն է, որ նաեւապեաուրյան աշխատանքի տարածքային բաժանման համակարգում շրջանին հաղորդում է «ինքնուրույն օղակի», ֆունկցիոնալ բաղադրիչի հատկանիշներ։

**ԳԼՈՒԽ 14. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ:
ԹՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՊՐՈՊԼԵՄՆԵՐԻՑ**

14.1. ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱՆ

Նախորդ գլխում վերլուծվեց Սովետական Հայաստանի սոցիալ-տըմնտեսական շրջանացման տաքսոնոմիական համակարգը՝ բաղկացած 4՝ աստիճանից: Դրանք են՝ հանրապետության ինտեգրալ սոցիալ-տնտեսական շրջանները, սոցիալ-տնտեսական ենթաշրջանները, վարչական-տնտեսական շրջանները և տնտեսական միկրոշրջանները:

Պաշտոնական ձևակերպում ստացել են միայն առաջին և երրորդ աստիճանի տաքսոնոմիական միավորները: Առաջին աստիճանի միավորները՝ ներհանրապետական ինտեգրալ սոցիալ-տնտեսական շրջանները, ինչպես ասվեց, 6-ն են (նկ 33):

1. Արարատյան (Կենտրոնական),
2. Շիրակի (Արևմտյան),
3. Լոռի-Փամբակի (Հյուսիսային),
4. Սևանի (Արևելյան),
5. Սյունիքի (Հարավ-արևելյան),
6. Աղստեկի (Հյուսիս-արևելյան):

Ինչ վերաբերում է տաքսոնոմիական երրորդ աստիճանի միավորներին՝ վարչական շրջաններին, ապա դրանց իրավական վիճակը բացառիկ է: Դրանք սոցիալ-տնտեսական շրջանացման համակարգից բացի իրենց որոշակի տեղն ունեն նաև հանրապետության վարչատարածքային բաժանման սխեմայում, հանդես են գտնիս որպես ինքնուրույն վարչատարածքային միավորներ պետական կառավարման սեփական մարմիններով հանդերձ, որոնց իշխանությունը տարածվում է տվյալ միավորի ամբողջ սահմաններում: Վարչական շրջանների և դրանց հավասարեցված հանրապետական ենթակայության քաղաքների ընդհանուր թիվը առ 1-ը հունվարի 1987 թ., ինչպես հայտնի է, կազմում է 59:

Շրջանացման մնացած երկու տաքսոնոմիական աստիճանները իրենց պաշտոնական ձևակերպումը չեն ստացել: Հատուկ հետազոտություններով հաստատվում է, որ սոցիալ-տնտեսական ենթաշրջանների ընդհանուր թիվը չի գերազանցում 18-ին (յուրաքանչյուր ինտեգրալ սոցիալ-տնտեսական շրջանում առանձնանում են 2—4 ենթաշրջան), իսկ միկրոշրջանների թիվը հասնում է շուրջ 120-ի:

Ինտեգրալ սոցիալ-տնտեսական շրջաններից հինգը՝ Արարատյանը, Շիրակը, Սյունիքը, Սևանը և Լոռի-Փամբակը հիմնական գծերով համա-



Նկ. 33. Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական շրջանացման սխեմա:

պատասխանում են հանրապետության ժողովրդական տնտեսության արդեն ձևավորված կառուցվածքային միավորներին. Դրանցից յուրաքանչյուրը արտադրողական ուժերի և ինֆրակառուցվածքային տարրերի գարգացման ներկայիս մակարդակով արդեն իրենից ներկայացնում է մի հարաբերական ամբողջություն, ձևավորվել է լոկալ տարածքային-արտադրական համալիրի հիմքի վրա, ունի կազմակերպող տնտեսական կորիզ, ինչպես նաև տնտեսական շրջանի մյուս հատկանիշները. Այդ պատճառով էլ դրանք լիիրավ ձևով կարող են դիտվել որպես առանձին տնտեսական շրջաններ, շրջան հասկացության այն իմաստով, ինչ տըրքում է մարզային բաժանում շունեցող միութենական հանրապետության տնտեսական շրջանացման առաջին կատեգորիայի միավորին (տես՝ գլուխ 13):

Ինչ վերաբերում է ճ-րդ՝ Աղստեկի սոցիալ-տնտեսական շրջանին, ապա այն իր ներկա վիճակով դեռևս գուրկ է տնտեսական շրջանի հիշյալ հատկանիշների մի մասից և որպես ինքնուրույն շրջան է առանձնաց-վում գերազանցապես «հեռանկարային-դիրեկտիվային» սկզբունքով, հաշվի առնելով զարգացման հնարավորությունները:

14.2. ԱՐԱՐԱՏԻԱՆ ՇՐՋԱՆ

(Արովյանի, Նախրիի, Ապարանի, Աշոտարակի, Թաղրամյանի, Հոկտեմբերյանի, Էլ-Միածնի, Մասիսի, Արտաշատի, Արարատի վարչական շրջաններ, Երևան, Արովյան, Աշտա-րակ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Արտաշատ, Արարատ հանրապետական ենթակայության քաղաքներ):

Տարածությունը՝ 6,1 հազ. քառ. կմ,

Բնակչությունը՝ 1,9 մլն. մարդ:

Շրջանը որպես բնական սահմանագծեր ունի հր.-արմ.-ում՝ Արաքս գետը (որը միաժամանակ ՍՎՀՄ պետական սահմանն է), արլ.-ում՝ Գեղամա լեռները, Հս.-Հս.-արմ.-ում՝ Արագածի լեռնազանգվածը: Այդ սահմաններում շրջանը ընդգրկում է Արարատյան միջլեռնային գոգա-վորության ձախափնյա հատվածի մեծ մասը և ծփվում է 800 մ-ից մինչև 4090 մ հիպսոմետրիկ նիշերի միջև: Շրջանի ոչ ընդարձակ տարածքում առկա է բնական պայմանների այնպիսի բազմազանություն, որպիսին բացակայում է հարթավայրային երկրների բազմիցս անգամ ընդարձակ տարածություններում: Գոգավորության հատակային մասից մինչև շրջա-կա լեռնակատարները միմյանց հաջորդում են գրեթե բոլոր ուղղաձիգ գոտիները՝ կիսանապատներից սկսած մինչև սուրբնիվալ ու հավերժա-կան ձյան գոտին:

Ոելիեֆային պայմանները համեմատաբար բարենպաստ են. Հարթ, ինչպես և փոքր ու միջին թեքության տարածությունները այստեղ շատ ավելի ընդարձակ են, քան հանրապետության որևէ այլ տնտեսական շրջանում:

Մթնոլորտային տեղումների քանակը խիստ անբավար է (գոգա-վորության հատակային մասում տարեկան ոչ ավելի 300 մմ-ից), բայց նպաստավոր են ջերմային պայմանները: Շրջանի տարածքի մեծ մասում հովհայան միջին ջերմաստիճանը 24° -ից լի իջնում, անսառնամանիք օրերի թիվը գերազանցում է 240-ին: Տիրապետողը շոր ցամաքային կլի-մայի տիպն է, որ արհեստական ոռոգման դեպքում ինտենսիվ երկրա-գործության լավ հնարավորություններ է ընձեռում:

Ընդերքի հայտնաբերված, հետախուզված ու շահագործվող ռե-ռուրսները ներկայացված են գլխավորապես ոչ մետաղային օգտակար

Հանածոներով՝ կրաքարով (Արարատ), կերակրաաղով (Երևան), շինարական նյութերով (տուֆ, բազալտ, մարմար, հրաբխային խարամ, կիր, ավագ), որոնք ցրված են տարբեր վայրերում, և հանքային ջրերով (Արգնի, Արարատ):

Արդյունաբերական հետաքրքրություն ներկայացնող միակ մետաղը երկաթն է (Արովյան), որի հանքավայրը, սակայն, դեռևս չի շահագործվում:

Արարատյան գոգավորության հարավային մասը՝ համանուն դաշտը եղել է Հնագույն քաղաքակրթության կենտրոններից մեկը, որտեղ մարդկային գործունեության հայտնաբերված նյութական վկայություններն ունեն ավելի քան 100 հազ. տարվա վաղեմիություն:

Պատմաշխարհագրական առումով Արարատյան գոգավորությունը եղել է Մեծ Հայք պետության 15 աշխարհներից մեկը՝ Արարատի (Արարատի) կազմում: Մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալը մտել է Պարսկաստանի Երևանի խանության մեջ: Ռուսաստանին է միացվել 1827 թ., մինչև 1840 թ. հանդիսացել է Հայկական մարզի, իսկ 1840—1917 թթ. Երևանյան նահանգի մի մասը:

Դժվար է գերագնահատել Արարատյան դաշտի գերը հայ ժողովրդի պատմական զարգացման երկարատև պրոցեսում: Բավական է ասել, որ Հայկական պետության տարբեր ժամանակաշրջաններում գոյություն ունեցած մեկ տանյակից ավելի մայրաքաղաքների մեծ մասը տեղափորված են եղել Արարատյան դաշտում:

Հայաստանի մյուս աշխարհների շարքում Արարատը միշտ էլ աշքի չընկել համեմատաբար իսկտ բնակչությամբ, տարածքի յուրացվածության ավելի բարձր մակարդակով:

Որպես այդպիսին է նա հանդես գալիս նաև այսօր: Արարատյան տնտեսական շրջանին է բաժին ընկնում Հայկական ՍՍՀ տարածքի շուրջ ½, բայց բնակչության թվի 55 տոկոսը: Հանրապետության մյուս շրջաններից նա մեծ շափով առաջ է անցել այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, շրջանային մասնագիտացման աստիճանը, արտադրողական ուժերի կոմպլեքսային զարգացման, ինչպես նաև արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի մակարդակը:

Այդ բոլորի շնորհիվ էլ շրջանը Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում ձեռք է բերել բացարձակ գերակշռող դեր: Ավելին, իր բազմաբնույթ արտադրությամբ ու տնտեսական պոտենցիալով առաջնակարգ տեղ է գրավում ամբողջ Անդրկովկասում և նույն մակարդակի վրա է գտնվում, ինչ Աղբքեշանական ՍՍՀ Բաքվի և Վրացական ՍՍՀ Թբիլիսիի հանրապետական տնտեսական շրջանները:

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ շրջանի տեղը

բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. արդյունաբերական համախառն արտադրանքի գծով՝ 60 տոկոսը, արդյունաբերության մեջ զբաղվածների՝ 58 տոկոսը, գյուղատնտեսական համախառն արտադրանքի՝ 47 տոկոսը, զրովի հողատարածությունների՝ 44 տոկոսը, խաղողի այգիների՝ 76 տոկոսը. Արարատյան տնտեսական շրջանը գերազանցում է մյուս տնտեսական շրջաններին ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման և ինդուստրիալ զարգացման մակարդակով, ինչպես նաև բնակչության մեկ շնչին ընկնող արդյունաբերական արտադրանքի ծավալով. գյուղատնտեսական արտադրանքի ծավալով, բնակչության խոտությամբ, քաղաքային բնակչության տոկոսով, ենթակառուցվածքի զարգացման աստիճանով:

Արարատյան գոգավորությունում առավել ուժգին ձևով են դրսեորդում այն հատկանիշները, որոնք ի մի վերցրած այս կամ այն տարածուին տալիս են հանրապետական սոցիալ-տնտեսական շրջանի որակ.

Դեռևս նախահեղափոխական շրջանում Արարատյան գոգավորությունը աչքի է ընկել տնտեսական զարգացման ավելի նպաստավոր պայմաններով. Զբաղեցնելով Երևանյան նահանգի հիմնական մասը և Հարելով Նահանգի վարչական կենտրոն Երևան քաղաքին, այդ տարածքը զարգանում էր ավելի կոմպակտ ու համախմբված ձևով (հիշենք, որ Հայկական ՍՍՀ մի շարք տնտեսական շրջանների տարրեր մասեր արտադրական-տրանսպորտային ու այլ բնույթի կապերով հարել են դրանցից դուրս գտնվող տարրեր կենտրոնների):

Սովետական իշխանության հաղթանակին հաջորդած տարիներին այստեղ զարգացել է հանրապետության ամենախոշոր՝ Երևանի արդյունաբերական հանգույցը (տես՝ գլուխ 6-րդ): Նա էլ հենց դարձել է այն հզոր կազմակերպիչ կորիզը, որն աստիճանաբար իր շուրջն է համախմբել զրեթե ամբողջ Արարատյան գոգավորության արտադրողական ուժերը:

Սովետական իշխանության առաջին տասնայմակներում հանրապետության արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը տրամադրվող համեմատաբար սուր հանրավորությունները ուղղվում էին առաջին հերթին մայրաքաղաք Երևանի և հարակից շրջանների զարգացմանը: Իր ժամանակի համար դա թերևս ճիշտ գիծ էր. Հարկավոր էր նախկին հետամասց, ազգարային Հայաստանում ստեղծել արդյունաբերական, պրոլետարական հզոր կենտրոն, որն ի վեճակի լիներ իր հետևից տանելու ամբողջ հանրապետությունը: Այդպիսի կենտրոն կարող էր դառնալ և իսկապես դարձավ մայրաքաղաքը:

Շուտով մայրաքաղաքում ստեղծված արդյունաբերությունը օրյեկտիվորեն դեպի իրեն սկսեց ձգել նոր արտադրություններ ու ճյուղեր: Դրանք իրենց զարգացման համար այստեղ ավելի նպաստավոր պայ-

Ճաններ էին գտնում, քան այլ շրջաններում, որտեղ համապատասխան սրտադրությունները, ինչպես և ենթակառուցվածքի շատ տարրեր բացակայում էին: Բայց մյուս կողմից մեծանում էր Երևանի Հիպերտրոֆիկ զարգացման վտանգը: Եվ ահա, 50-ական թվականներից սկսած, այս վտանգը մեղմացնելու նպատակով շատ արտադրություններ, որոնք այլ պայմաններում կարող էին արտադրվել Երևան քաղաքում, սկսեցին տեղաբաշխվել նրա մերձակա բնակավայրերում՝ էջմիածնում, Արտաշատում, Աշտարակում, Հոկտեմբերյանում և այլուր: Նույնիսկ ստեղծվեցին Երևանի արբանյակ քաղաքներ, ինչպիսիք են Աբովյանը, Նոր Հաճընը, Մասիսը: Երևանի շուրջը ձևավորվեց բազմաբնույթ կապերով իրար հետ միացած քաղաքային բնակավայրերի մի կուռ համակարգ՝ Երևանի արդյունաբերական հանգույցը:

Դժվար է գերազնահատել այն խոր ազդեցության նշանակությունը, որ ամբողջ Արարատյան գոգավորության տնտեսության վրա ունի հզոր արդյունաբերական հանգույցը: Բազմաթիվ տարիներ արդեն այդ հանգույցն է որոշում Արարատյան շրջանի ողջ տնտեսական կյանքը, նա է տոն տալիս այն տեղաշարժերին, որ ընթանում են նրա արտադրողական ուժերի զարգացման բնույթի և ուղղությունների մեջ: Զափազանցություն չի լինի ասել, որ Արարատյան դաշտը և հարակից նախալեռնային ու լեռնային շրջանները այսօր արդեն դարձել են Երևանի արդյունաբերական հանգույցի համար մի յուրատեսակ «օժանդակ արտադրամաս», որի աշխատանքային սիթմն ու արտադրական ֆունկցիաները որոշվում են «գրլիավոր արտադրամասի»՝ արդյունաբերական հանգույցի պահանջներով ու շահերով: Այս երկույթի հետ փոխկապակցված՝ ձևավորվել ու զարգանում է Արարատյան շրջանի տնտեսության ճյուղային կառուցվածքը: Հիմնական գծերով այն կրկնում է հանրապետության ընդհանուր պատկերը: Աշքի է զարնում, մասնավորապես թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության բազմաճյուղ բնույթը: արդյունաբերության մեջ դա արտահայտվում է վերամշակող արդյունաբերության ճյուղերի, գյուղատնտեսության մեջ՝ ինտենսիվ ճյուղերի ավելի բարձր տեսակարար կրշտություն: Այսպես, արդյունաբերության համախառն արտադրանքի ընդհանուր ժամանակակից և զրաղվածների ընդհանուր թվի գրեթե կեսը բաժին է ընկնում մեքենաշինությանը: Մեքենաշինությունից բացի, հանրապետության միջին ցուցանիշներից բարձր է նաև սննդի արդյունաբերության ու քիմիական արդյունաբերության բաժինը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի մեծ մասը տալիս են խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը, որոնք Հայկական ՍՍՀ ոռոգովի երկրագործության պայմաններում ինտենսիվ ու արդյունավետ ճյուղեր են և առավել շափով են

Համապատասխանում Երևանի հանգույցի սննդի արդյունաբերության ձեռնարկությունները հումքով, իսկ քաղաքային բնակչությանը՝ թարմ մթերքներով բավարարելու պահանջներին:

Երևանի արդյունաբերական հանգույցի՝ որպես շրջանի կազմակերպիչ, համախմբող կենտրոնի առկայությունը և արտադրության արդեն ձևավորված ճյուղային ու տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները հանգեցրել են տնտեսական շրջանի մյուս հատկանիշների՝ ներմին տնտեսական կապերի բարձր զարգացմանը: Այս տնտեսական կապերը ունենալով կայուն բնույթ և շրջանի մյուս տնտեսական կենտ-



Նկ. 34. Խաղողի այդի Արարատյան դաշտում.

րոնները միացնելով Երևանի, ինչպես նաև միմյանց հետ, ստեղծել են մի միասնական համակարգ:

Արարատյան տնտեսական շրջանի և ամրող Հայկական ՍՍՀ խոշորագույն տնտեսական կենտրոնը Երևան քաղաքն է: Նրանից բացի այստեղ կենտրոնացված են ևս 6 հանրապետական ենթակայության քաղաքներ և 9 քաղաքատիպ ավաններ իրենց արդյունաբերությամբ, ժամանակակից հաղորդակցության միջոցներով, կոմունալ տնտեսության և ենթակառուցվածքի այլ տարրերով:

Որպես կարևոր արդյունաբերական կենտրոններ հատկապես աշխարհի են ընկնում Աբովյանը, Էջմիածինը, (սրանցից յուրաքանչյուրի բնակչությունը գերազանցում է 50 հազ.-ին), Հոկտեմբերյանը, Արտաշատը և Արարատը:

Միութենական և հանրապետական նշանակության արդյունաբերական ձեռնարկություններ կան նաև մյուս քաղաքային բնակավայրերում:

Վերջիններից հիշատակության արժանի է հատկապես Մեծամոր քաղաքատիպ ավանը՝ Հայկական ատոմային էլեկտրակայանով:

Շրջանի տնտեսական կենտրոնների փոխադարձ տնտեսական կապերը բազմազան են: Դրանց թվում առավել ակտիվ շրջանագոյացնող դեր ունեն երկուս՝ արտադրական (Հումքի, Էներգիայի, կիսաֆարբիկատների ու կոմպլեկտավորող մասերի գծով) և աշխատանքային կապերը: Վերջիններս համեմատաբար ուշ են երևան եկել, բայց այսօր մեծ ժամանակակից են ընդունել և դրսերպվում են բնակչության ճոճանակային միգրացիայի ձևով: Նրա գլխավոր հանգուցակետը երևան քաղաքն է, որի շուրջը ճոճանակային միգրացիան տեղի է ունենում մինչև 50 կմ շառավղով:

Արարատի ներշրջանային տնտեսական կապերը բավական սերտ են նաև արդյունաբերական կենտրոնների և հարակից գյուղատնտեսական շրջանների միջև: Այստեղ նույնպես գլխավորը արտադրական կապերն են, որոնք իրականացվում են գյուղատնտեսական հումքը (խաղող, պտուղներ, բանջարեղեն, խորդենի և այլն) վերամշակող ձեռնարկություններին՝ գինեգործական, պահածոների, խորդենու վերամշակման և այլ գործարաններին ու ֆաբրիկաներին հայթայթելու ձևով, որոնք տեղաբաշխված են գլխավորապես տնտեսական շրջանի արդյունաբերական կենտրոններում:

Պակաս շափով չի զարգացած Արարատյան տնտեսական շրջանի մասնագիտացումը, որը և որոշում է նրա տեղը աշխատանքի հանրապետական տարածքային բաժանման համակարգում: Ավելին, գլխավորապես Արարատյան դաշտի շնորհիվ է ձևավորվել ամբողջ հանրապետության արտադրական դիմագիծը, տեղը ՍՍՀՄ աշխատանքի տարածքային բաժանման համակարգում, հետեւապես և նրա միութենական մասնագիտացումը:

Եկ եթե հանրապետության մասնագիտացումը, ինչպես տեսանք ուույն գրքի 11-րդ գլխում, որոշում են արդյունաբերության 6 և գյուղատնտեսության 5 ճյուղեր, ապա Արարատյան շրջանը վճռական դեր է խաղում արդյունաբերության 4 և գյուղատնտեսության 3 ճյուղերի զարգացման գործում:

Արդյունաբերության մեջ այդ ճյուղերն են մեքենաշինությունը, քիմիան, սննդի և թեթև արդյունաբերությունը: Այդ ճյուղերի նշանակությունը ճիշտ հասկանալու համար նշենք, որ դրանց բաժինը հանրապետության համապատասխան ճյուղերի համախառն արտադրանքի ծավալում տատանվում է 60-ից 90 տոկոսի միջև: Միաժամանակ շատ բարձր է նրանց ապրանքայնության գործակիցը. շրջանի սահմաններից դուրս է առաքվում դրանց համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի 70 տոկոսից ավելին, իսկ շատ արտադրանքների գծով՝ գրեթե 100 տո-

կոսը (մի շարք շափիչ ու վերահսկիչ սարքեր, կապի միջոցներ, քիմիական արդյունաբերության որոշ արտադրանք):

Գյուղատնտեսության բնագավառում շրջանի մասնագիտացումը որոշող ճյուղերն են խաղողագործությունը, հարավային բանջարաբուծությունը, եթերայուղատու խորդենու մշակությունը, ինչպես նաև պտղաբուծությունը: Պտղաբուծության տեսակարար կշիռը հանրապետությունում համեմատաբար բարձր չէ (շուրջ 50 տոկոս), բայց մյուս ճյուղերինը գերազանցում է 80 տոկոսին, իսկ խորդենու գծով հասնում է 100-ի:

Արարատյան տնտեսական շրջանի տեղը Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում աշքի է ընկնում նաև էլեկտրաէներգիայի արտադրության, շինանյութերի արտադրության (ցեմենտի և բետոնի ու երկաթբետոնի շինվածքների), գունագոր մետալուրգիայի և գրատպության գծով: Այստեղ է իրականացվում, մասնավորապես, հանրապետության ամբողջ մետաղային ալյումինի (ալյումինե ֆայլաթիթեղի ու շինարարական կոնստրուկցիաների) ստացումը, ոսկու կորզումը (Արարատ քաղաքում) և հանրապետությունում հրատարակվող գրեթե բոլոր գրքերի տպագրությունը:

Իսկ եթե այս տեսակետից գնահատենք ոչ թե ճյուղերը, այլ ավելի մանր բաղադրամասերը՝ ենթաճյուղերն ու արտադրությունները, ապա բավական մեծ թիվ կեազմեն այնպիսիները, որոնց գծով Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանը հանրապետությունում մենաշնորհ դիրք է գրավում: Հիշատակենք դրանցից առավել կարևորները. քիմիական արդյունաբերության ճյուղի գծով՝ սինթետիկ կառուցուկը, արհեստական խեժերը, կառուտիկ սոդան, քացախաթթուն, պոլիվինիլացետատային միշարք միացությունները, քիմիական ունակություններն ու դեղորայքը, ավտոմոբիլային դողերն ու ռետինա-տեխնիկական իրերը, կենցաղային քիմիայի արտադրանքը և այլն, մեքենաշինության գծով՝ ավտոմոբիլներն ու ավտոբեռնիշները, վերամբարձ կռունկները, էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, շարժական էլեկտրակայանները, ժամացույցները, լուսավորման և հատուկ օգտագործման էլեկտրալամպերը և բազմապիսի մետաղահատ հաստոցները, շափիչ, վերահսկող ու կառավարող սարքերը, էլեկտրական մեքենաները և այլ արտադրանք:

Թեթև արդյունաբերության բնագավառում հիշատակության արժանի են հատկապես բրդյա գործվածքներն ու ժանյակները, բնական կաշին և կաշվե գալանտերիան (արդյուղարդեղենը), ոսկերչական իրերը, մյուս ճյուղերի արտադրատեսակներից՝ բյուրեղապակին, մարմարյա ու բրուտագործական իրերը:

Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանը առանձնահատուկ դեր է կատարում որակյալ կադրեր պատրաստելու բնագավառում, անկախ նրանից, թե դա վերաբերում է բարձրագույն կրթությանը, միջնակարգ

յասնագիտական, թե պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությանը։ Այս-
տեղ են կենտրոնացված Հայկական ՍՍՀ 13 բուհերից 11-ը, որոնք տա-
լիս են հանրապետության բոլոր բուհերի շրջանավարտների թվի 87 տո-
կոսը, և 63 տեխնիկումներից 25-ը (շրջանավարտների շուրջ 60 տոկոսը)։

Անգնահատելի է տնտեսական շրջանի դերը գիտության ու հայ մշա-
կույթի զարգացման գործում։ Այստեղ գիտահետազոտական ու նախա-
գծային հիմնարկների, գրադարանների, թանգարանների, թատրոնների և
այլ կուլտուրական հիմնարկների այնպիսի կենտրոնացում կա, որով այս
շրջանը կարող է մրցել բազմիցս անգամ ավելի խոշոր հանրապետու-
թյունների ու զարգացած արտասահմանյան երկրների մայրաքաղաքների
և դրանց հարող շրջանների հետ։ Այս շրջանում կենտրոնացված շուրջ
100 գիտահետազոտական ինստիտուտներում, մասնաճյուղերում, ինք-
նուրույն լաբորատորիաներում ու բուհերում զբաղված գիտաշխատող-
ների թիվը գերազանցում է 15 հազ., այսինքն հանրապետության բոլոր
գիտաշխատողների 85 տոկոսից ավելին։

Բնական է, որ Արարատյան տնտեսական շրջանը իր այս բացառիկ
բարձր ցուցանիշներով պարտական է առաջին հերթին երևանի, որպես
հանրապետության մայրաքաղաքի։ Բայց վերջին տարիներս զգալիորեն
աշխատացել են նաև շրջանի մյուս կենտրոնների կուլտուրական ու գի-
տական ֆունկցիաները։ Այդ տեսակենտից առանձնանում են հատկապես
էշմիածինը (գյուղատնտեսական թեքման գիտական հիմնարկներ, թան-
գարաններ), Արտաշատը (միջըշանային պետական թատրոն), Բյուրա-
կանը (համաշխարհային ճանաչում ունեցող աստղաֆիզիկական օբսեր-
վատորիան), Աշուարակը, Գառնին, Աբովյանը (գիտահետազոտական
հիմնարկներ)։

Քննարկվող ռեգիստրում բավականին ակնառու է տնտեսական շրջա-
նի մյուս հատկանիշը ևս՝ տարածքի միասնական տրանսպորտային
կողմնորոշումը և ներքին նաղորդակցության ուղիների ամրողական
ցանցի առկայությունը։

Արարատյան տնտեսական շրջանի տարածքի բոլոր մասերի համար
երևանի արդյունաբերական հանգույցի հետ մեկտեղ հզոր ձգողական ուժ
է երկաթուղին, որը կտրում է շրջանը երկու աղղությամբ՝ հս.-արմ.-ից
հր.-արլ. (թրիլիսի-Լենինական-Երևան-Ձուլֆա-Բաքու գծի հատվա-
ծը) և հր.-արմ.-ից հս.-արլ., (Երևան-Հրազդան գծը)։ Շրջանի ամբողջ
տարածքը, բացառությամբ Ապարանի, ամբողջությամբ սպասարկվում է
այս երկաթուղիների կողմից։

Նշված ուղղություններով են ձգվում նաև շրջանի ավտոմոբիլային
գլխավոր ճանապարհները, մյուսները վերջիններիս ճյուղավորումներն
են և հեռու ընկած բնակավայրերին ելք են տալիս դեպի երկաթուղիներն
ու ավտոմոբիլային մայրուղիները, ամբողջականացնելով Արարատյան

շրջանի ներքին հաղորդակցության ուղիների ցանցը:

Հատկանշական է նաև այն, որ շրջանի թե երկաթուղիները, թե խճուղիները հանգուցվում են ծրեանում, առավել ընդգծելով Արարատյան տնտեսական շրջանի միակենտրոն բնույթը:

Շրջանի մասին վերը ասվածը կասկած չի թողնում, որ Արարատյան գոգավորությունը գրեթե ամբողջությամբ ընդգծված է մեկ միասնական տնտեսական «ուժային դաշտի» մեջ, որի կենտրոնում ծրեանի արդյունաբերական հանգույցն է:

Ինչ վերաբերում է տնտեսական շրջանի վերջին հատկանիշին՝ ամբողջ տարածքի համար միասնական տնտեսական պետականի առկայությանը, ապա դա այստեղ ավելի թույլ է արտահայտված, քան, ինչպես կտեսնենք ստորև, մյուս շրջանների մեծ մասում է: Այնուամենայնիվ ներկա ժամանակաշրջանի և տեսանելի հեռանկարի համար կարող ենք առանձնացնել հետևյալ պրոբլեմները:

Դա նախ և առաջ տարածքի ռացիոնալ օգտագործման պրոբլեմն է: Արարատյան տնտեսական շրջանը ունենալով բնակչության և արտադրության ամենամեծ խտությունը, աշքի է ընկնում ակտիվ օգտագործվող հողատարածությունների գերակշռությամբ: Դրանք են բնակավայրերի. արդյունաբերական շենքերի, ճանապարհների, իսկ գյուղատնտեսության մեջ՝ բազմամյա տնկարկների ու վարելահղերի գեղեցրած տարածությունները, որոնք կազմում են շրջանի ամբողջ տարածքի 26 տոկոսը (հանրապետության միջինը 20 տոկոս է): Մնացած տարածություններն իրենցից ներկայացնում են անտառներ, խոտհարքեր, արոտավայրեր և այսպես կոչված «անպետք» հողեր, որոնք գտնվում են «պասսիվ օգտագործման տակ» կամ ամբողջովին լեն օգտագործվում: Բայց մյուս կողմից, այդ տարածությունները ունեն չերմային նպաստավոր պայմաններ և հարմար տնտեսաշխարհագրական դիրք, որը բավականին արդյունավետ է դարձնում դրանց ներգրավումը ակտիվ օգտագործման ոլորտի մեջ:

Արարատյան տնտեսական շրջանի տարածքի ռացիոնալ օգտագործման պրոբլեմը ունի կոմպլեքսային բնույթ: Նրա լուծումը իրականացվում է թե «անպետք» հողատարածությունների յուրացման, թե գյուղատնտեսական հանդակների ակտիվ տրանսֆորմացիայի ու ամբողջ տարածքի գիտական, ռացիոնալ կազմակերպման միջոցով:

Ներկայումս հանրապետության ոչ մի տնտեսական շրջանում այնպիսի լայն ծավալ չի ընդունել հողերի գյուղատնտեսական մելիորացիան, ինչպես Արարատյան շրջանում է: Այդ վիճակը պահպանվելու է նաև տեսանելի ապագայում: Հողերի մելիորացիան այստեղ հիմնականում երեք ուղղությամբ է ընթանում: ոռոգում (շրջանի բոլոր մասերում), աղուտների աղագերծում (շրջանի հր.-արլ. մասի մերձարաքսյան հատ-

վածում, որտեղ աղակալված տարածությունները շուրջ 30 հազ հա են) և քարամաքրում (Արագածի նախալեռներում):

Սուր է դրված նաև շրջանի հարավային՝ բացարձակ ոռոգման հատվածում ակտիվ օգտագործվող գյուղատնտեսական հանդակների պահպանության հարցը: Հայտնի է, որ վերջին տասնամյակներում ոռոգվող վարելահողերի ու բազմամյա տնկարկների ընդարձակ տարածություններ հանվել են գյուղատնտեսական օգտագործումից և դրվել կառուցապատման տակ: Ներկայումս այդ պրոցեսը ավելի խստորեն է կարգավորվում պետության կողմից: Խնդիր է դրվում, և դա բխում է հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսության շահերից, որպեսզի խիստ դանդաղեցվի կամ ամբողջովին դադարեցվի այդ պրոցեսը, իրականացվի տարածքի այնպիսի կազմակերպում, որը ապահովի քաղաքացիական, արդյունաբերական ու տրանսպորտային ամբողջ շինարարության իրականացումը գյուղատնտեսության համար անպետք կամ քիչ պետքական հողատարածություններում:

Մյուս պրորեմը, որը նույնպես Արարատյան տնտեսական սոցիալ-շրջանում ավելի ուժգին է դրսեռովում, քան ընդհանրապես Հայկական ՍՍՀ-ում է, դա շրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն է:

Հայկական ՍՍՀ շրատնտեսական հաշվեկշիռը, ինչպես տեսանք նախորդ գլուխներում, լարված է: Հաշվումները ցույց են տալիս, որ ընթացիկ դարի վերջին և հաջորդ դարի սկզբին հանրապետության բոլոր շրային ռեսուրսները արդեն ընդգրկված կլինեն տնտեսական օգտագործման ոլորտը: Արարատյան դաշտում այդ վիճակը վրա կհասնի շատ ավելի շուտ: Այսօր արդեն ամառային ամիսներին ջրի տեղական պաշարները չեն բավարարում, և Արարատյան ջրշանը զգալի դուտացիա է ստանում կից ավազաններից, հատկապես Սևանից (Արփա-Սևան ջրատարի կառուցումով՝ նաև Արփա գետի ավազանից), Շիրակից՝ Ախուրյանի ջրամբարից:

Տեղական ռեսուրսներից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Արարատյան ստորգետնյա ավագանը: Սակայն դրա օգտագործումը պահանջում է մեծ զգուշություն և հաշվենկատություն: Ավազանի շահագործման ռեժիմի և օգտագործվող ջրի ծավալի որոշման մեջ թույլ տրված ամեն մի սխալ կարող է հանգեցնել անուղղելի էկոլոգիական հետեւանքների և խոշոր տնտեսական վնասների: Դրանցից նշենք հետևյալները: շրային պաշարների նվազման պատճառով գրունտի իշվածք-ների գոյացումը (այդ երեսությունը այսօր արդեն դիտվում է Տոկիոյի, Մեխիկոյի և մի շարք այլ ավազաններում), ստորգետնյա ավազանի շրային տարրեր հորիզոնների իրար խառնվելու պատճառով քաղցրահամ շրերի որակի կորուստը, մշակովի հողերի երկրորդային աղակալումն ու ճահ-

ժացումը և այլ հետևանքներ, որոնք ներկայումս կանխագուշակել անհնար է:

Ներկայումս Արարատյան շրջանը միակն է, որտեղ ըստ էության ձևավորվել է միանական ջրատեսական համակարգ: Քաղաքային ու միջջանային ջրմուղներից բացի գործում են ոռոգիչ խոշոր մայր-ջրանցքներ և հզոր պոմպակայաններ, որոնց մեծ մասը այսպես թե այնպես փոխկապակցված են և մեկի շահագործման ռեժիմի փոփոխությունը ավել կամ պակաս չափով անդրադառնում է մյուս աշխատանքի վրա: Նման պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում այդ համակարգը սնող ջրային ռեսուրսների սեզոնային կարգավորումը, հատկապես ձմեռային հոսքի ու հալոցքային ջրերի ամբարուն ու ոռոգման սեզոնում օգտագործելը: Այդ տեսակետից շոշափելի օգնություն են ցույց տալիս արդեն գործող Ապարանի և Ազատի ջրամբարները: Նման ջրամբարներ կառուցվելու են նաև ապագայում:

Երևան քաղաք՝ համանուն արդյունաբերական հանգույցի և Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանի կենտրոնը, միաժամանակ լինելով Հայկական ՍՍՀ մայրաքաղաքը, ունի շրջանագոյացնող հզոր պոտենցիալ, բազմիցս անգամ ավելի հզոր, քան հանրապետության որևէ այլ տնտեսական կենտրոն: Բացի իր հանգույցաստեղծ ու շրջանաստեղծ ֆունկցիաներից, որոնք քննարկվել են վերևում, երեսնը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում որպես ինքնատիպ տնտեսաաշխարհագրական օբյեկտ և արժանի է առանձին ուշագրության:

Երևանը ՍՍՀՄ տարածքի ամենահին քաղաքն է, հիմնադրվել է որպես բերդաքաղաք մ.թ.ա. 782 թ. և կոչվել է Էրեբունի: Անդրկովկասյան մայրաքաղաքների շարքում գրավում է երկրորդ տեղը ըստ բնակչության թվի՝ առ 1-ը հունվարի 1987 թ. 1,3 մլն մարդ (զիջում է Թբիլիսիին) և ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալի (զիջում է Բաքվին): Նա աշքի է ընկնում նաև զարգացման բացառիկ բարձր տեմպերով: Ներկայումս հանդես է գալիս որպես արդյունաբերական, կոլտուրական, գիտական, կրթական միութենական շափանիշի խոշոր կենտրոն, որպես երկաթուղային, ավտոմոբիլային ու օդային տրանսպորտի հզոր հանգույց:

Վարշական առումով Երևանը բաժանված է 8 քաղաքային շրջանների՝ կենտրոնական, Սպանդարյանի, Օրջոնիկիձեի, 26 կոմիսարների անվան, Շահումյանի, Մյասնիկյանի, Սովետական և Մաշտոցի: Քաղաքի շրջագծի մեջ են մտնում Սովետական քաղաքատիպ ավանը և երկու գյուղական բնական է, միաժամանակ, որ վերջին տարիներին տարվում է

Ետաշիոնալ շպետք է համարել այն, որ ներկայումս Երևանին բաժին է ընկնում հանրապետության բնակչության ավելի քան մեկ երրորդը: Հատկանշական է, միաժամանակ, որ վերջին տարիներին տարվում է



Նկ. 35. Երևանի Վ. Ի. Լենինի հրապարակը:

մայրաքաղաքի աճի տեմպերի կրճատման քաղաքականություն, որն արդեն տալիս է իր դրական արդյունքը՝ Եթե 1920—75 թթ. բնակչության աճի շուրջ երկու երրորդը (իսկ այդ աճը կազմել է մոտավորապես 900 հազ. մարդ) բաժին է ընկել միգրացիային, ապա 1976—85 թ.թ. ընդա-

մենը 28 %, իսկ ներկայումս մեխանիկական աճը գործնականում դադարել է¹:

Երևանի միկրոաշխարհագրական ձևավորման վրա էական ազդեցություն է գործել նրա միկրոաշխարհագրական դիրքը՝ Արարատյան դաշտից դեպի նախալեռնային սարավանդներն անցման գոտում, ամֆիթատրոնաձև՝ հյուսիսից հարավ իջնող Երևանյան գոգավորությունում։ Տարածքը կտրատված է, բարձրաշափական նիշերը տատանվում են 865—1390 մ միջին, կենտրոնական մասով ձգվում է Հրազդանի կիրճը։

Երևանի առաջին գեղեցիկական հանույթը կատարվել է 1837 թ., իսկ առաջին հատակագիծը կազմվել է 1850-ական թվականների կեսերին, որի հիման վրա բացվել են մի քանի ուղղագիծ փողոցներ, կառուցվել են առաջին երկհարկ և եռահարկ շենքերը։ Այդ ամենով հանդերձ, նախասովետական Երևանը մնում էր որպես մի հետամնաց գավառական գյուղաքաղաք։ Սովետական իշխանության հաստատումից հետո 1924 թ. Ա. Թամանյանի, իսկ հետագայում այլ հեղինակների կազմած շորս հատակագծերի հիման վրա ոլլ միայն վերակառուցվեց հին Երևանը, այլև ըստ էլության ստեղծվեց նոր ժամանակակից քաղաք, իր մեջ ընդգրկելով մերձակա մի շարք բնակավայրեր և նոր կառուցապատվող տարածություններ։

Երևանի ներկային գլխավոր հատակագծի համաձայն քաղաքի կենտրոնական մասը հիմնականում պահպանում է քաղաքաշինական-ճարտարապետական այն գծերը, որոնք նախատեսել էր Ա. Թամանյանը։ Նրա ճարտարապետական կենտրոնը լենինի հրապարակն է, որից ճառագայթաձև ձգվում են քաղաքի հիմնական զարկերակները։ Նոր հատակագծով Երևանը բաժանված է 9 հատակագծային շրջանների, որոնցից յուրաքանչյուրը՝ կախված տեղանքի ուղիեցից, կենտրոնի՝ քաղաքի պատմական կորիզի նկատմամբ ունեցած դիրքից և այլ առանձնահատկություններից, ունի իր ուրույն կոմպոզիցիոն լուծումները։

Ներկայումս մշակվում է Երևանի նոր գլխավոր հատակագիծը առաջիկա 20—25 տարիների համար, որը նախատեսում է քաղաքի ճարտարապետական պատկերի հետագա բարելավման, նոր համալիրների ու կոթողների ստեղծման հետ մեկտեղ, լուծել նաև հասունացած քաղաքաշինական շատ պրոբլեմներ։ Հատուկ ուշադրություն է դարձվում մասնավորապես քաղաքային տնտեսության զարգացմանը, բնակչության աշխատանքի ու կյանքի պայմանների, ջրամատակարարման, տրանսպորտային հաղորդակցության բարելավմանը, նոր հանգստի գոտիների ստեղծմանը, շրջապատող միջավայրի, հատկապես օդային ավագանի առողջացմանը։

¹ Экономика и культура г. Еревана в 1985 г. Статистический сборник.— Ереван, 1986.



Նկ. 36. Հայկական ՍՍՀ քաղաքային առևտուրի ցանցում էական տեղ են գրավում կոլտնտեսային շուկաները։ Երևանի № 1 շուկայի ներքին տեսքը։

14.3. ՇԻՐԱԿԻ ՇԻՇԱՆ

Ամասիայի, Ղուկասյանի, Ախուրյանի, Արթիկի, Անիի և Թալինի վարչական շրջաններ, Լենինական ու Արթիկ հանրապետական ենթակայության քաղաքներ)։

Տարած.՝ 3,8 հազ. քառ. կմ, բնակչ.՝ 0,45 մլն. մարդ։

Երջանի տարածքը հիմնականում համընկնում է Ախուրյան գետի ավազանի սովորական հատվածին, որը բնական դժվարամատչելի սահմանագիծ ունի հս.-արմ.-ում (Ղուկասյանի լեռներ), հս.-արլ.-ում (Ճագախի լեռնաշղթա), հր.-արլ.-ում (Արագածի լեռնազանգված)։ Երջանի արևմուտքով ձգվում է ՍՍՀՄ պետական սահմանը։

Եիրակի տնտեսական շրջանի բնական պայմանների համալիրում առաջնային նշանակություն ունի տարածքի ընդհանուր բարձրադիր վիճակը։ Այստեղ գործնականում բացակայում են 1000 մ-ից ցածր տարածությունները, իսկ ընդհանուր տարածքի 75 տոկոսը գտնվում է 1500 մ ավելի բացարձակ բարձրություններում։ Դրան համապատասխան էլ այստեղ տիրապետողը լեռնատափաստանային ու ալպյան բնական լանդշաֆտներն են՝ լեռնային սեահողերի և լեռնամարգագետնային հողային ծածկով։ Ունենալով բարեխառն, տաք ամառով կլիմա, տարեկան

միջին հաշվով ստանում է 500—600 մմ մթնոլորտային տեղումներ: Հողակլիմայական պայմանները, բացառությամբ Թալինի վարչական շրջանի ստորին հատվածի, ընդհանուր առմամբ անբարենպաստ են հարավային կուլտուրաների մշակության համար: Տնտեսական շրջանի մեծ մասում նկատվում է խոնավության պակաս, որը երկրագործական շրջաններում հանգեցնում է արհեստական ոռոգման անհրաժեշտությանը:

Եիրակի տնտեսական շրջանի մակերեսութիւնի համար բնորոշ է համեմատաբար հարթ և սակավ մասնատված տարածությունների գերակշռությունը: Այդպիսի բնույթ ունի Եիրակի դաշտը ամբողջությամբ վերցրած: Մեծ մասնատվածությամբ ու զառիթափ լանջերով ընդարձակ տեղամասերը գտնվում են շրջանը երիգող լեռնալանջերում:

Եիրակի ընդերքը աշքի լի ընկնում հանքային ուսուրսների բազմազնությամբ, Բայց օգտակար հանածոների մի քանի տեսակների հետախուզված պաշարների գծով նրա բաժինը հանրապետությունում բավականին մեծ է: Այսպես, նրան է բաժին ընկնում Հայկական ՍՍՀ տուֆի հաշվեկշռային պաշարների շուրջ կեսը, հրաբխային խարամի մեկ երրորդը, պեռլիտի ավելի քան մեկ երրորդը: Հանքավայրերի մեծ մասն ընկած է Արագածի ստորոտներում, բնակավայրերից ու ճանապարհներից ոչ հեռու և ունի համեմատաբար նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք և շահագործման պայմաններ: Այս բոլորով հանդերձ, Եիրակի տնտեսական շրջանի զարգացման բնական նախադրյալները հանրապետության մյուս շրջանների մեծ մասի հետ համեմատած, բավականին համեստ են: Այստեղ բացակայում են թե գյուղատնտեսության, թե արդյունաբերության բնական ուսուրսների այն հարստությունն ու բազմազնությունը, որոնք կարող էին խթանել շրջանի բազմաճյուղ ու կոմպլեքսային տնտեսության գոյացմանը:

Նախկինում Եիրակը հայտնի է եղել որպես Մեծ Հայքի առանձին «աշխարհ», իսկ միջին դարերում՝ հայ Բագրատունյաց թագավորության կորիգ՝ Անի հռչակավոր մայրաքաղաքով, որի ավերակները գտնվում են Թուրքիայի տարածքում, Ախուրյանի աջ ափին: Ռուսաստանին է միացել 1801—1804 թ.թ. Վրաստանի հետ միասին: Նախահեղափոխական շրջանում, որպես առանձին գավառ (Ալեքսանդրապոլի) մտնում էր Երևանյան նահանգի մեջ:

Դեռ վաղ ժամանակներից աշքի է ընկել համեմատաբար խիտ բնագլությամբ և զարգացած երկրագործությամբ, հատկապես հացահատիկային տնտեսությամբ: Ներկայումս Եիրակի շրջանը իր տնտեսական պոտենցիալով հանրապետությունում գրավում է երկրորդ տեղը, բայց առաջին շրջանին՝ Արարատյանին, զիջում է ավելի քան 6 անգամ: Տնտեսական զարգացման մակարդակով (մեկ շնչին ընկնող ընդհանրական հասարակական արդյունքի և ազգային եկամտի հաշվով) նա զի-

զում է նաև կոռի-Փամբակի շրջանին։ Նրան բաժին է ընկնում Հայկական ՍՍՀ ընդհանուր տարածքի պահելի քան 13 սուկոսը և բնակչության 12 տոկոսը։ Սակայն տնտեսական զարգացման ընդհանրական ցուցանիշների գծով նրա բաժինը նկատելիորեն պակաս է։ Դա վերաբերում է թե հասարակական ընդհանրական արդյունքին, թե ազգային եկամտին (շուրջ 11-ական տոկոս) և թե ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերին առանձին-առանձին։

Շիրակի տնտեսական շրջանը հանրապետության էկոնոմիկայում ունեցած կշռով կոռի-Փամբակի տնտեսական շրջանի հետ գտնվում է մոտավորապես նույն մակարդակի վրա, բայց 2—3 անգամ գերազանցում է Սյունիքի և Աղստևի շրջաններին։ Հասկանալի է, որ այս քանակական ցուցանիշները զգալի շափով կախված են շրջանի տարածքի մեծությունից, նրա կոնկրետ սահմաններից, որոնք, ինչպես տեսանք նախորդ բաժիններից, ինչ-որ շափով պայմանական են և կարող են որոշ փոփոխության ենթարկվել, էապես շազմելով սոցիալ-տնտեսական շրջանի գլխավոր հատկանիշների վրա։

Ինչ վերաբերում է Շիրակի շրջանի որակական կողմին, այսինքն նրա՝ որպես հանրապետական նշանակության տերիտորիալ-արտադրական համալիրի զարգացման մակարդակին, ապա այդ բնութագրող ցուցանիշներն ավելի բարձր են։ Շիրակի տնտեսական շրջանը Հայկական ՍՍՀ համեմատաբար հասուն և ամբողջական կառուցվածք ունեցող տերիտորիալ-արտադրական համալիրներից է։

Շրջանի ձևավորման գործում անվիճելի է Լենինականի արդյունաբերական հանգույցի կազմակերպիչ համախմբող կենտրոնի դերը։

Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական քաղաքի կենտրոնական գերը Շիրակի համար ձևավորվել է պատմականորեն։ Այս շրջանը Ռուսաստանին միանալուց հետո նախկին Գյումրի (Կումայրի) գյուղը իր տնտեսաշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ շուտով վերածվում է ուազմական նշանակության կենտրոնի և գորակայանի, կառուցվում են իր ժամանակի համար աշքի բնկնող ուազմական ամրություններ, մասնավորապես Ալեքսանդրապոլի բերդը։ Ավելի ուշ, 19-րդ դարի վերջին Ալեքսանդրապոլի կենտրոնական դիրքը ավելի է ամրապնդվում Կարսի մարզը Ռուսաստանին միանալու և հատկապես երկաթուղային շինարարության կապակցությամբ, երբ քաղաքը դառնում է երեք ուղղության երկաթգծերի (դեպի Թբիլիսի, Երևան և Կարս) հանգուցակետ։ Լայն թափ է ստանում արհեստագործությունը։ Այս բոլորի շնորհիվ Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին Ալեքսանդրապոլը իր բնակչության թվով հավասարվում է Երևանին (շուրջ 30 հազ.)։

Սովետական իշխանության տարիներին հանրապետության ժողովրդական տնտեսության ինդուստրացումը արմատական փոփոխու-

թյուններ մտցրեց նաև կենինականի տնտեսական կյանքում։ Չնայած զարգացումը խթանող բնական նախադրյալների բացակայությանը, կենինականը կարճ ժամանակում դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոններից և ձեռք բերելով ժամանակակից քաղաքին հատուկ մի շարք այլ ֆունկցիաներ ևս, էլ ավելի ամրապնդեց ընդարձակ տարածքի համար իր համախմբող, կազմակերպիչ դերը, զիշելով այդ տեսակետից միայն Երևանին։

Լենինականը իր շուրջ 230 հազ. բնակչությամբ Հայկական ՍՍՀ երկրորդ քաղաքն է։ Այն երկրորդն է նաև արդյունաբերական, կուլտուրական ու գիտական կենտրոնի իր նշանակությամբ։ Այստեղ է կենտրոնացված Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանի ամբողջ բնակչության կեսից ավելին, քաղաքային բնակչության ավելի քան 85 տոկոսը։ Բացարձակ գերակշռություն ունեն նրա արտադրական, ինչպես նաև սպասարկման ֆունկցիաները։

Քաղաքում գործում են երկու բարձրագույն, տասնյակ միջնակարգ մասնագիտական, հանրակրթական ու պրոֆտեխնիկական ուսումնարաններ, գիտահետազոտական հիմնարկներ, մշակույթի օջախներ։ Քաղաքի միկրոաշխարհագրությանը հատուկ է կանոնավոր հատակագծման սկզբունքը։ Ներկայիս հատակագծի (առաջին գլխավոր հատակագիծը կազմվել է 1837 թ.) քաղաքաշինական գլխավոր առանցքը հարավից հյուսիս ձգվող գլխավոր մայրուղին է, որի վրա են գտնվում քաղաքի երեք գլխավոր հրապարակները՝ Մայիսյան ապստամբության հերոսների, Լենինի և Աստղի։ Սկսած 60-ական թվականներից կառուցվում են խոշոր բնակելի թաղամասեր։ Քաղաքի պատմական կենտրոնում ստեղծվել է «Կումայրի» պատմա-ճարտարապետական արգելոցը, որտեղ պահպանվում ու վերականգնվում են ճարտարապետական ու ազգագրական հետաքրքրություն ներկայացնող կառույցները։

Հեռանկարում իրենց լուծմանն սպասող կարևոր քաղաքաշինական պրոբլեմներն են փողոցների ցանցի վերակառուցումը, կոմունալ տնտեսության զարգացումը, նոր հանգստի գոտիների ստեղծումը, արդյունաբերական ու քաղաքացիական շինարարության միշտ զուգակցումը։

Քաղաքի շրջանագույացնող պոտենցիալը շատ ավելի է մեծանում, երբ այն քննարկվում է ամբողջ արդյունաբերական հանգույցի հաշվառմամբ (տես՝ գլուխ 7)։ Այդ իմաստով էլ կարող ենք ասել, որ Շիրակը նույնպես տիպիկ միակենտրոն շրջան է։

Շիրակի տնտեսական կորիզից՝ կենինականի արդյունաբերական հանգույցից դուրս ձևավորվել ու զարգանում են մի քանի արդյունաբերական կետեր, որոնցից առավել հեռանկարայինը Արթիկ քաղաքը, Թալին և Արագած ավաններն են։

Լենինականի արդյունաբերական հանգույցի ռուժային դաշտը՝ տա-

րածվում է Շիրակի վարչական շրջանների մեծ մասի վրա ոչ միայն հանգույցի արդյունաբերությանը բանվորական ուժ, իսկ քաղաքային բնակչությանը գյուղատնտեսական մթերքներ մատակարարելու, այլև արտադրական կապերի գծով։ Մի կողմից այդ կապերը դրսեորվում են մսի, կաթի և յուղա-պանրափորձական արդյունաբերությանը գյուղատնտեսական հումք մատակարարելու, մյուս կողմից՝ կոռապերացված առաքումների ձևով, որոնք զարգանում են գլխավորապես կենինականի արդյունաբերական ձեռնարկությունների և նրանց մասնաճյուղերի (վերջին տարիներս մի շարք մասնաճյուղեր ստեղծվել են մոտակա շրջանների գյուղական բնակավայրերում), ինչպես նաև կենինականի և Մարալիկի տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների միջև։

Վերջին հանգամանքը անմիջապես առնչվում է ներհանրապետական տնտեսական շրջանի երկրորդ հատկանիշի, այն է՝ տվյալ տարածքում ներքին տնտեսական կապերի միասնական համակարգի ձևավորման հետ։

Այդ մասին արդեն ասվածին հարկ է ավելացնել նաև հետևյալը։

Շրջանի տնտեսական կազմակերպիչ կենտրոնի խոշորացմանն ու հզորացմանը զուգընթաց, ավելի ակնառու են դառնում ներքին աշխատանքային կապերը։ Դրանք բավականին սերտ են մի կողմից կենինականի, մյուս կողմից Ախուրյանի, Մարալիկի, Ամասիայի և մինչև 20—25 կմ շառավիղով մյուս բնակավայրերի միջև։ Հիշյալ կետերից բացի բնակչության ճոճանակային միգրացիան, հասկանալի է, ավելի փոքր շափերով, ձեսվորվում է նաև վարչական շրջանների կենտրոնների և կից գյուղերի միջև։

Բնակչության ճոճանակային միգրացիան, ինչպես նաև տրանսպորտային այլ բնույթի կապերի զարգացումը չի կարելի պատկերացնել առանց հաղորդակցության ուղիների բավարար ցանցի։ Նախ պետք է նշել, որ Շիրակի տնտեսական շրջանը համեմատաբար լավ է ապահովված թե երկաթուղիներով, թե ավտոմոբիլային ճանապարհներով։ շրջանի բնակչության 90 տոկոսից ավելին բնակվում է անմիջապես երկաթուղիներին կից և մինչև 10 կմ հեռու ընկած բնակավայրերում, գործնականում բոլոր գյուղերը ապահովված են ավտոմոբիլային ճանապարհներով ու ավտոբուսային հաղորդակցությամբ։

Հաղորդակցության ուղիներով ապահովվածության համեմատաբար բարվոր վիճակն ինքնին չի խոսում դրա շրջանագոյացնող էական դերի մասին։ Այդպիսին դա ձեռք է բերում կախված այն բանից, թե ինչպիսին է շրջանի տարրեր մասերի տրանսպորտային կողմնորոշումը, թե հաղորդակցության ուղիները միավորված են արդյոք միասնական ցանցի մեջ, թե ոչ։

Շիրակի տրանսպորտային ցանցը պատմականորեն ձևավորվել է 402

այնպես, որ թե երկաթուղիները, թե ավտոմաքիլային մայրուղիները շըր-ցանի տարածքի նկատմամբ ունեն կենտրոնական, առանցքային դեր, որոնց էլ հենց հարում են նրա բոլոր մոտիկ ու հեռու մասերը: Երկա-թուղագիծը հատում է շրջանը հս.-արլ.-ից հր.-արմ. ուղղությամբ, բա-ժանելով այն երկու մոտավորապես հավասար կեսի: Հարավային կեսը սպասարկվում է նաև երկաթուղու կենինական—Արթիկ—Պեմզաշեն—Մարալիկ լրացուցիչ ճյուղավորությամբ: Ավտոմոբիլային մայրուղիներից առանցքային դեր են կատարում Ղուկասյան—կենինական—Թալին ճա-նապարհը, որը հատում է շրջանը հս.-ից հր., դարձյալ բաժանելով այն հավասար կեսերի: Պակաս կարենորություն չունի նաև երկաթուղուն գու-գահեռ ավտոխճուղին: Այսպիսով, Շիրակի տնտեսական շրջանի բոլոր կարենոր մայրուղիները հանգուցվում են կենինական քաղաքում, ապահո-վելով նրա տնտեսական կազմակերպիչ դերը և շրջանի ամբողջ տարածքի միասնական տրանսպորտային կողմնորոշումը:

Եվ այսպես, Շիրակը Հայկական ՍՍՀ այն տնտեսական շրջաններից է, որի տրանսպորտային ցանցի ներկա վիճակն ու գծագրությունը հիմ-նականում համապատասխանում են ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի գարգացման ու տեղաբաշխման արդի մակարդակին և խթա-նում են շրջանի ներսում բազմապիսի տնտեսական կապերի հետագա-ժամանում ու այդ կապերի միասնական համակարգի ամրապնդումը:

Շիրակի ներքին տնտեսական կապերի միասնական համակարգը լրացնող հանգամանք է նաև էլեկտրահաղորդման բարձր լարման գծերի և գազամուղերի միասնական ցանցի առկայությունը: Դրանց համար ես քաշխիչ կենտրոնի դեր կատարում է կենինական քաղաքը:

Ներհանրապետական տնտեսական շրջանի հաջորդ հատկանիշը՝ ար-տադրական մասնագիտացումը Շիրակում դրսերգում է հետեւյալ կերպ:

Շրջանի նյութական արտադրության ճյուղային կառուցվածքը, որի իմացությունը անհրաժեշտ է շրջանային մասնագիտացումը որոշելու համար, աշքի շի ընկնում հարստությամբ ու բազմազանությամբ: Դա բացատրվում է, առաջին հերթին, արտադրության բնական բազայի՝ բնական ռեսուրսների ու պայմանների համեմատական միատարրու-թյամբ: Շիրակում շի նկատվում ոչ արդյունաբերության, ոչ էլ գյուղա-տնտեսության այն բազմաճյուղությունը, որն առկա է հանրապետու-թյան տնտեսական շրջանների մեծ մասում: Հայկական ՍՍՀ-ի համար պաշտոնական վիճակագրության կողմից նշվող 16 կոմպլեքսային ճյու-ղերից Շիրակում շատ թե քիչ է ական նշանակություն ունեն 7-ը: Իսկ ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի շուրջ 95 տոկոսը թողարկվում է ընդամենը 5 ճյուղի կողմից: Դրանցից առաջատարներն են թեթև արդյունաբերությունը (գրեթե կեսը), մեքենաշինությունը (մեկ քա-ռորդը) և աննդի արդյունաբերությունը:

Հայկական ՍՍՀ արդյունաբերության տարածքային բաժանման համակարգում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն այս ճյուղերի հետևյալ արտադրությունները. թեթև արդյունաբերության գծով՝ բամբակե մանվածքի ու գործվածքների, գուլպեղենի, մեքենաշինության գծով՝ էլեկտրատեխնիկական մեքենաների, մետաղահատ ու քարահատ հաստոցների դարբնամամլիչ մեքենաների, սննդի արդյունաբերության գծով՝ մսի, մսի պահածոների ու երշիկեղենի արտադրությունները:


Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա հանրապետության էկոնոմիկայում նրա արտադրական ֆունկցիաները որոշվում են ամենից առաջ շաբարի ճակնդեղով (Ծիրակին բաժին է ընկնում հանրապետության շաբարի ճակնդեղի արտադրության շուրջ 75 տոկոսը) ու հացահատիկով (35 տոկոս): Հայկական ՍՍՀ-ում Ծիրակի գերը զգալի է նաև կաթի ու մսի արտադրության գծով (16-18 տոկոս): Բայց դրա հետ մեկանեղ Ծիրակի 6 վարչական շրջաններից 5-ում ամբողջովին բացակայում է հանրապետության այնպիսի կարևոր մասնագիտացման ճյուղը, ինչպիսին խաղողագործությունն է, իսկ պտղաբուծությունը թեև վերշին տարիներու մուտք է գործել գրեթե բոլոր վարչական շրջանները, դեռևս ապրանքային նշանակություն չունի:



Նկ. 37. Ճակնդեղի պլանտացիա Ծիրակի դաշտում:

Այգեգործության գծով գրավելով շատ համեստ տեղ, Շիրակը աշքին է ընկնում երկրագործական արտադրության կառուցվածքում դաշտային կուլտուրաների բացարձակ գերազակությամբ։ Ընդհանրապես, դաշտավարության բնագավառում Շիրակի տնտեսական շրջանը հանրապետությունում իր հավասարը չունի։ Նրան բաժին է ընկնում Հայկական ՍՍՀ ընդհանուր ցանքատարածությունների մեկ քառորդը; Հացաւատիկի ցանքատարածությունների 30 տոկոսը, շաքարի ճակնդեղի 66 տոկոսը, կերային կուլտուրաների 25 տոկոսը։

Շիրակի տնտեսական-կուլտուրական ֆունկցիաների բնութագրությունը կլիներ թերի, եթե շասվեր գիտահետազոտական հիմնարկների և արրեր կարգի մասնագիտական ուսումնական հաստատությունների մասին, որոնք շոշափելի դեր են կատարում որակյալ բանվորական կադրերի, արդյունաբերության և գյուղատնտեսության միջին օդակի մասնագետների և ինժեներական ու մանկավարժական կադրերի պատրաստման բնագավառում։



Նկ. 38. Մեծ աշխատանք է կատարվում Շիրակի գյուղական բնակավայրերի բարեկարգման ուղղությամբ։ Տեսարան Ախուրյան գյուղից։

Շիրակի տնտեսական շրջանի առաջ ծառացած գլխավոր տնտեսական պրոբլեմը, որը շատ թե քիչ շափով ընդհանուր է նրա բոլոր տարածքային մասերի համար, դա աշխատանքային ոեսուրսների լրիվ ու ոացիոնալ օգտագործումն է։ Բանն այն է, որ Հայկական ՍՍՀ աշխատանքային ոեսուրսների միջջանային հաշվեկշռում Շիրակը «ավելցուկ»

ունեցող շրջան է։ Հարկան շրջանները այդ «ավելցուկի» մի փոքր մասն են միայն կարողանում օգտագործել, հիմնական մասի համար զբաղ- մունք պետք է ապահովվի տեղում։ Դա կարելի է իրականացնել առաջին հերթին վերամշակող արդյունաբերության աշխատատար նոր արտա- դրություններ ստեղծելու միջոցով ինչպես լենինականի հանգույցի սահ- մաններում, այնպես էլ ծայրամասային վարչական շրջաններում։

Հեռանկարում կարեոր պրոբլեմ է շրջանը ջրային ռեսուրսներով ապահովելը։ Շիրակը ջրային ռեսուրսներով ընդհանուր առմամբ ավելի վատ է ապահովված, քան հանրապետության շրջանների մեծ մասը, Զնայած դրան, տեղի ջրային պաշարների մի մասը դուտացիայի կարգով տրվում է Արարատյան դաշտի ոռոգիչ համակարգին։ Առաջիկա տարի- ներին ջրի պակասը Շիրակի տնտեսական շրջանում շատ ավելի սուր է գդացվելու։ Պրոբլեմի լուծման գլխավոր միջոցը մասնագետները համա- րում են Դեբեղի ավազանի (Ջորագետի) հոսքի մի մասը ջրատար թու- նելի միջոցով դեպի Շիրակ շուր տալը։ Դա նկատելիորեն կրարձրացնի շրջանի ջրապահովվածության աստիճանը և հնարավորություն կտա զգալի շափով ընդարձակել ակտիվ օգտագործման գյուղատնտեսական հանդակները։

14. ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ ՇՐՋԱՆ

(Քումայշանի, Գուգարքի, Արագածի, Սպիտակի, Ստեփանավանի ու Կալինինոյի վար- չական շրջաններ և Կիրովական, Ալավերդի, Սպիտակ ու Ստեփանավան հանրապետական ենթակայության քաղաքներ)

Տարածությունը—4,2 հազ. կմ²,

Բնակչությունը—0,40 մլն. մարդ։

Համընկնելով հիմնականում Դեբեղ գետի ջրհավաք ավազանին, Լո- ռի-Փամբակի հարկան շրջաններից բնական սահմանագծով բաժանվում է արևմուտքում ջագախի ու Բազումի լեռնաշղթաներով (վերջինիս հս.- արմ. հատվածով), հարավում՝ Արագածով ու Փամբակի շղթայով և արևելքում՝ Գուգարաց լեռներով։ Դեբեղի ջրհավաք ավազանին չի պատ- կանում միայն Արագածի վարչական շրջանը, որը գտնվում է Թասաղ- լեռի վերնագավառում։ Խոկ Դեբեղի ստորին հոսքին հարող աջափնյա մի փոքրիկ հատված նոյեմբերյանի վարչական շրջանի հետ միասին դուրս է մնում սուլյն շրջանի սահմաններից։

Լոռի-Փամբակը Սյունիքից հետո հանրապետության ամենալեռնոտ մակերեսությունը ունեցող շրջանն է, Ծելիեֆի դրական մակրո և մեզո ձևերի խառնաշղփոթ լաբիրինթոսում առանձնանում են լոռու տափարակ դաշ- տը և Սպիտակի գոգավորությունը։ Մակերեսութիւնը հիպսոմետրիկ տատա- նումները հասնում են ավելի քան 3,5 կմ (Դեբեղի ստորին հոսանքից մինչև Արագածի գագաթը)։ Թեև տարածքի ամենացածր կետերը իշնում են մինչև 375—400 մ հիպսոմետրիկ նիշերը, նրա հիմնական մասը՝

ընդհանուր տարածության շուրջ 90 տոկոսը, գտնվում է 1000 մ-ից բարձր:

Մակերևույթի ավելի մեծ կտրտվածության, տարբեր ուղղությամբ ձգվող լեռնաշղթաների ու տարբեր դիրքադրության լանջերի առկայության շնորհիվ այստեղ կլիմայական տիպերի ավելի մեծ զանազանություն է նկատվում, քան Շիրակի և, նույնիսկ, Արարատյան շրջաններում: Այնուամենայնիվ, տարածքի մեծ մասի համար բնորոշ են չափավոր ցուրտ, չափավոր-ցամաքային, չափավոր-տաք, համեմատաբար խոնավ և, վերջապես, շոր մերձարեադարձային կլիմաների տիպերը: Այս բոլորի շնորհիվ, բնական է, որ պետք է դիտվի նաև լանդշաֆտների մեծ բազմազանություն և խայտաբղետություն: Եվ իսկապես, այստեղ դժվար է առանձնացնել շրջանի տարածքում տիրապետող որևէ լանդշաֆտ: Ամբողջ շրջանը գրեթե հավասարապես բաշխված է անտառների, լեռնային (մարգագետնային) տափաստանների և ալպյան մարգագետինների միջև:

Բնական լանդշաֆտների, դրանց հետ մեկտեղ և հողակիմայական պայմանների բազմազանությունը բազմաճյուղ գյուղատնտեսություն գարգացնելու լայն հնարավորություն է ընձեռում:

Բազմազան են կոռի-Փամբակի տնտեսական շրջանի ընդերքի հարստությունները ևս: Հայտնաբերված ու հետազոտված են մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների արդյունաբերական նշանակության հանքավայրեր, մասնավորպես պղնձի, բազմամետաղների, հրակայուն կավերի, ագաթի, գրանիտի, կրաքարերի ու այլ շինարարակաւուն նյութերի, հանքային շրբերի: Սա նշանակում է, որ արդյունաբերությունը նույնպես բարենպաստ պայմաններ ունի բազմացյուղ, կոմպլեքսային գարգացման համար:

Գնահատելով կոռի-Փամբակի տնտեսական զարգացման բնական պոտենցիալը, չի կարելի չհիշատակել նաև նրա համեմատաբար հարուստ շրային ռեսուրսները: Այստեղ է հոսում հանրապետության ամենաերկար ու ամենաշրապատ (շաշված սահմանային Արաքսը) գետը՝ Դեբեդը: Նրա հոսքը ամբողջությամբ ձևավորվում է շրջանի սահմաններում ի հաշիվ համեմատաբար առատ մթնոլորտային տեղումների. սա հանրապետության միակ շրջանն է, որի տարածքի կեսից ավելին ստանում է տարեկան 600 մմ-ից ավելի տեղումներ: Այդ պատճառով էլ արհեստական ոռոգման կարիք է զգացվում հիմնականում Փամբակ և Դեբեդ գետերի մերձավոր հովտային տարածություններում: Հետաքրքրական է, որ այս շրջանը ոռոգելի հողատարածություններով (շուրջ 20 հազ. հա) հանրապետությունում վերջին տեղն է գրավում:

Կոռի-Փամբակի շրջանը իր տարածքի հիմնական մասով համընկնում է պատմական Հայաստանի Գուգարք աշխարհի Տաշիր գավառի հետ: Մեր հազարամյակի սկզբներին նա գտնվում էր Տաշիր-Զորագետ

Հայկական թագավորության կազմում, որի կենտրոնը եղել է Լոռի քաղաքը: Սա նույնպես, ինչպես և Շիրակի հիմնական մասը, Ռուսաստանին միացել է 1801 թ.: Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության նախօրյակին մտնում էր Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառի մեջ:

Ռուսաստանի կազմում, Հայկապես 19-րդ դարի վերջում մեծ թափացավ կապիտալիստական արտադրության զարգացումը, կապված մասնավորապես, պղնձաձուլության և շվեյշարական պանրագործության հետ: Այդ բանին խթանեց նաև Թրիլիսի—Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղին, որը հս.-արլ.-ից հր.-արմ. Դեբեդ-Փամբակին զուգահեռ կտրում է շրջանի ամբողջ տարածքը: Չնայած արտադրողական ուժերի մեջ կատարված այդ էական տեղաշարժերին, նախահեղափոխական շրջանում այդտեղ չկար և ոչ մի քաղաքային բնակավայրու Միակ արդյունաբերական կետը Մանեսն էր (Ալավերդի), որը շրջապատի հետ արտադրողական կապեր չուներ և շրջանաստեղծ էական դեր խաղալ չէր կարող:

Սոցիալիստական շինարարության տարիներին օգտագործելով Դերենի ավագանի համեմատաբար նպաստավոր պայմանները՝ հարուստ հանքային ու ջրաէներգետիկ ուսուրսները և հարմար տրանսպորտային-աշխարհագրական դիրքը, հնարավոր եղավ կարճ ժամանակում ստեղծել ժամանակակից հզոր արդյունաբերություն, որն ի վերջո, համախմբվեց երկու հարեւան՝ Ալավերդու և Կիրովականի արդյունաբերական հանգույցների մեջ (տե՛ս գլուխ 7):

Լոռի-Փամբակի շրջանը իր տնտեսական պոտենցիալով և ինդուստրիալ զարգացման աստիճանով Շիրակի հետ գտնվում է մոտավորապես նույն մակարդակի վրա, ցուցանիշների մի մասով գերազանցելով, մյուս մասով զիշելով նրան: Ազգային եկամտի և ընդհանրական հասարակական արդյունքի, ինչպես նաև արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրության գծով շրջանի բաժինը հանրապետությունում տատանվելով 11-ից 12 տոկոսի միջև, հար և նման է Շիրակի տնտեսական շրջանին: Բայց շրջանների այդ համանման քանակական ցուցանիշների ետևում թաքնված են բնական ուսուրսների տարրեր տեսականի, արդյունաբերության ու գյուղատնտեսության տարրեր ճյուղային կառուցվածք, և վերջապես, արտադրության տարրեր տարածքային կառուցվածք ու լոկալ տարածքային համալիրի ձևավորման տարրեր պայմաններ:

Լոռի-Փամբակի տնտեսական շրջանի՝ որպես հանրապետական նշանակության տերիտորիալ-արտադրական համալիրի համար հատկանշական է այն, որ Հայկական ՍՍՀ-ում նա միակն է, որ ձևավորվել է ոչ թե մեկ, այլ երկու տնտեսական կենտրոնի շուրջը (բազմակենտրոն շրջան): Տնտեսական շրջանի համար այդպիսի կենտրոններ են Կիրովականի և Ալավերդու արդյունաբերական հանգույցները, որոնք ձևավորվել ու զար-

գանում են տարբեր հիմքի վրա։ Ալավերդու հանգույցի համար այդպիսի հիմք է ծառայում հանքային հումքը, մասնավորապես պղնձի ու բազմամետաղների հանքանյութը և հրակայոն կավերը։ Կիրովականի հանգույցի ձեռավորումը սկսվեց Դեբեդի հիդրոէներգետիկական ուսուուրսների յուրացումով (Զորագետի հիդրոէներգակայան) և նրա հետ կապված՝ քիմիական էներգատար արտադրությունների ստեղծումով (Կիրովականի քիմիական գործարան)։

Հիշյալ հանգույցները միասին տալիս են շրջանի արդյունաբերության համախառն արտադրանքի ավելի քան 90 տոկոսը, այստեղ է կենտրոնացված բնակչության շուրջ 60 տոկոսը։ Սակայն, դրանցից յուրաքանչյուրի «ուժային դաշտի» մեծությունը, հետեւապես և շրջանագոյացնող նշանակությունը, տարբեր է։ Թեև Ալավերդու արդյունաբերական հանգույցը ավելի վաղ է ձեռավորվել, նրա շրջանաստեղծ պոտենցիալը ավելի թույլ է։ Դա բացատրվում է նախ և առաջ հանգույցի պրոֆիլային ճյուղերի՝ մետալուրգիական և լեռնահանքային արդյունաբերության բնույթով։ Դրանք լոկալացված են, ունեն տերիտորիալ բարձր համակենտրոնացում և կից տարածությունները չեն ընդգրկում իրենց արտադրական ոլորտի մեջ։ Մյուս պատճառն այն է, որ Ալավերդու հանգույցը համեմատաբար միակողմանի զարգացում ունի (արդյունաբերության բացարձակ գերակշռություն), շատ թույլ են արտահայտված ժողովրդատեսական մյուս, հատկապես նպասարկման ֆունկցիաները, որոնք կարող էին ավելի բազմաբնույթ ու սերտ տարածական կապեր ստեղծել շրջապատի հետ։

Այլ է Կիրովականի հանգույցի վիճակը։ Թեև դրա արդյունաբերությունը սկիզբ է առել շատ ավելի ուշ՝ 30-ական թվականների կեսերին միայն, բայց զարգացել է խիստ բարձր տեմպերով։ Եվ արդյունքը եղել է այն, որ Կիրովականի հանգույցը իր տնտեսական պոտենցիալով բազմիցս գերազանցում է Ալավերդու հանգույցին, մասնավորապես բնակչության թվով՝ 5 անգամ և արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալով՝ 3,5 անգամ։ Բացի այդ, Կիրովականի հանգույցի արդյունաբերությունը ավելի բազմաճյուղ է, մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինությունը և վերամշակող արդյունաբերության մի քանի այլ ճյուղեր, որոնք տարածական կապեր ստեղծելու ավելի մեծ հնարավորություններ ունեն։ Եվ, վերջապես, երրորդ հանգամանքը։ Հանգույցի կենտրոնը՝ Կիրովական բաղաքը, լինելով հանրապետությունում երրորդը, արդյունաբերական ֆունկցիայից բացի, ձեռք է բերել ռեգիոնալ կենտրոնին հատուկ այլ արտադրական և ոչ արտադրական ֆունկցիաներ ևս։

Կիրովականի՝ որպես բազմաֆունկցիոնալ կենտրոնի զարգացմանը շատ բանով նպաստում է նրա հարմար տրանսպորտային դիրքը։ Նա

գտնվում է երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների հանգուցակետում և հարմար հաղորդակցություն ունի տնտեսական շրջանի բուրք մասերի հետ:

Այս բոլորի շնորհիվ Կիրովականի հանգույցի ազդեցության շառավիղը մեծ է, «ուժային դաշտը»՝ ավելի հզոր և դեպի իրեն է ձգում կողմանի մեջ մասը: Ավելին. որոշ ֆունկցիաների գծով՝ կուլտուր-կրթական, առևտրական, առողջապահական, նրա ազդեցությունը տարածվում է նույնիսկ Ալավերդու հանգույցի վրա:

Կիրովականը (Նախկին Ղարաբիլիսա գյուղաքաղաքը) հանրապետության առավել արագ զարգացող քաղաքներից է. բնակչությունը (1987 թ. 170 հազ.) նախասովետական շրջանի համեմատությամբ աճել է ավելի քան 20 անգամ: Գլխավոր հատակագծով կառուցապատումը սկսվել է 1930-ական թվականներից, որը նոր թափ ստացավ հետպատերազմյան տարիներին: Զեկվորվեց քաղաքի ներկայիս վարչական կենտրոնը՝ Կիրովի անվան հրապարակը իր հասարակական շենքերով: Գործող գլխավոր հատակագծի համապատասխան քաղաքը զարգանում է հիմնականում արևելյան և Հր.-արևելյան ուղղությամբ, որտեղ կառուցվել են Դիմաց, Բազում և Խնձորուտ բնակելի թաղամասերը: Տարածքի համար բնորոշ է թեք, կտրտված մակերևույթը, շրջափակված Փամբակի և Բազումի լեռնալանջերով: Բարձրաշափական նիշերի տարրերությունը հասնում է 300 մ-ի: Քաղաքի տարածքով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Վերջին տարիներին արագ թափով զարգացան քաղաքի սոցիալ-կուլտուրական ֆունկցիաները: Գործում են մեծ թվով կրթական օջախներ՝ դպրոցներ, ուսումնարաններ, տեխնիկումներ, 2 բուհ, ինչպես նաև գիտահետազոտական հիմնարկներ և կուլտուրայի օջախներ:

Քաղաքային տնտեսության զարգացման հրատապ խնդիրներից է բնակարանային ֆոնդի հետագա ավելացումը, զրամատակարարման և կամունալ սպասարկման բարելավումը, քաղաքի օդային ու ջրային ավազանի պահպանությունն ու առողջացումը:

Լոռի-Փամբակի շրջանում երկու տնտեսական կազմակերպիչ կորիգի առկայությունը խթանում է տնտեսական շրջանի այնպիսի հատկանիշի ձևակորմանը, ինչպիսին ներքին տնտեսական կապերի միասնական համակարգն է: Ի տարրերություն մյուս շրջանների, այստեղ դիտվում է երկու տարրեր բնույթի տարածական կապերի շերտավորում: Մի կողմից, յուրաքանչյուր արդյունաբերական հանգույցի զարգացմանը համեմատ ավելի սերտ ու բազմազան են դառնում հանգույցի և նրա «ուժային դաշտում» գտնվող բնակավայրերի կապերը: Ներկայումս գերազանցում են աշխատանքային և կուլտուր-կենցաղային կապերը, իսկ արտադրական նշանակություն ունեցողներից՝ նյութատեխնիկական մա-

տակարարման, ինչպես նաև տարբեր ձեռնարկությունների և հատկապես Կիրովականի որոշ գործարանների և հանգույցի սահմաններից դուրս, մասնավորապես Ստեփանավանի շրջանի գյուղական վայրերում ստեղծված նրանց մասնաճյուղերի կողպերացման կապերը:

Ներշրջանային տարածական կապերի երկրորդ խումբը հաստատվել է երկու հանգույցների միջև: Դրանք դրսենորվում են Ալավերդուց Կիրովականի քիմիական արդյունաբերությանը ծծմբաթթու, մեքենաշինական արդյունաբերությանը պղինձ առաքելու, ինչպես նաև որոշ շինարարական նյութեր փոխանակելու ձևով: Մյուս տնտեսական կապերը առայժմ սահմանափակ նշանակություն ունեն:

Լոռի-Փամբակի շրջանի ներքին կապերի այս առանձնահատկությունը անմիջականորեն առնչվում է տնտեսական շրջանի հաջորդ հատկանիշի՝ միասնական տրանսպորտային կողմնորոշման և ներքին նազորդակցության ուղիների առանձնահատկությունների նետ: Սույն տնտեսական շրջանը, ինչպես ասվեց, հարեան շրջաններից բաժանված է մեծ մասամբ դժվարամատչելի բնագծերով, որոնք խոշնդոտում են ակտիվ տրանսպորտային հաղորդակցության և արտաքին տնտեսական կապերի հաստատմանը: Այդ հաղորդակցությունն ու տնտեսական կապերն իրականացվում են Դերեղի հովտով դեպի հյուսիս, Ճաշուոի լեռնանց-



Նկ. 39. Հանրապետության լեռնամետալուրգիական արդյունաբերության խոշորագույն կենտրոնի՝ Ալավերդի քաղաքի համայնապատկերը:

բով դեպի արևմուտք և Գուգարաց ու Փամբակի լեռնաշղթաների հատման վայրով դեպի արևելք: Նշված ուղղություններով արտաքին հաղորդակցությունը իրականացնող երկաթուղին ու խճուղիները շրջանը հատելով հս.-արլ.-ից դեպի հր.-արմ., կատարում են գլխավոր տրանսպորտային գարկերակի դեր: Մնացած ճանապարհները այսպես թե այնպես դուրս են գալիս դեպի այդ գարկերակը, ընդգծելով մի կողմից միասնական ճանապարհային ցանցի առկայությունը, մյուս կողմից՝ շրջանի ամբողջ տարածքի միասնական տրանսպորտային կողմնորոշման փաստը:

Հանրապետական տնտեսական շրջանի նկարագրած հատկանիշները հաստատելով տվյալ տարածքի տնտեսության հարաբերական ամբողջականությունը, ներքին միասնությունը, այնուամենայնիվ գաղափար չեն տալիս Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում նրա դերի, արտադրական ֆունկցիաների մասին: Այդ հարցի պատասխանը պետք է փնտրենք շրջանի մասնագիտացման մեջ:

Ասվեց, որ Լոռի-Փամբակի սոցիալ-տնտեսական շրջանի արդյունաբերությունը բազմաճյուղ է: Համախառն արտադրանքի ծավալի ցուցանիշներով այդ ճյուղերը բաշխվում են հետևյալ հերթականությամբ. առաջին տեղում է թեթև արդյունաբերությունը (ավելի քան 45 տոկոս), երկրորդում՝ մեքենաշինությունը (19 տոկոս), երրորդում՝ քիմիական արդյունաբերությունը (11 տոկոս), այնուհետև հաջորդում են սննդի արդյունաբերելությունը, գունավոր մետալուրգիան, շինանյութերի արդյունաբերությունը և այլն:

Մեզ հայտնի է, որ ճյուղի մասնագիտացման աստիճանը որոշելու համար բավարար չէ շրջանում նրա ունեցած տեսակարար կշռի ցուցանիշը: Հարկավոր են նաև հանրապետության համապատասխան ճյուղում նրա տեսակարար կշռը և, որ ամենակարևորն է, այդ ճյուղի շրջանային ապրանքայինության ցուցանիշները (տես՝ գլուխ 11): Հանրապետության համապատասխան ճյուղերում առավել մեծ բաժին ունեն քիմիական և գունավոր մետալուրգիան: Ինչ վերաբերում է շրջանային ապրանքայինության աստիճանին, ապա այդ երկու ճյուղին ավելանում են նաև մեքենաշինությունը և թեթև արդյունաբերությունը:

Այսպիսով, Լոռի-Փամբակի տնտեսական շրջանի արդյունաբերության մասնագիտացումը որոշող ճյուղերն են գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը և մասամբ թեթև արդյունաբերությունը: Հատկանշական է, որ գլխավոր մասնագիտացման ճյուղերն ունեն ոչ միայն հանրապետական, այլև անդրկովկասյան ու միութենական նշանակություն: Այս շրջանում է կենտրոնացված Անդրկովկասի ամբողջ պղնձաձուլությունը: Միութենական հաշվեկշռում բավականին մեծ է նաև այնպիսի արտադրատեսակների բաժինը, ինչ-

պիսիք են ացետատային մանրաթելը, կալցիումի կարբիդը, պղնձարշասպը, արհեստական տեխնիկական քարերը, ազոտային պարարտանյութերը, հրակայուն նյութերի, ինչպես նաև շվեյցարական ու այլ պանիրների որոշ տեսակները։ Հանրապետության ու Անդրկովկասի սահմաններից դուրս է ուղարկվում նաև շրջանում թողարկվող ճշգրիտ ու գերծշգրիտ մետաղահատ հաստոցների, ավտոմատացման միջոցների ու սարքերի, բարձր ջերմության ջեռուցիչների, ավտոգեն մեքենաների, վերելակների, տեքստիլ-տրիկոտաժեղենի մեծ մասը, ցինկի ու կապարի խտանյութի ամբողջ քանակությունը։

Սննդի արդյունաբերության որոշ արտադրություններ, հատկապես շաքարի և լիմոնաթթվի, հանրապետությունում միակն են։

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության մասնագիտացմանը, ապա այստեղ առաջնային նշանակություն ունեն կարտոֆիլագրությունը (հանրապետության կարտոֆիլի ամբողջ արտադրանքի շուրջ 40 տոկոսը) և կաթնամսատու ուղղության անասնապահությունը (կաթի արտադրության շուրջ 20 տոկոսը)։ Սրանք էլ հենց այն ճյուղերն են, որոնք հացահատիկային տնտեսության հետ մեկտեղ տալիս են շրջանի գյուղատնտեսության համախառն արտադրանքի հիմնական մասը։

Լոռի-Փամբակի հողակլիմայական պայմանների բազմազանությունը կանխորշում է գյուղատնտեսության ճյուղային և տարածքային բազմազանություն։ Տնտեսական շրջանի տարբեր տարածքային մասեր մըտնում են գյուղատնտեսական 4 տարբեր շրջանների մեջ (տե՛ս գլուխ 8.5.)։ Դրանք են Հյուսիս-արևելյանը (Թումանյանի վարչական շրջան), Շիրակը (Սպիտակ), Կենտրոնականը (Արագած), և Լոռի-Փամբակը, որը միավորում է մնացած երեք վարչական շրջանները։ Այդ տերիտորիաները, իսկապես, իրարից տարբերվում են գյուղատնտեսական արտադրության պայմաններով և մասնագիտացմամբ։ Տնտեսական շրջանի հր.-արմ. մասում՝ Սպիտակի և Արագածի վարչական շրջաններում տիրապետող հացահատիկային տնտեսությունն ու անասնապահությունն է, կան շաքարի ճակնդեղի ցանքեր։ Արևելյան հատվածում (Թումանյանի և Գուգարքի վարչական շրջանները և Ստեփանավանի արլ. կեսը) անասնապահության ու հացահատիկային տնտեսության կողքին զգալի տեղ ունի նաև պտղաբուծությունը։ Լոռվա դաշտեկ (Կալինինոյի, մասամբ Ստեփանավանի վարչական շրջանները) համար առաջատար են կարտոֆիլագրությունն ու տավարաբուծությունը, մասնավորապես տոհմաբուծությունը։

Արդյունաբերական ու գյուղատնտեսական ֆունկցիաներից բացի շրջանի համար է ական է նաև տրանսպորտային ֆունկցիան, հատկապես երկաթուղային փոխադրումների գծով։ Շրջանի տարածքով անցնող երկաթուղին տեղական պահանջները բավարարելուց բացի, ունի տարան-



Նկ. 40. Կարտոֆիլի բերքահավաք կալինինոյի շրջանում:

ցիկ մեծ նշանակություն և ամբողջ հանրապետության համար ապահովում էր մինչև Հրազդան—Աղստաֆա գծի կառուցումը միակ անմիջական ելքը դեպի Անդրկովկասի գլխավոր մայրուղին և նրա միջոցով էլ՝ դեպի ՍՍՀՄ Եվրոպական մասի հանրապետություններն ու մարզերը:

Վերջին տարիներին լոռի-Փամբակի շրջանի դերը հանրապետության աշխատանքի տարածքային բաժանման համակարգում աճել է սպասարկող ճյուղերի գծով ևս:

Ներկայումս լոռի-Փամբակի տնտեսական շրջանի ամբողջ տարածքը ընդգրկող ունեցած յուրահատուկ միասնական տնտեսական պրոբլեմ չի նշանակվում: Այնուամենադեռ, առանձնանում են երկու բնագավառ, որոնք շրջանի ամբողջ տնտեսության համար կարող են ունենալ սկզբունքային նշանակություն և առաջացնել որակական տեղաշարժեր:

Առաջինը շրջանի առաջատար ճյուղերից մեկի՝ գունավոր մետալուրգիայի հումքային բնագավառը ընդլայնման հարցն է: Հայտնի է, որ Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատը գրեթե ամբողջությամբ աշխատում է Սյունիքի տնտեսական շրջանից առաքվող պղնձի խտանյութով: Մինչդեռ, տեղում առկա են պղնձի և այլ գունավոր մետաղների հեռանկարային հանքավայրեր, որոնց հետախուզումը և յուրացումը կարող են նկատելիորեն ամրապնդել տեղական հումքային բնագավառը և նույնիսկ ընդարձակել գունավոր մետաղների թողարկումը գործող ձեռնարկություններում:

Երկրորդ բնագավառը ավելի լայն տարածական ընդգրկում ունի և Հենվում է Դեբեդի ավազանի շրային ռեսուրսների կոմպլեքսային օգտագործման վրա:

Տարիներ առաջ ենթադրվում էր շրջանի ջուր օգտագործողների ու ջուր սպառողների շարքում առաջնությունը տալ էլեկտրաէներգետիկային, կառուցելով գետի վրա հիդրոէլեկտրակայանների կասկադ մինչև 400 հազ. կվտ ընդհանուր հզորությամբ: Հետագայում հանրապետության տնտեսական իրադրության փոփոխման համեմատ, զերծային ու ատոմային էլեկտրակայանների կառուցման շնորհիվ հնարավոր համարվեց վերանայել Դեբեդ գետի կոմպլեքսային օգտագործման սխեման, հրաժարվել հիդրոէլեկտրակայանների կասկադի կառուցման գաղափարից և նախապատվությունը տալ ոռոգմանը, արդյունարերական ու կոմունալ շրամատակարարմանը: Նախատեսվում է նաև շրային ռեսուրսների միջավագանային վերաբաշխման միջոցով շրի որոշ քանակություն տրամադրել Շիրակի տնտեսական շրջանին: Գլխավոր հեռանկարում կրկին մեծանալու է շրային ռեսուրսների էներգետիկական օգտագործման նշանակությունը: Թերևս հարկ կլինի կրկին վերանայել շրօգտագործման գլխավոր սխեման:

14.5. ՍԵՎԱՆԻ ՇՐՋԱՆ

(Հրազդանի, Սևանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի ու Կրասնոսելսկի վարչական շրջաններ, հանրապետական ենթակայության քաղաքներ՝ Հրազդան, Սևան, Կամո):

Տարածությունը՝ 6,3 հազ. կմ², բնակչությունը՝ 0,37 մլն. մարդ:

Արևելքում, հարավում ու արևմուտքում շրջանի սահմանները անցնում են Սևանա լճի շրջավաք ավազանի բնական սահմանագծով (Սևանի, Վարդենիսի և Գեղամա շղթաների ջրբաժանով), ապա հսարակությունը Աղստեկի ավազանից ներառում են Գետիկի հովիտը և արմ.-

ում՝ Հրազդանի ավաղանի վերնագավառը Մարմարիկի հովտի հետ միասին:

Տարածքի 21 տոկոսը (1,3 հազ. կմ²) ծածկված է Սևանա լճի ջրերով: Մակերևույթը համեմատաբար պարզ լեռնագրական կառուցվածք ունի: Տարածքի մեծ մասը Սևանա լիճը եղրավորող տափարակ դաշտեր են կամ մեղմաթեք լեռնալանչեր: Ռելիքֆի դրական մակրոձևերը որպես կանոն սահմանային են և չեն թափանցում շրջանի խորքը:

Հիպսոմետրիայի առավելով նույնպես շրջանը բավականին ինքնատիպ է: Հանրապետության տնտեսական շրջանների շարքում նա ամենամեծ միջին բարձրությունն ունի: ցամաքային տարածքի շուրջ 85 տոկոսը գտնվում է 1900 մ-ից մինչև 3600 մ, իսկ մնացած 15 տոկոսը՝ 1400—1900 մ հիպսոմետրիկ բարձրությունների վրա: Տարածքի նման ուղղաձիգ բաշխվածության համեմատ էլ այստեղ տիրապետողը լեռնատափառական ալպյան լանդշաֆտներն են: Միայն ծայր արևմուտքում (Մաղկունյաց լեռներ) և հյուսիսում (Միափորի լեռներ) ոչ ընդարձակ տարածությունն են զբաղեցնում լեռնատափառական այլին լանդշաֆտները:

Կլիմայական պայմանները, մյուս սոցիալ-տնտեսական շրջանների համեմատությամբ բավական խիստ են: Լճի ափամերձ հատվածում միջին հունվարյան ջերմությունը՝ -5° -ից -6° է, իսկ շրջանի տարածքի մեծ մասում տիրապետում են մինչև -8° ջերմաստիճանները: Ամառը բավականին տաք է: շրջանի մեծ մասը ընդգրկված է հուլիսյան 16° և ավելի տաք իզոթերմերով: Տեղումների տարեկան քանակը շրջանի մեծ մասում տատանվում է 350-ից 600 մմ-ի միջն, Գեղամա և Վարդենիսի լեռներում հասնելով մինչև 900 մմ-ի:

Նման բնական պայմանների ազդեցության տակ պատմականորեն ձևավորվել է բնակչության ինքնատիպ տարաբնակեցում: Սևանի ավաղանում բնակավայրերը մեծ մասամբ միջին մեծության և խոշոր գյուղեր են, տեղաբաշխված են մերձափնյա նեղ գոտում, որը լճից որոշ շափով հեռանում է Մասրիկ գետի ավազանում: Սևանի ավաղանի բնական սահմաններից գուրս բնակավայրերը ձգված են նեղ գետահովիտներում:

Սևանի տնտեսական շրջանի տարածքը, բացառությամբ արևմտյան ու հյուսիսային ծայրամասերի, հանդիսացել է պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի մի հատվածը, իր հերթին բաժանվելով մի քանի գավառների՝ Գեղարքունիքի, Սողքի, Արեգունիքի և այլն: Ռուսաստանին միացել է 1827 թ. Երևանի խանության հետ միասին, որի մի մասն էր կազմում:

Սովետական իշխանության հաղթանակին նախորդող տասնամյակները որևէ էական փռփռություն չեն մտցրել շրջանի արտադրողական

ուժերի զարգացման մեջ։ Մինչև վերջ էլ շրջանը մնում էր որպես նախահեղափոխական Հայաստանի ամենախղճուկ, զարգացման ամենացածր մակարդակի վրա գտնվող գավառներից մեկը։ Քաղաքի ստատուս ստացած միակ բնակավայրը, որտեղ մի քանի տնայնագործական արհեստանոցներ էին գործում, նոր Բայազետն էր (նախկին Գավառը, ներկայիս Կամոն), որի բնակչությունը ճիշտ է, այն ժամանակների համար փոքր չէր (1914 թ. 12,6 հազ., զիջում էր միայն Ալեքսանդրապոլին ու Երևանին), բայց գրեթե ամբողջությամբ գյուղատնտեսական էր։ Բանվորների թիվը կազմում էր ընդամենը մի քանի տասնյակ մարդ։

Ներկայումս Սևանի սոցիալ-տնտեսական շրջանը Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության կարևոր ֆունկցիոնալ մասերից է, իր որոշակի կշիռով ու ներքին կառուցվածքն ունեցող տարածքային-արտադրական համալիր։ Այստեղ նույնպես ավել կամ պակաս ուժգնությամբ դրսենորդում են բոլոր այն հիմնական հատկանիշները, որոնք իրավունք են տալիս տվյալ տարածքը դիտել որպես հանրապետական նշանակության սոցիալ-տնտեսական շրջան։

Սովետական իշխանության անցած տասնամյակների ընթացքում և հատկապես հետպատերազմյան տարիներին Սևանի տնտեսական շրջանի համար հատկանշական է եղել (ա) արդյունաբերության զարգացման բացառիկ բարձր տեմպերը (բ) լայն ծավալի երկարուղային շինարարությունը։

Շրջանի արդյունաբերական զարգացումը ըստ էության սկսվել է Սևան-Հրազդան ռոռոգիշ-էներգետիկ համակարգի կառուցումով, հատկապես, երբ շարք մտան Սևանի լճային, Աթարբեկյանի և Գյումուշի հիդրոէլեկտրակայանները։ Այդ կայանների շնորհիվ և դրանց շինարարության համար ստեղծված ենթակառուցվածքի բազայի վրա հետագայում հանդիս եկան վերամշակող արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ։ Ավելի ուշ Հրազդան քաղաքում կառուցվեց հանրապետության ամենահզոր (1150 հազ. կվա) պետական շրջանային էլեկտրակայանը (Հրազդանի ՊԵԷԿ-ը), ինչպես նաև մեքենաշինական, թեթև, սննդի և շինանյութերի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ Սևանի ավագանի շրջաններում։ Եվ, վերշապես, 70-ական թվականներից դրվեց շրջանի բավականին հարուստ մետաղային հանքային հարստությունների օգտագործման սկիզբը (Զոդի ոսկու հանքեր)։

Արդյունաբերական զարգացմանը զուգընթաց ուժեղ թափ հաղորդվեց տրանսպորտային շինարարությանը։ 60-ական թվականներին Սևանի ավագան մուտք գործեց երկաթուղին, հետագայում այն թափանցեց շրջանի խորքը, 1976 թ. հասնելով մինչև նրա ծայր հր.-արևելյան կետը Զոդ ավանը։

Սևանի շրջանի արդյունաբերական զարգացումը խթանող հանգա-
27 1040 417

մանք է նաև բնակչության և աշխատանքային ռեսուրսների համեմատաբար արագ աճը։ Թեև Հայկական ՍՍՀ արագ ինդուստրացման և ուրբանիզացման հետեւանքով տարիներ շարունակ Սևանի ավազանի բնակչության մի մասը վերաբնակություն է հաստատել Հանրապետության այլ շրջաններում (առաջին հերթին Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանում), այնուամենայնիվ զգալի թիվ են կազմում տեղի ազատ աշխատանքային ռեսուրսները։ Իսկ դա տնտեսական մի լուրջ գործոն է, որը չեր կարող չնպաստել վերամշակող արդյունաբերության ստեղծմանը հատկապես խոշոր բնակավայրերում, եթե նույնիսկ նրանք հեռու են ընկած էլեկտրակայաններից և տրանսպորտային մայրուղիներից։

Նկարագրված պայմաններում ոչ միայն արագ թափով ուրվագծվեց Հրազդան-Սևան արդյունաբերական հանգույցը, այլև այդ հանգույցից դուրս, շրջանի տարրեր մասնակում ձեռավորվեցին փոքր մասշտաբի լոկալ արդյունաբերական կենտրոններ։ Այդպիսիք են Կամո քաղաքը (բնակչությունը շուրջ 30 հազ. մարդ), Մարտունի, Վարդենիս, Կրասնոսելսկ քաղաքատիպ պահանջման համար այլ բնակավայրեր։

Նշանակալից են գյուղատնտեսության բնագավառում կատարված տեղաշարժերը։ Զգալի շափով աճել է նրա համախառն արտադրանքը, բարելավվել է ճյուղային կառուցվածքը, երկրագործության մեջ հայտընվել են այնպիսի բարձր եկամտաբեր կուլտուրաներ, ինչպիսիք են ծխախոտը, խնձօրենին, տանձենին և բարեխառն գոտու այլ պտուղներ, մեծ չափով ընդարձակվել են կերարույսերի ցանքատարածությունները։

Սևանի արտադրողական ուժերի զարգացման բարձր՝ հանրապետության միջին ցուցանիշները գերազանցող տեմպերի շնորհիվ շրջանը ներկայումս աշքի ընկնող տեղ է գրավում Հայկական ՍՍՀ էկոնոմիկայում։ Եթե նախկինում, մի երեք տասնամյակ առաջ, արդյունաբերական արտադրանքի ծավալի գծով շրջանի տեսակարար կշիռը կազմում էր միտյն կես տոկոս, ապա այժմ գերազանցում է 10 տոկոսին։ Արդյունաբերական զարգացման մակարդակով՝ բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի քանակով Սևանի շրջանը կանգնած է 4-րդ տեղում, Աղստեղ և Սյունիքի շրջաններից առաջ։

Հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի ծավալի մեջ նրա բաժինը ավելի մեծ է՝ ավելի քան 14 տոկոս, և այդ ցուցանիշով գերազանցում է մյուս բոլոր տնտեսական շրջաններին, բացառությամբ Արարատյանի (վերջինիս զիջում է ավելի քան 3 անգամ)։

Համեմատելու համար հիշենք, որ Սևանի շրջանին բաժին է ընկնում հանրապետության ընդհանուր տարածքի 21 տոկոսը (առանց Սևանա լճի մակերեսի՝ 17 տոկոս) և բնակչության ընդհանուր թվի 11 տոկոսը։

Անդրադառնալով Սևանի՝ որպես հանրապետական սոցիալ-տնտե-

սական շրջանի, հատկանիշների քննարկմանը, նախ և առաջ նշենք բավարար ճշգրտված տնտեսական կազմակերպիչ կորիգի առկայությունը:

Սևանի տնտեսական շրջանի համար այդպիսի դեր կատարում է Հրազդան-Սևան արդյունաբերական հանգույցը: Ճիշտ է, երկրաշափական առումով շրջանի, հատկապես Սևանի ավազանի տարածքի նկատմամբ նա կենտրոնական դիրք լի գրավում, բայց այդ հանգամանքը տվյալ դեպքում վճռական նշանակություն չունի, քանի որ գտնվելով ավազանի տրանսպորտային ելքի մոտ, այսպես թե այնպես ինքն է հանգուցում շրջանի բոլոր գլխավոր ճանապարհները (Արեգունի և Վարդենիսի լեռնաշղթաներով անցնող խճուղիները Սևանի ավազանի համար էական արտաքին կապեր չեն իրականացնում), Այդ կապերը թե երկաթուղային, թե ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով իրականացվում են Հրազդան-Սևան հանգույցով: Նրա միջոցով է կատարվում նաև շրջանի էներգետիկ մատակարարումը, հանգույցից են սկիզբ առնում ինչպես գազամուղը, որն այժմ օղակում է ամբողջ Սևանա լիճը, այնպես էլ էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերը, որոնք ընդուրկում են շրջանի առանց բացառության բոլոր քաղաքներն ու գյուղերը: Հանգույցի այս առանձնահատկությունը առավել ընդգծվելու է առաջիկայում, եթե կավարտվի Գագարին-Կամո երկաթգծի շինարարությունը (ապագայում այն հասնելու է Մարտունի-Վարդենիս, որով կիակվի շուրջանանյան երկաթգծի օղակը):

Սևանի սոցիալ-տնտեսական շրջանի համար ավելի ու ավելի ակընդայտ է դառնում նրա տարածքային-տնտեսական միասնությունը ընդգծող մի հատկանիշ ևս՝ տարածման միասնական տրանսպորտային կողմնորոշումը և ներքին նախարարական պարագաների ամբողջական ցանցի առկայությունը:

Նախկինում էլ Սևանի ավազանի աշխարհագրական դիրքը, ուղիեթային պայմանները և լճի շուրջը պատմականորեն ձեավորված կոմպակտ տարաբնակեցումը ավելի դյուրին ու նպատակահարմար էին դարձնում այնպիսի ճանապարհների ստեղծումը, որոնք առաջին հերթին իրար էին կապում ավազանի ներսում ընկած բնակավայրերը և ապա միայն ամբողջ ավազանը նրանից դուրս, սահմանային դժվարամատչելի լեռնաշղթաներից այն կողմ ընկած շրջանների հետ: Ինչ վերաբերում է շրջանի ամբողջ տարածքի միասնական տրանսպորտային կողմնորոշմանը, ապա այն սկսեց նշմարվել դեռևս անցյալ դարից, եթե Սևանի ամբողջ ավազանը իր արտաքին կապերով ավելի ու ավելի էր հակվում դեպի Արարատյան դաշտն ու Երևանը, ինչպես նաև դեպի Թբիլիսի (Թբիլիսի-Սևան-Երևան խճուղու միջոցով), իսկ Սելիմի և Սոտի լեռնանցքներով անցնող երթեմնի կարևոր առևտորական ճանապարհները իրենց նշանակությունը կորցնում էին: Շրջանի միասնական տրանսպորտային կողմնո-

բոշումը առավել ակնհայտ դարձավ, ինչպես նաև ներքին ուղիների խիտ ու միասնական ցանց ձևավորվեց Երևան—Սևան—Շորժա—Զող երկաթգծի կառուցումով և ժամանակակից ավտոմոբիլային ճանապարհների ստեղծումով։ Սրանք նույնպես, ի վերջո, դուրս են գալիս դեպի Սևանի շրջանի արևմտյան հատվածը Կտրող միութենական ու հանրապետական նշանակության մայրուղիները։

Ի միջի այլոց, նկատենք, որ շրջանի ոչ ներքին, ոչ էլ արտաքին տրանսպորտային կապերի մեջ Սևանա լիճը ներկայումս որևէ դեր չի խաղում։ Դա բացատրվում է, մի կողմից, այն հանգամանքով, որ փոքր տարածությունների վրա շրջային փոխադրումները շատ թանկ են նստում։ Մյուս կողմից, դա կապված է լճի շրջային ուսուրաների քանակի ու որակի պահպանման պրոբեմի հետ, որը կքննարկվի ստորև։

Ներքին տրանսպորտային ուղիների ամբողջական ցանցը այն անշրաժեց պայմանն է, որը մյուս գործոնների առկայության դեպքում անպայմանորեն պետք է հանգեցնի տնտեսական շրջանի մյուս կարևոր հատկանիշի՝ ներքին տնտեսական կապերի միասնական համակարգի ձևավորմանը։

Ի տարբերություն Հայկական ՍՍՀ մեզ արդեն ծանոթ տնտեսական շրջանների, Սևանի ավազանի տնտեսական շրջանի ներքին կապերը զարգացման ավելի ցածր մակարդակ ունեն։ Համեմատաբար լավ են արտահայտված աշխատանքային և մասամբ կուլտուր-կենցաղային կապերը։ Արտադրական կապերը դեռևս ընդգրկում են հատուկենտ ձեռնարկություններ և ունեն միակողմանի բնույթ։ Այնուամենայնիվ, չի կարելի չնշել էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարումը Հրազդան-Սևան արդյունաբերական հանգույցից շրջանի բոլոր մասերին, ինչպես նաև տեղական շինանյութերի և արդյունաբերության ու գյուղատնտեսության սպասարկման գծով արդեն ձևավորված որոշ կապերը։

Ավելի հստակ է դրսերվում հանրապետական տնտեսական շրջանի մյուս հատկանիշը, այն է՝ արտադրական մասնագիտացումը և տնտեսական ֆունկցիաները հանրապետության միասնական տարածքային-արտադրական համալիրում։

Այդ հարցը պարզաբանելու համար նախ ծանոթանանք շրջանի տընաեսության ճյուղային կառուցվածքին, Վաղուց արդեն նրա տնտեսության առաջատար ճյուղը դարձել է արդյունաբերությունը, որը ներկայումս իր համախառն արտադրանքով շուրջ քառապատիկ անգամ գերազանցում է գյուղատնտեսությանը։ Դրա դեմքը այսօր որոշվում է մեքենաշինությամբ (ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, սարքաշինական), էլեկտրաէներգետիկայով, շինանյութերի արդյունաբերությամբ, սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերով։ Գյուղատնտեսա-

կան արտադրանքի ծավալում վճռական դերը պատկանում է անապնապահությանը, իսկ երկրագործության ճյուղերից՝ հացահատիկային տրնտեսությանը, ծխախոտագործությանը և կարտոֆիլագործությանը:

Երշանի մասնագիտացման մեջ և հանրապետության էկոնոմիկայում կատարած դերի առումով այդ ճյուղերի նշանակությունը և, ըստ այդունի դրանց հերթականությունն այլ է:

Առաջին և կարենորագույն ճյուղը էլեկտրաէներգետիկան է: Ընդամենը 2—3 տասնամյակ առաջ, երբ հանրապետության ամբողջ էլեկտրաէներգետիկան հենվում էր ջրային ուսուրաների օգտագործման վրա, Սևանի սոցիալ-տնտեսական շրջանին բաժին էր ընկնում հանրապետությունում թուղարկվող էլեկտրաէներգիայի ամբողջ քանակության շուրջ 60 տոկոսը: Ներկայումս էլ այստեղ է գտնվում Հայկական ՍՍՀ ամենահզոր ջերմաէլեկտրակայանը՝ Հրազդանի ՊՇԷԿ-ը, որի հզորությունը առաջիկա տարիներին կրկնապատկվելու է, հասնելով շուրջ 2,4 մլն կվտ, ինչպես նաև Հրազդանի կասկադի առաջին 3 աստիճանները՝ Սևանի, Աթարբեկյանի և Գյումուշի հիդրոէլեկտրակայանները:

Սևանի շրջանի արտադրական ֆունկցիաները որոշող մյուս ճյուղը մեքենաշինությունն է, որին բաժին է ընկնում հանրապետության նույնանուն ճյուղի արտադրանքի ծավալի մեկ տասներորդ մասից ավելին, Աշքի են ընկնում հատկապես մետաղահատ հաստոցներն ու գործիքները, ուղղութեատրոնային արտադրանքը, գործադիր սարքերը, էլեկտրական մեքենաները, միկրոկարելային իրերը:

Վերջին տարիներին, երբ շահագործման հանձնվեց Հրազդանի ցեմենտի գործարանը, Սևանի տնտեսական շրջանը դարձավ հանրապետության ցեմենտի արտադրության երկրորդ կենտրոնը: Սակայն բնական միջավայրի պահպանության նկատառումներով, այդ արտադրությունը այստեղ ոչ միայն չի ծավալվելու, այլև առաջիկայում փակվելու է:

Եվ, վերջապես, առայսօր Սևանի շրջանը միակն է հանրապետությունում, որտեղ ազնիվ մետաղների հանքավայր է շահագործվում: Շահագործման նախապատրաստվող նոր հանքավայրը ևս (Մեղրաձորի) գտնվում է այստեղ:

Դյուղատնտեսական մթերքների արտադրության բնագավառում Սևանի տնտեսական շրջանի տեղը մեծ է հատկապես ծխախոտի (հանրապետության արտադրվող ծխախոտի հումքի շուրջ 38 տոկոսը), կարտոֆիլի (30 տոկոսը) և բրդի (26 տոկոսը) գծով: Իսկ այնպիսի մթերքների գծով, ինչպիսիք հացահատիկն է, կաթը և միսը, շրջանի բաժինը կազմում է 15—20 տոկոս:

Սևանի շրջանի տնտեսական մասնագիտացման մասին խոսելիս չի կարելի շնչել, որ նա հանրապետության ամենալայն ոեկրեացիոն բազա ունեցող շրջանն է. Մարմարիկ-Արզականի գոտում և Սևանա լճի ափերին

ստեղծվել և գործում են միութենական ու հանրապետական նշանակություն ունեցող մի շարք ուկրեացիոն կենտրոններ, որոնք ունեն միաժամանակ զարգացման լայն հեռանկար:

Որպեսի ամբողջական դառնա Սևանի՝ որպես տնտեսական շրջանի նկարագիրը, մնում է պարզելու մի հարց և՝ ամբողջ շրջանի համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող միասնական ժողովրդատնտեսական պրոբլեմի առկայության հարցը:

Ընդգծենք, որ հանրապետության և ոչ մի սոցիալ-տնտեսական շրջանում միասնական ժողովրդատնտեսական պրոբլեմը այնպիսի սրությամբ չի դրսերվում, ինչպես այստեղ է: Ըստ որում, սա միակ շրջանն է. որի այդ տեսակ պրոբլեմի լուծումը անմիջապես և նկատելի ձեռվ առնչվում է հարեւան շրջանների տնտեսական զարգացման հետ, ավելին՝ համահանրապետական կարևորություն է ձեռք բերում: Դա Սևանա լճի ոացիոնալ օգտագործման ու պահպանման պրոբլեմն է:

Սևանա լիճը բնական վիճակում աշխարհի խոշորագույն լեռնային ձերի թվին էր պատկանում: Մինչև նրա մակարդակի իշեցումը լճային գոգավորությունում դարերի ընթացքում կուտակված շրերի պաշարները կազմում էին 58,5 մլրդ մ³: Սակավաջուր և վառելիքից զուրկ Հայաստանում այդպիսի ջրային հարստությունների առկայությունը դրդում էր մարդկանց մտածելու այդ զուրը ոռոգման և էներգետիկ նպատակներով օգտագործելու մասին:

Սևանի ջրերի դարավոր պաշարների օգտագործման գաղափարը առաջին անգամ քննարկվել է 19-րդ դարի վերջերին: Այն հիմնավորված առաջարկության տեսք է ստացել 20-րդ դարի սկզբին ինժեներ-հիդրոշինարար Ս. Ե. Սերյանի (Մանասերյանի) կողմից, սակայն չի իրականացվել համապատասխան ֆինանսական միջոցներ չկինելու պատճառով:

Սովետական իշխանության հաստատումից հետո, երբ օրակարգի հարց դարձան հանրապետության արտադրողական ուժերի արագ զարգացումը և սոցիալիստական ինդուստրացումը, Սևանի ջրերի օգտագործումը դիտվեց որպես երկիրը տնտեսական դարավոր հետամնացությունից դուրս բերելու հնարավոր կարծ և այն ժամանակվա համար միակ նպաստավոր ուղին:

Ակնհայտ էր, որ բնական երևույթներին միջամտելու, ընդարձակ տարածության վրա բնական համալիրի դարերով հաստատված հավասարակշռությունը խախտելու իր նմանը չունեցող համարձակ քայլ էր ձեռնարկվում:

Բազմակողմանի գիտական հետազոտությունների հիման վրա մշակվեց և 1932 թ. սկսեց իրագործվել Սևանա լճի ջրային պաշարների օգտագործման սխեման, որը հայտնի դարձավ Սևան-Հրազդան ոռոգչակներգետիկ համալիր անունով:



Նկ. 41. Սևանա լիճ. երկու է շրից ազատված շերաբ:

Նախօրոք հետազոտվեցին և նրա ավագանի բնական պայմանները՝ երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆը, կլիմայական պայմանները, հողաբուսական ծածկը, լճի ձկնային հարստությունները, ավագանի տնտեսությունը։ Մանրամասնորեն ուսումնասիրվեցին մթնոլորտային տեղումները, լճի և ավագանի ջրաբանությունը, գոլորշացման և ստորգետնյա հոսքի պայմանները և հաշվարկվեց լճի շրային հաշվեկշիռը հետևյալ բաղադրիչներով (մլն մ³):

մուտք

ներհոսք գետերով — 770
մթնոլորտային տեղումներ — 552

ելք

գոլորշացում — 1212
մակերեսային արտահոսք — 50
ստորգետնյա արտահոսք — 60

բնդամենք՝ 1322

բնդամենք՝ 1322

Այդպիսով, ճշտվեց, որ տարեկան լիճ մուտք գործող 1322 մլն. մ³ քրի քանակությունից Հրազդան գետով ազատ արտահոսք էր կատարում ընդամենը 50 մլն. մ³ կամ ամբողջ մուտքի 4,8 տոկոսը։ Դրանից քիչ

ավելին հեռանում էր ստորգետնյա հոսքի ձևով: Զրի 92 տոկոսը (1212 մլն. մ³) գոլորշանում էր լճի հայելային մակերեսից:

Պրոբլեմի էությունը հանգում էր նրան, որ թույլ շտրվի այդպիսի գոլորշացում և կուտակվող ջուրը ի սպաս դրվի սակավաջուր հանրապետության տնտեսական զարգացման շահերին: Այդ բանին կարելի էր հասնել գոլորշացման մակերեսը կրճատելու, այսինքն լճի մակարդակը արհեստականորեն իջեցնելու շնորհիվ:

Սիեմայի իրականացումը հեշտանում էր լճի և հարակից տարածքի ֆիզիկաաշխարհագրական ընդհանուր իրադրությամբ, որը բնութագրում էր հետևյալ ցուցանիշներով:

լճի բացարձակ բարձրությունը — 1915,5 մ

լճի նարաբերական բարձրությունը

Արարատյան դաշտի նկատմամբ — միջինը 1100 մ

Աղստելի հովտի նկատմամբ — միջինը 1200 մ

լճի ջրհավաք ավազանի մակերեսը — 4891 կմ²

լճի նայելու մակերեսը — 1416 կմ²

լճի առավելագույն խորությունը — 98,9 մ

Նախատեսվում էր սխեման իրականացնել երկու փուլով:

Առաջին փուլը տևելու էր մոտավորապես 50 տարի, որի ընթացքում լճից արտահոսքը արհեստականորեն պետք է մեծացվեր և հասցվեր տարեկան 1200 մլն. մ³ (50 մլն. ազատ արտահոսքի փոխարեն): Դա նշանակում էր, որ 50 տարվա ընթացքում լճի մակարդակը կիշներ 50 մ-ով, իսկ գոլորշացման մակերեսը կկրճատվեր 7 անգամ, Մեծ Սևանը ամբողջությամբ կցամաքեր:

Բաց թողնվող ջրով կաշխատեին մի քանի հիդրոէլեկտրակայաններ, որոնք պետք է կառուցվեին Հրազդան գետի վրա, օգտագործելով գետի հունի ավելի քան մեկ կիլոմետրանոց անկումը:

Ենթադրվում էր, որ երկրորդ փուլում կհավասարակշռվեն լճի ջրի մուտքն ու ելքը և կդադարեր նրա մակարդակի անկումը: Նոր կայունացած ջրային հաշվեկշռի համաձայն Հրազդանով ազատ արտահոսող ջրի քանակը կհավասարվեր տարեկան 700 մլն. մ³: Այս հաշվով էլ պետք է ընդարձակվեին Արարատյան գոգավորության ոռոգվող հողատարածությունները, այսինքն 100 հազ. հա-ով:

Ինչպես տեսնում ենք, Սևանի օգտագործման սխեման խոստանում էր ապահովել Սովետական Հայաստանի այն ժամանակվա տնտեսական զարգացման երկու արմատական հարցերի լուծումը՝ էներգետիկ կայուն բազայի ստեղծումը և ոռոգման զարգացումը:

Սևան-Հրազդան ոռոգչա-էներգետիկ համալիրը ըստ նախագծի իր

տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ՝ շահեկանորեն տարրերվում էր Սովետական Միությունում և արտասահմանում իրականացվող հիդրոտեխնիկական կառույցներից։ Նրա միայն էներգետիկական մասի տեսակարար արժեքը 2—3 անգամ ավելի պակաս էր, քան օրինակ, Վոլգայի ու Դնեպրի մի շարք էլեկտրակայաններին էր։

Սևանի օգտագործման սխեմայի մշակմանը մասնակցել են Սովետական խոշորագույն մասնագետները, այն քննարկել ու հավանություն են տվել արտասահմանյան հայտնի փորձագետները, որոնք միահամուռ էին նախագծվող միջոցառումների դրական գնահատականի մեջ։ Սևան-Հրազդան համալիրը իր կառուցման ընթացքում համարվում էր «սովետական էներգետիկայի մարգարիտը», թեև լսվում էին միաժամանակ զգուշացնող ձայներ, որոնք, սակայն մնում էին անարձագանք։

Սիսեմայի հեղինակները ընդունում էին, որ Սևանի ջրերի դարավոր պաշարների օգտագործումը և լճի մակարդակի իջեցումը ստիպողական քայլ է, գիտակցված զբարերություն, որը կատարվում է հանուն ժողովրդի բարեկեցության, աղքատ ու հետամնաց Հայաստանի տնտեսական արագընթաց վերելքի ապահովման։ Միաժամանակ, նրանք հույս էին փայփայում, որ պայմանները փոխվելով, կարող են հնարավորություն ընծեռել հրաժարվելու սխեման մինչև վերջ իրականացնելու անհրաժեշտությունից և խուսափելու լճի մակարդակի իջեցման բացասական հետևանքներից։

Սևանի օգտագործման սխեմայի հեղինակների այդ հույսերը իրականացան։ Հիսունական թվականների կեսերին արդեն հայտնի դարձավ, որ հարեան Աղրբեշանում հայտնաբերված բնական գազի պաշարները հնարավորություն են տալիս դրանց մի մասը խողովակներով մղել Հայկական ՍՍՀ և օգտագործել էլեկտրաէներգիայի ստացման համար թացի այդ, ուեալ էր դառնում Անդրկովկասյան Յ հանրապետությունները մեկ միասնական էներգահամակարգի մեջ միավորելու հեռանկարը։ Միաժամանակ, Արարատյան գոգավորության երկրաբանական ու ջրաբանական հետազոտություններով պարզվել էր, որ տեղական մակերեսային ջրերի տարածական վերաբաշխման և Արարատյան ստորգետնյա ջրավազանի օգտագործման միջոցով կարելի է հրաժարվել Սևանի ջրերի մի զգալի մասից, որը բաց է թողնվում ոռոգման նպատակներով։

Հայկական ՍՍՀ-ում ստեղծված այս նոր պայմանները և սովետական երկրի աճած տնտեսական հնարավորությունները հենց այն նախադրյալներն էին, որոնք հանգեցրին Սևանա լիի օգտագործման հին ծրագրերից հրաժարվելուն և նոր սխեմայի մշակմանը ու իրականացմանը։

Հին սխեմայի վերանայման հրատապությունը թելադրվում էր այլ հանգամանքներով ևս 1 նախ, ի հայտ էին եկել Սևանի բնական համալիրի որոշ անցանկալի փոփոխություններ, որոնք իր ժամանակին հնարա-

վոր շեր եղել կանխագուշակել, ծրկրսրդ, պարզ էր դարձել, որ հին սխեման մինչև վերջ իրականացնելու համար պետք կլիներ կատարել մեծ ծավալի լրացուցիչ, նախկինում շնախատեաված ծախսումներ,

ծկ ահա, ենելով այդ բոլորից, որոշում ընդունվեց դադարեցնել Սևանի ջրերի դարավոր պաշարների նետազա բացթռողումը և լինը պանդանել բնականին մոտ վիճակում, Սևանը օգտագործել այլ սխեմայով։ Նշված նպատակին հասնելու համար իրականացվեց միջոցառումների մի ամբողջ համակարգ։ Արարատյան գոգավորության արդեն յուրացված հողերի ոռոգման հարցի լուծումը գտնվեց նրանում, որ ջրամբարների (Ապարանի, Աղասի) ու պոմպակայանների (Արեշատի և Մխչյանի), ինչպես նաև արտեզյան ջրհորների կառուցման միջոցով հնարավոր դարձավ նախկինում Սևանի ջրերից սնվող ջրանցքները զգալի չափով փոխադրել տեղական ռեսուրսների վրա։ Որպես կարևոր ռեզերվ դիտվեց ոռոգիչ համակարգերի օգտակար գործողության գործակցի բարձրացումը, ոռոգման ռեժիմի բարելավումը և ջրի կորուստների կանխումը։

Հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջները բավարարելու պրոբլեմը լուծվեց Երևանի, Հրազդանի և Կիրովականի ջերմային և Հայկական ատոմային էլեկտրակայանների էներգետիկական արժեքը, թայց այդ 500 մլն. մ³-ից միայն 170 մլն. է, որի լճի ազատ արտահոսքն է, մինչեւ ավելի քան 300 մլն.-ը դարավոր պաշարներն են կազմում։ Դա նշանակում էր, որ լճի մակարդակի հետագա անկումը ամբողջովին կանգնեցնելու համար հարկավոր էր մեծացնել լճի հաշվեկշիռ մուտքի բաղադրիչը։

Այս միջոցառումները հնարավորություն տվեցին լճից բաց թողնվող ջրի քանակը կրճատել և հասցնել տարեկան 500 մլն. մ³։ Սա այն սահմանային քանակությունն է, որի դեպքում ինչ-որ շափով պահպանվում է Հրազդանի հիդրոէլեկտրակայանների էներգետիկական արժեքը, թայց այդ 500 մլն. մ³-ից միայն 170 մլն. է, որ լճի ազատ արտահոսքն է, մինչեւ ավելի քան 300 մլն.-ը դարավոր պաշարներն են կազմում։ Դա նշանակում էր, որ լճի մակարդակի հետագա անկումը ամբողջովին կանգնեցնելու համար հարկավոր էր մեծացնել լճի հաշվեկշիռ մուտքի բաղադրիչը։

Սևանի ավագանի հարակից շրջաններից տեխնիկապես հնարավոր էր դեպի լիճ մղել բավականին մեծ քանակությամբ ջուր։ Կառուցվեց Արփա-Սևան ստորգետնյա ջրատարը, որով դեպի Սևան է հոսում տարեկան 270 մլն. մ³ ջուր։ Այս շափազանց բարդ հիդրոտեխնիկական կառույցի շնորհիվ հնարավոր դարձավ ամրողովին հրաժարվել ջրի դարձավոր պաշարների օգտագործումից և կանխել նրա մակարդակի հետագա իշեցումը։

Այժմ կառուցվում է Որոտանից Արփա ջրատարը, որը Սևանա լիճ կմղի ևս 120 մլն. մ³ ջուր։ Բացի այդ, իրականացվում են լճի ջրերի խնայողական օգտագործման միջոցառումներ, որոնք ի մի վերցրած պետք է ապահովեն Սևանի մակարդակի ոչ միայն պահպանումը, այլև բարձրացումը մինչև 6 մ-ով։

Այսպիսով, Սևանա լճի պահպանության և ոռոգման ու էներգետիկ նպատակներով նրա ջրային պաշարների ուսցիոնալ օգտագործման հարցերը հիմնականում գտնել են իրենց գիտական և ինժեներական լուծումները: Մնում է, որ շինարարական և շահագործող կազմակերպությունները ժամանակին և որակով իրականացնեն առաջարկված նախագծերը և ապահովեն պահանջվող քանակությամբ ջրի հոսքը Սևանա լիճ:

Սակայն դրանով Սևանի պրոյլեմը իր ամբողջական ու վերջնական լուծումը չի ստանում: Այդ պրոյլեմը ներկայում չի սահմանափակվում զնի մակարդակի պահպանումով: Այն այլ բովանդակություն է ձեռք բերել:

Տասնամյակներ անընդհատ Սևանա լիճը ծառայել է որպես Հայկական ՍՍՀ էլեկտրաէներգիայի և ոռոգելի երկրագործության զարգացման գլխավոր աղբյուր և, այդ իմաստով, անգնահատելի դեր է խաղացել հանրապետության ինդուստրացման, ամրող էկոնոմիկայի զարգացման գործում: Բայց այդ ընթացքում զրկվելով իր ջրային պաշարների ավելի քան 40 տոկոսից, կանգնել է իր՝ որպես լեռնային քաղցրահամ զնի որակական ու քանակական կարևորագույն հատկանիշները կորցնելու վտանգի առաջ:

Խոսքն այն մասին է, որ լճի մակարդակի, բնականի համեմատությամբ շուրջ 19 մ իշխնելու պատճառով նկատելիորեն խախտվել է ջրի ջերմային ուժիմը, լայն տարածում են ստացել կապտականալ ջրիմուռները, փոխվել է ջրի քիմիական կազմը, վատացել են ֆիզիկական հատկանիշները: Միաժամանակ, ավելի ինտենսիվ են դարձել ամրող ավազանի ֆիզիկաաշխարհագրական, հատկապես դենուդացիոն երևոյթները, անցանկալի ուղղությամբ են ընթանում կենսաաշխարհագրական պրոցեսները: Գնալով մեծանում են լճի արդյունաբերական, գյուղատրնտեսական և այլ ժագում ունեցող աղտոտման մասշտաբները: Այս բոյորի հետևանքով խփու արագացել է լճի էֆտրոֆիկացիայի պրացեսը: Քացի այդ, վտանգավոր շափերով նվազել են իշխան ձկան պաշարները, իսկ շուրջ խմելու համար դարձել է ոչ պիտանի:

Այսպիսով, ներկայումս առաջին պլան են մղվում Սևանա լիճը որպես հաղցրահամ (խմելու) ջրի վիրխարի բնական պահեստ պահպանելու հարցը: Սա թելադրում է Սևանի ավազանում բնական միջավայրի պահպանության միջցոցառումների ուրույն և ծավալուն համակարգի իրականացում, համակարգ, որը ենթադրում է լուծել նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են Սևանի ավազանի արտագրական ու կենցաղային բոլոր թափոնների մաքրում և վնասազերծում:

Դրա հետ մեկտեղ, Սևանա լիճը և նրա ավազանը պարունակում են բնական հարուստ ու բազմապիսի ուսուրաներ՝ հանքային, գյուղատրն-

տեսական, ռեկրեացիոն, որոնք չեն կարող հանվել տնտեսական շրջանառությունից և պետք է արդյունավետ կերպով օգտագործվեն:

Այս երկու իրարամերժ թվացող հարցերի ներդաշնակ լուծումը կապված է մեծագույն դժվարությունների հետ, շոշափում է Սևանի տնտեսական շրջանի բոլոր մոտավոր ու հեռավոր մասերի շահերը և հանդես է գալիս որպես միասնական համազգային պրորեմ: Դրա լուծման ընթացքում առաջնությունը բալոր դեպքերում պետք է տրվի Սևանի շրային ռեսուրսների հանակի ավելացմանը և օրակի պահպանմանը:

Սևանի տնտեսական շրջանի համար ընդհանուր հետաքրքրություն է ներկայացնում նաև աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման պրոբլեմը: Ինչպես տեսանք սույն գրքի նախորդ բաժիններում, Հայկական ՍՍՀ ժողովրդագրական իրադրությունը ներկայում պայմանավորում է աշխատանքային ռեսուրսների բավականին արագ աճ և մեծ թվով աշխատանքային տեղեր բացելու անհրաժեշտություն: Սևանի շըրշանում այս պրոբլեմը ավելի սուր ձևով է դրսերվում, որը բացատրվում է բնակչության բնական աճի ավելի բարձր տեմպերով և շրջանի մեծ մասում, հատկապես Սևանի ավագանում վերամշակող աշխատատար արտադրությունների թույլ զարգացմամբ:

Կարելի է ենթադրել, որ Սևանա լճի պահպանման շահերից ելնելով ապագայում արդյունաբերության զարգացումը Սևանի ավագանում խիստ լայն մասշտարքներ շահերք է ստանա, հետևապես և անհեար պետք է լինի աշխատանքային ռեզերվները ամբողջովին տեղում օգտագործել: Բայց մյուս կողմից, շրջանի կազմակերպիչ տնտեսական կենտրոնը՝ Հրազդան-Սևան արդյունաբերական հանգույցը աշխատող ձեռքերի մեծ պահանջ ունի: Դա էլ հենց կարող է որոշել շրջանի ներսում բնակչության միգրացիայի տիրապետող ուղղությունը՝ Սևանի ավագանից դեպի արդյունաբերական հանգույցը:

Դրանով հանդերձ, Սևանի տնտեսական շրջանը ապագայում էլ կունենա աշխատանքային ռեսուրսների որոշ ավելցուկ, որը կօգտագործվի հիմնականում ավագանի սահմաններում:

Սևանի սոցիալ-տնտեսական շրջանի և նրա կազմակերպիչ կորիգի դեր կատարող Սևան-Հրազդան արդյունաբերական հանգույցի գլխավոր կենտրոնը Հրազդան հաղան է (մինչև 1959 թ.:՝ Ներքին Ախտա գյուղ): Արդյունաբերության զարգացման և որպես քաղաք ձևավորվելու գործում վճռական նշանակություն ունեցան Հրազդանի հիդրոէլեկտրակայանների կառուցումը և հարմարավետ տրանսպորտային դիրքը (երկաթուղային ու խճուղային ճանապարհների հանգուցակետում): Գանվում է Հրազդան գետի ափին, զառիթափ լանջերով ու հարթ տեղամասերով տեղանքում, 1740 մ միջին բացարձակ բարձրության վրա, բնակչությունը՝ շուրջ 50

Հազ.: Հանրապետության ամենաարագ զարգացող արդյունաբերական կենտրոններից է: Ներկայումս և գլխավոր հեռանկարում առաջատար արդյունաբերական ճյուղերը լինելու են էլեկտրաէներգետիկան (Հրագդանի՝ Հանրապետության խոշորագույն ջերմաէլեկտրակենտրոնը), ուղղուէլեկտրոնային մեքենաշինությունը («Հրազդանի մեքենաշինարար» արտադրական միավորումը, որը խոշորագույններից է Հանրապետությունում): Զգալի տեսակարար կշիռ ունեն նաև սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը:

Միկրոաշխարհագրական առումով քաղաքը բաժանված է 3 հիմնական զանգվածի՝ Հարավային, կենտրոնական և հյուսիսային:

Քաղաքի արագ զարգացման հետ մեկտեղ, նախատեսվում են խոշուցառումներ՝ ուղղված էկոլոգիական իրադրության բարելավմանը (ցեմենտի արտադրության փակում և ջերմաէլեկտրակայանի արտանետումների կրճատում):

14.8. ՍՅՈՒՆԻՑԻ ՇՐՋԱՆ

(Եղեգնաձորի, Ազիզեկովի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մեղրու վարչական շրջաններ, Ղափան, Գորիս և Զերմուկ հանրապետական ենթակայության քաղաքներ):

Տարածությունը՝ 6,7 հազ. կմ²,

բնակչությունը՝ 0,12 մլն մարդ:

Շրջանի համար բնորոշ է անբարենպաստ աշխարհագրական դիրքը՝ Հանրապետության գլխավոր տնտեսական կենտրոններից ունեցած ֆիզիկական ու տնտեսական մեծ հեռավորությունը, արտաքին կապերն իրականացնող տրանսպորտային ցանցի թերզարգացումը: Ուշադրության արժանի փաստ է այն, որ Սյունիքի շրջանը իր սահմանների ընդհանուր երկարության միայն 15 տոկոսն է, որ հարում է Հայկական ՍՍՀ տարածքին, 75 տոկոսով սահմանակից է Աղրբեշանական ՍՍՀ-ին (Նախիջևանի ԽՍՍՀ-ն ներառյալ) և 10 տոկոսով իրանին:

Սյունիքի շրջանը առանձնահատուկ վիճակում է գտնվում նաև բնական պայմանների առումով: Զբաղեցնելով Վայքի ու Զանգեզուրի ֆիզիկաշխարհագրական շրջանները, աշքի է ընկնում նախ և առաջ լեռնոտ, բարդ ռելիեֆով: Հյուսիսից և արևմուտքից նրա համար բնական սահմանագիծ են ծառայում 3000 մ-ից ավելի բացարձակ բարձրության հասնող Վարդենիսի, Վայքի և Զանգեզուրի լեռնաշղթաները, հսարլ.-ից՝ Ղարաբաղի բարձրավանդակը, հր.-ից՝ Մեղրու կիրճը Արաքս գետով: Միայն արլ.-ում է, որ բնական սահմանագիծ շկա. տարածքի մակերևութը ներկայացված է մեղմաթեք լեռնալանջերով, որոնք աստիճանաբար անցնում են Աղրբեշանական ՍՍՀ դաշտավայրերը:

Հանրապետության մյուս շրջանների հետ համեմատած այստեղ

առավել մեծ շափերի են հասնում տարածքի հիպսոմետրիկ տարրերությունները (Կապուտչուղ՝ 3904 մ—Արաքսի հովիտ՝ 375 մ), զնայած այն հանգամանքին, որ Սյունիքի տարածքը սկսվում է հանրապետության ամենացածր նիշից (375 մ), նրա ընդհանուր տարածության միայն 20 տոկոսն է, որ ընկած է մինչև 1500 մ բացարձակ բարձրությունը, մինչդեռ 80 տոկոսն ունի 1500 մ-ից մինչև 3900 մ բարձրություն։ Այստեղ նվազագույնի են հասնում նաև հարթավայրային տարածությունները՝ շրջանի ընդհանուր տարածքի 2 տոկոսից էլ պակասը։ Շրջանի տարածքի միայն կեսում է, որ մակերևույթի թեքությունները՝ մինչև 16°, թույլ են տալիս մասսայականորեն զբաղվելու գյուղատնտեսությամբ։ Մյուս կեսը դառիթափ լանջեր են, որտեղ վտանգավոր շափեր են ընդունել էռոզիոն պրոցեսները, գրեթե անհնար դարձնելով հողերի գյուղատնտեսական օգտագործումը։ Անբարենպաստ են պայմանները նաև բաղաքաշինության ու ճանապարհաշինության տեսակետից։

Կլիմայական պայմաններն ու հողաբուսական ծածկը ենթարկվելով ուղղաձիգ գոտիականության օրենքին, աշքի են ընկնում մեծ խայտաբղետությամբ։ Եթե մերձարաքսյան հատվածում մինչև 1000 մ բացարձակ բարձրությունները տեղումների տարեկան գումարը չի հասնում նույնիսկ 300 մմ-ի, ապա 2500 մ բարձրության վրա այն գերազանցում է 700—800 մմ-ի։ Մեղրու կիրճում դիտվում է հանրապետության ամբողջ տարածքի համար ամենատաք ձմեռը։ Սա միակ վայրն է, որտեղ հունվարյան միջին ջերմաստիճանը զրոյից բարձր է։ Մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա բարձրալեռնային գոտում այն իջնում է մինչև —10°։ Նույն օրինաշափությամբ էլ փոխվում են ամառային ջերմաստիճանները։ Օրինակ հունիսյան միջինը, եթե ցածրադիր շրջաններում գերազանցում է 25°-ին, ապա բարձրալեռնային հատվածում հազիվ հասնում է 10—12°-ի։

Սյունիքը հանրապետության երկրորդ շրջանն է, որտեղ զգալի տարածություններ են գրավում չոր մերձարևադարձային տեղանքները (Մեղրու կիրճը, Ողջի և Որոտան գետերի ցածրադիր հովիտները), ինչպիս նաև անտառային զանգվածները։

Բնական լանդշաֆտներից տիրապետողը երեքն են՝ լեռնատափաստանայինը, լեռնաանտառայինը և ալպյանը։ Շոշափելի տարածություն են զբաղեցնում նաև չոր լեռնատափաստանային լանդշաֆտները, իսկ Մեղրու կիրճի հարավային գոտին և Արփայի հովտի ցածրադիր հատվածը իրենցից ներկայացնում են կիսաանապատային լանդշաֆտներ։

Ջրային պաշարները համեմատաբար մեծ են (շրջանում են գտնվում հանրապետության աշքի ընկնող գետերից 4-ը՝ Արաքսը, Որոտանը, Արփան և Ողջին) և առայժմ մասամբ են ընդգրկված արտադրական օգտագործման ոլորտի մեջ։ Այնուհանդերձ, Սյունիքի շրջանի բնական ոե-

սուրսներից ամենամեծ տնտեսական արժեքը օգտակար հանածոներն ունեն: Հարուստ պաշարներով աշքի են ընկնում հատկապես մոլիբդենը, պղինձը, բազմամետաղները, նեֆելինային սիենիտները, երկաթը, ինչպես նաև գրանիտը, մարմարը, բազալտը, դիտոմիտները, ֆոսֆորիտները և բազմապիսի հանքային աղբյուրներ:

Սյունիքի տնտեսական շրջանը իր ներկա սահմաններով գրավում է պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի մեծ մասը: Ռուսաստանին միացել է 1813 թ. Ղարաբաղի խանությունների հետ մեկտեղ: Ռուսաստանի կազմում բաժանված է եղել Երևանի նահանգի (Վայք) և Ելիզավետպոլի նահանգի (Զանգեզուր) միջև:

Սոցիալիստական շինարարության առաջին տասնամյակների ընթացքում Սյունիքի զարգացման հետ առնչվող տնտեսաաշխարհագրական գլխավոր պրոբլեմը եղել է շրջանը տնտեսական-արտադրական առումով հանրապետության գլխավոր կենտրոնների հետ կապելը: Այդ պրոբլեմի լուծման համար վճռական նշանակություն ունեցան ջուլֆա-Մինչաւան-Ղափան երկաթգծի շինարարությունը և անոելս ճանապարհների վերակառուցումը, դրանք ավտոմոբիլային խճուղիների վիճակին բերելը: Դա գլխավոր նախապայման էր, որպեսզի Սյունիքը, զարգացնելով իր արտադրողական ուժերը, աստիճանաբար ներգրավվեր Սովետական Հայաստանի ձեռավորվող տնտեսական համալիրի մեջ, դառնար այդ համալիրի ֆունկցիոնալ բաղադրիչ և կանգներ հանրապետական ինքնուրույն սոցիալ-տնտեսական շրջան ձևավորվելու ուղղու վրա:

Հատկանշական է, որ Հայկական ՍՍՀ տնտեսական շրջանացման նախկինում մշակված սխեմաների մեծ մասում Սյունիքը դիտվել է որպես առանձին միավոր: Բայց միաժամանակ, փաստ է, որ այդ բանը արվել ու այժմ էլ արվում է ոչ այնքան ելնելով շրջանի տնտեսության ներկա վիճակից, որքան հաշվի առնելով նրա համեմատաբար մեկուսացված աշխարհագրական դիրքը, զարգացման նախադրյալներն ու հեռանկարները: Եվ, իսկապես, ինչպես կտեսնենք ստորև, հանրապետական տնտեսական շրջանի մեզ արդեն հայտնի հատկանիշներից բոլորը չեն, որ Սյունիքի շրջանում ձևավորվել են լրիվ շափով, բայց բոլոր օբյեկտիվ նախադրյալները կան, որպեսզի առաջիկայում դրանք ձևավորվեն ամբողջ ուժով:

Այնուամենայնիվ, ներկայումս Սյունիքը հանրապետության աշխատանքի տերիտորիալ բաժանման համակարգում հանդես է գալիս որպես իր ինքնուրույն տեղն ու դեմքը ունեցող մի շրջան, խոշոր ավանդ մուժելով Հայկական ՍՍՀ տնտեսական հզորության հետագա աճը ապահովելու գործում:

Սյունիքի տնտեսական զարգացումը բնութագրող ընդհանուր քանակական ցուցանիշները բարձր չեն: Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսա-

կան շրջանների թվում նա ամենաընդարձակն է և զբաղեցնում է հանրապետության ընդհանուր տարածության գրեթե 23 տոկոսը։ Բայց նրա բաժինը ըստ բնակչության թվի միայն 7 տոկոս է (քաղաքային բնակչության թվի՝ 5 տոկոս), ըստ արդյունաբերության համախառն արտադրանքի և ազգային եկամտի ծավալի՝ դրանից էլ պակաս, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 9 տոկոս։

Սյունիքն իր տնտեսական զարգացման թե բացարձակ և թե հարաբերական ցուցանիշներով հանրապետության տնտեսական շրջանների շարքում գրավում է նախավերջին տեղը, մի քան, որ չի նամապատասխանում երա բնական ռեսուրսների ու պայմանների ընձեռած լայն հնարավորություններին։

Այս վիճակը գոյացել է պատմականորեն։ Մինչև հեղափոխությունը Սյունիքն այն շրջաններից էր, որոնք առանց այն էլ թույլ զարգացած արտադրության լճացման պայմաններում բնակչության ամենամեծ արտագնացություն էին տալիս և որոնց արտադրողական ուժերի մեջ կապիտալիզմը ըստ էության շոշափելի, դրական հետք լթողեց։ Ամբողջ արդյունաբերությունը ներկայացված էր մի քանի փոքր պղնձահանքերով ու պարզունակ ձուլարաններով և Մեղրու պահածոների մի քանի քանվոր ունեցող «գործարանով»։ Գյուղատնտեսության մեջ շարունակում էր տիրապետող մնալ արտադրությունը վարելու պատճենական հետամնաց, էքստենսիվ եղանակը։

Այս ամենը սովետական իշխանությանը ժառանգություն անցավ ավերված ու քայբայված վիճակում։ Հակայական ջանքեր ու միջոցներ պահանջվեցին փլուզված տնտեսությունը վերականգնելու համար։

Հայրենական Մեծ պատերազմին նախորդած երկու տասնամյակների ընթացքում Սյունիքի տնտեսական կյանքում էական փոփոխություններ կատարվեցին. վերականգնվեցին ու ընդարձակվեցին Ղափանի պղնձի հանքերը, Մինչև այս գծի կառուցումով շրջանը երկաթուղարքին ելք ստացավ դեպի հանրապետության ու միութենական կենտրոնները. փակվեցին տեղի տնայնագործական եղանակով աշխատող ձուլարանները այն կապակցությամբ, որ արտադրվող պղնձի խտանյութը սկսեցին փոխադրել Ալավերդու ավելի կատարյալ տեխնոլոգիա ունեցող գործարանը, որը մինչև այդ վերակառուցվել ու ընդարձակվել էր։ Ղափանում և շրջանի մի քանի այլ վայրերում կառուցվեցին տեղական նշանակության ձեռնարկություններ և վերջապես, սոցիալիստական հիմքերի վրա տեղափոխվեց շրջանի տնտեսության գլխավոր ճյուղը՝ գյուղատնտեսությունը։ Այս բոլորով հանդերձ, Սյունիքը մնում էր Հայկական ՍՍՀ այն շրջանը, որտեղ համեմատաշար քիչ կապիտալ ներդրումներ էին կա-

ուարկում, ընդհանուր առմամբ դանդաղ էր աճում արտադրությունը, և որշանի տեսակարար կշիռը հանրապետությունում ոչ միայն չէր աճում, այլև որոշ շափով նվազում էր:

Հետպատերազմյան տարիներին վիճակը նկատելիորեն փոխվեց. Տես թափ հաղորդվեց լեռնահանքային արդյունաբերության զարգացմանը, մեկը մյուսի հետևից շարք մտան Քաջարանի, Դաստակերտի և Ագարակի պղնձամոլիքենային հզոր ձեռնարկությունները, սկսվեց Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադի շինարարությունը, ստեղծվեցին վերամշակող արդյունաբերության արդիական ձեռնարկություններ, շարք մտան ոռոգիչ ջրանցքներ ու պոմպակայաններ, որոնց շնորհիվ ընդարձակվեցին ոռոգելի տարածությունները, հասակ առան նոր քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ:

Այս բոլորի շնորհիվ ձևավորվեց Սյունիքի՝ որպես հանրապետական սոցիալ-տնտեսական շրջանի ներկայիս նկարագիրը:

Փորձենք այդ նկարագիրը վերլուծել ըստ այն հատկանիշների, որոնք ի մի վերցրած ամեն մի տարածքի հաղորդում են տնտեսական շրջանի որակ:

Նախ, շրջանի տնտեսական կորիզի, բավարար մեծության կազմակերպիչ կենտրոնի առկայության մասին:

Կասկածից վեր է, որ Սյունիքի տնտեսական շրջանի զարգացման արդի փուլում նման կորիզ, որն իր շուրջը համախմբեր շրջանի բոլոր տերիտորիալ մասերը, չի ձևավորվել և հավանաբար չի էլ ձևավորվի. Հաշվի առնելով շրջանի արտադրողական ուժերի տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները և զարգացման նախադրյալները, կարելի է կանխատեսել, որ Սյունիքը լինելու է ոչ թե միակենտրոն, այլ բազմակենտրոն սոցիալ-տնտեսական շրջան: Այդ ապագա կենտրոններից ներկայումս առավել հզորը Ղափան-Քաջարան արդյունաբերական հանգույցն է (տես՝ գլուխ 7): Դրա անմիջական ազդեցության ոլորտի մեջ առաջմ մտնում են Ղափանի վարչական շրջանը, Մեղրու (երկաթուղու և Քաջարան-Լիճք-Մեղրի ավտոխճանուղու միջոցով), Գորիսի և մասամբ Սիսիանի վարչական շրջանները (Ղափան-Գորիս-Սիսիան ավտոխճանուղու միջոցով):

Շրջանաստեղծ երկրորդ կորիզը ձևավորվում է Որոտան գետի ավագանում, Գորիս և Սիսիան քաղաքների և Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադի բազայի վրա: Սրա «ուժային դաշտը» ոչ միայն կհամընկնի Ղափան-Քաջարան հանգույցի «ուժային դաշտի» հյուսիսային հատվածի հետ, այլև իր ազդեցության ոլորտը մի շարք գծերով կտարածի նաև Արփայի ավագանի վրա:

Այստեղ այժմ գոյություն ունեցող երկու քաղաքներից մեկը՝ Գորիսը թեև քաղաքի ստատուս ուներ դեռևս նախահեղափոխական շըր-

շանում, բայց հանդես է եկել որպես առևտրական կենտրոն և գուրկ է եղել արդյունաբերությունից, Բնակչության թիվը 1914 թ. կազմել է ընդամենը 1,6 հազ. մարդ.:

Ներկայումս Գորիսը հանրապետական ենթակայության քաղաք է, որի բնակչության թիվը գերազանցում է 20 հազարից. Այստեղ գործում են մեքենաշինական, տեքստիլ ու սննդի արդյունաբերության ձեռնարկություններ, բարձրագույն ուսումնական հաստատություն (Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղը):

Սիսիանը շրջանային ենթակայության քաղաք է, որի գարգացման հեռանկարը կապված է գործող արդյունաբերական ձեռնարկությունների (մեքենաշինական, սննդի, թեթև) ընդարձակման ու նորերի կառուցման հետ:

Ինչ վերաբերում է Որոտանի կասկադին, ապա դրա կայանները և շինարարության համար ստեղծված ինֆրակառուցվածքի տարրերը Հրազդանի կասկադի օրինակով, դեպի իրենց են ձգելու վերամշակող արդյունաբերության ձեռնարկություններ, որոնք համապատասխան պայմաններում կարող են խմբավորվել միասնական հանգույցի մեջ:

Արփայի հովանում այժմ ձևավորված երեք քաղաքային բնակավայրեր՝ Զերմուկ քաղաքը, Ազիզբեկով ու Ծղեգնաձոր ավանները այսօր արդեն գտնվում են տնտեսական սերտ կապերի մեջ: Հաշվի առնելով գրանցում գյուղատնտեսական հումքի ու տեղի հանքային ռեսուրսների վերամշակման ձեռնարկություններ ստեղծելու հեռանկարը, պետք է ենթադրել, որ դրանց բազայի վրա ևս կարող է գոյանալ ավելի փոքր հզության ու լոկալ նշանակության արդյունաբերական հանգույց:

Թագմակենտրոն տնտեսական շրջանում, ինչպիսին է Սյունիքը, առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում մյուս հատկանիշը՝ տարածքի միասնական տրանսպորտային կողմնորոշումը և ներքին ճանապարհային ցանցի ամբողջականությունը:

Այս հատկանիշն իր ձևավորման փուլը չի ավարտել: Այնուհետեւ, նրա ուրվագծերը արդեն որոշակի են. ավարտվում է տրանսսյունիքյան միասնական ավտոմոբիլային մայրուղու ձևավորումը: Այն սկսվելով Արարատյան տնտեսական շրջանի սահմանից, հատում է Սյունիքի տարածքը հս.-արմ.-ից դեպի հր.-արլ. և ավարտվում ծայր հարավում՝ Մեղրիում: Դա, ըստ էության, տրանսպորտային առանցքի դեր է կատարում, որի աջ և ձախ ճյուղավորումները մայրուղուն են միացնում շրջանի ամենահեռավոր բնակավայրերն անգամ: Դա նշանակում է, որ կենտրոնական տրանսպորտային զարկերակ ծառայող այդ մայրուղին հիմք ժառանգելով անոելու ճանապարհների ամբողջական ցանցի համար, միաժամանակ ապահովում է շրջանի տարբեր մասերի միասնական կողմնորշումը ավտոմոբիլային հաղորդակցության գծով:

Եթե ավտոմորիլային տրանսպորտի համար դա ակնհայտ է, ապա երկաթուղային տրանսպորտի մասին այդ առումով կարող ենք խոսել որպես հեռավոր, թեև տեսանելի հեռանկարի մասին։ Երկաթուղային կողմնորոշման տեսակետից շրջանի տարածքը տրոհվում է 4 հատվածի, որոնք սպասարկվում են 4 տարբեր կայարանների՝ Ղափանի, Մեղրու (Ագարակի հետ միասին), Նախիչևնի և Երասխի (Արարատի վարչական շրջանում) կողմից։ Սակայն վիճակը արմատապես կփոխվի, եթե իրականացվի նախատեսվող Ղափան—Սիսիան—Ձերմուկ—Վարդենիս երկաթգծի շինարարությունը (Նախատեսվում է Վարդենիս—Ձերմուկ հատվածը ավարտել 13-րդ հնգամյակում):

Սյունիքի տնտեսական շրջանի վերը նկարագրված երկու հատկանիշների գարգացման ցածր մակարդակի պատճառով և դրան համեմատ հեռու է ավարտուն լինելուց նաև ներքին տնտեսական կապերի համակարգը։ Այդ կապերը շատ թե քիչ ակնառու են արդեն ծեավորված կամ ծեավորվող արդյունաբերական հանգույցների ներսում, բայց շատ թույլ են արտահայտվում նրանց միջև։

Սյունիքում համեմատաբար լավ է դրսեորվում տնտեսական շրջանի հաջորդ հատկանիշը՝ շրջանի մասնագիտացումը և հանրապետության տնտեսական համալիրում որոշակի, միայն իրեն ճատուկ արտադրական ֆունկցիաների կատարումը։ Սույն հատկանիշը, ինչպես նշվել է, հենքում է նախ և առաջ տնտեսության ճյուղային կառուցվածքի վրա։ Այդ կառուցվածքը այստեղ համեմատաբար պարզունակ է, արտադրության ճյուղերի թիվը՝ սահմանափակ։ Այդ տեսակետից Սյունիքը ակընհայտորեն զիջում է հանրապետության մյուս բոլոր տնտեսական շըրշաններին, բացառությամբ Աղստակի։

Արդյունաբերությունը համախառն արտադրանքի ծավալով գերազանցում է գյուղատնտեսությանը 2,5 անգամ (Հայկական ՍՍՀ-ում ի մի վերցրած՝ շուրջ 7 անգամ)։ Սյունիքը հանրապետության միակ տնտեսական շրջանն է, որի արդյունաբերության ճյուղային կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունի լեռնահանքային արդյունաբերությունը (ավելի քան 30 տոկոս), երկրորդ տեղումն է մեքենաշինությունը (ավելի քան 20 տոկոս), երրորդում՝ սննդի և շորրորդում՝ թեթև արդյունաբերությունը։ Սրանց էլ հենց բաժին է ընկնում շրջանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մոտավորապես 90 տոկոսը։

Սյունիքի համար մասնագիտացման ճյուղի նշանակություն ունեն լեռնահանքային արդյունաբերությունը (որը ներկայացված է պղնձամուրդենային ու պղնձի հանքանյութի արդյունահանման ու հարստացման միութենական նշանակության ձեռնարկություններով) և մասամբ մեքենաշինությունը։

Սյունիքը տալիս է հանրապետության գունավոր մետալուրգիայի համախառն արտադրանքի շուրջ կեսը, պղնձի հանքաբարի ու խտանյութի հիմնական մասը և Սովետական Միությունում արտադրվող մոլիբդենի խտանյութի զգալի մասը։ Այսպիսով, Սյունիքի տնտեսական շրջանը մոլիբդենի արտադրության գծով շոշափելի բաժին ունի նաև աշխատանքի միութենական բաժանման համակարգում։

Ինչ վերաբերում է մեքենաշինությանը, ապա այն աշքի է ընկնում առաջին հերթին էլեկտրատեխնիկական և սարքաշինական արտադրանքով, որի մեծ մասը ուղարկվում է հանրապետության սահմաններից դուրս։


Գյուղատնտեսական արտադրության բնագավառում Սյունիքը հանդիս է գալիս որպես անասնապահության, ծխախոտագործության շրջան։ Նրան բաժին է ընկնում հանրապետության ոչխարների գլխաբանակի 20 տոկոսը, խոշոր եղջերավոր անասունների 17 տոկոսը, ծխախոտի արտադրության 12 տոկոսը, պտուղների արտադրության 6 տոկոսը։ Սյունիքի առանձին մասերի, մասնավորապես Մեղրու և Եղեգնաձորի վար-



Նկ. 42. Հացահատիկի բերքահավաք Սիսիանի շրջանում։

շական շրջաններում ապրանքային նշանակություն ունեն պտղաբուծությունն ու այգեգործությունը, իսկ Սիսիանի ու Գորիսի շրջաններում՝ հացահատիկային տնտեսությունը։

Ավարտելով Սյունիքի տնտեսաշխարհագրական բնութագիրը, հարկ է նշել, որ շրջանի տնտեսական յուրացվածության, արտադրողական



Նկ. 43. Հեռային բարդ ռելիեֆի պայմաններում զարգանում է հանրապետության ամենաշարագային քաղաքը՝ Մեղրին, համանուն վարչական շրջանի կենտրոնը:

ուժերի զարգացման և լոկալ տարածքային-արտադրական համալիրի ձևավորման աստիճանը դեռևս չի համապատասխանում ոչ միայն նրա քնական-հումքային, այլև ժողովրդագրական պոտենցիալին:

Շրջանի բնակչության ընդհանուր թիվը շատ դանդաղ է ավելանում, թեև բնական աճը ցածր չէ. աշխատանքային ռեսուրսների զգալի մասը զրազմունք է գտնում շրջանի սահմաններից դուրս: Այս բոլորը հիմք են տալիս ասելու, որ Սյունիքի տնտեսական շրջանը դեռևս մնամ է չօգտագործված հնարավայրությունների շրջան, և դա պետք է նաշվի առնվի հանրապետուրյան սոցիալ-տնտեսական զարգացման նեռանկարային պլանների մշակման ժամանակ:

Հայկական ՍՍՀ հետագա տնտեսական առաջնաթացի, արտադրության տարածքային կառուցվածքի կատարելագործման, սոցիալ-տնտեսական շրջանների զարգացման մակարդակների համահարթման շահերը պահանջում են ավելի ակտիվորեն օգտագործել այդ հնարավորությունները, ապահովել Սյունիքի արտադրողական ուժերի զարգացման ավելի բարձր տեմպեր, պլանային կարգով խթանել նրա տարածքում արտադրության ավելի համամատնական ու կոմպլեքսային զարգացմանը:

Այս ընդհանուր նպատակին հասնելու ճանապարհին ներկայումս ամենակարևոր ու հրատապ պրոբլեմը երկարադիմերի ընդլայնումն է:

Մասնավորապես Հափան—Վարդենիս երկաթգծի կառուցումը պետք է համարել այն գլխավոր միջոցառումը, որն արմատապես բարելավելով ամբողջ Սյունիքի տրանսպորտային աշխարհագրական դիրքը, կարող է գլխավոր հեռանկարում ապահովել շրջանի սոցիալ-տնտեսական ավելի արագ զարգացում:

Շրջանի համար կարելոր պրոբեմ է նաև այն, որ կապիտալ ներդրումների ավելացման, նախալեռնային ու լեռնային գոտիներում գյուղատնտեսական արտադրությունը խթանելու, սոցիալական ենթակառուցածքի ստեղծման և արդյունաբերության առանձին արտադրությունների ցրվածությունը տեղաբաշխելու միջոցով թույլ շտրվի աշխատանքային տարիք մտնող բնակչության արտագաղթ, մի բան, որ բնորոշ է եղել վերջին տասնամյակների ընթացքում Սյունիքի մեջ մտնող բոլոր վարչական շրջանների համար:

14.7. ԱԼՍՏԵՎԻ ՇՐՋԱՆ

(Նոյեմբերյանի, Խցկանի, Շամշադինի վարչական շրջանները և Քշեն ու Դիլիջան հանրապետական ենթակայության քաղաքները):

Տարածությունը՝ 2,7 հազ. կմ²,
բնակչությունը՝ 0,17 մլն. մարդ:

Արլ.-ում, հր.-ում և հր.-արլ.-ում նրա համար բնական սահմանագիծ են ժառայում 2000—3000 մ բարձրություն ունեցող Գուգարաց, Փամբակի ու Միափորի լեռնաշղթաները։ Դրանց ուղղահայաց ձգվում են իրար զուգահեռ լեռնաբազուկները, իսկ նրանց միջև դեպի հս-արլ. աստիճանաբար լայնացող գետահովիտները, որոնք հանրապետական սահմանի մոտ ձուլվում են Կուրի ընդարձակ դաշտավայրին։ Այդ գետահովիտներում էլ հենց կենտրոնացված են մշակովի հողատարածությունները և գրեթե ամբողջ բնակչությունը։

Ամենալեռնոտ ու մասնատված մակերևույթ ունեցող շրջաններից է, տիրապետող են 12 աստիճանից բարձր թեքության լանջերը և միայն հովիտների հատակային, ոչ ընդարձակ տարածություններն են, որ տափարակ են։ Շրջանի կարևոր բնական առանձնահատկությունն այն է, որ տարածքի միջին բարձրությունը մյուս շրջանների համեմատությամբ բավականին փոքր է՝ ոչ ավելի 1200 մ-ից։ Հստ որում, ամբողջ հողատարածությունների շուրջ 34 տոկոսը ընկած է 375—1000 մ բացարձակ բարձրություններում և միայն 7 տոկոսն է, որ 2000 մ նիշից վեր է բարձրանում։

Սրանով էլ հենց կանխորոշվել են Աղստևի շրջանի լանդշաֆտների համեմատաբար պակաս բազմազանությունը և ընդհանուր առմամբ մեղմ կիլմայական պայմանները։ Տարածքի մեծ մասում հունվարյան միջին ջերմաստիճանը —2°-ից շի իջնում և միայն սահմանալին լեռնաշղթա-

Ների մերձկատարային հատվածներում է, որ հասնում է -6° -ի, Ամառը բնութագրվում է որպես տաք և շոգ. Հուլիսի միջին ջերմաստիճանները տատանվում են 18° և 22° -ի միջև։ Տեղումների քանակը նույնպես ավելի է, քան մյուս տնտեսական շրջաններում, այսինքն $450-800$ մմ։

Նման պայմաններում օրինաչափ է, որ այստեղ է գտնվում Հայ-կական ՍՍՀ շոր մերձարևադարձային կլիմա ունեցող տարածությունների մեծ մասը՝ շուրջ 1000 կմ², որը կազմում է Աղստեհի շրջանի ընդհանուր տարածքի մեկ երրորդից ավելին։

Բնական լանդշաֆտների մեջ տիրապետողը լեռնային անտառներն են։ Դրանց մեծ շափով զիջում են շոր լեռնատափաստանային ու ալպյան լանդշաֆտները։

Եթե անտեսնք Դեբեղ գետը, որը միայն մի փոքրիկ հատվածով շոշափում է շրջանի Հս.-արևմտյան անկյունը, Աղստեհի շրջանի ամենախոշոր ջրհոսքը ինքը՝ Աղստեհ գետն է, Բայց նրա ջրի միջին ծախսը շուրջ 3 անգամ պակաս է Սևքրի, Դեբեղի կամ Ախուրյանի ծախսից։ Այսուամենայնիվ, Աղստեհի տնտեսական շրջանը ընդհանուր առմամբ ավելի լավ է ապահովված շրային ուսուլսներով, քան, օրինակ, Արարատյան կամ Շիրակի շրջանները։

Աղստեհի տնտեսական շրջանը հակառակ հողակլիմայական համեմատաբար բարենպաստ պայմաններին ու անտառային հարուստ ուսուրսներին, աղքատ է հանքահումքային ուսուրսներով։ Այստեղ չկա օգտակար հանածոների, հատկապես մետաղային հումքի այն բազմազանությունը, որ առկա է հանրապետության տարածքի մեծ մասում։ Առայժմ հետախուզված են և ունեն հաստատված հաշվեկշռային պաշարներ բնտոնիտային կավերի (իջևանի) և ագաթի (Սարիգյուղի) հանքավայրերը։ Արդյունաբերական հետաքրքրություն ներկայացնում են նաև հանքային ջրերի մի քանի աղբյուրներ։

Աղստեհի տնտեսական շրջանը պատմաշխարհագրական առումով ընդգրկում է պատմական Հայաստանի Գարդման աշխարհի Հս.-արևմտյան գավառները (Կացեն, Գաղ, Տավոշ), Ռուսաստանին է միացել 1801 թ. Վրաստանի հետ մեկտեղ։ Յարական Ռուսաստանի վարչադրանքային բաժանման համաձայն, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը եղել է Ելիզավետոպոլի նահանգի կազմում (բացառությամբ Նոյեմբերյանի վարչական շրջանի արևմտյան կեսի, որը մտնում էր Թիֆլիսի նահանգի մեջ)։

Աղստեհը հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանում նախ և առաջ հայտնի է նրանով, որ այստեղ՝ իջևանում (նախկին Քարվանսարայում) 1920 թվականի նոյեմբերի 29-ին հոշակվեց Սովետական Հայաստանի ծնունդը և այստեղից սկսվեց սովետական իշխանության հաղթարշավը Արևելյան Հայաստանում։

Աղստեկի շրջանում բացակայել են բնական ու տնտեսական այն օրեկտիվ պայմանները, որոնք կարող էին խթանել նրա արդյունաբերական զարգացումը: Այստեղ չկային ոչ հանքային հարստությունների արդյունաբերական նշանակության պաշարներ, ոչ բավարար հզորության հրդրուէներգետիկ ռեսուրսներ, ոչ էլ մեծ քանակի աշխատանքային ռեսուրսներ: Նա զորկ էր ենթակառուցվածքի այնպիսի կարևոր տարրից, ինչպիսին երկաթուղին է, ինչպես նաև շատ թե քիչ նպաստավոր տնտեսաշխատական դիրքից:

Սովետական իշխանության տարիներին, ինչպես մեզ հայտնի է, արդյունաբերական զարգացման ոլորտի մեջ ներգրավվեցին հանրապետության բոլոր մասերը, բոլոր վարչական շրջանները: Այս համընդհանուր պրոցեսից, հասկանալի է, չէր կարող դուրս մնալ Աղստեկի տնտեսական շրջանը: Եվ նա նույնպես կանգնեց ինդուստրացման ուղղու վրա: Սկզբնական շրջանում շատ թե քիչ դրական գործոնի դեր էին խաղում երկու հանգամանք՝ առաջին. համեմատաբար առատ գյուղատնտեսական հումքը, որի վերամշակումը կարելի էր կազմակերպել տեղում, և երկրորդ. անտառափայտի որոշ պաշարների առկայությունը:

Ակնհայտ է, որ այդ գործոնները բավարար չէին շրջանում բազմացյուղ արդյունաբերություն ստեղծելու համար: Այդ պատճառով էլ ընդհուպ մինչև 50-ական թվականները Աղստեկի տնտեսական շրջանի արդյունաբերությունը ներկայացված էր փայտամշակման, ծխախոտի ֆերմենտացիայի և տեղական նշանակություն ունեցող սննդի արդյունաբերության մի քանի մասը և միջին մեծության ձեռնարկություններով:

Հետպատերազմյան տարիներին, հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում, Աղստեկի շրջանի արդյունաբերության զարգացման նոր նախադրյալներ երևան եկան, և ամբողջ տնտեսության մեջ նկատելի շրջադարձ կատարվեց: Հայտնաբերվեցին ու արդյունաբերական շահագործման հանձնվեցին բենտոնիտային կավերի և շինանյութերի հանքավայրեր, ոռոգման աշխատանքների ծավալման և այլ միջոցառումների շնորհիվ ամրապնդվեց գյուղատնտեսական արտադրության բազան, ավելացավ հատկապես պտուղների, խաղողի ու ծխախոտի արտադրության ծավալը, ավելի ուժգին կերպով դրսենորվեց տեղում աշխատանքային ռեսուրսների առկայության գործոնը և, վերջապես, նկատելիրեն ամրապնդվեց արտադրական և սոցիալական ենթակառուցվածքը: Էական նշանակություն ունեցան, մասնավորապես շրջանի սահմանով անցնող Ղազախ-Երևան գազամուղը, Աղստաֆա-Հրազդան էլեկտրահաղորդման բարձր լարման գիծը, և վերջապես Հրազդան—Եղևան—Աղստաֆա երկաթգծի շինարարությունը, որն ավարտվեց 1986 թ.:

Այս բոլորը, ինչ խոսք, էապես փոխում են իրադրությունը և ծառայում են որպես նախադրյալ հետագայում այստեղ խոշոր արդյունաբե-

րություն ստեղծելու համար: Դա, թերևս, կարող է հիմք ծառայել այն բանին, որ ապագայում Ազստեղի շրջանում աստիճանաբար ձևավորվի միասնական լոկալ տարածքային-արտադրական համալիր:

Ինչ վերաբերում է շրջանի արդի տնտեսական նկարագրին, ապայցութեղ, ըստ էության բացակայում են կամ չափազանց թույլ են դրսեվորվում մեզ արդեն ծանոթ այն հատկանիշները, որոնք պետք է ունենաւ հանրապետական նշանակության սոցիալ-տնտեսական շրջանը:

Այսօրվա վիճակով Ազստեր հանրապետության ինդուստրացման ամենացածր մակարդակի վրա գտնվող շրջանն է: Հատկանշական է, որ արդյունաբերությունը գերազանցում է գյուղատնտեսությանը (ըստ համախառն արտադրանքի արժեքի) ընդամենը երկու անգամ և այդ ցուցանիշով Ախստեղի շրջանը հանրապետության սոցիալ-տնտեսական շրջանների թվում գրավում է վերջին տեղը: Դրա հետ կապված էլ, շըրջանը հայտնի է նախ և առաջ իր գյուղատնտեսությամբ: Զնայած տարածքի ոչ մեծ շափսերին (հանրապետության տարածության ընդամենը 9 տոկոսը) և բնակչության փոքր թվին (4 տոկոս), նա տալիս է Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 9 տոկոսը:

Ըստ որում, հատկանշական է գյուղատնտեսական հանդակների ավելի ռացիոնալ և ինտենսիվ օգտագործումը: Գյուղատնտեսական հանդակների միավոր տարածության հաշվով այստեղ զգալի չափով ավելի շատ արտադրանք է ստացվում, քան հանրապետության միջինն է, կրկնակի անգամ ավելի շատ, քան Լոռի-Փամբակում կամ Սևանում է և գրեթե եռապատիկ ավելի, քան Սյունիքում է: Ազստեղի շրջանը այս ցուցանիշով զիջում է միայն Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանին (մոտավորապես մեկուկես անգամ):

Ազստեղի տեսակարար կշիռը հանրապետությունում հատկապես մեծ է ծխախոտի (շուրջ 1/3) և պտուղների (մեկ քառորդը) գծով: Այն զգալի է նաև խոզաբուծության, կարտոֆիլի ու խալողի արտադրության գծով: Ծխախոտի հումքի ամենախոշոր արտադրողները Շամշադինի և Խօսանի վարչական շրջաններն են, որոնք համապատասխանաբար առաջին և երկրորդ տեղերն են գրավում ոչ միայն Ազստեռում, այլև ամբողջ հանրապետության ծխախոտացան շրջանների շարքում: Պտուղների արտադրության գծով թե Ազստեռում և թե հանրապետությունում բացարձակ գերազանցություն ունի նոյեմբերյանի վարչական շրջանը: Միայն այստեղ այնքան պտուղ է արտադրվում (գլխավորապես ծիրան ու դեղձ), ինչքան լի արտադրվում լոռի-Փամբակի, Շիրակի ու Սյունիքի տնտեսական շրջաններում՝ միասին վերցրած:

Ազստեղի տնտեսական շրջանում, ինչպես նկատեցինք վերևում, խոշոր արդյունաբերությունը, ըստ էության սկսեց զարգանալ միայն վերջին տարիներին, և ներկայումս ամբողջ արդյունաբերության համա-

իսառն արտադրանքի բաժինը Հայկական ՍՍՀ-ում կազմում է ընդամենը 3 տոկոս:

Ժողովրդական տնտեսության այս ճյուղում առաջատարը սննդի արդյունաբերությունն է: Սա տալիս է շրջանի ամրող արդյունաբերության համախառն արտադրանքի կենսից ավելին: Այս ճյուղը ներկայացված է գլխավորապես մրգի պահածոների (Այրում, Բերդ), ծխախոտի ֆերմենտացիայի (Բերդ, Ազգեհովիտ, Իջևան), գինեգործական (Նոյեմբերյան, Բերդ, Իջևան) և կաթի ու պանրագործական ձեռնարկություններով:

Արդյունաբերության կառուցվածքում երկրորդ տեղը պատկանում է թեթև արդյունաբերությանը (հայտնի է հատկապես Իջևանի գորգագործական խոշոր ֆաբրիկան), երրորդը՝ մեքենաշինությանը (Իջևան, Դիլիջան): Աշքի է ընկնում նաև փայտամշակման արդյունաբերությունը. ի տարբերություն այլ շրջանների, փայտանյութի վերամշակման արտադրությունից բացի (կահույք, մանրահատակ, փայտե տարրեր դետալներ), այստեղ զգալի տեղ են գրավում նաև փայտանյութի հայթայթումը՝ անտառահատումը և փայտասղոցումը (Իջևան, Դիլիջան, Բերդ, Սևքար):

Թեև համախառն արժեքով համեմատարար համեստ տեղ է գրավում, բայց միութենական կարեռ նշանակություն ունի արտադրության տարրեր ճյուղերում լայն կիրառություն գտած բենտոնիտային կավերի արտադրությունը (Իջևանից ոչ հեռու): Այժմ գործող ձեռնարկության բազայի վրա կազմակերպվել է նաև բենտոնիտային փոշու արտադրություն: Աղստեկի տնտեսական շրջանը ոչ միայն Հայկական ՍՍՀ-ում, այլև ամբողջ Անդրկովկասում առաջմ միակն է, որտեղ արդյունահանվում և վերամշակվում է մեծ պահանջարկ ունեցող այս արժեքավոր հումքը:

Անդրադառնալով Աղստեկի՝ որպես հանրապետական տնտեսական շրջանի կոնկրետ հատկանիշների քննարկմանը, կարող ենք նշել հետեւալը:

Այդ հատկանիշներից առավել ձևավորվածը ներքին հաղորդակցության ուղիների ամբողջական ցանցն է և միասնական տրանսպորտային կողմնորոշումը:

Այս հատկանիշը դրսերդվեց միայն վերջերս, երբ ավարտվեց Աղստեկի գետահովտով ձգվող երկաթուղու շինարարությունը, որը դարձավ շրջանի առանցքային տրանսպորտային զարկերակը: Այժմ դրան են հարում շրջանի բոլոր մասերը, բացառությամբ նոյեմբերյանի վարչական շրջանի, որն իր տարածքի մեծ մասով հարում է Լոռի-Փամբակի տնտեսական շրջանով՝ անցնող Թրիլիսի-Աղստեկի-Կիրովական երկաթգծին:

Համեմատարար հստակ է դրսերդվում նաև Աղստեկի շրջանի արտա-

դրական մասնագիտացումը (պտղաբուծություն, ծխախոտագործություն, խաղողագործություն), Բայց դա լոկ գյուղատնտեսության մասնագիտացում է և շի կարող ապահովել ո՞չ տնտեսական շրջանի կոմպելքսային զարգացումը և ոչ էլ բավարար հզորության արտադրական ֆունկցիաների ձևավորումը հանրապետության միասնական տարածքային-արտադրական համալիրում:

Աղստեռում նկատելի է հանրապետական շրջանի մի հատկանիշ և տնտեսական կօրիզի, կազմակերպիչ կենտրոնի ձեավորումը: Այդպիսի շրջանասատեղծ կորիզ դառնալու նախադրյալներ ունի միայն Իջևան բաղաբը. նա հանրապետական ենթակայության քաղաք է, ունի շուրջ 20 հազար բնակիչ, զարգացող արդյունաբերություն, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի բավարար հզորության օբյեկտներ:

Այդ բոլորը, իհարկե, բավարար են, որպեսզի Իջևանը դիտվի որպես միջջրջանային նշանակության լոկալ կենտրոն և գլխավոր հեռանկարում վերածվի հանրապետական սոցիալ-տնտեսական շրջանի կազմակերպիչ կորիզի: Այդ ֆունկցիայի ձևավորմանը նպաստում է նաև Իջևանի աշխարհագրական կենտրոնական դիրքը:

Աղստեռի տնտեսական շրջանում ավելի խոշոր է Դիլիջան քաղաքը (որի բնակչությունը շարունակում է արագ աճել և դարի վերջին կհասնի 40—50 հազ.), բայց նա իր եզրային աշխարհագրական դիրքի և համեմատարար թույլ արտադրական ֆունկցիաների պատճառով տնտեսական շրջանի կազմակերպիչ կորիզ դառնալու ավելի պակաս հեռանկարներունի:

Ավելի ոեալ է Իջևան ու Դիլիջան քաղաքների բազայի վրա բավարար հզորության արդյունաբերական (տնտեսական) հանգույցի ստեղծումը: Թեև գլխավոր հեռանկարում էլ Դիլիջանում նախատեսվում է առաջանցիկ տեմպերով զարգացնել ոչ թե արտադրական, այլ սպասարկող ճյուղերը (գլխավորապես ոեկրեացիոն):

Վերջապես, Աղստեռի շրջանի գլխավոր, միասնական ժողովրդա-տրնտեսական պրօբլեմի առկայության մասին: Տեսանելի հեռանկարում այն ուրվագծվում է որպես շրջանի գյուղատնտեսական պոտենցիալի հզորացման պրոբլեմ: Այդ լուծելու գլխավոր միջոցը, գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ընդհանուր միջոցառումների հետ միասին, որոնք իրականացվում են հանրապետությունում ու ամրող Սովետական Միությունում, այստեղ ոռոգելի տարածությունների ընդարձակումը և այգեգործության համար լեռնալանջերի յուրացումն է (լանջերի դարավանդավորման միջոցով):

Աղստեռի տնտեսական շրջանի՝ վերը տրված նկարագիրը և զարգայնան օբյեկտիվ հնարավորությունների վերլուծությունը ցույց են տալիս.

Ն: Ի այն (ներկայիս սահմաններում) մնալու է որպես մեծ ժավալի ու ինտենսիվ գյուղատնտեսական արտադրություն ունեցող, բայց հզոր ու բազմանձյուղ ծանր արդյունաբերությունից զուրկ շրջան: Առաջանցիկ տեմպերով կարող է զարգանալ նաև ոեկրեացիոն գործունեությունը:



Ամփոփելով դասընթացը, կարող ենք նշել, որ Հայկական ՍՍՀ-ն դիտարկվեց որպես Սովետական ֆեդերացիայի անդամ, որպես ՍՍՀՄ միասնական ժողովրդատնտեսական համալիրի ֆունկցիոնալ բաղադրիչ և պատմական Հայաստանի մի մաս:

Զեռք բերված գիտելիքները և ունակությունները հնարավորություն են ընծեռում ապագա մասնագետին իր աշխատանքային գործունեության ընթացքում ակտիվ ստեղծագործական մասնակցություն ունենալ հասարակական զարգացման պրոցեսին, մասնագիտական մակարդակով գնահատել հանրաբետության սոցիալտնտեսական, ժողովրդագրական ու բնօգտագործման, արտադրողական ուժերի գիտական տեղաբաշխման, հասարակության տարածքային կազմակերպման պրորեմներն ու նրանց լուծման հնարավոր ուղղությունները: Երկրի զարգացման արդի փուլում այդ հնարավորությունը առավել է մեծանում, կապված է կոնումիկայի կառավարման վարչա-հրամանատարական մեթոդներից տնտեսագիտական մեթոդներին, ճյուղային կառավարումից ոեգիռնալ կառավարմանը անցնելու և հանրապետական տնհաշվարկ ներդնելու հետ: Բնակչության, նյութական արտադրության ու ենթակառուցվածքային տարրերի խտավայան արագընթաց աճի և բնօգտագործման ինտենսիվացման պայմաններում հանրապետության սուլ տարածքային հնարավորությունների, բնառեսուրսային, ժողովրդագրական ու տնտեսական պոտենցիալի գիտական ճանաշումը, դրանց ուսցիոնալ օգտագործումը ավելի ու ավելի է վերածվում համալիր լուծում պահանջող համագգային պրոբլեմի: Եվ աշխարհագետները ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով պետք է պատրաստ լինեն գտնվելու այդ պրոլեմների համար գիտականորեն հիմնավորված լուծումներ որոնողների առաջին շարքերում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱԽՆԵՐ

1. Բնութագրեք և հիմնավորեք Հայկական ՍՍՀ սոցիալտնտեսական շրջանացման պիեման:
2. Տվեք Հայկական ՍՍՀ սոցիալտնտեսական շրջանների համեմատական բնութագրեւությունը:
- ա) ներքին կապերի զարգացման աստիճանի,

- բ) աշխատանքի ներհանրապետական բաժանման համակարգում ունեցած անտեսական ֆունկցիաների (շրջանային մասնագիտացման),
- գ) առաջնահերթ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական պրոբլեմների:
3. Բնութագրի Սևանա լճի օգտագործման ու պահպանման պրոբլեմը: Վերլուծեք պրոբլեմի տնտեսաշխարհագրական և էկոլոգիական բովանդակությունը:

Դասագիրքը պատրաստ էր տպագրության, երբ տեղի ունեցավ 1988 թ. դեկտեմբերի 7-ի կործանիլ երկրաշարժը: Այն ընդգրկեց Շիրակի ու Լոռովա գոգավորությունները և Փամբակ, Դեբեդ և Աղստև գետերի ավազանները, հանրաշետության տարածքի շուրջ 40 տոկոսը, որտեղ բնակվում էր գրեթե 1 մլն մարդ: Այս երկրաշարժը, որ ստացավ «Սպիտակյան» պաշտոնական անվանումը, վերջին 80 տարում Անդրբնվկասում գրանցված ամենաուժեղ երկրաշարժն է: Էպիկենտրոնում՝ Թազումի լեռնաշղթայում, Սպիտակ քաղաքից հս.-արմ., նրա ուժը ավելի քան 10 բալ էր:

Սպիտակյան երկրաշարժը իր ուժգնությամբ և ընդգրկումով համեմատվում է մեր ժողովրդին հայտնի այնպիսի խոշոր երկրաշարժերի հետ, ինչպիսիք են Վայոց ձորի 735 թ., Դվինի 862 թ., Գանձակի 1138 թ., Սյունիքի 1143 թ., Անիի 1329 թ., Երզնկայի 1458, 1482 և 1939 թթ. երկրաշարժերը: Նա վկայում է, որ դեռևս շարունակվում են Ալպ-Հիմալայան երիտասարդ լեռնային գոտու և դրա մի մասը հանդիսացող Հայկական լեռնաշխարհի ակտիվ լեռնակազմական պրոցեսները:

Վիթխարի են երկրաշարժի պատճառած մարդկային գոհերը և նյութական վնասները: Տուժել են 21 քաղաք ու շրջան և 342 գյուղ, այդ թվում լիովին ավերակների են վերածվել Սպիտակ քաղաքը և 58 գյուղ, 80 տոկոսով ավերվել է լենինական քաղաքը, մեծ շափով տուժել են Կիրովական, Ստեփանավան, Դիլիջան, Ալավերդի, Իջևան, Արթիկ քաղաքները, Ախուրյան, Գուգարք, Ղուկասյան, Ամասիա, Մարալիկ, Ապարան, Սաղկահովիտ, Կալինինո շրջկենտրոնները: Զոհվել է շուրջ 25 հազար մարդ, վիրավորների թիվը համար է 20 հազ.-ի, 514 հազ. մարդ մնացել է անօթևան:

Մեծ են նյութական արտադրության ոլորտին հասցված վնասները: Դադարել են գործելուց մեքենաշինական, թեթև, սննդի, քիմիական արդյունաբերության ճյուղերի ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություն, մասնաճյուղ և արտադրամաս, որոնց արտադրանքի թողարկման ընդհանուր կարողությունը կազմում է տարեկան 1,9 մլրդ ռ., իսկ

աշխատաեղերի թիվը՝ 82 հազ., էապես տուժել են 209 սովխող և 90 կոլտնտեսություն, մեծաթիվ անասնապահական շենքեր, գյուղատնտեսական այլ արտադրական օբյեկտները կոտորվել են մեծ քանակությամբ անասուն ու թոշուն. Շարքից դուրս է եկել շինարարական ճյուղի, ինչպես նաև տրանսպորտի ու կապի ձեռնարկությունների զգալի մասը, վնասվել են երկաթուղային ու խճուղային ճանապարհներ, ոռոգիչ ջրանցքներ ու ջրմուղներ, գազամուղներ, էլեկտրահաղորդման գծեր ու ենթակայաններ.

Լիովին ավերվել են կամ վթարվել են հարյուրավոր դպրոցներ ու մանկապարտեզներ, հիվանդանոցներ ու պոլիկլինիկաններ, գրադարաններ, ակումբներ ու մշակույթի տներ:

Հանրապետության ժողովրդական տնտեսությանը երկրաշարժի հասցրած ընդհանուր վնասը գնահատվում է մոտավորապես 10 մլրդ ռ. Դգալիորեն փոխվեց ոչ միայն տուժած շրջանների, այլև ամրող հանրապետության ժողովրդագրական իրադրությունը, աննախադեպ շափեր ընդունեց բնակչության միջհանրապետական ու ներհանրապետական միգրացիան. Բնական աղետը տեղի ունեցավ այն պահին, երբ հատկապես սրվել էին հայ-աղբբեզանական ազգամիջյան վեճերն ու գծոտությունները. Ի պատասխան կեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչության Աղբբեզանական ՍՍՀ կազմից դուրս գալու և Հայկական ՍՍՀ-ին միանալու պահանջի, սրվեցին ազգամիջյան հարաբերությունները. Աղբբեզանական ՍՍՀ մի շարք քաղաքներից ու շրջաններից սկսեց հեռանալ Հայկական բնակչությունը, որի մեծ մասը վերաբնակվեց Հայկական ՍՍՀ-ում. 1988 թ. գեկտեմբերի կեսերին այդ վերաբնակների թիվը գերազանցեց 170 հազ.-ից. Շուրջ 130 հազ. աղբբեզանցիներ հեռացան Հայկական ՍՍՀ-ից. Հարյուր հազարների հասավ այն մարդկանց թիվը, որոնք ստիպված եղան հեռանալ իրենց բնակավայրերից երկրաշարժի պատճառով. Դրանց մի զգալի մասը ժամանակավոր բնակություն է հաստատել հարեան հանրապետություններում ու մարզերում:

Բնական այդ վիթխարի աղետը շընկճեց մեր ժողովրդին. Մանր փորձության ժամին նա յենակ չմնաց. Միութենական կառավարության ձեռնարկած վճռական միջոցների, հանրապետության բնակչության բոլոր խավերի, ՍՍՀՄ հանրապետությունների, արտասահմանյան շուրջ 110 երկրների օգնության շնորհիվ փլատակներից ազատվեցին հազարավոր մարդիկ և անմիջապես սկսվեց երկրաշարժի հետևանքների վերացումը և ավերված շրջանների վերականգնումը:

Մարդկային ազնվության, փոխօգնության ու գթասրտության օրենքով բացվեցին բոլոր տեսակի քաղաքական, պետական, սոցիալական, կրոնական ու աշխարհագրական սահմանները, և աղետյալ Հայաստանին օր առաջ օգնության հասնելու ձգտումը դարձավ սովետական բոլոր

Ժողովուրդների, համայն մարդկության համախմբվածության ու միասնության մի վառ օրինակ: Հայ ժողովուրդը երախտագիտությամբ կհիշի այն անգնահատելի բարոյական ու նյութական օգնությունը, որ աղետի օրվանից սկսած ստանում է սովետական եղբայրական ժողովուրդներից, բոլոր մայրցամաքներից, աշխարհի ամենահեռավոր երկրներից:

Կործանիչ երկրաշարժի պատճառած մարդկային կորուստները, հարյուր-հազարավոր մարդկանց ժամանակավոր տեղահանումն ու վերաբնակեցումը, արտադրական ձեռնարկությունների, սոցիալական ենթակառույցի խափանումները, հազարավոր մարդկանց գործունեության թնականոն ընթացքի ընդհատումը և այլ մոտավոր ու հեռավոր հետեւանքները կուսումնասիրվեն և կստանան իրենց գիտական գնահատականը: Կարիք կլինի կազմակերպել նաև հատուկ տնտեսաաշխարհագրական հետազոտություններ: Այսօր արդեն ակնհայտ է, որ երկրաշարժի հետեանքները մեծ են և գոնե առաջիկա մի քանի տարիների ընթացքում կշարունակեն նկատելի ազդեցություն ունենալ Շիրակի, Լոռի-Փամբակի և Աղստեփի սոցիալ-տնտեսական շրջանների բնակչության տարաբնակեցման, ժողովրդագրական իրադրության, նյութական արտադրության ոլորտի ճյուղային ու տարածքային կառուցվածքի, տնտեսական-արտադրական կապերի, կապիտալ շինարարության ծավալի և տնտեսաաշխարհագրական այլ ցուցանիշների վրա: Որոշակի ազդեցություն կարող են կրել նաև համահանրապետական սոցիալ-տնտեսական ցուցանիշները և միասնական ՏԱՀ-ի ներքին կապերը: Թայց ակնհայտ է նաև, որ այդ տեղաշարժերը իրենց բնույթով արմատական ու երկարաժամկետ լինել չեն կարող, քանի որ պետական որոշումով ընդամենը երկու տարի է հատկացվում տուժած շրջանների տնտեսության վերականգնման համար: Թացի այդ, վերականգնման ընթացքում կատարվող փոփոխությունները լուրջ ազդեցություն չեն ունենա այդ շրջանների արտադրողական ուժերի զարգացման և տարածքային մասնագիտացման նախկինում հաստատված ուղղությունների վրա:

Տուժած շրջանների բնակչությանը բազմակողմանի օգնություն ցույց տալու, նրան հասցված նյութական վնասը հատուցելուց բացի նախատեսվում է 1989—1990 թթ. ընթացքում լիովին վերականգնել երկրաշարժի ենթարկված ուղիղունի բոլոր քաղաքներն ու գյուղերը, ամբողջ սոցիալ-տնտեսական պոտենցիալը:

Ընդունվել են միութենական կառավարության մի ամբողջ շարք որոշումներ ըստ հետեւալ գլխավոր ուղղությունների: 1. հանրապետության շինանյութերի արտադրության ավելացում ու շինարարական բազայի հզորացում, 2. ավերված ու տուժած քաղաքների, նրանց արտադրական ու սոցիալական ենթակառույցի վերականգնում, 3. ագրոար-

դյունաբերական համալիրի վերականգնում ու զարգացում, 4. արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնում ու լրիվ ավերվածների փոխարեն նորերի կառուցում:

Այդ շինարարական ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտավորապես 8 մլրդ. ռ. (Հիշենք, որ մինչև երկրաշարժը ամրող հանրապետության կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը լավագույն տարում կազմել է ընդամենը 1,7 մլրդ. ռ.):

Երկու տարվա ընթացքում պետք է վերականգնվի ու կառուցվի 6,3 մլն. քառ. մ բնակմակերես (նախկինում հանրապետությունում կառուցվում էր տարեկան 1,2 մլն. քառ. մ), 113 հազ. աշակերտական տեղով դպրոցներ, գրեթե 7 հազ. մահճակալով հիվանդանոցներ, մեծ թվով մանկապարտեզներ, կոմունալ-կենցաղային ու մշակութային, առևտուրի, սպորտային օրյեկտներ, վարչական շենքեր:

Արդյունաբերական համալիրի գծով նախատեսվում է լիովին վերականգնել նրա արտադրական պոտենցիալը, իսկ առանձին դեպքերում նաև գերազանցել այն: Կատարվի առանձին արտադրությունների վերապրոֆիլացում (օրինակ, նախատեսվում է վերացնել շաքարի արտադրությունը և կազմակերպել սննդամթերքի այլ տեսակների թողարկումը, ճշտել կիրովականի քիմիական գործարանի արտադրանքի տեսականին, մեքենաշինական ձեռնարկություններում ստեղծել ժողովրդական սպառման առարկաների արտադրություններ): Հատուկ ուշադրություն կդարձվի ավելի աշխատատար և պակաս նյութատար ու էներգատար արտադրությունների զարգացմանը, որը հնարավորություն կտա ավելի մեծ թվով մարդկանց ապահովել աշխատանքով և կնպաստի հանրապետության աշխատանքային ռեսուրսները տեղում օգտագործելու պրոբլեմի լուծմանը:

Զգալի փոփոխություններ են նախատեսվում էլեկտրաէներգիայի բնագավառում: Սեյսմիկ իրադրությունից ենելով որոշում կայացվեց մինչև 1989 թ. մարտը կանգնեցնել Հայկական ատոմակայանի էներգարլուկները այն հաշվով, որ հետագայում նրա աշխատանքը փոխադրվի գազային վառելիքի: Այդ կապակցությամբ արագացվելու են Հրազդանի Պեհկ-ի ընդարձակման աշխատանքները: Համապատասխան փոփոխություններ կմտցվեն նաև Անդրկովկասյան միասնական էներգահամալիրի գործունեության մեջ:

Ընդգրկուն է տոժած շրջանների և ամրող հանրապետության ժողովրդական տնտեսության տրանսպորտային ապահովվածության մակարդակի բարձրացման ծրագիրը: Նպատակ է դրված մեծ շափով ավելացնել երկաթգծի մի շարք ուղեհատվածների թողունակությունը, մեծացնել կայարանների ու հանգույցների հզորությունը, ընդարձակել բեռ-

Նաթափման փակուղիներն ու հարթակները: Մշակվում է Կիրովական — Ֆիոլետովով երկաթուղու շինարարության հարցը:

Հիրավի վիթխարի է երկրաշարժի ավերածությունների հետևանք-ների վերացման, տուժած շրջանների սոցիալ-տնտեսական պոտենցիալի վերականգնման ու զարգացման ծրագիրը, եվ դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ու նյութական միջոցները հատկացվելու են միութենական ֆոնդից: Նախատեսվող աշխատանքներին ակտիվորեն կմասնակցեն բոլոր եղբայրական հանրապետությունների, ՍՍՀՄ ագրոարդի և շատ միութենական մինիստրությունների շինարարական կազմակերպությունները, մի շարք արտասահմանյան պետություններ, ազգային ու միջազգային կազմակերպություններ:

Էապես փոխվում է տուժած շրջանների և ամբողջ հանրապետության տարածքի սեյսմիկական իրադրության գնահատականը, ճշգրտվում է սեյսմիկական շրջանացման քարտեզը, կիրառվում են քաղաքաշինական նոր գաղափարներ ու սկզբունքներ, վերանայվում են հատակագծման ու շինարարության նորմաներն ու կանոնները, պակասեցվում է կառուցվող շենքերի թույլատրվող հարկայնությունը: Իրականացվում են նաև այլ միջոցառումներ, որոնց նպատակը յեկն է՝ առավել լրիվությամբ հաշվի առնել տարածքի բնական պայմանները, ճիշտ գնահատել բնական աղետների վտանգը, բարձրացնել կառուցյաների սեյսմակայունությունը և բնակչության համար ապահովել անվտանգ ու առավել բարեկեցիկ կյանքի պայմաններ: Արդյունաբերական ու գյուղատնտեսական ձեռնարկությունների, արտադրական ու սոցիալական ենթակառույցի վերականգնումը ոչ թե լինելու է հնի նույնական կըրճնությունը, այլ կատարվելու է գիտատեխնիկական հեղափոխության նորագույն նվաճումների, արդիական տեխնիկայի ու տեխնոլոգիայի ամենալայն ներդրման հիման վրա: Նոր սեյսմիկ միկրոշրջանացման տվյալներով ճշգրտվելու են ավերակների փոխարեն նոր կառուցվող քաղաքների ու գյուղերի, քաղաքային նոր թաղամասերի, արտադրական ու ենթակառույցային նոր օրյեկտների տեղադրման վայրերը:

Կարելի է անվարան ասել, որ ընդամենը յեկ-երկու տարի անցքովոր վերաբնակները կվերադառնան իրենց նորաշեն տները, ավելի գեղեցկացած ու հողացած կվերածնվեն լենինականն ու Սպիտակը, Կիրովականն ու Ստեփանավանը, մյուս ավերված գյուղերն ու քաղաքները: Եվ դրանք կլինեն այն հուշարձանը, որ ժողովուրդը կկանգնեցնի դաժան աղետին զոհ դարձած իր բազում զավակների հիշատակին: Դա կլինի արժանի հուշարձան նաև ազգերի ու պետությունների համագործակցության, սովետական ժողովուրդների եղբայրության ու անխախտ բարեկամության:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ե. Ա. Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Ե., 1987.—198 էջ
2. Դուլյան Ս. Մ., Վալեսյան Լ. Հ. Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրության ակնարկ, Ե., 1967.—230 էջ
3. Հակոբյան Թ. Կ. Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1984.—484 էջ
4. Հակոբյան Թ. Կ. Սովետական Հայաստանի քաղաքները, Ե., 1977.—231 էջ
5. Հայաստանի Կոմկուսի 28-րդ համագումարի նյութերը, Ե., 1986
6. Սովետական Հայաստան, Հայկական Սովետական Հանրապետարանի գլխավոր խմբագրություն, Ե., 1987, 688 էջ
7. Խոշաբեկյան Վ. Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828—1978), Ե., 1979.—394 էջ
8. Абоян Ю. И. и др. Охрана природных ресурсов Армянской ССР, Е., 1982.—216 с.
9. Агаджанян Г. Х. и др. Сельскохозяйственные зоны Армянской ССР. Е., 1956.—80 с.
10. Агроклиматические ресурсы Армянской ССР. Под ред. Р. С. Мкртчяна, Л., 1976.—388 с.
11. Алаев Э. Б. Социально-экономическая география. Понятийно-терминологический словарь. М., 1983.—350 с.
12. Бакланов П. Я. Пространственные системы производства. М., 1986.—150 с.
13. Баранский Н. Н. Избранные труды. становление советской экономической географии. М., 1980.—287 с.
14. Баранский Н. Н.—Методика преподавания экономической географии. М., 1960.—451 с.
15. Белоусов И. И. Основы учения об экономическом районировании. М., 1976.—320 с.
16. Валесян Л. А. Производственно-территориальный комплекс Армянской ССР. Е., 1970.—375 с.
17. Дзенис З. Е. Методология и методика социально-экономгеографических исследований. Рига, 1980.—262 с.
18. Колосовский Н. Н. Основы экономического районирования. М., 1958.—200 с.
19. Колосовский Н. Н. Теория экономического районирования. М., 1969.—142 с.
20. Маергойд И. М. Территориальная структура хозяйства. Новосибирск, 1986.—304 с.
21. Народное хозяйство Армянской ССР. Статистический ежегодник. Е., 1987 и др. годы.

20. Павленко В. Ф. Планирование территориального развития. М., 1984.—267 с.
21. Погосян Д. А. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР. Е., 1986.—221 с.
22. Рабочая книга по прогнозированию. Редкол.: И. В. Бестужев-Лада (отв. ред.), М., 1982.—430 с.
23. Районная планировка. Справочник проектировщика. М., 1986.—325 с.
24. Саушкин Ю. Г. Экономическая география: история, теория, методы, практика. М., 1973.—559 с.
25. Саушкин Ю. Г. История и методология географической науки. М., 1976.—423 с.
26. Хаггет П. Пространственный анализ в экономической географии. М., 1968.—391 с.
27. Хорев Б. С. Территориальная организация общества. М., 1981.—320 с.
29. Хорев Б. С. География и управление народным хозяйством. М., 1984.—48 с.
30. Հայկական ԽՍՀ տունագիրը՝ Երևան—Մոսկվա, 1961. 121 էջ
31. Հայկական ԽՍՀ աշխարհագրական տունագիրը, Ե., 1976. 48 էջ:
32. Армянская ССР. Административная карта. М 1 : 4000 000. М., 1988
33. Армянская ССР. Физическая карта. М 1 : 400 000. М., 1986.
34. Армянская ССР. Экономическая карта. М 1 : 400 000. М., 1988.

ՆԵՐԱՍՈՒԹՅՈՒՆ. Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրական թյան առարկան, բովանդակությունը, խնդիրները

ԱՐԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱՎԱՐՉԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՆՈՒԹԱԿԱՆԻՑ

ԿԱՌԻՆ	1. Աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունները:	Բնական պայմանների ու ռեսուրսների համարականությունը	9
1.1. Տարածքը, սահմանները, տնտեսաշխարհագրական գիրքը և վարչա-տարածքային բաժանումը			9
1.2. Սոցիալտեսական զարգացման բնական պայմանների ու ռեսուրսների գեահատականը			21
1.4. Օգտակար հանաժողութը			32
1.5. Կլիմայական պայմաններն ու ռեսուրսները			40
1.6. Ջրային ռեսուրսները			47
1.7. Հողային ռեսուրսները			56
1.8. Բուսակենդանական ռեսուրսները			61
1.9. Ոեկրթացիոն ռեսուրսները			66
ԿԱՌԻՆ 2. Բնօգտագործման և բնապահպանության պրօբլեմները			69
ԿԱՌԻՆ 3. Տնտեսության զարգացման պատմաաշխարհագրական առանձնահատ-կությունները			83
3.1. Հայաստանի արտադրույական ուժերի զարգացումը նախառովետական շրջանում			83
3.2. Հայկական ՍՍՀ տնտեսական զարգացումը սոցիալիստական շինարա-րության տարիներին			94
3.3. Վարչատարածքային բաժանման փոփոխությունները			103
ԿԱՌԻՆ 4. Բնակչության և աշխատանքային ռեսուրսների աշխարհագրությունը			109
4.1. Բնակչության թվաքանակը, վերաբռնադրությունը, կազմը			109
4.2. Աշխատանքային ռեսուրսները, դրանց օգտագործումը			116
4.3. Բնակչության տեղաբաշխումը, տարարնակեցման հիմնական գծերը			126
			453:

4.4. Քաղաքային տարարնակեցում	133
4.5. Գյուղական տարարնակեցում	148
4.6. Բնակչության տարարնակեցման վերակառուցման ու կատարելագործման պրոբլեմը	154
 ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ ՀԱՅԱԿԱՎԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՅՈՒԽԱՑԻՆ ԿԱՌՈՒԽՎԱԾՔԸ ԵՎ ՃԶՈՒՂԵՐԻ ԱԾԵԱՐՀԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Գլուխ 5. Ժողովրդական տեհուսաւրյան բնգանու գծերը և ճյուղային կառուցվածքը	159
Գլուխ 6. Արդյունաբերությունը	167
6.1. Արդյունաբերության զարգացման գլխավոր ցուցանիշները	167
6.2. Արդյունաբերության գլխավոր ճյուղերի բնութագիրը. Վառելիքաէներգետիկ համալիր	175
6.3. Մետալուրգիական համալիր	181
6.4. Քիմանտառային համալիր	186
6.5. Մեթենաշինական համալիր	192
6.6. Շինանյութերի արդյունաբերությունը	198
6.7. Թեթև արդյունաբերություն	203
6.8. Արդյունաբերության այլ ճյուղեր	205
Գլուխ 7. Արգյունաբերության տեղաբաշխումը և առածխային կազմակերպումը	207
7.1. Արդյունաբերության տեղաբաշխման և տարածքային կազմակերպման բնգանուր գծերը	207
7.2. Արդյունաբերական հանգույցները որպես արդյունաբերության տարածքային կազմակերպման առաջադիմական ձև	213
7.3. Արդյունաբերական (տնտեսական) հանգույցների բնութագիրը	216
7.4. Արդյունաբերական այլ կետեր ու կենապուներ	225
Գլուխ 8. Ազրաւայշանաբերական համալիրը	228
8.1. Ընդհանուր բնութագիրը	228
8.2. Բուսաբուծություն	243
8.3. Անասնապահություն	257
8.4. Գյուղատնտեսական մթերների վերամշակում (սննդի արդյունաբերություն)	268
8.5. Գյուղատնտեսական շրջանացումը և շրջանների բնութագրը	272
Գլուխ 9. Տքանազօտի աշխարհագրությունը	285
9.1. Ընդհանուր բնութագիրը	285
9.2. Ծրկաթուղարին տրանսպորտ	290
9.3. Ավտոմոբիլային տրանսպորտ	296
9.4. Տրանսպորտի այլ տեսակներ	299
Գլուխ 10. Սպասարկման ոլորտի ասցրաւությունը (Բ. Մ. Հազեսյանի հետ նամատեղ)	302

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ-ԱՐԳԱԿՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՇՎ

Գլուխ 11. Ժաղսվրդական տեսեսաւրյան կօմպիենսային զարգացմը և միասնական տարածքային-արտադրական համալիրի ձևավորումը	317
11.1. Տարածքային-արտադրական համալիրները որպես արտադրողական ուժերի տարածքային կազմակերպման ռացիոնալ ձև	317
11.2. Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի զարգացման նախադրյալները և գլխավոր փուլերը	314
Գլուխ 12. Հայկական ՍՍՀ միասնական տարածքային-արտադրական համալիրի բնուրագիրը և վերլուծությունը	321
12.1. Հայկական ՍՍՀ տարածքային-արտադրական համալիրի մասնագիտացումը: Տեղը ՍՍՀՄ աշխատանքի տերիտորիալ բաժանման մակարդում	321
12.2. Տարածքային-արտադրական համալիրի կազմը և արտադրական կառուցվածքը: Էներգաարտադրական ցիկլերը (շղթաները)	329
12.3. Տարածքային-արտադրական համալիրի գլխավոր հատկանիշները և զարգացման պրոբլեմները	338

ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺԻԿԱԿԱԿԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԽԻՒԽՎԱԾՔ: ՍՈՑԻԱԼ-ՏԱՏԵԽԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ: ՇՐՋԱՆԱՀԻՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գլուխ 13. Սոցիալ-տեսեսական շրջանացման էությունը, խնդիրներ և ակրօնական բարեփելերը	349
13.1. Տնտեսական շրջանացումը որպես արտադրության տարածական կառուցվածքի հետազոտման և կատարելագործման միջոց	349
13.2. ՍՍՀՄ տնտեսական շրջանացման տարսունոմիական և տէրիտորիալ պատասխանակարգերը և Հայկական ՍՍՀ տեղը դրանցում	358
13.3. Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության տարածական կառուցվածքային միավորները	365
13.4. Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական շրջանների տարսունոմիան և շրջանացման մեթոդները: Սոցիալ-տեսեսական շրջանացման և շրջանային հատակագծման կապը	369
Գլուխ 14. Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական շրջանները: Բնուրագիրը և զարգացման պրոբլեմները	383
14.1. Երջանացման սիստեմ	383
14.2. Արարատյան շրջան	385
14.3. Շիրակի շրջան	388
14.4. Լոռի-Փամբակի շրջան	408
14.5. Սևանի շրջան	415
14.6. Սյունիքի շրջան	429
14.7. Ազստեկի շրջան	438
Վերջարանի փոխարեն	446
Գրականություն	451
Բովանդակություն	453

Լեմվեկ Հակոբի Վաղեսյան

Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն

Դասագիրք բռների աշխարհագրական մասնագիտությունների և աւանդների նամար

Խմբագիր՝ Ա. Հ. Ռաշիզյան
Նկարիչ՝ Մ. Մ. Շմավոնյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Զրադացպանյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Խաչատրյան
Վերսածագոզ սրբագրիչ՝ Ա. Վ. Բաղդասարյան

ԱԲ № 2580

Հանձնված է շարվածքի՝ 14.03.1988 թ.:

Ստորագրված է տպագրության՝ 25.01.1989 թ.:

ՎՃ 00656: Գափար՝ 60×90^{1/16}: Թուղթ՝ № 2: Տառատեսակը՝ «Գրքի որդիրական»:
Տպագրություն՝ բարձր: Պայմ. տպ. 28,5+0,25 մամ. ֆորդ., տպ. 28,5 գուն. թ. օտ.,
հրատ. 26,67 մամ.+0,4 մամ. ֆորդ.:


Տպարանակը՝ 1000: Պատվեր՝ 1040: Գինը՝ 1լ. 40 կոպ.:

«Հայոց հրատարակություն», Երևան-9, Կիրովի 19 ա

Издательство «Лурис», Ереван-9, ул. Кирова, 19а.

ՀՍՍՀ հրատարակությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտության կոմիտեի Հակոբ Մեհրաբյանի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան-9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.



ԵՐԱՎԱԾՂԹԱՆԵՐ

Բարձր (2800մ և ավելի)

Միջին բարձրության (1500-2800մ).

Տաճր (ԱՐԵՎԱԿ 1500)



Ըարծու վահանածե զանգվածներ



Գյուղական և կոնսառ սարեր

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԼԵՇՆԱԳՐԱԿԱՆ ՍԽԵՄԱ

0 10 20 կմ

